Լուսինե Եղյան
Անոյշ Ակներեան
Անուշ Բաբաջանյան
Սերժ Սեւյան
Վիոլետ Գրիգորյան
Մարկ Նշանեան
Արամ Մամիկոնյան
Քրիստիան Բատիկեան
Կարեն Ղարսլյան
Էդիկ Պօղոսեան
Աննա Դավթյան
Անի Ասատրյան
Արամ Պաչյան
Շուշանիկ Թամրազյան
Վահան Իշխանյան
Արման Գրիգորյան
Միսաք Խոստիկյան
Անուշ Քոչարյան
Տիգրան Ալեքսանյան
Գրիգոր Պըլտեան
Վահե Ղուկասյան
Սաֆօ Արեան
Սիրանույշ Օհանյան
Լուսինե Խառատյան
Մարուշ Երամեան
Հռիփսիմե Հովհաննիսյան
Թամար Պոյաճեան
Հասմիկ Սիմոնյան
Տաիշա Աբելար
Բյուրակն Իշխանյան

ISSN 1829-1139

գրական հանդես

ինքնագիր

7

Ալեն Գինսբերգ
Տիգրան Ամիրյան
Էրքքա Ֆիլանտէր
Յուլիա Կրիստևա
Մայքլ Ջիրա
Ուրսուլա Կ. Լե Գուին
Չարլզ Բերնսթայն
Վահրամ Դանիելյան
Էլլա Կանեգարիան
Ռոլան Տիպպիյառ
Քրիստոֆեր Ադամյան
Վիսլավա Շիմբորսկա
Միշել Լերիս

ինքնագիր 7

Ինքնագիր գրական ակումբ
Երևան 2016

Համարը հրատարակվել է Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի աջակցությամբ

CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES

Ինքնագիր #7.
Inknagir (autograph)#7

Խմբագիրներ՝ Վիոլետ Գրիգորյան, Վահան Իշխանյան

Պատասխանատու՝ Վահան Իշխանյան

Սրբագրիչ՝ Թագուհի Սուսլիյան

Շապիկի ձևավորումը՝ Միսաք Խոստիկյանի

Շապիկի լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Տարածական միջամտությունը՝ Արա Հովսեփյանի

Համակարգչային էջադրումը՝ «Զանգակ» հրատարակչության, Ժագ Թոփալագյանի

Ստորագրված է տպագրության 15. 11. 2016
Տպաքանակը՝ 200
Ինքնագիր գրական ակումբ ՀԿ
Գրանցում՝ 211.171.00230, տրվել է՝ 29.11.2001 թ.

Լենինգրադյան 8, բն. 62, Երևան 0038, Հայաստան
Հեռ.՝ (+374 10) 39 54 19
www.inknagir.org
violet.grigoryan@inknagir.org
vahan.ishkhanyan@inknagir.org

© Ինքնագիր գրական ակումբ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնագիր

8-10 Կոտրած հայելու բեկորների անդրադարձը

Բնագիր

12-39 Քրիստիան Բատիկեան
Captain America1
Winter Soldierը
Հայրութեան ժամանակը

40-47 Համիկ Սիմոնյան
Գարուն
Տենդ
ոտնալվա
լեյլա

48-62 Սիրանույշ Օհանյան
Բառերս
ՍԿԱՆԴԱԼ
Ֆուտբոլը էն աշխարհում
Imagification

63-68 Արամ Մամիկոնյան
հուղա
սիրերգ
լունա
հիշելով այդ կարմիր օրը…
սեր

69-86 Հռիփսիմե Հովհաննիսյան
Շաքար
Էքերսբերգի կույսը
Մյուսը
Պոզ

87-94 Վիոլետ Գրիգորյան
Բըզզզ

95-101 Սերժ Սեպյան
Խեռիս
Անձու, անձայն…

102-105 Վահան Իշխանյան
էլեգիաներ կակղամորթի համար
խխունջ (1)
խխունջ (2)
խխունջ (3)
ավազի ժամացույց (խխունջ 4)
լվացքատուն (խխունջ 5)
այն օվկիանոսով

106-119 Տաիշա Աբելար
Անահիտն ու Սքոթլանդը Կապույտ ճնճղուկների արահետում

120-123 Լուսինե Եղյան
Քեզ

124-132 Միսաք Խոստիկյան
Ջանգվի բարդույթ

133-141 Մարուշ Երամեան
Արիւնով Գրուած Պատմութիւններ
Ա. Նկարը
Բ.Փախուստ
Գ. Խճանկար

142-145 Կարեն Ղարսլյան
Շաբաթվա մութ կողմը
Լապտերասյուների բույրը
(«Շաբաթվա մութ կողմը» բանաստեղծության երազը)
Քաղաքների ու անտառների փախուստը
Կիկ(ապիտա)լոպ *(«Քաղաքների ու անտառների փախուստի» երազը)*

146-153 Բյուրակն Իշխանյան
Ջազ կաֆե
Կացության իրավունք

154-160 Անուշ Քոչարյան
Թվային հիասթափություն
Տարբերությունը, որից պատմում է...
Դվինը ծախեցին
2015-ն է սեպտեմբեր
Ես ու սերս...
Թույլ, թեթև, սահուն...
Մարմինս դրված է`...

161-169 Աննա Դավթյան
Դիարբեքիր` քուր

170-176 Անուշ Բաբաջանյան
Հայկի պատմությունը և
Սիրելի Գ

177-198 Լուսինե Խառատյան
Սահմանային պատում
Այդ ձմերուկահոտ ամառը
Մանասը

199-204 Թամար Պոյաճեան
Լուռ հայելի

205-210 Տիգրան Ալեքսանյան
Ջիանդամի գյոռը

211-215 Անոյշ Ակներեան
Անպատասխան
Վերջ
Երկիր իմ

216-219 Շուշանիկ Թամրազյան
Ծուղակների բացատը
Խարույկ
Խոսք անդրադարձի
Հրաժեշտ Աչաչուրին
Աստղերի և աքաղաղի մասին. ուրիշ ոչինչ
Քամիների քարտեզներում

220-245 Արման Գրիգորյան,
Նկարազարդումը՝ Վահագն Ղուկասյանի
2012-ի նեղ ջինսերով ամառը

246-255 Անի Ասատրյան
Մակուկաչու
Բառեր

256-257 Սագօ Արեան
Չգրող Մարդու Աւետարան

258-260 Վահե Ղուկասյան
փայտիկներ

261-264 Էդիկ Պօղոսեան

Թարգմանություն

266-275 Միշել Լերիս (թարգմանությունը՝ Եվա Հակոբյանի)
Գրականությունը որպես ցլամարտ

276-297 Ալեն Գինսբերգ (թարգմանությունը՝ Աննա Դավթյանի)
Ռոնոց
Malest Cornifici Tuo Catullo
Սիրային բանաստեղծություն Ուիթմենի թեմայով
Քաղցր տղա, թո մեջդ դնեմ

298-302 Մայքլ Ջիրա (թարգմանությունը՝ Լիլիթ Հակոբյանի)
Ապրումակցում

303-306 Էրքքա Ֆիլանտէր (թարգմանությունը՝ Թամար Պոյաճեանի)
TORSO

307-310 Ռոլան Տիպիյառ (թարգմանությունը՝ Վազգէն Անդրէասեանի)
Անձրեւը

311-318 Վիսլավա Շիմբորսկա (թարգմանությունը՝ Տաթև Չախեանի)
Ինչպես գրել ինքնակենսագրություն
Անակնկալ հանդիպում
Բաբելոնյան աշտարակում

Դարի զավակները
Վերջն ու սկիզբը
Լուսանկար սեպտեմբերի 11-ից
Բրեյգելի երկու կապիկները
Տանջանքներ
Գովք քրոջս

319-331 Յուլիա Կրիստևա (թարգմանությունը՝ Եվա Հակոբյանի)
Բուլղարիա, իմ ցավ

332-352 Տիգրան Ամիրյան (թարգմանությունը՝ Միսաք Խոստիկյանի)
Յուլիա Կրիստևա.վեպ հակադարձման հեղինակ

353-359 Քրիստոֆեր Աղամյան (թարգմանությունը՝ Աննա Դավթյանի)
Սուրբ բանաստեղծություններ
Սուրբ
Լյուքին
Հրաժարվում եմ հայերեն խոսել…
Երեք իմաստուն.սպանություն 187-րդ փողոցում
Haredim
Անտառում

360-363 Ուրսուլա Կ. Լե Գուին (թարգմանությունը՝ Սիրանույշ Օհանյանի)
Ինքս ինձ ներկայացնելով

364-370 Չարլզ Բեռնսթայն (թարգմանությունը՝ Կարեն Ղարսլյանի)
Պատերազմական պատմություններ

Հարցազրույց

372-386 Արամ Պաչեանի հարցազրոյցը Գրիգոր Պըլտեանի հետ
«Ստացածդ բեռ է, ստեղծածդ՝արարք»

Գրախոսություն

388-418 Մարկ Նշանեան
Բանաստեղծօրէն բնակիլ. Ֆրիդրիխ Հէօլդերլինի շուրջ

419-423 Էլլա Կանեգարիան
Կնոջ ճեղքում. Լուի Արագոնի վեպի մասին

424-431 Արամ Պաչյան
Ձախողման ավանդույթը Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» վեպը

432-440 Վահրամ Դանիելյան
Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը (վերընթերցման փորձ)

Ինքնագիր

Կոտրած հայելու բեկորների անդրադարձը

«Ինքնագիր» հանդեսն իր համար մշտապես ձևակերպում է գրականության, գրական քննարկումների և գրական միջավայրի ձևավորման ու կազմակերպման, գրական փոխանակումների իր տեսլականը: Առաջին տարիներին դա դեռ սովետական շրջանից գործող ամբողջատիրական համակարգի և իներցիայով շարունակվող կամ նոր առաջացող գաղափարախոսական թելադրանքից անկախ գրականության ստեղծման ու տարածման խնդիրն էր:

Այսօր հանդեսը շարունակում է իրագործել գրականության մասին իր պատկերացումները՝ գրականության խնդիրը տեսնելով ոչ թե պարտադրված դիլեմայի առջև կողմնորոշվելը՝ քաղաքական զինվորագրո՞ւմ, թե՞ ապաքաղաքական հոգևոր գործունեություն, ինչը տարածված պրակտիկա է մեր օրերում, այլև գրականություն մտածելը՝ որպես սեփական, ինքնուրույն ու յուրահատուկ աշխարհի ստեղծում: Այդ աշխարհի քաղաքականությունը ստեղծում են հեղինակները, որը ոչ միայն պարզապես հակադրվում է քաղաքական համակարգին, այլ ինքն է սահմանում իր օրակարգը: Գրականությունը ոչ թե սպասարկում է հասարակական պահանջները, այլ ինքն է ստեղծում հասարակություն, ինչպես գիտությունները, քաղաքականությունն ու փիլիսոփայությունը, բայց ի տարբերություն ու ի լրումն սրանց՝ փրկելով աշխարհը միանման ու միաչափ պարզունակությունից: Այս դիրքորոշման շնորհիվ է, որ հանդեսը կարողանում է ընդգրկել ամենատարբեր գրություններ նաև փորձարարական այնպիսի գրողներից, որոնք հավակնում են իրենց գործերով մասնակցել գրականության այդ աշխարհաստեղծ առաքելությանը:

«Ինքնագիրը» հրատարակել է նաև անգլերեն հավաքածու, որի վերնագիրը (Deviation, 2008 թ.) խորհրդանշում էր հանդեսի որդեգրած գրական քաղաքականությունը՝ «շեղվել» մայրուղային համարվողից՝ ստեղծելով կենտրոնացված հարթակից դուրս գրականություն:

Հավաքածուի նախաբանը՝ Manuscripts From Shattered Drawers, ներկայացնում էր հանդեսի գրական գործունեությունը:

Սովետը չկար, բայց դեռ շարունակվում էին դարակներում գրական գործեր պահվել, որոնք չէին համապատասխանում իշխող գրական հաստատությունների ցենզուրային: Ուրեմն, տարածք ստեղծել ոչ միայն սովետական և հետսովետական «դարակային»

գրականության համար, Սովետի օրոք արգելված մոդեռնիստական տարբեր ուղղությունների օտարված ժառանգությունն ընդունել դարասկզբին ընդհատված տեղից ու մտածել շարունակությունը նոր ժամանակներում, նաև «կոտրած» երկրի՝ Հայաստանի՝ իրարից բեռլինյան պատով սահմանազատված գրական գործունեությունն ի մի բերել՝ սփյուռքյան գրական գործերի ներառմամբ քարտեզագրելով ժամանակակից հայ գրականությունը:

«Ինքնագիր» գրական հանդեսը հիմնադրվել է 2005-ին, անգլերեն առաջին անթոլոգիան տպագրվել է 2008-ին:

Ութ տարում փոխվեց Հայաստանը. կենտրոնացված հարթակը նաև այլ ճաքեր տվեց, ու առաջացան գրական տարբեր տարածքներ, տաբուները նոսրացան, ցենզուրան տեղ-տեղ հաղթահարվեց, բայց գրականության գլխին կախվեց մեկ այլ թելադրանք՝ կոմունիստականին փոխարինելու եկած ազատականը՝ շուկան կամ, ավելի ճիշտ՝ շուկայի ուրվականը: Բեռլինյան պատից այս կողմ անցած նոր ուրվականը, Եվրոպայում շրջող նախորդ ուրվականի՝ կոմունիզմի պես շատ ավելի հմայիչ թվաց աստին, քան իր ծննդավայրում: Եվ կոմկուսի նախկին «վստահավոր» կոչումները փոխարինվեցին մի կողմից՝ երկրի նախագահի մրցանակով, մյուս կողմից՝ «բեսթսելլըր» կոչումով, որը բարձր գրականության հավակնորդներին անգամ հրապուրեց՝ չնայած փոքր երկրի համար անգամ փոքր իր թվաքանությամբ: Ուրեմն, գրականությունը՝ իշխանության ու շուկայի պատանդ: Նոր պայմաններում «Ինքնագիր» հանդեսը ձևակերպեց իր գրական անկախությունը՝ սկզբունք ունենալով նաև շուկայական թելադրանքից ազատ տարածք մնալ ու տուրք չտալ ո՛չ շուկայական ամբոխահաճո, ո՛չ էլիտար միտումներին:

Սակայն բեռլինյան պատի անկումը միայն շուկա չէ, որ բացում է, այլև հանդիպման հնարավորություն Ուրիշի հետ՝ պայմանավորելով սեփական ինքնության վերաձևակերպումը: Ժամանակակից հայ գրականությունը ինքն-ուրիշության փորձընկալման յուրահատուկ հնարավորություն ունի՝ երկու գրական լեզու՝ արևելա/արևմտահայերենը՝ իրենց տարբեր պատմաքաղաքական ու սոցիալ-մշակութային շտեմարաններով: Սակայն այդ փորձընկալման համար կարևորը ոչ թե միմյանց հայելն է, այլ՝ միասին՝ զանցումն անդին: Իրար միջով՝ դուրսը:

«Մեր լեզուն կը սկսինք սիրել երբ կ'օտարանայ: Անոր օտարացումը մեզ կը դիւթէ կամ կը զգլխէ: Սակայն այլեւս չենք փարիր անոր»՝ ասում է Գրիգոր Պըլտյանը: Լեզվի օտարացման համար, սակայն, թերևս կարիքը կա անհնարին լռության կամ Բաբելոնի, դադարի կամ ուրիշ/ների: Ինքն իր վրա փակված, իրեն փարված մենախոսքը «լուռ հայելի» է, որին նայողը ինքնաթովված համր ծաղկի է փոխակերպվում: Ինչպե՞ս պոկել ամալգամը, որ հայելին դառնա ապակի՝ թափանցելով ուրիշին:

«Ինքնագիրն» արդեն բաց դարակներն է դասավորում՝ կոտրելով նաև երկաթե վարագույրին փոխարինած «լուռ հայելին», որը օտարացմամբ տրվող բացահայտումի փոխարեն՝ ինքնանույնացման զմայլմամբ է գայթակղում: Հավաքածուի համատեքստում են

հայտնվել Հայաստանում ու երկրից դուրս ստեղծագործող հեղինակներ, ում արևելահայերեն կամ արևմտահայերեն երկխոսությունը ուրիշի հետ, բազմապատկվելով կոտրած հայելու բեկորներում, բազմապատկում է Ուրիշի փորձընկալման ձևերը՝ ըստ ավանդական սփյուռքի ու անկախությունից հետո բաց սահմանների շնորհիվ Հայաստանից այլ երկրներ տեղաշարժվելու հնարավորությամբ տրվող կենսափորձի:

«Ինքնագիրն» այդպես ոչ միայն ինքն իր մասին գրություն է դառնում, այլև գրությամբ ձևակերպում է Ուրիշի հետ առնչությամբ վերստեղծված նոր ինքնություն:

Յուլիա Կրիստևան իր «Բուլղարիա, իմ ցավ» էսսեում «խաչմերուկի հրեշներ» է անվանում իր պես գաղթական գրողներին, որ գրում են նորաբնակ երկրի լեզվով՝ դրա մեջ ներմուծելով մայրենի լեզվից սողոսկող հատկանիշներ: Հայ գրականությունը «խաչմերուկի հրեշների» ավելի վաղեմի ցանկ ունի, բայց ահա արձանագրում է վերադարձ մայրենի լեզվին, երբ օտարագիր փորձի ժառանգները ընտրում են հայերենը՝ ոչ միայն փոքրացնելով լսարանը, այլև երբեմն ավելին՝ գրելով անհայրենիք լեզվով՝ արևմտահայերենով, որ մեռնող լեզու է համարվում: Գուցե այդ պատճառով են նաև երբեմն ընտրվում վիզուալ պոեզիայի տարբեր տեսակներ, որ պատկերն առաջ մղվի, բայց հիմնականում, որպես Թարգմանչաց տոն ունեցող ժողովուրդ, հավատալով թարգմանության անփոխարինելի առաքելությանը:

Վիոլետ Գրիգորյան

Բնագիր

Քրիստիան Բատիկեան

Ըսին որ կենսագրական մը պիտի գրեմ «Ինքնագիր»ին համար. ինքնակենսագրութիւն մը: Իսկոյն շուարեցայ. ի՞նչ գրեմ, արդեօ՞ք ապրած եմ կեանք մը, որ կրնայ հետաքրքրական ըլլալ մէկու մը համար: Սկսայ խորհիլ, թէ ինչ գրեմ, պրպտեցի տոհմիս պատմութիւնը, հոն ուշագրաւ բան մը գտնելու համար, եւ ինչպէս իւրաքանչիւր բարեխիղճ հայ, բնականաբար, կեցայ ցեղասպանութեան նիւթին վրայ: Վերջերս ձեռնարկի մը ներկայ էի, ուր բանախօսն ըսաւ, թէ իրականին մէջ 1915ին մեր կորուստը մէկ ու կէս միլիոն հայ չէր, այլ՝ աւելին: Եթէ ընդունինք, որ այն ատեն ազգին ճիշդ կէսը ջարդուեցաւ, ուրեմն պիտի ընդունինք, որ այսօր աշխարհին վրայ, ջարդը չըլլալու պարագային, ոչ թէ տասը, այլ՝ քսան միլիոն հայ պիտի ըլլար: Կը ստացուի, որ կորուստը ոչ թէ մէկ ու կէս միլիոն էր, այլ այնչափ, որչափ որ հայ կայ հիմա: Հետեւաբար, մեզմէ իւրաքանչիւրն իր alter-egoն ունի հոն՝ ժամանակի եւ տարածութեան միջեւ տեղ մը, որ չծնաւ երբեք, բայց որ իր ուրոյն կեանքը կ’ապրի: Այս գաղափարն իսկոյն տուաւ պատասխանը բոլոր այն հարցերուն, որ տանջած են զիս ողջ կեանքիս ընթացքին. ուրեմն ես մինակ չեմ, ես մէկը չեմ՝ երկու եմ, եւ գոնէ իմ պարագայիս, իմ alter–egoս կ’ապրի ոչ թէ տեղ մը ժամանակի եւ տարածութեան մէջ, այլ՝ իմ մէջս: Ուրեմն հոսկէ կու գայ անձիս սոսկալի երկատուածութիւնը, որովհետեւ, այդ միւսը, եղբայրս ըլլայ, կամ նոյնինքն ես, չափազանց տարբեր է ինձմէ (կամ ես՝ իրմէ): Մէկ մարմինին մէջ ապրած ըլլալով, սակայն, տարբեր կենսագրականներ ունինք, եթէ մեզմէ մէկը ծնած է, ըսենք, Պոլիս, միւսը կրնար ծնած ըլլալ Պուրքինօ Ֆասօ կամ Երեւան: Յետոյ օր մը եկաւ, ասկէ քանի մը տարի առաջ, երբ այս երկու «ես»երս, պարագաներու բերումով, իրարու ձուլուեցան. եղայ արեւմտահայ մը արեւելահայ իրականութեան մէջ, կամ արեւելահայ մը՝ արեւմտահայ երազներու մէջ: Ուր կ’աւարտի ան, եւ ուր կը սկսիմ ես՝ չեմ գիտեր: Միայն գիտեմ, որ երկուքս ալ կը փափաքինք գրելու: Բայց ինչո՞ւ համար կը գրենք. հայ գրական շրջանակներուն մէջ բաւական տարածուած հարցում մըն է ասիկա, մանաւանդ վերջին տարիներուն: Օր չ’ըլլար, որ մէկը սա հարցումը չընէ՝ ինչո՞ւ համար կը գրես: Կայ նաեւ շատ տարածուած պատասխան մը. կը գրեմ, որովհետեւ չեմ կրնար չգրել: Սա վերջին կէտին վրայ խորհեցայ եւ հասկցայ, որ դիւրաւ կրնամ չգրել: Ուրեմն ինչո՞ւ կը գրեմ (կամ՝ կը գրենք): Պատասխանը գտայ ուշ, եւ, ցաւօք, շատ վիպական չէր ան. կը գրեմ (– ենք), որովհետեւ ուրիշ ոչ մէկ բան ընել գիտեմ, ուրիշ ոչ մէկ բանի համար պիտանի եմ, եւ քիչ մը սարսափելի է գիտակցիլ, թէ կեանքս այդպէս պարապի պիտի երթայ: Անոր համար կը գրեմ: Այսչափ:

Captain America[1]

*Միշէլ***ին**

Հերոս ըլլալու համար մինակ պիտի ըլլաս:

Սթիվ Ռաճըրզ[2] մինակ է: Սթիվ Ռաճըրզ ընկեր մ’ունէր, որ կորսնցուց: Անկէ վերջ մինակ է: Անկէ վերջ հերոս է: Որովհետեւ ցաւ ունի (պէտք է ցաւ ունենաս որ հերոս ըլլաս, առանց ատոր չ’ըլլար):

Սագօ տակաւին ընկեր մը չէ կորսնցուցած: Շիտակը՝ չունի ալ որ կորսնցնէ: Ուրեմն տակաւին հերոս չէ, բայց կ’ուզէ: Պիտի ըլլայ: Հետեւաբար, պէտք է ընկեր մը գտնէ, որը յետոյ պէտք է կորսնցնէ (պայման չէ մեռնի, կրնայ եւ պարզապէս դաւաճանել), որ ի վերջոյ հերոս դառնայ:

Բայց ատիկա դիւրին բան մը չէ, երբ հերոսդ Պաթմընը կամ Սուփըրմանը չէ (ոչ նոյնիսկ Սբայտըրմանը[3]), այլ 1940ներու մոռցուած փոշիոտ յիշատակ մը:

Քափթըն Ամերիկան փոփիւլար չէ:

Հետեւաբար, կը մնայ կա՛մ լուզըր դառնալ, կամ ալ ձեւացնել թէ Պաթմընն է քու հերոսդ: Եւ քանի որ յոգներ է այլեւս միջակութիւն ըլլալէ եւ յստակ որոշեր է նոր դպրոցին մէջ լուզըր չըլլալ, ուրեմն ամառնային արձակուրդի ընթացքին պիտի կարդայ ամէն բան Պաթմընին մասին, դիտէ բոլոր ֆիլմերը, եւ վերամուտին նոր դպրոց մտնէ՝ ամբողջապէս պատրաստ ընկեր գտնելու:

(ատիկա միայն գործին համար է, հաւատա՛, սանկ թէ նանկ դուն աւելի զօրաւոր ես, Սթի՛վ):

Նայլընէ թափանցիկ տոպրակը վար կը սուրայ՝ օդին մէջ դեղին կէտ մը իրբեւ: Կ’ըլլայ որ արեւի շողը հպի դեղին հեղուկով լեցուած տոպրակին եւ այն ատեն հրաշք մը տեղի կ’ունենայ: Կ’ըսես պզտիկ արեւ մը կը լողայ օդին մէջ:

Յետոյ տոպրակը կը հասնի ասֆալթին: Եթէ մարդու մ’իսկ չզարնուի, նորէն իր գործը կ’ընէ:

«*Հայուանլա՛ր*[4]», կը հասնի վարէն:

Իրենք վերէն, հինգ յարկանի շէնքին տանիքէն, կը խնդան միայն: Սկիզբը հերթական տոպրակը մարդոց վրայ նետելէն վերջ կը փախին, վար կ’իջնեն եւ կը պահուըտին ձեղնայարկին մէջ: Բայց մէկը վեր չ’ելլեր զիրենք բռնելու: Շէնքը վերելակ չունի. մինչեւ վեր հասնիս, սրիկաներն արդէն փախած կ’ըլլան:

Ատեն ատեն տղոցմէ մէկը կը ստիպուի վար իջնել եւ թաղի անկիւնի խանութէն ջուր գնել: Ջուրը սուղ չէ, շիշին համար մէկ լիրա միայն, սակայն շուտով դրամնին կը սպառի, եւ կը ստիպուին ձեղնայարկի ժանգոտած ծորակէն ջուր առնել, ջանալով չյիշել մեծերուն խօսքերը աղտոտ ջուրի վտանգներուն մասին: Ջուրը կարեւոր է, առանց անոր միզապարկնին չի լեցուիր եւ ստիպուած կ’ըլլան տոպրակը ոչ թէ դեղին հեղուկով լեցնել, այլ պարզ ջուրով: Բայց քիչ քիչ մէզին գոյնն ալ կը բացուի եւ շատ չի տարբերիր ջուրին գոյնէն:

շռէ ծօ
ալ չեմ կրնար չի զար կոր ի՞նչ կ’ուզես եա

Ուժասպառ են. ինք ու Ալեքս երեք անգամ կրցան լեցնել տոպրակները, Կարօ՝ չորս անգամ: Ջուրի համն այլեւս սրտխառնուք կը պատճառէ: Խաղը վերջնականապէս հմայքը կորսնցուցեր է:

լաւ մնացած փոպրակներուն մէջ ջուր լեցնենք

Ջուրով լեցուած տոպրակներն առանց մասնաւոր խանդավառութեան վար կը նետեն: Բոլորը մէկէն:

«*լաանէ՛թ օլսո՛ւն*[5]», կը հասնի վարէն:
ինչ ընե՛նք
չեմ գիտեր փուն երթալու սիրտ չունիմ
հապա ի՛նչ ընենք
քեզի՛

Կը խնդան: Քիչիկ մը կ՚առոյգանան:

կղզի երթանք…

Շատ չի յիշեր պարագաները թէ ինչպէս գտաւ առաջին ընկերները: Պարզապէս այդպէս եղաւ: Երրեակ միութիւնը ըսես ինքն իրմով ստեղծուեցաւ: Առանց մասնաւոր ճիգի: Յետոյ օր մը –երբ միութիւնն այլեւս չկար – յանկարծ անդրադարձաւ որ ատկէ առաջ ալ կեանք մը ունեցած ըլլալու էր: Փորձեց յիշել, բայց ոչինչ մտաբերեց:

> Եւ կար տղայ մը որ իրիկունները ձեռքի պզտիկ լամբարի լոյսին ներքոյ վերմակին տակ գծանկարուած պատմութիւններ կը կարդար Քափթըն Ամերիկայի մասին: Ծովուն վրայ նորէն փոթորիկ կայ: Ծովահայեաց փայտէ տունը կը ճռնչէ, կ՚ըսես անզօրութենէն կու լայ: Տունին բոլոր լոյսերը մարած են: Չըլլայ որ մաման արթննայ եւ տեսնէ, որ պառկած չես տակաւին:
> «Քա՛, առտու ի՛նչպէս պիտի ելլես, հա՛տէ պառկելու»:
> Ուուուուուուուու՛, կը ձայնէ փոթորիկը, եւ բուխերիկին կրակներն ալ աւելի կը կատղին: Պէտք չկար կրակին նայելու, հիմա քանի մը երկվայրկեան աչքերդ պիտի գոցես՝ նորէն ձեռքիդ գրքոյկը կարենալ տեսնելու համար:

Ուրեմն ոչինչ կար անկէ առաջ: Ուրեմն ծնաւ ինք օր մը ծովափին, Կարոյին եւ Ալեքսին քով կեցած:
Ծովափը, պզտիկ կղզին եւ տղաքը, որ քար կը նետեն ծովուն մէջ: Տեսարան մը որ մտապատկերէն դուրս ըլլալ կը կարծէ: Վստահ է՝ եթէ ճիշդ հիմա թաքսի առնէ եւ աճապարէ օդակայան, յետոյ օդանաւով քանի մը հազար քիլոմեթրեր կտրելով հասնի այն պզտիկ կղզին, պիտի իրական գտնէ այդ տեսարանը: Պիտի գտնէ տղաքը եւ իրեն՝ կեցած հոն, ժամանակէն դուրս տեղ մը:
Կղզին մեծ չէ: Պուրկազատայէն[6] 20 վայրկեանի լողի ճամբայ միայն, պայմանով եթէ լաւ մը լողալ գիտես: Ալեքս մինակը չի կրնար հոն հասնիլ, իր օգնութեան պէտքն ունի: Բայց կղզին Ալեքսին կղզին է: Մանկութեան Ալեքս կը կարծէր, թէ հոն պզտիկ էլֆեր կ՚ապրին:

Նէնէս անանկ կ՚ըսէր… իրական կ՚ըսեմ կոր…
ծօ չոճուխ չես ալ էլֆեր չկան
ծօ ապուշ չեմ գիտեմ… միայն նէնէն կ՚ըսէր իրիկունները հոնկէ եկող լոյսը իրականին մէջ էլֆերուն խարոյկներուն լոյսերն են

հոն լո՞յս կայ… ուրկէ՞ հոն մէկը չ՚ապրիր ամայի է…
կեցիր գիշերը կը ցցնեմ…

Գիշերը Ալեքսին պիտի մնան, բայց նախ ծովափ կ՚ելլեն:

հիմա՛ հիմա կը փեսնէք…
հա Ալեքս
նայէ՛ նայէ՛

Ոչինչ կը տեսնէ, մութ կէտ մը միայն, աւելի հեռուն՝ Հէյպէլիատային[7] լոյսե-րը: Կարոյին կը նայի, որ շուարած ուսերը կը թօթուէ:

այո կը փեսնեմ կոր… էլֆերուն խարոյկներուն լոյսն է…
մի՛ ծաղրեր ծօ էլֆեր չկան… միայն լոյսը կայ
հա՛ ըսի կը փեսնեմ եա՛
իրա՞ւ
իրա՛ւ…

Նորէն լոյսեր կը փնտռէ, բայց չի գտներ:

իրա՞ւ
չէ, բայց դուն ալ անանկ ըսէ
աա՛…

Ալեքս անհանգիստ կը դառնայ երազին մէջ:
Սթիվ Ռաճըրզ յամառ է: Ան ամէն գնով պիտի հասնի իր նպատակին:
Իր նպատակն Ալեքսն է: Ալեքս կրնար Պաքի Պարնզ[8] ըլլալ, հակառակ անոր որ քիչիկ մը աղջիկական դիմագիծ ունի: Բայց Կարոն Քափթըն Ամերիկա չէ: Կարոյին հերոսը Պաթմընն է:

այսօր եկէք այդ կղզին երթանք
բ՞նպոր… հոն նաւ չի քալեր
լողալէն
չես կրնար
կրնա՛մ
իրա՞ւ
կ՚ըսեմ հա՛…

Ալեքս լուզըր պիտի ըլլար դպրոցին մէջ (ինչպէս ինք՝ անցեալները), եթէ Կա-րոյին մանկութեան ընկերն ըլլալու բախտաւորութիւնը չունենար: Բայց Ալեքս վերջապէս պիտի տեսնէ, որ Կարոն իրմէ զօրաւոր չէ: *(է հա, գէշ փղայ չէ, բայց քիչ մը ապուշ է)*: Յետոյ Սագօ նոր ընկեր է, տեսակ մը մինակ է երրեակին մէջ: Առենն է փոխելու ասիկա:

Սթիվ Ռաճըրզ… Սթիվ Ռաճըրզ է:
Այլեւս իրաքանչիւր շարժում ծակող ցաւ մը կը ծնի, որմէ մարմինն ամբողջ կը ջղացնցուի: Շունչը չի բաւեր, ականջներն ամբողջապէս ցած, միապաղաղ

աղմուկով լեցուած են: Եւ ոչինչ կայ այլեւս այդ ջիղերը մեռցնող գվուոցէն եւ կապոյտէն զատ:

(իսկ Ալեքսին աչքերուն կապոյտը երանգով կը զատուի ծովուն աղւոր կապոյտէն:)

Ծովուն մակերեւոյթն անութներուն կը զարնուի ձեռքերուն ամէն հարուածին հետ, կ՚ըսես բութ ածելի մը թեւատակերը կը քերուըտէ, քիթէն բան մը կը հոսի եւ բերնին մէջ ժանգի համ կայ:

Պէտք է վերջին ճիգով մը հասնիլ ափին:

Սթիվ Ռաճըրզ անձնատուր չ՚ըլլար: Ան պիտի պայքարի պիսակաւոր երեսներով տղուն ժպիտին համար:

> լոյսը կ՚աղօտի, եւ բուխերիկին դիմաց աչքերը կը գոցուին:
> «ծօ նամուսսո՛ւզ, կը բաւէ, պառկի՛ր»:
> Հովը կը զարնէ փայտէ պատերուն. փոթորիկ կայ ծովը:
> Բոցը կը մաշի:
> Լոյսը կը մաշի,
> լոյսը կը հիննայ,
> լոյսը կը մեռնի:

Ջիղերուն եւ կամքին վերջին լարումով մը առաջ կը նետուի: Ծունկերն արդէն խորտուբորտ աւազը կը զգան, բայց կը շարունակէ խելագարի պէս ձեռքերը ջուրին զարնել:

Ա՛լ հասաւ: Դողալէն ու ճօճուելէն ոտքի կը կենայ եւ հազիւ կը հասնի ծառի մը, զոր պիտի գրկէ չիյնալու համար: Յետոյ կը փսխէ: Յետոյ բերնին վրայ կ՚իյնայ աւազին, այլեւս անզօր կեցած մնալու: Դէմքը՝ փսխուքին մէջ:

(այլեւս գիտցի՛ր՝ Սթիվ Ռաճըրզ զօրաւոր է, քան Պաթմըն: Գիտցի՛ր որ Սթիվ ծովեր կրնայ անցնիլ նպատակին հասնելու համար… քեզի՛ համար… Սակայն ի՞նչպէս գիտնաս, fuck!…)

Ի՞նչպէս պիտի գիտնան որ տեղ հասեր է: Ասոր մասին չէր մտածած: Պոռայ նէ՝ չեն լսեր: Կրնայ խարոյկ վառել… Անիծեա՛լ կղզի, չորցած ծառ չկայ հոս: Կը փորձէ կանանչ ծառերէն ճիւղեր փրցնել: Ձեռքերը կ՚արիւնին:

Կրցաւ, բաւականաչափ փայտ ժողվեց:

Բայց ինչո՞վ վառել:

Ափը չէր երեւեր, բնաւ յոյս չունէր, թէ պիտի կարենար եա հասնիլ լողալէն: Բայց հասաւ: (*Սթիվ ամէն բան կրնայ):*

Կէսգիշերը անց է ալ: Ծովափն ամայի է: Պաղէն ակռաներն իրարու կու գան, թաց հագուստը մարմնին փակած է եւ կ՚այրի: Օրօրուելէն դէպի նաւամատոյց կը քալէ. բոլոր սրճարաններն ու խանութները գոց են: Չկան եւ փրկարարներ կամ ոստիկաններ: Ուրեմն մէկը չի փնտռեր զինք:

Այս ժամուն նաւ ալ չկայ: Պուրկազատային վրայ մէկը չունի, որ գիշերը քովը անցնէ:

Պաղ է, շատ պաղ:

Սթիվ Ռաճըրզ չի յուսահատիր:

Փաթթուած բրդեայ ծածկոցի մը մէջ՝ պատուհանէն կը դիտէ պարտէզը, որ անձրեւի մոլեգին շիթերու ներքոյ ճահիճի վերածուած է: Ցեխոտ ջուրի

առուակներ կը վազեն հոս ու հոն, մինչ անդին ծովեզերքէ բռնուած եւ խաղի համար պարտէզ բերուած խեչափառ մը, կէս խրուած ցեխին մէջ, կը փորձէ քալել դէպի անձրեւաջուրէ գոյացած պզտիկ լճակը, ծով կարծելով զայն:

ես մեղք չունիմ Սագօ Կարոն ըսաւ թափրոն կը խաղաս կոր
ի՞նչ թափրոն ծօ
ըսաւ վսփահաբար փեղ մը պահուըփեր ես... այդչափ ուժ չունիս կըզի հաս-նիս
բայց ես հասայ
իրա՞ւ
հա՛ կ՚ըսեմ

Ալեքս կեցաւ:

կրնա՞ս օգնել ես ալ հոն հասնիմ
կրնամ... բայց մաման ըսաւ դպրոցէն շիփակ փուն երթամ հիւր ունինք
քու գիփնալիքդ է ես պիփի երթամ
մինա՞կդ
չեմ գիփեր... կրնայ ըլլալ Կարոն կանչեմ

Նախանձեցաւ:

չէ Ալեքս սպասէ... կու գամ կոր բայց կանուխ պիփի դառնանք

Արեւը կը մարէր ալ, երբ թէրմինիւս ելան:

Սագօ դուն սեքս ըրած ունի՞ս
չէ... դո՞ւն
ես ալ չէ բայց ամէնուն կ՚ըսեմ ըրած եմ... նպարավաճառ Այլինին աղջիկը գիփե՞ս մը անոր հեփ
բայց ըսիր չես ըրած
ապուշ ափիկա դուն գիփես չեմ ըրած բայց միւսները գիփեն ըրած եմ
հմմմ...

Ծովէն պաղ օդ կու գայ, բայց արեւամարի վերջին լոյսերը տաքի խաբկանքը կը ստեղծեն:

Սագօ
հէ՞
անուշիկ աղջիկ մը ըլլար սա պահուս ի՞նչ կ՚ընէիր
չեմ գիփեր... չեմ խորհած
կրնա՞յ ըլլալ փկարութիւն ունիս
չէ եաա
կը կենա՞յ
ի՞նչը
ի՞նչը պիփի կենայ
աաա... հարկաւ որ կը կենայ
ցոյց փուր

հո՛ս… կը փեսնեն որ…
մարդ չկայ հոս ցոյց փուր
հիմա կեցած չէ
վնաս չունի ցոյց փուր
հոս չէ եկուր ծառերու քով երթանք

Ալեքսին նայուածքէ՞ն էր, թէ իր սրտի կատաղի տրոփիւնէն, բայց…

ծօ, ըսիր կեցած չէ… ահա կեցած է
նոր եղաւ
մէյ մը դպնամ
չէ Ալեքս… մանչ ենք… ի՞նչ կ'ընես կոր…
աղուոր չէ՞
չէ… Չեմ գիտեր…
աղուոր չէ՞
…….

Գիշերը յառաջացած է ալ: Անշուշտ, մայրը պիտի սպաննէ զինք: *Վնաս չունի, մանչ ես:* Եւ որովհետեւ Ալեքս այդչափ անուշիկ է, Սագօ կրնայ եւ ծեծին դիմանալ: Սթիվ Ռաճըրզ ծեծէ չի վախնար:

Ալեքս…
հէ՞
նորէն պիտի ընե՞նք
քու որոշելիքդ է չհաւնեցա՞ր զիս
հաւնեցայ… բայց ես քեզի պէս գեղեցիկ չեմ…
ի՞նչ կապ ունի ծօ
դուն ինծի հաւնեցա՞ր մը
քիչ մը քրփինք կը հոտէիր կոր
ապուշ
իրաւ կ'ըսեմ
կը զանէիր նէ չսկսէիր
չէ, չէի զաներ…

Անօթութիւն կը զգայ:

Ալեքս ուտելիք բան ունի՞ս քովդ
ի՞նչ
ի՞նչ գիտնամ ըսի հետդ բան մը բերած ըլլայիր
հա՛ բերած եմ
ի՞նչ
կռնա՛կ[9]

Ծիծաղ մը կը պայթի, որ շուտով կը կորսուի երկինքի պոռոցին մէջ: Կատաղի անձրեւը անտարբերութեամբ կը հալածէ մանչերը, որ ցեխի մէջէն կը վազեն պատսպարան գտնելու:

Սթիվ Ռաճըրզ միշտ յաղթական է:

Կարոն քովի վրանն ընտրեց: Մէկը իրեն բան չըսաւ: Պարզապէս Պաթմըն պարտուեցաւ:

> «Որովհետեւ ուժեղ մարդը, որ ողջ կեանքի ընթացքին գիտէ թէ ինչ է ուժը, կրնայ կորսնցնել յարգանքն այդ ուժին հանդէպ, բայց տկար մարդը գիտէ ուժին արժէքը եւ գիտէ՝ ինչ է... կարեկցութիւնը»[10]:

Անձրեւի կաթիլները միապաղաղ յամառութեամբ մը կը զարնուին վրանին կտաւէ տանիքին: Կաթոցին ձայնը կը միահիւսուի ներսը քնացած տասնեակ տղոց փսփսոցին: Սկաուտական բանակումին երրորդ օրն է: Անձրեւին պատ-ճառով ամբողջ օրը ծածքին տակ անցուցած տղաքը ձանձրոյթէն աւելի կա-նուխ պառկեր են:

Տրտմութիւն մը կը տիրէ վրանէն ներս:

Եւ որովհետեւ Ալեքսին գիշերազգեստէն եւ ոսկեգոյն մազերէն թարմութեան հոտ կու գայ, Սազօ տրտում չէ: Տղան կռնակով աւելի կը փակի իրեն, եւ ինք քիթն աւելի կը խրէ ոսկի մազերուն մէջ:

Սթիվ Ռաճըրզ երբեմն կրնայ երջանիկ ըլլալ:

քեզի բան մը պիտի ըսեմ
ըսէ

Անտառը տակաւին խոնաւ է, բայց արեւն արդէն կ՚երեւի ծառերէն վեր: Հո-ղը գոլորշի կ՚արձակէ: Քանի մը ժամ վերջ անտանելի տաք մը պիտի սկսի: Ալեքսին քունքերէն քրտինքի կայլակ մը կը ծորի ձախ այտէն ի վար:

եւ
հա՜... ըսածս կրնայ չճանչխութիւն թուիլ հիմա
վնաս չունի ըսէ
մէկ տարի առաջ որ ձեր դպրոց փոխադրուեցայ
ահա
կը յիշե՞ս Կարոյին հետ կը վիճաբանէիք թէ ով է աւելի զօրաւոր՝ Պաթմը՞ն թէ Սբայտըրման
հա դուն ալ ըսիր թէ Պաթմըն... այն ատեն ծանօթացանք... շիպակը եւ քեզի չսիրեցի ատոր համար բայց Կարոն պնդեց ըսաւ գէշ տղայ չես
հա՜
հա՜

Քրտինքի պզտիկ առուակը Ալեքսի պարանոցին կը հասնի:

եւ
հէ՞
ի՞նչ պիտի ըսէիր չըսիր
հա՜... այն ատեն անանկ ըսի որ ձեզի մտերմանամ իմ հերոսս այդ երկուքէն ոչ մէկն է
իսկ ո՞վ
Քափթըն Ամերիկա՜ն
իրա՞ւ կ՚ըսես չէ թէ կատակ կ՚ընես կոր
իրաւ
բայց Քափթըն Ամերիկան լուզըր է
ո՞վ ըսաւ

ես ըսի ամենէն փիմար սուփըրհիրոն է
փիմարը դո՛ւն ես
ամա՜ն լաւ հանդարտի՛ր… օքէյ փիմար չէ
չէ արդէն ըսիր փիմար է
խօսքս եփ կ՚առնեմ կոր մի՛ կպողիր… զո՞հ ես… եկուր կըզի երթանք
չէ չեմ ուզեր
քըմ–ա՛ն ի՜նչ չոճուխութիւն կ՚ընես կոր
հիմա պիտի շարունինք որ պարոնը սփուզէ ես գացի
սագօ կեցիր
կ՚ըսեմ գացի ինչ կ՚ուզես նէ ըրէ
ծօ մի՛ խենդենար… եկուր կըզի երթանք թող պարոնը բարկանայ նայըէթ
չէ՛
օքէյ մինակս կ՚երթամ
ի՜նչպէս
հուսկէ կը լողամ
հուսկէ հեռու է չես կրնար յետոյ կ՚ըսեն մշուշ պիտի ըլլայ
ես կրնամ… Սագօ եկո՛ւր մի նեղանար
ինչ կ՚ուզես ըրէ՛ ես գացի

Մշուշը կու գայ անսպասելի: Յանկարծ կ՚երեւի Վոսփորի կամուրջին կողմէն, կը հասնի Գըզ– Քուլէսէ, յետոյ կը տարածուի ծովուն վրայ: Նաւերը կ՚աճապարեն դէպի նաւամատոյցներ, միայն հոս ու հոն անթափանց մշուշին մէջ երբեմն կը նշմարուին ձկնորսական ուշացած նաւակներուն մսկոտ լոյսերը: Նաւերուն վրայ անակնկալի բռնուած հազարաւոր ուղեւորներ սարսափով կը նային ամենակուլ մշուշին: Օդին սաստիկ խոնաւութենէն ու անողոք տաքէն հեւասպառ՝ ոչ ոք կը խօսի, ճայերն իսկ լուռ են: Միայն ծովուն աղմուկը կը մնայ:
Յետոյ, քանի մը ժամ վերջ, յուլիսեան մշուշը կը ցրուի, այնպէս, ինչպէս յայտնուեր էր:
Տարօրինակ ոչինչ կայ. Պաքի Պարնզ միշտ պատանի պիտի մնայ:
Սթիվ Ռաճըրզ անզօր է մշուշին դէմ:

Բուխերիկը կը կայծկլտայ, գունաւոր էջերը գունաւոր բոցերով կը վառին մէկը միւսին ետեւէն:
(այս մէկը գոնէ պահէ, առաջին հրապարակութիւնն է, հազար լիրա փուեր ես…):
Վերջին գրքոյկը կը նետուի կրակին մէջ:
“…also Captain America’s young ally”, կը կարդացուի կողքին վրայ, յետոյ բոցը կը կլլէ այս մէկն ալ, եւ ամէն բան կը կորսուի լոյսին մէջ:

Մարտ, 2015

[1] Այս գրութիւնը, ինչպես նաև հաջորդ երկու պատմութիւններ (Winter Soldier և Amazing Fantasy) մաս կը կազմէն Avengers շարքին:
[2] Steve Rogers – Ճօ Սայմընի եւ Ճէք Քիրպիի «Captain America» գծանկարային պատմութիւններու (comic books) գլխաւոր հերոսը:

[3] Batman, Superman, Spider-Man – համանուն գծանկարային պատմութիւններու գլխաւոր հերոսները:
[4] Hayvanlar (թրքերէն) – անասուններ:
[5] Lânet olsun! (թրքերէն) – Անիծուի՛ք դուք:
[6] Burgazada – Պոլսոյ Իշխանաց Կղզիներու (Prens Adaları) մեծութեամբ երրորդ կղզին:
[7] Heybeliada – Իշխանաց Կղզիներու մեծութեամբ երկրորդ կղզին:
[8] Bucky Barnes – Քափթըն Ամերիկայի պատանի օգնականը:
[9] Կռնակ բերել (խօսակցային) – գիջութեամբ զբաղիլ (masturbating):
[10] ”Because the strong man who has known power all his life, may lose respect for that power, but a weak man knows the value of strength, and knows… compassion”© Captain America.

Winter Soldier

Տարօրինակ ոչինչ կայ. Պաքի Պարնզ միշտ պատանի պիտի մնայ (*եւ ոչ մէկը կը մնայ մեռած… Պաքիէն զատ*[1]):

2014 – Եւ տարիներ վերջ Լէօ պիտի վերադառնայ իր քաղաքը: Օդակայանէն ելքին ինքզինք պիտի գտնէ օդակին մէջ միշտ թափառական եւ յաւերժօրէն գնչու պզտիկներու, որոնք յամառօրէն *փարա՜, փարա՜, փարա՜* պիտի պոռան: Այն ատեն Լէօ պիտի անդրադառնայ որ տասնամեակներու իր բացակայութեան ոչինչ փոխուած է այս քաղաքին մէջ: Քանի մը դրուշ նետելով անդադար ճչացող եւ խնդացող մանուկներուն, պիտի աճապարէ պատսպարուիլ մօտակայ թաքսիին մէջ: *Գարըզքի՛ւղ*, պիտի ըսէ վարորդին, խզուած ձայնով:
Նորէն ձմեռ, նորէն ձիւն:

Դեռ մանկութենէն Լէօ չէ սիրած ձմեռը, ոչ իսկ կաղանդը եւ իր տարեդարձը, որ Յունուարի վերջաւորութեան կու գայ: Չի կրնար բացատրել թէ ինչու: Հաւանաբար, տէպրէսիվ մանուկ մը եղած է: Հիմա 19 տարեկան եղաւ, բայց նորէն ոչ կաղանդը, ոչ ալ տարեդարձը կը սիրէ: Չի գիտեր, հաւանաբար, տակաւին տէպրէսիվ է եւ չ’անդրադառնար ատոր:

Կ’ըսեն՝ դիւրին բան չէ ձմեռ ատեն ծնած ըլլալ:

…այդ փարի շափ պաղ ըրաւ օդլում Պոլիս անանկ բան մը չէինք փեսած… Ձիւն, ձի՜ւն չորս դին… մարդ կրնար մէջը թաղուիլ… պապերազմն ալ միւս կողմէն… էօֆֆ ի՜նչ պաղ էր…. ծննդափունէն ալ ամէն օր լուրեր կ’առնէինք թէ նորէն չոճուխներ մեռան պաղէն… կ’երեւակայե՞ս կոր…

Մէկը յոյս չէ ունեցած, թէ ինք կ’ապրի: Պիտի մեռնի, ըսած են, բայց չէ մեռած: Երկու օր վերջ զինք – լաթերու մէջ փաթթած ասուն մը, որ ըսելու փոխա-

րէն կը ճչայ միայն– մօրը ձեռքը տուած են եւ տուն ճամբած:

…անունդ ալ, իշթը, սաանկ ա-լա-ֆրանկա բան մը դրինք… եւ ըսի պարապ բան է, բայց մայրդ թէ չըլլար կը մեռցնեն եղեր չոճուխը… այն ատեն կը վախնային կոր մեր անուններէն… եղեր անունէն կը գիտնան ով ըլլալդ կը մեռցնեն… ամմա մէկը չմեռցուցին, ափի պաղն էր որ ազգ-ցեղ չէր ճանչնար… բայց մերիններուն եկուր բան հասկցուր…

Նոյն թուականն էր՝ ինք ծնաւ, եւ Պաքի կորսուեցաւ ձիւներուն մէջ: Ատիկա գիտցաւ, բայց ուշ:

Հիմա, Յունուար 1964ին, նորէն ձիւն ձմեռ է ամբողջ Թուրքիոյ մէջ: Պաղ մը, որուն համար – ինչպէս ամէն պաղի համար – կ՚ըսեն թէ՝ *Պոլիս սաանկ բան մը չէինք տեսած բնաւ:*

> 1964 – Թուրքիոյ գրեթէ բոլոր շրջաններուն մէջ սոսկալի ձմեռ եւ ցուրտ սկսած է 10 օրէ ի վեր: Պոլիս, Զմիւռնիա եւ ամբողջ Անատոլուն ձիւնով ծածկուած է: Անատոլուի մէջ բազմաթիւ անձեր սառած են: Բանջարեղէնի եւ պտուղի բերքերը փճացած են: Սովալլուկ գայլերը գիւղերը եւ գիւղաքաղաքները իջած են[2]:

Կեանք մը ամբողջ ճերմակ մութին մէջ: Խաւար մը, որ խաւար չէր ամբողջովին: Գուցէ այդպէս կը պահէին խաւարին մէջ անոնք որ պիտի աստուած դառնային, մանուկներ, առնուած մայրերէն, մութին մէջ պահելու համար, որ յետոյ լոյսի պիտի բերուէին շեղբի մէկ հարուածի համար միայն: Անկէ վերջ պիտի աստուած ըլլային:

Կ՚ըլլար որ աղօտ լոյս մը երեւէր ճերմակ (ճերմա՛կ) թաղանթին ետին: Այդ կեանքին մէջ չկային մարդկային ձայներ, բայց կը յիշէր – կամ կը կարծէր յիշել – ձայն մը՝ դար մը առաջ (կեա՛նք մը առաջ):

միշտ քեզի հետ պիտի ըլլամ Պաքի

Սթի՛վ էր անունը տղուն, ուրի՛շ բան մը: Չէր յիշեր: Միայն՝ օդանաւ մը, որ ամէն գնով պիտի ազատագրէին չարագործէ մը: Կ՚ըսես պատերազմին ելքը ատկէ կախեալ ըլլար: Յետոյ՝ զօրաւոր պայթում. յետոյ՝ Սթիվին (արդեօ՞ք ճիշդ կը յիշէ անունը) ձեռքը՝ իբրեւ վերջին յոյս, եւ ինք՝ կախուած այդ ձեռքէն՝ կը ճօճի ճերմակ անեզրութեան վրայ:

չձգես իյնամ Սթիվ կ՚աղաչեմ
միշտ քեզի հետ պիտի ըլլամ Պաքի

Բայց ձայնը կը դաւաճանէր միշտ, կը ձգէր որ վար իյնար օդանաւէն: Անկումը դանդաղ էր, ճերմակ ձիւնին ովկիանը կը մօտենար, կը մօտենար յետոյ պիտի ըլլար բախումը: Բայց՝ միայն փափուկ խրում ձիւնի մէջ, յետոյ՝ խորասուզում մինչեւ… օ՛ր մը տեւեց, ամի՛ս մը թէ… չի յիշեր՝ ուր կեցաւ:

Յետոյ օր մը – քանի՜ տարի կամ դար յետոյ – թաղանթէն անդին լոյսը աւելի զօրաւոր դարձաւ: Պաքի ոչինչ զգաց, բայց լոյսը երթալէն աւելի մեծ յամառութեամբ թափանցեց ձիւնէ ծածքէն ներս, եւ ինք այլեւս ստիպուեցաւ զգալու ոչինչը: Յետոյ տեսակ մը տաք թացութիւն եղաւ, ջուրի կայլակներ վազեցին քունքերէն դէմքն ի վար, դէպի պարանոց, կուրծքը եւ աւելի վար: Քիչ քիչ զգալու սկսաւ ինքզինք, որ շրջակայ ձիւներէն աւելի ջերմ էր: Յետոյ անդրադար-

ձաւ թէ կրնար ոտքերը շարժել։ Գուցէ տարի մըն ալ այսպէս անցուց, մինչեւ օր մը գիշեր ատեն ծերուկ գայլ մը Պաքիին հոտն առաւ։ Գայլը փորեց, փորեց մինչեւ հասաւ պաղած դէմքի մը։ Սառ կապած զոյգ մը աչքեր կը նայէին իրեն անանկ անտարբերութեամբ, որ անասունը յանկարծ ծայրայեղ յուսահատութիւն զգաց։ Այն ատեն յիշեց իր լակոտութիւնը, յիշեց ինչպէս պզտիկ աղջիկը կարմիր ժապաւէն անցուցած էր իր վիզը, եւ ինք շատ հպարտ էր։ Յիշեց որ գայլ չէր, այլ թշուառ շուն մը՝ տունէն վռնտուած եւ օր մը ինքզինք զօրաւոր գազան երեւակայած։ Այն ատեն յուսահատեցաւ, անդրադարձաւ որ վերջը մօտ էր եւ հեռացաւ։ Տղուն չդպաւ. շունը մարդուն բարեկամ է, չէ՞։

Իսկ Պաքիին դէմքը այդպէս բաց մնաց։ Անզգալաբար թարմ օդ ծծեց, բայց կ՚երեւի շնչելու վարժութիւնը կորսնցուցած էր, թոքերը սաստիկ ցաւեցան։ Առտու արեւը ելաւ եւ շիտակ աչքերուն զարկաւ, մարմինը պաշտպանուեցաւ, եւ աչքերը գոցուեցան։ Առաջին շարժումն էր տարիներու ընթացքին։ Երկու օր վերջ յանկարծ որոշեց ոտքերը շարժել։ Ձիւնն այլեւս ամուր չէր, ծածքը փլաւ, եւ մնաց այդպէս բաց պառկած՝ ցերեկները՝ արեւին տակ, գիշերները՝ հովուն դէմ։ Ամիս մը վերջ, սակայն, զգաց թէ նորէն պաղ ձիւն կ՚ուզէր։ Առաջին փափաքն էր այսչափ ժամանակ վերջ։ Ինքն ալ չհասկցաւ՝ ինչպէս տեղէն ելաւ։ Մարմինը փայտացեր էր՝ ինկաւ, ելաւ, նորէն ինկաւ, նորէն ելաւ, մինչեւ վերագտաւ շարժելու կարողութիւնը։ Այն ատեն դէմքը հովերուն տուաւ, հոտառութեամբ որոշեց՝ ուրկէ կու գար պաղը եւ քալեց այդ ուղղութեամբ։

Երկու ամիս վերջ – եւ իր խորտակումէն 19 տարի յետոյ – Պաքի Պարնզ հասաւ Թուրքիոյ սահմանին։

> 1964 – Ատանայի, Չորքմարզպանի, Անտիոքի եւ Ալեքսանտրեթի մէջ նարնջենիները փճացած են։ Պարտիզպանները խարոյկներ վառած են ծառերը փրկելու համար։ Ջերմաստիճանը զերոյէն վար 15ի իջած է։ Սաստիկ ցուրտին պատճառով ամսոյս մինչեւ 20ը սառողներուն թիւը 10ը եղած է։ Գայլի վոհմակներ նոյնիսկ Պոլսոյ արուարձանները իջած են։

…աս ի՜նչ երկար ձմեռ է քա՜…

Նէնէն հազալէն եւ չես գիտեր որուն հետ խօսելէն ելեր է ճռնչող աթոռակէն եւ օրօրուելէն դէպի խոհանոց կը քալէ։ Գուցէ այսպէս օրօրուելէն մայրը կը քալէր ծննդատունէն 1945ի ձմրան, մինա՛կ։

…հայրդ զինուորութեան փարին, ես ալ… ջերմ ունէի անանկ մը կը հազայի կ՚ըսես թոքերս բերնէս պիտ՚ թափէին… այն ատեն մէկը չէր հաւատար թէ նորէն ոտքի կենամ… մայրդ ի՜նչ ընէր մինակը քեզի առած տուն եկաւ… ի՜նչ գիտնամ կ՚երեւի պաղ առեր էր կամ ալ հիւանդանոցը բան մը եղեր էր այն ատեն ամէն բան կ՚ըլլար… կը կարծես դիւրին բա՞ն էր այդ պաղին զաւակ ծնիլը… երկու երեք շաբթուան մէջ հալեցաւ մաշեցաւ ամմա չիգիտցանք ճիշդ ինչէն մեռաւ…

Ելեկտրականութիւն չկայ, վտիտ մոմի լոյս մը կը ցոլայ միս մինակ։ Ասանկ պաղին խելագար ըլլալու ես դուրս ելլելու համար, բայց պէտք չէ որ նէնէն տեսնէ զինք գլանիկը ձեռքին։

Պարտէզը՝ սառնահարուած, բայց ոչ ամայի։ Ակնթարթի մը մէջ զգաց ուրի-

շի ներկայութիւնը: Քիչ վերջ աչքերը մութին ընտելացան եւ տեսաւ խեղուած մարմնին ուրուագիծը՝ տղայ մը, կեցած մինակ, այնչափ մինակ, որ Լէօ չվախցաւ:

հէյ… բարեւ… մէրհապա… էհլէն…

Ոչ մէկ ձայն կամ շարժում, մօտեցաւ: Անթարթ նայուածք:

հըլլօ…

Յանկարծ խօսեցաւ.

անգլերէն կը խօսիմ

Ձայնը պաղ էր, ինք ձիւն կը բուրէր:

ո՞վ ես ի՞նչ կ՚ընես հոս
Պաքին եմ հոս եկայ բայց շատ պաղ չէ
շատ պաղ չէ՞ խենթ ես մը…
հոն ուրկէ կու գամ աւելի պաղ էր…լաւ էր
է ի՞նչու եկար
այլեւս պաղ չէր
հմմմ… բա՞ն մը ունիս
չէ պաղ կ՚ուզեմ
ծխել կ՚ուզե՞ս
փո՛ւր

Միայն երբ կ՚ուզէր գլանիկն առնել, Պաքի անդրադարձաւ որ ձախ ձեռքը չկար, փրցուած էր անկումի՛ն ատեն, թէ՞ անկէ առաջ:

հոս ի՞նչ տեղ է
Գապըրգիւղն է… Իսթանպուլ…
Թուրքիա՞… վերջը ի՞նչ ըրիք դուք ո՞ր կողմն անցաք…
ո՞վ մենք… ի՞նչ կողմ…
պատերազմին մասին կը խօսիմ
ի՞նչ պատերազմ
հիմա ո՞ր թուականն է
կատա՞կ կ՚ընես
չէ
1964
օհ…19 տարի միայն… կը կարծէի աւելի երկար ըլլալու է… Սթիվէն լուր կա՞յ ի՞նչ կ՚ընէ
Սթիվն ո՞վ է
Քափթըն Ամերիկան
հէ՞… ըսիր ի՞նչ էր անունդ…
Պաքի…Պաքի Պարնզ
չէ դուն կը ծաղրես
չէ
իսկ ես կը կարծեմ խելագար ես

Լէօ դարձաւ եւ բարկացած դէպի տուն քալեց:

2014 – Տունը պիտի չըլլայ, բայց պարտէզը՝ միշտ նոյն: Լէօ երբեք պիտի չանդրադառնայ որ ծառերը ուրիշ են, իսկ իրենց տունը՝ թաղին միւս անկիւնը: Եւ մարմինի մը ուրուագիծը ձեւազեղծ պիտի չգայ խառնուիլ Լէոյի յիշատակներուն:

Յաջորդ առտու պարտէզին մէջ մէկը չգտաւ, բայց մթնելէն վերջ նորէն պարտէզ ելաւ: Հոն էր նորէն:

ո՞ւր էիր առտու չկայիր
այս ձիւներուն մէջ թաղուեր էի ցերեկուան լոյսը աչքերս կը ցաւցնէ
անօթի՞ ես
չէ
բան մը կերա՞ծ ես
չէ չեմ ուտեր
փարօրինակ ես
կրնայ ըլլալ
կը ծիծես
հա
կ՚ըսես հոս բաւական պաղ չէ՞
չէ կը փաքնամ
ափի լաւ չէ՞
ափի լաւ չէ

1964 – Բիւրակնի շրջանին մէջ վարազներ եւ գայլեր գիւղերու վրայ յարձակած են: Հովիւ մը եւ իր 300 ոչխարները սառելով մեռած են: Սեբաստիոյ մէջ ջերմաստիճանը զերոյէն վար 25ի իջած է. բազմաթիւ անձեր սառած են:

կ՚ըսես Սթիվէն լուր չկա՞յ
չէ, շատոնց է լուր չկայ իրմէ կորսուեր է թէ մեռեր շատ չհասկցայ
հմմմ
օհ ներէ
հարց չէ
մօ՞տ էիք
հաւանաբար… չեմ գիտեր… չեմ յիշեր…
կարծեմ օդանաւը պիտի ազատագրէիք եւ պայթեցաւ չէ՞
կրնայ ըլլալ
չես ուզեր խօսիլ
չէ
կարծեմ այդ օդանաւին պայթելէն վերջ էր երկուքդ ալ կորսուեցաք… փնտռեցին չգտան…
գիտես մեր ատեն աստնկ սիկառէթներ չկային
խնդալիք է երբ կ՚ըսես «մեր ատեն» ինծմէ պզտիկ կ՚երեւիս
է այդչափ ատեն ձիւնին տակ պառկէիր դուն ալ պզտիկ կ՚երեւէիր

2014 – Յաջորդ օրը Լէօ պիտի փորձէ գտնել մանկութեան ընկերները: Հոն է որ պիտի անդրադառնայ թէ յիշողութիւնը այլեւս տկար է, ո՛չ դէմք, ո՛չ անուն կը յիշէ: Լէօ պիտի մտահոգուի. տակաւին 70 չկայ,

ի՛նչ պատահեցաւ:
Չէին անդրադարձած ինչպէս նէնէն մօտեցած էր:

քա՛ աuի ո՞վ է
ըրըր...Պաքին է
ամմ՛ն խեղճ չոճուխը ձեռք չունի վրան խելքի պառկելիք հագուստ ալ չիկայ... ծօ դուն խիղճ ունի՞ս... սա պաղին... հիմա կը սառի թոքպապայ կ՚ըլլայ...

Չսպասելով որեւէ հակազդեցութեան Պաքիի միակ ձեռքէն բռնեց եւ դէպի տուն քաշկռտեց:
Պաքի շուարեցաւ ներսին տաքէն, բայց իրականին մէջ շատ ալ տաք չէր: Արդէն մարող փայտէ վառարանը ջերմութեան յիշատակներ պահպանած էր միայն: Լէօ մեծ դժուարութեամբ կրցաւ համոզել մեծ մաման, որ կրակը նորոգելու պէտք չկար:

ինք պաղի վարժուեր է
քիչ մը կուպը պակաս կ՚երեւի կոր ընկերդ գիտե՞ս

Յետոյ իր առասպելական թաքստոցէն յանկարծ վարդի անուշ հանեց, աստուած գիտէ ուրկէ ձեռքն անցած:

հիմա թէյ շինեմ
նօ չեմ ուզեր
եա քու խօսած լեզուդ չեմ հասկնար բայց մէյ մըն ալ նօ ըսես թէյամանը գլխուդ կը պարպեմ հասկցա՞ր

Պաքի հասկցաւ:
Լէօ մտահոգ երեւոյթ առած Պաքիին կը հետեւէր, որ բացայայտ դժկամութեամբ մը տաք թէյը կը կլլէր:

հայր մայր ունի՞ս օղլում
(կ՚ըսէ՝ ծնողք ունի՞ս)
մայրս մեռաւ պզտիկ էի... հայրս պատերազմին ատեն մեռաւ
(կ՚ըսէ՝ մայրը մեռաւ երբ ինք չոճուխ էր հայրն ալ պատերազմի ատեն մեռած է)
աման որբ է չոճուխը
մամմի՛
քա որբ է նէ չըսեմ որբ է
կ՚ըսես ուրկէ՞ եկեր ես
(կը հարցնէ ուրկէ՞ եկեր ես)
շիտակը չեմ գիտեր... Գերմանիա կամ Աւստրիա... ձիները հալեցան եկայ եկայ hnu
ձիներու մէջէն եկա՛ր
(մամմի դուն անգլերէն կը հասկնա՞՞ս)
այո ձիներուն մէջէն եկայ... դժուար էր... կը խրէի կ՚ելլէի կ՚իյնայի կ՚ելլէի կը քալէի...
մենք ալ անանկ կը քալէինք աւազներուն մէջէն... դժուար էր... կը խրէինք կ՚ելլէինք կ՚իյնայինք կ՚ելլէինք կը քալէինք...
... Աւստրիոյ կամ Գերմանիոյ գաւառներէն... ձիւնոտ դաշտերէն...
...Տրապիզոնէն... ծովեզերքէն... անապատներէն...

ինչե՞ր կը խօսիք կոր
հէ՞
պաղ է ծօ փառարանը նորոգեմ

1964 – Տիգրանակերտէն 23 քիլոմեթր հեռու Քարաճատաղի բարձրագոյն կէտին վրայ 60 հոգինոց զինուորական ստորաբաժանում մը ձիւներու մէջ մնացած է, եւ ազատարար խումբեր օգնութեան գացած են: Մարտինի մէջ ձիւնամրրիկը պատճառ դարձած է, որ քաղաքի հարիւրաւոր տուներու ապակիները եւ պատուհանները խորտակուին եւ ծխնելոյզները թռին: Ջուրի խողովակները պայթած են եւ ելեկտրական հոսանքը՝ կտրուած: Ուլուտաղի վրայ ձիւնին թանձրութիւնը երկու մեթրի հասած է: 100 տարիէ ի վեր երկրորդ անգամ ըլլալով ցուրտի պատճառով Վանայ լիճը սառած է: Թրքական թերթերը կը գրեն, թէ 20 տարիէ ի վեր այսքան խստաշունչ ձմեռ չէր տեսած Թուրքիան:

Ձմեռը կրնայ շատ պաղ չըլլալ երբ հաշմուած եւ խեղուած ընկեր մը ունիս, որ իրիկունները ձեզի կու գայ վարդի անուշով թէյ խմելու: Բայց ապրիլին մօտ պաղերը պիտի քաշուին, եւ երկար ձմեռէն ետք ժողովուրդը մեռելները պիտի համրէ եւ վնասները չափէ: Եւ գարունը ուրախ պիտի չգայ: Եւ դուն նորէն մինակ պիտի մնաս: Եւ քոմիքին հերոս– ընկերդ նոյնիսկ պիտի հեռանայ:

2014 – Մութքի ալիք մը պիտի անցնի որովայնէն այցելութեան երրորդ օրը: Եւ բանալիներու կապոցը պիտի ինայ ձեռքէն: Եւ պանդոկի դռնապանը ապարդիւն պիտի պոռայ ետեւէն՝ *էֆէնտի՛մ*: Մինչ ամէն քայլին հետ ծերացող Լէօ դողդոջուն քայլերով պիտի մօտենայ պատէն կախուած ֆիլմերու յայտագրերուն: Պիտի տեսնէ խոշոր պաստառը՝ «Captain America: Winter Soldier»: Եւ ամէն բան պիտի վերադառնայ, եւ կ'ըսես նէնէն ողջ է տակաւին եւ վարդի անուշով թէյ պիտի հրամցնէ նորէն:

Ալ պիտի մեկնի:

ո՞ւր պիտի երթաս
չեմ գիտեր… տակաւին որոշում չառի… գուցէ Սթիվը փնտռեմ գուցէ Ռուսիոյ կողմերը քալեմ
արդեօք կը հանդիպի՞նք
գուցէ… չեմ գիտեր
Պաքի…
այո
ըըը… ինքզինքիդ հոգ տար
դուն ալ

Այսպէս կը վերջանայ ընկերութիւնը, երբ կը ձգեն որ օդանաւէն վար իջնաս, եւ կամ դուն որոշես հեռանալ, պաղը փնտռելով:
Պարզապէս կը վերջանայ:

2014 – Եշիլճամի «Էմէք» շարժապատկերին սրահը՝ միշտ նոյն: Նորէն ձմեռ, նորէն ձիւն, կ'ըսես ժամանակը շուարած կեցած ըլլար: Լէօ սրահէն պիտի ելլէ եւ իր ժամանակը պիտի փնտռէ: Յետոյ պիտի վախնայ: Յետոյ թաքսի պիտի առնէ: Օդակայա՛ն, պիտի շշնջայ վարորդին: Լէօ պիտի ուզէ փախիլ: Լէօ պիտի չվերադառնայ պանդոկ, պէտք չունի իր իրերուն: Եւ ինքնաշարժը պիտի սուրայ հին քաղաքին պողոտաներէն:

Փողոցները հանդերձ ու անուն փոխած են, բայց պիտի թուին միշտ նոյն: Կ՚ըսես տարիներ անցած չըլլային վրայէն: Եւ 1964ը պիտի երկարի ու երկարի: Մինչեւ ժամանակին վերջը: Լէոյի ժամանակին վերջը:

[1] Comicներու աշխարհին մէջ տարածուած հին կատակ մը (No one stays dead except Bucky):
[2] Ազդակ օրաթերթ, 25 Յունուար 1964:

ՀԱՅՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Հօրմէս հազուադէպ հեռաձայն կը ստանամ, բայց երբ ստանամ, գիտեմ թէ նորէն «քաք մը կերած եմ»: Կը հեռաձայնէ միայն այն ատեն, երբ ընտանիքիս կամ ազգականներուս համար –կամ կարծիքով – տհաճ բան մը ըրած ըլլամ: Կը հեռաձայնէ եւ կը սկսի տարբեր նիւթի մը մասին խօսիլ. երբեք խնդրոյ բուն առարկային չ՚անդրադառնար. պարզապէս որպիսութիւնս կը հարցնէ – «գործերդ լա՞ւ են, ընկերուհի ունի՞ս…»– յետոյ կը մարէ հեռաձայնը: Ինք գիտէ, որ ես հասկցայ, թէ իրականին մէջ ինչու համար հեռաձայնած էր. կը կարծէ, թէ կը բաւէ այդքանը:

Չեմ գիտեր, թէ ինչու համար սա տարօրինակ ձեւն ընտրած է իր դժգոհութիւնը կամ անհամաձայնութիւնը յայտնելու համար, բայց միշտ անանկ էր, որչափ որ կը յիշեմ զինք: Այն ժամանակները, երբ մեր ընտանիքը տակաւին նոյն յարկին տակ կ՚ապրէր, հայրս միշտ զբաղած էր. ընտանիքը մեծ էր, ինք՝ մինակ, պիտի հասնէր ամէնուն. տունի ծախք, եղբայրներէն ոչինչով ետ մնալու մտասեւեռում: Հետեւաբար, շատ ժամանակ չէր մնար երախաներուն համար: Արդէն չէր ալ խօսեր մեզի հետ:

– Ջաւէ՛ն, տղուդ հետ պիտի լրջօրէն խօսիս, հասկցնես որ իր վարքը խելքի պառկելիք բան չէ, ես ա՛լ չեմ կրնար այդ տղուն հետ,– կ՚ըսէր մայրս ծնողական հերթական հաւաքէն վերադառնալուն պէս, ուր, վստահաբար, դպրոցական «քաջագործութիւն»ներս յիշած էին նորէն:

Հայրս այդ վայրկեանին ոչինչ կ՚ըսէր. ամէն բան կախեալ էր երեկոյէն. եթէ երեկոյեան բան չըսէր, ուրեմն զանցանքս շատ լուրջ չէր գտած: Բայց կ՚ըլլար որ յանկարծ մօտենար եւ «եկուր քովս, խօսելիք կայ» ըսէր: Կ՚երթայի քովը գլխահակ:

– Ըսէ նայիմ, դասերդ ի՞նչպէս կը քալեն,– կը հարցնէր, յետոյ ուրիշ հարցումներ ալ կ՚ընէր, երբեք բուն նիւթին մասին չխօսելով սակայն: Ձայնը սովորական էր միշտ, բայց նայուածքին հիասթափութիւնը գոց կը կարդայի:

Սա հիասթափութի՜ւնը: Մանկութեանս եւ պատանութեանս շրջանին ամէնէն սարսափելի բանն էր ինծի համար. հիասթափել հօրս: Կ՚երեւի պատճառն այն էր, որ հայրս իտէալական մէկն ըլլալ կը կարծէի: Մանաւանդ մանկութեանս հօրս սակաւախօսութիւնը եւ պաղարիւնութիւնը կը վերագրէի խորհրդաւոր գործի մը, որ գաղտնապահութիւն կը պահանջէր: Յետոյ գիտցայ, որ պարզ վաճառականութիւն էր իր գործը, սակայն չհաւատացի. վաճառականութեամբ կը զբաղէր, վստահաբար, ուրիշ, աւելի՛ կարեւոր բան մը քօղարկելու համար: Հակառակ պարագային, ինչի՞ն պէտք էր այդ խստաբարոյ քաղաքավար կե-

ցուածքը, ազնուական դիմագիծը եւ աթլէթիք կազմուածքը… Այդ կազմուած-
քը: Ո՜րչափ մեծ յուսախաբութիւն կ՚ապրէի ամէն օր, երբ հայելիին մէջ կը
դիտէի վտիտ մարմինս եւ հասարակ դէմքս՝ պսակուած Թօլքինեան էլֆերուն
վայել ականջներով: Մանկութեանս ունէի ամենակարող յոյս մը՝ օր մը չէ օր մը
հօրս նմանելու, սակայն տարիներու հոլովոյթին մէջ հասկցայ, որ անկարելի
երազ մըն է. կազմուածքս միշտ վտիտ մնաց, ականջներուս սրութիւնը չիար-
թունցաւ: Հակառակին պէս եղբայրներս օրէ օր կ՚աղուորնային:

Իսկ ես սկսայ խուսափիլ հօրս աչքին երեւնալէ: Կ՚երեւակայէի այն յուսա-
խաբութիւնը, որ հայրս պիտի զգար ամէն օր զիս տեսնելով: Գիշերներ կ՚ըլ-
լային, որ կ՚աղօթէի քրտինքներու մէջ մէ՛ն միակ մտքով՝ կրնա՜յ ըլլալ, որ ես
հոգեզաւակ եմ:

Հաւանաբար 14-15 տարեկանիս էր, որ վերջնականապէս հասկցայ՝ հօրս եւ
իմ միջեւ անյաղթահարելի տարածութիւն մը կայ: Կը մնար համակերպիլ այդ
գաղափարին հետ եւ ընդունիլ նոր մը՝ *սէրսէրի* պիտի ըլլամ*:

Արդէն էութեամբս անանկ էի. մանկութենէս սկսեալ շատ մեծ դժուարու-
թեամբ կը զսպէի մէջս օրէ օր զօրացող չարութիւններու ծարաւը: Ճշմարտու-
թեան հանդէպ մեղք գործած պիտի ըլլամ, եթէ ըսեմ, թէ անկէ առաջ չարու-
թիւններ չէի ըներ. կ՚ընէի, բայց միշտ կը ջանայի մեղմացուցիչ պարագաներ
գտնել սա կամ նա արարքիս, գոնէ ինքզինքս խղճիս առջեւ արդարացնելու
համար: Գիտակցելէ վերջ, որ երբեք պիտի չկարենամ հօրս հասնիլ, ալ վազ
անցայ: Այլեւս չէի բռնանար էութեանս, ուզածս կ՚ընէի եւ կը հպարտանայի
ալ. մէկ խօսքով, սէրսէրի ըլլալս ընդունեցի:

Հայրս երբեք բացէ ի բաց չըսաւ, թէ դժգոհ է ինծմէ, պարզապէս սկսաւ աւե-
լի յաճախակի հարցումներ ընել առօրեայիս մասին, եւ ատենէ մը վերջ, կ՚երե-
ւի թէ յոյսը վերջնականապէս կորսնցուցած, այլեւս դադրեցաւ բան մը ըսելէ:

Մեծ մամաս անգամ մը ըսած էր. եթէ լաւ մարդ ես, պիտի շատ լաւն ըլլաս,
իսկ եթէ գէշ մարդ ես՝ «պիտի քաքէն գէշ ըլլաս». միջակութիւն երբեք չըլլաս:
Եւ քանի որ սէրսէրի էի, ուրեմն պիտի «քաքէն» սէրսէրի ըլլայի:

Ըսեմ որ սէրսէրիները երբեք մինակ չեն ըլլար: Եթէ ինքզինքիդ յարգող սէր-
սէրի մըն ես, ուրեմն պիտի քեզիպէսներու խումբի մը անդամը ըլլաս, յուսա-
լով թէ օր մը չէ օր մը, կրնայ ըլլալ, յաջողիս եւ աւազակախումբին պարագլու-
խը դառնաս:

Աւազակախումբ որ կ՚ըսեմ, շատ երեւելի բան չկարծէք, պարզապէս պա-
րապ տղոց խումբ մըն էր, որ ամբողջ օրը շուկային մերձակայքը կ՚անցընէր
աղջիկներու ետեւէն սուլելով կամ պզտիկները ծաղրելով: Շուտով զիս դպրո-
ցէն դուրս դրին չյաճախելուս, իսկ յաճախած ատեն չարութիւններուս համար,
եւ այլեւս կարելիութիւն ունեցայ աւելի շատ ժամանակ տրամադրելու ընկեր-
ներուս:

Երկու տարի վերջ սակայն հասկցայ, որ երբեք պիտի չկարենամ խում-
բին պարագլուխն ըլլալ. միակ քրիստոնեան էի խումբին մէջ. լսուա՜ծ բան է
որ *կեաւուր*ը խումբ մը թուրք եւ քիւրտ պատանի սէրսէրիներ ղեկավարէ: Ան-
շուշտ այս ամէնը ես չէի, որ հասկցայ, Աhմէտն էր որ օր մը ըսաւ ինծի ասիկա:
Այդպէս այդ յոյսս ալ կորսնցուցի:

Արդէն 17 էի, երբ մայրս սկսաւ ակնարկել, թէ ատենն է որ գործ մը գտ-
նելու մասին խորհիմ: Շատ լաւ հասկնալով, որ այդ ակնարկութիւնները շու-
տով պիտի ամէնօրեայ տաղտկալի քարոզներու վերածուէին, շուտ մը գլուխս
ազատելու համար սկսայ խորհիլ ընտանիքէս հեռանալու մասին: Բայց ատ
ալ դիւրին բան մը չէր. դրամ պէտք էր, ընտանիքիս օժանդակութեանն ալ չէի

կրնար ապաւինել, որովհետեւ հօրս գործերը արդէն երկու տարիէ ի վեր ծուռ կը քալէին: Ամբողջապէս այս մտածումներու մէջ էի երբ 18 տարիս լրացաւ եւ զինուորութեանս շրջանը հասաւ: Մայրս կու լար, հայրս երեք օր սենեակէն չե-լաւ (հաւանաբար ծանր էր իրեն համար գիտակցիլ, որ ատենօք կրցած էր եղ-բայրներս կերպով մը ազատել բանակէն, բայց կարգը ինծի հասնելուն ոչինչ կրցած էր ընել), իսկ ես զինուորութիւնը տեսակ մը ազատագրումի պէս բան ընդունեցի: Անշուշտ, հոս ալ պիտի յուսախաբ ըլլայի. 15 ամիս վերջ վերա-դարձայ պարպուած եւ ա՛լ աւելի ներամփոփ, քան եղած էի երբեւէ, եւ թերեւս պատրաստ էի արդէն համակերպիլ այն բանին հետ, որ այլեւս երբեք կեան-քիս մէջ բանի մը պիտի չհասնիմ, երբ կաղանդի արձակուրդի համար Պոլիս եկած կրտսեր հօրեղբայրս նոր յոյս մը տուաւ ինծի:

Սա կրտսեր հօրեղբայրս բանով մը չ'առանձնանար մեր տոհմին մէջ. պար-զապէս երիտասարդ ատեն չկարենալով այլեւս դիմանալ եղբայրներու, քոյ-րերու եւ անթիւ-անհամար հօրաքոյր– մօրաքոյրերու պարտադրուած սիրոյն, նաեւ ըսելով թէ կը զանի այլեւս սա Արեւելքէն՝ Փարիզ փոխադրուած է տարի-ներ առաջ, եւ, հաւանաբար, հասկնալով ի վերջոյ, որ Արեւելքէ չես փախչիր, սեփական «Արեւելք»ը հիմնած է Ֆրանսայի մէջ՝ արեւելեան անուշեղէններու խանութ մը:

Ուրեմն սա հօրեղբայրս ըսաւ ինծի.

– Ի՞նչ կ'ընես կոր հոս, ծօ՛, ոչ գործ ունիս, ոչ ալ դպրոց կ'երթաս. Փարիզ եկուր, քովս գործի կը դնեմ:

Հօրեղբօրս տիկնոջ նայուածքէն հասկցայ, որ ինք շատ չ'ախորժեր այդ հե-ռանկարէն, եւ որ ամուսինը կանխաւ չէր խօսած իրեն հետ: Հաւանաբար, կը յուսային, թէ պիտի մերժեմ, սակայն օդին մէջ ըսուած այս առաջարկը միակ բռնուելիք տեղն էր իմ ծանծաղ կեանքիս մէջ: Ապուշ ալ չէի սակայն, շատ լաւ կը հասկնայի, որ պարզապէս ալքոլի ազդեցութեան տակ ըսուած խօսք էր, անոր համար պիտի աւելի խորամանկ ըլլայի: Նոյն օրը հօրս հետ զատէն խօսեցայ, ըսելով թէ հօրեղբայրն ասանկ բան առաջարկած է, եւ ես ալ շատ հաւնած եմ այդ գաղափարը: Յաջորդ օրն արդէն հայրս շնորհակալութիւն կը յայտնէր եղբօրը նման մեծահոգի առաջարկին համար. կ'երեւի իր համար ալ փրկութեան պէս բան մըն էր ինձմէ ազատիլը: Այսպէս խեղճ հօրեղբայրս ինք-զինք ծուղակը ձգեց:

Երբ արձակուրդին շրջանը լրացնելով պիտի մեկնէր արդէն, վերջին յոյսով մը փորձեց շտկել սա անյարմար իրավիճակը.

– Վստա՞հ ես, որ կ'ուզես ամէն բան այսպէս ձգել եւ կեանքդ ամբողջապէս փոխել:

– Այո՛,– ըսի կտրուկ՝ շիտակ աչքերուն մէջ նայելով:

– Դուն գիտես,– ըսաւ յուսահատ եւ հրաժեշտի ողջոյն տուաւ:

Քանի մը ամիս վերջ կրցայ գործերս կարգադրել, Ֆրանսա մուտքի արտօ-նագիրը ստացայ, հրաժեշտ առի ընտանիքէս եւ բռնեցի դէպի նոր կեանք տա-նող ճամբան:

Ինծի ճամբելու համար օդակայան եկած բազմանդամ ընտանիքիս մէջ մի-այն հայրս լուռ էր:

* * *

Դժուար կու գայ զինուորութիւնը նախկին սէրսէրիի մը համար. լռել եւ կա-տարել այն ամէնն, ինչ որ կը պահանջեն քեզմէ. ատոր վրայ նաեւ կը բարդուի գիտակցումը քրիստոնեայ, ան ալ՝ հայ ըլլալու. կը ջանաս անկիւն մը քաշուիլ

եւ շատ չերեւիլ, ինչ որ ամբողջապէս հակոտնեայ է նախկին կեանքիս: Ի վերջոյ սէսէրի եղար, որովհետեւ կ՚ուզէիր բան մը ըլլալ: Բայց չ՚ըլլար որ բանակին մէջ անհատականութիւն ըլլաս: Բանակը կը սեղմէ անհատականութիւնները եւ կը շարէ միեւնոյն մակարդակին վրայ, կերպով մը հաւասարեցնելով ամէնը. ով որ ալ ըլլաս, որու տղան որ ալ ըլլաս՝ նոյնն է երազը եւ յոյսը ամէնուն քով՝ համազգեստէն ազատի՜լ: Ամենափրկիչ սպասում մը՝ վերադարձ: Այդ գլխաւոր սպասումէն զատ արձակուրդին գաղափարն է միակը, որ քիչ մը գոյն կու տայ բանակային գորշ օրերուն:

Եւ ուրեմն օր մը ես ալ արձակուրդի եկայ: Մէկու մը բան չէի ըսած, արդէն գիտէի որ ընտանիքիս նիւթական վիճակը շատ լաւ չէ. մասնաւոր ծախք պիտի ընէին, ի՞նչ պէտք կար: Արձակուրդիս մէկ շաբաթն անցաւ ակնթարթի մը պէս. կար եւ չկար, եւ ահաւասիկ վերադարձիս օրն է: Հայրս քովը կը կանչէ. նորէ՛ն բան մը ըրած եմ: Երբ կը մօտենամ քանի մը ծալլուած թղթադրամ կը պարզէ ինծի: Կ՚առնեմ, կը համրեմ. երկու հազար լիրա: Շատ է, վստահաբար մէկէ մը փոխ առած է, երկու տարի է արդէն չ՚աշխատիր:

– Չէ՛, պապա, պէտք չունիմ,– կը փորձեմ վերադարձնել դրամը:

– Ա՜ռ կ՚ըսեմ,– ոճը հրամայական չէ, աւելի շատ՝ աղաչական: Աչքերուն արցունքներ կը տեսնեմ եւ կը ջանամ նայուածքս փախցնել:

Ամէն բան գլխիվայր շրջուեցաւ այդ օրը: Թէեւ այլեւս երբեք չեմ տեսած հօրս այնչափ խղճուկ եւ անպաշտպան, բայց չկրցայ ներել իրեն պատանեկան իտէալս այդպէս անվերադարձ փճացնելու համար: Այլեւս չվերականգնուեցաւ պատկառանքս իր անձին հանդէպ, եւ քիչ առ քիչ սկսայ չարութեամբ լեցուիլ:

Անկէ վերջ միշտ երբ հայրս դէմքին խիստ արտայայտութիւն տուած զիս իր քովը կանչէր, իսկոյն այն պատկերը կու գար. հայրս՝ արցունքոտ աչքերով, եւ իսկոյն կը դադրէի վախնալ սա մարդէն: Տեսակ մը արհամարհանք կը զգայի նոյնիսկ:

Բայց կ՚ըսեն թէ կարօտն ունակ է շրջել ամէն բան: Երեք տարի ամբողջ տունէս հեռու ըլլալով սկսայ տունս կարօտնալու, յետոյ, քիչ առ քիչ՝ ընտանիքիս անդամներուն:

Ըսել թէ Փարիզի մէջ չյաջողեցայ՝ ճշմարտութեան դէմ կ՚ըլլայ: Բարեխղճօրէն աշխատելու սկսայ հօրեղբօրս խանութին մէջ, եւ քիչ առ քիչ հօրեղբայրս եւ իր տիկինը նոյնիսկ սկսան հաւատալ, թէ ճիշդ որոշում ընդունած էին, զիս Ֆրանսա հրաւիրելով: Կը դժուարանամ գործիս շիտակ անուն մը տալ. առտու կանուխ պիտի ելլեմ, խանութը բանամ, անցնիմ վաճառասեղանին ետեւը: Մէկ ժամ վերջ հօրեղբայրս զիս փոխարինելու պիտի գայ, իսկ ես պիտի անցնիմ զանազան գործերու: Ամէն օր տարբեր են անոնք. նոր ապրանք ապսպրել, սակարկել, հասցնել խանութ, տեղաւորել պահեստին մէջ… Մէկ խօսքով՝ գլուխ կը բերէի:

Իրիկունները ընթրիքէն վերջ կ՚ելլէի քիչ մը պտըտելու: Ընկերներ չունէի. արեւելքցիներէ կը խուսափէի արդէն, տեղացիներն ալ իմ պէտքս չունէին: Բայց չէ, չէի դժգոհեր. կեանքս տեսակ մը կանոնաւոր հունի մէջ մտած էր: Կրնայ ըլլալ որ քովէն դիտողի համար շատ ձանձրալի եւ միապաղաղ թուէր այն, բայց ճիշդ ա՛յդ է, որ կը գրաւէր զիս. ոչ մէկ բանի մասին կը մտածէի, առտու գործի կ՚երթայի, իրիկունը պտոյտի կ՚ելլէի, ատեն առ ատեն Համացանցին վրայ աղջիկի մը հետ կը ծանօթանայի, կը հանդիպէինք մէկ գիշերուան համար, յետոյ կը բաժնուէինք: Արդէն աւելին չէի ալ ակնկալեր. կանոնաւոր ֆրանսերէն չեմ գիտեր, անգլերէնս տկար է, գիտցածս միւս լեզուները գիտցող աղջիկներն ալ արդէն մէկ գիշեր քովդ գալու համար նախ պիտի պահան-

ջեն, որ ծնողներուն հետ ծանօթանաս, յետոյ նշանտուք ըլլայ… մէկ խօսքով՝ աւելորդ գլխու ցաւ:

Ինչ որ է, ամէն բան լաւ էր, մինչեւ կէս տարի առաջ Գարլային հանդիպիլս: Ամէն բանին «մեղաւոր»ը դրացի թուրք տղայ մըն էր, ինձմէ ալ քիչ մը պզտիկ, որ յամառօրէն հետս ընկերութիւն ընել կը փորձէր: Այդպէս, Ուրբաթ իրիկուն մը, երբ մասնաւոր ոչինչ ունէի ընելիք, սա տղան կրցաւ համոզել զիս եւ իրարու հետ *դանս-քլապ* գացինք: Նոյնիսկ չեմ գիտեր, թէ ինչու համաձայնեցայ, կ՚երեւի հետաքրքրութիւնն էր զիս առաջ մղողը. ֆրանսական քլապերու մասին առասպելներ կը պատմեն, իսկ ես տակաւին չէի եղած:

Շիտակը, սպասելիքներս շատ չարդարացան, թէեւ շատ ալ չէի պատկերացներ թէ ճիշդ ի՛նչ կը սպասէի: Սովորական քլապ մըն էր, քիչիկ մը տարբեր Պոլսոյ քլապերէն: Կ՚երեւակայէի թէ հոն աղջիկներն իրենք պիտի մօտենային եւ հետապնդէին զիս: Անշուշտ, կը մօտենային, բայց ոչ ինծի: Մէկ-երկու աղջիկ կարծես թէ հասկցնել տուին, որ դէմ չէին ըլլար, եթէ մօտենայի իրենց, բայց շատ իմ ճաշակովս չէին:

Այդպէս *պառ*ին քով անկիւն մը նստած անյայտ անունով գօգթէյլ մը կը խմէի եւ պարողներուն կը նայէի, երբ քովս աղջիկ մը նստեցաւ. վրաս իսկ չնայեցաւ, բայց ես, ինչպէս մեր կողմերը կ՚ըսեն, իսկոյն «զարնուեցայ»: Եթէ բանաստեղծ ըլլայի, թերեւս կարենայի նկարագրել իր արտաքին երեւոյթը, բայց չեմ, եւ պիտի ստիպուիմ ըսել միայն, թէ կերպով մը հասկցայ, որ ասիկա ճիշդ այն արտաքինն էր, որու համար կրնայի եւ մեռնիլ: Եթէ կը խորհիք, թէ սկսայ երեւակայել՝ ինչպէս կը մօտենամ, կը խօսիմ, յետոյ ինքն ալ զիս կը հաւնի, կը սկսինք հանդիպիլ, նշանտուք, ամուսնութիւն, մերձեցում ծովափին լուսնի լոյսի ներքոյ եւայլն, ապա կը սխալիք: Պարզապէս առնանդամս ցաւալիօրէն պրկուեցաւ եւ անասելի տխրութիւն զգացի: Աչքս ինկաւ *պառմըն*ին ետին շարուած անթիւ շիշերուն մէջ արտացոլուող կիսադէմիս. ականջներս երբեք այսչափ սուր երեւոյթ չէին ունեցած, որչափ այդօր: Թէեւ վերջին երեք տարիներու ընթացքին Փարիզի մէջ շատ մը էլֆերու սիրահար աղջիկներու հանդիպեցայ, բայց այս մէկը վստահաբար անոնցմէ չէր: Սրահին կիսախաւարին մէջ սկսայ անհարթ դէմքս շօշափել. անյոյս էր ամէն բան: Աղջիկը գլուխը դարձուց եւ ինծի նայեցաւ, թէեւ կանոնաւոր գինով էր, բայց յստակ գծուած արհամարհանք տեսայ ակնարկին մէջ: Տեղէս ելայ եւ կամացուկ դէպի ելքը քալեցի:

Թաղին անկիւնը կեցած կը փորձէի թաքսի որսալ, երբ ետեւէս տարօրինակ ձայներ լսեցի. դարձայ որ աղջիկ մը ծունկի եկած էր շէնքին տկար լուսաւորուած մէկ անկիւնը եւ յայտնի չէր թէ ինչ կ՚ընէր: Քիչ մը տատամսելէն վերջ կամացուկ քալեցի դէպի աղջիկը. ամէն քայլին հետ կը համոզուէի անկարելիին կարելիութեան. պառին մօտ քովս նստած աղջիկն էր: Վնաս չունէր որ ծալլուած կը փսխրտկուէր եւ բնաւ գեղեցիկ տեսարան չէր պարզեր այդ վիճակին մէջ. ասկէ յարմար առիթ պիտի չունենայի երբեւէ: Երբ մօտեցայ, ծնկած սեփական փսխուքին մէջ, կը դողար. գրկեցի եւ կեցուցի:

– Ինչո՞վ կրնամ օգտակար ըլլալ,– ըսի ջանալով կրցածիս չափ յստակ արտաբերել ֆրանսերէն բառերը:

– Չէ… տուն պիտի երթամ…, – ըսաւ ճօճուելէն եւ պիտի իյնար, եթէ շուտ մը չպահէի:

– Ես կ՚ուղեկցիմ, տունդ ո՞ւր է,– ըսի եւ առանց պատասխան առնելու անցնող թաքսիի մը սուլեցի. կեցաւ:

Օթոյի բաց պատուհանէն եկող թարմ օդը քիչ մը սթափեցուց աղջիկը եւ կրցաւ տան հասցէն ըսել վարորդին: Ամբողջ ճամբան լռեց, ակնարկն անյայտ

կէտի մը յառած, իսկ ես չհամարձակեցայ լռութիւնը խախտելու: Երբ իրենց շէնքին առջեւ կեցանք, քիչ թէ շատ արդէն վերագտած էր ինքնատիրապետումը:

– Շատ շնորհակալ եմ,– ըսաւ եւ ելաւ թաքսիէն, յետոյ ետ դարձաւ եւ նոյնիսկ ժպտիլ փորձեց: Լուռ հետեւեցայ շէնքին շքամուտքէն ներս մտնելուն, յետոյ վարորդին հօրեղբօրս տունին հասցէն տուի:

Տուն հասնելուն պէս սենեակս անցայ, թաղուեցայ վերմակներուն տակ եւ ջանացի մոռնալ ամէն բան, պարզապէս մտածումներէս դուրս վռնտել աղջիկը: Ատկէ առաջ ալ եղած էր որ աղջիկ մը հաւնիմ, բայց այսպէս ցաւալի զգացումներ չէի յիշեր:

Միշտ ամչցած եմ սիրոյ գաղափարէն: 11-12 տարու մանչ մըն էի տակաւին, երբ աւագ եղբայրս առաջին անգամ իր ընկերուհին բերաւ մեր տուն ընթրիքի: Երեկոյեան, երբ մօրս կ՚օգնէի լուացուած պնակները չորցնելու, մայրս, որ շատ խանդավառ էր այդ օր, ինծի դարձաւ.

– Դուն ալ անանկ անուշիկ աղջիկ մը պիտի գտնես:

– Հարկա՛ւ, – ըսի:

– Հիմա մէկը կա՞յ, որ կը հաւնիս,– հարցուց:

Տակաւին աղջիկներու վրայ խորհելու չէի սկսած, բայց մօրս յուսախաբ չընելու համար սկսայ յիշողութիւնս պրպտել եւ գիտցածս ամէնէն գեղեցիկ աղջկան անունը տուի: Գայիանէն մեր դրացին էր եւ այն ատեն արդէն հասած աղջիկ մը ըլլալու էր: Փոխարէն հիացումի եւ դրուատանքի խօսքերու, մայրս խնդալու սկսաւ: Զդադրող խնդուքի ձայնին շուտով մերիններն ալ աճապարեցին խոհանոց, եւ մայրս ծիծաղի ընդմէջէն ամէնուն պատմեց իմ «գաղտնի սիրոյ»ս մասին: Համատարած ծաղրի եւ խնդուքի մէջ կը ջանայի հասկնալ, թէ ի՛նչ սխալ բան ըսած եմ: Սա ծա՛ղրը, որ ամիսներ տեւեց: Բանը հասաւ հոն, որ մայրս նոյնիսկ Գայիանէին պատմեց: Շաբաթներ ամբողջ գաղտուկ տունէն կ՚ելլէի կամ կը դառնայի աղջկան ալ ծաղրալի նայուածքին չհանդիպելու համար: Հաւանաբար այն ատեն էր, որ «ուխտ ըրի» երբեք չսիրահարիլ, որովհետեւ եթէ սիրահարէի, պիտի, ինչպէս կարգն է, աղջիկը բերէի ծնողներուս հետ ծանօթացնելու, եւ... նորէն ծաղրի առարկայ պիտի դառնայի: Չէի դիմանար, գետնին տակը կ՚անցնէի: Անշուշտ, չկրցայ բնաւ չսիրահարիլ, բայց գրեթէ միշտ խուսափեցայ աղջիկներուն ներկայութենէ: Գուցէ ծաղրուելու այն մանկական վախն էր պատճառը, գուցէ անշուք արտաքինս, որ միշտ պատրանաթափ կ՚ընէր զիս, չեմ գիտեր, բայց նոյնիսկ սէրսէրիի կարգավիճակս չկրցաւ բաւական համարձակութիւն տալ ինծի:

Հիմա ծաղրուելու մանկական վախն այլեւս չէր հետապնդեր զիս, բայց... Նորէն արտաքինիս մասին պիտի խօսիմ: Ի՞նչպէս պիտի յուսամ, թէ այդ աղջիկը կրնայ ուշադրութիւն դարձնել ինծի:

Բայց յաջորդ օրը նորէն այդ քլապը գացի: Թէ ճիշդ ի՛նչ կը յուսայի՝ չեմ կրնար ըսել: Աղջիկը կրնար նոյնիսկ չյիշել զիս, այնչափ որ գինով էր անցեալ օրը: Եթէ յիշէր իսկ, վստահաբար հաճելի յիշատակներ չէին, որ պիտի արթնցնէի: Բայց աղջիկը չկար:

Ջինք անգամ մըն ալ տեսնելը, գոնէ հեռուէն, մտասեւեռումի պէս բան մը դարձաւ ինծի համար: Հասցէն գիտէի. եթէ կիրակի օրն ալ քլապ չգար, պիտի երթայի եւ իր բնակած շէնքին բոլորտիքը այնչափ դառնայի, մինչեւ ելլէր եւ... եւ ի՛նչ: Ահաւասիկ հարցում մը, որուն պատասխանել կը խուսափէի, որովհետեւ պատասխան չունէի:

Բայց կիրակի հոն էր: Մինակ չէր, աղջկայ մը հետ էր: Այս անգամ աւելի գե-

ղեցիկ գտայ զինք, քան առաջին հանդիպումին: Մութ անկիւն մը նստած լուռ կը հետեւէի շարժումներուն: *Ի՞նչ գործ ունիս հոս, ո՞վ է սա աղջիկը, նոյնիսկ չես ճանչնար, ի՞նչ կ՚ուզես կոր իրմէ, ի՞նչ կը սպասես… Չէ, պիտի մօտենամ, մօտենամ եւ բարեւեմ, որպիսութիւնը հարցնեմ… Ո՜րչափ ալ անուշիկ կը ժպտի… այն աղջկան…:* Յետոյ աւելի հակեցայ, եւ աղջիկներուն շուրթերը ձուլուեցան մէջս ամէն բան տակնիվրայ ընող համբոյրի մը համար:

Աննկատ հեռանալու համար տեղէս կ՚ելլեմ եւ դէպի դուռը կ՚ուղղուիմ, սակայն ակնթարթի մը մէջ միտքս կը փոխեմ եւ վստահ քայլերով աղջիկներուն կը մօտենամ: Սկիզբը զարմացած ինծի կը նային, յետոյ իմ ճանչուորիս դէմքը կը լուսաւորուի:

– Օ՜, բարեւ,– կ՚ըսէ, յետոյ ընկերուհիին կը դառնայ,– սա տղան էր, որ ինծի տուն հասցուց առջի օրը: Ծանօթացէ՛ք, Լիքա եւ… ըըը…

– Գրիգոր,– կ՚ըսեմ:

– Եկուր մեզի, Գիրի-գոր…

– Գրի՛գոր… քու անունդ չըսիր:

– Ա՜հ, կը կարծէի թէ ըսած եմ այն օրը. Գարլա…

Երկօրեայ երազներուս անանուն աղջիկն ուրեմն Գարլա կը կոչուէր: Նստած եմ հետերնին բաւական ջերմ մթնոլորտի մը մէջ: Երկուքն ալ բարեկամաբար տրամադրուած են, հարցումներ կ՚ընեն. ուրկէ՞ ես, ի՞նչ կ՚ընես հոս… Սկիզբը քտինքներու մէջ կը ջանամ ճիշդ արտաբերել ֆրանսերէն բառերը, յետոյ, գարեջուրի երրորդ շիշէն ետք, այլեւս լեզուս կը բացուի, ինչպէս կ՚ըսեն մեր կողմերը: Հաւանաբար ալքոլին հետ արիւնիս մէջ մտած համարձակութիւն մը յանկարծ կը ստիպէ ըսելու.

– Գիտե՞ս, առաջին աղջիկն ես կեանքիս մէջ, որ հաւնած եւ պարզապէս մօտեցած եմ, ան ալ՝ լէսպիան ես…

Կ՚ըսեմ եւ յանկարծ խնդալու կը սկսիմ: Աղջիկները երկվայրկեան մը միայն կը շուարին, յետոյ ինծի կը միանան:

Երեքս ալ գինով ենք եւ ուրախ:

***

Այսպէս ծայր առաւ մեր անքակտելի բարեկամութիւնը, իսկ միւս կողմէ՝ անվերջանալի ընդհարումներս հօրեղբօրս եւ իր տիկնոջ հետ: Երեք տարուան բարեխիղճ աշխատանքս եւ վարածս համեստ կեանքը չբաւեցին հօրեղբօրս աչքին մեղմելու համար «զանցանքներս»: Իսկ այդ զանցանքներս կ՚երեւի իրաւ մեծ են. նախ Գարլայի եւ Լիքայի հետ մեր երրեակ միութիւնը աւելի կէսգիշերային կեանքը կը նախընտրէ. ամէն օր տարբեր քլապեր կը յաճախենք, տուն դառնալով լուսադէմին մօտ միայն: Երբեմն այդչափ ուշ հօրեղբօրս տուն չդառնալու համար աղջիկներուն բնակարանը կը պառկիմ բազմոցին վրայ: Անշուշտ առտու կանուխ ելլելն ու գործատեղի երթալն արդէն յաճախ անկարելի բան մը կը դառնայ:

Հօրեղբօրս գայթակղութիւնը երթալէն կը մեծնար եւ օր մը ինք, կամ կինը, հեռաձայնեցին եւ ամէն բան պատմեցին ծնողքիս:

Դժուար չէ հասկնալ, որ անկէ ետք ամէն օր ջղացնցային հեռաձայններ կը ստանամ մօրմէս, եղբայրներէս, որ կը խրատեն խելքս ժողվել, հօրեղբօրս հանդէպ այդչափ ապերախտ չըլլալ եւայլն: Ատենէ ատեն նաեւ հօրմէս հեռաձայն կը ստանամ: Ոչինչ փոխուած է հօրս ոճէն. հարցումներ կ՚ընէ՝ լա՞ւ եմ մը, գործերս ի՞նչպէս են: Երբեք չ՚ըսեր թէ ճիշդ ի՞նչն է պատճառը իր հեռաձայնին:

Իսկ իմ եւ աղջիկներուն բարեկամութիւնը երթալէն աւելի կը ջերմանայ:

Ինչպէս վայել է բարեխիղճ արեւելքցիի մը, անոնց կ՚ընկերակցիմ ամէնուր. չըլլայ որ մէկը նեղացնէ: Իրենք ալ ատենէ մը ի վեր ինծի իբրեւ եղբօր սկսած են վերաբերիլ: Անշուշտ համակերպած եմ, որ Գարլան Լիքային կը սիրէ, բայց ատեններ կ՚ըլլան, որ տակաւին կ՚անդրադառնամ երանութեամբ մը Գարլային գաղտուկ հետեւելուս: Երբեմն սեռային երազներ ալ կ՚ունենամ, բայց կրցած եմ համակերպիլ նաեւ այդ գաղափարին. անյուսօրէն կը սիրեմ Գարլան, բայց ակռաներովս իսկ պիտի պաշտպանեմ այս երկուքին սէրը: Աղջիկները ոչինչ գիտեն այս ամէնուն մասին եւ տարօրինակօրէն իմ ներկայութիւնս կը փնտռեն: Ատենէ մը ի վեր նաեւ կիրակիներս սկսած եմ անոնց հետ անցնել, ինչ որ բնականաբար հօրեղբօրս սրտով չէ:

Օր մը հօրեղբօրս հետ հաշտուելու համար աղջիկներուն առի եւ հետս իր խանութ տարի: Կը յուսայի, թէ տեսնելով ինչ հաճելի մարդոց հետ ժամանակս կ՚անցնեմ հօրեղբայրս պիտի մեղմէր իր զայրոյթը: Սակայն ակռաներուն մէջէն նետուած «ի՞նչ գործ ունիս սա բոզերուն հետ» մը ա՛լ աւելի խորացուց մեր գժտութիւնը եւ արդէն խորհելու սկսայ, որ ժամանակն է հօրեղբօրս տունէն ելլելու:

Սակայն ո՞ւր երթամ: Եթէ տունէն ելլեմ, ուրեմն գործն ալ պիտի ձգեմ, իսկ շուտ մը նոր գործ գտնելու շատ յոյս չունիմ. Ֆրանսա այսչափ գործազուրկներ կան, չեմ կարծեր թէ ամէնը կեցած զիս կը սպասեն: Գարլան առաջարկեց որ ժամանակաւորապէս իրենց փոխադրուիմ, սակայն չուզեցի. արդէն ամէն օր իրարու հետ ենք, կը վախնամ ձանձրացնել զիրենք, իսկ այս բարեկամութիւնը տարօրինակօրէն միակ բանն է հիմա, որ ինծի համար արժէք ունի:

Ճիշդ այս մտահոգութիւններու մէջ կը տապլտկէի, երբ ասկէ շաբաթ մը առաջ Գարլան հեռաձայնեց եւ ըսաւ թէ հետս լուրջ խօսելիք ունի եղեր: Երբ սովորական կատակներս սկսայ ընել, յանկարծ անդրադարձայ թէ աղջիկը շատ լարուած է եւ չի խնդար: Վախցայ: Շատ վախցայ: Վստահաբար ա՛լ զզուեր են ինծմէ: Ժամադրած տեղն ալ արդէն մտահոգութիւններու նոր դուռ կը բանար. քաղաքին համբաւաւոր ճաշարաններէ մէկը: Ասանկ տեղեր կամ ամուսնութեան առաջարկ կ՚ընեն, կամ կ՚ըսեն թէ քեզմէ երախայ կը սպասեն, կամ ալ կը բաժնուին: Առաջին երկուքին անկարելի ըլլալուն միայն երրորդը կը մնար:

Դժուարաւ տեղին պատշաճող հագուստ մը կը գտնեմ եւ նշուած ժամուն հոն կ՚երթամ: Ներս կը մտնեմ որ աղջիկներն արդէն նստած են: Անոնց տեսնելով քիչիկ մը կը թեթեւնամ. թէեւ քիչ մը լարուած կ՚երեւին, բայց սովորական ջերմութեամբ կը բարեւեն: Առաջին անգամ կը տեսնեմ զանոնք դասական հագուածքի մէջ. Գարլան ըսես Ուոլթ Տիզնիի գծանկարուած իշխանուհիներէ մէկն ըլլայ: Ասանկ աղջիկ մը եթէ մօրս հետ ծանօթացնէի, ուզէր ալ չէր կրնար ծաղրել…

– Գիրի-գոր,– կ՚ըսէ Գարլա սեղանին վրայ պնակները դասաւորող սպասեակի ներկայութեամբ պարտադրուած տեւական լռութենէ մը վերջ, զիս իմ մտքերէս կտրելով,– գիտես, որ ես եւ Լիքան արդէն երկու տարի է միասին կ՚ապրինք: Կը խորհիմ թէ բաւական ժամանակ անցած է յառաջ քալելու համար… իսկ այդ առաջը… այսինքն միւս քայլը… է-է… մէկ խօսքով կը կարծենք, թէ… պատրաստ ենք ծնողք դառնալու…

Ապուշ նայուածքէս հասկնալով, որ ունակ չեմ բան մը ըսելու, Գարլա կը շարունակէ.

– Ասիկա մտածուած եւ ապրուած որոշում մըն է եւ ոչ վայրկենական ներշնչում: Երկուքս ալ հասուն ենք ու պատրաստ այդ քայլին… բայց հոգեզաւակ

չենք ուզեր. որոշած ենք, որ ե՛ս պիտի ծնիմ մեր զաւակը… Սակայն չենք ուզեր *ափէրմի պանք* դիմել, իսկ դուն… մեր ամէնէն մտերիմ մարդն ըլլալով… ի՞նչ կը խորհիս…

– Հէ՞…

– Մեր զաւակին հայրը կ'ըլլա՛ս… կենսաբանական հայրը,– կ'ըսէ յանկարծ Լիքա, ապուշութենէս յուսահատ:

– Այսինքն,– կ'ըսեմ շուարած,– պիտի պառկի՞մ հետերնիդ… չէ միայն մէկուդ հետ…

– Չէ, ապուշ,– կ'ըսէ Գարլա խնդալէն,– միայն սերմիդ պէտք ունինք: Ե՛ւ, ինչ կը խորհի՞ս:

Սա ապուշ փողկապը կապած չըլլայի. կը խեղդուիմ: Աղջիկներն ալ սպասողական նայուածքնին ինծի յառած են: Կռնակէս քրտինք կը ծորի:

– Կրնա՞մ բաղնիք երթալ,– կ'ըսեմ կմկմալէն:

– Անշուշտ, մի՛ աճապարեր,– կ'ըսէ Գարլա,– եթէ մտածելու պէտք ունիս, մտածէ որչափ որ պէտք է:

Ոչինչ պատասխանելով դէպի բաղնիք կը քալեմ:

Հայր ըլլալ… երբեք չեմ խորհած ասոր մասին: Նախկին սէրսէրին կրնա՛յ հայր ըլլալ…

Փողկապիս կապը կը թուլցնեմ, պաղ ջուրով երեսս կը լուանամ, յետոյ հայելիին մէջ շուարած նայուածքս կը բռնեմ: Կալաթայի շուկայի նախկին սէրսէրին՝ կեցած Փարիզի ամէնէն համբաւաւոր ճաշարաններէ մէկու մը բաղնիքին մէջ: Անզգալաբար խնդալու կը սկսիմ: Յետոյ կտրուկ կը կենամ. դէմքս հայելիին կը մօտեցնեմ եւ ուշադրութեամբ մը ինզինքս ուսումնասիրելու կը սկսիմ, այնպէս, ինչպէս տարիներ առաջ Գուրթուլուշի մեր յարկաբաժնին մէջ: Իրաւունք ունի՞մ սա անշուք դիմագիծս իբրեւ ժառանգութիւն անմեղ երախայի մը թողուլ… Չէ, իմ տգեղութիւնս Գարլային գեղեցկութենէ զօրաւոր չի կրնար ըլլալ: Այդ երախան, վստահաբար, պիտի Գարլային գեղեցկութիւնը ժառանգէ: Փարիզի ամէնէն գեղեցիկ տղան կամ աղջիկը պիտի ըլլայ, եւ օր մըն ալ անոր ձեռքը բռնած մեր տուն պիտի երթամ. Պոլի՛ս: Մայրս դուռը պիտի բանայ որ ես կեցած եմ հրաշք պզտիկի մը հետ: Պիտի շուարի, քանի որ լուր չեմ տուած գալուս մասին: «Թոռնիկդ է»,– պիտի ըսեմ, իսկ մայրս աչքերուն պիտի չհաւատայ: Յետոյ պիտի ներս մտնենք, ուր հայրս պիտի գտնենք: Արդէն ծերութեան սեմին մօտեցող հայրս հոն պիտի հասկնայ, որ ես այնչափ անյոյս մէկը չէի, որ իր գեղեցկութիւնն ու ազնիւ նկարագիրը պարզապէս ննջած էին իմ մէջս տեղ մը, յետոյ կրկնակի ուժգնութեամբ սա մանուկին մէջ արթննալու համար: Հայրս ոչինչ պիտի ըսէ, բայց նայուածքով ինծմէ ներողութիւն պիտի խնդրէ այսչափ տարիներ ինծի չվստահելու եւ վրաս կասկածելու համար…

Պիտի վերադառնամ ալ. աղջիկներուն շատ սպասցուցի:

– Համաձայն եմ,– կ'ըսեմ իսկոյն, չձգելով որ անոնք նոյնիսկ շունչ առնեն,– բայց պայման մը ունիմ…

Իրարու կը նային, յետոյ սպասողական նայուածքնին ինծի կ'ուղղեն:

– Համաձայն չեմ միայն կենսաբանական հայր ըլլալ. կ'ուզեմ որ զաւակս ճանչնայ զիս, կ'ուզեմ մասնակցիլ իր կեանքին,– կը կենամ, բայց աղջիկները լուռ են: – Դուք կը ճանչնաք զիս եւ գիտէք, որ իմ յարաբերութիւններս զաւկիս հետ ձեզ բնաւ պիտի չխանգարեն. գիտէք նրբանկատութիւնս,– կ'աւելցնեմ յուսահատ շեշտով մը:

Քանի մը երկվայրկեան լռութիւն կը տիրէ: Ճաշարանին պզտիկ նուագախումբը շատ հին վալս մը կը նուագէ:

– Կը կարծեմ, որ ամէն բան օքէյ է,– կ՚ըսէ Գարլա երկար լռութենէ մը վերջ,– անձնապէս ես դէմ չեմ, եթէ անանկ ըլլայ, արդէն օտար չես մեզի:

– Վստահ եմ, որ հիանալի հայր կ՚ըլլաս,– կ՚ըսէ Լիքա կամացուկ եւ կը ժպտի:
Երեքս ալ յուզուած ենք: Սպասեակէն գինի կ՚ապսպրենք: Յանկարծ արեւելքցիութիւնս կը բռնէ:
– Բան մըն ալ կայ. պայման մըն ալ ունիմ… աւելի ճիշդ` երկուքը,– կ՚ըսեմ:
– Ըսէ՛,– Գարլա քիչ մը կը լարուի:
– Զաւկիս հայու անուն պիտի տանք եւ հայկական դպրոց պիտի դնենք,– կ՚ըսեմ մէկ շունչով:
Զարմացած իրարու կը նային, յետոյ ուսերնին կը թօթուեն:
– Լաւ, թող ըսածիդ պէս ըլլայ,– կ՚ըսէ Լիքա,– ձեր անուններն անուշիկ են, իսկ սեփական արմատները ճանչնալու մէջ գէշ բան չկայ:
Այսպէս որոշեցի հայր ըլլալ:

***

Չեմ յիշեր, թէ քանի տարեկան էի, երբ բացայայտեցի գիջութեան հաճոյքը: Բայց յստակ կը յիշեմ պարագաները: Համադասարանցի ընկերոջ մը տուն հիւր գացեր էի: Վարդան էր կարծեմ անունը: Ուրեմն սա Վարդանն ըսաւ, թէ եղբայրը պահարանին մէջ *porn* երիզ մը կը պահէ: Մինակ էինք տունը, երիզը դրաւ գործիքին մէջ եւ առաջին անգամն ըլլալով հեռատեսիլի պաստառին վրայ տեսայ բաներ, որոնց մասին չէի իսկ մտածած:
Երեկոյեան մեր տունի բաղնիքին մէջ փակուած փորձեցի կրկնել գիջութեան նոյն վարժանքը, ինչ տեսած էի ֆիլմին մէջ: Ըսել թէ հաճելի էր, չեմ կրնար. քիչ մը անսովոր զգացումներ էին: Յետոյ ատեն առ ատեն կը կրկնէի, մինչեւ օր մը յանկարծ հասայ սերմի ժայթքումի: Երեք օր ամբողջ կարծեցի, թէ սխալ բան մը ընելու հետեւանքով հիւանդութիւն մը ձեռք բերած եմ, մինչեւ, այլեւս յուսահատ, Վարդանին պատմեցի մտահոգութիւններս: Վարդան, որ աւելի փորձառու էր այդ հողին վրայ, ըսաւ թէ ճիշդ անանկ պիտի ըլլար, որ վախնալիք ոչինչ ունէի: Հանդարտեցայ: Բայց արդէն մէյ մը որ հաճոյքին համն առեր էի, այլեւս չէի կրնար կենալ: Կ՚ըլլար, որ օրուան մէջ երկու, նոյնիսկ երեք անգամ փակուէի բաղնիքին մէջ: Անշուշտ, մայրս պիտի կասկածէր: Անշուշտ, օր մը չէ օր մը պիտի մոռնայի բաղնիքին դուռը կղպել եւ մայրս ետեւէս բաղնիք մտնելով պիտի տեսնէր զիս յանցանք գործելու պահուն: Սովորական պատմութիւն մը:
Թերեւս կեանքին մէջ միակ անգամն ըլլալով հայրս որոշեց բուն նիւթին մասին խօսիլ.
– Երբ… է– է… բանդ… կը կենայ… ի՛նչ կ՚ընես կոր,– ըսաւ կմկմալէն:
Անշուշտ, բառ մ՚իսկ չկրցայ հանել մէջէս. ամօթէն պիտի մեռնէի ճիշդ այդ վայրկեանին, կը կարծէի, աւելի ճիշդ` կ՚երազէի:
– Այլեւս չընես,– ըսաւ առանց աչքերուս մէջ նայելու: Այսչափ:
Անկէ վերջ գիջութեամբ զբաղիլը միշտ տեսակ մը մեղսագործութիւն եղած է ինծի համար: Նոյնիսկ հիմա, հիւանդանոցի յատուկ սենեակին մէջ, Գարլայի եւ Լիքայի համար սերմ արտադրելու ատեն, չեմ կրնար ազատուիլ այն մտասեւեռումէն, թէ հիմա մայրս պիտի ներս մտնէ:
Բայց վերջապէս կը յաջողիմ գործս ընելու: Ճակտիս քրտինքը կը սրբեմ թուղթէ անձեռոցով եւ սերմով լեցուած սրուակը ձեռքիս դուրս կ՚ելլեմ սենեակէն:
Հիւանդանոցէն կ՚ելլեմ եւ կը սկսիմ աննպատակ պտըտիլ: Այս տարի Փա-

րիզը քիչ մը աւելի պաղ է նոյեմբերի համար, բայց հաճելի կու գայ սա պաղը գերլարուած ուղեղիս: Դէմքս հովուն կու տամ, ջանալով մոռնալ, որ գիջութեան ատեն Գարլան կը պատկերացնէի:

Մէկ շաբաթ է որ հօրեղբօրս տուն չեմ գացած: Աղջիկներուն քովը կը մնամ: Մէկ շաբաթ է, որ Պոլիսէն անդադար հեռաձայններ կը ստանամ: Չեմ պատասխաներ:

Այն օրը ճաշարանէն ելլելէ վերջ մօրս հեռաձայնեցի.

– Մամա, երկու մտերիմ ընկերուհիներս, որ լէսպիան են, որոշած են զաւակ ունենալ, եւ ես իրենց զաւկին հայրը պիտի ըլլամ: Հայրութիւնս ալ պիտի ընդունիմ. ամէն բան օրինաւոր պիտի ըլլայ:

Ըսի եւ հեռաձայնը գոցեցի:

Չեմ գիտեր, մայրս ուղեղի կաթուա՞ծ ստացաւ թէ միայն էնֆարքթիւս, բայց այդ վայրկեանէն սկսեալ հեռաձայնս չի լռեր: Վերջը, ա՛լ զզուած, անձայն ռէժիմի փոխադրեցի:

Թերեւս եթէ հայրս հեռաձայնէր, պատասխանէի: Բայց հօրմէս հեռաձայն չստացայ:

***

Բժիշկն ըսաւ որ սերմս աւրուած էր: Սկիզբը լաւ չհասկցայ, «պիտի կրկնե՞մ», ըսի, բայց բժիշկն ըսաւ թէ ես ամուլ եմ, անպտուղ: Ըսաւ թէ պատճառը հասկնալու համար պէտք է զանազան քննութիւններէ անցնիմ, նորէն բաներ մը ըսաւ, որ չեմ յիշեր:

Նաեւ չեմ յիշեր, թէ ինչպէս հասայ Թրոքատերոյի մէթրոյի կայանը: Ուշքի եկայ որ կեցած հեռացող կառաշարին կը նայիմ: Գրպանի հեռաձայնս անդադար կը զանգէ. Գարլան է: Առանց աճապարելու գործիքն ականջիս կը մօտեցնեմ:

– Գիրի-գո՛ր, ո՞ւր ես: Բժիշկին հետ խօսեցայ… ատիկա բան մը չի նշանակեր, *ափէրմի պանք* կը դիմենք, դուն նորէն երախային հայրը կ՚ըլլաս, կապ չունի…

– Լաւ,– կ՚ըսեմ անտարբերութեամբ մը եւ հեռաձայնը կը մարեմ:

Ոչինչ կը զգամ: Նորէն կառաշար անցաւ. չելայ: Հեռաձայնս նորէն կը զանգէ. մայրս է: Ցանկարծ չարութեամբ մը կը բանամ բջիջայինս:

– Գրիգո՛ր, ո՞ւր կորսուեր ես, ծօ՛, խենդ եղանք…

– Մտահոգուելու պէտք չունիք, ես լաւ եմ: Այն միւս հարցով ալ այլեւս կրնաք չմտահոգուիլ, բժիշկն ըսաւ, թէ սերմս աւրուած է…

– Քա, ի՞նչ կը խօսիս…

– Այդպէ՛ս, անպտուղ եմ: Ապահով եղէք,– կ՚ըսեմ հազարաւոր քիլոմեթրեր անդին հեռաձայնի մօտ կեցած կնոջ պատճառածս ցնցումէն հաճոյք առնելով եւ բջիջայինս կը մարեմ:

Յաջորդ կառաշարը կ՚ելլեմ: Մէկ կայարան անցած եմ միայն, երբ մօպայլս նորէն կը ձայնէ. հայրս է:

– Լա՞ւ ես,– կ՚ըսէ զգուշաւոր ձայն մը:

– Այո, պապա, դո՞ւն,– կ՚ըսեմ քիչ առաջուան չարութիւնս կորսնցուցած:

– Ա… յո… չեմ գիտեր…

Լռութիւն կը տիրէ:

– Գրիգո՛ր…

– Հէ՞…

– Մի՛ մտահոգուիր…

– Չեմ մտահոգուիր…
Նորէն լռութիւն:
– Կարօտցանք, ծօ, ե՞րբ պիտի գաս…
– Կաղանդի արձակուրդին կու գամ:
– Իրա՞ւ: Ծօ, շատոնց պիտի գայիր, չորս տարի կ՚ըլլայ երեսդ չենք տեսած, մենք ալ մարդ ենք…
Ձայնը կը դողայ: Կը ծերանայ այլեւ մարդը, կը խորհիմ:
– Եթէ ըսէիք, թէ կը կարօտնաք, կրնայի անցեալ տարի ալ գալ…
Նորէն լռութիւն կը տիրէ:
– Ուրեմն կու գաս, հա՞, կաղանդին…
– Այո, պապա, կու գամ… կաղանդին…

*Սէրսէրի (թրքերէն) – սրիկայ:

Լուսանկարը՝ Գէորգ Փալանճեանի

Հասմիկ Սիմոնյան

Գարուն

սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի կոկորդիլոս,
դու ծաղկեցիր մարտյան մի գիշեր,
երբ մենք սլանում էինք խելահեղ արագ
և լիլին էլ, կարծեմ, դեռ ամաչում էր խոստովանել,
որ սիրում է տղային՝ իրենից այդքան փոքրատարիք
և քո կինը՝ փոքրիկ հուշում այն մասին, որ դողերդ ամառվա են,
իսկ ճամփան, ախ ճամփան…
դու սլանում էիր ձմեռների միջով,
իմ ներսում թիթեռները բացում-փակում էին շրխկալով
ահռելի, թափանցիկ, իրենց մեծ թևերը,
և ես ինքս էլ, հիշում եմ, դարձել էի ահռելի մեծ ու թափանցիկ
շրխկոցով կրծոսկրիս տակ աշխատող
մեքենա,
որ սլանում է հորդահոս գինիների միջով, նարինեի ծիծաղի,
լիլիի սքանչելի անվան ու կնոջդ կասկածի,
որ հոսելով մեր միջև՝ հստակվում էր իր համար պարզորոշ.
վայրկյան առ վայրկյան ես սիրում էի քեզ այնքան խելահեղ,
և ոչինչ չէի հասկանում,
և կինդ, կինդ, կինդ, խեղճ աննա,
դու առաջին վայրկյանից հասկացար,
երբ արագորեն անցնում էիր փողոցը ու շտապում էիր պարտեզ՝
տղայիկիդ տուն տանելու,
երբ շնորհավորում էի քո ծնունդը,
երբ սիրում էի քեզ այն կանաչ ամառանոցում՝ կծելով փոքրիկ կուրծքդ
և ցայլքիդ մազերը շոյելով,
դու ամեն ինչ գիտեիր,
երբ ոչինչ էլ չկար, երբ ոչինչ չէր նախատեսվում,
և իմ սերը կարող էր մնալ իբրև երևակայություն՝ թարմ ձյուն բոբիկ
ոտքերիս տակ,
վարդերի շքեղ փունջ, վիսկի, որ խմում եմ կում-կում ու քայլում
այս վարձով տան մեռելներով լեցուն սենյակում,

ó, կին, քո երևակայությունը ստեղծեց ամեն ինչ,
ես՝ բառե զինվորիկ, նստեցի քո երևակայության հրասայլի մեջ ու ոտնատակ
տվեցի ամեն ինչ:

Եվ օրերը, որ սկսվում են հիմա, այլևս չեն ավարտվում, կրկնվում են,
Քրիստոսը մեռնում է ծերանոցում,
Քրիստոսը ծննդատանն է ահա, և Մարիամին ընդառաջ շտապող բուժքույրը
Հովսեփի աչքի առաջ ձեռքերից բաց է թողնում մանկիկին՝ փակելով
հաշիվները եկող հայտնության,
Քրիստոսը խաղում է բակում, գոռգոռում է, վազում ու ցատկում,
ես կանչում եմ նրան տուն, ես սարսափելի հղի եմ և այլևս չեմ դիմանում ցա-
վերին,
– տուն արի, տղաս,– կանչում եմ պատուհանից,–
ես որոշել եմ հենց հիմա քեզ ծնել. մեր ընտանիքը պատրաստ է
հեղափոխության:

կադր 1

հնչում է Բախից ինչ-որ մի սյուիտ, հավանաբար այն մեկը՝
թավջութակի համար,
ես այնքան սոված եմ և այնքան հղի և այսչափ կլորափոր,
զարթնել եմ, իսկ սիրտս ցավում է մի տեսակ ու խփում է, խփում տագնապած,
ոչինչ, նորմալ է, մտածում եմ, գիշեր է, ես այսքան սոված եմ և այսքան հղի,
բայց սիրտս անփամփուշտ հրացանի պես դատարկվում է
քունքիս մեջ անընդհատ,

կամացուկ մտնում եմ սենյակ
սենյակում դու դավաճանում ես ինձ
ամենամոտ ընկերուհուս հարազատ քրոջ հետ և շոյում ես կուրծքը նրա,
և դեմքդ կանոնավոր է, պայծառ, դու պրծել ես նորից ու նորից,
և արյունը՝ լերդացած, նեղլիկ օձ, վանդակում է գլուխս ցիրուցան,
բայց ինչ գեղեցիկ ես դու և ինչ անիծյալ և որքան հրեշավոր, այնքան էլ սիրելի
կրկնակի սիրելի, եռակի սիրելի, քառակի ու հնգապատիկ,
ամեն անգամ սիրելի,
դու սիրելի էիր, սիրելիս, երբ ես ծնում էի աղջկադ,
և սիրելի էիր, երբ մեր առաջնեկի ուրախությունից գլուխդ կորցրած
ճանապարհեցիր եղբորս տուն և սիրեցիր անկողնու իմ հատվածում մեր
հարևանուհուն մինչև լուսաբաց,
այ էդքան երջանիկ էիր դու, այ էդքան անգլուխ զամբիկ

կադր 2

ինչ-որ մի պրելյուդ թող հնչի, երբ բառերը վերջանում են ու դառնում
անիմաստ կրկնություն,
շուրթերը սկսում են սուլել
և արդյո՞ք հեղափոխություն է պատրաստվում:
ընդամենը կյանք՝ վարագույրի պես արագ աջուձախվող,
և ու՞ր են երջանիկները՝ խարույկի մեջ իրար վրա դրված երկու փայտ,
որ մամուռ են բուրում ու անտառ վայրի և որ կարևոր է՝ իսկական են,
երջանիկ:

Քո կյանքը՝ պատից կախ նկար, ուր հայրդ քաղցկեղ ունի,
նա կմեռնի, եղբայրդ կծախի տունը:
Կհասցնե՞մ տեսնել տունը, ուր ապրում էի կարիճների հետ,
և կարիք ունեի կարմիր նկարի և քանի որ նկար չունեի,
մի կարմիր տոպրակ էի ամրացրել:
բերներերան կարմիրով լցված հիշողություն՝ ինչպես թոքախտով
հիվանդի բերան,
որ արյուն է թքում ու կյանք:
Ես թքում եմ քեզ դուրս:
Ես ապրում եմ:
Արդյո՞ք ես երջանիկ եմ, վայրի, և արդյոք կարելի է նկարել ինձ
ու կախել տան պատից՝ չխանգարելով անդորրը բնակիչների:
Օրինակ՝ ինձ հանգիստ չի տալիս կավիճով նկարված այն ծաղիկը
պատշգամբի պատին: քերում եմ բիբերս, որ մոռանամ:

ինչ-որ մի պրելյուդ թող հնչի, դու դեռ այստեղ ես, զգում եմ:
լսո՞ւմ ես սուլոցը բառերի: իսկ սվվո՞ցը փամփուշտների մարտ ամսին
Արփիի պատշգամբում…
և արդյոք մե՞ծ է տարբերությունը, թե ինչով ես վերջակետ դնում,
մեկը՝ դնչի տակից,
մյուսը՝ նախադասության վերջում:

կադր 3

սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի…
և կարևո՞ր է արդյոք քո անունը՝ միակ հստակ բանը, որ ունես
սառած մատներով քանդում եմ ձյունը՝ հիշողությունս գտնելու պես
սլանում ենք, ամեն ինչ այնքան նոր է, հետաքրքիր,
և ձյունը համառորեն չի հալվում, գնալով շատանում է՝
միզելու ցանկությանը զուգահեռ՝ ապահովելով ֆոնը տխրության,
ձյուների մեջ միզում ենք, հետո մի երկու քայլ անում, պառկում ենք
ու քրքջում հիացած:
Ես մեծ եմ,
ես թափանցիկ եմ ու թիթեռ,
ես շատ եմ, անհաշվելի, բոլորով միասին խցկված փոքրիկ փորում,
բացում ենք-փակում թևերը, ինչ հրաշալի է լինել սիրահարված,
ինչ հրաշալի է, որ ծննդյանս օրը կամուրջից ուղղակի չնետվեցի ցած,
այլ նստեցի այգում ու սպասեցի մինչև նարինեն եկավ,
հիմա ոչինչ չեմ հիշում, թե ինչ խոսեցինք, բայց լավ էր, որ եկավ:

կադր 4

աստված իմ, ես հղի եմ, հղի եմ, հղի եմ
հեղափոխությամբ,
գնանք, սիրելիս, վարդը պոկենք թփից,
ցնցվող ուսերից պոկենք գլուխը
կավիճով կամ նավթով ջնջենք քաջությունը,

հումորը,
սրտերը սառած,
որովհետև այն, ինչ մնալու է, միայն
մենությունն է,
ցուրտը,
լռությունը:

սիրելի, սիրելի սիրելիս,
որքան հարազատ ենք իրար, որքան որբ ու անօգ,
և ինչ հերոսական է սիրտը,
և ինչքան սեր կա այնտեղ՝ օվկիանոսի մեջ փտող անմարդաբնակ կղզիներ,
ախ սիրտը քո՝ անմարդաբնակ կղզի, մարմնիդ ահեղ գեղեցկությամբ ծփող օվկիանում,
և ում է պետք քո ինչքը, երբ դու ինքդ քեզ չունես,
երբ այդքան կիսատ ես ու այդքան կին,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի, սիրելի, սիրելի,
սիրելի գիտես, թե ով:

Տենդ

դու ծովից ես գալիս, սիրելիս
իմ բերանը լիքն է ժանգահամով
և շուրթերս կծվահամ են նորից

չոր, ինչպես երբեք
չոր սրտով
և խոնավ տագնապով մարմնի

դու պարզեցիր ցուցամատդ դեպի սիրտս
ծակեցիր մատով, մտցրիր ներս, շոշափեցիր,
և, սակայն, տեսածիդ չհավատացիր

դանդաղ, դանդաղ, դանդաղ
ինչպես հանգուցյալն է հեռանում հարազատներից
այդպես վստահ աստված է լքում մեզ
և այդպես դու ես գնում սիրելիս

արցունքներով չիջա թմբիկներին մատների
բառերը սղլիկ են, կանաչ լորձ
տաք եմ, ինչպես փոքր կատվի մլավոց,
և դատարկ՝ օվկիանոսի չափ

պարզ, ես քեզ պարզ տեսնում եմ այստեղ
դու ծովից ես հեռանում, սիրելիս
ես իջնում եմ խորքերը դանդաղ
մի դիակ, ում մեջ բառեր չեն տնկվի
և ոչինչ չի աճի արգանդում

դանդաղ, ինչպես դու էիր արձակում կոճակները
կնեխեմ ջրի մեջ շերտ առ շերտ
դու կխմես ինձ
դու կլողաս իմ մեջ
և քո երեխաները կլողան
և անգամ մի առագաստանավ

ոտնլվա

ես հիմա էլ չեմ ճանաչում ինձ
ով եմ ես
փոքրիկ մարմնավաճառ, թե արդեն մեծացել եմ, չեմ հիշում
ահա գինին, սիրելիս, ահա հացը, ահա սիրտս թունոտ,
ես մեռած բառեր եմ դնում շուրթերիդ
և քո ճիչը՝ գիշեր՝ լի հազարավոր քնած մոծակներով…,
շոյիր բարձս ու նա կդառնա գլուխ սիամ կատվի
երկրորդ անգամ շոյիր ու նա կմլավի ու կլիզի վերքոտ քիթդ
շոյիր ինձ
ու մատներով ցույց տուր շուրթերիս տեղը
քեզ կպատմեն ջրում շնչող կանաչ բույսի մասին
հիշեցրու ինձ որտեղից էին սկսվում աչքերս
և հայացքը գուցե աճի և մոլորվի հանդիպակաց անտառում,
ուր ամեն գիշեր արմատախիլ է լինում ինչ-որ ծառ
իմաստուն ծառեր, որ հետո երկար արնահոսում են ցերեկով
իմ պատուհանի տակ
և ջարդված սրտով քամին մահվանից էլ ծեր Քարոնի նման
տարօրինակ այդ գետով վերուվար է անում
և անհասկանալի բառեր է քրթմնջում
նա երբեմն գալիս է իմ տուն
նա էգ գինի է թունդ, որ կույլ չի գնում իմ ասֆալտե կոկորդով,
նա պարտված նավ է, որ օվկիանոսները թքել են դուրս
և հիմա այս լքված քաղաքում
նա բառ է՝ բանտարկված լռությամբ
և եթե ես չեմ ասում այդ բառը, որովհետև ոչ թե չեմ ուզում, այլ չգիտեմ
և դու նորից պիտի գնաս
և ինչու է ինձ թվում, թե դու գալիս ես մի,
բայց հեռանում ես միշտ մի քանի անգամ,
տունն այս, որ լուռ մարմինն է իմ՝ հիվանդանոց չարտասանված բառերի,
և դու, որ իմաստն ես այս տան իրերի՝ գրքերի, նկարների, իմ բարակ ստվերի

քո գնալուց հետո արնահոսում է քո թողած դատարկ տեղը
մատներիդ, շուրթերի, կոշիկներիդ, որ այլևս միջանցքում չեն
քո գնալուց հետո քամիներ են պոկվում
և ճռճվում են դռները այս տան – անիմաստ թափահարվող թևեր,
որ կարոտում են քեզ, սիրելիս...
ահա գինին, ահա հացը, ահա սիրտս, սիրելիս,
ես հագել եմ բարձրակրունկներն ու ճռճվում եմ բարդու պես
այս քաղաքի նեխահոտ բերանում
ես ցավող ատամ եմ
շպրտիր ինձ, սիրելիս
ես դատարկ որովայն եմ՝ մոծակներով լեցուն,
ես արգանդ եմ՝ հիվանդ բառերի խնամակալ,
ես նավապետ եմ խույլ, ով ավազ է շաղ տվել պատշգամբում
և շարել խխունջներ իսկական
և քամի աղջիկներ է քունում, որ կարոտը առնի բաց ծովի
ես այլևս ոչինչ չեմ հիշում
անատամ այս բերանում, ուր լեզվի օձեր են վխտում,
չորացած պինդ ոտքեր
սպիներ, որ քո անունն են խազած,
դու կտա՞ս իմ անունը, երբ մեռնես
կհիշե՞ս ինձ, երբ այլևս անհիշելի լինենք
և սերը, սերը կհոսի՞ նորից տաք, նոր մորթված թռչնի մարմնի պես տաք
(քո մարմինը միշտ տաք գինի էր բուրում և արյան հոտ էր գալիս...)
ահա և վերջ, սիրելիս,

ահա գինին՝ լռությունը կիսատ, որ խմվում էր կում-կում
ահա հացը, որ չսարքեցի քեզ համար. մարմինը թխվել էր արդեն
այլ անկողիններում,
ահա սիրտս՝ միշտ նոր, միշտ կծու, միշտ լվացված ու թարմ
գնալու համար ուժ է պետք և մի քիչ կամք և այն, ինչ թողեցի վերևում
ահա քո քսան արծաթ, համբույրը վերջին
բջջային հեռախոս, որդնած պարտականություններ, բանալի
մի քանի ծխախոտ սեղանին ու մկրատ
և տասնյակ շրխկացող դռներ ու պատուհաններ,
որ կակազում են թևերով օդի մեջ
և տապալվում գետնին:

լեյլա

օ, լեյլա, աչքը խուփ՝
բրեզենտով ծածկված նավակ,
դեմքի տխուր ջրափոսում:
և արդյոք հե՞շտ է կարդալ այդ աչքով:

օ, լեյլա, աչքը քո փակ,
նման է մեռած երգի՝
հատ գնացած բառերով, թելը՝ դուրս,
քեզ համար երգե՞լ են հեռվում
մեղրաջրով բացած օրորներ:

ձեռքերիդ, ձեռքերիդ թե հպվեմ
ճյուղերի բարակն եմ հիշում,
սառած քնքշանքը ձյուների,
օ, լեյլա, դու գիտե՞ս տաքանալ
ձեռքերով՝ նիհար ցախավել,
որ մայրդ գողացավ քեզ համար
ձեր բակում պաղած ձյան մարդուց:
Քո սիրտը՝ քորոցով կպցրած վարդ,
հիշո՞ւմ ես շուրթերը աղջկա,
ով գրկել շուրթերդ, լացում էր
օ, լեյլա,
լեյլա,
լեյլա,
իսկակա՞ն էր քո լացը արդյոք,
երբ բառ-բառ կրում էիր արցունքներդ
փակ ու բաց աչքերիդ ջրհորից:

ես կրկնում եմ քո անունը,
լեյլա,
անտեսանելի թիկնոց հագնելու պես,
դու գրկել ես մորդ, ինչպես նա՝ քեզ,
երբ դու անպաշտպան էիր ու փոքրիկ,
հիմա դու ես գրկել մորդ, ինչպես երեխային կգրկեն,
բայց նորից դու ես անպաշտպան,
և նորից դու ես փոքրիկ,
և ձեռքիդ մեջ տրոփում է սիրտդ՝ կարմիր փշոտ վարդ՝
ամբողջովին ծակծկված ու տկլոր

ուզում եմ մնաս հեռվում՝ երբևէ լույս չտեսած գրքի պես
ես քեզ չեմ ասում շնորհակալություն,
թեև իմ տունը, անկողինը, այն այգին
ինձ տեսնելուց նաև քեզ են դնում ներկա:

ես վախենում եմ, լեյլա, որ երբեք չեմ մոռանա քեզ,
և սարսափում այն օրից, երբ ուրիշն ինձ կգրկի

ու ես դժվարությամբ կմտաբերեմ անունդ,
հեղինակներ, որ կարդացել եմ քեզ համար,
և գրքեր, որ խորհուրդ եմ տվել քեզ,
անուններ, որ լսել եմ քեզնից,
բառեր, որ սովորեցրել ես ինձ:

լեյլա, կարելի է հագնվել ու գնալ
առանց հրաժեշտ տալու տնեցիներին,
բանալին՝ դռան շորի տակ, ծաղիկները՝ չջրած,
բայց վարձերը կմուծես, խնդրում եմ:

Ամեն ինչ ուրեմն չի սկսվում միայն
և շարունակվում, ինչպես կառուցումը
բաբելոնյան աշտարակի:
Լեյլա, դու կարող ես ինձ թողնել:
Լեյլա, ես ազատ կին եմ: Կհասկանամ:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Սիրանույշ Օհանյան

Ծնվել եմ չգիտեմ թե ինչու, ապրում եմ իներցիայով, կամա-ակամա, մտածում եմ, որ մի բան պիտի անեմ, որ մի բան լինի, անդադար գրում եմ մտքիս մեջ, որովհետև ուրիշ բան չեմ կարողանում անել: Մեկ-մեկ էլ թղթի վրա եմ գրում՝ վիրտուալ կամ նյութական, որ մի բան արած լինեմ:

Բառերս

Թասը դնում եմ անձրևի տակ և նստում գետնին՝ սպասելով, որ մեկնումեկը կլցնի:

Թասը դնում եմ անձրևի տակ և նստում գետնին՝ սպասելով, որ մեկնումեկը *կնկատի*:

Թասը դնում եմ անձրևի տակ և նստում *մոտակայքում* սպասելով, որ մեկնումեկը կնկատի:

Թասը դնում եմ անձրևի տակ և *թաքնվում* մոտակայքում՝ սպասելով, որ մեկնումեկը կնկատի:

Թասը դնում եմ անձրևի տակ և թաքնվում մոտակայքում՝ *հուսալով*, որ մեկնումեկը կնկատի:

Թասը դնում եմ *դռան* տակ և թաքնվում մոտակայքում՝ հուսալով, որ մեկնումեկը կնկատի:

Երեխային դնում եմ դռան տակ և թաքնվում մոտակայքում՝ հուսալով, որ մեկնումեկը կնկատի:

Երեխային դնում եմ դռան տակ և թաքնվում մոտակայքում՝ հուսալով, որ *տերը* կնկատի:

Երեխային դնում եմ դռան տակ և թաքնվում մոտակայքում՝ հուսալով, որ տերը *կքշի*:

Երեխային դնում եմ *մեքենայի* տակ և թաքնվում մոտակայքում՝ հուսալով, որ տերը կքշի:

Քշեց:

Երեխան երեք օրական էր:

———

Քննիչը նորից նույն բառերով հարցնում է: Հանգիստ պատասխանում եմ.

– Ես էլ չեմ իմանում: Անձրև է գալիս, սոված եմ, թասը նման է ոտնլվայի թասին…

Քննիչի գործը իմ գործը բացահայտելն է: Բայց նա երազում է փակելու մասին. տեսնում եմ աչքերի բացվածքից:

– Ոտնլվան ինչ կապ ունի,– գոռում է:

Բժիշկ-հոգեբանն է գալիս:

– Դեպքի վայրում ոչ մի թաս էլ չի եղել,– ասում է նա,– իսկ երեխան մոտ մեկուկես ամսական է եղել: Անամպ, արևոտ օր է եղել, իսկ սոված էիր, թե ոչ՝ գործի համար էական չի:

Բժիշկը քննիչից քննիչ է: Քննիչը չի հավատում, որ սկզբում երեխա չկար,

միայն թասն էր: Նորից եմ բացատրում.
– Թասը դնում եմ անձրևի տակ և նստում գետնին...
Բժիշկը պետք է ինձ գտնի, մինչդեռ կորցնում է իրեն: Իմ բառերից նրանք կորցնում են իրենց: Ձախլիկ բռունցքը ծեփում է քթիս: Արյուն է գալիս: Քննիչը տանում է նրան:
Հետո արձանագրությունը դնում է դեմս:
– Կա՛մ ստորագրի, կա՛մ նոր ցուցմունք գրի՛,– պահանջում է:
– Նոր բառերո՞վ:
– Ինչպես որ եղել է, այդ բառերով:
Բժշկից չեմ նեղանում. բժիշկ է, էլի՛, ի՞նչ պիտի իմանա բառերով խաղալու մասին: Բայց քննիչը, քննիչը, ախր, քննիչը պիտի հասկանա: Քննիչը բառեր է դուրս քաշում ուրիշների միջից այնպես, ինչպես ես՝ իմ միջից: Հատ եմ փախցնում ու սկսում եմ քանդել, ու հին գործվածքը հալչում-անհետանում է, իսկ կծկած թելով նորն եմ գործում: Հասկացո՛ղը պիտի քննի:
– Ինչպես որ եղել է, հենց այդ բառերով էլ գրել եմ:
– Ի՞նչ է, թասը, անձրևը, դո՛ւռն էլ են եղել:
Բժիշկն է մտնում ներս:
Հավաքում եմ համբերությանս հետ քիթուբերանիցս դուրս թափված արյունս: Անձեռոցիկը գույնը փոխում է: Ձեռի հետ մանրում եմ, ցանում սեղանին:
– Դրանք բառեր են,– կրկնում եմ,– եղած-չեղածը բառեր են: Թասը, երեխան, անձրևը, դուռը, մեքենան, տերը... եթե բառեր չեն, ուրեմն ի՞նչ են:
– Դու աննորմալ ես,– հատիկ-հատիկ շպրտում է բժիշկը:
– Չեմ հասկանում,– ասում է քննիչը:
– Բառերում կյանքեր կան,– պնդում եմ ես:
Բժիշկը ծնոտով կռանում է ճակատիս:
– Հակառակն է,– կրճտացնում է ատամների տակ,– կյանքում բառեր կան:
Քննիչը հետ է քաշում նրան:
– Իսկ ոտնլվան ի՞նչ կապ ունի,– այդ ընթացքում հարցնում է մի տեսակ ոգեշնչված:
– Ինչի՞, մնացածները կա՞պ ունեին,– զարմանում եմ ես:
Հիմա էլ բժիշկն է հետ քաշում քննիչին:
– Դու տարբերություն չե՞ս տեսնում երեխայի և «երեխա» բառի միջև,– հարցնում է այդ ընթացքում:
– Եթե տարբերություն լիներ երեխայի և «երեխայի» միջև, աշխարհին անհեթեթություն կլիներ,– ժպտում եմ ես:
– Փորձենք այսպես,– բժիշկը նստում է,– ենթադրենք երեխան կոչվում է, օրինակ, «տանտանտան»...
– Փորձենք,– համաձայնում եմ: – Տանտանտանին դնում եմ մեքենայի տակ... Թե՞ ամենասկզբից փորձենք:
Քննիչը ձեռքերով ծածկում է երեխայական-անհասկացող աչքերը:
– Պինդ է,– փնթփնթում է ձեռքի տակից,– չեմ հավատում: Չխ՜ստ: Չևերիիիիի՜ստ:
Գռռցի վրա հսկիչը ներս է ընկնում: Քննիչին տանում են: Բժիշկը նրանց հետևից դուրս է գնում: Արձանագրությունը քաշում եմ դիմացս, նորից կարդում եմ: Անգիր եմ արել: Ոչ մի ընդհանուր բան չկա իմ պատմության հետ: Մի երկու բառից բացի: Իմն ավելի լավն է:
Սպասում եմ: Չեն վերադառնում: Սպասում եմ: Պատերն էլ անգիր արեցի: Սենյակն էլ հետը: Աչքս ընկնում է վերևից կախված տեսանկարող աչքին: Չի

թարթում: Կուրացե՞լ է: Չեմ հավատում: Շունչս պահած, բոպեները վայրկյան-վայրկյան հաշվելով, նայում եմ: Չի թարթում, կարմիրը չի թարթում: Կամաց մոտենում եմ դռանը, քաշում: Բացվում է: Գլուխս զգույշ դուրս եմ հանում: Հսկիչներն ո՞ւր են: Լռություն է: Կամաց-կամաց ելնում եմ խցից: Դանդաղ ընդառաջ եմ գնում միջանցքի խորքում փայլփլող օդին: Արագ-արագ նետվում եմ դուրս:

Արագ-արագ ցատկոտում են մտքերս:
Արագ-արագ թաքցնում եմ մտքերս:
Արագ-արագ թաքցնում եմ հետքերս:
Քայլ-քայլ թաքցնում եմ հետքերս:
Քայլ-քայլ ջնջում եմ հետքերս:
Քայլ-քայլ ջնջում եմ բառերս:
Բառ-բառ ջնջում եմ բառերս:
Բառ-բառ բառում եմ բառերս:

ՍԿԱՆԴԱԼ

Նեթուզեր Լուզեր Լուզերը (ծննդյան անունը՝ Անի Կանաչյան) կասկածվում է հանրության տեղեկացվածության իրավունքը ոտնահարելու մեջ: Ցանցազրկված է կենտրոնական զննվարչությունում: Մեզ հաջողվեց սեփական աղբյուրներից պարզել, որ հնարավոր է՝ նրան մեղադրանք առաջադրվի «Հանրային տեղեկացվածության իրավունքի ժխտում» հոդվածով: Նրա մտազննումը կտևի մի քանի ամիս: Ընթացիկ արդյունքների մասին մենք պարբերաբար տեղյակ կպահենք մեր հետևորդների հանրությանը:

«Ոսպայնաթերթ» վայրկյանաթերթ, հիմա

Հավանում: 7859641 *Կիսում*: 587139 *Կարծիք*: 157459

Վերջին կարծիքները Դիտել բոլորը

Տեսնես էդ հավանողները ինչո՞վ են մտածել

Քո նմանները տեղ չունեն մեր հասարակության մեջ

Քեզ պիտի ամիսներով զրկեն ցանցից, որ իմանաս

Սրտի խոր ցավով եմ նշում, որ հավանած լինելով «Ասպետական միաբանություն» էջը՝ չեմ կարող քեզ ուղղել արդարացի հայհոյանքներս, քանի որ առցանց կանոնադրությունը պահանջում է զուսպ լինել կնոջ հանդեպ:

Ես ճանաչում էի հարգարժան պապիկիդ, ափսոս, որ քեզ նման թոռներ ունի: Գոնե ցանցում գրեիր, թաղման իրադարձությանը կմիանայի, ա՜յ անպատասխանատու: Ինչ ցավ է ինձ համար: Մեծի հանդեպ հարգանք չկա մեր ժամանակներում: Ես կրողոքեմ:

ԱՅԼԱՍԵՌՎԱԾ: Պապի՛ ջան, ես քեզ շատ եմ հարգում: Ես անմիջապես կգրեմ քո մահվան մասին: Մի՛ տխրի: Քո պատճառով պապիկիս սիրտը վատացավ, ա՜յ չմահավան: Քիթդ էնքան ես ցցել, որ ո՛չ պապիդ մասին ես մտածում, ո՛չ մանկության փողոցիդ ընկերների ընկերությունն ես ընդունում:

Դու անարգում ես մեր պապերի հիշատակը, ա՜յ լուզեռ:

Կարծիք հայտնել

* * *

Հանկարծակի էկրանի վերածված պատից կատաղի հնչեց զանգը: Անին սթափվեց: «ՈՏՔԻ»,– խոշոր տառերով պահանջեց պատը: Անին կանգնեց:

«Այսօր ձեզ հետ սկզբնական զրույց կվարի հոգեզննիչ Թովմասյանը»,– գրեց պատը: Հայտնվեց հոգեզննիչը:
– Նստե՛ք:
Ձայնը փափուկ էր, հանգստացնող:
– Մեղադրանքին արդեն ծանո՞թ եք:
– Ըհը՛: Ես…
– Քանի որ հետո դեռ առիթներ կունենանք այդ մասին խոսելու, հիմա պարզապես մոռանանք դա և զրուցենք: Ուզում եմ մի քիչ ավելի մանրամասն կարծիք կազմել ձեր մասին: Քիչ հետո պատրաստ կլինի ձեր հավանումների ամբողջ պատմության վերլուծությունը, և կքննարկենք…
Աչքերը ցավում էին հոգեզննիչի խոշորացած աչքերին նայելիս: Անին չէր կարողանում չնայել էկրանին. հասկացավ, որ իր աթոռի դիրքն է պատճառը՝ շատ հարմար էին տեղակայել:
Հոգեզննիչի հայացքը մի պահ հանգիստ թողեց նրան՝ զբաղվելով տվյալները աչքի անցկացնելով:
– Ուզում եմ խոսել ձեր թաքնված հանրագրերից,– մատնահարումը չդադարեցնելով՝ ասաց նա:
– Ինչերի՞ց:
– Ձեր թաքնված կամ ձեր թաքցրած հանրագրերից: – Նա ժպտում էր, ասես նոր հոբբի էր գտել իր համար:
– Ըըըըը…
– Կարո՞ղ եք ասել, թե ինչո՞ւ որոշեցիք թաքցնել դրանք բոլորից, նույնիսկ՝ ձեր ամենամտերիկ ընկերների ցուցակից: Ինչո՞ւ եք գրել, եթե գրել եք միայն ձեզ համար:
Անին հայացքը փախցրեց դիմացից: Թովմասյանը մատը շարժեց: Հիմա նա խստորեն խոժոռվում էր նաև աջ պատից:
– Երկա՞ր եմ սպասելու,– ձեռքը նորից մկնիկին դրեց նա:
– Ըըըըը… ես…
Նա ինչ-որ բան մուտքագրեց:
– Կարդում եմ ձեր թաքցրած հանրագիրը: «Ձեզ չեն սիրի, որովհետև դուք այս աշխարհից չեք: Ի՞նչ տեսաք այս աշխարհից կամ ի՞նչ լսեցիք և ումի՞ց. տեսածը այստեղից չէր, լսածը այստեղից չէր»: Ի՞նչ է սա:
– Դա մի հին Աստվածաշնչից եմ արտագրել…
– Տեղյակ եմ: Բայց ինչո՞ւ եք գրել: Ձեր էկոցանցի պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ հավատացյալ չեք, ոչ մի աստծո և ոչ մի կրոն չեք դավանում՝ չնայած երբեմն տեղեկություններ եք հավաքում որոշների մասին: Ընդունելի է: Բայց դժվարանում եմ ընդունել այսպիսի բաներ գրելը և գրելուց հետո հանրության աչքից թաքցնելը: Ի դեպ, որտեղի՞ց ձեզ այդ գիրքը: Ըստ ցանցում ձեր ամբողջ պատմության համապարփակ վերլուծության՝ դուք երբեք այն չեք տեսել, պիտի շեշտեմ, էլեկտրոնային ֆորմատով: Ուրեմն լսել եք բանավոր կամ գուցե նախնական թղթե գրքերի՞ց եք կարդացել:
– Պապիկիս գրքերից էր…
Անին ձեռքերով գրկեց երեսը: «Նա չպիտի տեսնի իմ արցունքները, նա չպիտի տեսնի իմ արցունքները…»:
Հատակը կարծես ոտքերի տակ երերաց: Շարժումից վախեցած՝ արցունքն աղոտ քողի միջով տեսավ հոգեզննիչի շրթունքները՝ հենց ոտքերի տակ:
– Անի՛: Ի՛նձ նայիր:
– Ի՛նձ նայիր,– ատամները ցույց տալով՝ կրկնեցին շրթունքները:

– Իմ ցանցաքննիչ ընկերոջ գյուտն է, – հոգեզննիչը չէր կարողանում թաքցնել ուրախությունը,– հաճախ է պատահում, որ անձը հրաժարվում է նայել հոգեզննիչի կամ ցանցաքննիչի աչքերին, մենք էլ սենյակը վերասարքեցինք այնպես, որ ցանկացած պահի ամեն ինչ կարողանանք էկրանի վերածել: Այնպես որ, հարգելի՛ Լուզեր Լուզեր, խորհուրդ եմ տալիս կենտրոնանալ և պատասխանել՝ օգնելով իմ պաշտոնեական պարտականությունների կատարմանը: Մի՛ մոռացեք, որ ես ձեր ընկերներից եմ և հետևաբար նաև որոշ ընկերական պատասխանատվություն ունեմ ձեր հանդեպ:

Անին նորից սկսեց դիմացը նայել: Հայացքը խոնարհած՝ հատակի աչքերի մեջ նայելը կատաղության կհասցներ:

– Ինչո՞ւ եք գրել այդ հանրագիրը և թաքցրել:

– Ես… չգիտեմ… չեմ թաքցրել…

– Իսկ սա՞: Գրել եք ձեր պապիկի մահից երկու օր հետո, կարդացածս նախորդ հանրագրից մոտ քառասունչորս ժամ առաջ. «Մեր անմահ լինելու պատրանքը ավարտվում է ծնողների մահվան հետ: Ծնողների մահվան առաջին նախանշանը նրանց ծնողների մահն է: Իսկ պապին միշտ ասում էր՝ ինձ թաղելուց չվախենաք: Մաման միշտ վախենում էր: Պապան ջղայնանում էր: Բայց նրանք մահացան իրենց անմահության պատրանքի մեջ: Նրանք չկարողացան սպասել ծնողների մահվանը: Ժամանակ չտվեցին նրանց: Նրանք մահացան՝ խախտելով իմ՝ մահը անտեսելու իրավունքը: Նրանց մահը ինձ ու պապիին զրկեց մահվան մասին չմտածելու հանգստությունից: Իսկ պապին գնաց նրանց մոտ՝ թողնելով ինձ: Նրանք ինձ խորթացրին կյանքից: Նրանց կարոտը ինձ մոտեցնում է մահվանը: Առանց նրանց ապրելը շարունակ պայքար է: Ես ստիպված եմ ապրել, ինչպես բոլորը: Բայց մեռածների հետ ավելի եմ հարազատանում՝ իմանալով, որ նրանց համար արդեն թափանցիկ եմ: Կեղծելու կամ անկեղծության ջանքեր թափելու կարիք չկա: Նրանք ամեն ինչ տեսնում են: Պատերը նրանց չեն խանգարում»: Ի՞նչ պատերի մասին է խոսքը, Լուզեր:

– Այս սենյակի պատերի,– հաստատակամ ասաց Անին:

– Օ՜: – Նա ինչ-որ բան մուտքագրեց՝ հայացքը չկտրելով Անիից, – դուք իրոք սրամիտ եք: Եվ, փաստորեն, հավատում եք հոգու անմահությանը, – ժպտաց՝ հայացքը էկրանին տեղափոխելուց հետո:

– Այո՛:

– Այնուամենայնիվ, պիտի կրկնեմ հարցս. ո՞ր պատերի մասին է խոսքը:

– Նաև այս սենյակի պատերի:

– Անի, ձեր տվյալների համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ խուսափում եք կարծիք արտահայտելուց: Հասարակական կյանքում ձեր ակտիվությունը դրսևորվում է հիմնականում համր հավանումներով: «Համր» ասելը ճշգրիտ չէ, որովհետև հավանումն էլ է խոսուն: Ճիշտ է, դուք գրեթե չունեք իրար հակասող հավանումներ, այսինքն՝ անկեղծ կամ գոնե հետևողական եք «Հավանել» սեղմելիս, սակայն դուք գրեթե միշտ լուռ եք, շատ քիչ կարծիքներ ունեք հանրային իրադարձությունների մեկնաբանությունների ցանկում և շատ քիչ հանրագրեր՝ ձեր պատին, իհարկե, այս բացահայտված թաքուն հանրագրերը չհաշված: Դա ինձ կասկածելու հիմքեր է տալիս, իսկ ձեր այս արտահայտությունը՝ «կեղծելու կամ անկեղծության ջանքեր թափելու կարիք չկա», ինձ ստիպում է ենթադրել, որ ըստ ձեզ՝ հանրությունը զբաղված է պատերին կեղծելով կամ անկեղծության ջանքեր թափելով: Անի՛:

– Ո՛չ,– ասաց Անին,– ես պարզապես ինտրավերտ եմ: Պապիս «չխոսկան» էր ասում:

– Այո՛: Թեստերի արդյունքները իմ առջև են: Տեղյա՞կ եք, որ Ցանցի զարգացման սկզբնական շրջանում մարդիկ հաճախ էին ունենում այսպես կոչված «անցանց» շփումներ, նրանց մեծ մասը նախընտրում էր «կենդանի» զրույցը «իսկական» ընկերների հետ: Հետագայում, երբ ցանցը կատարելապես ընդգրկեց առօրյան, հոգեզննիչներից ոմանք կարծիք հայտնեցին, որ որոշ հատուկ դեպքերում շատ բարդ է լինելու անձի էությունը պարզելը, քանի որ երբեմն մարդիկ այնքան են հմտանում դիմակով հանդես գալու մեջ, որ միայն լրացուցիչ՝ անցանց ընկերների հետ առերեսումը կամ նրանց ցուցմունքները կարող են վերջնական կարծիք ձևավորել: Մեր ժամանակներում տեխնիկական պատճառներով դժվար է անցանց ընկերներ ձեռք բերելը, իսկ դուք հաստատ չունեք ոչ մեկը: Ուրեմն օգնեք ինձ, որովհետև ցանցաքննիչների հանձնախումբը դատավճիռ է կայացնելու ըստ իմ տված բնութագրի, իսկ ես կասկածում եմ, որ դուք հանրության տեղեկացվածությունը սահմանափակելու հակում ունեք:

– Այդ հանրագրերը ես չեմ թաքցրել,– կրկնեց Անին: – Եթե դա թաքցնել է կոչվում, ապա ինչո՞ւ արգելված չի այդ հնարավորությունը: Թաքցնել կլիներ, եթե ընդհանրապես չգրեի դրանք: Պահեի մտքումս: Բայց ես գրել եմ, որովհետև ուզել եմ մի տեղ գրած ունենալ: Ես իմ համար եմ գրել: Բնականաբար, տեղյակ եմ, որ դրանք ցանկացած պահի կարող են մատչելի լինել Հանրապետության, հետևաբար՝ նաև հանրության համար: Ուրեմն ես ոչինչ չեմ թաքցրել, պարզապես նեղացրել եմ շփման շրջանակը:

– Նեղացրել եք այնքան, որ, կներեք հնաբանության համար, օղակի պես սպառնում է ձեզ:

– Միգուցե… Բայց չէ՞ որ դուք այդ մասին իմացել եք ինձ ներկայացված մեղադրանքի պատճառով: Իսկ ինձ մեղադրել են ընդամենը պապիի մահվան մասին հանրագիր չգրելու մեջ:

– Ընդամե՞նը:

– Ես ինձ կորցրել էի… ոչ մի բանի ցանկություն չունեի…

– Պարզ է: – Թովմասյանն արագ ինչ-որ բան մուտքագրեց: – Բայց չպետք է մոռանալ, որ մենք պատասխանատու ենք հանրության առաջ: Ցանցաքննիչները ձեզ հետ կզրուցեն այսօր կամ վաղը կամ վաղը չէ մյուս օրը: Ցտեսություն:

* * *

ՍԿԱՆԴԱԼ

Ինչպես տեղեկացրել էինք մեր սիրելի հանրությանը, շուրջ մեկ տարի առաջ նեթուզեր Լուզեր Լուզերին <u>մեղադրանք էր առաջադրվել</u> հարազատի մահվան մասին ցանցում հանցավոր անփութությամբ չազդարարելու և դրանով հանրության տեղեկացված լինելու իրավունքը չարակամորեն ոտնահարելու համար: Նա իր <u>պատիժը կրելու էր</u> մեկուսարանում՝ զրկված լինելով ցանց մուտք գործելու բոլոր հնարավորություններից, սակայն անցնելով հանրագրային թերապիայով նախատեսված բուժման կուրսը: Այսօր մեր թղթակցին հաջողվեց պարզել, որ Լուզեր Լուզերի մեկուսախցում հայտնաբերվել է հետևյալ գրառումը. «Դուք կարող եք ինձ զրկել գրելու հնարավորությունից, բայց ոչ մտածելու: Չգիտեմ՝ որքան կդիմանամ դեռ, բայց ձեզ նման երբեք չեմ դառնա: Դուք ամեն ինչին ձեր ձևն եք տալիս, իսկ ես դեռ ի վիճակի եմ եղունգով փորագրել պատին պապիս լեզվով՝ մի այբուբենի տառերով, որը շատ դանդաղ մեռնում էր ցանցում, երբ պապս ինձ գրել էր սովորեցնում: Դուք դա երբեք չեք հասկանա»: Գրառումը փորագրված է եղել պատի՝ հատակին մոտ մա-

սում: Այն պատահմամբ հայտնաբերել է հավաքարարը: Սկզբում նա մտածել է, որ գաջը տեղ-տեղ քերծվել է մահճակալը տեղափոխելու հետևանքով, սակայն իմանալով, որ մահճակալն ամուր գամված է և հնարավոր չէ տեղաշարժել, հայտնել է հսկիչին (<u>նեթուզեր Վոլ Վոչ</u>): Վերջինս, վատ բան կասկածելով Լուզերի շփոթված լռությունից, լուսանկարել է պատը և ուղարկել փորձաքննության: Անպատշաճ վայրում հանրությանը անհայտ լեզվով գրելու համար Լուզեր Լուզերը տեղափոխվել է հոգեկնարան: Հետագա զարգացումների մասին մենք տեղյակ կպահենք մեր հետևորդների հանրությանը:

«Ոսպայնաթերթ» վայրկյանաթերթ, հենց հիմա

Հավանում: Ոչ մի *Կիսում*: Ոչ մի *Կարծիք*: Այս նորության մասին դեռ կարծիքներ չկան: Եղի՛ր առաջինը, հայտնի՛ր կարծիքդ:

Կարծիք հայտնել

Ֆուտբոլը էն աշխարհում

Երբ տառերը քոչում են գրքիդ էջերից, մտածում ես, թե գժվել ես: Բայց երբ մատաղացու անասունն է հողաբաշխ մայունով փախցնում քեզ, արդեն չես իմանում՝ գժվածի գժվելը էլ ո՞րն է: Ամեն ինչ ընդունելի է դառնում:

Լավ, սկզբից պատմեմ:

Ընկերուհուս հետ գնացինք ֆուտբոլ նայելու: Սովորական խաղ չէր. հայ-թուրքական ֆուտբոլ էր: Քեռիս չէր թողնում. հիստերիկացավ, ոտքերը գետին տվեց, հեռախոսս ձեռքիցս խլելով՝ զանգեց ու գոռգոռաց ընկերուհուս վրա, թե՝ եթե դու գլխիցդ ձեռ ես քաշել, էդ չի նշանակում, որ մեր աղջկա գլուխն էլ պիտի ուտես: Կատաղությունից ու ամոթից ուզում էի գետնի տակն անցնել: Լավ է՝ ընկերուհիս հասկանում է. քեռու նման մեկն էլ իրենց տանը կար: Ես ու նա ոչ մեկին չլսեցինք, գլուխներս տնկած՝ գնացինք հայ-թուրքական հանդիպումը երկրպագելու: Տնեցիք սպասում էին, որ թուրքերը մեր արունը խմելու են, մեզ էլ ուտելու են, ու որոշել էին մեր տուրը տալ, հենց տուն կվերադառնայինք:

Տրիբունաների բարձր նստարաններին կանգնած՝ ես ու ընկերուհիս զգուշությամբ հանում էինք միմյանց ականջների բամբակը: Ընկերուհուս եղբայրն էր խցկել՝ ճամփու դնելուց առաջ, ու պատվիրել, որ չհանենք, թե չէ կլսենք տղամարդ երկրպագուների հզոր քֆուրներն ու տանը կմնանք, որովհետև տան աղջկա ականջը պիտի մաքուր լինի: Եղբայրը, քեռիս, մեր ազգուտակի արական կեսը մի կողմից, ընկերուհուս ազգուտակի արական կեսը՝ մյուս կողմից, համոզված էին, որ խաղը դիտող երկու աղջիկ է լինելու ընդամենը՝ ես ու ընկերուհիս: Բայց հորս խոսքը վճռորոշ էր, և չհամարձակվեցին մեզ փակել տանը՝ ինչպես խոստացել էին:

Տրիբունաների բարձր նստարաններին կանգնած՝ ես ու ընկերուհիս նայում էինք, թե ինչպես է Նախագահը հատ-հատ ողջունում հայ ֆուտբոլիստներին: Ձեռքով բարևելուց հետո նա ամեն մեկի կրծքի վրայից քերում էր խորհրդանիշ լեռը՝ երևի վախենալով, որ թուրքերը դրա տեսքից ավելի կկատաղեն, ավելի շատ գոլեր կխփեն, ու ինքը ստիպված ավելի եռանդով կծափահարի: Հետո նշան արեց, որ մարեն հայ-թուրքական թյուրիմացությունները խորհրդանշող շինության լույսերը, ու խաղը սկսվեց:

Խաղից հետո քեռիս մեզ դիմավորեց տան շեմին և խոստացավ, որ մեզ

նման տղամարդ աղջիկների համար մատաղ կանի: Երբ հարցրեցի, թե բա ինչո՞ւ իրենց նման տղամարդիկ չեկան մեր հայերի համար սիրտ ցավացնելու, ասաց, որ ինքը չի կարող թուրք տեսնել ու վրան չհարձակվել, մաման չլացացնել: Դրա համար զսպում է իրեն:

– Թե ուզում եք՝ մատաղի տերտերին ասեմ, միանգամից կնքի քեզ ու ընկերուհուդ,– առաջարկեց, – արժան եք սուրբ մեռոնին:

Ես նրան անփոփոխ իմ պատասխանը կրկնեցի և գնացի քնելու: Հոգնած էի: Իսկ առավոտյան ամեն ինչ տակնուվրա եղավ:

Աչքերս բացեցի միանգամից, այնքան կտրուկ, որ թվաց, թե երազս բաց աչքերով եմ տեսնում: Երազիս նորից հայ-թուրքական ֆուտբոլ էր, բայց այս անգամ դատավորը քերթողահայրն էր: Մենք պարտվում էինք նրանց խաղադաշտում և հաղթում՝ մերում: Դատավորը անընդհատ դատում էր: Աբսուրդ էր, բայց երազ էր: Ժամանակ պահանջվեց, մինչև կարողացա արթնությանս վրայից մաքրել նրա ստվերը: Լուսամուտիս տակ կես-բերան, կարծես իր ներկայությունը ակնարկելու համար մի ոչխար մայեց: Ուրեմն՝ յոթամսական ծնված քեռիս արդեն բերել է մատաղացու անասունը: Շաբաթ էր, դեռ կարող էի չմտածել սպասվող մատաղակերության ծանրաբույր հեռանկարի մասին: Ձեռքս մեկնեցի, բարձի տակից պատահական մի գիրք հանեցի: Մի քիչ հանգիստ կարդամ, քանի դեռ չեն գուշակել, որ զարթնել եմ: Բայց տառերը չկային:

Ստամոքսս սկսեց ծակծկել ու ներսից ցնցվել, ոնց որ կենդանի ձուկ կուլ տված լինեի: Բերանս միանգամից ցամաքեց: Ձեռքերս այնպես էին դողում, ինչպես կդողային, եթե մի քանի ժամ շարունակ, առանց քաղցին ուշադրություն դարձնելու և առանց գրքից կտրվելու կարդացած լինեի: Երեխա ժամանակ ինձ միշտ ասում էին, որ շատ կարդալու վերջը խփնվելն է: Ես միշտ սարսափում էի այդ խայտառակությունից: Ոչ մի բան այնպիսի զորեղ ամոթով չէր ողողում ինձ, ինչպես գժված, փողոցներն ընկած անտեր «ես»-ս պատկերացնելը: Մինչև մի օր հասկացա (լավ է ուշ, քան ավելի ուշ), որ եթե գժվեմ, «ես»-ս չեմ գիտակցի և հետևաբար ամաչելու պատճառ չեմ ունենա: Դրանից հետո էլ չէի վախենում գժվելուց, որովհետև գժվածը արդեն ես չէի լինելու: Բայց հիմա ես գժվել էի ու ես ես էի:

Տաք ու հով էի լինում: Աչքի պոչով անընդհատ գրքերիս նայելով՝ արագ հագնվեցի: Եթե մյուսների էջերից էլ են տառերը գնացել, ուրեմն գուցե գրքե՞րն են գժվել: Բայց ինչո՞ւ պիտի բոլորը միանգամից գժվեին: Գուցե հենց այդ գիրքն է գժվել: Վախենում էի անունը տալ ու վախենում էի մյուսները ստուգելուց: Հայելին ու սանրը դրեցի գրպանս, հետ-հետ գնալով՝ դուրս եկա սենյակից:

Ոչխար չէր, խոյ էր՝ հենց բաղնիքի դռան առաջ, ծիրանենու ծառի տակ կապած: Նրան տեսա ու մոռացա, որ շտապում էի նետվել ցնցուղի տակ՝ հիշողությունիցս լվանալու ցնդած գրքիս անդեմ էջերի տեսքը: Սևաթույր էր, գանգրագեղմ, խոյակնակոտոշ: Ոչխարային անչափ տխուր ու գեղեցիկ նայվածքով խոցեց հոգիս ու մայեց՝

– Աստղը տեսա՞ր:

– Ի՞նչ աստղ օրը ցերեկով,– շշկռվեցի ես:

– Ճակատիս պիծակը չե՞ս տեսնում:

Նայում եմ՝ սև բրդին սպիտակ խաչանշան է աչքով անում:

– Իսոս քեզ Քրիստոս,– թառանչեցի ես:

Խոյը կզեց:

– Նստի՛:

– Ես կկանգնեմ:

– Նստի՛ մեջքիս,– մնչաց նա:
Նստեցի: Աչքս չթարթած՝ մութ աշխարհի ընկանք:
– Ես ցնդե՞լ եմ,– համենայն դեպս հարցրեցի նրան:
– Տատիդ հիշո՞ւմ ես,– պատասխանեց նա:
– Ո՞նց չեմ հիշում,– վրդովվեցի ես:
Լռեց: Վարգում ենք մութ աշխարհով: Գրպանս նեղում է: Կառչել եմ կոտոշներից, հազիվ հասցնում եմ հետևել սուրացող բնապատկերին, որը ոչնչով չի տարբերվում լույս աշխարհից ու ահավոր ծանոթ վայրեր է հիշեցնում: Բա ինչո՞ւ է մութ կոչվում, չեմ հասկանում: Հանում եմ հայելին ու մինչ նայելը արդեն հասկանում եմ՝ մութ աշխարհը հայելային անդրադարձ է: Ձախը աջ է դարձել, աջը՝ ձախ: Ամեն ինչ աջուձախ շուռ է եկել, բացի ինձնից: Կոնդ ենք բարձրանում: Մի քիչ էլ, ու տուն կհասնենք,– գլխի եմ ընկնում ես: Դարպասի առաջ խոյը հպարտ կանգնում է: Պատի տակի քարե նստարանին ձախլիկ տատս իլիկ է մանում:
– Եկա՜ր, բալա՛:
– Տա՞տ:
– Արի պաչեմ:
Իլիկը մի կողմ է դնում, ոսկրոտ ձեռքերով քաշում ձեռքերիցս: Չի փոխվել: Բայց մի քիչ կոլոտացել է: Խոյը ախորժակով տերև է ծամում: Տատս չանչ է անում նրան:
– Արագ ես եկել, հա՛, երեխու երեսին գույն չկա:
– Տատ, էս որտե՞ղ ենք
– Նստի, ա՛յ բալա: Նստի, կասեմ:
Նստում եմ կողքը՝ մեր սիրած դիրքով, նա՝ մեջքը ձիգ, հայացքը՝ ուղիղ առաջ, ես՝ կողքանց, հայելով նրա կիսադեմը, բոբիկ ոտքերս նստարանին տարածած-տատիս փեշին հպված: Դեռ չեմ վարժվել թարսուշիտակ ձախուաջին, թվում է, թե դրա պատճառով առաջն ու հետն էլ են խախտվել, և ես հիմա պիտի տեսնեի ոչ թե թթենին և նրա տակ խորհող խոյին, այլ՝ հարևան Մարուշենց կավիճոտ պատը, որը մեր գրատախտակն ու հայտարարությունների տախտակն էր միաժամանակ: Ձեռքիս իլիկ է հայտնվում:
– Տա՛տ:
– Հա, բալա ջան: Մանի, մանի, հետո կասեմ:
Կենտրոնացած մանում եմ: Տարօրինակ է. թելը իմ մազերն են: Մազերս, որ կարճ կտրված են ծոծրակից և որոնց մասին մամաս ասում է, որ մի մատ փաթաթելուն չեն հերիքի, բայց մատի փաթաթան են դարձել:
– Տա՛տ…
– Հետո, բալա ջան:
– Տատ, հիմա դու մեռե՞լ ես:
– Չէ, ա՛յ բալա, ես ո՞նց կարամ մեռնեմ:
– Բայց…
– Մանի՛, մանի՛, հետո կասեմ:
Մանում եմ: Ծոծրակս կարծես իմը չլինի: Շոշափում եմ՝ մազերս են: Մազերս մանելուց երկարել են ու շարունակում են երկարել: Շուտով կհասնեն գոտկատեղիս: Մի կողմ եմ դնում իլիկը: Տատս քթի տակ բարակ ժպտում է: Ես լավ եմ հասկանում շրթունքի պես կարճ նրա այդ խնդմնդոցը: Դրա փոխարեն ես կասեի՝ տեսա՜ր:
– Տա՛տ: Տա՛տ:
– Ասա՛, բալա ջան:
– Տա՛տ, ես գժվե՞լ եմ:

– Չէ՛, լույսս,– իրար է խառնվում տատս,– ո՞վ ասեց:
– Բա մազերս, դու, էս… էս խոյը…– Խոյը չկա: – Դու իսկականից չե՞ս մեռել:
– Մեռել եմ, բալա ջան:
– Բա նոր ասում էիր՝ ես ո՞նց կարամ…
– Որ շատ ուզեմ՝ կարամ:
– Բա մազերս…
– Մազերդ քեռուդ խնդրանքով արեցի… շատ էր ուզում քեզ երկար մազերով տեսնել, բալա՛ ջան… Դու մի մտածի, հենց զարթնեց՝ կանցնի:
– Ո՞վ զարթնեց:
– Քեռիդ, էլ ո՞վ:
– Ո՞նց… մենք հիմա քեռուս երազո՞ւմ ենք: Ո՞նց… էս հիմա իրա տեսա՞ծն ա… տա՛տ… բա որ… բա որ չզարթնի, տա՛տ…
– Աստված ո՛չ անի, ա՛յ բալա, ինչե՞ր ես խոսում: – Տատս խաչ հանեց: Ներսումս մի լար ձգվեց ու դեռ զնգում էր, մինչ ես հանկարծ կհասկանայի, որ գլխավոր հարցը չեմ տվել:
– Տառերը դո՞ւ ես հանել գրքիս միջից, ա՛յ տատ:
Տատս շոշափեց խալաթի գրպանը:
– Քեզ իմ մոտ բերելու ուրիշ հնար չկար,– ոչ թե արդարանալու, այլ իմ մեղավորությունը հաստատելու պես ասաց նա,– երբ ես դու դուրս գալու գրքերիդ միջից, ախր: Մինչև տառերդ չտարա, չեկար:
– Բայց ո՞նց եկա, տառերը ի՞նչ կապ ունեն:
– Պիտի շատ վախեցած լինես, որ ուժս պատի՝ քեզ բերեմ:
– Բայց…
Նա շոյեց գլուխս:
– Ես գիտեի, թե գժվել եմ…
– Աստված ոչ անի,– խաչ հանեց նա,– դու չե՛ս գժվի: Տատիդ մոռացա՞ր, ինչ ա…
– Տա՛տ, բայց… էս ի՞նչ տեղ ա… Հայաստանը չի, չէ՞… էն աշխարհը… մեռնելուց հետո… դու ի՞նչ ես անում այստեղ…
– Ձեզանով ուրախանալով ապրում եմ, փա՛ռքդ շատ…
– Բա էն աշխարհը…
– Էն աշխարհը էլի՛ Հայաստանն ա, լո՛ւյսս: Մենակ թե ձախն ու աջն են ուրիշ:
– Էստեղ էլ ե՞ն ֆուտբոլ խաղում…
– Էդ հարցիդ հիմա որ պատասխանեմ, հաջորդ հարցդ թուրքերի մասին ա լինելու, չէ՞: Իրավունք չկա, լո՛ւյսս: Չե՛մ ասի: – Գրկեց գլուխս: – Գնա՛, գնա տուն, քանի քեռիդ չի զարթնել: Թե չէ կկատաղի, որ խոյը քեզ փախցրել ա…

* * *

– Ախչի Արշո՛, Արշալո՛ւյս,– բաղնիքի դուռն էր ջարդում մամաս,– չեմ ասել՝ մի ժամից ավել չմնաս տաք ջրի տակ: Դո՛ւրս արի, քեռիդ էս կես ժամ ա՝ քեզ ա սպասում…
– Արի՛, բան ունեմ ասելու,– աղբյուրի մոտ պպզած քեռիս շպրտեց ծխուկը,– երազս եմ ուզում պատմեմ, բայց… բայց իմացի, որ երազով ինձ չեք խաբի… Ես ամեն ինչ գիտեմ: – Ու հանկարծ բարձրացավ, թիկունքում պահած ձեռքը պահեց քթիս տակ: Թաց մազերս բիզ-բիզ կանգնեցին:
– Տատդ մոռացել ա տառերը հետ ուղարկի, գիրքդ գտա, ստուգեցի: Սկզբից մտածեցի, թե խփնվել եմ, բայց հետո հիշեցի, որ տառերը քեզնի՛ց են փախել, իսկ ես ու դու նույն բանից չենք կարա խփնվենք… Դե հիմա ինձ ճիշտն ասա՝ դրախտը Հայաստանից ինչո՞վ ա տարբերվում…

Imagification

Բարեկա՛մ, որոշեցի պատասխանել վաղուց մեռած այս ձևաչափով, որ հնարավո՛ր խորությամբ ներկայացնեմ միտքս: Մի կողմից՝ դժվարությամբ եմ մտածում բառերի փոխակերպում, որովհետև վաղուց առիթ չեմ ունեցել թարգմանություն անելու, մյուս կողմից՝ կարծես նոր ստեղծագործություն հորինեմ: Տառերը նկարելը ինձ համար դեռ դժվար է, բայց դա հավանաբար շատ ավելի հեշտ կկարդաս, քան ես գրում եմ:

Եթե հաշվի առնենք բառերի ջնջումների թիվը ազնվորեն, երբեք չեմ համարձակվի ներկայանալ այդ հաշվապահները արտերծելը վաղեմի երապանդա: Բայց արտահայտվելու ցանկությունս մեծ է, ինչպես նաև շատ մեծ է հասկացվելու ցանկս: Ճիշտ է՝ պատկերավորելը դժվար կլինի, բայց իմ ուզածն էլ հենց դա է՝ ցույց տալ, թե ինչքան դժվար է պատկերավորել հաղորդակցությունն առանց պատկերների:

Շարքի կազմում, ինչպես հայտնի է, երկու հոգի հեղինակային գրաֆիկներ են պատկերայնացման՝ թարգմանողներ են, իսկ մյուսները պատկերագետ լինելով բացի նաև գեղագետ են և մանր պատմությունը: Հակառակ դեպքում, վստահ եմ, նախագիծս կմնար մեկը որպես մեծամասնության համար անհասկանալի «նորաձևության» կամ՝

որպես պերիֆերիկական թաղը և դժվար հասանելի
կայարան:

Արահնդամանս նկարագրությունը սա է՝
«Հեռու անցյալ նայելով՝ ամեն անգամ զարմանում
եմ, թե ինչպես էին մտածում թաղերում: Ապրած
թեմայի և մտածողության զարմանալի շերտերը դեռ
բացահայտված ու ճանաչաբանված են, սակայն
ամենահետաքրքիրը պատկերապատման հետաքրքրությունն
է: Հիշեցեք, թե որտեղից սկսվող ամեն ինչ՝ մի օր
մի սրահում ակտիվացող Պատկերասրահին: Այն
ժամանակ, երբ հաղորդակցությունը գրեթե բացառապես
թղթերով էր, Պատկերասրահին պարզապես մտավոր
կենտրոնը և կարծանալի զարմիջ էր, որովհետև
էին խաղալ գիտակցաբար երևակայական հավելյալ
անհատներ: Այս խաղը ժամանակի ընթացքում ավելի
ու ավելի շատ ճանաչելիություն էր ներկայացում: Հայտնի
է, որ սկզբում Պատկերասրահի խմբագիրները շատ
սահմանափակ էին. ճանաչմանությունն ներգրավվածությունը
հետաքրքիր դարձավ սոցիալական կայքերի
պատկերապատմությունների հետ: Սկզբին պարզապես սկսեցին
կարծիք գրել և ճանաչաբանել պատկերներով, մինչև մի
օր հանկարծ հասկացան, որ կարողանում են
մտածել առանց բառերի օգնության՝ միայն
պատկերներով մտածելով և հասկանալով միայն
պատկերներով: Այս փորձառությունը ցնցելով

արհեստաբար, ամենայն հավանորեն ընկալվեց ծանծաղվեց, ինչպես ցույց է տալիս հայելին է արհեստաբար պարզված և ծանծաղվեց այս գալիս հայացքի: Դրան հետևեց հեղափոխությունը, որն ընդգրկեց մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ կրթությունից մինչև քաղցրացույց տեխնոլոգիաներ: Հեղափոխության ամենադժվար հաղթահարելի հետևանքներից մեկը մարդկության արտաքին ամբողջ ցուցանակությունը պատկերներով արտահայտելն էր: Լեզուները վերացան, որոնցից վերացան բառերը: Բառերը ցույց տալիս էին մարդկային կռահողության մեջ, այն էր կարդալու են երգել մարդկային օժտված անհատները: Մարդիկ համրացան և ծանրացան անասուն:»

Պատկերացնում եմ, թե ինչ խորքի ու հրապարակի շարժապատկեր եմ նախանշել: Տեխնիկական լուծումը դեռ ընտրված չէ. դժվարանում եմ ընտրել՝ հողապատկերը կառուցել անպայման, թե՞ օժտված: Համար ընդունված է, որ հողապատկերը պետք է ծովափնյա քաղաքով, որի քաղաքացիները լինելու են մի քանի այբուբենի պատկեր: Բառերով համար գրելու ձևը պարզ է, դա է՝ ներկայացնում են ձևավորում եմ հեղափոխությունը: Ձեռքի անցքին հետ է կարդալու, բայց համարյա եմ ներկում այս հողից հին «գրերը»: Հողապատկերը

Նկարագրությունը, որ կարդացի, նախնական ծրագրային
ցնող նկարազարդմամբ է պատմագործությունների մեջ:

Վերջացնելու ասեմ, որ գաղափարի անդրդվելի ճիշտը
դա էր: Արհեստներում ազատության ոգին
հասարակության ընկալումների որոնումներին ժամանակ
խորհուրդ եմ տալիս նույն 20-րդ դար, Ռուդոլֆ
Շտայների «Ազատության փիլիսոփայությունը»:
(Ներկի ապրելն չես հիշում, դեռ ասածս էլ չեմ:) Այդ
գիրքը լուսաբանող մի առաջարկություն գրել ազատության
ընկալելու Շտայների ազդեցության մի համբերատարությունը,
որը ծնվելիս էր առաջանալ հույզերը (անունը
չեմ հիշում, գիրքը պարտիզանական էր մի կերպ,
որը այդքան [illegible] յուրահատուկ է և շարունակում
հավատարիմ ցնդաբանների համար: Չեմ [illegible]
եմ նկարել այդ քաոսը՝ զույգ ծրագրային [illegible]
կարողանալու համար: Շտայներն ասել է. «Ես, օրինակ,
կնկարեի իմ Ազատության փիլիսոփայությունը: Միայն թե դա
այսօր էր ընկերոջս: Այսօր դա չէին կարդալու ընկալել,
որովհետև այսօր «քաոս» կոչվում են խառնվում:» Տարօրինակ
մի լույս կարծես [illegible], երբ նայեցի այս պատկերացմանը,
և գաղափար [illegible] [illegible] մեջ [illegible] եմ
անհամեմատ ու հաստատուն [illegible], որ համաձայն էր
ինչ այդ գիրքը [illegible]: [illegible]
էր, թե ազդեցություն կարող եմ պատկերացնել անգամ
[illegible] [illegible] ու [illegible]
[illegible]: Ազդեցիկ անգամ [illegible] [illegible]

կարող էր երևակայել, որ երբևէ մարդը կարգավորելու առանց բառերի: Չէ՞ որ նա ամենաշատը կարող էր պատկերացնել, որ բառերին փոխարինելու են նրանց նշանապատկերները: Իսկ ինչպե՞ս նա կարող էր երևակայել, որ երբևէ ցերեկային աշխարհագրություն են գրել մարդը բառերով: Համագոյն ընդհատած են բառերը պատկերացնում են որպես փոխանակման միջոցով ղեկավարներին: Ինչպե՞ս է ընկալվել մարդը մտածողությունը՝ հնարավոր չէ պատկերացնել: Հավանաբար նա նույն կանխազգացությունը կունենար, երբ ինքնաթիռ ձայնից, ինչ են սարքերի ճշգրտություն գրառել կայքերում: Հաղորդակցման այս կանխազգացությունը անհավատալի է:

28.07.2215

Երկիր Տ., Բելի
Ս.Հ.Օ.

Արամ Մամիկոնյան

Սիրում եմ բանաստեղծությունները, որտեղ մահացու վթարված բառեր կան, որոնց ուրիշ ոչ մի տեղ չես հանդիպի, բառեր, որոնք հոգնել են իրենց իմաստներից, ու ընդհատումներ, որ կիսատություններ չեն: Ամենը, ինչ կարող եմ տեսնել, դետալայինն է՝ մայթի ողորկ երեսաքարերը, ծառը՝ իր նախանձելի անշարժության մեջ, արևածագի անանուն թռչունը: Սրանք ու մնացած ամենը չընդհատվող շարունակություններ են: Ընդհանուր իմաստով կա մի բացարձակ անհաղորդություն այն համընդհանրությանը, որից պատռվել ենք մի անգամ: Ի՞նչ կարող է տալ երկխոսությունը, եթե երկու մարդու հաղորդակցության ցանկացած ճիգ ի սկզբանե ձախողման է դատապարտված: Կարծում եմ՝ բանաստեղծությունը հնարավոր է միայն այնտեղ, որտեղ բառերը այլևս չեն կատարում իրենց ֆունկցիաները, ինչպես նկարված ձեռքը, որն անցնում է բաժակի միջով ու չի կարողանում բարձրացնել այն: Կոպերը փակ են, մատները՝ թմրած: Եթե շրթունքները բաժանվում են միմյանցից բանաստեղծություն ընթերցելիս, ուրեմն երկու մարդու համրությունը հաղթահարված է կամ դրա պես մի բան: Բացակայությունը ինձ միշտ գերել է: Սակայն մարդն արդեն իսկ սխալ է, երբ խոսում է բացակայությունից: Ի՞նչ է մահը: Բանաստեղծությունը մետաֆիզիկա չէ, ոչ էլ ճշմարտության կամ ազնվության որս: Փառք Աստծո, որ պոեզիան տարբերվում է փիլիսոփայությունից: Սիլվիա Փլաթն ասում էր՝ մեռնելը արվեստ է: Ես ծնվել եմ 1991 թ. ու մեռնելու եմ խելքից դուրս սիրուն մի օր…

հուդա

էնն, հիմա գրամեքենան է քո ապրվածը…
էնն սեքսթընի եւ հոգեբույժ մարտին օրնի զրույցից

ó, գրամեքենաները չեն կարող աստվածներ լինել,
հիմա, երբ գիշերը ծորում է, ինչպես լորձը կովի գանգից՝
տարածելով բույրը նուրբ կապույտ մահվան

ու ես՝ կիսով չափ սողուն, կիսով չափ թշնամի,
ծաղկում եմ ծնգում, վեր հանում քեզ որպես ողնաշար,
սերը դանակ է՝ կասեի, մարմինը՝ ափսեի միս

սա իմ խելագարությունն է, իմ թողած կաշին,
մինչ տերևները չորանում են փայտերի վրա, ինչպես հիսուսներ,
մինչ տարին կրծում է խիղճը, հոգին, խնձորը

չէ, ես չեմ պարոն հուդան, պարոն փեսացուն, բայց կարող եմ
մահացու նետեր բաց թողնել բերանի աղեղից, կարող եմ
ինքս խոցվել թռչնի փոխարեն՝ կտրուկ ու հրաշալի

կապարե ձեռքը լուսնի կշրմփացնի հետույքին գիշերվա,

գիշերը կլղոզվի աչքի ապակուն ասես մառախուղ,
ó, ինչպես կոճղ, կոպիտ եմ ու տձև իմ գեղեցկության մեջ
փշրիր ինձ ոսպնյակիդ վրա՝ որպես ահավոր տեսարան,
գողացիր միջիս սուտը, միջիս խավարը, ոսկրերը միջիս,
պահերին, երբ կյանքը հրաշալի է՝ բառի ամենասարսափելի իմաստով

այդժամ նորը կլինեմ, ծաղկի փոշի կամ նորից ցեխոտ շուն,
քեզ կասեմ՝ տաքացրու ինձ, վերցրու շերեփն ու խառնիր,
ամենը, ինչ դուրս կլողա, բառեր են, բառեր՝ խխունջի փակ տուն

վերջ՝ հրմշտոցին դարերի, ինչպես մեղուզա՝ թափանցիկ եմ, բայց կամ,
ու, ինչպես երբեք, զգում եմ կոնքը բառի, զգում եմ,
որ կպայթեմ ծաղկի պես այսօրվա անձրևից հետո

երբ մահը՝ մատնաչափ արքայադուստր, կքնի ականջախեցու մեջ,
ու ես կսուզվեմ ձկների համր դարաշրջանով՝ ծանր, ինչպես քար,
առանց աղոթք, առանց անուն ու առանց աչք

* * *

կապույտ քնի մեջ վերքի պես բացվել է միայնությունը կղզուդ,
հորինեի ամենաանցավ դեղը՝ հոգին չարտահոսեր մարմնի անցքերից,
ապրեի թարս, կրեի ինձ ինչպես վերարկու՝ ներսը դուրս շրջած

ու միայն հիմա, ես կարող եմ վայելել իմ օտարությունը կղզու դատարկ
տրամադրության վրա,
սպիտակ ու քամոտ ամպ, կարողանայիր փչել ինձ ու
որպես պոեզիա անձրևեի վրադ,
սա թախծոտ եմ ասում,
ոնց որ հրաժեշտը՝ ամենաիսկական ինքնաթիռ,
որ տանում է ինձ իր թևերի վրա

ես, որ կրում եմ քո նվիրած երկարաթև թախիծը,
ես, որ միշտ հնազանդ թշնամուս մեռնում եմ ամեն օր,
բայց կատվի պես շատ կյանքեր ունեմ,
չեմ ցնցում ուսերդ, չեմ գոռում շինծու առոգանությամբ՝
ազատությու՜ն, ազատությու՜ն մեռյալիս

իմ չարիքն ես, իմ նախաճաշի խնձորը, սիրում եմ կծել լեզուդ, պարանոցդ,
ականջդ,
սակայն միայն տղամարդ չեմ, ոչ էլ միայն ժանիք ու թույն,
հատկապես հիմա, երբ դանդաղ, ինչպես սև կատու, լցվում եմ գիշերվա մեջ

գրկեիր ինձ այս բարակ արևի տակ, երբ հուլիսյան սեզոնն է
դեռ նոր բացվող դեղին հաջողների,
երբ բառը վարակված է մահացու, մարմինը՝ կախիչից կախ,
ու սերն՝ իմ մեջ, ինչպես ցավը ոսկորի

սիրերգ

վախեցիր կնոջից, որի ակնախոռոչից ծառեր են բուսնել,
և որ սիգարետի ծխով կախաղաններ է հյուսել քեզ համար,
ու անգամ, երբ աթոռը սահի ոտքերիդ տակից,
ու մարմինդ ճոճվի օդում, ինչպես օդապարիկ,
ես քեզ հետ զբոսնելու կգամ ապակու պես փշրված քաղաքի մայթերով

գայլը կինն է՝ արգանդդ ներսից քեզ խժռող,
թույլ տուր քեզ հետ վազել անտառներով, որ աճել են հոգեբուժարանի
պատերի վրա,
ու երազել, որ անկողինը մեզ կուլ տա ու դանդաղ մարսի կանաչ
երազների մեջ

սիրտն իմ՝ ռումբ լցված մեխերով,
բայց քո դիպչելուց ծովի կապույտն եմ հիշում, ու ինձ խեղդող ալիքը դու ես,
ճայն ես դու՝ դանակի շեշտակի հարվածով միջովս անցնող,
ու բոլոր սպանող գիշերներից հետո ես քեզ մոտ եմ վերադառնում

կացնի հարվա՛ծ, ու մեր երեսները լողում են հոշոտող կապույտի մեջ,
մակերեսային սահքը ապրելու, կատաղությունը լեզվիս, որին բառեր
չեն դիպչում,
ուզում եմ ասել՝ սերն ինչպես այսբերգն իմ մեջ,
ավելի շատ չի երևում, քան երևում է

ա՜խ, պառկեինք հորիզոնական գծին մայրամուտի,
ու արևն իջներ գիլիոտինի սրությամբ,
կամ լինեինք ափ ու ալիք, շոյեինք իրար ամբողջ գիշեր,
ու երբեմն միայն՝ անթարթ, ինչպես ձուկ, կարողանայինք նայել աստղերին

լունա

կոտրված ինչպես ափսեն նախաճաշի, որ չբարձրացրեցի հատակից,
փակեցի աչքերս, հետո անձրևանոցը, հետո դուռը հիվանդասենյակի,
մինչ աչքերիդ սև ջրափոսերից խեղդված ջրահարսեր էին դուրս գալիս,
մահը դանդաղ էր ու սպիտակ՝ բուժքրոջ կիսախուփ աչք՝ թաքուն հետևող,
երբ մարմինները շարժվում են կապույտ քնի մեջ

հույսը միայն ցանկություն չէր կամ սարսափելի խոստովանություն,
նրանցից, որ պատշգամբում միայն ծխախոտիդ կարող ես պատմել,
հետո, ինչպես բառ, թքել դրա համը մոխրամանի մեջ,
դաժանորեն ծածկել մարմինը, այրել մատդ, հայհոյել սրտիդ ուզածի չափ

խաղաղություն, իմ քույր, դու ես ինձ սովորեցրել ապրել մեղքի մեջ
ու մտքերի, ու ծառի, ու շնորհակալության,
մատը, որ իջնում էր հիսուսի թռչնի չափ սլացիկ մարմնի վրայով,
հետո առավոտյան փոքրիկ հաղթանակներ, որ չափում էինք կումերով
հանքային ջրի,

ու աղոթքը, ինչպես թաշկինակ, ծածկում էր բերանը

ես սա եմ հիշում, մի քանի ուրիշ բան ու թռչնի դին, որի թևերը
ճոճում էր երեխան,
նախ լիմոնի կտորները թրմփում էին օղու բաժակի մեջ,
վերջում դատարկ շիշը ոտքով հրեցի անկողնու տակ,
իսկ առավոտյան քեզ նորից էի տեսնելու

ախ, ամենակուլ դատարկություն, պահ, երբ ամեն ինչ ցնորք է,
ուղեղի հյուսվածք,
ես ատում եմ խոստովանությունը՝ թաց աչք, երբ թեքվում է հայացքը,
շրխկում պատին, վեր կենում, հեռանում,
ամբոխի մեջ հարմար է, երբ բախվում ես ուսերով, հրում ավելորդը,
մինչ վիրահատվում են օրերդ փորձառության, հիշողությունների
կամ գուցե մի քիչ ավելին, քան երբ գրում ես այդ բառերը՝
որպես հիասթափության թաքուն ձևեր

մահվան եղանակ էր, մի քանի զույգ կրակված աչք, նաև ձմեռ էր,
որքան հիշում եմ,
համենայն դեպս ձյուն չկար, միայն վիրակապերն էին
սպիտակ, կարմիր, հետո՝ էլի սպիտակ,
օ, այստեղ, մենք գիտենք հուսահատությամբ շարժել ձեռքերը,
փուլ գալ հատակն ի վար ու չհավաքվել,
մենք անփոխարինելի ենք հոժարությամբ կործանվելու մեր արվեստի մեջ

խաղաղություն, քույր իմ, փետրվարը դանակն է, որ բարձրությունից
ճոճում ես
մատներիդ վրա ու բաց թողնում,
ես պատմում եմ մի լուսանկարի մասին,
որտեղ է.–ն անչափ ներող է, ու մ.– ն քո աչքերն ունի,
ու կյանքը դառնահամ է, հանդիսավոր ու լիքը,
ինչպես գարեջրի բաժակները, երբ չրխկացնում ենք իրար, կենա՛ցդ

***

հիշելով այդ կարմիր օրը, երբ կյանքը, կամ ինչ էլ որ դա լիներ,
դեռ դողում էր բիբերի մեջ, ինչպես հայելի,
ու ծերունին, որ երկար մեզ էր նայում, ասեց. ա՛խ, այսքան երիտասարդ…
սեր իմ, տեսնես ի՞նչ են զգում աչքերը,
երբ մաշկը ճմռթվում է ոսկրերի վրա,
ոնց որ մի վատ ստիխ

միայն ամառվա գիշերային տխրությունն էր քաղցր,
լուսինը չղջիկներից գլխարկ էր հագել,
ու դու ասեցիր՝ սարսափելի է քարե դղրդոցը լուսնի,
դու ասեցիր, որ այսօր բացառություն կանես,
մարմիններից բացի, հեռվում մենակության հսկա տգեղ բարդին
ճոճվում էր տհաճորեն,
մեքենան դանդաղ անցնում էր դրա ստվերով՝ ներսում երկու ճակատագիր,
մենակ, սիրուն, երիտասարդ, ծնված մեռնելու համար

սխալ էր անգամ լռությունը, շրխկոցը բացվող-փակվող սրտերի,
մի կոտրված փեղկ,
կամ երբ մեքենայից դուրս ես նետում մի պատռած լուսանկար, հետո՝ քեզ,
աստված վայրի սագ է, երկար թռիչք նրա հետևից, խախտված ուղեղ,
ազդր ու ծունկ,
քաղաքի վրայով, ուր ամեն ինչ կարևոր իրադարձություն է ու մահ,
ուր կնճիռները բացվում են ինչպես երրորդ աչք, հողի տակ դրանք կծաղկեն,
այստեղ մենք ծխում ենք, համբուրվում, քայլում նստարանների վրայով

սխալ էր բառը, իսկը՝ վիուկների որս,
երբ մայրամուտը բացում է իր արյունոտ բերանը ու կուլ տալիս
երկրագունդը,
մի ձեռք վերջին պահին դուրս է հրում հոգին մարմնի միջից,
մարմինը փուչ է, դիակ, ձախողում,
բայց մենք աճում ենք դրանց մեջ, ինչպես ջերմոցներում,
ուր չկան եղանակներ տրամադրության համար,
մի հսկա տղայիկ է անցնում մեր հստակ շարքերով՝ թոցնելով գլուխները մեր

հիշելով այդ կարմիր օրը ու հետոն, որ եկավ այնքան շեշտակի,
որքան այն մահացու վթարը մայրուղու վրա,
մի ծնոտ՝ ծուլորեն կախ ընկած,
մի ուղղահայաց երակ՝ կտրված թանկարժեք վզնոց,
գեր ազնվական կնոջ պարանոցի ծալծլված շերտերի վրա,
որ արյամբ, արյամբ, արյամբ էր ցողում սարսափը մեր,
բայց սարսափ ասելով պատկերացրու մի դիմակ, որ հագնում ենք
կարեկցանքի մեջ,
մինչ կատվային սրված աչքերը հարձակվում են դիակի վրա
իրենց ողջ գիշատչությամբ ու անհագ ծարավով

առավոտյան ոտքերն օրորվում էին ալիքների վրա, ինչպես տձև գերաններ, ականջախեցին՝ բացվող ոստրե ջրի տակ, մեջը լիքը թաղման երաժշտություն, ու մենք մեր խոնավ մարմինները փռեցինք ավազին՝ պատրաստ նորից ծաղկելու, անտարբեր, ասես մահը մեր միակ ընդհանուր բնավորությունն է, ասես ուրիշ ոչինչ երբեք չի պատահում

սեր

դու այնքան հեշտ ես բարձրանում փաթիլվող բառերի վրայով՝
անգամ երբ ձմեռ չէ, ես պատերի մեջ լսում եմ սրտիդ զարկերը,
թունավոր գիշեր, գանգիս մեջ կուլ տված արևներ կան, ես ծառ եմ, որն արդեն
երազներ է տեսնում քո մասին, ցավից ճաքած կեղև, դիվային է
հանգստությունը կանաչի, լույսի ճառագայթը ջարդում է ոսկորս,
ես գրպանիս մեջ տրորում եմ ածելու մետաղե սառնությունը,
մինչ քեզնից արյունահոսում է ամենանուրբ պոեզիան, ես արյուն չունեմ, ու

քեզ հետ թեյի տերևների դանդաղությամբ հավերժություններ են բացվում բաժակիս մեջ

թիթեռային հիշողություն՝ կյանքը միայն մի եղանակ է, սենյակիս մեջ

բևեռային փոթորիկներ են մոլեգնում, դրսում ծաղիկը այրվում է
դժոխային կրակների մեջ, կանչող է գեղեցկությունը նրա, ես նաև օձ եմ,
որ կարում է մահվան վերարկուն կոճակի անցքերով
դանդաղորեն սողալիս, ագռավը կտցում է վերջին աչքը, թափված փորոտիք,
անգամ ոհմակներ չկան, ամենը մոխիր է, մոխիր բառերի, բայց

քեզ հետ մամուռից ծանրացած կոպերով ես կարող եմ քնել օվկիանոսի
բարձին

հրեշտակները հեռանում են թրջված ստվարաթղթե թևերով,
բաժակի պես պատին փշրված լռությունը, ձայների բարձի տակից`
իմ երկմտող այո-ն, որ ասում եմ ժամին այս ինքնասպան երկրաշարժի,
լիթիումի կարմիր հաբեր, ականջախեցու միջից դուրս է հոսում
անքնությունը, պարանոցի կամարին բացված խռիկներով մահվան
կապույտ շիթեր են անցնում, հսկա, ինչպես ցուլ, թող սատանան
ինձ կուլ տա, ճաքած կճեպ, ճիչը ծանր ծննդի, ծնվում եմ նոր
ձևի մեջ ու միայն հիմա

քեզ հետ ես զգում եմ փաթիլի թեթևությունը մատներիս բարձիկներին

տուր ինձ անանձնական պահը մոռացության, իբրև երկու կաթիլ՝
մենք անսահման պարզ ենք ու անըմբռնելի, հիմա դու քնած ես արյանս ամեն
մի բջջի վրա կամ նայում ես արևին, որ ծագում է բերանիս ճեղքից,
ինչպես բարակ հորիզոն շրջապատել եմ քեզ բոլոր կողմերից,
քեզ հետ եմ, երբ մենակ ես, երբ միակ ուրվագիծն ես գիշերային
դատարկ փողոցի, երբ մտածում ես մահվան կամ գուցե բոլորովին
այլ բաների մասին, ես սիրում եմ քեզ, ու դա իմ կոչումն է, իմ տունը,
իմ դեպրեսիան

Լուսանկարը՝ Անի Գևորգյանի

Հռիփսիմե Հովհաննիսյան

Երբ աշխարհով մեկ թափառելուց հետո ոչ մի տեղ հայրենիք չես գտնում, սկսում ես մտածել, որ կա-չկա էդ հայրենիք ու տուն կոչվածը տեղի հետ կապ չունի: Մի ուրիշ տեսակի բան է: Երևի ամեն մարդ ինքը գիտի, թե ինչ է: Իմն էլ իմ լեզուն է: Խոսել շատ չեմ սիրում, բայց գրելը լրիվ իմն է ու միակ վիճակը, որի ժամանակ ինձ տանն եմ զգում: Ու հենց միայն հայերեն գրելիս: Գրում եմ ինչ ասես, որտեղ ասես: Նամակներ, պատմվածքներ, բլոգներ, ֆորումներ կամ ուղղակի էսէմէսներ: Վիրտուալ ծակուծուկերում էլ ահագին գրած-մրած բաներ ունեմ տարբեր մականուններով: Մեկ՝ Իպարիկա, մեկ՝ Այվի, մեկ էլ ուրիշ մի բան: Ըստ վիրտուալ տարածքի կամ տրամադրության: Գրելն ինձ համար չափազանց լավ վիճակ է՝ այն երբևիցե աշխատանք կոչելու համար: Դրանով երբեք փող չեմ վաստակել, ոչ էլ պատրաստվում եմ: Ունեմ իմ մասնագիտությունը, որով էլ աշխատում եմ Գերմանիայում, ու դա ստեղծագործելու հետ քիչ կապ ունի: Թեև ամենահաճելին հենց գրելու պրոցեսն է, բայց ինձ նաև դուր է գալիս, երբ մարդիկ կարդում են գրածներս, իրենց կարծիքը հայտնում: Ամեն տեսակի մեկնաբանություն ու կարծիք էլ լսել եմ տարիների ընթացքում: Բայց դեռ շարունակում եմ հետաքրքրությամբ սպասել, թե ինչ նոր բան կլսեմ: Հավես զգացում է, երբ տեսնում ես, որ կարողացել ես քո տրամադրությունը հաղորդել ընթերցողին, բայց, դե, ոչ միշտ է էդպես լինում: Ու դրան էլ հանգիստ եմ վերաբերվում: Հայ ժամանակակից գրողների աշխարհի հետ մեծ առնչություն չունեմ: Ես ինձ համար գլուխս կախ բաներ եմ մոգոնում իմ Գերմանիաներում. գրական աշխարհի անցուդարձին էդքան էլ ծանոթ չեմ: Բայց «Ինքնագիրը» վաղուց գիտեի: Երբեմն կողքից հետևում էի. ինչ-որ բաներ դուր էին գալիս, ինչ-որ բաներ՝ էնքան էլ չէ: Հիմա էլ ինքս եմ հայտնվել էստեղ: Նոր տարածք է ինձ համար, ու կարծում եմ նաև՝ նոր լսարան: Պիտի որ հետաքրքիր լինի: Ուրախ եմ, որ էստեղ եմ. տեսնենք՝ ինչեր են ինձ սպասում: Ինչպես կասեին գերմանացիները՝ Ich bin gespannt.

Էբերսբերգի կույսը

Էբերսբերգ: Հենց քթիս տակ է, բայց երբևէ չեմ եղել: Ինչ պիտի լինի էդ կողմերում: Երևի բավարական թունդ ակցենտ: Գարեջրային տոներ: Ցից բեղերով, կայտառ բիձեք: Էլ ինչ: Դե եսիմ: Փոքր համայնք է՝ հաստատ ոչնչով աչքի չընկնող:

Յուրգենին չհաշված:

– Շարժվում ես դանդալոշի նման: Հեչ կանացի չի քայլվածքդ:

– Գլուխս մի տար:

– Բայց սիրուն ես: Ու քաղցր:

– Հա բա ինչ, մի հուրի-փերի:

– Հը՞ն, բան չհասկացա, գերմաներենդ ահավոր է:

– Դա հայերեն էր:
– Իսկ էն լուրջ ասեցի՞ր: Դե եղբոր վերաբերյալ:
Նայում եմ վրան: Տեսքից՝ մութ կասկածներ չառաջացնող, կարգին տղամարդ: Մի քիչ էլ որ պրիչիսոնն ու մեյքափը տեղը գցես, բակենբարդն էլ թեթևացնես, կարելի է նույնիսկ օծանելիքի գովազդի համար առաջադրել: Պատկերացնում եմ՝ ինչ հետաքրքիր է նայվում լսարանում, ու ո՛նց են ջահել ուսանողուհիները կուլ գնում գունավոր ֆանտազիաներին: Դասավանդածն էլ՝ հոգեբանություն. կատարյալ էրոտիկա կիսաղատարկ գլուխների համար: Ու թե ինչու մենք էս տեսքի դասախոսներ չունեինք ԵՊՀ-ի հոգեբանության ֆակուլտետում. արդար չի էս աշխարհը:
Բայց ես հո գիտեմ՝ կարգին տեսքի հետևում կատարյալ խփնվածի մեկն է: Կատարյալ ինտելեկտուալ ու կատարյալ խփնված: Ո՛նց որ մերոնք կասեին՝ շատ սովորելն գոգրեն խարաբ է էղել:
Ու ինչքան ափսոս է, որ մանկությունս զուրկ է եղել էս կարգի դեմքից: Իհարկե կուզեի էսպիսի եղբայր: Ընդհանրապես, վատ չէր լինի մի երկու տարով մեծ եղբայր ունենալ: Հենց Յուրգենի նման:
Հոնքերը կիտում է:
– Եղբա՞յր: Ախր դա լրիվ հակասեքսուալ է:
Ակունք իմաստության:
Ու դեռ շարունակում է.
– Ես քեզ ֆիզիկապես դուր չե՞մ գալիս:
Ինչքան լեգիտիմ կհնչեր էդ հարցը, եթե չիմանայի նրա գլխում ապրող բլոճների մասին:
Ցույց է տալիս իր հին նկարները: Երևում է, որ շատ ավելի ամրակազմ է եղել:
– Մկաններս կորցնում եմ. երևի հորմոնալ է:
Հա, հեշտ չի, երբ ինքդ քեզ համար տաբուներ ես հնարում, անունը դնում «բարձրագույն բարոյականություն» ու դեռ աստծուն էլ խառնում էդ գործին:
Իտալացիները հո ճիշտ են ասում. «Նա, ով կույս է մինչ ամուսնության առաջին գիշերը, կույս կմնա իր ողջ կյանքում»: Եվ դա միայն տղամարդկանց է վերաբերում:
Թեև շատ հուզիչ է, որ տղամարդն էլ կարող է մինչև քանքանի տարեկանը «էն միակին» սպասել: Ու տասնըքանի տարի մենակ նրա հետ լինել՝ ֆիզիկական բացարձակ հավատարմության մեջ:
Բայց դե հիմա էդ կապն ավարտվել է: Էն էլ չորս տարի առաջ: Բա հետո՞:
Հետո՝ նորից կույս: Որովհետև այլընտրանքը անբարոյական է: Մինչև հոգիները չհասնեն գերագույն վերերկրային մերձեցման:
Հա, լավ, էդ էլ վատ չի ու անգամ նույնչափ հուզիչ է: Բայց հարցն էն է, որ ոչ մի կին չի կարողանում Յուրգենի հոգու հետ մերձենալ, որովհետև նրա հորմոնալ դիսբալանսը հասել է արդեն բոլոր չակրաներին: Ու հետը մի քիչ երկար շփվելուց հետո լավագույնը, ինչ կարող ես անել, օձիքդ կծելն է, որ էդ չոռը հանկարծ քեզ էլ չկպչի:
– Իմ զուգընկերը պիտի աբսոլյուտ լինի,– ասում է:
Ես կարծում էի, դա միայն օղին է լինում:
Ասում է ու հերթով բռնաբարում իրեն հանդիպող կանանց: Հոգեպես, բնականաբար: Եվ միայն Աստծո օրհնանքով, ով, ի դեպ, իր լյարդում է ապրում: Չգիտեմ՝ ինչի հենց էնտեղ: Երևի ալկոհոլիկ է անաստվածը, էհ, աստվածը:
Բռնաբարելուց էլ էն կարգի է բռնաբարում, որ էդ խեղճ կանայք փախչում

են՝ առանց հետ նայելու: Տուն-տեղ ծախելով, անձնագիր-ազգանուն փոխելով: Որ Յուրգենն իրենց տեղը, անգամ աստծո օգնությամբ, չգտնի:
– Եթե դու միայն լսեիր իմ ներքին եռխոսությունը:
– Երկխոսությո՞ւնը:
– Չէ, եռխոսությունը: Մենք երեքով ենք:
Ա՛հ, յարդի բնակչին էի մոռացել:
Դուռը բացում եմ:
– Դու հիմա տուն ես բերում համարյա անծանոթ տղամարդու: Էն էլ՝ կեսգիշերին:
– Դու անվնաս ես:
– Ի՞նչ գիտես,– ձայնին էլ մի էնպիսի խորհրդավոր երանգ է տալիս,– ես կարող եմ պատմել ինչ խելքիս փչի:
– Վստահում եմ քեզ:
– Ինչպես եղբո՞րը:
Գլխով եմ անում, ու ներս ենք մտնում:
– Ես մի հատ նայեմ ամեն ինչ, լա՞վ:
Սկսում է շրջել սենյակներով:
– Ոչ մի դեկորացիա: Տարօրինակ է: Հեչ հատուկ չի կնոջը:
– Հասկացանք արդեն, քայլվածքս, տունս. կնոջ նման չեմ:
– Բայց…
– Քաղցր եմ, էդ էլ ես ասել: Ի դեպ, քաղցր սիրո՞ւմ ես, սպասիր, բերեմ:
Սկսում է կուլ տալ enerBIO բլիթները:
– Զգացվում է, որ բիո է: Բայց շատ կերա, հիմա փորս էլի կմեծանա:
Ի՞նչ փոր: Մի քիչ էլ, ու ոսկորները շապիկը կծակեն, դուրս կգան:
– Տար, չաղանում եմ:
– Թե ուզում ես, կեր, ինչի՞ տանեմ:
– Ես շատ բան եմ ուզում, որ չեմ անում:
Ու նայում է վրաս ամորձատված կատվի նման:
Հետո անցնում ենք տիեզերական զրույցների: Չմոռանալով բոլոր կարկառուն փիլիսոփաներին ու հոգեբաններին:
– Այնպես չէ՞, կոլեգա:
– Իհա՛րկե, կոլեգա:
Քիչ-քիչ սիրտս կասկած է ընկնում: Իսկ գուցե ես մենա՞կ եմ նստած բազմոցին ու խոսում եմ ինքս ինձ հետ՝ իմ սիրած հոգեբան պապիկներին մեջբերելով: Տարբերակ է:
Փնտրում եմ տարբերակը հաստատող նշաններ: Քաղցրավենիքի հանդեպ վախը: Բարոյական մարազմատիկ տաբուներ:
Էս հո ես եմ: Ինքս ինձ հետ:
Արժի դիմացի շենքում ապրող թուրք հարևանուհուս զանգել, ով սիրում է, հեռադիտակն առած, հետևել անվարագույր պատուհաններիս հետևում ընթացող կյանքին:
– Նազա՛ն, բարև, աչո՛ւն, բինոկլը ձեռքիդ տա՞կ է:
– Դեեե՛…
– Ինչ կլինի, մի հատ նայիր, հյուրասենյակում մենա՞կ եմ նստած, թե՞ մի կյաժ տղամարդ կա կողքիս:
– Ո՞նց թե տղամարդ:
– Հե՛չ, եղբայրս է, ըմմ… կամ կոլեգաս: Յունգից ենք խոսում: Կամ էլ ինքս ինձ հետ եմ խոսում:

– Խմա՞ծ ես:
Էհ, նրանից էսօր բան չես իմանա:
Իսկ գոյություն չունեցողը շարունակում է խոսել: Էնքան, որ արդեն գլուխս գնում է:
Մեկ էլ՝ լռություն: Երևի նկատում է, որ աչքերս փակվում են:
– Հիմա ի՞նչ ենք անում,– հարցնում է լրջությամբ՝ ուսերին հասնող մազերը դնելով ականջի հետևում:
– Դու՝ տուն, ես՝ քնելու:
– Կհանդիպե՞նք էլի:
– Բաճկոնդ չմոռանաս:
Ճանապարհում եմ մինչև մուտքի դուռը:
– Մեքենայիդ տեղը կգտնե՞ս:
– Հա,– ասում է,– բայց դու էլ պիտի հետս գաս. նվերդ դեռ մեքենայիս մեջ է:
Ու սկսում է քայլել լրիվ ուրիշ ուղղությամբ:
– Բա ասում էիր՝ կգտնես,– ծիծաղում եմ:
Տանում եմ մեքենայի մոտ: Հանում է կապույտ թղթով փաթաթած նվերը ու մեկնում ինձ:
– Կարո՞ղ եմ քեզ գրկել,– հարցնում է:
– Ըհը՛, նույնիսկ կարող ես թուշիկս պաչիկ անել. ծնունդս էր ի վերջո:
Վրաս է նայում սառած հայացքով:
– Ես շուրթերով ոչ մի կնոջ չեմ կպչում:
Քիչ էր մնում մոռացած լինեի գլխում ապրող բլոճների մասին:
– Ես ընդամենը թուշս նկատի ունեի:
– Չեմ կարող:
Ու շարունակում է.
– Բայց թույլ կտա՞ս դեմքով հպվել վզիդ:
Էս մեկը երևի լսողական հալյուցինացիա էր:
Քնել է պետք: Վաղը լույսը կբացվի, բոլոր ցնորքները կվերանան: Յուրգենն էլ հետը:
Առավոտվա հինգն անց տասնվեց՝ հաղորդագրություն. «Բարև՛, քույրի՛կ, ինցեստային երազներ եմ տեսել, վերլուծե՞նք»:
«Գլուխս մի տար»:
Աշխատանքի ճանապարհին անցնում եմ Zöttl-ի մոտով: Երկու օր առաջ Արփիին էի մետրոյում տեսել, քննության էր գնում: Տեսնես՝ ո՞նց հանձնեց:
Մտնում եմ Zöttl: Թարմ բուլկիների հոտից կամաց գլխապտույտ է առաջանում: Ի՜նչ բուլկի առավոտ շուտ: Ձեռք եմ տալիս փորիս: Ո՛չ մի դեպքում:
Թիթիզիկը տեղում է:
– Քննությունդ ի՞նչ եղավ:
Հոնքերի կեսը չկա. որպես պատիժ ինքն իրեն բմբլահա՞ն է արել:
– Դեռ չգիտեմ, լսի: Ո՜ւֆ, տականքներ, շուտ ասեիք, իմանայինք, յա: Ախչի ջան, հոնքերիս համա՞ր ես տենց նայում:
– Հա, երևի թե:
– Լսի՛, երկու շաբաթից Հայաստան եմ գնում, ուզում եմ տեղը տատու անեմ: Բայց էն զըռռ սև տատուներից չէ, է: Էն լավերից, բնական:
Գլխով եմ անում, իբր թե շատ եմ հասկանում էդ զիզի բաներից: Ջահելիկը շարունակում է.
– Հետ գամ, էլ ստեղ չեմ աշխատելու: Հաբե քայնեն բոկ մեր:
– Հետս ինչի՞ ես գերմաներեն խոսում:

– Քայնե ահնունգ:
Ծիծաղում է:
– Լսի, լավ հիշեցի, քեզ բան պիտի հարցնեմ: Դու էդ գործերի մեջ ես, կիմանաս: Ուրեմն մորքուրիս հաշվով եմ ասում: Ինքը հոգեբույժից թուղթ ունի, ներվային վիճակների պահով, էլի: Ցանիմ քաղաքական հետապնդումներ, բաներ կան, դրա պատճառով իրա հոգեկան վիճակը լավ չի: Դե, մի խոսքով, դու արդեն հասկացար: Հիմա էդ թղթով որ գա ստեղ, ազյուլ կտա՞ն, թե հետ կուղարկեն:
– Կեղծ թղթերով գալն էդքան էլ լավ միտք չի:
– Հա, բայց էլ ի՞նչ ձև կա: Օրինակ՝ դու ո՞նց ես մնացել: Հիմա ի՞նչ վիզայով ես:
– Քաղաքացիություն ունեմ:
– Լուուուո՞ւրջ: Էդ ո՞նց:
– Ուշացա գործից, իրիկունը կխոսենք…
– Դե թռի, լավ, կերևաս:
Արդեն դուրս եմ գալիս, մեկ էլ հետևիցս լսում եմ.
– Ա՛, չէ, իրիկունը ստեղ չեմ: Էսօր շուտ եմ դուրս գալու, Էբերսբերգ եմ գնում:
Շրջվում եմ:
– Ի՞նչ գործ ունես Էբերսբերգում:
– Ընկերուհուս մոտ փարթիի եմ հրավիրված: Լսի, հոնքերս շա՞տ անկապոտ են:
– Չէ՛, անկապոտ չեն, քաչալոտ են: Բայց ոչինչ, տեղը սրտիկներ նկարի, կսազի փարթիին:
Օրվա ընթացքում իրար հետևից երկար նամակներ են գալիս: Յուրգենի գրավոր խոսքը մութ ջրհոր է՝ մեջը վխտացող կանաչ գորտերով: Բանավորն էլ: Նստած կարդում եմ ամբողջ օրը. աշխատել չի ստացվում: Խորը ինտելեկտուալ մտքերը տեղ-տեղ ցնորք են հիշեցնում: Ու լիքը հարցեր ունի: Ուզում է իմանալ՝ վերջին երեսունհինգ տարում ինձ քանի հոգի է կպել: Էնպես չի, որ կպնել էլ կա, կպնել էլ: Չէ, իր համար ամեն ինչն էլ հաշիվ է՝ ձեռք բռնելուց սկսած: Բարոյականության չափիչը միացրել է:
Քանի՞ հոգի է ձեռքս բռնել: Չեմ հիշում: Եվ սա կա-չկա շատ անբարո պատասխան է:
Պառկած ենք խոտերին. երկնքին եմ նայում, բայց ոնց որ տեղը առաստաղ լինի:
– Դու որտեղի՞ց հայտնվեցիր:
– Ուզում ես մամայիս հետ ծանոթանա՞լ,– հաստատ ժպտում է,– հարցդ ենթագիտակցաբար էդ ցանկությունն է արտահայտում:
Անտանելի են հոգեբանները:
– Քո նմանին ոնց էլ լսարան են թողնում:
– Արի դասախոսություններիս, կտեսնես:
Ուզում եմ ձեռք տալ մատների ծայրին. հետաքրքիր է՝ սառն է, թե տաք: Նայում եմ աչքերի մեջ: Հանգած խարույկներ: Փչես վրան, մոխիրը երկինք կկապի:
– Դու գոյություն ունե՞ս:
– Քեզնից է կախված:
Հետո պատմում է Պետրայից: Երկար է պատմում: Լրիվ տեսնում եմ պատմածը: Յուրգենը՝ ափերից դուրս եկած, իրեն կորցրած: Բայց հանգիստ է պատմում, նույնիսկ նրա մասին, թե ոնց է կնոջը երկու օր սենյակում փակել:
– Վերջում ասում էր՝ խնդրում եմ, սպանիր ինձ: Իսկ դու կարծում ես, թե անվնաս եմ:

– Էդքան էլ չեմ սխալվում. ի վերջո չես սպանել: Թեև պոտենցիալն առկա է, դրանում ոչ մի կասկած: Ֆիլմերի սիմպո մանյակներից ես:
– Կինո՞ եմ քեզ համար: Եղբայրն ավելի լավ էր…
Ուշադիր զննում է դեմքս:
– Քիթդ տարօրինակ է, չի նյարդայնացնո՞ւմ:
– Չէ, իսկ քե՞զ:
– Եթե նյարդայնացներ, դու հաստատ կիմանայիր դրա մասին:
Առաստաղից կախված է Պետրան՝ կտրած քթով: Տեղը՝ գազար: «Խնդրո՜ւմ եմ, սպանի՛ր ինձ, քանի դեռ աչքերիս տեղն էլ կոճակ չես դրել»:
– Լյարդս նորից ցավում է: Վերջերս խնդիրներ ունեմ կրոնի հետ:
Մի բան էն չի էս մարդու հետ: Մի՞: Մեկն էլ, երկուսն էլ: Երեքույուչորսն էլ վրայից:
– Հիմա ի՞նչ ենք անում:
Ինչ ենք անո՛ւմ: Հրաժեշտ ենք տալիս. միակ խելքը գլխին բանը, ինչ կարող ենք անել: Լա՛վ եղիր, Յուրգե՛ն: Ու հեռու մնա: Ինձ իմ սեփական բլոճները լրիվ հերիք են:
– Դու էլ ես ուզում փախչել: Մյուս կանանց նման: Թող գոնե եղբայրդ լինեմ:
Հետո սկսվում են չեղած հարաբերությունները պարզելու տափակ օրերը: Ու նաև գիշերները:
Քնել է պետք: Էս ցնորքը կկորչի շուտով, ու կքնեմ վերջապես:
– Ո՞նց կարող ես ինձ հանել կյանքիցդ՝ էն ամենից հետո, ինչ եղավ: Երբ թողեցիր գրկեմ քեզ, և նույնիսկ ուզում էիր, որ թուշդ պաչեմ:
Խայտառակություն: «Դարչոն Կեկելին պաչիլ ի ու թողիլ»: Չնայած՝ էս դեպքում սկի չի էլ պաչիլ:
Հեռախոսս անջատում եմ:
Կանգնած է օֆիսիս դռան առաջ:
– Դու ոտքից գլուխ թերություն ես,– շպրտում է երեսիս,– բացարձակ լավը չես՝ ոչ որպես մարդ, ոչ որպես կին: Բայց կարող եմ օգնել քեզ ուղղվել:
Բարև, իմ ներքին ձայն. փաստորեն դու երեսունութամյա շիկահեր տղամարդ ես՝ բավարական ակցենտով: Ով կմտածեր:
Դուրս եմ ուղեկցում, ինչն ավելի շատ նման է տոթ սենյակից ճանճ քշելուն:
– Բիրգիտ,– հարցնում եմ կոլեգայիս,– առավոտյան երբ եկար, տեսա՞ր ինձ ներքևում:
– Հա, մի պահ նկատեցի աչքի պոչով:
– Ախմախ հարց եմ տալիս, գիտեմ, բայց կողքիս ինչ-որ մեկը կա՞ր, թե՞ մենակ էի:
Զարմացած վրաս է նայում: Հեռախոսը զնգում է, պիտի պատասխանի: Մատով ինձ նշան է անում՝ մի րոպե:
Կոպերիս վրա աշխարհի բեռն են դրել: Տուն հասնել, ընկնել անկողնուն ու բերանից ջուր գնալով քնել: Դուրս եմ գալիս աշխատասենյակից: Բիրգիտը դեռ խոսում է:
Մետրոներ, կանգառներ: Կանգառներ, մետրոներ: Բայց արդեն վերջը երևում է:
Մնաց մի չորս հարյուր քայլ՝ մինչև անկողին: Անցնում եմ Zöttl-ի մոտով: Արփին ապակու հետևից տեսնում է ինձ ու ոգևորված ձեռքով անում, որ ներս գամ: Հավես չունեմ: Բայց ինչպես կասեր քեռիս՝ գլուխդ կկտրեմ, խաթրդ չեմ կոտրի: Ներս եմ գնում: Հոնքերից հետք անգամ չի մնացել. երևի վաղն արդեն Հայաստան գնալու օրն է:

– Լսի, ո՞ւր էիր էս քանի օրը, սպասի քեզ նկարներս ցույց տամ: Քո ասածով էլ արեցի: Էն որ ասեցիր՝ սրտիկներ նկարի: Ընտիր ստացվեց: Հլը նայի:
Ու ցույց է տալիս ինչ-որ խըժը-բըժը սելֆիներ՝ հետևի ֆոնին լիքը մարդ:
– Էս էն Էբերսբերգի փարթի՞ն էր:
– Հա բա, լավ չի՞:
Մանուշակագույն սրտիկներ՝ Արփիի քունքերին: Լավագույն պատկերը չի քնելուց առաջ: Իրար հետևից թերթում է նկարները, վերջ չկա:
Մեկ էլ կոպերիս ծանր բեռը թափով ներքև է ընկնում, ու աչքերս լայն բացվում են:
– Հլը մի նկար հետ գնա: Կմեծացնե՞ս ֆոտոն:
Ծանոթ սիլուետ՝ աջ անկյունում:
– Սա ո՞վ է:
Արփին զննում է հեռախոսի էկրանը:
– Լավ չեմ հիշում, ինչ-որ անկապ դեմք էր, կարծեմ հարևաններից էր, թե ինչ:
– Անունը չե՞ս հիշում:
Գլուխը թափ է տալիս:
– Յուրգեն չէ՞ր:
– Յուրգե՞ն, չէ, լսի... Այսինքն, չեմ հիշում, եսի՞մ: Բայց չէ, ոնց որ... Ճանաչո՞ւմ ես:
– Չգիտեմ, դեմքը լավ չի երևում:
Հեռախոսը վերցնում եմ ու սկսում անցնել բոլոր նկարներով. էլ ոչ մի տեղ նույն սիլուետը չկա:
Արփին լուռ հետևում է: Հեռախոսը դնում եմ ձեռքի մեջ: Հոգնած եմ: Կանգնած եմ դիմացը. ոչ խոսում եմ, ոչ գնում:
Թիթիզիկը շփոթված է:
– Հիմա ի՞նչ ենք անում:
Պատահական մի հարց:
– Ջիլինա ենք խաղում:
Ասում եմ ու սկսում չորս հարյուր քայլը:

Շաքար

Ու հետո՝ ամբողջ ավտոբուսով մեկ.
– Որ ուրիշ տեղ էիր ուզում տնկել, հին հողից հանելուց հետո պիտի արմատները մի լավ լվանայիր, նոր դնեիր թարմ հողի մեջ: Հա՛, էդպես էլ արե՞լ ես: Բա ինչի՞ թառամեց: Արմատները լվանալուց հետո սրբիչով չորացրե՞լ ես: Հո սինթետիկ չէ՞ր: Սրբիչը, ասում եմ, սրբիչը ի՞նչ էր: Այ էդ էր, տեսա՞ր, ասեցի, չէ՞, մի տեղ սխալվել ես:
Իսկ մինչ ավտոբուս նստելը՝ դեռ երեսունյոթ րոպե առաջ, ֆրաու Այը իրար էր խառնում կանաչ թեյի թուրմն ու Naturata շաքարավազը, որ հետո կռանար վարդի թփերի վրա:
– Ծարավ եք, սպասեք: Հիմա, հիմա: Ըհն, դե խմեք, համով, քաղցր: Խմեք, դուք մենակ ջրով կշտացողը չեք:
– Ողջո՛ւյն, ֆրաու Այ:
Այը շրջվում է:
– Ողջո՛ւյն, ֆրաու ըըըըմ-հըըըըմ-յան, նորից աշխատանքի՞: Մոհամեդների ու

Աբրահամների մոտ: Ո՛նց են շատացել, վերջ չկա:
Ու դեռ խոսքը չավարտած՝ մատները տանում է շուրթերին:
– Ի սեր Աստծո, ասածս վատ չհասկանաք, ես մարդկանց դեմ ոչինչ չունեմ:
Աչքը գցում է ձեռքի ժամացույցին, որ նոր բոյֆրենդից էր ստացել՝ վաթսունութամյակի կապակցությամբ:
– Էլի ընկա էս բույսերով, ուշացա: Հիմա ավտոբուսս կգնա, ես վազեմ: Ձեզ՝ բարի օր:

Ջահել փախստականների կացարան Բ. կամ Աբրահամներն ու Մոհամեդները

Բ.-ում հատակը փայլում է. էսօր հաստատ Աբրահամն էր հերթապահության, արդեն պետք էլ չի ցուցակին նայել՝ համոզվելու համար:
Մոհամեդը ոտքը ոտքին է գցել, փռվել աթոռին: Գրիչն էլ դրել է մատների արանքը, տանում է բերանը, հանում՝ գոյություն չունեցող ծխի քուլաները դուրս փչելով: Աշխարհին իրենն է, կեսն էլ վարձով է տվել:
– Տղուն նիհար կսազի, աղջկան՝ լխտիկ: Ես երեք կին եմ առնելու, երեքն էլ մեծ քամակով ու մեծ դոշերով: Էնքան սիրեմ, էնքան սիրեմ, վրա-վրա տասնհինգ երեխա բերեն ինձ համար:
– Մոհամեդ, էս քո Սոմալին չի,– ծիծաղում է Աբրահամը,– էստեղ մեկով պիտի յոլա գնաս:
– Հա, լավ, թող մեկը լինի, բայց ամեն ինչով՝ մեծ ու շատ: Էս գերմանացի աղջկերքի նման չէ, որ վրաները նայում, վախենում ես. ոչ թափ ունեն, ոչ գույն: Հիվանդոտ ոնց որ լինեն, մաշկի տակից էլ երակները երևում են, տեսել եմ, վալլահ: Դրանց բերած էրեխեն ի՞նչ պիտի լինի:
Էդ խոսքին գրիչը բերանից ընկնում է:
– Զանջատե՛ս,– գոռում է Աբրահամին:
Մոնիտորին հայտնվում է Նիքի Մինաժի գոտկատեղից վերևն ու գոտկատեղից ներքևը:
– Կյանքս,– շուրթերը լպստում է Մոհամեդը:
Նիքին էլ հետ չի մնում, սկսում է էկրանի հետևից հետը ֆլիրտ անել: Մեկ աչքունքով, մեկ ավելի ծանրակշիռ զենքերով: Սա հենց շրջվում է՝ ցուցադրելով պահեստային զինամթերքը, Մոհամեդը ձեռքը տանում է իր գանգուր գլխին, մազերը քաշում, երևի որ բերանը փակվի:
– Հլը սրա շաքարամանին նայեք,– ասում է ու աչքերով կմճթում Նիքիի գլոբուս-տուտուզը:
Հետն էլ սկսում հետը պարել՝ ամեն շարժումի հետ ավելի մոտենալով Նիքիի շաքարամանին: Միջի շաքարն էլ հենց կա-չկա էսքան ժամանակ Մոհամեդին էր սպասում:

Բ.-ի քանդողն ու շինողը

– Մենք դարի ենք խոսում, փաշթու լեզվի հետ գործ չունենք,– ասում է Նազիրը,– էդ փաշթունցիները լրիվ Թալիբան են: Հրենն, Աբդուլհալիմը, մի հատ որ սրտով չես գնում, միանգամից՝ «կտրաքացնեմ բոլորիդ»: Թալիբան են դրանք:
– Բայց դե բոլորդ էլ Աֆղանստանից եք, մի ազգ եք, ինչ տարբերություն:
Նազիրը վեր է կենում տեղից՝ մի հատ «ճ» անելով: Վզի վրա կարմիր դրո-

շակի նման պլպլում են նախանցյալ գիշերվա արկածների հետքերը: Էդ մի գիշերվա պատճառով քիչ էր մնում փողոցում հայտնվեր, բայց դե աստվածները բարեգութ գտնվեցին, դուրս չշպրտվեց. ի վերջո խիղճն էլ լավ բան է, տեստոստերոնից ոչ պակաս: Հաջողացրել էր գիշերվա կեսին, բոլորից թաքուն չորս գերմանուհի բերել սենյակ՝ պատշգամբներով, կախվելով, մագլցելով և այլ կրկեսային համարներով: Բա ռիսկը: Մալադեց տղա, քո արածը քեզ հալալ է: Հիմա էլ կանգնել է, ու թե՝ ինձ էդ փաշթուն թալիբանցիքի հետ չհամեմատեք, ես ուրիշ սորտի աֆղան եմ: Ինձնից ինչ գմփացնող, ես մենակ շինող եմ: Մի հատ էլ որ մայկա հագներ, վրան գրված՝ No attacker, just a fucker, լրիվ տեղին կլիներ:

Իսկ թե ով էր հենց նույն արկածային գիշերը թռցրել Աբրահամի ուտելիքը՝ պահածոյացված լոբին, կես տուփ շաքարն ու Landjuker հավի բդիկները, մեծ գաղտնիք էր:

Աբդուլիալիմը փքված էր հնդկահավի նման:

– Փաշթունը գողություն չի անում. մենք թասիբ ունենք:

Էդ նախադասությանը «աբուռ-նամուս»-ն էլ կսազեր:

– Փաստն էն է, որ Աբրահամի ուտելիքն անհետացել է:

– Հա, բայց ես չեմ եղել: Ասեցի՝ փաշթունը գող չի:

Ու Աբդուլիալիմի փքվածությունն ավելանում է՝ մոտենալով «գմփալու» կամ «գմփացնելու» վտանգավոր սահմանին:

– Ոչինչ, հարց չկա, անցած լինի,– ձեռքը թափ է տալիս Աբրահամն ու գնում մաթեմի քննությանը պատրաստվելու, ինքն Ասադի ճամփեն է բռնել:

Գիտե՞ս

Ասադը մեկուկես տարում պետլած տղա է դարձել: Բ.-ում իրեն հասնող չկա: Գերմաներենն էլ էնպես է չրթում, չես էլ մտածի, թե էստեղ չի ծնվել: Իսկ էդքան արագ դպրոցն ավարտելն ու ուսումնարան ընդունվելը լրիվ գլուխգործոց էր:

– Գիտե՞ս, ընդունելությանը յոթ հոգով էինք՝ մի տեղի համար: Խոսեցինք, բան, վերջում մի խնդիր տվեցին: Իբր թե պատկերացրեք՝ եսիմ ո՛նց հայտնվել եք ծովի մեջտեղում՝ փչովի նավակի մեջ, քսան առարկա ենք տալիս, հերթականությամբ ընտրեք՝ ամենակարևորից ամենաանկարևորը, դե էդ իրավիճակի համար: Ինչ ասես չկար գրված՝ բենզին, պարան, երեք հարյուր գրամ շոկոլադ, քսան լիտր ջուր, գրպանի հայելի, երեք օրվա ուտելու պաշար, տաք հագուստ ու էլի լիքը բան: Մենակ ես էի, որ գրպանի հայելին առաջին տեղում էի դրել: Էն վեցը ծիծաղեցին վրաս, որ տեսան: Բայց էդ էր ճիշտ պատասխանը. ամենակարևոր առարկան դա էր: Ասեցին՝ ապրես, լավ լոգիկա ունես: Ասեցի՝ լոգիկայի հետ կապ չունի, էդ փչովի նավը յոթ ժամից ավել չի դիմանում, հետո ջրի մեջ ես լինելու, ու մեծ նավերից քեզ մենակ էդ հայելու միջոցով են նկատելու: Էդ նավակի մեջ ես եղել եմ: Ծովի մեջտեղում: Գրպանիս մեջ էլ որ հայելի չլիներ, հիմա էստեղ նստած չէի լինի:

Հիմա բյուրոյում նստած ու պատմում է էս ամենը. դեռ մի քանի ամիս առաջ ամեն ինչ կարող էր ուրիշ կերպ ավարտվել:

Փետրվարի քսանմեկ՝ շաբաթ, գիշերվա հազար: Ասադի ձախ ձեռքն ու ուսը արյան մեջ կորած են: Ինչքա՜ն ուժ է պետք՝ էս սարի պես տղայի դաստակը սեղմելու համար: Էնքան, մինչև դանակը ցած գցի ու ինքն իրեն չմորթի:

«Բա՜ց թող, Ասա՛դ, բա՜ց թող»:

– Քո թեթև ձեռքով երեք շաբաթ կլինիկայում փակված էի, հոգեբույժների հետ գյալաջի էի տալիս,– ծիծաղում է,– ախր հեչ չես սիրում ինձ:
– Ախմախի մեկը:
– Իմ մարմինը, ես: Քեզ ի՞նչ: Ուզում էի ինձ կտոր-կտոր անել, թափել գետնին, որ էլ չցավար: Ինչի՞ չթողեցիր:
– Ցավն անցնելը կարող ես զգալ, միայն երբ ապրում ես: Որ մեռնեիր, ի՞նչ էիր իմանալու, թե էլ չի ցավում:
– Դու իմ լույսն ես, գիտե՞ս:
– Գնա քնելու:
– Դու գիտես, չէ՞, որ ես տասնութ չեմ,– ասում է,– թղթերով բոլորս էլ ջահել ենք, բայց դու գիտես, չէ՞:
Չարժի էս հարցը տալ, բայց դե.
– Ինչքա՞ն ես:
– Քո կարծիքո՞վ:
– Քսա՞ն: Քսանմե՞կ:
– Շուտով քսաներկու կդառնամ:
Շապիկի թևքը վերև է բարձրացնում ու տրորում վարդագույն երանգները քիչ-քիչ կորցնող ահռելի սպին: Հետո շարունակում.
– Ամսի մեկին տեղափոխվում եմ:
– Հա, գիտեմ: Շատ ուրախ եմ, որ ստացվեց:
– Իսկականից էդքան ուրա՞խ ես: Ինչի՞ բայց: Կգա՞ս էդ օրը: Չև կանե՞ս, թե տխրում ես:
Երեսունի իրիկունը կարելի է բացառության կարգով գրկել իրար. սենտիմենտալներն էդպես են անում հրաժեշտին:
– Խոստացիր, որ լավ կլինես:
– Կհիշե՞ս ինձ,– հարցնում է շշնջալով:
– Չէ, արդեն մոռացել եմ:
– Տանել չեմ կարող քեզ, գիտե՞ս:
– Գիտեմ, Ասադ:
– Լավ կլինեմ, չաղ ու բախտավոր, խոստանում եմ: Դու քաղցր հոտ ունես:

Հեփիէնդ կամ էդքան էլ չէ

Դռան զանգ:
Մուտքին կանգնած է գերմանական հրեշտակ՝ Օկտոբերֆեստի շորիկով ու Հիտլերի բեղերով:
– Հալլո՛: Ինչից վախեցաք, ես չեմ կծում: Գործով եմ: Ասում եմ՝ էն համար 61 ավտոկայանը Ձերն է, բայց մեքենա չունեք, ոչ էլ նույնիսկ վարորդական իրավունք: Ամիսը հենց էնպես երեսուն եվրո եք վճարում:
– Հա, կա էդպիսի բան: Իսկ դու ո՞վ ես:
– Գերմանական հրեշտակ՝ Հիտլերի բեղերով ու Օկտոբերֆեստի[1] շորիկով, ասել է թե՝ դիրնդլով[2]: Ազգանունս՝ Ցուկերիան:
– Ներս գա՞ս, Շաքարաքլոր, մենակ կոշիկներդ հանիր, հատակս չամպոտվի:
– Չէ, շնորհակալություն: Ասում եմ՝ էդ ավտոկայանի ամսական երեսուն եվրոն ես Ձեզ կվճարեմ: Բայց մի պայմանով:
– Հոգիս պիտի քեզ ծախե՞մ:
– Չէ մի չէ: Ես ընդամենը մի բաժակ հայկական ընտիր սև կոֆե կխմեի՝ սերը վրան, մրուրը տակը, ինքն էլ՝ քաղցր-քաղցր: Կլինի՞:

– Չունեմ ախր:
– Ափսոս: Ուրեմն ես գնացի: Դուք գիտեք, ձեր համար 61-ը: Բարևներ՝ ֆրաու Ային: Չո՜ւզ:
Էսօր Հելոուի՜ն էր:

[1] Օկտոբերֆեստը Բավարիայի ամենամեծ տոնն է, սեպտեմբեր-հոկտեմբերին, երեք շաբաթ ա տևում, պիվա են խմում:
[2] Ազգային կանացի տարազ, որ հագնում են նաև Օկտոբերֆեստ տոնին:

Մյուսը

Թիք-թաք, թիք-թաք, Մարիոն Լորենցի բիբերը շարժվում են աջ ու ձախ՝ ժամանակը կորցրած սլաքների նման:
Վախեցնող տեսարան է: Աչքեր՝ անդադար շարժման մեջ:
Երևի նկատում է հիմար հայացքս:
– Նիստագմ է մոտս,– բացատրում է,– շունչդ երկար մի պահիր, ուշագնաց կլինես:
Թոքերս լցնում եմ ինձ բաժին հասած գրասենյակային օդով ու սկսում գուգլել:
Nystagmus *– մի կտոր բժշկական բլա-բլա ու հետո՝ due to the involuntary movement of the eye, it is often called “dancing eyes”.*
Մարիոն Լորենցի պարող աչքերը պտտվում են գլխումս: Գուգլն ասում է, որ նրանք երբևէ դադար չեն առնելու, քանի Մարիոնն ապրում է: Ստամոքսս կծկվում է: Գերմանացիներին լսես՝ զգացմունքները փորի մեջ են: Հիմա հասկանում եմ՝ ինչ նկատի ունեն:
– Դու հավատո՞ւմ ես ալտերնատիվ իրականությանը,– հարցնում է Գեորգը:
– Դրա գոյությունն իմ հավատալո՞ւց է կախված:
Գեորգի թշերը ձգվում են վեր, աչքերը՝ ստորակետ դառնում: Ծիծաղում է տղան: Ինչի՞ վրա: Չհարցնեք:
– Դու դեռ պատասխանիր, հետո կիմանաս:
– Չէ, չեմ հավատում:
– Շատ իզուր,– լրջանալով շարունակում է կոլեգաս:
– Էդ ինչո՞ւ:
– Որովհետև դու հիմա հենց էնտեղ ես:
Ու նորից պայթում է ծիծաղից: Քեֆը տեղն է. գիշերն էլի իր սիրած շշի հետ է անցկացրել՝ բարակ իրանով ու լայն կոնքերով:
Ես մտածում եմ նրա ասածի մասին: Ինչ-որ տրամաբանություն կա դրա մեջ:
Դեռ երեկ ամեն ինչ ուրիշ էր: Գերմանիա չէր: Թեև երեկը յոթ տարի առաջ էր: Թե՛ արդեն ութ: Հա, Գեորգ, ես հիմա իմ ալտերնատիվ իրականության մեջ եմ: Ու դու էլ օրվա մեջ վեց ժամ կողքիս ես: Լավ ես դասավորվել, ծերացող տղա:
– Մամի, պաղպաղակը հա՞յ է,– հարցնում է պստոս:
Նայում եմ վրան, չգիտեմ ինչ պատասխանել: Ջվարճանում եմ ասածից:
Իսկ նա շարունակում է.
– Ես հա՛յ եմ:

– Ըմմմ…
– Իսկ պապա՞ն:
– Չէ՛,– ասում եմ:
Էս մեկի պատասխանը հաստատ գիտեմ:
Մտածում եմ՝ Գեորգը որտեղի՞ց պիտի իմանար իմ լսած հարցերն ու տված պատասխանները:
Իսկ գիտե՞ք արդյոք, որ ես ութսունականների երեխա եմ՝ Մարիո խաղացած, Մարիոյով մեծացած: Ինձ որ ասում են՝ Մարիոն Լորենց, ես իտալացի տղամարդ եմ պատկերացնում՝ տիպիկ իտալական կոլորիտով:
Բայց դու մի ասա՝ Մարիոնը կնոջ անուն է: Համենայն դեպս, էստեղ՝ Գերմանիա կոչվող իմ այլընտրանքային կյանքում: Գրողը տանի էդ սխալ անունը հորինողին: Սարսափ ժանրի գրողը, էն էլ սկսնակ:
Իմ շեֆ Լորենցը քայլում է մի քիչ կաղալով, հագին լայն սև շորեր են, վրայից էլ կապյուշոնով բաճկոն: Դեմքին նայես՝ տարիքն առած Մոնա Լիզա: Աչքերն էլ՝ աջ-ձախ, աջ-ձախ: Հիպնոսի զրթիկ: Գուգլն ասում է՝ հավերժական:
– Կյանքդ լա՞վ է:
– Հա,– արագ պատասխանում եմ:
– Ինձ նապաստակը ոչինչ չի՞ բերել:
Զգում եմ, որ շունչս նորից կուլ գնաց:
Գալիս, սկսում է աշխատասեղանս զննել, երևի նապաստակի բերածն է փնտրում:
Կռանում նայում է սեղանի տակ: Ոտքերս հետ եմ տանում, որ դիմացը լավ տեսնի:
Ջոկոնդա ժպիտը կամաց քաղցրանում է:
– Վախեցրի՞,– հարցնում է:
Ու հանգիստ դուրս է գալիս սենյակից՝ առանց պատասխանիս սպասելու:
Շունչ եմ քաշում, թքած ամեն ինչի վրա. սա իմ իրական կյանքը չէ:
– Գիտես,– ասում է Գեորգը՝ ուղղելով բիգուդի դրած, մաշված մազերը,– էսօր քիշ ենք սարքելու, բերե՞մ քեզ:
Քիշը ո՞րն է, ա՛յ տղա: Տկտկացնում եմ ինտերնետում:
***Quiche** is a savory, open-faced pastry crust with a filling of savory custard with cheese, meat, seafood, or vegetables.*
Սեյվըրի, սեյվըրի: Էս անգլերենն էլ չլիներ՝ կխեղդվեի գերմաներենի մեջ. ո՞վ էր ինձ փրկողը:
– Հա,– գլխով եմ անում,– բեր:
Դատարկ ափսեն հետ եմ տանում ու պինգվինի ծակ վզակոթի մեջ մի եվրոյանոց զգում:
Վրաս է նայում նեղացկոտ հարսի հայացքով: Արդեն գիտեմ՝ ինչ պիտի ասի:
– Իմ կուրսերին մարդ չես ուղարկում:
Ու ձեռքը քսում է ծաղկավոր գոգնոցին, մյուսն էլ դնում կոնքին: Մանիկյուրը տեղն է: Մեկը լիներ՝ իմ մատներով էդպես զբաղվեր:
– Հիմա ոչ ոք չունեմ, ով կուզեր խոհարար դառնալ,– փորձում եմ արդարանալ:
Ձեռքը թափ է տալիս ու կոտրատվելով անցնում կողքովս: Չգիտեմ՝ Գեորգն ինչ է եղել մի երեսուն տարի առաջ՝ ջահել օրերին, բայց հիմա հաստատ փետրավորների շարքից է:
– Գեորգ,– ձայն եմ տալիս հետևից,– դու լրիվ թռչուն ես:
– Հը՞ն:

Սրանց լեզվով «ծիտը» ո՞նց է թարգմանվում:
Իսկ Արկադին գրկել է ինձ ու հեկեկում է:
– Յա պարազիտ, յա պարազիտ,– կրկնում է մղկտալով:
Հիմա որ ասեմ՝ հա, հո սուտ ասած չեմ լինի, բայց չեմ կարող գործի բերու-մով: Լեզուս կապված է:
Արկադին էս երկրում իմ հույսին է մնացել: Ես պիտի նրան ոտքի կանգ-նեցնեմ. Արկադիի դարդն իմ աշխատավարձն է: Լայֆ քոչինգ, ինտեգրացիա, ֆլան-ֆստան:
Գուցե ասեմ նրան Գեորգից լսած ճշմարտությունն էս մեր կյանքի մասին: Թե չի ստացվում, թող չստացվի, մեծ բան չէ: Ձեռքս դնեմ ուսին ու մխիթարեմ. «Քեզ բաժին հասած կյանքը Սանկտ Պետերբուրգում է, Արկադի, քեզ է սպա-սում, գնա, տե՛ր կանգնիր»:
Կամ էլ գուցե հենց Գեորգի մոտ ուղարկեմ. մի տարիքի են, իրար հետ լե-զու կգտնեն, քիչ կսարքեն, կուրախանան: Մեկ էլ տեսար՝ խոհարար դառնա, բախտը բացվի: Համ էլ Արկադիի իմիջով լուրջ զբաղվող է պետք: Մթով թե տեսնես, կասես՝ Մեշոկ պապին է: Չնայած ցերեկով էլ ուրիշ բան մտքովդ չի անցնի:
– Մամի,– ասում է ճուտս,– Կախարդ պառավը ինչո՞ւ է կապույտ:
– Ո՞վ ասեց, թե կապույտ է:
– Կախարդ պառավը:
Ա՛յ Արկադին էլ է էդ շարքից:
Մտնում եմ Լորենցի սենյակ՝ սեղանին թղթեր դնելու: Նստած լուռ ինձ է հետևում: Պիտի արդեն շրջվեմ, տեսնում եմ, որ բարձրացնում է շալվարի ծայ-րը: Ոտք չկա, այսինքն՝ կա, բայց սարքովի է, հնարավոր է նաև՝ լարովի, ինչ էլ որ է, իսկական չէ:
Լորենցը կամաց քորում է իր սուտ ոտքը:
Մտածում եմ՝ էս տիկինը հետս խաղ է խաղում: Բա ես էլ իր հետ մի բանով խաղամ: Բայց ինչո՞վ. վրաս մի ծուռ տեղ չկա, որ ցույց տամ, ահաբեկեմ:
– Նապաստակը բերեց էսօր,– ասում եմ:
Շալվարն իջեցնում է: Ձայն չկա:
– Բայց պարզվեց՝ ծակ էր, հետ ուղարկեցի: Վաղը ժամը տասնմեկին էլի կգա, նորը կբերի: Համենայն դեպս, էդպես խոստացավ:
– Որ նորից ծակ եղավ, ի՞նչ ենք անելու,– հարցնում է շեֆս:
– Գլխո՛վն ենք տալու,– զայրացած պատասխանում եմ ես:
– Հա, էդ լավ ասեցիր,– համաձայնում է:
– Մի բան հարցնե՞մ:
– Խնդրեմ,– ասում է տիկինը:
– Սա իմ ալտերնատիվ իրականությո՞ւնն է:
– Ինքն է որ կա:
– Ես էդպես էլ գիտեի:
Երջանիկ եմ:
Լորենցը տեղից վեր է կենում, կաղալով մոտենում է ինձ:
– Գեո՞րգն է ասել:
Գլխով եմ անում:
– Իսկ շարունակությունը չի՞ ասել:
Հարցական նշան:
– Բայց գաղտնիք է, մարդու չասես:
Ինձ թվում է, թե հայացքը կանգնեց: Ոչ աջ, ոչ ձախ:

– Էն մյուսը՝ իրականը, էլի էստեղ է: Իմ կողքին:
Ուղիղ աչքերի մեջ եմ նայում. շարժում չկա:
– Շունչ քաշիր,– ասում է,– ուշագնաց կլինես:

Պոզ

Երբ Հարի Դիքսը մատները տանում է պահածոյի մեջ ու դուրս հանածը թափով մտցնում մինչև կոկորդը, օդը քարանում է:
Երբ Հարի Դիքսը թքից փայլող մատները նորից խցկում է մետաղյա ամանի խորքը ու մսոտ տարթի նոր շերտ հանում, գարշահոտը երկինք է հասնում:
Երբ Հարի Դիքսը լեզվի ծայրով լպստում է ամանի շուրջ լղոզվածը՝ միաժամանակ սրբելով մատները փորի ծալքերի արանքում, ամեն ինչ իր տեղն է ընկնում:
Հարի Դիքսի մայրիկը:
Այս նախադասությունն արդեն իսկ լավ է, բայց դեռ շարունակություն էլ ունի:
Հարի Դիքսի մայրիկը արդեն մի ամիս է, ինչ լցնում է սառնարանը մսի պահածոներով, որոնց վրա գրված է՝ Bozigian: Սա Հարի Դիքսի մայրիկի ամենամեծ հայտնաբերությունն է: Տարվա կտրվածքով:
Հնարավոր է, որ հենց Հարի Դիքսի որովայնն է առաջ տանում B. բիզնեսը, բայց Մարալ Բոզիգյանը թքած ունի դրա վրա, որովհետև ամբողջ դպրոցում նա միայն ինձ վրա է նայում, թեև ես բերան անգամ չեմ դրել նրանց արտադրած մսոտ աղբը:
– Հեյ, Ջո,– ասում է ինձ մեծգլուխ Ստիվը, որի ակնոցը հավանաբար Սանտա Անա աստղադիտակի ապակիներից են սարքել,– բախտավոր շան տղա ես դու:
Եվ նա գիտի, թե ինչ է ասում: Մարալ Բոզիգյանի աչքերը մահ են, ա լյա բժիշկ Կևորկյան, կմախքի դասավորությունն էլ՝ լրիվ Քիմ Քարդաշյան: Բախտավոր շան տղա եմ ես, թեև բերան չեմ դրել նրանց արտադրած աղբը:
Դեռ սեպտեմբերին, երբ Լիզի ծնողներն արշավի էին գնացել Լոսթ Քոսթ՝ հին ոսկորներն իրար տալու, ու մենք ամբողջ ավագ դպրոցով լցվել էինք նրանց տուն, ես գիտեի, որ տարին լավ է սկսվել: Այդ օրն ալկոհոլ էլ կար, մեծգլուխ Ստիվը հոր խանութից էր թռցրել: Ամեն մեկիս միայն մի կում հասավ, բայց ինչ կում էր դա, գրողը տանի:
Ու կանգնած եմ ես Լիզենց պատշգամբում, որտեղ պարկերի մեջ գունավոր սրվակներ են լցված, չհարցնեք ինձ, թե ինչ նպատակով, ու մտածում եմ, որ կյանքը հենց հիմա կատարման մեջ է: Ի դեպ, շատ խոր էքզիստենցիալ միտք, որը հասկանալ կարող են միայն առանձնահատուկ մարդիկ:
– Բարև, լուրջ տղա,– հետևից ասում է ինձ մեկն այնպիսի ձայնով, որ մտածում եմ՝ սա նախաճաշին հում ձու է կուլ տվել:
Շրջվում եմ: Սուրբ Թերեզա: Այն մի քանի կաթիլ ջինը, որ խմել էի, կամաց հետ է բարձրանում կոկորդովս, հետո ավելի վեր ու թափով տալիս գլխիս: Հանգիստ, չխառնվես:
– Ես Մարալն եմ Բոզիգյան,– ասում է նա:
Չգիտեմ ինչ է դա նշանակում, բայց կյանքումս լսած լավագույն բանն է:

Նա ժպտում է: Իմ բերանն էլ է սկսվում բացվել: Ու այդպես բաց մնում:

Հետո ես տեսնում եմ ինձ կողքից: Արդեն խոսում եմ, նա ծիծաղում է: Ավաղի ժամացույցը, որ նա կրում է այնտեղ, որտեղ ուրիշների մոտ մարմինն է, ցնցվում է մրգային դոնդողի նման: Երբ նա ծիծաղում է: Ես փորձում եմ ինձ համոզել, որ չեմ նկատում դա: Անգամ կողքից:

Հետո պատմում է, որ Մարալ նշանակում է ինչ-որ կենդանի: Իրենց լեզվով: Իսկ ազգանվան մեջ «պոզ» բառն է, «բոզիզ»՝ «փոքր պոզ»:

Հետո աղմուկ է բարձրանում: Լիզենց առաջին հարկում գորգ է վառվում: Հարի Դիքսը կանգնած է պատերի արանքում ու փորձում է իր բոլոր յուղերը տեղավորել մի պատից մյուսն անցնող անկյան մեջ: Որ կրակը հանկարծ իրեն չխորովի: Թեև կրակը հենց նրան է փնտրում՝ որպես լավ մսացու: Ու ես արդեն պատկերացնում եմ, թե ոնց է Հարի Դիքսը ճթճթում հրդեհի մեջ՝ մորթվող խոզի պես գոռալով: Բայց մեծգլուխ Ստիվը արագ հանգցնում է կրակը, ու խրախճանքն ավարտվում է: Հարի Դիքսի ճարպերը փրկված են: Լիզը գոռգոռում է բոլորի վրա, ու ամբողջ տեսարանն ինձ մի ծանոթ կոմիքս է հիշեցնում: Ցրվում ենք տներով:

Իմ քեռի Լյուկը, որ նոր է դուրս եկել ռեհաբից, դեռ մինչև այնտեղ ընկնելը միշտ նույն բանն էր կրկնում:

– Լսիր, Ջո, արա այս կյանքում՝ ինչ կուզես: Միայն թե երեք բան հիշիր: Երբեք չփորձես ծախել մի բան ավելի թանկ, քան առել ես: Երբեք չասես կնոջդ, թե իր սարքածից կերել ես ուրիշ տեղ, ու ավելի համով էր: Եվ վերջապես, ամենակարևորը, Ջո: Երբեք գործ չունենաս հայերի հետ:

Սա իմ քեռի Լյուկի կյանքի դասերն են, որոնք նա իր հետ ռեհաբ է տարել ու անվնաս հետ բերել:

Ծնողներս ասում են, որ հիմա չարժի այցելել քեռի Լյուկին, բայց ես կուզեի խոսել նրա հետ: Ես կհարցնեի նրան, թե ինչ նկատի ունի նա իր երրորդ պատգամով: Պատգամը երևի թե ճիշտ բառ է այստեղ, թեև ինձ ամենևին դուր չի գալիս: Նաև կհարցնեի, թե գիտի ինքն արդյոք այնպիսի ազգանուններ, որոնց մեջ «պոզ» բառը կա, ու արդյոք դա սատանայի վկայություն է: Իմ քեռի Լյուկը հավատացյալ է, նա այդ հարցերում մասնագետ տղա է:

Մարալի հետ ծանոթանալուց ի վեր, ես էլ եմ ինձ տվել հավատին ու հաճախ եմ մտաբերում բոլոր սրբերին:

Ահա կանգնած է նա իմ առաջ, ու հայացքս կուլ է գնում նրա վզից կախված խաչին, որի վրա հանգչում է Քրիստոսը: Այդ սուրբ մետաղի ստորին ծայրը մտած է երկու աստվածային լանջերի արանքը, որոնք կամաց բարձրանում իջնում են Մարալի շնչառությունից: Քրիստոսը կախված է ուղիղ դրախտում: Այնտեղ հայտնվելու համար անգամ ես եմ պատրաստ խաչվել:

Ես թուքս կուլ եմ տալիս ու փորձում մտքերս վերև բերել: Գոնե մինչև ստամոքսիս խոռոչ, այնտեղից դեպի գլուխ արդեն երկար ճանապարհ չի:

Ես չեմ ուզում, որ Մարալը մտածի, թե փսլնքոտի մեկն եմ, մի average Joe, ով իրեն կորցնում է լանջաբաց աղջիկ տեսնելիս: Ծնողներս սխալ անուն են ընտրել ինձ համար. ինձ նախատեսված չի հասարակ լինել: Այս մի Ջոն առանձնահատուկ է, ու համոզված եմ, Մարալը հենց այդպես էլ կարծում է: Այլապես նրա աչքը հենց ինձ վրա չէր կանգնի ամբողջ ավագ դպրոցում, որտեղ բոլորը պատրաստ են իրենց բութ մատը զոհաբերել նրա կողքին լինելու համար: Երբ ասում եմ՝ բոլորը, անգամ Քասվիերին նկատի ունեմ, ով ավելի թափով է, քան ես ու մեծգլուխ Ստիվը միասին վերցրած:

Չէ, ես հասարակ տղա չեմ: Ու հասարակ չլինելու համար ես փիլիսոփայու-

թյուն եմ կարդում: Հարցրեք ավագ դպրոցում, թե քանիսն են ճանաչում Կիերկեգորին կամ Կանտին: Կանցնի ընդամենը մի քանի տարի, ու ես կսկսեմ հասկանալ, թե ինչի մասին են նրանք գրում, իսկ հիմա միայն կարդում եմ:

Սա իմ կյանքի պլանն է: Լինել առանձնահատուկ: Ու ես ճիշտ ուղու վրա եմ: Բոզիգյան Մարալն ինձ է ընտել: Ես ճիշտ ուղու վրա եմ:

Արժեր խոսել քեռի Լյուկի հետ:

Ստիվն ինձ կանչում է իրենց տուն վիդեոխաղերով զբաղվելու, բայց ես նախընտրում եմ պլպլացնել սուպերմարկետի հատակն ու հեռու վանել այն մտքերը, որ այնտեղով անցել է Հարի Դիքը: Հենց մսի պահածոների շարքի մոտ հսկա կեղտահետքեր են: Ես ուշադիր նայում եմ հատակին: Չէ, Հարի Դիքը հաստատ այսքան մեծ ոտք չունի: Մեքենայի տակից հոսում է ջուրը, խոզանակները լիզում են գետինը: Մեկ, երկու, երեք, չկա ոտնահետք: Ես բռնել եմ մեքենայի կանթից ու նայում եմ պահածոներին գրված Bozigian-ին: Սրանով ես անգամ շանս չէի կերակրի: Եթե ունենայի շուն, կամ եթե քեռի Լյուկն ունենար: Սրա մասին ես Մարալին ասել չեմ կարող, ի սեր բոլոր սրբերի, ես դա չեմ կարող ասել Մարալին:

Երբ աշխատանքս վերջանա, ես մի քանի դոլարով ավելի հարուստ կլինեմ, բայց ես ինձ արդեն իսկ հարուստ եմ զգում: Ինձ մոտ միշտ այդպես է, երբ բռնում եմ մեքենայիս կանթը: Հասարակ մարդկանց մոտ այդպես չի լինում:

Մտքիս կար Մարալի հետ կինո գնալ: Ու կինոյի ժամանակ ձեռքս գցել նրա ուսին, որ ինքն իմանար՝ մենք միասին ենք, ինքն իմ աղջիկն է:

Կինոն սկսվում է, հենց մտնում եմ դպրոց: Միջանցքով դեպի ինձ են գալիս երկու ավագի ժամացույցներ՝ մեկը մյուսից կատարյալ: Քրիստոսներն էլ ճոճվում են դրախտում:

– Քո՞ւյրդ է,– փորձում եմ սովորական զրույց սկսել ես:

– Չէ, մայրս է, ծանոթացիր:

Դա հնարավոր չի: Կամ ես պիտի հավատամ պոզերի ու սատանաքի գոյությանը: Ակնհայտ է, որ միսիս B.-ն ամեն առավոտ լողանում է կույսերի արյան մեջ: Ինչ Կլեոպատրայի վաննաներ, դրանք երեկվա պատմություն են: Գրողը տանի: Այս տեսարանն իմ աչքի առաջ է:

Մայր պոզ ու դուստր պոզիկ: Boz ու Bozig:

Կյանքն իր կատարման մեջ է:

– Դու խիզա՛խ տղա ես, Ջո:

– Այո, մէմ,– պատասխանում եմ ես մշուշի մեջ:

– Դե տես,– ասում է նա ժպտալով:

Հետո նայում է աղջկան ու գլխով անում՝ որպես հավանության նշան: Կամ ինձ այդպես է թվում, թե դա հավանության նշան է:

Դասերից հետո Լիզի ուսապարկն եմ նորոգում: Լիզն իմ մանկության ընկերն է, բայց ինձ դուր չի գալիս, որ փորձում է մեծ քույր խաղալ գլխիս: Լիզն ուղղում է ձեռքի պլաստմասե մատանիները, որոնք չորս ցենտով է գնել, հետո ջինսի վրայից թելեր է հավաքում, հետո նայում է հեռախոսին: Բայց ես գիտեմ, որ նրա մտքին միայն մի բան է՝ ուզում է Մարալի մասին խոսել:

– Քո մտքով երբևէ անցե՞լ է,– սկսում է նա:

Ես գիտեմ շարունակությունը, հեռու մնա, Լի՛զ, հավես չունեմ, ուսապարկդ վերցրու, չքվիր: Չէ, Լիզն ուզում է խոսել: Նա ուզում է ասել, որ Մարալը տարօրինակ է, ոչ ոքի հետ մտերմություն չի անում, դասերին ձայն չի հանում, բայց բոլոր գնահատականները բարձր են: Ու որ նրանց մսամթերքն ուտելու բան չի, բայց միևնույն է՝ ամսվա ամենավաճառվող ապրանքն է: Դա Լիզն իր

մորից գիտի, ով վիճակագրությամբ է զբաղվում: Հենց նրա մայրն է պատճառը, որ իմ մանկության ընկեր Լիզն իրեն կյանք տեսած աղջիկ է համարում ու փորձում ինձ խելք սովորեցնել:
Վերջերս Լիզը հայտնաբերել է տեսագրություններ, որտեղ իր մայրն ու հայրը շատ անհարմար դիրքերով են: Երբ առավոտյան քեզ համար պանքեյք սարքած մորդ տեսնում ես վրան լատեքս ու կաշի քաշած դոմինայի դերում, ով հորդ հետույքի մեջ տարբեր սրվակներ է խցկում ու մտրակում, այն ժամանակ, երբ վերջինս գրիլ դրած հավի լոճված դիրքում խնդրում է ավելի խիստ պատժել իրեն, դա հաստատ ազդում է գլխիդ վրա: Ու շատ վատ է ազդում, որովհետև ծնողների սեքսը անմարսելի կաղամբ է, որի մասին լավագույնը, ինչ կարող ես մտածել, այն է, որ դա չկա, գոյություն չունի: Իսկ իմանալ, որ ծնողներդ ֆետիշիստ են ու իրականում ոչ թե արշավների են գնում, այլ դոմինա խաղերի, որոնք հետո տեսագրում ու նայում են տանը, կարգին ուժեղ դոզա է: Ու Լիզն այդ դոզայի տակ է մնացել: Լիզը հավանաբար մտածում է, որ ինքն առանձնահատուկ է, որովհետև գիտի այն, ինչ գիտի: Իրականում Լիզն առանձնահատուկ չի, նա հասարակ աղջիկ է, average Joe, ինչ էլ տեսած լինի: Բայց ես կուզեի, որ Լիզը դա տեսած չլիներ, ու կուզեի, որ ես իմացած չլինեի, որ ինքը դա տեսել է:
Հիմա Լիզը կսկսի խրատել, որ այդ աղջկանից հեռու մնամ, սիրտը լավ բան չի վկայում: Գնա գործիդ, Լիզ: Դու ոչինչ չգիտես Մարալի մասին:
Ճիշտը որ խոսենք, ես էլ չգիտեմ:
Ես ուզում եմ ճանաչել նրան, հարցեր տալ, իմանալ: Ուզում եմ հանդիպումներ ունենալ հետը, իսկական, դպրոցից դուրս, ձեռքեր բռնելով:
– Ջո:
Պոզիկն ուղիղ աչքերիս մեջ է նայում: Ու աջ ձեռքով կամաց ուղղում է ձախ կողմի մազերը: Դրախտի հավքերը սկսում են երգել ականջներիս մեջ: Ավել ինչ եմ ուզում իմանալ այս աղջկա մասին:
– Կուզե՞ս տեսնել մեր արտադրամասը:
Հենց դրա մասին եմ երազում, Հարի Դիքսի մայրիկը վկա:
– Կարող ենք գիշերը գնալ, երբ այնտեղ ոչ ոք չկա:
Նա ասաց՝ գիշե՞րը:
– Մինչև առավոտվա հինգն այնտեղ ոչ ոք չի լինում:
Առավոտվա հինգը…
Գլուխս եռում է: Ծնողներս թող իմանան, որ մնում եմ Ստիվենց մոտ: Ստիվին պիտի ասել, որ չմատնի: Գլխավոր հարցը լուծված է:
Առավոտվա հինգը: Հավքերը երգում են:
Լիզն է անցնում մեր կողքով, նա ձեռքը տանում է Մարալի մազերին ու հետ քաշում: Ափի մեջ սատկած բզեզ է, նրանցից, որ ներքև են թռչում ու ծանր բզզում, ու թվում է՝ հազիվ են մնում օդում:
– Սա մազերիդ մեջ էր,– ասում է Լիզը:
Ես գիտեմ, որ դա սուտ է:
Մարալը վերցնում է սատկած միջատը, դնում ափի մեջ ու ձեռքը բռունցք անում:
– Շնորհակալություն,– ասում է նա հանգիստ:
Ես մտածում եմ, որ հիմա կբացի ձեռքն, ու այն դատարկ կլինի: Պոզավոր ֆոկուսներ: Բայց տեսնում եմ, որ սեղմած ափի միջից դեղին հեղուկ է ծորում:
Սնաղացների մռայլ երկաթներն անշարժ են: Օդում սառած է Հարի Դիքսի վրայից փչող գարշահոտը: Ես փորձում եմ զգալ իրավիճակի ռոմանտիկան,

բայց այնքան էլ չի ստացվում: Մարալը բռնել է ձեռքս, ես մրսում եմ: Քայլում ենք լուռ, ես չգիտեմ, թե ինչ գործ ունեմ այստեղ:
– Դու քա՜ջ ես, Ջո:
Դիմացս միսիս B.-ն է: Մարալը բաց է թողնում ձեռքս, գնում կանգնում է մոր կողքին: Boz ու Bozig տեսարան: Նրանց աչքերում սառը փայլ կա: Մնաղացը միանում է:
– Դու ուզո՞ւմ ես լինել հասարակ, Ջո:
Սա նշան է, որ գնալու ժամանակն է, բայց դուրս տանող ոչ մի անցք չեմ տեսնում:
– Ես գիտեմ, որ դու ուզում ես առանձնահատուկ լինել:
Ո՞վ է խոսում՝ մե՞ծը, թե՞ փոքրը:
– Դու կլինես մեր այս տարվա մատաղը: Որ գործերը շարունակեն հաջող ընթանալ:
Ի՞նչը կլինեմ, այդ բառը ես չեմ հասկանում:
– Սա առանձնահատուկ լինելու լավագույն ձևն է, Ջո: Այս քաղաքում դեռ ոչ ոք մսաղացը չի նետվել:
Ու հանկարծ ես հասկանում եմ: Սա խաղ է, նրանք փորձում են ինձ: Քսան-մեկերորդ դարում ոչ ոքի մսաղացը չեն նետում, այդպես չի լինում: Սա խաղ է, նրանք փորձում են իմ քաջությունը:
– Տխուրն այն է, որ ես ձեր մասին այդպես էլ ոչինչ չեմ իմանա,– ասում եմ ես հեգնանքով,– պետք էր լսել քեռի Լյուկին:
– Տխուրն այն է, Ջո,– ասում է Մարալը,– որ մենք ինքներս էլ ոչինչ չգիտենք մեր մասին:
Նրա ձայնում տխրություն չկա:
Ուսերս լարվում են, որովհետև զգում եմ, որ ինձ կամաց առաջ են հրում: Կյանքն իր կատարման մեջ է, գրողը տանի: Ու ես առանձնահատուկ Ջո եմ:
Սա ընդամենը խաղ է, կրկնում եմ ես ինձ: Հետո մտածում, որ գուցե պետք լինի սիրել Հարի Դիքսին: Հնարավոր է, ես վաղը դառնամ նրա ճարպերի մի մասը:
Հնարավոր է:

Վիոլետ Գրիգորյան

Բըզզզ

Ալֆրեդի անմահ հիշատակին

Ճերմակ սփռոցի ծալքիկն ուղղեց, վերջին բաժակը,– այո՛,
այո, աջ, չէ՛, չի սկսվել,– պըրծ, սրբեց դրեց
բոլոր պլպլան դիքերի կողքին,– տեսնես
կմնա՞– բը՜զզզ[1],
քըշա՛,– համեցեք,– դու էիր պակաս, ինչ բարձրաճաշակ,
Լուսոկի պես դուզ՝ հենց ձկնկիթին, Ճաշիկի ընդկեր,
«Կինն ու բըզզանը՝ վերջին ընթրիքին», ի՜նչ դրամատիկ,–
չէ, չեք ուշացել, համեցեք աջից,– բայց դե «վերջինը»,– ապե՜, լավ էլի,
նոր էի սրբել,– չէ, չե՜մ հավատում՝ կասեր էն մեծը, կուրսայինն անգամ–
դեռ կհասցնե՜մ– պիտի համոզես…
Մատնաչափիկներ՝ փոքր, սիրունիկ բերանիկների, ճերմակ,
խնամված ատամիկների
մեկ կծի չափով,
հռոմեական – հա հա, հարբած փիղ չկա, բայց կլնի շուտով –
շարված քանոնով, քառակուսիկներ՝ գույն-գույն ու ջոկ-ջոկ,
Լուսոկը լացեց՝ գնաս՝ կմեռնեմ,
հա կրակում են, բայց էս ա՝ պակա՞ս դիրքեր են ինչի,
կանգնիր ու շարիր հա շարվեշարան,
հա շարվեշարան, հա շարվեշարան, կուգան ու կեր
թա՞ն–
համեմագլխի տակ փափկալըոզ սնկախյուսիկով,
պանրին չոփված խոզապուխտիկով,
ասետրինայի – ո՜նց էր հայերեն, հեռակայի խեր–պտղունցիկներով,
փայտաձողերին փայլուն փայլփլող խորոված հավի…,– այո՛,
կներեք, համեցե՛ք, խնդրեմ, ահա աջ կողմից –
տավարացավի կտորիկներով – տեսնես՝ կմնա՞…

Մյուսը արդեն լի բաժակներն է մեծ սկուտեղով
վարժ ակրոբատիկ պտտապտտեցնում՝
կտրելով ալքեր[2] (ճեմողաց հետգիծ) Նինա Ռիչիի
Քրիստիան Դիորի, Իվ Սեն Լորանի,
Շանել թիվ հինգի, Քելվին Քլայնի…

– Սերուցքը, հա հա, հասարակության, ի՜նչ նորալեզու–
տեսնես՝ գալո՞ւ ա, ինչքա՞ն կլինի,
հի՞նգ, թե՞ վեց ամիս, իբր նեղացա,– բարև՜, շատ մերսի, այո, հինգշաբթի,–
ղադրս իմանա, կարոտի, կանչի,
էն էլ լսում եմ – բը՜զզզ– ավետիսը, կլորիկ ռումբը
բա բա բա՜մ՝ վրես…
Խնայողությո՜ւն, խնայողությո՜ւն,

զգացմունքների տնտեսվարություն,
մեռելաճաշի կերակուրները պաղ մատուցվեցան
հարսնասեղանի հրավիրյալներին,– չէ՛, ես նախագիծ
չեմ ներկայացրել, դե էստեղ չէի, դու կաս, հա՛– իաա, զզվեցրեց,
քըշա՛, Սո՛լ Պարտր,– հա, լավն է թեման,– շրթներկիս քաղցրին,–
քեզ հաջողություն, կանանց ազատի՛չ,– բա՜ց ատամներդ,– հա՛, հա՛,
հի՛նգշաբթի,– տեսնես՝ գալո՞ւ ա…

Մի զույգ քառթավոր ճիրան լինեի…

Ահա դեսպանը՝ ճերմակ ժպիտով՝ առ հան
դուր ջոխա կան ու թի յան, ազա տու թի յան և
խախա խախու թիյան նվիրյալների…
Խա խա խա խություն, հա, բա ո՛նց, լավ էլ հենց կնոջ,
երեխու համար, Հեկտորի ժեշտը,
բայց դու արանքում մի հեղինացիր,
քեզ վրա մենակ, քըշա՛, էն էլ՝ շրթներկիդ, այ էս ա գալիս,
ճարդ ի՛նչ, խելք նիխտ, տեր ու շնորհքին օջախ չունեցար,
կամակոր ծյոծյա–

O, հավերժական կանացի կական…

Գրողլրագրողարվեստագետերգիչնկարիչդիզայներ,
սերուցքը… իա, էս ինչ շուխուր ա, օ՜, օho՜, բա ո՛նց
հենց անձամբ ինքը՝ հնի՛ն մեծություն– էլ ով դիմանա, սրան կասեն քըշ,–
– պետությունն էլ է զոհ այս ծրագրից
և մասնակցում է, այսպես ձեռք ձեռքի,– շրջանամատույց
բարձրախոսփնջին, Հյուգո Բոս վարսանդ՝ ԳուչիՊրադաՔոդ
տերևաբույլին,–
մեր ազգի համար, պաշտպանությունը
անպաշտպանությունն է մեր – առ ի սկուտեղ՝ նեղ արանքներից,–
ի՛նչ նորալեզու,– սպիտակ չկա՛,– խոնարհ, կամկատար ու ոսկեժպիտ՝
հիմա կբերեմ,– ու ալիքների,– ի՛նձ էլ,– ու էլի, էլի ու էլի՜…

Մամադ քունեմ հա՛ մեր ազգի համար…

Գիշերը Լուսոն – էս էլ ա Լուսո– դանդաղ կիանի վերնաշապիկը
հոգնած ուսերից ու մինչ լվալը՝ *փեսաիացիկին*,–
գիտե՞ս, նենց գործ ա՝ միշտ պիտի մաքուր, խնամված լինի,–
կիպի քթին՝ ահ, ինչ հեռավոր աշխարհների բույր, կանաչ
հրվանդան, առագաստանավ, աստղաշատ հոթել, սև ձկնկիթով
լեցուն սկիհներ, մարջանաջա՛նջա՛ն ավազա… պայքա՛ր,
պայքա՛ր ավազա…
– Հլը, հլը, տե՛ս, էսօր էսի էր՝ ը՛ս– պի՛–
տա՛կ չը՛– կա՛,– քիթը կիանի, որ շրջվի նայի
հեռուստացույցին, փոքր, սիրունիկ խոսաբերանին,
ճերմակ, խնամված ատամնացույցին,– մեր ազգի համար
այսպես՝ ձեռք ձեռքի,– ձայնն էր զուգահեռ աշխարհի բույրի…

– Ահա և կարմի՜ր,– ճերմակալաքած նուրբիկ եղունգներ, *բիր*՝ *Close up*,
ադամանդակուռ միջնամատ-բթով, ճկույթը տնկած,– մերսի՜,
ո՜ւփս, ամա՜ն,– է՜շ, դեռ չսկսած՝ սփռոցին լաքա,– կներեք՝
թափվեց, վա՛յ, ճապոնական
դրոշ ստացվեց… Ոչի՛նչ,– թարսի… թառ… թառա՛փ՝
հիշեցի,– դարձ ի շրջանս,– Ջառա՛, մի րոպե, ուսից՝ ևս մեկ
կներեք – մերսի,– դարձ ի շրջանս,–
գիտե՞ք, Գաուդին հրաշալի էր, սիրահարվեցի, բայց դե շատ շոգ էր,
հուլիսին՝ Փարիզ, ոչ մի թանգարան, սաղ էլ տեսել եմ,
միայն զուտ հանգիստ, ախ, ո՛նց եմ հոգնել էս նախագծից,–
բա ո՛նց, կհոգնես, տարին տասն ամիս
եվրոպաներում թրև ես գալիս, գրանտակեր
լիրբ, հյուպատոսի հետ՝ հա սիլի-բիլի,– հուլիսի կեսի՜ն,
ես էլ ո՛նց որ թե ցուցահանդեսի հրավեր ունեմ, գուցե տեսնվենք,
ըըըմ, դեռ չգիտեմ հոթելի տեղը,– ա՛ռը հա քեզի, կպչուն բամբասչի,– հա՛,
կասեմ անշուշտ, պաչիկ ու պակա,– Հեկտորին՝ պակա,
պակա՝ Հեկտորին, պակա՝ մինչև մահ – ո՞նց ասեց՝ ցմահ
ես քո կողմից եմ… ցմահ ցը ցմահ, ցմփա ցա ցմփա, ցնծա ծա
ծնծղա, քելեխի քյուֆթան՝
ատամհատիկի դհոլ-զուռնայով…

Մելոդրամա սարքելուց լավ ես,
ամբողջ փաթըռթին քեզ համար ա, հա՛, ուրիշ բան չկա՛,
Հեկտորը քեզ ի՞նչ, կամ դու՝ Հեկտորին,
որ նրա համար արտասուք թափես,
մի բոզի նման քո սրտի մաղձը բառերով, բա ռե,
ռե ռե, յա՛խք, չափես,
հայհոյանք անես մի պոռնիկի պես, աղախնի պես,
թո՛ւհ, թո՛ւհ, ամոթ քեզ ամոթ քեզ ամոթ քեզ ամոթ քեզ ա
մոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոոթ–
դժոխքը դո՛ւ ես, ի՛նքդ ես քեզ համար–
շորիդ աստառին՝ շիկնած ասեղներ,
ճերմակի վրա՝ պուտ-պուտիկ կարմիր,
ուխա՛յ, դե էլի, ավելի սուր-սուր, ավելի խորը…
Սրտին՝ ալիմենտ – ինչ օրինավո՛ր, խա խա խա
խա խու, ու ոչ մի ռումբ – բան, թի յան թումբանի,
բաբաթ գըմփ-գըմփը
խփեց չլված հանրույթիդ, ամա՛ն, չխոսված լեզվիդ,
ո՛նց էի սիրում պարթևերենդ, թպլի՛կ, փոսի մարդ…
Ծիծիկ Վաթսոնի բլա-բլայից Շերլոք դառնալու թե հնար լիներ,
շպիոն Օնիկի տան հասցեն սաղս չէինք իմանա…

– Այըմ ֆայն, թհանք յու, նաթ յեթ, հոփ՝ յու ուիլ ջոյն աս,–
բա՛ց ատամներդ, բաժակ չխկացրու, իհա, քըշա՛, անտե՛ր,
լավ ա՝ շուտ տեսա, թե չէ գինու հետ
զակուսկի կլներ,– դիս ջուլա՛յ, նո, փլիզ…,– էն ո՞նց էր
պայմա…,– լո՛յս քեզ տեսնողին,– լավ ա՝ մոտեցավ, մանկաբըլբըլոց
անգլիերենի

վերջին խազըն էր,– ո՞նց ես, Գագո ջան– սի յու,– հա՝
քա՛նթրաքթ,– դե, նիհարել եմ, դայըթ եմ պահում,
հա, մի բան կուտեմ, ըհը, հի՛նգշաբթի, Գայանին ասա,–
մի քիչ էլ սրանց ժպտամ բացատամ,– երևի թե դեղձ,– տեսնես՝ գալու
ա՞…

Դևը հարցնում ա թուրքին, վրացուն,
տեսա՞ր Մառայի արևայրուքը, Գաուդի, հի հի, շաաատ շոոոգ էր, հո հո,
լսի, Խչոյի փիրսինգը տեսա՞ր, շատ հավանեցի,
չէ մի՝ իրան՝ չէ, ինքը յար ունի, թազա ծիտ ա, հա՛, մոտ արի՝ ասեմ,
բայց դե աղջիկ չի, հո քյառ չես, ախչի՛, ոչ մեկին չասես,
հի հի, հա հա հա, կույս ա, բայց՝ տղա,– շշուկ ու շրշյուն,
շշուկ ու շրշյուն, շշուկ ու շրշյուն, դողում եմ դանդաղ,
պաղ, միապաղաղ,
ձանձրևը լվաց անձև ստվերս, ես էլ դու–ը չեմ,
պուպու եմ, պո՛ւյ-պո՛ւյ,
կերա՞ր կոկոսս, ո՞նց էր համը իմ…,– վայ, մերսի, մերսի,
կրակվառիչս որտե՞ղ թողեցի,– հռետըռ հարցմունք
հրատու յանիմ Պրոմեթևսին…

– Լավ հավաքվել ենք, կարանք սկսենք հեղափոխությու…
– Այ մարդ, չեք թողում՝ մի օր էլ ա հա,– ե՞րբ էր մոտեցել
էն մեծությունը,– մենք հանգիստ
շնչենք,– հեղա ձեր, մեղա՛, էդ
փոխությունը անտառ չի փախչի,
թող մնա վաղը,– համերաշխ քրքիջ, թուրք ու վրացի,
Ջառա ու Մառա, Գագո ու Խչո, դև ու Գաուդի, հեղափախս ու խաբս, շշուկ ու
շրշյուն–
ախ, ստամոքսս, հա, պիտի ուտել,
զուցե դե՞ղձ, Աֆո՛, զուցե, մի
զուցե, զինին թմրեցրեց ու ալիքները
էլիտարաբույր, ախ, տեսնես, հիմա ո՞վ է սեղմրտում
քո պզուկները, իմ հեղափոխվա՛ծ– դե բարձրախոսը,
դեռ կհասցնե՞մ, նոր են պատրաստում–
ու այ էն մի մեծ դեղին գլխովը,
որ աջ թիակիդ տակ էր միշտ բսնում,– իա, նկատեցի՞ր
կյաժ լիլիպուտին, դեղին գլուխը՝
հազիվ թևի տակ,– վայ, արդեն բա՛րձր եմ
ինքս ինձ հետ խոսում,– բայց ո՛նց ա կապել
շուզըր դաղիին,– թավիշ ու մորթի, ջութակ, դաշնամուր,–
հիմա իմացա՞ր՝ ինչի են յոբըռ,–
մի չափազանցրու,– էլի՞ բարձր ասի,– տաս մատ ու լեզու,
գիշերը լավ էլ սա հատուցում է երախտաճանաչ
կեղծ– օրգազմներով՝ ահ ահ ահ–
կուառնիմ, կուառնիմ– էն իր հավանած կահույքի սիրույն,–
իմ մահճակալը, հիշո՞ւմ ես՝ ոնց դը՛խկ, ու դեռ չեմ սարքել,
Բիբլիա, բառարան, հին արևելքի, նոր արևմուտքի
պոեզիա, բան-ման, դե

ըստ հաստության... Թավշե տիկինը
պզուկ կսեղմի...

Կնոջ անկողին՝ ցավով առլեցուն...

Գուցե դեղձ, գուցե, գուցե, մի
գուցե, ցմահ դեղձ կուտես, թե կո
էլի կոս, էլի տռզես, էլի կտռես,
թավշե տիկնոջ մոտ՝ քամակով դիոլ...

Ախ, իմ ջութակի հեկեկանք տրտում...

Ախ, հիմա ո՞վ է մերսում ոտքերդ,
ո՞վ է լոսյոնով ճակատդ սրբում,
երկու ափերով բռնում մռութդ՝
զույգ բթամատով կոպերդ սեղմած,–
ակնոցդ հանի, էսքան մոտիկից
տեսնո՞ւմ ես, ասա՛,
ու ի՞նչ ես տեսնում,–
կարևո՞ր բաներ, աչքո՛վ, չէ մի չէ,
ախ, մի քիչ փիսո–
փիսո անեիր
Լյուքսեմբուրգ այգում...
Բայց կա՞ աշխարհում Լյուքսեմբուրգ այգի,
որտե՞ղ է կարմիր դրոշը խփում ալ– փշոտ վարդը՝
բառերից անդին,
որտե՞ղ է մեղուն – որ չի երևում, բայց լսելի է – նրա ականջին
խոսում բըզզզերեն,
ու թարգմանելիս քամին պահո՞ւմ է զ-ի զըզյունը,
թե՞ քրքրում է հատիկ առ զատիկ ու ամեն մի զ
նամակ է տանում խատուտիկներից հեռու դաշտերին...
Բայց կա՞ խատուտիկ, բայց կա՞ն դաշտերը
բլուրից այն կողմ, կա՞ արեգակը, աստղ ու
լուսին կա՞, ջուրը վիժո՞ւմ է գետից առ ձորակ,
բայց ձորակը կա՞
բառերից անդին...
Եթե արև կա, հապա ինչո՞ւ են առավոտները
սև խավար բացվում,
եթե ջուրը կա, ինչո՞ւ եմ ծարավ,
եթե կա մեղուն, ինչո՞ւ թառամեց ալ վարդը ձեռքիս,
եթե կա ձորը, էն ո՞վ է գցվում,
որ ես չի, այլ... ախչի, անաստված...

Չէ, ինձ մի՛ խաբեք, չկա ոչ մեկը, էստեղ չեն իրենք,
նրանց տեսել եմ զուգահեռ մի տեղ, ուրիշ աշխարհում,
էստեղ բառեր կան նրանց վկայող,
բայց հիմա արդեն սուտ են վկայում,
բայց հիմա արդեն շիրիմն են նրանց,

բայց հիմա արդեն մեռել են բուրում,
բայց հիմա արդեն…

Զուգահեռ աշխարհին ինչքա՜ն ա հեռու քո սրտի սրտից…

Ուան, թու՝ զուգահեռ, հա, լավ լսվում է՝ երեք մրցանակ՝
ա. ամենային,
բ. ամենային
ույո՜ւ ծբ. ամե…
ամենամեկը՜ս, թուրքը՜ս, վրացի՜ս, դևը՜ս, Գառուդի՜ս,–
հուզմունքի ալիք ու քրտինքի հոտ՝
ՇանելԳուչիԲոսս արանք-մարանքից…
– Ես մեղալի, մրցանակի համար չէի գործս անում–
շամպայնն իմն էր, դա՝ Նվարդին, նոր էստեղ էր, ա՜յ էն կանաչ-փիրուզա-
գույն–
հա՜, ինչ էի ուզում ասել, թող արժանին գնահատվի:
– Դե, իհարկե, լավ, ես գնամ մի բան ուտեմ, երևի՝
դեղձ, դայըթի եմ, Նվուշին էլ կբարևեք՝
թե չտեսա,– ու կտրելով ալիքները,
կտրատելով, կտրա– տոտա– տետա– տատի– տուտը– տելով…

Ես կտրեցի ալիքները, որպեսզի քեզ, որպեսզի ես, որ
պեսզի դու ահա էսօր
վեր համբառնաս՝ վրես քաքես– ի՜նչ պատճառահետևանքի
հետևություն–
քացով խփես էշ քամակիս, գցես գետին ու ոտքերդ վրես սրբես,
այ էս շարան, շարվեշարան բարձրասրուն բաժակների
բանակի պես
տղերք էին դեմս շարված, է՜հ, թուլություն, անունդ… ի՜նչ–
վայ էս կնանիք՝ սեր հա սեր հա սեր հա սեր…

Բա իհարկե, ես մեղալի, մրցանակի համար չէի գործս անում,
կարևորը մասնակցելն է, մենք բոլորս նույն կարևոր նպատակի– լսի, տեսա՞ր,
էս լրբուշկի էքս յոբըոը կնգա հետ ա արդեն եկել,
սա երևի դեռ չի տեսել, որ ասեցի՝ մրցանակի համար չեմ ես, քմծիծաղեց,
հիմա գնա էնտեղ խնդա, տեսա՞ր՝ ոնց էր սա նիհարել, Լորել– Հարդի,
վայ թե ակտիվ մաստուրբիկից, հի հի, մարզված
մատների մեջ՝ միշտ սիգարետ, յա՜խկ, ձևական,
յանը տարած ցնդա՜ծ պառավ, կտտցրել ա սրան մաքուր,
ինքն իրա հետ խոսալով ա արդեն, ըհը՜, դե զզվցրին, ուան-թու,
ուան-թու, ասինք էլի՝լավ լսվում ա, ճանճի պես էլ մեջ ա ընկնում յոբբա՜
խփոն, Նը՜– վո՜ւ– շի՜ն էլ կը– բա– րե– վեք, ասա իսկի Նվուշը քեզ
քաքի տեղ ա դնում յանիմ, մի բան ասեմ՝ իսկականից, կիավատա՜ս,
հեչ վեջս չի, ով էլ լինի, մենակ Նվարդը չլինի, հոր պաշտոնով
հա ամեն տեղ…

Ես հորս թագը գետնով տվեցի, ոսկե գեղմը՝ քեզ մրցանակ,
Ես իմ ախպորը պատառոտեցի, ծովը նետեցի,

Լքեցի տունս, հարազատափս, ես հայրենիքիս ջուրը լքեցի,
Ես իմ զույգ երե...
– Երեխա չունե՞ս՝ պզուկը սեղմես–
դժոխքը դո՛ւ ես, ի՞նքդ ես քեզ համար, երբ քո մեջ նստած
մի ուրիշը կա–
ով Բաբելոնի կույս ոռատու դուստր, երանի նրան,
ով քեզ հատուցի քո հատուցումը,
ու վարվի այնպես,
որ դու վարվեցիր ուրիշների հետ,
երանի նրան, ով քո երեխան կվերցնի քեզնից
ու կջախջախի քարերի վրա,
Վայ, Կիկոս ջան, վայ, Կիկոս ջան...

Միջով ալիքների միջով ալիքների միջով ալիքների,
վայ, զգույշ, ճուտիկ, էս ո՞ւր ես վազում, որտեղի՞ց եկար, անունդ ի՞նչ է,
ո՞ւր է եղբայրդ,
քո հոտից մամաս, մամաս էլ ունի,
իսկ այ սրանից, սրանից ունի՞–
մրցանակ՝ ճնշված կանանց պաշտպանման,–
ախ իմ մրցանակ, իմ կարմիր մեդալ՝
ուրիշի դոշին,–
մրցանակ կանանց գտնելու համար,
նրանց բերանը լեզու դնելու,
էդ լեզվով լեզվին հա տալու համար,– ըհը, ժյուրիի մեջ էիք դուք, չէ՞,
գիտե՞ք, գյուղերում միայն ծեմնատա,
ոնց որ միջնադար,
ծեծում են կանանց, պատկերացնո՞ւմ եք, այ էն խեղճերին,
որ ամբողջ օրը տքնում են դաշտում, թրիքի մեջ ու, յու նոո՛ւ, դիս բուլշիթ,
և խոհանոցում, այ մին էվրիուեր–
սորի, այ Նվա՛րդ, քեզ փնտրում էին– տղամարդիկ էլ հարբում են, գնում
տանը ծեծում են էն թշվառներին, որոնց մի կաթիլ
սեր էլ չեն տվել, ոչ մի ջերմություն ու ոչ մի քնքշանք, դա ինչերե՞ն է, ինչո՞վ են
ուտում– սեքսուալ օբյեկտ– դաթզ իթ, նաթինգ էլս,
էքսքյուզ մի, ասա՛, էդ ի՞նչ ես, ախչի, իրար խառնվել, դեռ մրցա..., իաաա՛,
հա, տեսա, տեսա,
էն էլ օբյեկտը, իհ իհ, սեքսուալ, էս ա՝ կտեսնի, տես՝ ոնց գլուխը
կախ ա մնացել, իր գլխի ճարը չի կարում անի, ուրիշ
կնանոց հարցերն ա լուծում...

Հե՜յ, էշ կնանիք, հե՜յ, Դրիդորյան
տասը աչոնիկներ՝ էնտեղ ներքևում, էդ ո՞ւմ համար եք
ալ կարմիր ներկվել, թե՞ ավետիսը փոստով ուղարկեմ, էշի
ականջում խռմփացողներ, անտեղ
յակ լրբեր, դեռ սպասո՞ւմ եք էն սեգ ճակատին, որի վը
րա եք էդպես հարռգել... Հիմա տեսեք ձեզ ես ոնց
եմ փռթում,
փռթում ու թափում
ու աստեղ–աստեղ՝ եղունգների տակ– կառմիռի վռա

կառմիռ պըզըցնում, առռոյունի վռա մի լավ աղղ, սխտոռռռ ու բիբառռռ
անում, ո՛նց եմ չոքքքա
ցցցնում սուռռ խճճճի վռա, դե գլուխ– գլխի
իռառ թև մտած էդպես ողղղքացեք, ձեռ հառռռաչներից
ու շշշուկնեռից թթույն եմ քամմմելու,–
– Պարո՛ն նախագահ, ահա սպիտակ,–
և մի մարգարիտ՝ ձեր ողջութ… վա՜յ-վա՜յ,
ախչի, վայ, ընկավ…
Միգուցե թելը բարակ էր, ախչի՛, գուցե մի
գուցե–
դե ոչինչ, մեջը բան չէր մնացել,
բայց նոր փոքրիկին, որ պիտի ծնվի, գուցե հերիքեր–
հա, լավ փոքրիկ ա՝ ֆութնոթը հանած՝ 300 անց…
Չէ՜, մրցանակով չխփես, ախչի, յա՜խկ, ո՛նց լխճեցիր…
Օ՛, հավերժական կանացի բզզոց (երեք հատ 3)…

cut

[1] Աղմուկ, բամբասանք, բզիկ:
Հուզմունք, գրգիռ, կրքեր առաջացնող ցանկացած բան, խթանիչ:
Անհասկանալի խոսք, ատամների արանքից նետված հայհոյանք:
Nirvana ռոք խմբի առաջին սինգլը՝ Love Buzz:
Երբ Պոլոնիուսը գալիս է Համլետին հայտնելու, որ դերասաններ են եկել, Համլետը պատասխանում է՝ բը՜զզ, բը՜զզ, քանի որ դա արդեն նորություն չէր: Այսօր նորությունների ու բարձրաշխարհիկ ասեկոսեների շատ կայքեր «Բըզզ» բառով են ներկայանում:
[2] խորք, ալիք, ներքին կողմ, ընդերք, ծննդկաններին, նորածիններին, երիտասարդներին թշնամի այլանդակ կերպարանքով առասպելական իգական չար ոգի, շատակեր, մարդագող-երեխայագող:

Լուսանկարը՝ Վահան Իշխանյանի



Սերժ Սեպյան

Խեռիս

Խեռիս ուզեք… Հեռուստաընկերության պայմաններին չեմ բավարարում: Իրանց օսկարակիր սցենարիստ ա պետք: Ուրիշ բան չէի էլ սպասում: Ասում ա՝ հավանո՞ւմ ես մեր ֆիլմերը: Ասում եմ՝ դա անհրաժեշտ պայմա՞ն ա, որ աշխատակիցները նաև հավանեն հեռուստաընկերության ամբողջ արտադրանքը: Կուշտ կերած հորթի հայացքով նայում ա դեմքիս՝ յանի բա էդ հարց ա՞: Դե գնա մամադ քունեմ: Վաղուց արդեն առավոտ էլ չի բարեկեցիկ ապագայի հույսեր փայփայելու համար, թափառելը միակ հնարավորն ա, ինչ կարող եմ ինձ թույլ տալ: Թումանյանի վրա՝ «Հին Էրևանի» դիմաց քիչ ա մնում ընկնեմ մեքենայի տակ ու չնայած ես հարյուր տոկոս ճիշտ եմ, մի հինգ անգամ ներողություն եմ խնդրում վախից լեզուն կուլ տված տաքսու վարորդից ու հետքս կորցնում եմ Հյուսիսային պողոտայում: Ինքս ինձ գժի պես խոսելով՝ քայլում եմ ու մտածում՝ ինչի՞ ներողություն խնդրեցի… Կյանքովի մեղավոր լինելու աներես զգացողությունն իմ տունը կքանդի մի օր: Համառություն, նույն ինքը՝ զոռբայություն՝ փաթեթավորված ինքնաներկայացման հմտություններով. ահա թե ինչ ա պակասում ինձ: Կոտլերին հարցրեք՝ կասի: Կասի՞ որ… Խույ, թե կասի: Բանիմաց ուսուցիչները հիմա արևի պես անհասանելի են, իսկ մի ժամանակ նրանք անտառներում ու անապատներում էին ճգնում կամ էլ իրենց օրերը մթնեցնում էին քաղաքային հրապարակներում ու շուկաներում: Լավ դե, Կոտլերի մերն էլ քունեմ: Մեր կիթառիստ ախպերն էլի դինամիկները դրած ցքցքացնում ա Հյուսիսային պողոտան: Ուզում եմ մի բան տալ, բայց փող չունեմ: Գարեջուրս եմ տալիս, ու քանի որ էլ գարեջուր չկա, նստարանին նստելու անհրաժեշտություն էլ չկա: Աբովյան փողոց չհասած՝ անսպասելի հայտնվում եմ Ներոնի ժամանակների հռոմեական սանդալներով, շորտերով ու Կարնեգիի ժպիտներով զինված զբոսաշրջիկների մեջ: Տեսնես հիմա սրանք պատմամշակութայի՞ն տուրիստներ են, թե՞ ժամանցային: Պատմամշակութային կլինեն, որովհետև Հայաստանում հարգի չի ժամանցային տուրիստ լինելը. ժամանցն էնքան ցածր բան ա, որ հին ու հարուստ մշակույթ ունեցող ազգերին հարիր չի ժամանց ունենալը: Էն մի մորքուրը մի տեսակ ուրիշ ձև ա ժպտում, Կարնեգիի ասածով չի ժպտում: Երևի չիշիկն ա մի կերպ պահում: Զուգարան չեք սարքում՝ խեռիս սարքեք, գոնե «Զվարթնոցում» մարդկանց պամպերս բաժանեք: Մարդ Բուենոս Այրեսում տուրիստ լիներ, ջհանդամ թե շորտով ու սանդալով թոշակառու չէր լինի, Բորխեսի ազիզ արև: Առողջությունս ու դուխս տեղը լիներ՝ սենց կշարունակեի քայլել, էնքան, մինչև վերջանար Աբովյան փողոցն էլ, Փոքր ու Մեծ Կենտրոններն էլ, Երևանն էլ, հնարավոր է՝ նույնիսկ Հայաստանն ու Կովկասն էլ… Կքայլեի էնքան, մինչև հանդիպեի որևէ ծովի կամ օվկիանոսի, ու էլ անտեղի հուզիչ տեսարան չսարքելու համար, առանց նույնիսկ մի քանի րոպե ափին նստելու, թախծոտ հայացքս հորիզոնին հառելու ու մի վերջին սիգարետ ծխելու՝ գրպաններս կլցնեի ափի թաց, կլորավուն քարերով ու էլի կշարունակեի քայլել անշեղորեն առաջ…

Բայց էս սութի սենտիմենտները մի կողմ, հիմա տուն եմ գնում: Եկող ամիս մի երկու մանեթ փող բռնելու միակ հույսս մնաց էն էշ մրցույթը, եթե էդ էլ չկպավ, քաքի մեջ եմ: Լավ ա՝ մի հատ ծիծիկ մտահղացում ունեմ պատմվածք գրելու համար, ու ոնց որ թե ժամանակ էլ կա: Համենայն դեպս, փողով գործ չունեմ, ոչ էլ նույնիսկ տանը փչացած շտեպցել կա սարքելու, որ տնեցիք զահլես տանեն, էլ ի՞նչ ա պետք: Բայց տրամադրություն չկա: Ավելի ճիշտ՝ որևէ տեքստ գրելու իմաստն ա կասկածելի: Ո՞ւմ խեռին ա պետք: Սկի իմ խեռին պետք չի: Էդ հավերժ խոսակցությունները, որ գրում ենք, քանի որ չենք կարող չգրել, իբր մենք առաջին հերթին մեզ համար ենք գրում, յանի նենց մտավոր ու ֆիզիկական պահանջ ունենք, որ սենց մեռնում-հալումաշ ենք լինում, եթե չենք գրում, թե չէ՝ հո ինչ-որ մի հոգնած ընթերցողի համա՞ր չենք գրում... Էշություն... Ո՞վ չգիտի, որ մարդն ինքնարտահայտվելու պահանջ ունի, ու գրելն էլ տենց մի բան ա, բայց որ իրանց ընթերցողը չի հետաքրքրում, էդ արդեն կոնկրետ կլրիս ջուր են ցանում: Մի խոսքով, էդ պաթետիկ ելույթները թող կոխեն իրենց քամակները: Օրինակ, ինձ դուր ա գալիս, որ իմ գրածը կարդում են, էլ ավելի դուր ա գալիս, երբ գրածս հավանում են, շատ ավելի, երբ հավանում են գրականությունից, տեքստից հասկացող մարդիկ... Իսկ ամենաշատը դուր ա գալիս, երբ գրածս փող ա բերում, թեկուզ՝ քիչ փող, բայց բերում ա, իսկ եթե շատ փող բերի, անհավանական շատ, անսահման շատ, ծիծիլիոն անգամ շատ դուր կգա... Բա չէ, զահլա կա, տալիքներս խեռո՞վս եմ փակելու: Էն անգամ մեկը հարցրեց՝ ինչի՞ սկսեցիր գրել, ասեցի՝ որ դումար խաղալը թարգեմ, սկսեցին խնդալ: Մի քանիսն էլ զզվանքով ոտից գլուխ չափեցին, յանի էս խուժա՞նն ով ա, ի՞նչ գործ ունի մեր բարձրաշխարհիկ միջավայրում: Փաթաթած ունեմ ձեզ էլ, ձեր բարձրաշխարհիկ միջավայրն էլ: Հո պարտավոր չե՞մ կյանքս ամեն երկրորդին պատմեմ, արդարանամ իմ գրելու համար, համեստ կամ անհամեստ հավակնություններիս համար: Դե արի բացատրի, որ մենք էլ մարդ ենք, սուբլիմացվելու բնածին ու բնական իրավունք ունենք, դրա միջոցով մեր խնդիրները լուծելու իրավունք ունենք. շատ էլ թե Յունգը դրա հետ համաձայն չի, յանի թե մենակ սեփական կոմպլեքսներով արվեստ չես անի... Թե չէ՝ Յո՞ւնգն ինչ խեռս ա, կարծես ինքն ա ինձ պահել մեծացրել, ձմեռվա գազիս փողն էլ ինքն ա տալիս... Յունգը համաձայն չի, մեկ ուրիշը համաձայն ա: Հիմա ով ում տեսակետն ուզում ա, թող էն էլ ընդունի, կարևորը՝ գրածդ կարդացող լինի, իսկ եթե փող էլ բերի, շատ ավելի լավ: Ու սկի կարևոր էլ չի, որ տեքստում կարող ա հազար տեղ ինքդ քեզ հակասես, ասենք մեծամտորեն ասես ցանկություն չունեմ ոչ ոքի առաջ արդարանալու, բայց էջ ու կես արդարանաս: Հա, մարդ ենք, բա ի՞նչ, հատկապես տեքստում: Կարող ա՝ տեքստում Յունգին ասես՝ խեռս, բայց կյանքում եթե հանդիպեր, վազեիր ինքնագիր վերցնելու: Տեքստը մնացել ա միակ տեղը, որտեղ մարդը մարդ ա՝ հակասական, անսկզբունքային, անպարտաճանաչ, ծույլ, բոլորից զզվող, բոլորին ատող, բոլորին փաթաթած ունեցող նորմալ մարդը, որը տեքստից դուրս մի հատ չափած-ձևած, կարիերիստ, ռոմտնող, հանրօգուտ չաթլախ ա: Հա, տեքստը իմ իմացած միակ տեղն ա: Իմ գրականությունն էլ թող կոչվի ինքնարդարացման գրականություն: Հա ի՞նչ, թող ամեն հաջորդ տողը արդարանա նախորդ տողի համար, ամեն հաջորդ միտք՝ նախորդ մտքի... Կարևորը՝ հիմա ես պատրաստվում եմ մի հատ ծիծիկ պատմվածք գրեմ, որ մասնակցեմ մի հատ տափակ մրցույթի, որի մրցանակային ֆոնդը թույլ կտա աղջկաս երկու ամիս էլ մեծացնեմ: Եթե հաղթեմ իհարկե: Բայց ո՞նց գրեմ, սենց ներհայեցողական, խճճված ու բարդ ստորադասական նախադասություններով, որ ընթերցողի գլխից ծուխ

դուրս գա, որ նախադասության վերջին հասնելուց հետո մոռանա նախադասության սկիզբը ու մտածի՝ հլը մի րոպե, էս ի՞նչ ա գրում էս հիվանդը, էս ո՞նց որ թե դուրս ա տալիս ապուշ անասունը, կարո՞ղ ա գիտի, ես իրա ներվերն ու առողջությունն ունեմ… Թե՞ սենց հնարավորինս պարզ, թեթև հումորով, մեկումեջ քֆուրով, ավելի կյանքային, որ բարձրաճաշակ, մի շնչով Հեգել-մեգել հաղթահարած ընթերցողի վրա զզվանքից դուրս տա, որ մտածի՝ ո՞վ ա էս տգետը, ինչի՞ եմ ժամանակ ծախսում էս աղբը կարդալու վրա, ողբամ քեզ, հայոց աշխարհ, էս ո՞ւր հասանք, ու սրա պես տականքներն էլ հավակնում են գրողի կոչմանը: Էլ չասեմ, որ մի հատ էլ խրտնեն բովանդակությունից, յանի էս ինչ էժան բաների մասին ա գրում, ո՞նց կարելի ա լույսի վարձը դարձնել գրականության թեմա, ո՞նց կարելի ա սերը, հայրենիքը, ի՞նչ կար էլ, հա, հայրերն ու որդիները, պատմական դեմքերն ու երախտավորները, «երախտավոր» բառից խեռիս զահլեն գնում ա, վերջապես, Հայ առաքելական եկեղեցին թողած՝ լույսի վարձի մասին ինչ-որ բան գրել, ամեն երկրորդը բառը քֆուր ու դա կոչել գրականություն: Դեմը ձմեռ ա, այ չաթլախներ, ի՞նչ կլրիս սեր ու կամ երախտավոր… Բայց համ էլ խեռիս պե՞տք ա, նստեմ տեքստ գրեմ, որ ոչ ոք չի կարդալու, ոչ քրֆող ա լինելու, ոչ հավանող, ոչ բարձրաշխարհիկ, ոչ ցածրաշխարհիկ, մենակ մրցույթի մասնակցելու համար իմաստ ունի՞ տեքստ գրել… Ովքե՞ր են էդ տեքստի հնարավոր ընթերցողները. ժյուրին՝ մի քանի հոգի, էն էլ ոչ բոլորը, ու մրցույթի մյուս մասնակիցները, որ երևի միակ ուշադիր ընթերցողներն են, ովքեր հաշվելու են նիշերի, տողերի, տառասխալների ու քֆուրների քանակը, ֆիքսելու են տեքստից թեմատիկ անհամապատասխանությունն ու լիքը քոմենտներ են գրելու կեղծ անուններով: Էս ամեն տեսակ մրցույթների մասնակիցները բայց մի ուրիշ կերպարներ են: Նենց մի ակնածանքով են վերաբերվում սեփական ստեղծագործություններին, կարծես իրենք մենակ իկոնաներ են ստեղծում: Ինչ-որ հիվանդագին բան կա դրանց էդ տեսակ վերաբերմունքի մեջ, ու դրանից ա երևի, որ էդքան տարածված ա որևէ տեսակի ստեղծագործությունն անընդհատ երեխայի հետ համեմատելը: Մեկ էլ կլսես՝ իմ գրքերը, իմ նկարները, իմ չգիտեմ ինչերը կարծես իմ երեխաները լինեն և այլն: Գոգոլն իրա երեխուն վառեց, էշ քունողը: Տենց ա դուրս գալիս: Դե կասեն՝ դա գեղարվեստական ձևակերպում ա, բան, բայց դե ձունը կլրիս, էլի, դուք էլ վրեն, դուրսն էլ 42 աստիճան՝ ըստ Ցելսիուսի, էդ գեղարվեստական ձևակերպումները մարդիկ էնքան լուրջ են ընդունում, գնում մեռնում են դրանց երեսից: Հլը մի հատ հայրենիքին վերաբերող ու երբևէ օգտագործված գեղարվեստական ձևակերպումները հանեք, տեսեք տակն ի՞նչ կմնա… Էդ տակի մնացածի համար քանի՞սը կյանք կտան: Ի դեպ, առաջինը հենց «հայրենիք» բառը, որով էնքան գեղարվեստորեն անվանում ենք էն տեղը, որտեղ ծնվել-մեծացել ենք: Րաֆֆու «Խենթը» կարդում, գնում ֆիդայի էին դառնում, ու նենց չի, որ էդ մարդիկ մինչև էդ վեպը կարդալը լուր չունեին ու չգիտեին՝ ինչ ա կատարվում Արևմտյան Հայաստանում: Ամբողջ ռազմահայրենասիրական պրոպագանդան հիմնված ա գեղարվեստականի վրա: Բայց սենց էլ դուրս ա գալիս՝ մարդուն մինչև չբզես, մի լավ ռազմահայրենասիրական-գեղարվեստական կլիզմա չանես, իրար չի գա, իր անվտանգությանն սպառնացող վտանգը չի ընկալի, այ հենց վրեժի ու փառասիրության նուրբ լարերին կպնես, զենքը կառնի կվազի առաջին գիծ: Մի խոսքով՝ վրեժն ինքնին չափազանց գեղարվեստական բան ա, ու հերիք ա ընդամենը մի վրեժխնդրության պատմություն գրես՝ առանց պատումի ավելորդ պաթետիզմի ու գեղարվեստականության, ինքը կդառնա նորմալ գեղարվեստական գործ: Տենց

էլ կանեմ, թող հերոսիս 6 տարեկան երեխեն թոքաբորբից մեռնի, հերոսս էլ գժված, վրեժից կուրացած, էլեկտրացանցի տնօրենի մաման քունի, ասենք՝ տասներկու տեղից դանակահարի... Հա բա ի՞նչ, ձմեռվա կեսին լույսը անջատել ա, ու խեղճ տղեն ինչքան խնդրել ա՝ ժամանակ տուր, չի համաձայնվել... Երեխեն էլ հիվանդացել, մեռել ա... Հլը մի հատ էլ կաբինետում նվաստացրել ա, ասելով՝ այ փալաս, ամիսը 15000 դրամն ի՞նչ խեռս ա՝ չես կարում աշխատես, բա դու տղամա՞րդ ես, այ բոմժ... Կարո՞ղ ա, հանկարծ, էսօրվա աշխարհում էսքանը քիչ ա մարդ սպանելու համար... Տո աշխարհի մաման էլ քունեմ, Հայաստանում լրիվ հերիք ա: Ամեն դեպքում, թող էդ էլեկտրացանցի չաթլախ տնօրենը հերոսիս կնոջն ինչ-ինչ հանգամանքներում մի հատ էլ անբարոյական առաջարկություն արած լինի, ու հերոսս էլ իմանա... Մենց աչքիս տասներկու տեղից դանակահարելուց հետո, պիտի մի հատ էլ շռի դիակի վրա, որ սիրտը գոնե մի քիչ հովանա... Հա, հենց սենց մի բան էլ կգրեմ ու խեռիս, թե սերիալոտ սյուժե չի, փոխարենը՝ հա՛մ սոցիալական ա, հա՛մ ակտուալ, համ էլ պիտի որ կարգին հոգեցունց գործ ստացվի: Համենայն դեպս, ես տենց ականածանքով չեմ վերաբերվում իմ գրածներին, չի դառնա, խեռիս դառնա, չարժե էդքան լուրջ ընդունել էդ տեքստի ինչ դառնալը, ի վերջո կարող եմ նաև ընդհանրապես չգրել... Հիշեցի էն գեղարվեստի ակադեմիայի ուսանողների ցուցահանդես-փարթին, որ ինձ էլ լրիվ անկապ հրավիրել էին: Էն գյադու ամառանոցում իրանք իրանց համար ցուցահանդես էին կազմակերպել, որ հետո էլ թուլանան, բայց սկզբում էդ ի՞նչ պոզաներով էին գալիս, էդ ո՞նց էին իրանց երևակայում: Վախվորած, ամոթխած, նկարները զգուշորեն կախում էին պատերին՝ անսահման խնամքով ու հոգատար միմյանց ստեղծագործությունների նկատմամբ: Միջավայրն էնքան տխուր ռռային էր, որ ես ու իմ նման էլի երկու հոգի, որ գեղանկարչության հետ ոչ մի կապ չունեինք, մի կողմ քաշվեցինք ու սկսեցինք մանրից կարմիր գինի խմել: Մեկը ամառանոցի կայֆարիկ տերն էր, որ հետո պարզվեց՝ աղջիկներից մեկի ընկերն ա, մյուսը լուսանկարիչ էր՝ ապարատը միշտ պատրաստ վզից կախած: Նկարները կախեցին, գինու բաժակները վերցրեցին ու սկսեցին խոսել իբր նկարչությունից, իրականում՝ ամեն մեկն իրենից: Էս կայֆարիկը, որ ընկերուհու խնդրանքով համ էլ պիտի միջավայր ու տրամադրություն ապահովեր, էլ չհամբերեց ու միացրեց երաժշտությունը: Մի խոսքով, մի երկու ժամից բոլորը տժժում էին, ինչքան ուժ ունեին: Ու ոնց որ թե ոչ ոք չէր էլ հիշում, որ իրանց ուսանողական նկարները քննարկելու համար են հավաքվել: Կայֆարիկն իր դերի մեջ էր մտել ու ջրիկ խաղեր-մաղեր էր կազմակերպում՝ անմեղ շիշ պտտելուց մինչև գրազով տեքիլա խմելը: Բայց ամենաճակատագրականը դարթսն էր: Հարբած նկարչուհիներից մեկը երկար նշան բռնելուց հետո կլոր թիրախի փոխարեն նետը տնկցրեց հազար տոկոս Շիլեի տակ մնացած համակուրսեցու նկարի մեջտեղը՝ մկանուտ ու տառապագին դեմքով մերկ տղամարդու ուղիղ ձվերին: Ես ու կայֆարիկը մեխանիկորեն բռնեցինք մեր ձվերը՝ համարյա իրական ցավ զգալով, իսկ լուսանկարիչը իրան չկորցրեց ու տեղում ֆիքսեց էդ կադրը՝ տառապագին դեմքով տղամարդուն՝ նետը ձվերին տնկցրած: Նետահարողը վախից սփրթնեց, բայց մինչ կհասցներ ներողություն խնդրել կամ ինչ-որ ձևով մխիթարել կուրսեցուն, նկարի հեղինակ աղջիկը ծիծաղելով պատից հանեց նկարն ու որքան ուժ ուներ իջեցրեց աթոռի հենակին: Նկարը պատռվեց ու սկսվեճ: Նախ հերթով նետահարեցին բոլոր նկարները, հետո հանեցին ու սկսեցին պատառոտել՝ սենյակում տարբեր սուր անկյունների խփելով, միաժամանակ հռճվելով ու ուրախանալով իրենց արարքից: Կայֆարիկը, հա-

կույն զգալով տրամադրությունը, համապատասխան ռիթմիկ երաժշտություն դրեց ու սկսեց գոռգոռալով կողքից ոգևորել իրենց նկարները բարբարոսաբար ոչնչացնող կատաղած որձերին ու էգերին: Մենակ լուսանկարիչն էր անդադար նկարում: Դուրս եկավ՝ սրանք ընդամենն ուզում էին մի կարգին զվարճանալ: Երևի ճիշտն էլ հենց էդ էր, որովհետև միայն սրանց ստեղծագործությունների փչանալու գնով լուսանկարիչը հնարավորություն ստացավ ստեղծագործելու: Իսկ եթե լուսանկարիչն էլ հավեսի համար իր լուսանկարները վառեր, ի՞նչ կմնար, կամ կփոխվեր... Ես կգրեի պատահածի մասին: Իմ տեքստը չստացվեր, մեկ ուրիշը իմ տեքստն օրինակ կբերեր ու ստացված տեքստ կգրեր այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում չստացված տեքստը: Մի խոսքով, ստեղծագործությունն իրանից ոչ մի խեռս էլ չի ներկայացնում, որ դրա համար էդքան անհանգստանանք, ավելի կարևոր ա ստեղծագործողը, որովհետև եթե տեղի ունեցող կամ նույնիսկ չունեցող որևէ երևույթի մոտակայքում մի հատ ողջ-առողջ ստեղծագործող չլինի, ոչ մի քունած ստեղծագործություն էլ չի լինի՝ ո՛չ ստացված, ո՛չ էլ չստացված: Ինձ զցեմ տուն, մի բան շփեմ թղթին, ուղարկեմ էդ մրցույթին. ինչ լինում ա, թող լինի, գլուխս ցավաց: Այ, կոֆեն հաստատ կղզի: Հասար տուն, դիմացի, բան չմնաց: Տնեցիք էլ կակռազ տանը չեն: Բայց, մի րոպե, ինչ էլ շփեմ թղթին կամ ավելի կոնկրետ՝ մոնիտորին, մեկ ա, արժե հաշվի առնել շահելու հնարավորությունները: Ասում են՝ տարբեր ընկերություններ գովազդի խաթեր հովանավորում են մրցույթը, ու եթե առաջին տեղ էլ չբռնես, կարող ա պատահի՝ էդ հովանավոր ընկերություններից մեկնումեկի թանկարժեք մրցանակը շահես: Էլի վատ չի լինի՝ հարյուր, երկու հարյուր հազարանոց մի բան կպնի, ծախենք՝ յոլա գնանք, մինչև տեսնենք՝ գլխներիս ինչ ա գալիս: Բայց դե էդ քունած ընկերություններն էլ փաթաթած ունեն ստեղծագործությունն էլ, ստեղծագործողին էլ: Դրանք տեքստից ոչ մի գրական ակնկալիք չունեն. միակ պահանջը՝ տեքստում անդրադարձ լինի իրենց ընկերության ոլորտին կամ նույնիսկ ուղղակի գովազդ լինի: Վախ, բոզ ըլնի կկուն, կոֆես թափվեց: Լավ, դե, խեռիս, թե չթափվեց, հիմա մաքրող չկա, կարևորը՝ սկսեմ, կարևորը՝ մի բան շահեմ... Արա, բայց էս ինչքան շատ անկապ քֆուր եմ անում, իմ արև: Հա, բայց ի՞նչ անեմ, կամ պիտի առանց քֆուր մտածեմ, որը համարյա նույնն ա, թե ձեռուտ չունենամ, կամ հակառակը՝ պիտի հենց ավելի շատացնեմ ու շեշտեմ: Ես ընտրում եմ երկրորդը, բոզ ըլնեմ: Ուրեմն սենց, ամեն մարդ իրա դարդին, ինչպես ուռին ու բարդին, հովանավորների մաման էլ քունեմ:

«Հույս, հավատ, սեր» կոչվող ներկայացումը սկսվում է քնից արթնանալուն պես, և Վահրամը, որ արդեն չորրորդ ամիսն էր՝ անհույս աշխատանք էր փնտրում, հաստատակամ դիմացը դրեց Հայաստանի դեղին էջեր տեղեկատուն, վառեց սիգարետն ու սկսեց մատը սահեցնել տողերի վրայով՝ ժամանակ առ ժամանակ բարձրաձայն արտասանելով իրեն հատկապես դուր եկած ընկերությունների անվանումները.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն
«Հայբիզնեսբանկ» փակ բաժնետիրական ընկերություն
«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն
«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերություն
«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերություն
«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն
«Հավերժության ճանապարհ» սգո ծառայություն
...

Անձու, անձայն…

Մտքովս չէր անցել, որ իմ մեջ ապրում ա պոետը: Չէ, լուրջ: Էնքան անսպասելի բացահայտվեց էդ տաղանդս, որ հիմա անընդհատ հետադարձ հայացքով փորձում եմ ֆիքսել կոնկրետ պահը ու չեմ դադարում զարմանալ՝ ո՞նց կարող էր պատահել, որ մինչ այդ ոչ մի անգամ դրա մասին մտածած չլինենի, էդ անգամվա պես բանաստեղծելու անզուսպ ցանկություն ունեցած չլինեի: Թվում ա, թե առանձնապես պատճառ էլ չկար. ոչ ասենք շոկ էի ապրել, ոչ դեպրեսիայի մեջ էի, ոչ էլ նույնիսկ ավտովթարի ժամանակ հարվածի ուժից տեղիցս թռել, դիմապակին գլխով կոտրել ու լղոզվել էի ասֆալտին, որ կյանքի-մահվան սահմանին հանկարծ ցնցվեր իմ արդեն վաղուց կոշտուկապատ, կիրզե ներաշխարհին ու ստեղծագործ հյութերս դուրս հորդեին: Սովորականի պես համակարգչիս դեմը վեր ընկած՝ ինտերնետով միտինգ էի նայում, մեկ էլ անկախ ինձանից արտասանեցի. իմ կլիրը ջղաձիգ, հեննեմ ձեր տան պատին դիք… ու գնաց, էլ չկարողացա ինձ զսպեմ…

Ես հանում եմ պատյանից
Իմ կլիրը ջղաձիգ
Ուղղահայաց, ուղղաձիգ
Հուսահատ նետաձիգ
Ու շարժում եմ այն դանդաղ
Ջղագրգիռ, բայց դանդաղ
Ջղագրգիռ ու դանդաղ
Ու շարժում եմ
Ու շարժում եմ
Ջղագրգիռ, ջղաձիգ
Իմ կլիրը շատ դանդաղ
Թափ եմ տալիս աջուձախ
Թափ եմ տալիս հուսահատ
Թափ եմ տալիս ես անվախ
Հանդուգն ու դանդաղ
Ու դնում եմ այն պատյան,
Իմ կլիրը ջղաձիգ,
Անձու, անձայն
Նետաձիգ

Նետաձի՞գն ինչ կապ ունի: Եսիմ ի՞նչ կապ ունի, հանգը բռնում ա, հերիք ա: Ես պոե՞տ եմ, թե՞ գիտնական, որ բացատրեմ, թե որ բառն ինչի եմ գրել: Տենց եկավ, տենց գրեցի: Բացատրողը կբացատրի, կասի՝ ծերից ծեր ֆալիկ սիմվոլներ են, ծայրահեղ մասկուլինացված տեքստ ա, հետո կասի՝ բա վերջում ինչի՞ հանկարծ նետաձիգը անձու դարձավ, ուրեմն չբեր ա, ուրեմն քաղաքականապես ամուլ ա, ուրեմն էլ տղամարդ չի, ուրեմն… չգիտեմ էլ ինչ: Բայց էդ սաղ հեչ, էն, ինչ եղավ հետո, դա ավելի անսպասելի էր, քան էն, որ ես պոետ եմ: Ուրեմն երկնելուց անմիջապես հետո, պահի ոգևորությամբ ներշնչված՝ բռնեցի ու էս բանաստեղծությունս ուղարկեցի հնարավոր բոլոր կայքերին, յանի ով տպեց՝ տպեց: Կոնկրետ շեդևռ եմ գրել, հո չէ՞ի թողնի կորչի: Մի քանի օր ինձնից գոհ ման էի գալիս, օրը վեց անգամ պարտաճանաչ կերպով ստուգում էի էլեկտրոնային փոստս՝ սպասելով, որ ուր որ ա, նամակախեղդ

կլինեմ, և իրար հերթ չտալով ինձ կհայտնեն, որ՝ ձեր հրաշալի բանաստեղ-ծությունը տպագրել ենք մեր կայքում: Ես խոր շունչ կքաշեմ, շոյված ինքնասի-րությամբ իմ կեղծ հաշվից կմտնեմ կայք ու կսկսեմ հետևել կատաղությունից ռռները պատռող ընթերցողներին, բայց ուրբաթը, ինչպես ասում են, ավելի շուտ եկավ:

Պարզ եղանակ էր… Լավ, էդ գեղարվեստական մանրամասները մի կողմ, մուտքից դուրս եմ գալիս, որ շենքի դիմացի խանութից սիգարետ առնեմ, ու հենց մուտքի մոտ երկու հոգի թեփ կերած, տախտակ մեծացած պահարան, մտնում են թևերս: Մեկը բռնում է նաև գոտուցս, մեջքիս կողմից, ու էդպես ոտքերս գետնից կտրած, երկու քայլ են անում դեպի հենց մեր դիմաց բաց դռնով պատրաստ կայանած մեքենան ու ինձ ամբողջ մարմնով, պարկի պես նետում են սրահ: Դռները փակվում են, ու մեքենան շարժվում ա: Ինձ առ-անգելու ողջ գործողությունը տևում ա մի քանի վայրկյան: Բերանիցս միայն հասցրեց դուրս գալ՝ հոոպ, էս ի՞նչ… Ծնոտիցս անդուր խրթոց լսեցի ու էլ բան չեմ հիշում: Մի օր հետո ինձ գտել էին Թոխմախի գերեզմանատան պահակ-ները՝ կիսամեռ, դեմքս ուռած, ձվերս ջարդած: Հիմա լավ եմ, ոչինչ, երկու օր առաջ տուն վերադարձա, դեմքիս ուռածն անցել ա, բայց կապտուկները դեռ չեն վերացել: Տրամադրությունս էլ ոչինչ: Հատկապես բացում ա, երբ բաղնի-քում երգելիս լսում եմ ծվծվան ձայնս: Երևի Դեմիս Ռուսոսի ռեպերտուարից մի քանի երգ սովորեմ: Բայց ոչ մի կերպ չեմ կարողանում ներել ինձ իմ հիմ-նական սխալը: Չնայած բանաստեղծության տակ անվանս փոխարեն ստո-րագրել էի կեղծանունով, բայց նամակները կայքերին ուղարկել էի իմ իրա-կան անունը կրող էլեկտրոնային փոստից: Մի կողմից էլ մտածում եմ՝ եթե նույնիսկ կեղծ էլեկտրոնային փոստից ուղարկեի, էլի ցանկության դեպքում կիմանային: Պիտի պրոքսի փոխեի կամ գոնե տնից չուղարկեի: Հա, բայց ո՞վ կմտածեր: Իսկ ինչի՞ պիտի չմտածեիր, ա՛յ էշ: Հայաստանում նույնիսկ պոռնիկ-ներն են խիստ պահպանողական, հարցնում ես՝ ինչքա՞ն, պատասխանում են՝ 50 մանեթ, առանց մինետ, էլ ուր մնաց՝ քաղաքական գործիչները: Սպասի, բայց հետաքրքիր ա, ո՞ր կայքի տերերն էին հատկապես նեղվել էդ իմ բանաս-տեղծությունից, քաղաքական ո՞ր ուժին պատկանող: Տենց էլ մութ մնաց՝ ով-քե՞ր էին էդ հաստագլուխները: Իշխանական կլինեին, թե չէ, հո չի՞ կարող ընդ-դիմադիր ուժը գործել էն նույն մեթոդներով, ինչն ամեն օր դատապարտում ա հրապարակներում: Խույ, թե գլուխ կհանես մի խոսքով: Արա դե ասա, ո՞վ էր լեզվիցդ քաշում կամ ո՞վ էր ստիպում ուղարկես սաղ Էրևանին: Քո համար մի անկյուն քաշվի ու բանաստեղծիր, որքան սիրտդ ուզում ա, բայց ոչ ոք թող չիմանա: Կարևորը ոչ ոք չլսի ու չիմանա. անձու, անձայն… անձու, անձայն… Մարգարեական տողեր, հետո էլ ասում են՝ պոետ չես… Անձու, անձայն… Վեր-ջին վարիանտ, բարակ ձայնով…



Վահան Իշխանյան

ներկայացվող շարքս հրապարակելով՝ մի գաղտնիք եմ ուզում բացել. սա իմ առաջին չափածո գործը չէ. ուրեմն, «Բնագիր» և «Ինքնագիր» հանդեսների ծագման ժամանակաշրջանում հեղինակային բազմազանություն ստեղծելու համար մի քանի շարք հրապարակել եմ Ջաս Սուպերպոետ կեղծանունով:

էլեգիաներ կակղամորթի համար

խխունջ (1)

մենք խխունջներ ենք առանց խեցու,
երբ վախենում ենք սեղմվում ենք,
կծկվում այնտեղ, ուր չկա ապաստան

երբ պատյանդ կորցնես
կպաշտպանվես միայն կոպերով
իջացրու կոպերդ
որ
չնայես ոստիկանի աչքերին
նա քեզ կբռնի
չնայես գողականի աչքերին
նա քեզ կկոտրի
չնայես շան աչքերին
նա քեզ կհոշոտի
չնայես առաջնորդի աչքերին
նա քեզ կզոհաբերի
չնայես զինկոմի աչքերին
նա քեզ կզորակոչի
չնայես հիսուսի աչքերին
նա քեզ գեհենի կրակին փայ կանի
չնայես բժշկի աչքերին
նա քեզ հիվանդ կհանի
չնայես ադրբեջանցու աչքերին
նա քեզ կկացնահարի
չնայես ակտիվիստի աչքերին
նա քեզ ամոթանք կտա

չնայես հեռացածի աչքերին
նա քեզ չի ճանաչի

քո միակ զրահը
կոպերդ
կիջացնես

խխունջ (2)

ինձ դիակի հետ մի համեմատի
նայի
խխունջներ են մարմինս լիզում որդերի տեղակ
չե՞ս ուզում նայել
ես ի՞նչ իմանամ աչքերս փակ են
մնում է սպասել
սպասել
թե երբ ես գալու ու թաքուն բացես կոպերս
ու տակը տեսնես վախեցած գազան՝ ո՞նց է վնգստում
պատմել են նրան դիակի երազը՝
դագաղի մեջ փակել են նրան
որ խխունջները մոտիկ չգնան,
հանկարծ դուրս չգան խեցի-ապաստաններից
ու կակղամորթով չփայլեցնեն այդ անպատկանին
չդարձնեն հայելի ինքն իրեն նայող

խխունջ (3)

ի՞նչ անես, երբ դուռը կողպել ես վերջնական
բայց ուզում ես դուրս պրծնես տնից
կակղամորթ դառնաս,
բնակարանդ խեցի
սեղմվելով փափկորեն դուրս պրծնես խեցուդ դռան արանքից
ու սողաս, սողաս, սողաս
շենքերի ֆասադների ու ասֆալտի հատման անկյունագծով
զգույշ, պատերին քսվելով, որ հանկարծ ոտքի տակ չտրորվես,
սողաս, սողաս, սողաս
փողոցի բորդյուրի ու ասֆալտի հատման անկյունագծով
զգույշ բազալտին քսվելով, որ հանկարծ անիվների տակ չընկնես,
սողաս, սողաս, սողաս
մինչև հրապարակ
և երբ կծարավես, կսողաս ցայտաղբյուրն ի վեր
նախշերի մեջ սեղմվելով, որ չնկատվես
բայց, մեկ է, տռնելու ես ողբերգությունը,
երբ հպարտ քաղաքացին կտրորի քեզ ցայտաղբյուրի նախշի ելուստին,
ու դու կլղճվես մանուկ դեմոկրատիայի երկրում
և քեզնից կմնա միայն լորձահետքը արվարձանից հրապարակ ձգվող
և խեցին կարոտախտ

ավազի ժամացույց (խխունջ 4)

արյո՞ւնն է ցնցում, թե՞ ավազ է հոսում
որ ծակծկում է մարմինս ներսից
նրանն եմ դարձել
էլ ինձ չեմ ենթարկվում,
ներսից բզբզող հոսանքն է տանում
փռում է հատակին բնակարանիս
ու անշարժացնում
- ավազ է ավազ,- ասում է ալլան մատները պուլսիս
նա մասնագետն է թունելների միջով հոսող նյութերի,-
կակղամորթների հիվանդություն է
մի օր պարզվում է, որ նրանք մարդ չեն ու չունեն արյուն
ավազ է այնտեղ
եթե ելք չտաս, թույլ չտաս դուրս գա
քմսվելու է երակներիդ պատերին
ու կտաշվի այնքան ժամանակ
մինչև կդառնա ապակի
և պայթեցնելով մարմինդ
դուրս է պրծնելու....
այդպես կմնա քեզնից հիշատակ պայծառ մի խեցի
ուր անդրադարձնում են այցելուներին
պատերին խրված ապակե փայլակները

- հա, ճիշտ ես ասում, ավազ է ավազ
տես, ելք տվեցի
բացված մի երակ
- ըհը, հերիք է
- տես, ավազը ինչպես է լցվում
ու տարածվում է սենյակովս մեկ
սորում, սորում է
ու չի վերջանում
սորում, սորում է
մաշկս ծակծկվում է ներսից ու դրսից
ավազը տարածվում, տարածվում է
հատակ էլ չկա
խորտակվեց գնաց
ավազ է տակս
ու բարձրանում է,
լցվում է վրաս
դրսից ու ներսից մեղմ սեղմում, սեղմում
սեղմում ու քաշում իր ներսը
քաշում ու ծակծկում ներսից ու դրսից
տանում, տանում է այնտեղ
այնտեղ որտեղից ես դուրս եմ եկել
տանում հետ, հետ, հետ,
հետ
մինչև հայրենիք

լվացքատուն (խխունջ 5)

պարաններից հիմա դանակներ են կախված
դանակների ծայրին սապնաջրի կաթիլ
դանակների շեղբից նրանց դեմքերն են փայլում
սապնաջրի հայելում իմ դեմքերն են – կոպերն իջած
պարաններից հիմա խեցիներ են կախված

այն օվկիանոսով

նապաստակները թատրոն չեն գնում
աթոռները թափուր են մնում
դահլիճը դատարկ
բեմ է բարձրանում ինչ-որ արքայազն
ու արտասանում դատարկ դահլիճին
մենախոսություն՝ վրեժի,
կյանքի իմաստի և այլնի միասին
իսկ նապաստակները հավաքվում են
թատրոնի մուտքի մոտ
նավամատույցին
նստում նավակներ ու նավարկում են
խխունջների օվկիանոսով
և բարձրախոսները հաղորդում են դատարկ դահլիճում
նավակների ու խխունջների շփման ձայնը



Տաիշա Աբելար

Անաիիտն ու Սքոթլանդը
Կապույտ ճնճղուկների արահետում

Գիշերվա ժամը հազարն էր, որ Անաիիտի հևասպառ ձայնը քնիցս արթնացրեց:

– Որ իմանաս, թե ո՞ւմ եմ տեսել, է՛, մենակ իմանաս, կառավաթից կընկնես,– խոսափողի մեջ բարբաջում ա հազար տարվա ընկերուհիս, ու հազիվ եմ ինձ զսպում, որ խոսափողի տեղը տրուբկա չգրեմ:

– Սքոթլանդն ո՞վ ա,– կիսաքնած քրթմնջում եմ ու մտքիս մեջ չեմ էլ կարում, թե բան ասեմ, վասնզի, այլևս արթնացած եմ:

Սքոթլանդը, պարզվում է, ընկերուհուս նախկին յարն էր, ում հետ չէր ամուսնացել բարեկամների ինադու:

– Վարդուշը մթով մարդուն կոխել էր անկյուն ու վրա տվել, թե ինչքան վախտ պիտի ավելորդ բերան պահեն,– նույն պատմության ամենատարբեր վարիացիաները լսել եմ ողջ կյանքիս ընթացքում,– էն վախտ էլ մեր Էշը կար, ես էլ դրեցի ու մերոնց ինադու պսակվեցի Էշի հետ:

Պսակվեց Էշի հետ ու զույգ ոտով ընկավ քաքը: Անաիիտը: Ծիծիլիոն տարվա ընկերուհիս: Չնայած տենց էլ չհասկացա, թե երբ դարձանք ընկերուհի: Էն էլ ծիծիլիոն տարվա:

Էշը, ուրեմն, ռեժիմով ծեծում էր ընկերուհուս: Նա վսյակի սլուչայ: Որ իրեն հանգիստ պահեր: Փաստորեն, պարզվել էր, որ հանգիստ չի պահում: Քանի որ մի անգամ մուտքի մեջ ռաստվել էի, թե ոնց էր երկու ձուն ջարդել հարևան Սոփեստ տոտայի գլխին: Իսկ Սոփեստ տոտան բեզեմոտի նման կնիկ մըն էր, որ ապրում էր հայտնի չէ, թե ինչի համար: Մեկ փաստ, այդուհանդերձ, հայտնի էր: Սոփեստ տոտան ծնվել էր, որպեսզի բաժակով ականջ դներ հարևանների պատերին: Նա ամեն առիթի դեպքում հաճույքից մռլտացող դեմքով շեշտում էր, որ իրեն հայտնի է, թե որ հարևանը երբ է զուգարան գնում, և գնալուց էլ՝ ինչ կարգի կարիք հոգում: Այդ պրոցեսն անվերջանալի շղթա էր, որի սկզբին ծանոթացա, երբ վեց տարեկան էի:

– Ես Հեղուշի մեռնելն իմացա,– նույնպիսի հաճույքից շողացող դեմքը տպավորվել էր մեջս վեց տարեկանից սկսած, երբ հայտնի դարձավ, որ Անաիիտի մայրը վախճանվել է: Հոգին ավանդելուց առաջ Հեղուշը գոռացել էր, ու Սոփեստ տոտան, որ ննջում էր զույգ ականջները հարևանների պատին դեմ տված, անմիջապես հասկացել էր, որ Հեղուշի վերջը եկել է:

Այդպես Անաիիտը որբացավ ու մնաց հորեղբոր ու նրա կնիկ Վարդուշի հույսին, որոնց խոհանոցում կիտունված ամանեղենի բլուրները տարիներ շարունակ լվաց, մինչև դարձավ պարմանուհի ու հորիզոնում հայտնվեց Սքոթլանդը:

Սքոթլանդը պարզվեց՝ հայրենադարձ էր ու մեր պատվասեր ազգականների քիմքին ոչ հարիր: Էն տարիներին, իմացար, հայրենադարձ լինելը ճիշտ չէր, ու էդ հանգամանքը ծանր նստեց փխրուն ու բարալիկ Անաիիտի վրա,

որ մանուկ հասակում մարդ էր ճղում: Անահիտը, ուրեմն բոլորովին էլ Անահիտի չէր ձգում ու լրիվ լաչառ Սվետ էր: Նա մանուկ հասակում հանդգնել էր փայտից աթոռակը հագցնել օղորմածիկ Գենիկ տոտայի ծանրումեծ ոտքին էն բանից հետո, երբ բակային խաղերի ընթացքում Գենիկ տոտայի աղջիկը, որը պակաս լաչառ չէր, համարձակվել էր լաչառության գծով մրցավազքի մեջ մտնել Անահիտի հետ: Որի արդյունքում Անահիտը զգել էր Գենիկ տոտայի աղջկա բրդոտ գլուխը, չռփել երեսին ու անվանել փնթի խոզ, ինչի հետ, թերևս համաձայն էի, որովհետև Գենիկ տոտայի աղջիկը մեկ շաբաթ շարունակաբար կրում էր նույն մանր պուտիկներով, բաց կապտավուն երանգի շորը, որ կարել էր մայրը: Նա այնքան էր կապվել շորին, որ հագից չէր հանում, ու ով գիտի՝ այդպես էլ քնում էր: Համենայն դեպս, փաստ էր, որ երբ Անահիտը նրան անվանեց փնթի խոզ՝ մանր պուտիկներով, բաց կապտավուն շորը լրիվ կեղտոտվել էր գնդակի հետ ունեցած մեկշաբաթյա շփումից. գոռզագոռզը մեր սիրած խաղերից էր, իսկ բակը՝ ջրափոսերով լի:

– Փնթի խոզ,– անվանեց Անահիտը Գենիկ տոտայի աղջկան, ու նա հակադարձեց.

– Բա դու ի՞նչ ես, քրջո՛տ:

Ու հենց ստեղ ա, որ ասում են, թե այ էդ մի բանը չպետք էր ասել: Որովհետև քրջոտ բառի վրա Անահիտի ֆազերը ողջ ուժգնությամբ քցեցին:

– Ի՞նչ, քրջո՛տ, ախչի, հիմի ես քեզ ցույց կտամ քրջոտն ով ա,– գոռաց Անահիտն ու վրա պրծավ Գենիկ տոտայի աղջկան: Նա զույգ ձեռների մեջ առավ Գենիկ տոտայի աղջկա գլուխն ու սկսեց զգել նրա բրդոտ գանգատուփը: Ոչ մեկս չէինք համարձակվում միջամտել, միայն լուռ ու շունչներս պահած՝ ակնդետ նայում էինք, թե ոնց է Անահիտը ձևում Գենիկ տոտայի աղջկան: Կարծում եմ, որ համաձայն էի երկուսի հետ, այդ պատճառով էլ չմիջամտեցի: Որովհետև Անահիտը ճիշտ էր. Գենիկ տոտայի աղջկա շորերը կեղտոտ էին: Որովհետև Գենիկ տոտայի աղջիկը նույնպես ճիշտ էր. Անահիտի շորերի տակը անհավասար կտրված էր, ու եթե էսօր նման տեսակի կտրվածքները մոդայիկ և «սծիլնի» կարող են լինել, էն տարիներին համարվում էր ամոթալի:

Անահիտը մի լավ զգեց Գենիկ տոտայի աղջկան, և նա լաց լինելով գնաց տուն: Դրանից հետո՝ ողջ մուտքը լարված սպասում էր, թե ինչ է լինելու պատմության վերջը: Մենք տեսանք, թե ոնց Գենիկ տոտան ծանր-ծանր բարձրացավ վերև՝ Անահիտի հախից գալու համար. էդ ժամանակ արդեն Հեղուշը մահացել էր, ու Անահիտը՝ փոքր եղբոր հետ ապրում էր չորրորդ ռանգի մի բարեկամի հետ:

Մուտքի երեխեքով շունչներս պահած սպասում էինք, երբ Գենիկ տոտան՝ ոտքը կաղալով իջավ ցած: Պարզվեց Անահիտը թռել էր Գենիկ տոտայի դեմքին ու ձեռքն ընկած աթոռը շպրտել ոտքին:

– Ամա՛ն, լաչա՛ռ ա, լիրբ մերն ա, որ կա,– ձեն ձենի տվին հարևանները, որոնցից մեկի, ավելի կոնկրետ՝ Սոփեստ տոտայի գլխին տարիներ հետո Անահիտը կոտրեց մեկ զույգ ձու:

***

Նրա մայրը պոռնիկ էր: Ծեր, մեռած կնոջ հետևից հեշտ էր բամբասել: Սոփեստ տոտան տեսել էր սակայն: Սեփական աչքերով: Գազոն տնից դուրս գալուց քամակին մի հատ շրխկացրեց: Աչքովս եմ տեսել: Ծեր, տռզած արևը վկա: Եվ ո՞ւմ գործն էր բայց: Այդ նույն Սոփեստ տոտայի ավագ դուստրը՝ օրը ցերեկով կզում էր ընկերուհու ամուսնու դեմքից ուղիղ մեկ մետր ներքևի հատվածում: Մինչև Սոփեստ տոտան էդ ընթացքում կլուծեր հայրիկիս հար-

ցերը: Ասում են՝ աչքը գցել էր հայրիկիս պլորներին: Տեսնող է եղել: Աչքերը թունդ շողում էին: Երբ պատմում էր: Իմ ներկայությամբ: Հետո իմացա. հայրիկիս մասին էր:

Ծեր, մեռած կինը մահից առաջ ուռել էր: Բառի ուղիղ իմաստով: Մարմինը դարձել էր ուռած լեշ: Ծեր ուռած լեշը ժամանակին շինվում էր բաղի միջին՝ ուրիշ մարդու հետ: Սեփական մարդուն սիկտիր էր արել ու լավ էր արել էր: Ո՞վ էր մեղավոր: Որ կյանքն էդպիսին է: Ծեր, տռզած արև: Պոռնիկից լավ էլ աղջիկ էր ծնվել: Որի բախտը խիստ չբերեց: Մանուկ հասակում մարդ էր ճղում ու ճիշտ էլ անում էր: Ծե՛ր, տռզած արև: Ծեր տռզած արևն ինձ կայֆ էր տվել ու բոլոր զգայարաններս անջատել էի: Թե չէ՝ կմեռնեի: Բայց ես պետք եմ դեռ: Ինչ-որ մարդկանց: Ասում են, թե դուխ եմ տալիս: Ետ տվեք իմ դուխիները: Չեմ տա ոչ ոքի: Ես դրանց կարիքն ունեմ: Իմն են, իմը:

Անահիտը որբացավ: Երբ ծեր պոռնիկը հոգին ավանդեց: Ինքս՛ն եմ սիրում «պոռնիկ» բառը: Նրա մայրը պոռնիկ չէր: Ուղղակի հայրն էր տկար տղամարդ: Ծեր լոյլող մի ստվեր: Միայն խմում էր: Մեջն էլ հոգի չկար: Ծեր տռզած լեշն էլ, երբ լեշ չէր տակավին, արև էր ճառագում ու դեմն առնելու համար տղամարդ էր պետք: Խոշոր տղամարդ: Որտեղի՞ց գտներ խոշոր տղամարդ: Խաբուսիկ կյանք է: Ծե՛ր, տռզած արև: Տռզած նստել է: Ալարում է շարժվել:

Ցանկանում էի քնել, սակայն չէր ստացվում: Կարելի էր մեռնել: Բայց ասում են, ինչ-որ մարդկանց պետք եմ: Ինձ մեծ գործեր են սպասում: Կոմունիհ: Փոքր ժամանակ լավ դաս էի սերտում: Բայց թարսի պես միննակ էս խոսքերը մնացին: Թե չէ կհիշեի նաև Մարատի մահը: Ես հեղափոխական չեմ: Թողեք իմ դարդով տապակվեմ: Գնացեք, դարձեք թնդանոթի միս: Ես վաղուց դարձել եմ: Եվ թող չպարծենա ինչ-որ մեկը, թե պրծնելու է: Մենք բոլորս վանդակում ենք: Ծեր տռզած արևի տակ ու կանաչ խոտերի վրա:

***

Անահիտին առաջին անգամ հիշում եմ, երբ գնացինք ուխտի: Չէ: Դրանից առաջ էլ հիշողություններիս մեջ կար: Գենիկ տոտայի աղջկա բրդոտ գլուխը դրանից առաջ էր զգել, իսկ սույն անցքից առաջ էլ մայրն էր մահացել: Ծեր տռզած լեշը: Որը լավ էլ տռուզ էր ու լեշի հետ կապ չուներ: Հետո լեշ դարձավ: Երբ պառկեց դագաղի մեջ: Ուռած լեշ: Ծեր, տռզած պոռնիկ:

Նա միջահասակ, մանր-մունր կազմվածքով բարակիրան աղջիկ մըն էր, որի օրգանիզմը տարիներ հետո սկսեց թարախ արտադրել: Ձախ կրծքից մոտ 4 սմ վերև գտնվող հատվածից: Մինչ այդ շարքից դուրս էին եկել արդեն երիկամները, սիրտը միշտ էլ ծակում էր, դաշտանի հետ խնդիր ուներ, որից տարատեսակ ուռուցքներ էին ձևավորվում օրգանիզմի տարբեր հատվածներում, ձախ այտամկանը ժամանակ առ ժամանակ այտուցվում էր, ոտքերը՝ ուռում, բայց զավեշտն այն էր, որ մեջքին շալակած մի պարկ հիվանդություններն անցքին չէր. էդ օրգանիզմով չորս երեխա էր ծնել: Էշից: Որը ռեժիմով ծեծում էր նրան, որ հանգիստ պահի: Թեպետ չէր պահում: Ու ճիշտ էլ անում էր: Նման որակի էշին հասնում էր: Որ վրից թռներ: Չգիտեմ: Չգիտեմ: Մի օր շենքը պայթել էր աղմուկից, որ Անահիտը էշին դավաճանում է: Ընկերոջ անկողնում: Էշի ընկերոջ: Էդ տարին էստեղ չէի: Եկա՝ իմացա: Սոփեստ տոտայից, որի գլխին դրանից քանի մը տարի առաջ ջարդեց մեկ զույգ ձու:

***

Երբ Անահիտը գնաց մեր շենքից, դեռ երեխա էի: Լավ հիշում եմ դպրոցի

բակում մեր հրաժեշտը: Հագին դպրոցական ֆորմա էր: Շագանակագույն զգեստով ու սպիտակ, փոռիկավոր գոգնոց: Ոտքերին խոշոր սպորտային կոշիկներ էին: Արտասահմանյան արտադրության: Նա միշտ էլ լավ էր հագնվում: Թեպետ այն շորի տակերը, որի պատճառով Գենիկ տոտայի աղջիկը մի լավ ծեծ կերավ, անհավասար կտրտված էին:

– Ես մեր դպրոցից գնում եմ,– կոտրված հայացքով ասաց Անահիտն, ու դրանից սիրտս ճմլվեց:

Նրան սիրում էի: Փխրուն ու բարալիկ մարմնով Անահիտին: Նա լավ աղջիկ էր, սրտամոտ ընկեր: Հոգին թևածում էր հողերից վերև: Ինքն ի՞նչ մեղավոր էր, որ կյանքը բեմ է, ուր իր դերը ինքը չէր ընտրել:

– Բա ո՞ւր ես գնում,– հարցրի տխրոտիկ:

– Հոպարենցս տուն, էլ ստեղ չենք կարա մնանք, էնտեղի դպրոցն էլ կգնամ,– կարճ կապեց Անահիտը, ու էդպես էլ բաժանվեցինք:

Նրանց չորրորդ ռանգի բարեկամը, որ մոր մահից հետո եկել ու խնամում էր անչափահաս որբուկներին, ասել էր, որ այլևս չի կարող հանդուրժել Անահիտի անհնազանդությունն ու գնում է յուր ճանապարհով: Ու գնաց: Որից հետո Անահիտն ու եղբայրը կորան իմ տեսադաշտից ու երկար տարիներ այլևս չհայտնվեցին: Եղբայրը մեզանից շատ մեծ էր ու հետը կապված ոչ մի հիշողություն չունեմ, իսկ քույրը, թեպետ` լաչառ, բայց լավ լաչառ էր: Դեմքի վրա շարված մեկ զույգ խաղացկուն աչքերով: Դրանց խաղը նկատեցի այն օրը, երբ միասին գնացինք ուխտի:

Հայրիկիս ավտոբուսով էինք: Տատիս հարևանությանը տանում էր ուխտի` դեպի Հայաստանի հեռու հեռավոր սրբատեղիներից մեկը: Նրան տեսնելով` շատ ուրախացա: Պարզվեց` նրա հորեղբայրը տատիս հարևանն է: Դպրոցի բակի մեր բաժանումից անցել էր մոտ երկու տարի: Այս անգամ տրտում չէր: Աչքերը խաղում էին սպիտակ, դուրեկան ու ժպտուն դեմքին:

– Ո՞նց ես, Անո,– ուրախ-ուրախ ժպտացի ու ողջագուրվեցինք: Դեռ էն ժամանակից ձանձրանում էի: Լիքը մարդկանց մեջ: Անահիտի ձեռքին Իրվինգ Սթոուն կար: Միքելանջելոյի կյանքը: Էդ ժամանակ, կարծես վեցերորդ դասարան էի: Առաջին անգամ կարդացի արվեստագետի կյանքը: Մենք նստած էինք իրարից հեռու նստարաններին, ու ձեռքից վերցրել էի գիրքը: Ամբողջ ճանապարհին միայն կարդում էի: Հընթացս հայացքներ գցում նրա բարալիկ գոյության ուղղությամբ ու նկատում, որ աչքերը դեմքի վրա խաղում են: Պարզվեց` ավտոբուսի մեջ մեր տարիքի տղա կար: Որին անցքիս տեղ չէի դրել: Փոխարենը նա տանձի տեղ էր դրել Անահիտին, ու մինչ ես տարված էի Միքելանջելոյի կյանքով, նրանք սիրաբանում էին: Հայրիկիս զգոն հայացքի հսկողության տակ:

– Մեկ էլ չտեսնեմ էդ պոռնիկ չաթլախի հետ ընկերություն անես,– ուխտից գալուց հետո հայրիկս ճառ կարդաց գլխիս ու արգելեց այլևս շփվել նրա հետ: Թեպետ առիթ էլ չկար:

Պոռնիկ չաթլախ որակումը, այդուհանդերձ, ինձ ամենևին դուր չեկավ, թեպետ հայրիկիս չէի կարող չհնազանդվել: Ու էն տարիներից էլ մեջս բուն դրեց ըմբոստը: Փխրուն, բարակիրան ու նրբամաշկ Անահիտն ինձ դուր էր գալիս: Սակայն, երբ հայրիկս արգելեց պոռնիկ չաթլախի հետ շփվել, հաջորդ ուխտի ընթացքում աշխատում էի հեռու մնալ նրանից, թեպետ մեզ հասակակից այն տղան չկար: Մենակ էինք: Ու ինքն էլ անընդհատ գալիս-կպչում էր: Ես էլ անկապ պատճառաբանություններով հրաժարվում էի: Բայց թույլ տեղս գտել էր:

– Բարև՛, անսահմանությո՛ւն,– նախորդ ուխտի ժամանակ գոռացել էի սարի

գագաթից դեպի ներքև ձգվող ծաղկապատ հորիզոնը, ու անսահմանությունը բարևել էր գիս:

– Արի գնանք սարի գագաթից գոռանք՝ բարև, անսահմանություն,– ասաց նա, ու համոզվեցի:

Միասին չափչփեցինք քաչալ սարերը, չորեքթաթ հասանք մոտակա լեռան գագաթն ու էնտեղից բարևեցինք անսահմանությանը: Կանգնեցինք վերևում ու մանկական աչուկներս սիրեցին դեպի անծայրածիր հորիզոնը տանող համայնապատկերը, շնչեցինք լեռնային մաքուր օդն ու զիլ ձայնով ծիծաղեցինք. դեռ չգիտեինք, թե կյանքն ինչ խութեր էր պատրաստել մեզ համար:

Մի բոլ բարևեցինք անսահմանությանն ու փութով հետ վերադարձանք: Բարեբախտաբար, մեր անհետացումը ոչ ոք չէր նկատել: Մանավանդ հայրիկս: Որ խստիվ արգելել էր շփվել պոռնիկ չաթլախի հետ:

Պոռնիկ չաթլախը, սակայն, բոլորովին էլ պոռնիկ չէր: Առավել ևս՝ չաթլախ: Նա շատ շուտով հասկացավ մասսայի ուժն ու ուզեր, թե չուզեր՝ պիտի ենթարկվեր: Չէր կամենում ենթարկվել միայն Էշին, որովհետև էշը Էշ էր: Կատարյալ խոտակեր: Էշը արյունարբու մարդասպանի աչքեր ուներ ու անասնական հայացք, որի մեջ մարդկայինը տգույն մաս էր՝ բնազդների ճնշման ազդեցության տակ: Նա Անահիտից մեծ էր կլոր 12 տարի ու երբ նրան առաջին անգամ տեսել էր՝ ընկերուհիս ընդամենը 15 տարեկան էր: Սիրտն անթեղված Սքոթլանդի անշեջ սիրով: Նա մոտեցել էր թռվռան ու անհոգ ընկերուհուս, նայել աչքերի մեջն ու ասել, որ քնելու է հետը:

– Քո աղջիկությունն ինձ ես տալու,– հուզմունքից վետվետացող կրծքով ասել էր Էշն ու խոսքի տերը եղել: Իսկ լսածից սարսափած մանուկ Անահիտը թունդ վախեցել էր Էշից ու իրեն գցել Սքոթլանդի սիրազեղ գիրկը: Որտեղից դուրս էր հանել պատվասեր ազգականների ու մասսայի զորեղ ճնշումը:

Սքոթլանդը հայրենադարձ էր ու պետք է գնար երազի երկիր: Մտքին դրել էր՝ Անահիտին էլ հետը տանել: Աղմուկ էր բարձրացել ընկերուհուս հսկայական գերդաստանում:

– Բա մեր կեղտոտ ամաններն ո՞վ պիտի լվա,– վրա էր տվել հորեղբոր աղջիկ վիուկ Սվետը, որն ավելի շատ կախարդի էր նման, քան՝ վհուկի:

Անահիտը տասը տարեկանում հայտնվելով հորեղբոր տանը՝ դարձել էր աղախին յուր հորեղբոր աղջիկների և տան հյուրերի համար: Նա օրնիբուն մաքրում էր տան ծակուծուկերը, լվանում 15-հոգանոց գերդաստանի կեղտոտած պնակների բլրակույտերն ու հարդարում կախարդ Սվետի մազերը: Կախարդ Սվետը փչացած ատամներ ուներ ու գռեհիկ շարժուձև: Նա օրը ցերեկով՝ բոլորի աչքի առաջ տռռում ու պահանջում էր, որ օդը հոտոտեն: Բարալիկ ու փխրուն Անահիտին դա դուր չէր գալիս, բայց լաց չէր լինում, որովհետև աննկուն կամք ուներ ու սրտի լարերի խաղին հետևելու ցանկություն:

Հորեղբայրը դեմ էր եղել Սքոթլանդին, պատճառաբանելով, որ Ամերիկան հեռու է Հայաստանից, ու իրենք չեն կարող օգնել նրան, եթե պարզվի, որ այդ Սքոթլանդը անպիտանի մեկն է, ինչի համար նրանց ունեցած հիմքը այն էր, որ նա հայրենադարձ է: Հայրենադարձների ու հայաստանցիների դիմագծերի միջև ակնհայտ տարբերություն կար, որը դուր չէր եկել կախարդ Սվետին: Սքոթլանդը, սակայն, առնական կեցվածքով, գեղեցկադեմ ու խոստումնալից երիտասարդ էր: Ու ով գիտի, թե կախարդ Սվետը, հորեղբոր կինն ու հսկա գերդաստանի մնացած անդամները չէին նախանձել փխրուն, բարակիրան Անահիտի բախտին ու քար չէին գցել ճանապարհին: Կախարդ Սվետի մտքում, հավանաբար, չէր տեղավորվել միտքը, որ իրենց տան քոծը Ամերիկայում կարող է արքայադուստր դառնալ:

– Մենք մեր աղջկան չենք տա էդ ախպարի ճտին,– ձեռքը սեղանին զարկելով տռել էր կախարդ Սվետն ու Սքոթլանդի հետ ապագան կապելու հարցը փակել:
Հորեղբայրը, որ Անահիտին շատ էր սիրում, մի կողմ էր կանչել բարակիրան պարմանուհուն ու բացատրական աշխատանքներ տարել հետը:
– Էնի քեզ հարմար չի,– ասել էր,– մեր ցեղին չի սազի: Էնի ախպար ա, դու՝ տեղացի: Համ էլ, ով գիտի՝ քեզ ֆռռցնում ա, էդ ախպարների մտքինը ոչ մեկ չգիտի, անունիդ հետ ա խաղում, գիտի, որ անտեր, որբ աղջիկ ես, ուզում ա պատվազուրկ անի: Բայց մեծ թիքեն ականջը կտենա:
– Ինքն ինձ սիրում ա,– գոցգոցուն սրտով առարկել էր Անահիտը:
– Դու հլը փոքր ես, որ հասկանաս: Սեր չկա: Դրանք հեքիաթներ են ու չգիտեմ, որ քամին ա լցրել գլխումդ: Արի դու մեր Գոմշակերանց Լյովին առ, լավ տղա ա, մեծ ա ու արդեն՝ նստած: Էնի գիտի կյանքի դադրն ու գլխի մեջ քամիներ չեն վզզվում, ոնց որ քո Սաքի գլխում:
– Հա՛, բա ո՛նց, մեր Գոմշակերանց Լյովը իսկը Անոյի բանն ա,– անպոչ գդալի պես խոսակցության մեջն էր ընկել կախարդ Սվետն ու տեղում մի հատ գմփցրել:
– Էտի ինձնից 12 տարի մեծ ա, եքա մարդ ա ու աչքերն էլ դուրս չեն գալիս,– հեկեկացել էր Անահիտն ու վազել Սքոթլանդի մոտ:
Աղջիկն անհանգիստ հոգի ուներ և սիրո ծարավ սիրտ: Նա Սքոթլանդի մոտ դատարկել էր խոսակցության մանրամասները, սակայն տղան նոր էր ավարտում դպրոցը: Տասն և յոթ տարեկան էր: Դեռ չգիտեր անելիքը: Բայց սիրածի համար պահն օրհասական էր: Անահիտը սեղմվել էր Սքոթլանդին, ձեռքերով պարուրել նրա սիրտն ու շշնջացել, որ իրենից է կախված յուր ապագան: Նրա գիտակցության մեջ մեխվել էր Գոմշակերանց Լյովի արյունարբու աչքերը, որ նրան տեսնելուն պես գոմռացել էր յուր ազապությունն առնելու մասին կեղտոտ մտքերի ուղղությամբ:
– Մերոնք ինձ պսակում են Գոմշակերանց Լյովի հետ,– շշնջացել էր փխրուն աղջիկն ու սեղմվել սիրածին: Նրանք թեթևակի համբուրվել էին, որի բույրից Անահիտի մարմինն սկսել էր անկանոն շարժվել: Աղջկա կոնքամիջյան կոկոնը թեթևակի թրթռացել էր ու անգիտակցաբար զարկվել տղայի եղած-չեղածին: Անահիտը նայել էր Սքոթլանդի նվաղած աչքերի մեջ ու սրտի խորքում երազել՝ հենց էնտեղ տրվել նրան: Միայն թե չիրականանան Գոմշակերանց Լյովի մռայլ կանխատեսումները:
Սքոթլանդը վարանել էր: Նա չէր կարող որոշում ընդունել, քանի որ նոր էր ավարտում դպրոցը: Անահիտն էլ անչափահաս էր, դեռևս 15 տարեկան:
– Մենք Ամերիկա ենք գնալու, մամաս արդեն էնտեղ ա, դակումենտներն ենք դզում, որ մյուս տարի գնանք,– միայն ասել էր Սքոթլանդը:
Նրա հայրը խստաշունչ մարդ էր ու դեմ՝ տղայի վաղաժամ ամուսնությանը: Սակայն Գոմշակերանց Լյովը՝ բարակիրան Անահիտի կուսաթաղանթը գազանաբար պատառոտելու դավադիր մտքերով, կանգնած էր սիրասուն զույգի առաջ ու երկընտրանքի հնարավորություն չկար: Սքոթլանդը պիտի փախցներ Անահիտին: Ուրիշ ճար չկար:
– Ես չեմ թողնի, որ քեզ զցեն Գոմշակերանց Լյովի արյունարբու ճանկերը: Մենք միասին կփախչենք:
– Դեպի անսահմանություն,– հրճվել էր Անահիտն ու թեթևացած սրտով վազել տուն:
– Լյոխ էր սիրածդ,– տարիներ հետո ասելու էր Անահիտի Յարը: Այն նույն

Յարը, որի անկողնում իբրև բռնել էին այլևս չորս երեխայի մայր Անահիտին այն բանից հետո, երբ Սքոթլանդը չէր կարողացել խոսքի տերը լինել, երբ Գոմշակերանց Լյովը հարսի քողը քաշելով փխրուն Անահիտի գլխին, տարել էր հորանց տուն ու թռել խեղճի վրա, երբ ծվատելով նրա կուսաթաղանթը՝ արնոտ պռոշներով հաղթանակած գոչել էր. «Տեսա՞ր, որ խոսքիս տերը եղա», երբ հուսահատված Սքոթլանդին սպասելու անպտուղ նկրտումներից՝ մութ անկյունում ռաստ էր եկել հորեղբոր ու նրա կնոջ խոսակցությանը, երբ կինը գոռացել էր ամուսնու վրա.

– Ինչքա՞ն պիտի ավելորդ բերան պահենք:

***

Փխրուն Անահիտը Էշի հետ բավական երկար ձգեց. կլոր 10 տարի, որի ընթացքում Էշը կնոջը ստիպում էր, որ յուր միջնորդությամբ երեխաներ ծնի: Կարծում էր՝ դրանով հավիտյանս կապելու է Անահիտի ոտքը մի տանը, որտեղ տնփեսա էր ու չսիրված հարսն, որի վրա գրանցվել էր բոլորից թաքուն՝ հույսով, որ մի օր լինելու է տան իրական տերը, որտեղ ամեն Աստծո օր տուրուդմփոց էր ու որտեղից մի օր վերջնականապես սիկտիր արեց կինն այն բանից հետո, երբ Էշը փորձեց իրեն Եզի տեղ դնել, երբ մի օր վերջապես հատնեց կնոջ համբերությունը, ու լցվեցին բոլոր բաժակները:

Հենց այդ օրն էլ Անահիտը երկու ձուն ջարդել էր Սոփեստ տոտայի արդեն սակավամազ գլխին: Ասում են, որ նրա մազերը թափվել էր այն հևակտուր տքոցների դարդից, որ լսվում էր նոր եկած պատկից հարևանի տանից. նրանք երիտասարդ ամուսիններ էին ու ողջ գիշեր անզուսպ սիրում էին զմիմյանս:

Անցքը, ուրեմն, կարևոր չէր: Թեպետ կարող եմ կարևորել: Հնարավոր է, որ հենց լափ էլ կարևոր էր: Որովհետև հենց դրա արդյունքում փոխվեց արդեն հաստացած մարմնով Անահիտի կյանքը: Գոմշակերանց Լյովը կատաղել էր: Ինչպես միշտ: Պատճա՞ռ: Ինչքան ասես: Նա կարող էր կնոջը պատվիրել, որ նստի աջ ոտքը ձախին գցած ու հաջորդ պահին ծեծել՝ պատրվակով, թե ինչու չի նստել ձախը՝ աջին գցած:

Եվ, ուրեմն, Գոմշակերանց Լյովը թունդ կատաղել էր: Նրա բացակայությամբ հաճախակի էին դառնում յուր մտերիմ Ընկերոջ այցելությունները, որին ինքն անձամբ պատվիրել ու պահանջել էր, որ իր բացակայությամբ կնոջը շուտ-շուտ տեսության գա, հատկապես այն օրերին, երբ երկար ժամանակով գործուղման մեջ էր. կասկածի որդը կրծում էր սիրտն մտահոգությունից, թե ինչով է զբաղված կինը: Մի անգամ տանը սկանդալ էր սարքել, թե ինչու Ընկերոջ այցելության ժամանակ խոհանոցից դուրս չի գալիս ու չի միանում Օզոնի շերտի ճաքի մասին իրենց աշխարհային քննարկումներին:

Հերթական անգամ վերադառնալով ու Ընկերոջը տանը տեսնելով՝ նրա գնալուց հետո տեսարան էր սարքել, թե այդ ինչ պատճառով է նա այդքան հաճախ այցի գալիս, ու, դանակն առած, ընկել էր կնոջ հետևը:

– Դե սիկտիր, բոզի տղա, դո՞ւ չես ասել, որ Գուգոյին լավ ընդունեմ,– հերթական անգամ չէր պարտկվել Անահիտն ու խելապատառ արագությամբ վազել դեպի մուտքի դուռը: Այդ ընթացքում արդեն Մուտքը՝ նախագահ Սոփեստ տոտայի գլխավորությամբ, գումարել էր արտահերթ նստաշրջանը: Օրակարգում Էշի հարցն էր: Անահիտը դուռը բացեց այն ժամանակ, երբ Սոփեստ տոտան սանդղահարթակի վրա ճամարտակում էր առ՝ Մուտքում գործող կանոնները չհարգելու Էշի վարքը, ու երբ Էշը լսեց, որ յուր անձը քննարկման առարկա է, հայհոյեց նրան, իսկ Անահիտը՝ ճանկելով այդ պահին պատահաբար վերև

բարձրացող ութնամյա Արմուշիկի ձեռքի տոպրակը, թափով հագցրեց Սոփեստ տոտայի գլխին, որի հետևանքով նրա սակավամազ ճակատից ներքև հոսեց տոպրակում եղած երկու ձվի ջրիկ դեղնուցը:

– Դմակ ունես՝ ռռդ փակլի,– շան ծեծ կերած ու համբերությունը հատած գոռաց Անահիտը,– տես ինչեր են խոսում աղջկադ մասին, հանգիստ թող իմ ընտանիքը:

Դրանից հետո նստաշրջանը շարունակվեց Սոփեստ տոտայենց տանը: Ծանր գիշեր էր: Շատ ծանր: Բոլորս շունչներս պահած՝ սպասում էինք: Թե ինչով կվերջանար Սոփեստ տոտայի ու Էշի կռիվը: Ծեր կինը հաշվի էր կանչել Էշին ու որոշել Մուտքում գործող օրենքի ողջ ուժով նրան պատասխանատվության ենթարկել:

– Տո դու ո՞վ ես, որ իմ մասին տենց խոսաս,– մինչև ութերորդ հարկ լսվում էր Էշի գոռոցը, ու Մուտքը դղրդում էր նրա ահարկու ձայնից:

Այդ ընթացքում Անահիտն ապսպրել էր կանչել կողքի մուտքի էլեկտրիկին ու խնդրել, որ դռան կողպեքը փոխի, ինչն էլ նա արել էր մեծագույն հաճույքով՝ գլխի ընկնելով պատճառը:

Էշն ու Սոփեստ տոտան այդպես էլ չէին կարողացել ընդհանուր հայտարարի գալ, որին հասնելու երկարատև ու անպտուղ փորձերից հետո, երբ Գոմշակերանց Լյովը փորձել էր բացել մտքում իր սեփականը որակած տան դուռը՝ կանգնել էր փաստի առաջ: Անահիտը փոխել էր տան կողպեքն ու իրեն դատապարտել երկարատև մեկուսացման: Որովհետև, երբ Սոփեստ տոտայենց տանը շարունակված նստաշրջանին հաջորդած երրորդ ռաունդ սկանդալից հետո պարզ էր դարձել Անահիտի որոշումը, Մուտքը գումարել էր արտակարգ նստաշրջան ու խոոգի եկել. «խի մերը լա՛վն ա, որ յոլա ենք տանում, մարդ ա, էլի, մի օր կծեծի, մի օր՝ կսիրի, էն 4 էրեխուն ումո՞վ ա պահելու: Ամա՛ն, պոռնիկ ա: Ես էլ ասըմ եմ, թե էն տղեն խի ա սաղ օրը դրանց տունը տնկված: Պոռնիկ մոր պտուղն ա: Ծե՛ր, տռզած պոռնիկ»:

Այդպես Անահիտը բաժանվեց Էշից, որին տասը տարի յոլա տանելու արդյունքում մի բեռ հիվանդություն շալակեց: Նա այլևս նախկին փխրուն, բարակիրանը չէր, այլ հաստամարմին՝ մեծ քամակով կնիկ: Նրա միակ որդին տնից փախավ հոր մոտ, իսկ երեք աղջիկներին պահեց ինքը: Էշի ամենամոտիկ Ընկերոջ օգնությամբ, որ դարձավ նրա Յարն ու կյանքի անդավաճան ընկերը:

Մուտքը, և այնտեղ բնակվող ծանրումեծ կանայք հեռավորություն էին պահում Անահիտից՝ հասկացնելով, որ իրենք շատ հաց ու պանիր պիտի ուտի, որ իրենց հետ նույն սեղանից սուրճ խմելու շնորհին արժանանա:

***

Իրենց վերջին հանդիպումից կլոր 18 տարի հետո Սքոթլանդը հայտնվեց: Ոչ թե Ամերիկայից, այլ Ռուսաստանի մի նվազ գավառից: Ուր գնացել էր այն բանից հետո, երբ ամառային մեկ տգույն օր ընկերների ու կապույտ մեքենայի հետ գնացել էր ուսումնարանի բակ, որտեղ Անահիտը սովորում էր ութն ավարտելուց հետո, որն անծանոթ միջավայր էր ու լի՝ չկամ ու գծուծ մտքերով. փխրուն, բարակիրան ու ճտպտան Անահիտին չսիրողները լիքն էին, վասնզի շուտով պարզվել էր, որ նրա հետևից կապույտ մեքենայով մի առնական տղա է գալիս, որ ժամեր շարունակ տնկվում է բակում ու սպասում դասերի ավարտին: Տասնյոթամյա Սքոթլանդը դուխից շատ ուժեղ չէր, ու ժամանակներն էլ այլ էին: Ժամանակի ու տարածության տոնայնությունից կախված ձևավոր-

վում էր մարդկային բովանդակությունը, սակայն դուխը ժամանակ ու տարածություն չէր ճանաչում, ու հենց դուխն էլ մտահոգվել էր, որպեսզի Սքոթլանդը մոտենա մի աղջկա, որ նախանձի պարկեր ուներ թաքցրած սրտի խորքում:

Սքոթլանդը այն օրը, երբ պիտի Անահիտին փախցներ, մոտեցել էր Անահիտի ամենամոտիկ ընկերուհուն, որ իր հարցին, թե ո՞նց գտնի Անահիտին, ցրողական պատասխան էր տվել ու Անահիտին էլ այդ մասին չէր ասել: Երբեմն մարդկային աչքունքի մի կայծ շատ բան կարող է փոխել, սակայն աստղերի դասավորությունը չէր նպաստում Անահիտի ու Սքոթլանդի միավորմանը, ու Սքոթլանդի դուխը սառն աղջկա անտարբեր պատասխանից ավելի էր ընկել: Ընկերներն էլ կրակի վրա յուղ էին լցրել՝ հիշեցնելով, որ Անահիտն անչափահաս է, իսկ հայրն էլ՝ դեմ:

Տարիներ ձգվող պատմության ոչ մի մանրամասնություն չէր կորել նրանց հիշողությունից, երբ իրենց ճանապարհները մեկ օր հատվեցին: Օրը ցերեկ էր, ու դա չէր կարևորը: Կարևորը տարիներ շարունակ օդից կախված էր եղել, սակայն մեկ շիշ ջերմուկ էր պետք, որպեսզի Անահիտն այդ մասին իմանար:

Անահիտի քեռակնոջ մի ոտքը վաղուց այն աշխարհում էր, ու այդ օրն էլ Մահ ձյաձյան շախ էր հայտարարել նրան, ու տնեցիք անմիջապես զանգել էին Անահիտին՝ ասելով, թե ծեր կնոջը մեկ շիշ ջերմուկ է պետք: Մահին ու ջերմուկը: Ջերմուկը հաղթեց: Այն բանից հետո, երբ Անահիտը, որ սովորել էր քեռակնոջ հայտարարած «տագնապներին», ոտքը ժամեր շարունակ կախ էր գցել ու օրվա վերջին տանից դուրս եկել: Նա երբեք չէր մոռացել Սքոթլանդին, սակայն ինչպես ասում են. «это было давно и неправда»: Սքոթլանդի մասին հիշողություններին նա վերաբերվում էր որպես հեքիաթի պատումի: Նա գաղափար չուներ Կապույտ ճնճղուկների արահետի մասին, ու կյանքի մասին ունեցած պատկերացումները սահմանափակվում էին այն փոքրիկ տարածությամբ ու այնտեղ տեղի ունեցող գործողություններով, որտեղ ժամանակը պտտվում էր այնպես, ինչպես ամենուր: Նա, օրինակ, վաղուց հասկացել էր, որ աշխարհին այն տունն է, որտեղ ծնվել էր ու հետո վերադարձել Էշի հետ, նրա միջնորդությամբ երեխաներ էր ծնել ու հետո սիկտիր արել, մերձեցել Յարի հետ ու ինչ-որ կերպ քարշ էր տալիս գոյությունը: Ինչպես բոլորը: Կամ ավելի ճիշտ՝ շատերը: Սքոթլանդը, ա՛յո, եղել է իր կյանքում, բայց դա այնքան վաղուց էր, հիմա ինքը մեծ կին է, երեխաներ ունի և իրեն նվիրված Յար: Սքոթլանդը մնացել էր անցյալում կամ, ավելի ճիշտ՝ Կապույտ ճնճղուկների արահետում:

Նրանք հանդիպեցին քեռակնոջ տան դիմացի մայթին, երբ Անահիտը՝ ջերմուկի շիշը ձեռքին՝ արագ քայլերով առաջանում էր:

***

– Աչքերիս չհավատացի,– հեռախոսի միջից հևակտուր պատմում էր Անահիտն ու արդեն լրիվ արթուն էի: Ավտոմատ աչքս ընկավ ժամին՝ խոր գիշեր էր. կոնկրետ ժամն էլ հեչ կարևոր չէր,– ախչի ջան, մեկ էլ տենամ մի մարդ կայնեց դեմս ու նայեց աչքերիս մեջ: Նայեմ-տենամ՝ ինքն ա:

Անահիտը մոռացել էր քեռակնոջն ու Մահ ձյաձյային, իսկ ժամեր տևած խոսակցության ընթացքում էլ ջերմուկի շիշը անընդհատ ոլորում էր:

– Եկել եմ հետդ ամուսնանամ,– շիտակ նայելով Անահիտի աչքերի մեջ ասել էր Սքոթլանդը, ու Անահիտը ոչինչ էլ չէր մտածել:

– Խելքը գցել ա, ես նորվա երեխե՞ն եմ, որ պսակվեմ,– բարբաջում էր Անահիտը, որի քառասունը դեռ չի բոլորել, սակայն կարծում է, թե հասել է վերջակետին:

Սքոթլանդը, պարզվում է, Անահիտի պսակվելուց հետո գնացել էր սովետական բանակ ու հետ վերադառնալուց հետո հետաքրքրվել նրանով: Անահիտը նրա մտքից երբեք դուրս չէր գալիս. նա ծնվել էր յուր համար, ու ինքը պետք է տիրանար իր բախտին: Սքոթլանդը հետաքրքրվել էր Անահիտի մասին ու իմացել, որ առաջնեկն արդեն ծնվել էր, ու էդ միտքն ավելի էր հուսաթափ արել առնական տեսքով, սակայն դուխից թույլ երիտասարդին: Ճակատագիրն ամեն անգամ խանգարում էր նրանց միությանը: Նա նույնպես պսակվել էր՝ մոր սրտով մի աղջկա հետ. լավ տանից, ում հետ ապրել էր մոտ 18 տարի ու միջնորդել, որ երկու երեխա ծնի, ում հետ քնում էր գիշերները, սակայն երազի մեջ տեսնում Անահիտին, ում հետ երբեք էլ չհաշտվեց ու յոլա էր տանում նույն տանիքը կիսելու բախտն ունենալու անհրաժեշտությունից դրդված: Նա սկսել էր խաղալ կազինոյում, ու ով գիտի՝ մտածում էր էնտեղ դուխ հավաքել:

Մի անգամ դուխը հավաքել ու լքել էր կնոջը. հերթական վեճից հետո, երբ կնոջ երեսին ասել էր, որ չի կարողանում քնել հետը, որ մտքում մի կին կա միայն. դպրոցական սերը, որ կոչվում է Անահիտ, գոռացել էր, որ լքելու է կնոջն ու երկիրն ու գնալու է այն ուղղությամբ, ուր աչքը կտրում է: Նա պտտվել էր մեջքով ու հետևանց մատը դրել աշխարհի քարտեզի վրա.

– Որտեղ մատս կպավ, էնտեղ էլ գնալու եմ,– գոռացել էր ու տեսել, որ մատը դրել էր Աֆրիկայի հարավային հատվածում:

Սքոթլանդը որոշել էր խոսքի տերը լինել: Գոնե այս անգամ: Լքել էր կնոջն ու երեխաներին, վերցրել էր մեկ զույգ շալվար ու մի փոքր գումար ու գնացել էր Աֆրիկա: Ա՛ֆրիկա: Լսվում էր հեռախոսի միջից, իսկ ժամը դառնում էր ավելի ու ավելի ուշ: Քեռակինը հերթական անգամ հաղթել էր Սահ ծյածյային, ու երբ Անահիտը բացակայող հայացքով մտել էր տուն՝ բոլորը զարմացել էին, թե ջերմուկն ինչի է բերել:

***

Սքոթլանդն ու Անահիտի Յարը պետք է որ հանդիպեին: Շատ ժամանակներ անց այն բանից հետո, երբ, այնուամենայնիվ, Անահիտը պսակվեց էշի հետ ու նրա միջնորդությամբ 4 երեխա ծնեց, որից հետո նրան սիկտիր արեց ու տարիներ շարունակ ենթարկվեց Սուտքի ծանրումեծ կանանց լուռ հալածանքներին, երբ մտերմացավ էշի ամենամոտ ընկերոջ՝ ապագա Յարի հետ ու նրան քարշ տվեց յուր աշխարհ, երբ ճակատը հենեց նրա ուսին ու հենց այդ դիրքով էլ ապրեց հետը, երբ տարիներ շարունակվող լուռ ապրումներից կորցրեց մի քանի ծիծիլոն մեգաջոուլ կենսական էներգիա ու լրջորեն վնասեց առողջությունը, երբ պոռնիկ մոր ու նրա անունը ժառանգած լինելու գիտակցության մտայնությունից տառապած՝ պարկերով հիվանդություն հավաքեց մարմնում, տարբեր ուղղություններով այցելություններ կատարեց բազմաբնույթ բժիշկների մոտ, խմեց նրանց նշանակած պարկերով դեղերն ու վնասեց բոլոր օրգանները, փխրուն, բարակիրան մարմնի վրա հավաքեց երեսուն և հինգ կիլոգրամ ավելորդ զանգված, երբ վերածվեց հաստաքամակ ու հաստամարմին մի կնկա:

Մինչ այդ հանդիպումը սակայն, Սքոթլանդը թույլ ջանքեր էր գործադրել Անահիտի հետ վերամիավորվելու ուղղությամբ և որպեսզի ինքն իրեն ու Անահիտին համոզի, որ ցայդօրը սիրում է նրան, հինգ տարին մեկ պարբերականությամբ զգացնել էր տալիս յուր գոյության մասին:

Օրինակ, նրա պսակվելուց հետո, երբ արդեն առաջնեկից հետո ծնվել էր

երկրորդը, ու Էշը տակավին թագավոր էր կտրած ու բարեկամների աղջիկնե-րին շաբաթներով հյուրընկալում տանը՝ որպես Անահիտի գլխին պահակ, ու-րեմն, զանգել ու մտերմացել էր այդ անհաշիվ բարեկամուհիներից մեկի հետ ու ժամադրվել հետը: Նրանք մտերմացել ու ժամանակ առ ժամանակ հան-դիպում էին: Ենթատեքստով, որ բարեկամուհուց Անահիտի մասին տեղեկու-թյուններ է քաղելու: Այդ հանդիպումների ժամանակ բարեկամուհին տանում էր Անահիտի երկրորդ աղջկան, ում համար Սքոթլանդը պարկով շոկոլադ էր գնում ու գրկից չէր իջեցնում: «Արյունս քաշում ա»,– առաջին հանդիպմանն ասել ու նույնը շարունակում էր կրկնել բոլոր հանդիպումներին:

Բարեկամուհին մտերմացել էր Անահիտի հետ ու հետը կիսվել, որ Էշին իրենց ցեղում ոչ ոք չի սիրում: Նա դարձել էր Անահիտի ընկերուհին ու մեկ օր կազմակերպել Սքոթլանդի ու Անահիտի հանդիպումը այն բանից հետո, երբ մի քանի հանդիպում անց հանկարծ Սքոթլանդն աղջկան խոստովանել էր իրենց հանդիպումների իրական իմաստը, որ իրեն հետաքրքիր է միայն Անա-հիտն ու նրա ճակատագիրը. որ կա՝ նա է, չկա՝ նա է, որ ուզում է իմանալ նրա բարօրության մասին ու հետաքրքրվում է, թե արդյո՞ք երջանիկ է Էշի հետ: Բա-րեկամուհին՝ տակավին 16 տարեկան դեռատի ռոմանտիկ մի աղջնակ, խիստ հուզվել էր երիտասարդ զույգի դժբախտ ճակատագրով ու Սքոթլանդի դրդ-մամբ՝ Էշից թաքուն, Անահիտի ու երկու երեխաների հետ պայմանավորված ժամին գնացել էր այգի:

«Հեռվից տեսա, որ ինքն ա, սիրտս քցեց, բայց չտեննալու տվի,– հետո պատ-մելու էր Անահիտը,– էն սատկած Գայանն էլ նենց մի դերի մեջ էր մտել, որ մտքովս չանցավ, թե կազմակերպած պատմություն ա»:

Սքոթլանդն ուզեցել էր պարզապես մոտիկից տեսնել նախկին սիրածին, ում գրկում սեղմելու ու շուրթերը թեթևակի համբուրելու բախտն էր ունեցել: Նա չէր մոռանում Անահիտի վետվետուն մարմինն ու դեմքի վախվորած արտա-հայտությունն այն օրը, երբ լացակումած սիրտը դատարկել էր, որ հորեղ-բայրն ուզում է պսակել արյունարբու արտաքինով ու գամփռի հայացքով Գոմշակերանց Լյովի հետ: Նա իրեն մեղավոր էր զգում Անահիտի առջև, որ տղամարդկությունը կամ, ավելի ճիշտ՝ դուխը չհերիքեց, որպեսզի ճակատագ-րական այն օրը Անահիտին փախցներ, որ ընդառաջ գնալով կյանքի հոսան-քին՝ քար գցեց թե՛ իր և թե՛ Անահիտի բախտին:

Երկար ու ձիգ տարիների ընթացքում Սքոթլանդին տանջում էր միայն միտ-քը, թե արդյոք երջանի՞կ է Անահիտը: Ինքը մի կերպ կապրի, ամուսնացել է, թեպետ չի սիրել, դե կին է, էլի, սիրուն էլ կին է, չնայած տախտակի պես չոր է, փոխարենը՝ լավ ընտանիքից է, աներն էլ՝ հարուստ է. ա՛յ իրեն տարավ մոտն ու գործի դրեց, բարեկամները մեծահարուստ ու ազդեցիկ մարդիկ են, ինքն էլ է գործ դրել ու լավից-վատից ապրում է: Հետո՞ ինչ, որ սրտի դարդը կազինո-յում կամ պոռնիկների գրկում է մոռանում: Միայն թե Անահիտը լավ լինի: Հա-վիտյանս իմն ես: Անահի՛տ: Քո պայծառ մարմինն ու վետվետուն հոգին: Այն խաղացկուն աչքերն ու սեթևեթող ժպիտը: Դրանք չէր փոխի սառը դեմքով ու դանդալոշ շարժուձևով յուր կնոջ հետ, որ գիշերները ոտքերը չռած պառկում էր ու վերջացնելուց հետո շրջվում դեպի պատը:

Մեր Անահիտը սակայն այս ընթացքում դարձել էր արդեն 22 տարեկան ու հասկացել մասսայի զորեղ ուժը, որ ինքը որբ է ու թիկունքին մարդ չկա, որ հայրը հարբեցող էր, իսկ մոր հետևից էլ բամբասում էին. ինքն էլ, ասում էին՝ մոր տիպարն է: Անահիտը գիտակցել էր, որ հսկա գերդաստանի շառավիղ է և ուսերին կրում է նրանց ծանր ու մեծ անունը, որ ինքն այլևս պսակված կին

է ու երկու երեխայի մայր, որ Սքոթլանդը նույնպես արդեն պսակվել էր. այդ մասին հետաքրքրվել ու ծածուկ իմացել էր: Ի՞նչ ունեին այլևս կիսելու. եղածն արդեն եղել էր. ամեն մարդ իր ճամփով. Էշը ամեն վայրկյան իրեն հետևում է ու չեղած բանից կռիվ սարքում: Իր ճակատագիրն է, պետք է լուռ կրի: Մտածում էր երիտասարդ 22-ամյա Անահիտն ու առնվազն տասը տարի հետո գլխին տալիս. «Տո՜, իրանք էլ, իրանց անունն էլ, հիմի որ ես լավ չեմ, իրանք ի՞նչ են անում, եղունգ ունես՝ գլուխդ քորի: Ես էի էշ, որ Սաքի պես ֆոզալական տղուն ձեռիցս բաց թողի: Պտի հենց էն վախտ սիկտիր արած ըլնեի Էշին ու հետը փախնեի»:

Սքոթլանդը Գայանեին առաջարկել էր Անահիտի ուղեղին կաթեցնել միտքը, որ հիմա ինքը 24 տարեկան է ու արդեն՝ հասուն: Արդեն ինքն է իր կյանքի տերն, ու եթե անգամ հայրը չընդունի՝ ինքն ի վիճակի է կրել ողջ բեռը: Նա առաջարկել էր հետները վերցնել երկու երեխաներին ու գնալ երկրից: Անահիտը, սակայն, այդ օրը չտեսնելու էր տվել Սքոթլանդին ու չէր թույլ տվել, որ իրեն մոտենա, իսկ օրեր անց, երբ Գայանեն՝ չդիմանալով, բացվել ու պատմել էր եղելությունը, սիրտը տակնուվրա էր եղել, փակվել էր զուգարանում ու մի կես ժամ լաց եղել: Նրա կոտրված սիրտն ավելի էր կոտրվել գիտակցությունից, որ չի հասել Սքոթլանդին, ում սիրել ու ժամեր շարունակ սպասել էր այն կապույտ մեքենային՝ հույսով, որ մեկ օր իրեն առնելու է մեջն ու հավիտյանս տանելու հորեղբոր տանից, որտեղ ամանեղենի բլրակույտեր էր լվանում ու քաշում փչացած ատամներով կախարդ Սվետի կեղտոտած հոտը:

Դրանից հետո, երբ Սքոթլանդը հերթական անգամ հասկացել էր, որ Անահիտն այլևս ամուսնացած կին է, հավաքել էր փասափուսան, կնոջ ու երեխայի հետ գնացել էր յուր ռուսաստաններն ու սրտի՝ բոլորից թաքուն պահած հատվածում դրել Անահիտի պատկերը: Նրա գոյության մասին գիտեր անգամ տախտակ մարմնով ու սառը դեմքով կինը, քանզի վասնզի ամեն կռվի ժամանակ կնոջ վրա էր շպրտում փխրուն ու բարալիկ մարմնով Անահիտի հետ ապրելու մասին երազների փշրված կտորտանքները:

***

Անահիտն ու Սքոթլանդը բաժանումից տասնութ տարի անց հանդիպեցին: Հետո ի՞նչ: Այդ տղամարդիկ տխմարակույտեր են: Անահիտն իր կյանքն ուներ, թեկուզ հիվանդությունների պարկը շալակին: Տասնութ տարին տասնութ օր չէ: Ժամանակ է հոսել: Նա սիրում էր իր Յարին, ու Յարն էլ իրեն: Ո՞ւր էր այդ անպիտան Սքոթլանդը այդքան տարիներ: Դո՜ւխ էր հավաքում: Դե թող գնա այնտեղ, որտեղից եկել է: Հիմա արդեն նախկին փխրունն ու բարակիրանը չէ: Հաստաքամակ կին է. էշի միջնորդությամբ չորս երեխա ծնած: Չկա նախկին էնտուզիազմը, Սա՛ք: Ես աղջիկներ ունեմ, իմացար: Դու էլ: Դու կին ունես, իմացար: Ես էլ՝ Յար: Իմ վրա մի կյանք ա դրել: Քո թայը չի, իմացար: Դուխով տղա ա, իմացի: Անպսակ տղա ա՝ նամուսի մեռած: Բայց տուն կտաներ: Ինձ: Բա երեխե՜քս: Բա հերն ու մե՜րը, բա հարևաննե՜րը: Տենց էլ ապրեցինք: Մի վարձով տանը: Էն գիշերն էր ու մենք: Մեկ-մեկ էլ քեֆ-ուրախություն, ընկերություն-բան: Կարայի երեխա բերեի: Բայց hո ցուցա՜նք չէի: Բա երեխե՜քս, հարևաննե՜րը: Տենց էլ մնացինք: Ես՝ հորս տանը, երեխեքիս հետ, ինքը մենակ՝ էլի հոր տանը:

***

Դեպքը, իրականում, եղել էր մեկ տարի առաջ, սակայն էդ ընթացքում թողել

էի, որ Անահիտը ժամերով բարբաջի հեռախոսի մեջ, իսկ ես մի կողմ էի դրել ընկալուչն ու իմ կյանքով ապրում էի:
Դեպքերը զարգանում էին ժամանակային տարբեր հարթություններում, ու հավես ու ցանկություն չունեի՝ դրանք իրար կպցնելու: Ինչ-որ մարդիկ կլինեն, որ այդ առումով մտքեր կունենան: Նրանք, հավանաբար, ինչ-որ բան կմտածեն: Կամ՝ ոչ: Կամ կգնան յուրյանց ճանապարհով: Ինչ-որ ժամանակ առաջ գրած կլինեմ. բոլոր պատճառաբանությունները մեկնաբանություններ են:
Ցանկանում եմ տվյալտվել, սակայն չի ստացվում: Ներսս չոր է, դեմքս՝ միանգամայն կայուն: Ի՞նչ կմտածեմ ես տարիներ հետո: Այն օրն էր, որ փորձեցի քանի մը փունջ հայացք նետել դեպի հետ: Ի՞նչ կարող էի անել, երբ ինձնից չկախված հանգամանքների բերումով արել էի այն, ինչ արել էի: Այսինքն՝ ծնվել էի: Պետք էր ուրեմն ապրել: Եթե ծնվել ես: Միևնույն է՝ մեկ օր մեռնելու էի: Ինչո՞ւ ուրեմն ընտրեի այն ճանապարհը, որով, իբր, գնում են բոլոր մարդիկ: Կրկնությունը գիտության մայրն է: Այս կարգի ասույթները սերտում էի տակավին ութ տարեկանից և կարծում, որ կյանքում ամենակարևորն այս կարգի ասույթների իմացությունն է: Դրանից խելոք լինելու հավանականությունը մեծանում է: Մտածում էի ես: Այդպես են մտածում բոլորը: Ահավասիկ, բոլոր այն հղումները, որ արվում են Դելյոզին, Սարտրին և այլոց: Հղում չունեցող տեքստը նման է անկուրծք կնոջը: Ինչ հիմար միտք: Ովքե՞ր են, ընդհանրապես, հնարում կանոններն ու հավատում դրանց: Մարդկությունը կարիք ունի նոր՝ անհղում տեքստի: Բոլոր պատմությունները ոչ մի բանի մասին են, այսինքն՝ ամեն ինչի: Ինչո՞ւ պիտի Աքոթլանդը հանդիպի Անահիտի Ցարին: Չէ՞ր կարող խտտել Անահիտ սիրածին, դնել ծոցն ու քայլել յուր ճանապարհով: Մենյակիցս նեխած պանրի հոտ է գալիս, ու այն ինձ հաճելի է: Կրծում եմ մի ցամաքած խնձոր, որ գտա խոհանոցիս՝ բոլորից մոռացված անկյունում, մի կերպ սրբեցի ու ատամներս խրեցի մեջը: Չէի ցանկանում, որ Աքոթլանդ տղեն ու Անահիտի Ցարը հանդիպեին: Հետո՞ ինչ, որ տղեն դուխից թույլ էր: Բոլոր պատմությունները նույն բանի մասին են: Նրանք տեքստից դուրս անիմաստ վերջաբան են ունենում, քանզի վասնզի բոլոր մարդիկ մտածում են կրկնել աշխարհում վաղուց հաստատված կարգը: Աքոթլանդ տղեն 18 տարի շարունակ Անահիտին չէր հանել մտքից, միշտ էլ մտածել էր հետն ապրելու մասին, իսկ Անահիտի Ցարը պատմությունը հաստատ փչացնելու էր: Նա կգար ու սիկտիր կաներ նախկին առնական տիպարով տղեկին, որից մնացել էր այն, ինչ մնացել էր: Մնացածը թողել էր կնոջն ու երեխաներին ու եկել էր Անահիտի հետևից: Ամեն անգամ մեկը խանգարում էր: Շատերին, օրինակ, խանգարում է կյանքի նկատմամբ ունեցած հայտը, և նրանք չեն կարողանում թողնել իրենց աշխարհին ու գնալ Կապույտ ճնճղուկների արահետ: Մարդիկ, օրինակ, կարծում են, որ միայն վերջացած հիմարները կարող են մտածել Արահետում ապրելու մասին, որ Արահետը գոյություն ունի ինչ-որ մարդկանց երևակայական դաշտում, որոնք հոգով միշտ երեխա են ու այդպես էլ չեն մեծանում: Մեծ մարդիկ կառավարում են աշխարհը: Տարածված ընկալում է: Մեծ մարդիկ խաղում են մեծերի խաղն ու իրենց ենթարկում բոլորին, առաջին հերթին՝ մանկամիտներին: Ու ամեն ինչ ստացվում էր նույնը: Նույն պատմությունը: Սակայն պետք էր փոխել պատմության ընթացքն, ու թույլ չտվեցի, որ Աքոթլանդն ու Անահիտի Ցարը հանդիպեն:
Ցարին, սակայն, շատ էլ լավ գիտեի, ու լսում էի նրա փրփրակալած ձայնը, որ պահանջում էր իրեն ներմուծել տեքստ: Նա ցանկանում էր Աքոթլանդ տղուն քաղաքակիրթ ձևով սիկտիր անել, բայց փոխարենը ստացավ ոչինչ:

Նա թողեց տուն-տեղը, վաճառեց ինչքն ու լքեց երկիրս: Այնտեղից սկսյալ կաղկանձում էր, սակայն ականջներս փակել էի: Գիտեի, որ լավ մարդ է: Ընկերուհուս թևն ու թիկունքը: Հազար տարվա ընկերը: Առանց նրա ի՞նչ էր անելու Անահիտը: Գոմշակերանց Լյովի արյունարբու ճիրաններից ես էի ազատել, որ նեխած պանրի հոտով սենյակում մտքեր էի մոգոնում: Իհարկե՝ ոչ:

Սակայն չեղյալ համարեցի Աքոթլանդի ու Անահիտի Յարի հանդիպումը: Հենց այդպես: Կամ ավելի ճիշտ՝ այսպես: Գրչի մեկ զարկով: Ինչպես ասում են:

***

Երեկո էր, ու անում էի ոչինչ: Այդ ընթացքում հիշեցի Անահիտին ու վերցրեցի ընկալուչը, որի միջից դեռևս լսվում էր նրա շնչասպառ ձայնը:

– Էն օրն էլ կնիկն էր զանգել, իմացա՞ր, հետս դուք-ով էր խոսում ու խնդրում էր, որ իրա մարդուց հեռու մնամ,– հևասպառ պատմում էր Անահիտը,– բայց ես իրա մարդի հետ, ախր, գործ չունեմ: Էդ ինքն ա իմ հետ ուզում գործ ունենալ:

Անցել էր կլոր մի տարի: Ու երևի երկու ամիս: Որի ընթացքում որոշ բաներ էին փոխվել: Այդ թվում՝ ես: Մոտեցումները: Որոշ հարցերի վերաբերյալ: Այդքան տարբեր մարդկանց միևնույն տեքստում հավաքելու տրամաբանական պատճառների սկզբնաղբյուր մտքերի հուսքը չգտնելու պարագայում ոչինչ անել պետք չէր: Առավել ևս երկար մտորել: Յարն իր տեղում էր: Այսինքն՝ Ռուսաստանում:

***

Աքոթլանդն ու Անահիտը կրկին հանդիպեցին: Այս անգամ՝ տեքստում: Ավելի ճիշտ կլիներ ասել՝ Կապույտ ճնճղուկների արահետում: Նրանք երջանիկ էին: Ու Անահիտը առաջվա բարակիրան պարմանուհին էր, ու Աքոթլանդը՝ նախկին առնական տեսքով պատանին: Ու նրանք սիրում էին զմիմյանս օրեր շարունակ ու թքած ունեին աշխարհում սահմանված կարգի վրա:

Լուսանկարը՝ Անուշ Բաբաջանյանի

Լուսինե Եղյան

Ինձ անտանելի դուր է գալիս բառերի մեջ գոյություն ունեցող հիշողությունը, որը թույլ է տալիս կառուցիկ տեքստին խուսափել արտաքին գործոնների ազդեցությունից: Բանաստեղծությունը, հավանաբար, այն կորսված դամբարանն է, որը կրում ենք մեր մեջ, ու շարունակ նոր տարածքներ պեղում՝ նոր մեռելների համար, այն աղավաղումը, որն առկա է մարդու ու սեփական բնության միջև: Գրողը տանի, ո՞րն է այն հիմնային պատճառը, որով կբացատրվեր մարդու հաղորդակցվելու ցանկությունը, կամ ի՞նչ կարիք կար խզբզել ժայռերի, քարերի վրա: Լռությունը կնշանակեր ներքին համերաշխություն քո ու այն նախամարդու միջև, ով ճաշին մամոնտ է ուտում: Բայց դրա անհնարինությունն ու մահվան մասին միտքը ստիպում են ավելի ամուր կախվել բառերից կամ բառերի թողած իլյուզիայից: Ես ծնվել եմ 1995-ին և սարսափելի կարոտում եմ այն եգիպտացիներին, որոնց հետ աստղային քարտեզներ էի կազմում:

Քեզ

*

տողեր, որոնք գրեցի քեզ հաճոյանալու համար, ինչպես տիրոջը, որին չգտա՝ չնայած ածելիով պատռեցի երկինքը ու համբուրեցի վերևի հարևանին, ով նախաճաշ էր պատրաստում իր փոքրիկ տղայի համար

այն ցավը, որը խորթ է քներակիս, ինչպես լուսանկարը, որտեղ երկուսով ժպտում ենք անհագորեն, դուրս է ցցվել մոլախոտի պես՝ պատռելով ասֆալտի կուսությունը,

արցունքները բեղմնավորվում են աչքերիս մեջ, խոտի ջարդված ողնաշարը ծիլ է առնում անծանոթ մոլորակի վրա, ու ես զգում եմ հողի հոտը, ինչպես դեռահասն է մի օր ընդունում իր մարմնի թուլությունը

լինել կարճ քայլ դեպի սուզումը, դեպի այն մամուռը, որն աճում է աչքերիս տակ՝ ջնջելով հիշողությունը դարչնագույն անտառի մասին, որտեղ վառվում են կանանց լքված ձեռքերը. ես ինձ խոստացա, որ մինչ այդ կկտրեմ մատներս,

մի քանի օր առաջ, փողոցում քո փոխարեն փնտրում էի Բուդդային ու բոլորովին չէի զղջում, որ սեղմված քաղաքում կորցնում եմ շնչառությանդ ձայնը, կորցնում եմ եգիպտացիների մասին պատմությունները, որոնց մի մասը հնարում ես, իսկ ես անձնատուր եմ լինում քո ասած բոլոր բառերին

աստված իմ, ախր, կարոտը պատռում է կոկորդս, ես նման եմ օվկիանոսի հատակում ապրող քարին, որին ցամաք են շպրտել. հիմա սանտավիկներ եմ փնտրում աչքերս փակելու համար, որպեսզի լացը բացահայտ չլինի

բարդույթները, որոնք աճել են վրաս, ինչպես ջրաշուշանն է բացվում լճերի

երկայնքով, ինձ ստիպում են կարծրանալ ու մոռանալ այն բոլոր մարդկանց, որոնց, միգուցե, սիրում եմ, ինչպես մեռնողն է սիրում այն մահճակալը, որի վրա պառկած է

այս հողագունդը ծաղիկի վրա նստած փոշու հատիկ է թվում, որտեղ ոչինչ չկա, բացի մթնոլորտից, բացի սիրո մանր սերմերից, որոնք մանանայի փոխարեն կթափվեին երկնքից

ես ինձ ավելի անպետք եմ զգում, քան բազմահարկ շենքի տանիքին կանգնած անտենան, որով կինը նայում է իր ապուշ ռուսական սերիալները, որովհետև ոչինչ չեմ հիշում դիմացի փողոցում հանգչող երջանկության մասին

*

Հարբել այնքան, ու չնկատել, թե ինչ անթերի հմտությամբ են երկնքում աճում աստղերը, թափվում այն խոտի ստվերի մեջ, որի արմատները սկիզբ են առնում ոտնաթաթերիցս ու հետս շպրտում փողոցից փողոց, ինչպես կնոջ ծերացած ստվերը, որ վաղուց տենչում է մեռնել՝ ընկնելով քո մարմնի ուղղությամբ

մտքումս պարծենում եմ, որ առանց ձյան ողորկ շերտը վնասելու կարողացա քայլել վառվող նավի հետագծով, երբ մատներիցս քո մազերի հոտն էր գալիս, ու նկատում էի միայն անձրևի տկար կաթիլները ինչպես են սարսռում ձեռքերիս մեջ

գրողը տանի, որքան կցանկանայի քարանալ պատուհանի դիմաց կանգնած՝ լեզվիս տակ պահելով գինու համը, քեզ թողնելով ներարկիչի մեջ՝ հեռու-հեռու այն բոլոր հանգույցներից, որոնք ստիպում են հավատալ, որ հրաբխի ստորոտը լավագույն վայրն է հենվելու ու երկնաքարերի մասին մտածելու համար,

ես սիրում եմ այն վարագույրի գույնը, որտեղ թաքնված է երկյուղը, որ քո ուրվագիծը խազվել է վրաս, ու ասա, որ սա սովորական ֆլիրտ է՝ առանց դեղերի ծանր տուփերի. առանց այդ էլ դրանք այնքան շատ են իմ մեջ

հիանում եմ, ինչպես է շիֆերի արանքից դուրս պրծած դեղին ծաղիկը անաղմուկ տրվում քամու հևոցին, և ես հիշեցի լավաշի համը, որը տվեց քահանան ու ասաց՝ սա Հիսուսի մարմինն է, հիշեցի, որ այսօր ծնունդդ է՝ համբուրեցի հեռախոսը, պառկեցի թաց խոտի վրա ու սկսեցի կրծքավանդակիս բարձրացող մրջյունների հետ խաղալ

ես սիրում եմ քեզ, ինչպես ջութակն է սիրում աղջկա ճկուն ուսը,

ձեռքս մտցրեցի աչքերիս մեջ գոյացող կարոտի մեջ, հագա քո գնած վերնաշապիկը, առավոտյան հայրիկից փող վերցրեցի ու սկսեցի կուլ տալ քաղաքի մաղձը, որն ինձ ավելի արագ էր թմրեցնում, քան չոր գինու մուգ, շատ մուգ կարմիր գույնը

հերթով համբուրում եմ իմ մեջ ապրող հին եգիպտացիների շուրթերը՝ քայլելով դեպի ջրափոսը, որտեղից ծաղկած փշատենիների հոտ է գալիս, իսկ ես մտքումս կրկնում եմ, որ այսօր ծնունդդ է, այսօր ծնունդդ է

*

ես գլուխս դնում եմ պատուհանագոգին՝ հետևելով ինչպես է թաց ասֆալտը չորանում ու ինչպես է տնքում երկրակեղևը՝ կծկվելով ճայերի ծալքավոր թևերի տակ, իսկ սերը ավելի քան հողմահարված է մեզ արարելու համար,

ընթերցասրահում աղջիկը ոտքերը խփում էր սեղանին, ասես փորձում էր սփոփելի դարձնել վարակը, որից փախչելու համար հասցրել էր ապրել արևածագին մեռնելու հաճույքը՝ առանց քեզ, առանց այտոսկրերիդ կանգնած երջանկության,

հասուն, ինչպես ժայռից գլորվող քար, որը գահավիժելուն զուգընթաց մեծանում է, ու քսվելով ջրի ոտնաթաթերին, ապաքինում է մեր հպումից առաջացած ակոսները

սեղանի տակ վազվզող երեխաները հերձում են իրենց հայրերի մարմինները, ու նրանց մեջ բոլորովին արյուն չկա վերջացնելու այս սիրախաղը՝ ամենաչոր փայտը հաջորդ ձմռանը տաքանալու համար,

սերը խեժի պես կպել է աչքերիցս ու մահը փայտացած թռչուն է սարի հետնում ճչացող, ու թող քարերի վրա թպրտան բոլոր մեռյալները ողջերի հետ միասին. ես ամուր գրկել եմ ստվերդ ու քայլում եմ դեպի վիշտը, ուր հանդարտ, լճացած կսպասեմ մահվանը, կսպասեմ լռությանը,

մեր ձեռքերը առանձին-առանձին կճաքեն քամու թույլ հևոցից, ու խոտը կսարսափի, որ այդքան կրքոտ կարող էր սիրել հողը, որը գնալով ամայանում է.

աղետալի էր սիրել լվացքի պարանի երկարությունից ավելի, ու հեգնել երջանկության մերձակայքում արածող կովերին, որովհետև դու իմ շնչառության հոմանիշն ես, իսկ ինձ կարծես սպանել է տանից կաթկթացող ջրի ձայնը

սեր իմ, իմ մեջ ապրող աֆրիկացին վերափոխվում է բաց հոսանքի, իսկ հիմա այնքան արբեցմամբ եմ սպասում մահվանդ, կարծես այն երթուղին լինես, որտեղ կորցրեցի ստվերս, և մարմինս չորացավ, ճաքճքեց և շաղախվելով տառապանքի հետ խուսափեց ունենալ հոգի մակույկի վրա համաչափ օրորվելու համար,

ես ավելի քան ցեմենտացած եմ ու դատարկ՝ արևից քերծված հողի պես, ասես քո գնալուց հետո թևերիս փշալարեր աճած լինեն, ու քեզանից պատմող բառերը նողկանք առաջացնող առնետների նման վազվզում են կեղտաջրի մեջ,

ախր առանց քեզ ես շնչահեղձ լինող քար եմ, իսկ կսկիծը ծեր կնոջ թախծոտ աչքերով է նայում վրաս, ասես սատկել եմ՝ գլուխս դրած մայրիկի կարած դեղին բարձին, ասես հիվանդ եմ տիֆով կամ թոքախտով.

թողնել խմելը, ծխելը, ինչպես ամենաախմախ պատճառով փախչում եմ տնից՝ գրկում քաղաքի նոր ներկված նստարաններն ու զզվում դիմացի ծառից, որի արմատները ծծում է հողը, որը գուցե մարմինս է

ինձ թվում է իմ շուրջը հայտնվող բոլոր առարկաների մեջ դու խցկել ես քեզ, ինձ զգում եմ թղթերի թափոն, փուչ, դատարկ, ջարդված, սենյակում գնալով սատկած ճանճի եմ վերածվում, իմ մեջ նույնիսկ բավարար կյանք չկա քեզ ինձանից հերձելու համար:

*

կասես՝ սերը թպրտացող կղզի է պարանոցիս վրա բուսնած, և ես գեղեցիկ եմ՝ ինչպես դեռատի Հիսուսը, ով ոտնաթաթով եզրագծում է աչքերիդ մեջ եռացող մագման. հեղձուցիչ է հետևել՝ ինչպես է իմ ներսի հողը ճաքճքում, ու միակ երանելի վախճանը քո մարմնի մեջ ծնվելն է

ինքնահոսի՝ խատուտիկի թերթերի նման և ազատ՝ ասես տանիքից ճոճվող լաթի կտոր, սիրիր ինձ, դրսում ցուցարարների ծանրության ուժից տնքում է երկրակեղևը, իսկ ես քուրմ եմ աստծո շուրթերից ստեղծված, և մինչև քեզ հասնելը հասցրել եմ մտապահել բոլոր փարավոնների դեմքերը

այնքան ներդաշնակ ես պառկում նախամարդու կողքին, կարծես այլանդակ ծառ լինեմ շուրջդ վազվզող, ում քնքշանքը բորբոսահոտ է ստեղծում, ու ալկոհոլը կոպերս համբուրող կին է, և վախենում եմ, որ էսքան ծակոտկեն եմ, մեռած ու խոնավ մեռելների պես, որոնց մասին սիրում ես կարդալ

մայրդ ոտաբոբիկ կանգնել է երկաթի վրա, ու ես զգում եմ նրա դողը, ով դեռ հղի է քեզանով, շրջանցում է ինձ՝ ասես ճանապարհիդ հանդիպած թուփ լինեմ, որը թույլ չի տալիս տեսնել արագիլների ճկուն վազքը կապույտի վրայով, և մամուռը՝ մարմնիդ մասերի վրա աճող, կասեցնում է թռիչքը

օվկիանոսն այնքան հանդարտ է ընդունում անձրևի կաթիլը իր ողնաշարի վրա, ինչպես էս մոլորակը խոտի վրա թպրտացող մուսուլմանների մարմինները, ու բոլոր շորերիցս օծանելիքիդ հոտն է գալիս, ու գրողը տանի, ես չեմ հավատում, որ թրթուրները վերածվում են թավշյա թևերով թիթեռնիկների

մտածում եմ նավի վրա ծնվող երեխաների մասին, այն ծաղկի գույնի մասին, որն աճում է նրանց եղունգների տակ, նեգր կանանց բարակ, սլացիկ պարանոցի, ու ոչինչ, ոչինչ կարոտի, որ քոռ ճնճղուկի պես իրեն հարվածում է ծառերին՝ հույս ունենալով քամել հիշողությունը քեզանից,

և ես սաստիկ մրսում եմ, չնայած նոր գնված վերարկուի կամ այս անիծյալ սիրո, որը ճեղքեր է բացել մեջս, ուր պատերազմից մնացած փամփուշտներ կան

իսկ հետո սիրիր ինձ՝ իմ մեջ սահմանազծված դատարկություն կա, որտեղ հենց այնպես կարող ես խմել ու հայհոյել, հայհոյել ու խմել,

ես պաշտում եմ քո ձեռքերի տաքությունը

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Լուսանկարը՝ Անահիտ Հայրապետյանի

Միսաք Խոստիկյան

Ջանգվի բարդույթ

Չհամբուրեց:
Պատմեմ:
Չէր համբուրի:
Շրջանը շրջանին:
Չի համբուրի:
Խնդրեցիր, ու չհամբուրեց: Բան չմնաց՝ վայրկյաններ:
Էքլիփսը: Շրջանը՝ համարյա շրջանի մեջ:
Կարող էր: Կարելի էր, կհասցնեիք… մինչև Նա ներս կգար:
Կլռվի:
Խավարումը՝ կարճ պիտի տևեր,
չանցավ:
Շրջանը՝ կես: Դուրս չեկավ:
Առանց համբույրի էքլիփսը լռվեց:
Վայրկյաններ, թե ինչ, պիտի որ տևեր: Գուցե քիչ ավել:
Մեջքդ… պողպատե մի խոշոր մուրճով ջարդված, փուլ եկար գետին:
Սենյակից սենյակ, արագ անկողին՝ շորերով բանով. ննջասենյակ եկավ՝ իզուր: Աչքերդ չոր, չոր, ոչ մի դող, անկապ՝ իբր ինչ-որ բան:
Էքլիփսը կիսատ:
Ներկայացում չէ՞ր:
Հետո արդեն երեքով վարագույրի մոտ. արևային ակնոցի կեսն են կիսում, Բեկեի տանը՝ Նյուգոթի Պայաուդվար կայարանի դեմ: Քրքջում են իրենց լեզվով:
Չես հասկանում:
Սոսկալի մեխանիզմը դղրդաց փոշոտ շողերի մեջ, ցնցվեց, բայց չհաղթահարեց՝
երկնակամարը չշարժվեց, լռվեց. լույսը լրիվ տեղը չեկավ առաջվա պես:
Ու հետո էլ:
……………………………………………………………………………………………

Նախկինում ամեն անգամ գիշերվա սև հոգեվարքից, վերջ ի վերջո, կշարժվեր մոլորակի կոր հողագույնը հռնդյունով՝ վրադ:
Խեղող շողի առաջին շեղբը խլացնող շռինդով կբացեր դղրդացող գմբեթի կամարը,
անհամադրելի որևէ երկրային էակի, առավել ևս քնատ՝

ահավոր տիեզերական մեխանիզմը՝ ժանգոտ ու անհաղորդ, անհողդողդ, անդառնալի:
Ու ամեն անգամ, գրեթե, կիսախավար ամայության մեջ կնկատեիր մի հողագույն աղվես երկաթգծերի արանքը ճղելիս:
Ամեն ամիս:
Կարծես սահմանն անցնելու քո ամենամսյա հարկադրանքի հեգնական կրկնակ, սփոփիչ պարգև՝ աղվես խառնած սև մղձավանջի հողագույն ծեգին՝ մեկ ամսից ավել երկրում մնալու արգելանքի մեջ՝ նրա մոտ ու հետ: Սահմանապահները թակում են արդեն:
Սահմանապահները թակում են:
Ուրիշ մարդ չկա ամբողջ վագոնում: Կարծես թե չկա: Բայց կլինեն, կային:
Հիմա միանգամից. ծանոթ դաջվածքը կես ծանոթ լեզվի, երկաթ դակիչի, դռան շխկոցի ուրիշ երկաթին:
Հաշիվդ համրիր.
չեն հանելու կնիքը՝ երկար կլռվի թղթերիդ վրա:
– Ուղեբեռ չունես. միայն սա՝ բացիր:
Սա էլ կլռվի շփոթիդ վրա, քրտինքիդ վրա՝
լույսը ծագեց: Դեռ ոչ.
ոչ հիմա:
Արդարացիր առտու-գիշերով հողագույն երկրի սահմանի գլխին սև համազգեստի կոճակների դեմ՝ մեկ-մեկ շարանով՝ փաստարկված, պատճառաբանված, արտոնագրված, վավերագրված, արձանագրված՝ էլ չգիտեմ ինչ, սև, կապույտ, կարմիր թանաքների էքլիփս փուլերով կիսահորանջող մեջ մեջի կնքված: Մանուշակագույն կնիքով ձեռքիցդ ընկավ էլի ինչ-որ բան՝ անշուշտ կարևոր: Չխառնվել չսովորեցիր: Լրիվ արթնացար,
ուրեմն՝ չի՜զ, չիիիի՜զ: Բայց այդ ի՞նչ ընկավ՝
ո՞ւր:
Երբ մի քանի ամիս՝ էքլիփսից առաջ,
թե՞ հետո էր դա,
նվեր էիր տանում՝ մանյակ օղերով, հետն էլ մատանի ծոցագրպանում՝
նրան՝ Նյուգոթի, սկզբից Քելեթի,
իրոք գեղեցիկ մանյակ օղերով, հետն էլ մատանի՝ կնիքը վրան,
գողեր հետդ վագոն բարձրացան, մեջները նանար՝ գողական շեկլիկ՝ գուշակեց ազգդ դեռ ներս չմտած՝ – աչքերից,– իբր՝– խորամանկ,– դե ի՞նչ:
Նստեցին կողքիդ՝ նույն իսկ խցիկում ու բացեիբաց խոստացան գռփել, որ քարն էլ պայթի՝ մինչև առավոտ:
Նման էգերի՝ վայրի խմբեր, դեռ սովետի բանակից գիտես. այս կողմերի անտառներում խիտ մոլոր տղերքին կապում էին ծառին ու հերթով շինում՝ կապած ձվերով, մինչև հոգի տան: Դու ո՞նց ես պրծել, խորամանկ աչքեր:
– Ձեր խորհրդարան,– հավատալո՞ւ բան, ասին, թե մտել-փռթել են երեկ, իբր շատերին:
Ուրախ գողեր էին.
կրծքներին խաչեր, կոնյակ ուզեցին քրիստոնեական առաջին երկրի կենացի համար:
Դու էլ հետները աչք չփակեցիր, մինչև ցանվեցին առավոտ չեղած՝ ուսիդ խփելով՝
«Բռավո օհօհó»՝
բան չտարան.

չկարողացան, առաջվա նման:
Երջանի՛կ ես: Ավելի՝ հպարտ.
աչալուրջ ու սթափ՝ չթողիր տանեն: Բայց ի՞նչ էր եղել:
Երջանիկ կլինես, անսպասելի, սահմանի վրա՝ ամսականներիդ խոնարհում մեջ՝ մոտ մի տարի ու կես սրանից հետո:
Երկար կտևի, ասեմ՝ յոթ տարի պիտի մաքրվես երկաթգծերին, ու ամեն անգամ՝ զույգ ստուգում վրադ:
Չես ուզում լսել:
Անքուն, ինքնագոհ՝ ձեռքդ ծոցիդ քիփ, մի կես ժամ չանցած թղթերիդ վրա սահմանադևի կնիքն ստացար զարմանալիորեն առանց ձգձգման, բայց
ետ դնելիս՝ ծոցդ զարդ չկար:
Ո՞ւր ընկավ. չկա:
Օղեր ու շղթա, հետն էլ մատանի՝ կնիքը վրան:
Միայն կնիքներ՝ օլիմպիական օղակների պես՝ կարմիր, կապույտ, սև՝
թղթերդ մնան քեզ մխիթարանք մարզանքիդ համար:
Էլ տեղ չթողիր՝ տակն ու վրա: Համազգեստների կոճակների հետ զարդերդ թռան՝ սևերը տարան,
վստահ ես հաստատ՝ ոչ գողերը՝ ուրախ գողերը:
Հենց հանեցիր, մի կողմ դրիր փաստաթուղթ տալուց՝
թոցրին տարան:
ոտուձեռ ընկար ետևից՝
բա ոնց՝ համեցեք. ի՞նչ դիմում, կաշառք, սպառնալիք, աղերս գիշերվա չէ– ին՝ սահմանի չէ– ին:
Գնացքի ճռինչը ականջ կճղեր, թե չզկռտար:
Մոռացիր անցանք:
Մի ուրիշ անգամ… դե արագ՝ հիմա…
Ասում ես՝ հա՜յ-հա՜յ, մոլորակների շրջումն է անվերջ դղրդում ցնցվող գիշերվա գլխին՝ լույսը բերելով շեղբ–շեղբ ուղեղիդ–ուղեղիդ աշեք՝ բորբոք ու քնատ նախածեգերի առնացող տեմպին՝ կարոտ կնիքի, համբույրի կարոտ ու երազախաբ:
Կնիքի համբույր, համբույրի կնիք.
համբույր ու համբույր ու համբույր. սահմանապահները թակո՛ւմ են նորից:
Ոչ՝ քեզ է թվում. մի կողմից մյուս կես ժամ կքաշի, մինչև նորից հոգիդ կքաշեն, որ կնիք բախշեն: Ինչքան տարբեր են այս ու այն կողմում հարցերդ լուծում:
Մինչև այդ փակիր աչքերդ ծեգին:
Խելքիդ ուղեղծիր տիեզերամասշտաբ՝
հոգնած գնացքն է պողպատը թակում. և ուրիշ ոչինչ:
Ղժժում է արգելակներով, գերլայնէկրան պատրանքիդ վրա.
բարոկալ ու թատերական պաթոսիդ շեղված:
Մաշված դարին end. ինչպես գնացքին: Հեչ բան չմնաց՝
մի քանի տարի՝
ո՛ր դարից ես դու՝ նույնիսկ comp չունես,
ստվերի բաժին, ոչ միայն ստվերի.
ուշիմ մարմիններ քոնը հոգալով կպահեն դիրքերը, հույսերդ՝ չտես.
ջանավարները թե պիտակ կնքեն, վրադ կմնա:
Բայց ինչ էի ասում՝
մի տարի ու կես սրանից հետո Երջանիկ կզգաս:

Կուզես՝ շարունակեմ:
Անհավատալի՜:
Ցուրտ ու փոթորիկ, աջ ու ձախ սպիտակ:
Ճյունը կխթի երկաթգծերը անորոշ երկար: Գիշերը լռված սահմանամերձ կայարանում կստիպվես մնալ:
Դատարկ սրահում քեզանից բացի գնչուների խումբ իր ճարն է տեսնում. երեխաներին տեղավորում են բա-բայ անելու ծուռ դիֆտ ու փայտից հին նստարանին, իրենք էլ ձգվում քեզ բավական մոտ՝ նույն շարքի վրա՝ եղած-չեղածով մոտավոր ծածկված:
Միաժամանակ քիթդ վեր ու վար. իբր քնած չես: Վերջիվերջո՝ վար:
Ձյունը չի դադրում:
Առավոտ չեղած բացում ես աչքդ,
մեջքդ ես փորձում, ոտ ու ձեռ՝ չէ, կան:
Ցուրտ է երևի ու վերից վար կաթ: Բայց անասելի երջանիկ ես,
չէ՞:
Երջանկությունը հաճույք, ապրում չի՝ ապրելակերպ պիտի որ լինի, նույնիսկ ավելին, այնուամենայնիվ...
Երբեք չես եղել այսպես երջանիկ. չասեմ՝ չես լինի: Տարօրինակ հստակ է ու պարզ՝
հիմա, հենց հիմա
երջանիկ ես:
Ճռնչում է գնացքը նորից. ողնաշարը մզզալով ճզմվում:
Այո, երջանիկ.
ոչ առաջ, հետո, անցյալ-ապագա՝ հենց այս պահին՝ այստեղ. տակավին քնած գնչուների մոտ՝ միայն մի քանի նստատեղ բաժան, ձյան մեջ լռված վերջին ու անշուք կայարանի մեջ, խճաբետոնի հատակի վրա:
....

Թարթիչների մեջ կարմիր, գույնզգույն կնիքներն են ծագող շողերի, մեկմեկու շաղում,
սիրտդ խփում է գնացքի տեղակ:
Հիշեցիր՝ ելիր.
Անհարմար դիրքից կամ գուցե կարից շալվարդ է պրկվում այս ժամին՝ գիտես:
Սահմանապահները թակում են արդեն:
Ծանոթ դաջվածքը կես ծանոթ լեզվի, երկաթ դակիչի, դռան շխկոցի ուրիշ երկաթին:
Տարբեր են սրանք՝ տարբեր կեցվածքով, տոնով մաքրությամբ, ինքնագիտակցմամբ, անդրդվելի կասկած ծարավով, տարբեր՝ բնազդով (ավելի կոնկրետ՝ հերիք է շաղ տանք)
ուկրաինական-հունգարական սահմանին, հունգարական-ռումինական սահմանին, բուլղարական սահմանին, սերբական ու եւտ՝ արդեն այլ կարգով: Չելսիա հասնելիս հուզված էիր այնքան, որ բան չես հիշում: Որքա՜ն է անցել դասի օրերից Կ.-ի դդյակում...
Պատերազմական խավարի պիտույք մոմերդ այստեղ դարձան «ռոմանտիկ», ու պսակները ոչ թե զոհերի, այլ տոնի դեկոր, տաք-տաք ցնցուղներ օրը տասն անգամ՝ ի հատուցումն մրոտ կարոտիդ, ոնց վերածվեցին կրակոցները հրավառության այս փողոցներում նոր տարվա շեմին, մահաբեր բոթի սուլոցնե-

րի տեղ հեղվելով հարբած երգեհոնային զառանցանքի մեջ հսկա տաճարում մինչև լուսաբաց գրկախառնվող անծանոթների արցունքների հետ գինով կամ առանց

Սրանց միջև տարի էլ չկար, միայն՝ սահմաններ, սահմանապահներ…

Մեկն ավստրոհունգար իմպերիալ հուշով՝ արժանապատիվ զզվանքը դեմքին քո խավար դեմքից, մյուսը ոտի տակ գլուխ պահելով, շեկը՝ գողական, աչք տնկած բանիդ, աղա, ստրկամիտ բարդութավորված, սառը մեքենա, դառը, ծաղրական և բարեհամբույր,…. ի՜նչ լավն ես ինքդ. ձերոնք քեզպեսին էին միշտ քեզ ցանկանում,

ինչ էլ որ լինի, կնիք է պետք հիմա՝ Նրան տեսնելու,

Նրան տեսնելու մի օրինական պատճառաբանում՝ հավատարժան փաստ:

Ինչքա՞ն կարող ես ստվերը փորել՝ ուսանող լռված:

Նրա՞ն, թե՞ Նրան, Բեկեի տանը, գուցե երկուսի՞ն:

Այնուամենայնիվ, գուցե Դանո՞ւբը:

Ասեմ Դանուբի՞ն,

ո՞վ ունես ընկեր Դանուբից սրտանց՝ որ պարզաջրվես խավարումներիդ:

Դե, ներողություն:

Որտեղ էլ լինի:

Ո՛ւր էր քեզ ընթացք լայնահուն շնչով, արժանապատիվ հաստատ շարադրանք. հազիվ ծերպից ծերպ, պղտոր գետնի տակ կուրացած Գետառ Զանգվի բարդույթով.– ճղճիմ, ոխակալ ու շնչակտուր՝ փրփուրը բերնիդ.– հանկարծ սոթ չտաս քյոխվայի դիրքից՝ հարիֆ չկարծեն:

Հիմա ուշադիր հոգնած անձնագրիդ:

Կարծես թե անցար՝ կնիքն է հանում,

– Կազմն է քրքրված, ինչ-որ շատ մաշված:

Շուտ վեր թռչելու հեչ կարիք չկա. հիշում ես՝ ինչպես հինգ անգամ խփեց ու չեղյալ դարձրեց հինգ կնիքները՝ անցյալ հունվարին:

Երկուսով էիք: Ավելորդ անգամ:

Վերջին անգամը ցավոք այս *հին* աշխարհում:

Ձյունը խթել էր երկաթգծերը. գնացքը լռվել մինչև «ո՞վ գիտի», իսկ ոչինչ չկա՝ մի քիչ տաքանաք. չեմ ասում կոնյակ:

Գիշերով իջաք ձյունածածկ չոլում:

Բախտներդ բերեց. ահա կառաշար հիշեցնող մի բան կորած-մոլորած կայարանի մոտ: Շատ բեռնավորված մարդկանց արանքով, մարդկանց արանքում տեղ չկա՝ վերջը նստեցիք, ու շարժվեց ցրտին մի քանի թափից՝ բարեբախտաբար, բրթելուց հետո:

Մութ, մաշված դեմքեր աջից ու ձախից, սև շուկայում ապօրինի ապրուստ շահելու բեռներով լծված: Աչքիդ կիրակի՝ նայում ես նրան.

մի օղը չկա:

Աչքերը լցվեց:

Չես գտնի հիմա՝ նորից կբերես:

Կես օղով արդեն՝ սահմանին հասաք:

Հավաքեցին, վարորդին տվին անձնագրերը՝ ամեն մեկի մեջ հազարը դրած: Մի մեծ գումար չէր, բայց արի ու տես՝ մոտներդ չկա: Ու ձեզ երկուսով իջեցրին չոլում գիշերվա բքին:

Մեքենան լիքը թողնում են գնա, ծխով ու մխով, ինչքան էլ իզուր պահանջես՝ սպասեն կամ ապահովեն մի ուրիշ միջոց:

Մեքենան գնաց:

Մենակ լինեիր… շուտով կլինես:
Մի ահավոր ցուրտ:
Սահմանապահը մեծ մորթե քուրքի մեջ, փակվեց խցիկում՝ ապակու ետև, ջեռուցիչի մոտ:
Չի ուզում լսել՝ լեզու չգիտի:
Աչքերդ մթնեց. ի՞նչ դուռ՝
դուռը չի պահի,
քուրքի օձիքից քաշի դրան դուրս, ու աղջկան ներս՝
դուռը արդեն ներսից ես փակում. ինչ լինի՝ լինի:
Մինչև կգային դրա հարային՝ ձեզ բնից հանեն… չկարողացար՝ որ լաց չլինի:
Ի՞նչ երկարացնեմ:
Քեզանից բացի Նա խնդիր չուներ.
կնիքն ստացավ՝ *ճիշտ* անձնագրի մեջ, արդեն պետի մոտ՝ ժամ ու կես լեզու թափելով: Չեն հասկանում, իբր չգիտեն ոչ մի բարբառ իրենցը թողած:
Նրա ջանքերով քեզ էլ վերջում կնիքը հասավ, բայց
իսկույն չեղյալ խփին վրայից, երբ պահանջեցիր, որ ձեզ տեղ հասցնեն:
Չէին հավատում, զույգ հազար չունեք, կեսն էլ չունեք, էլ չասեմ՝ կոնյակ,
կամ ուրիշ բան կար՝ խիստ կասկածելի.– Ռուսի ու թուրքի խառնուրդ եք ցեղով:
– Նաև ուրիշի:
Հիշում ես՝ այստեղ ազգային, կարծեմ, փոքրամասնություն օժանդակելու պետական ֆոնդից «ազգակիցներիդ» սարքած հանդեսը. պարում էին ինչ-որ օտար տարազով, օտար երգի տակ, ինչ-որ ուրիշներ, որ գրանտն էին ստացել ու մեջ մեջի արել՝ ազգիդ անվան տակ:
Կամ էլ, ե՞րբ էր, Բեկեն մի անգամ, տանվարձի համար կաստոյլի դիմաց ժամադրել էր քեզ: Հետո ներս տարավ՝ իբր ցույց տալու բարոկ կոթողը: Ու լուռ մռայլվեց՝ խաչ չհանելուդ ավազանի մոտ, միայն դուրս գալիս նոր թեթևացավ. հոգին հանեցիր՝ մինչև հանեցիր. Չէ, մուսուլման չես, ոչ էլ ուրիշ բան. ապահով լինի՝ թող մտածի՝ չես: Ասենք՝ ո՞վ գիտի:
Աղջիկը նրա՝ թե թունդ կռվելիս ծնողներն իրար *հայ* են անվանում ամենավերջին հայհոյանքի տեղ: Բուդապեշտ մտած Բաբաջանյանի կարմիր տանկերին չտամ օղորմի: Լսեցի հետո ուրիշ հաշիվներ՝ գողական, թեմի իրար բացառող երկու գլխներից… հիմա չեմ հիշում:
Ու ըիր կրկին. կնիք ու չեղյալ:
Այդպես հինգ անգամ՝ կնիքը խփվեց, չեղյալը վրան: Էլ տեղ չմնաց կնիքի համար,
գիշերվա համար:
Բայց տաք էր գոնե:
Սրանց հարևան Դաչերի երկրում լավ համբավ ունի տեսակդ հնուց՝ յաթաղան ուտող իշխան սարսափի օրերից կարծեմ, ասուպի տարուց. ամրագրված «սևամաղձություն» փոռագրության մեջ:
Մատդ փուշ մտնի՝ տատիդ ես հիշում՝ անցած աշխարհիդ ողբը մեջ գցած «արգելված սգի սևամաղձությամբ».
թե «չկա աղետ ընկած չլնի մեն մի սերնդին՝ տասին չափազանց».
ճակատագրի ուրիշ ճար չկա՜– կոտեմ ու տատու. դա շատ ես ծամել ականջների հետ, որ խելքը ուտես կնիքի համար ու համ էլ ուրիշ կլոր փաստերի:
Քեզնից տարագի՜ր՝ ետ կգաս ծռված, ուշ թե շուտ մեղա, օվկիանոսներն էլ հույսով անցնելիք արգելք չեն լինի. պլռճիկ չունես՝ էլ ի՞նչ ուրիշ գիր: Հերիք

յուղ վառես՝ մի գործով զբաղվիր կամ գոնե սուս կաց:
Դուրդ չի՞ գալիս,
ոտ ու ձեռ ընկած «գաղթականի թոռ՝ ό, լաճ բնավեր», «բռնադատվածի», կամ ինչ քեզ կոչես, անպատասխանատու քո փայը կգա գնչուների հետ ձյան մեջ «անտունի», արդեն լսեցիր – մի տարի ու կես, թե ինչքան հետո, հաշիվը դու տես, կլնես երջանիկ՝ անիշխան անկապ, «օտար ամայի» Բինգյոլիդ վրա: Խեթ-խեթ մտիկ՝
քո *գործը* մնաց:
Հենց վեցերորդ անգամ, չգիտեմ թե ոնց, կնիքը դրին էլ չեղած տեղում,
Նա ձեռքդ ճանկեց,
թղթերդ խլեց ու դուրս հրեց – by: Արագ պուկ– փախեք: Չհարցնեք, թե ուր:
Կտաս՝ ընկերդ արտիստ վրան ստորագրի, կախի «կնիք – բեկանված» conceptual art.
– Մի ստորագրությա՛մբ:
– Դու է՞լ ես «ուզում հետքերդ թողնել կեսգիշերային ավազի վրա, որ երբ լուսաբացին արտացոլված լինեն ցողերում, լինեն շողերում»...
Անուշ գոլորշի: Քեզ շատ եմ սիրում կլոր պպզած:
– Սիրեիր՝ չէիր անի: Չէիր անի էդքան: Մի նայիր, գնա՛:
Անձայն քայլում եք ամայի չոլում մառախուղի մեջ:
Աջ ու ձախ չկա, ո՛չ լույս, ո՛չ գիշեր, մի տափակ երկիր:
Հարթ. դար-փոս հոս չկա՜:
Երկրաշարժ չկա, թու- թու-թու՝ պրծա՛ր:
Գարունը մեկ հեղեղվում է՝ գրեթե կիսով չափ, Դանուբի ջրով. լրիվ սևահող:
Ռոմանտիկ զբոսա՛նք.
չհամարձակվե՛ս:
Էլ չի գա քեզ հետ,
բառեր չես գտնում. հետո չես գտնի:
Քթերի ֆս-ֆս
համերաշխություն.
միայն քթերի:
Նրա կոշիկը քոնի պես հո չէ՞ր:
Քամին ետ եկավ,
ետ մնաց կրկին:
Կատակ եմ ասել՝ թե հանկարծ պարզվի սահմանն եք կտրել՝ սուս անցել եք ետ.
այստեղ փշալար ու պատեր չկան. պատ կկառուցեն, բայց Բալկաններում...
Հերիք է պատմես.
քայլում եք վաղուց՝ Նա խորը ձյան մեջ, իսկ դու վերևով.– Ո՞նց էլ չես խրվում:
Տեղն ու տեղը խրվեցիր հանկարծ բանից անտեղյակ:
Ձյունը խզխզա՛ց:
Ձեր հետքերից զատ ձյունին հետք չկար:
Ձեր հետքերից զատ և ոչ մի կնիք:
Ձեր հետքերից զատ...
գուցե՝ աղվեսի՞:
....

Երկաթգիծը
չեղածը կտրեց.
Ո՞ր կողմը բռնեք:
Մի քանի քայլից երևաց մի մարդ՝
երկաթգծի մարդ՝ հանդիմանական, ծանոթ գլխարկով. տարավ ետևից:
Վերջը ինչ-որ շենք՝ կայարան թե ինչ. – Այստեղ կսպասեք:
Պատի քարտեզից աչք կտրե՜ց խելքդ՝ ինչքան ճանապարհ.
երեք հարյուր քանի կիլոմետրի չափ:
Ինչ-որ մեկը կանգնածների մեջ շատ ծանոթ թվաց. երկար փեշերով վերարկու հագին, սուր հայացքը մեղավոր ստվերից ու կրունկներով բոյը երկարած: Հայացքներով իրար մատնեցիք՝ ազգակիցներ եք. թե՜ հայելի տեսար:
Մի երևակայիր՝ հայելում կերևաս:
Որ «մոտիկացավ» մեծապատիվ, բերանը թեքոտ
Կանխեցիր արագ՝ «հայ եմ, բայց սոված»:
Անեկդոտն այդպես էլ տեղը չբերին ծանոթ տեղացիք:
– Սահմանապահները,– երկաթգծինը հորանջել զղջաց,– շուտով կերևան: Այստեղ կսպասեք:
Անցակետ էր նորից նոր բերել՝ ասֆալտինն անցաք՝ սա էլ գծերի:
Գլխով արեցիք: Ձեզ դա էր պակաս:
Հենց պոչը քաշեց,
առանց ծպտունի.
– սահմանապահները,
վեր կացեք՝ թռաք:
Նորից ոչ մի *ուր*՝
Թաց-թաց չոլերով, մառախուղի մեջ,
բայց հեռվից հեռու մագնիսների պես աչքներդ կպած երկաթգծերին խավարն էին հրում:
……………………………………………………………………………………………

Որտեղից որտեղ, շատ հեծանիվներ, չես էլ հավատում՝ ձյան մեջ՝ կողք կողքի:
Էլի լացացրիր. ուզում ես բռնե՜ն՝ հեծանիվի գող մեղադրանք դրած՝ բոթում է առաջ:
Լռված ձյան մեջ, լռված քնի մեջ, շեմլիքների կույտ՝ անլույս, անկրակ, ասես մարդ չկա. հազիվ էլ լիներ:
Շատ թե քիչ անցած՝ էլի կողք կողքի շատ հեծանիվներ՝ խրված ձյուներում:
Վրադ չի նայում՝ անցնում է առաջ: Աչքիդ չթվաց:
Ինչքան կքայլեք ֆսֆսացնելով՝ լոկ Բեկեն գիտի:
Հետո նույնը՝ ո՞րերորդ անգամ: Ի՞նչ են անում հեծանիվները հոս՝ մարդու համար չե՜ն:
– Ոչ միայն հացիվ, այլև հեծանիվ– Քելետի, Նյուգոտի:
Հեռվից մեքենա: Վազեցիք այդ կողմ:
Արգելակեց առանց մի լույսի ահագին հեռու. հետո ետ տվեց:
Երկու անգամ էլ կողքով անցնելիս, մեղքս ինչ թաքցնեմ՝ մեջը մարդ չկար:
– Ղեկին մարդ տեսա՞ր:
Դուռ բացելը՝ հայոց պատմություն. իսկ ներսը
ոչինչ՝ նստատեղ չկա, հատակ բան չկա, առաստաղ չկա: Սահմանի թիրախ ձեր գյուղ չես եկել:

Երկու ձեռքով ղեկից կախված տղա էր քշում՝ ոտքի ծայրերը ոտնակներին ձիգ, որ բոյը հասնի ղեկի արանքից մի բան տեսնելու:

Գլխով ներս կանչեց: Ինչ արած՝ առա՜ջ:

Մի կերպ կառչեցիք եղած-չեղածից, դուռը զրմփաց: Բարի ճանապարհ: Ոտքներիդ տակից ձյունոտ գետինը շարժվեց ու գնաց, վազեց՝ հակառակ:

Խոսքը դուռ չի, որ զոռով բացես

չիմացած լեզվով մնում էր լռել.

տղայի քեֆն ընկավ գետինն ու դուրս…

Ի՜նչ խելքիդ փչեց. խոսքի փոխարեն բռնել ու երգել: Սխալվեցիր, ջա՛ն: Ձայնդ դուր չեկավ, թե*չարդաշ* չուզեց նախքան բարի լույս. կանգնեց, իջեցրեց երկաթգծի կամուրջ չհասած՝ ճամփաբաժանին:

– Հարբած ես՝ անգամ երբ խմած էլ չես: Ինչո՞ւ իրենցը…

Հազիվ թե չոր այս անգամ դուրս գաս՝ խաչքարը վիզդ: Չէ,՜ սա Դանուբը չէր…

Մռայլոտ գետ էր՝ ժանգոտ գամերով զիգզագը վրան:

Գուցե Դանուբն է, այնուամենայնիվ՝ առավոտվա դեմ:

Ի՜նչ տխուր է գետը դրսերում՝ քաղաքից հեռու՝ առանց լույսերի, առանց զարդերի, առանց շպար ու տոն.

անճանաչելի անդուր ու վանող, վաղնջենական զորությամբ տարտամ, սառն, անդրդվելի:

Խոսել չի լինում:

Արդեն երգել ես:

Վերջը կիանվես հանրային չոլում՝ մինչև վերջ տկլոր, ու ճար չի լինի ծանոթներիդ պես արվեստ կոչելու:

Գլխի կընկնե՞ր.

կապարե թախիծը ցրելու համար…

գրկում է պահում յոթ մայրաքաղաք կենսախինդ լույսով, զարդարվում պեսպես հրավառությամբ, ճոխ պալատներով, կրում մանյակներ, դարս-դարս վզնոցներ կամրջակապ ու լուսաշարան, զբոսանավերի ճիչ ու խուտուտից խնդում սեթևեթ, խաղում ու հրճվում իր տաճարների, թանգարանների արտացոլանքով, երկրեերկիր գայթակղելով քեզ՝ երկինքը կրկնած, քաշում փեշերին, կամ ում էլ լինի՝ առավել ևս ջրազուրկ– չտես, հեշտանքի ծարավ. դե տարագիրն է տեղը PR-ում ամենաթունդը՝ հակառակ հալին՝ տակ չզգա իրեն:

Վալս.– Ի՜նչ:

Վալս պարել… գիտե՜ս:

Ի՜նչ վաղանցուկ են զարդերն այդ չնչին իր թախծի հանդեպ, ի՜նչ թեթևսոլիկ ու պատահական:

– Աղվեսի քիթը քթին չհասա՜վ…

Կայարանը, տե՛ս:

Գնացքը, գուցե, շատ չի ուշանա լուսաբացի պես:

Քելետի, Նյուգոտի, մինչև Քելետի մի տոմսի գումար կարծեմ կճարվի:

Մարուշ Երամեան

Ծնած է Հալէպ, ապրած է Հալէպ եւ Հալէպի մէջ է որ զգացած է կեանքի մը արժէքը՝ փամփուշտ մը, յաճախ՝ բեկոր մը միայն: Անհեթեթութիւնը հաւասարակշռուած է քերթողութեան հինգ եւ պատմուածքներու երկու հատորներով: Յետո՞յ: Արդէն կեանքը ինք:

Արիւնով Գրուած Պատմութիւններ

Ա. Նկարը

Պատին վրայ միակ նկարն էր. ընդհանրապէս միակը սենեակին մէջ. եւ կ'իշխէր պատի ճերմակին ու սենեակի քաոսին վրայ, կ'իշխէր անոնց ու կը զատորոշուէր անոնցմէ իր… կարմիրով:

«Արիւնարբու Տիթրիխ» կոչեր էր նկարը եւ կնքեր զայն առաջին իսկ տեսած վայրկեանին: Յետոյ երբ իմացեր էր կարմիրին աղբիւրը, նախ զարմացեր էր իր նախազգացումին առջեւ ու որոշեր էր չյայտարարել այդ անունը՝ «արիւնարբու Տիթրիխ»:

Նկարուած կինը սակայն արիւնարբու չէր, պարզապէս շատ տխուր էր, շատ մինակ եւ շատ բռնուած կարմիր սարդոստայնին մէջ:

Թէ ինչո՞ւ ընկերը Մարլէն Տիթրիխի այդ նկարը սկսեր էր ու յետոյ որոշեր իրեն նուիրել, յստակ չէր: Յստակ չէր նաեւ թէ ինչո՞ւ էր սարդոստայնը հոն, ամբողջ դիմանկարը ցանցած, եւ ինչո՞ւ էր կարմիր:

Շատ լաւ կը զգար սակայն նկարին էութիւնը, մանաւանդ երբ մինակ ըլլար անկողնին վրայ, թեւերը գլխուն տակ ծալլած, աչքը՝ կարմիր սարդոստայնին:

Ուրիշ էր պատմութիւնը երբ ընկեր մը ըլլար հետը, երբ տաք պահու մը, անսովոր ամբողջացման պահու մը ընկերոջ նայուածքը իյնար պատին վրայէն զիրենք դիտող կնոջ ու սարսափահար խնդրէր.

– Ծածկէ՜… ծածկէ՜…

Չէր ծածկեր. պարզապէս դիրքը կը փոխէր, կը փորձէր իրանով ծածկել ընկերոջ նայուածքը, համբոյրներով շեղել անոր ուշադրութիւնը, ըլլալ աւելի գուրգուրալից, աւելի…

– Բայց կարմիրը… կարմիր սարդոստայնը…

Յետոյ պէտք չէր եղած նկարը ծածկել-չծածկելու, որովհետեւ նկարիչը ինք դարձեր էր իր սիրածը: Այն ատեն էր որ երկուքը միասին նեղ անկողնին երկարած կը դիտէին, կը զրուցէին, կը ծխէին, կրնային նաեւ քնանալ ու արթնալ նկարին կնոջ նայուածքին տակ, առանց նեղանալու հոնկէ ծորող տխրութենէն, պարզապէս որովհետեւ ա՛լ մինակ չէին:

– Կարեւորը ես չեմ,– կ'ըսէր իր հանդարտ ու խորունկ ձայնով,– կարեւորը ան է, որ միասին ենք:

– Բայց յանցաւոր կը զգամ. սխալ չէ՞ մեր աս ըրածը:

– Ատո՞ր համար այս նկարը գծեցիր:

– Չեմ գիտեր. սկիզբը քու պատմածներդ էին այս կնոջ մասին. շատ սիրեցի

իր… ինչպէ՛ս ըսեմ, իր…
– Քաջութի՛նը:
– Քաջութիւնը եւ… երեւոյթը բացատրելու իր ձեւը, որ այնպէ՛ս համոզիչ է: Շատ սիրեցի մանաւանդ իր այդ ըսածը:
– Ո՞րը. այնքա՜ն բան ըսեր է:
– Գիտե՛ս:
– Գիտե՛մ՝ «երբ մէկը սիրեմ, ա՛լ կարեւոր չի մնար անոր սեռը, մարմինը. կարեւորը անձն է, էութիւնը զոր կը սիրեմ, եւ իր մարմինը սիրելով իր անձին, էութեան հանդէպ ունեցած սէրս արտայայտած կ՚ըլլամ»:
– Հա՛ բայց… երբեմն կը վախնամ կարծես:
– Ի՞նչէն, ո՞րմէ:
– Չեմ գիտեր: Տարօրինակ ապրում մըն է…
– Այս նկարը աշխատած ատե՞նդ:
– Չէ չէ, այս նկարը աշխատած ատենս մոռցեր էի վախն ալ, ներսերուս պոռթկումն ալ:
– Իսկ կարմիր սարդոստայ՞նը:
– Կ՚երեւի վախս է, շփոթս… չեմ գիտեր: Բայց ըսեր եմ՝ երբ ներկս լրացաւ եւ դաստակիս երակը բացի ու սկսայ ներկել…
– Խե՛նթ ես պարզապէս: Կրնայիր երթալ ներկ գնել կամ յետաձգել:
– Իրա՛ւ չես հասկնար: Չէի՛ կրնար: Պէ՛տք էր ամբողջացնէի եւ ճիշդ ա՛յդ պահուն ամբողջացնէի, թէ ոչ՝ կէս պիտի մնար:
– Կիսատ, այո, ճիշդ մեր յարաբերութեան պէս, եթէ այդ օր չստիպէի որ հետս գայիր…

***

Անուն ունէի՞ն: Անշո՛ւշտ ունէին: Բայց կրնային եւ չունենալ: Մեծ քաղաքի մը բաւիղներուն մէջ պատասխաններ որոնող երկու տղաք էին, Ալֆրէտ եւ Ճոնի, կամ՝ Կարէն եւ Շանթ, ի՞նչ տարբերութիւն: Կարեւորը կեանքն էր, կարեւորը հարցադրումներն էին եւ պատասխաններ գտնելու իրենց եռանդը:
Պատասխաններ կը գտնէի՞ն: Պատասխանները տակաւին կարեւոր չէին այնքան ատեն, որ հարցումներ կային: Եւ որքան ատեն որ հարցումները կան, ուրեմն կայ եւ կեանքը:
Այդպէ՛ս է:

***

Եւ այդպէս էր, որ նկարը դարձեր էր զիրենք առնչող գլխաւոր կապը. անոր միջոցով է, որ կը սկսէր իրենց իւրաքանչիւր զրոյցը, եւ կը վերջանար խենթ տաքութեամբ:
Կը վախնար:
Ամէնէն առաջ դաւաճանութենէն կը վախնար՝ դաւաճանութիւն իր մեծ սէրին, այն սէրին, զոր անհատնում, անվերջանալի կարծեր էր:
Երկար ժամանակ անցեր էր՝ երկո՞ւ թէ երեք տարի. բայց Կարէնը ոչ հաշտուեր էր եղածին, ոչ ալ հաշուի նստեր էր ինքզինքին հետ: Պարզապէս օրը կ՚ապրէր ինչպէս որ ըլլար, քիչ մը անտարբեր, քիչ մը վայելքներու տրուած:
Բայց ցաւը ցաւ կը մնար: Այդքանին հետ կրնար համակերպիլ. կրնար հասկցուիլ ցաւին հետ: Վերջերը երբ արկած մը անցուց եւ մարմինը քանի մը տեղերէ կոտրտուեցաւ, անտանելի ցաւերու մէջ ըլլալով իսկ լռեր էր, ակռաները սեղմեր էր ու դիմացեր:

Ցաւին դիմացեր էր: Անտանելին միւսն էր՝ ոռնոցը, որ իր ներաշխարհի տափաստաններուն մէջ կը պտըտէր քաղցած բորենիի վայրագութեամբ. ա՛յդ էր անտանելին:
Ներաշխարհը անձայրածիր տափաստանի մը վերածուեր էր այն օրէն, որ իմացեր էր Ժիրայրին մահը:
Մահը ծանր է, մանաւանդ իր նման մէկուն համար: Գոնէ արկած ըլլար, կոյր պատահականութիւն: Արցախ գացած զոհուած ըլլար: Բայց այսպէ՛ս, ընտրութեամբ երթալ հոն, դէպի այդ ոչմէկտեղը:
Գոյժը լսած օրը ամբողջ փակուած մնացեր էր իր խուցին մէջ, փորձելով հասկնալ. «եթէ կը սիրեմ զինք, ուրեմն պէտք է հասկնամ, թէ ինչո՛ւ այդ քայլին դիմեց» խորհելով (անցեալ կատարեալին ժամանակը չէր հասունցած եւ Ժիրայրին կապուած ամէն բայ ներկայի մէջ կ՚ընթանար տակաւին) մազերը փետտելու, բռունցքներով պատերը քանդելու, կոկորդը պատռելու աստիճան պոռալու մարմաջէն բզկտուելով, բայց մնալով անկողնին վրայ սառած, նայւածքը վեր՝ ոչմէկտեղին ուղղած, կարօտնալով, մեռնելու չափ կարօտնալով եւ փնտռելով մտերիմը՝ Ժիրայրը:
Այս կարօտն ալ անկրելի էր. բայց անոր վրայ կրնար իշխել. արդէն սորված էր իշխել տարբեր ձեւերով՝ երբեմն *սինիք*օրէն վարուելով շրջապատին հետ, բայց ընդհանրապէս խաղալով:
Այս խաղը սկսեր էր հաճոյք պատճառել իրեն (սիրեր էր «Մոզեր»ու սկզբնական խորագիրը՝ Տէախաղ[1], որովհետեւ որքան կը խորանար անոր մէջ, այնքան կը համոզուէր թէ ի՛նչ դիւրին է խաղալ մարդոց հետ, խաղալ հոգիներու հետ, խաղալ ճակատագրերու հետ: Խօսք մը աւելի, խօսք մը այլ շեշտով ըսուած, խօսք մը ընդհանրապէս չըսուած, եւ խօսակիցդ ի՛նչ դիւրութեամբ կը դնես փոթորկոտ ծովուն վրայ տատանող նաւու մը մէջ՝ թող երթայ կասկածներուն ձեռքը ինկած ուղղութիւն ճշդէ…
Յաջողեր էր կարօտը մեղմել, Ժիրայրին բացատրութիւնը կամ պատճառները յարգել, օրերը լեցնել, բայց ներքին տափաստանը մնացեր էր տափաստան եւ կամաց-կամաց վերածուեր էր *սթէփ*ի՝ սառոյց եւ դատարկութիւն, անձայրածիր դատարկութիւն:
Յետոյ եկեր էին նկարն ու նկարիչը՝ Շանթը, ճիշդ ա՛յս հերթականութեամբ՝ նախ նկարը, յետոյ Շանթը:
Արիւնին պատմութիւնը զինք հիմերէն ցնցեր էր, թէեւ տղան պատմեր էր առանց յոխորտալու, առանց փորձելու տպաւորել զինք, պարզապէս որպէս գործնական լաւագոյն միջոցը նկարը ա՛յդ պահուն աւարտելու: Բայց արիւնո՛վ, սեփակա՛ն արիւնով նկարել, իրե՛ն համար:
Նկարը այդպէս արիւնով աւարտելը գլխաւոր կապը եղեր էր իրենց միջեւ, ճիշդ ինչպէս հնդիկները սովորութիւն ունեցած են իրենց ձախ ձեռքին ափը ճեղքել եւ ամուր-ամուր սեղմել իրենց ընկերոջ ափը հաւատալով, որ մէկուն արիւնը միւսին կ՚անցնի եւ այդպէս արիւնով կը կնքէ իրենց ընկերութիւնը:
– Բայց ինչո՛ւ կ՚ուզէիր ճիշտ ա՛յդ օրը, այդ պահուն աւարտել,– Կարէն հարցուցեր էր Շանթին:
Եթէ չգիտնար այս հարցումին պատասխանը, արիւնը պիտի շարունակէր խանգարել զինք, իր ապրիլը: Միայն ներկ ըլլալ-չըլլալո՛ւն հարցն էր, թէ այլ բան:
– Ա՞յլ բան. այսինքն ի՞նչ,– Շանթը նախ զարմացեր, յետոյ լռեր էր, կարծես Կարէնին լռութենէն ազդուած,– այլ բա՛ն,– կրկներ էր ի վերջոյ,– այո, թերեւս այլ բան կայ, բայց ի՞նչ:

– Դեռ կը վախնա՞ս,– հարցուցեր էր Կարէնը Շանթին:
– Արդէն ոչ. այնքա՛ն հանգիստ եմ հետդ. թէեւ կ'ուզեմ հասկնալ:
– Ի՞նչը, հանգստութի՞ւնդ հետս,– ըսեր էր Կարէնը խնդալով:
Շանթ ինք ալ կը խնդար:
– Հա՛, հանգստութիւնս, բայց նաեւ երեւոյթը, նաեւ մարդոց կեցուածքը, ժխտական շրջանակը հիւսուած այնքան դրական բանի մը շուրջ:
– Ինչո՞ւ այսքան տակնուվրայ եղեր ես,– հարցուց Կարէն լրջանալով, որովհետեւ յանկարծ զգացեր էր քովը պառկող տղուն տագնապը,– բա՞ն մը պատահեր է:
– Գործէն հանեցին:
– Ի՞նչ….. Ինչո՞ւ……
– Կարծես մէկը բան մը փսփսացեր է մեր մասին:
– Հարց չէ,– ըսաւ Կարէն բարկութեամբ,– նոր գործ կը գտնենք:
– Փորձեցի,– ըսաւ Շանթը տխրութեամբ,– չկա՛յ: Ինծի՛ համար գործ չկայ:
Կարէն հասկցաւ կացութիւնը, որովհետեւ ինք եւս ապրեր էր գործէն հեռացուելու այս վիճակը:
– Կրնաս քովս փոխադրուիլ, գոնէ վարձքի հոգ չես ունենար, մինչեւ նայինք թէ ի՛նչ կրնանք ընել:
Եւ մնացին այդպէս երկար կողք կողքի, տխրութեան եւ երջանկութեան անկարելի շրջանակի մը մէջ փակուած:

Բ. Փախուստ

Պէտք էր փախչիլ, անապատ չհասած: Ասատուր գիտէր, որ անգամ մը որ ոտք կոխէր այդ բաց, անծայրածիր տարածքը, ա՛լ միջոց պիտի չըլլար փախչելու: Մինչ հիմա մէկ կողմը անտառներ էին, միւս կողմը ծովն էր: Ասատուր կը ծրագրէր նախ դէպի անտառ փախչիլ, հետքը կորսնցնել, յետոյ ծովափին մօտենալ ու– եթէ բախտ ունենային– մակոյկ մը գտնելով հեռանալ այս անիծուած վայրերէն, արհինաթաթախ հողերէն:
Եթէ չըլլար Սիրարփին, Ասատուրին համար ամէն բան կրնար շատ աւելի դիւրին ըլլալ, մանաւանդ մեռնիլը: Բայց կա՛ր Սիրարփին, եւ կար Սիրարփին փրկելու էական հարցը:
Երբեք նայուածքը չէր հեռացներ Սիրարփիին վրայէն: Քնացած միջոցին իսկ աղջնակին ձեռքը կ'առնէր իր ձեռքին մէջ ու կը քնանար մէկ աչքը բաց:
Ոչ ոք իր վրայ դրեր էր Սիրարփին փրկելու ծանր պարտականութիւնը. նման թոհուբոհի մէջ, երբ շատ արագ հասկցեր էին, որ եղածը մէկ տան, մէկ գիւղի հարց չէ, ժողովուրդը յուսահատած դադրեր էր որեւէ բան ընելէ՝ ոչ ինքնապաշտպանութիւն, ոչ փախուստ, ոչինչ: Յանձնուեր էին ճակատագրին, առանց մտածելու որ այս աղէտը (որ յետոյ Մեծ Եղեռն պիտի կոչուէր) զուտ մարդկային էր, մարդոց կողմէ ծրագրուած-իրագործուած, եւ այնքան ալ աղերս չունի ի վերուստ տրուած ճակատագրին հետ:
Ասատուրը ինք եւս կրնար նոյն կրաւորականութեան մէջ իյնալ, եթէ չըլլար Սիրարփիին զինք փրկող, միաժամանակ վտանգող ներկայութիւնը:
Ամէն գիշեր, Սիրարփիին ափը իր ձեռքին մէջ, Ասատուր կը յիշէր այդ օրը, իրենց թոնրատան մէջ, ուր մայրը հաց կը թխէր. տղուն կիսափակ աչքերուն տակ իրենց տունն էր, աշնան այդ օրը եւ մօրը քաղցր ժպիտը.
– Տղա՛ս, հօրդ ըսի քովի Սիրարփին քեզի համար ուզելու երթանք, հա՞…
Նայեր էր մօրը երջանիկ դէմքին եւ գերեկցեր անոր, այդ յոգնատանջ, խո-

նարի, բայց միշտ զուարթ եւ սիրով լեցուն կնոջ: Լուռ մնացեր էր ու մայրը որպէս հաւանութիւն դիտեր էր իր լռութիւնը: Հաւան էր, այո, բայց ոչ թէ յատկապէս Սիրարփիին, այլ մօր կամքը կատարելուն. մայրը ի՛նչ ըսէր, ինք պատրաստ էր ընելու:

Յետոյ սակայն հաճելի գտեր էր դրացի տան այդ փոքրիկ աղջիկը, որուն խելացի նայուածքը միշտ ալ զինք կը փնտռէր, մինչեւ այն օրը, որ մայրը խնամեխօս գացեր էր Սիրարփիին մօր քով: Անկէ ետք, մինչեւ երկու օր առաջ, չէին հանդիպած:

Երբ մութը ինկաւ – ամբողջ օրը քալեր էին – բոլորը շատ արագ քուն մտան: Նոյնիսկ իրենց ընկերացող երկու զինուորները շատ արագ քուն մտան: Ասատուրը սակայն արթուն էր եւ փախուստի միջոց մը կը մտմտար:

Ասատուր կամացուկ մը մխտեց Սիրարփիին կողը մէկ ձեռքով, միւսով ալ բերանը գոցեց. չէր ուզեր վտանգի ենթարկել փախուստի այս հաւանաբար միակ առիթը:

Աղջիկը սարսափած աչքերը բացաւ:

– Սիրարփի, ես եմ, լաւ մտիկ ըրէ՛. կամացուկ մը դէպի երրորդ ծառը սողայ, կրցածիդ չափ առանց ձայնի:

Աղջիկը մատով զինքը ցոյց տուաւ:

– Ես ալ ճիշտ ետեւէդ կու գամ: Սպասէ՛:

Ասատուր անդրադարձաւ, որ իր կողքին քնացած ծերուկը դադրեր է շնչելէ: Վրայէն վերցուց կնոջական զգզզուած շալը – ծերուկին կնոջմէն մնացած – ու երկարեց Սիրարփիին: Աղջիկը գլուխը շարժեց՝ ոչ ոչ:

Տղան աչքերը վեր դարձուց եւ խաչ մը հանեց: Աղջիկը հասկցաւ, առաւ շալը եւ ճկուն մարմնով սկսաւ սողալ. սորուն աւազներուն ձայնը խառնուեցաւ ալիքներու ձայնին:

Երբ Ասատուր հասաւ երրորդ ծառին, աղջիկը համարձակեցաւ ոտքի կենալ եւ շատ ամուր սեղմուեցաւ տղուն:

Երկու կմախք դարձեր էին: Միայն իրենց նայուածքն էր, որ տարբեր էր՝ իրարմով, հետեւաբար կեանքով լեցուն: Ասատուրը քնքշանքով համբուրեց աղջկան ճակատը եւ փսփսաց.

– Յոգնա՞ծ ես:

Աղջիկը գլուխը շարժեց կրկին՝ ոչ:

– Շատ լաւ. հիմա կը քալենք մինչեւ լոյսը ծագի. յետոյ անտառին մէջ կը պահուինք. եթէ պէտք եղաւ, ծառի մը վրայ կը մագլցինք. յետոյ կը սպասենք մինչեւ յոյնի մը մակոյկը անցնի. թերեւս կարենանք փրկուիլ:

Քալեցին ձեռք ձեռքի, շատ զգոյշ. ու երբ արեւը ծագեցաւ, սպառեր էին երկուքն ալ: Ասատուրը աչքերով շատ խիտ թուփ մը գտաւ, մէջը մտաւ Սիրարփին ետեւէն քաշելով: Ամբողջովին ծածկուեցան:

– Ասատուր,– ըսաւ աղջիկը հազիւ լսելի ձայնով:

– Հա հոգիս, բա՞ն կայ:

– Անօթի եմ,– ըսաւ աղջիկը եւ գլուխը կախեց տղուն կուրծքին:

Տղան նախ չզգաց եղածը: Քանի մը վայրկեան վերջ անդրադարձաւ, որ աղջիկը թեւերուն մէջ ծանրացած, անշարժ մնացեր է: Գրկեց ուսերը: Ոչ մէկ հակազդեցութիւն: Ահաւոր տագնապ մը գրոհեց վրան: Աչքերը սեւցան: Ի՞նչ ընէր:

Նախ ապտակեց աղջիկը, թէեւ ապտակ չէր, շոյանքի պէս բան մըն էր. կը վախնար որ ապտակին ձայնն իսկ մատնէ զիրենք:

Աղջիկը շարժեց գլուխը, բացաւ աչքերը ու ետ գոցեց:

Թուփէն դուրս ելլել չէր ըլլար, վտանգը շատ մեծ էր, ի՞նչ ընէր:

եւ զարմանալի ներշնչումով մը, որուն ներշնչարանը սէրն էր հաւանաբար, Ասատուր սուր ճիւղ մը կտրեց թուփէն եւ ամբողջ ուժովը խրեց դաստակի երակին մէջ. արիւնը բարակ-բարակ սկսաւ հոսիլ: Տղան դաստակը դրաւ աղջկան բերնին, կամացուկ մը շրթունքները բանալով:

Արեան բարկ հոտէն աղջիկը ընդոստ նստաւ, բացաւ աչքերը. նայուածքը բացակայ էր. ահաւոր սարսափ մը տարածուեցաւ աչքերուն մէջ յիշողութեան բացուած գուռերէն, եւ սեւ ներկեց նայուածքը:

Կրկին մարեցաւ:

Այս անգամ տղան ճիգ չըրաւ զինք արթնցնելու. պարզապէս կրկին դրաւ բաց երակը աղջկան բերնին եւ հոն պահեց: Քանի մը վայրկեան վերջ շրթունքները սկսան մեքենականօրէն շարժիլ. Սիրարփին Ասատուրին արիւնով կը սնուէր:

Երբ շրթունքները դադրեցան, Ասատուր հեռացուց դաստակը:

Կ'ուզէր ինք ալ քնանալ: Բայց ուղեղը հանգիստ չէր: Վախը լարեր էր ռունգերը, որոնք կ'առնէին հոտը վտանգին, որ շատ մօտ էր տակաւին, իսկ գալիք պահը՝ անկանխատեսելի:

Հանեց շապիկին գրպանը մնացած լուսանկարը եւ յիշեց քաշուած օրը: Երկար փորձերէ ետք հայրը ի վերջոյ համոզուեր էր տղան համալսարան ղրկել, եւ Ասատուրը մեծ եռանդով սկսեր էր մուտքի թուղթերը պատրաստելու աշխատանքին: Նախ՝ լուսանկար: Երբ իրիկունը տուն վերադարձեր էր լուսանկարը գրպանը, գիւղին անսովոր եռուզեռը, րոպէ առ րոպէ մեծցող տագնապը ցնցեր էին զինք:

– Տղաս, դուն գնա՛,– խնդրեր էր մայրը եւ տուեր հաստ բաճկոնը,– Սիրարփին ալ հետդ առ. գոնէ դուք փրկուիք:

Գաղթականութիւնն ու Ջարդը սկսեր էին:

Խելացի կին էր մայրը, գիտէր որ մնալը ստոյգ մահ պիտի նշանակէր եւ զինք փրկելով յոյս ունէր երկու գերդաստան կրկին ծաղկեցնել:

Նայեցաւ նկարին, նայեցաւ քնացող աղջկան ու մտածեց՝ լաւ զոյգ մը կ'ըլլայինք: Դարձուց նկարը, թուփին նոյն ճիւղը թաթխեց դեռ ծորող արիւնին ու հատիկ հատիկ գրեց.

«Զիս մի՛ մոռնար»: Գրեց նաեւ անունը՝ Ասատուր:

Սպասեց մինչեւ արիւնը չորցաւ. ապա նկարը դրաւ Սիրարփիին ծոցը, շապիկը կամացուկ մը վերցնելով:

«Ինչ կ'ըլլայ, ինչ չըլլար. եթէ չփրկուիմ, գոնէ յիշէ զիս. գոնէ ինծմէ բան մը մնայ. թէեւ պիտի ուզէի որ զաւակներ մնային մեզմէ…»:

Հանեց սիկարէթ մը, ափը կլորցուց, վառեց լուցկիի մնացած երկու ցպիկներէն մէկով եւ վառած կողմը բերանը դրաւ: Քանի մը բերան ծուխը քաշելէ ետք թուքով թրջեց կտրոնը եւ սիկարէթը մարելէ ետք բերնէն հանեց:

Յետոյ ինք ալ քնացաւ, Սիրարփիին գլխուն ծանրութեան տակ թմրած թեւը մոռցած:

***

Տարիներ վերջ Սիրարփիին թոռները երբ գտան Ասատուրի նկարը, մեծ հետաքրքրութեամբ հարցուցին անոր ով ըլլալը, հիմա ուր ըլլալը, ինչ վախճան ունեցած ըլլալը:

– Չեմ գիտեր,– խեղճացաւ Սիրարփին եւ աչքերը լեցուեցան,– արթնցայ որ չկայ, տարեր էին, չեմ գիտեր:

Վերջին բառերը մարեցան շրթունքներուն վրայ: Թոռները լռեցին, գլուխնին

դրին մեծ մամային գոգը եւ այդպէս մնացին, իրենց լուռ, մանկական գուրգուրանքով մխիթարելով սէր մը, որ չծնած մեռեր էր արդէն:
Ասատուրին արիւնը սակայն կը շարունակէր հոսիլ Սիրարփիին երակներէն…
Եւ նոյն այդ արիւնն էր, որ «անմահացեր» էր Շանթի նկարին վրայ:

Գ. Խճանկար

Արիւնը հուն կը փոխէ՜:

***

Գառնիկ էֆէնտին իր վերջին սուրճը կը խմէր, երբ տղան կամացուկ մը բացաւ դուռը, նայեցաւ ներս, եւ տեսնելով որ Գառնիկ էֆէնտին չ'անդրադառնար, մտաւ, նոյն փափուկ շարժումներով գոցեց դուռը եւ կեցաւ:
Եկեր էր խօսելու, կարծիք յայտնելու, եթէ պէտք ըլլար՝ խնդրելու: Բայց չէր գիտեր, ուրկէ՜, ի՜նչպէս սկսիլ:
Քանի դեռ Գառնիկ էֆէնտին իր սուրճին հետ էր, տղան մնաց հանդարտ, շուրջը դիտելով:
Առաջին անգամը չէր, որ կը մտնէր սենեակը, տան հիւրանոցը, ուր տանտէրը ընդհանրապէս իր հիւրերը կ'ընդունէր եւ ամէն գիշեր իր վերջին սուրճը այստեղ, այս կիսամութ եւ լուռ սենեակին մէջ կը խմէր:
Տղան շուրջը նայեցաւ: Շատ բան չէր փոխուած այս տան մէջ հաւանաբար հարիւր տարիէ ի վեր: Այս անփոփոխ վիճակը ապահովութիւն կը ներշնչէր իրեն: Շատ բան չէր փոխուած նաեւ այն օրէն, երբ առաջին անգամ ոտք կոխեր էր հոս: Հաճելի յուշ մը չէր, ու դէմքը ցաւի ծամածռութիւն մը առաւ, աչքը սեւեռած Գառնիկ էֆէնտիի ճիշտ գլխավերեւը գտնուող նկարին, որ, յետոյ իմացեր էր, այս տունը կառուցողն էր, Գառնիկ էֆէնտիի Գառնիկ պապը:
Առաջին տեսնելուն ուղղակի սարսափ ապրեր էր անոր խիստ նայուածքէն, որ թաւ ու պռստած յօնքերուն տակէն կը մխրճուէր դիտողին ուղղակի սրտին կարծես: Եւ այդ նկարին էր որ սեւեռեր էր այն ամբողջ ժամանակը, երբ հօրքուրն ու հօրեղբայրը իրեն կը խօսէին: Մեծ պապին խստութեան աւելի դիւրաւ դիմացեր էր այդ օրը, քան իր հարազատներու սառն անտարբերութեան:
Հիմա սակայն միայն տխրութեամբ կը յիշէր այս բոլորը. նախկին սարսափը չկար պատկերէն, չկար նաեւ զինք սառեցնող տառապանքը: Բայց կար մտահոգութիւնը հիմա՛ ըսելիքին. ինչպէ՞ս պիտի ընդունէր Գառնիկ էֆէնտին իր առաջարկը, չէր գիտեր:
Գառնիկ էֆէնտին, կ'երեւի զգալով տղուն հայեացքը, գլուխը վեր առաւ.
– Եաննի՞ս… բա՞ն պատահեր է:
– Էֆէնտիմ… չէ… բայց…– կակազեց տղան, յետոյ տեսնելով մարդուն բարի ժպիտը, սիրտ առած շարունակեց,– կ'ոնա՛մ բան մը ըսել:
– Եթէ այդքան կարեւոր է, որ քունդ փախցուցեր ես, ըսէ՛, մի՛ քաշուիր:
– Խորքին մէջ՝ քիչ մը կը քաշուիմ, որովհետեւ խնդրանք մըն է ընելիքս, ծանր խնդրանք մը… մինչեւ հիմա այնքա՜ն բան ըրեր էք ինծի համար:
– Ըսէ՜ տղաս,– կրկնեց Գառնիկ էֆէնտին, բայց այս անգամ սուրճին գաւաթը ձեռքէն վար դրաւ եւ սպասեց:
Տունը լուռ էր. մնացեալ զաւակները քնացեր էին: Լռութիւնը կարծես յուշով յղի էր հին տան որմերուն մէջ ու կամարներուն տակ: Եւ այդ լռութիւնը այնքան նման էր այն միւս լռութեան, այն միւս, երբ… այդ լռութեան մէջ էր, որ

Եաննիս Բաբանտրէոսը վերցուց նայուածքը, նայեցաւ ուղիղ Գառնիկ էֆէնտիի աչքերուն եւ ըսաւ.
– Գառնի՛կ էֆէնտի, կը խնդրեմ, զիս ալ քու զաւակներուդ կարգին զաւակ համարես եւ թոյլ տաս, որ ընտանիքիդ անունը կրեմ:
Այնքան անսպասելի էր երիտասարդին առաջարկը, որ Գառնիկ էֆէնտին նախ լռեց, ապա սուրճէն *ֆըրթ* մը քաշեց, կաթիլը կոկորդը ցատկեց, սկսաւ հազալ ու երբ հազը հանդարտեցաւ, ըսաւ.
– Տղա՛ս, բայց ի՞նչ կ'ըսես, մտածե՛ր ես,– պարզապէս կը փորձէր ժամանակ շահիլ, գիտնալու համար թէ ո՛րն էր ճիշտ պատասխանը:
Իրապէս, ի՞նչ կրնար ըլլալ ճիշտ պատասխանը այս առաջարկին, որ խորքին մէջ աւելի խնդրանք էր, նոյնիսկ աղաչանք, դատելով տղուն նայուածքէն:
Եւ երբ տղան լուռ մնաց.
– Ինչո՛ւ, ինչո՛ւ սակայն,– կրկնեց:
Եաննիս, որ տասնութը նոր թեւակոխած, տակաւին կը պահէր պատանութեան հովը մոյնքին վրայ, մտամոլոր կը լռէր, դէմքին՝ ծանր տառապանքի դրոշմը:
– Նոյն վերյուշն է կրկին,– մտածեց Գառնիկ էֆէնտին եւ գլուխը օրօրեց:
Եւ այդ յուշը ծանր էր, շա՜տ ծանր. անցնող հինգ տարիներուն տղան Եաննիսը չէր կրցած ընդունիլ եղածը, հասկնալ կամ մոռնալ: Մնացեր էր կարօտը, անտէր ըլլալու ցաւը, մերժուած ըլլալու անսփոփ վիճակը:
Եթէ այն օրերուն քիչ մը մեծ ըլլար, թերեւս կարենար հասկնալ, որ կեանքին մէջ նաեւ ինքնաշարժի արկածներ կրնան պատահիլ, որոնց ընթացքին ծնողք կրնայ մահանալ՝ հայր եւ մայր միաժամանակ, եւ մէկ վայրկեանի մէջ մէկու մը կեանքը կրնայ տակնուվրայ ըլլալ:
Ճիշդ այդ պահուն սակայն Եաննիս Բաբանտրէոսի միտքին մէջ այլ ցաւ կար, ցաւալի այլ յուշ կար:
Հօրեղբայրն ու հօրաքոյրը թաղումի եկեր էին, յետոյ նայեր էին իրեն երկա՜ր երկա՜ր, իրարու հետ նոյնքան երկար փսփսացեր էին եւ ի վերջոյ որոշեր զինք… որբանոց դնել:
Չէի՛ն ըսած ինչու: Ինք ալ չէ՛ր հարցուցած ինչու: Բայց եւ չէր հասկցած այդ ինչուն: Ու մնացեր էր հոն, ուր նստեր էր՝ մեծ պապ Գառնիկին խիստ դիմանկարին դիմաց, սպասելով գալիքի մը, որուն մասին բնաւ գաղափար չունէր: Չէր լացած, չէր բողոքած: Պարզապէս լռեր էր եւ սպասեր:
Դրկից դրացիներն էին, որ բացեր էին իրենց տունը սգակիր բազմութեան, ընդուներ ցաւակցողներու խումբերը, սուրճ հրամցուցեր:
Այդ օրն էր, որ Գառնիկ էֆէնտին որոշեր էր ընելիքը՝ տղան որբանոց պէտք չէ ղրկել: Կարծես հարազատներուն անհաղորդ եւ պաղ վերաբերումը զինք խոցեր էր աւելի, քան տղան, որ տակաւին չէր հասկնար կատարուածը:
Նախքան տղուն հաղորդելը այս որոշումը, Գառնիկ էֆէնտին զանգեր էր իր փաստաբան բարեկամին: Ամէն բան հեշտօրէն դասաւորուեր էր: Ազգականները ուրախութեամբ ստորագրեր էին թուղթերը – այդ ուրախութիւնը ջնջեր էր իր ըրածին ճշդութեան հանդէպ Գառնիկ էֆէնտիի ունեցած կասկածի վերջին նշոյլն ալ – եւ հեռացեր անվերադարձ:
Տարիներու թաւալքին հետ մոռցուեր էին այս մանրամասնութիւնները: Մինչեւ հիմա:
– Տղա՛ս, չըսե՞ս ինչո՛ւ:
– Պարզապէս որովհետեւ հարազատ հայրս դո՛ւն եղար,– ըսաւ տղան դուրս գալով յուշերու փակ շրջանակէն,– պարզապէս որովհետեւ կ'ուզեմ երախտապարտ ըլլալ:

Գառնիկ էֆէնտիին աչքերը լեցուեցան, «լաւ, հալալ տղայ է» մտածեց եւ ա՛յդ պահուն գիտցաւ պատասխանը.

– Տղա՛ս,– ըսաւ,– ձեր ընտանիքէն միայն դո՛ւն մնացեր ես, հօրդ արիւնն է որ երակներէդ կը հոսի, դո՛ւն է որ պիտի պահես իր յիշատակը, շարունակես իր սերունդը:

Ուրիշ ի՞նչ ըսէր: Փորձէր իսկ, Գառնիկ էֆէնտին այլ ըսելիք պիտի չգտնէր, որովհետեւ իրապէ՛ս կ'ուզէր որ տղան պահէր յիշատակը իր յոյն դրացիին, որ ոչ միայն իր լաւ բարեկամը եղած էր, այլ նաեւ մանկութեան ընկերը:

Տղան երկար պահ մը լռեց: Յետոյ մեղմօրէն ըսաւ.

– Ուրեմն չես ուզեր:

Եւ առանց սպասելու Գառնիկ էֆէնտիի պատասխանին, դուրս ելաւ սենեակէն:

Բայց Եաննիս Բաբանտրէոսը դիւրաւ յուսահատող մարդ չէր: Մանաւանդ որ վստահ էր առած քայլին արդարութեան:

Քանի մը օր վերջ, կէսօրուան ճաշի ժամուն, երբ ընտանիքը հաւաքուած էր, բայց ճաշը տակաւին չէր սկսած, տղան հանդարտօրէն նոր անձնագիր մը դրաւ Գառնիկ էֆէնտիին առջեւ եւ գնաց իր տեղը նստիլ:

Գառնիկ էֆէնտին ակնոցները դնելէն առաջ իսկ գրեթէ գիտէր կարդալիքը.

Վան Պապատէրեան գրուած էր հոն:

Իր բարերարին մականունը չէր, բայց հայու անուն-մականուն էր:

Արիւնը հուն փոխեր էր, պատմութեան մէջ թերեւս առաջին եւ միակ անգամը ըլլալով:

***

Տարօրինակ չէր բնաւ, որ Շանթը Վան Պապատէրեանի զաւկին՝ Կարէնին նուիրուելիք նկարը ի՛ր արիւնով ամբողջացուցեր էր: Հունը փոխած արիւնն էր, որ զինք կարծես կանչեր էր, ցաւի եւ տառապանքի թաւ եւ թաքուն կանչով:

[1] The Magus (The God Game) John Fowles.

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Կարեն Ղարսլյան

Շաբաթվա մութ կողմը

Երկուշաբթի
Երեքուշաբթի
Չորեքուշաբթի
Հինգուշաբթի
Ուշբաթ
Ուշաբաթ
Միուշաբթի

Լապտերասյուների բույրը

(«Շաբաթվա մութ կողմը» բանաստեղծության երազը)

Սենյակում այնքան ցախավել կա
Որ հատակն ավլելու տեղ չկա

Ծլընգ
Ծլընգ
Ծլընգ

Բողոքեցին կախված պղնձե սնամեջ խողովակները
Որոնց գլուխ էր քսվել
Աջ աչքը քերեց
Անվտանգության տեսախցիկի օբյեկտիվը
Գույները խախտեցին ուրվագծերը
Ավելների ցախերը ծաղկեցին

Մեջքի վրա պառկած մի շուն կար դռանս առաջ
Մի կին անհետացավ լապտերասյան հետևում
Ջատկի պես պայքարում էր շունը
Որ կարենա կանգնել իր բազմաթիվ
Քառոտիկ թարթափող ոտքերի վրա
Կինը շարունակում էր իր զբոսանքը
Այդ լապտերասյունը ձեռքում
Ճանապարհին քաղելով
Եվս մի քանիսը

Ճկույթիս ծայրը հենեցի գետնին

Շունը մագլցեց
Բայց պլստաց ու նորից ընկավ մեջքի վրա
Թաթերը թույլ պտույտներ էին գործում օդի մեջ
Փչացած պրոպելլերի թիերի պես

Կինը թաղեց իր քիթը
Լապտերասյուների փնջի մեջ
Ու հոտ քաշեց կուրացնող լույսերից
Երջանիկ տեսք ուներ
Դիմազուրկ

Փողոցը թաղվեց մթության մեջ
Ես մեջքի վրա պառկեցի պայքարող շան կողքին
Մեր վրայով փայտփորիկների երամ թռավ
Ներխուժելով ծաղկող ցախավելների սենյակ

Քաղաքների ու անտառների փախուստը

Կարմիր քաղաքները լեղապատառ փախչում են
Կապույտ անտառները լեղաճաք ձլկում են
Այնտեղից ուր այս տաքսու ծեր վարորդը
Տանում է ինձ
Արագ

Դոփում է դոփում է դոփում է
Ավարտված ծանր գիշերային հերթը
Մթի մեջ դոփում է
Հաճախորդները խփում են
Խփում են մեքենայի պատուհաններին
Մոտիկ են հեռու են ցխվում են հողմապակուն
Միշտ ճիշտ հաճախորդները
Դոփում են
Քունքիս մեջ
Հիմա

Անապացուցելի սխալի վրա
Գիծ քաշել ամրագոտիով
Իրարից խռոված մարմնի մասեր
Դատարկ նստարաններին

Կոշիկս չարախնդաց
Երբ ծամոն կպավ մյուս կոշիկիս ներբանին
Թռչող ցելոֆանե տոպրակներն ու թերթերը
Հետևներից քարշ են տալիս հոգնած քամուն
Վան Գոգի հսկա արևածաղիկների գրաֆիտին
Մեզ է գարշահոտում

Մեզ ինտերնետ մատակարարող
Վերգետնյա մալուխներին թառած
Ճնճղուկներն իրենց ծերտով
Ջեքսոն Փոլոք են գրագողանում մայթի վրա

Վարձով տանս պատերը
Երկար ծուռմռտիկ ստվերիս են քամսվում
Կարոտած կատվի պես

Ինտերնետն անջատած
Մարմնամասերս ցաքուցրիվ պառկել են
Սենյակի տարբեր հատվածներում
Իրարից խռով
Թուլանում են
Լավ են զգում
Այժմ երբ բոլոր անտառները
Ինտերնետներն ու քաղաքները
Ցվրվել են այստեղից

Կիկ(ապիտա)լոպ

(«Քաղաքների ու անպառների փախուստի» երազը)

տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի **ես** գործից տուն
տնից գործի**ես**գործից տուն
տնից գործիգործից տուն
տնից գործործից տուն
տնից գորրծից տուն
տնից գոծից տուն
տնից գծից տուն
տնից ից տուն
տնից տուն
տնիցտուն
տնիուն
տուն
տն
տ

Տո՛ւր
Ինձ
Խնդրեմ
Մի անգամ էլ
Եվ ինձ հայտնիր անունը քո
Որ ես նույնպես ընծա շնորհեմ քեզ
Որ լավ խնդա և քո հոգին

Ոչոք
Է իմ անունը
Ինձ Ոչոք են միշտ
Հորջորջում իմ հայրն ու մայրը
Եվ իմ բոլոր բարեկամները բազմաթիվ

Բյուրակն Իշխանյան

Իմ կենսագրությունից արդեն ես էլ գլուխ չեմ հանում: Ծնվել եմ Մոսկվայում, մեծացել Երևանում, մի քիչ էլ՝ Պրահայում: Մասնագիտությամբ բժիշկ եմ, հոգեբույժ, մեկ էլ կլինիկական լեզվաբան, բայց փող աշխատելու համար թարգմանություններ եմ արել, զանազան մանր-մունր լրագրողական ու այլ «ոչ մասնագիտական» գործեր: Ապրել եմ զանազան եվրոպական քաղաքներում, իսկ հիմա Կոպենհագենում մարդու ուղեղն եմ ուսումնասիրում, երեկոներն էլ պատմվածքներ եմ գրում: Հույս ունեմ՝ 2016-ի վերջին տասներկու ավարտուն պատմվածք կունենամ: Չգիտեմ՝ Դանիայում կմնամ, թե չէ, ու չգիտեմ՝ դիսերտացիաս պաշտպանելուց հետո ինչով կզբաղվեմ: Մենակ մի բան հաստատ գիտեմ. Հայաստանում էլ չեմ ապրելու:

Ջազ կաֆե

«Շատ լավ գիտես, որ քեզ տեսնել չեմ ուզում»,– գրեց Լին ու հեռախոսը դրեց վերարկուի գրպանը: Կեսգիշերն անց էր, և արդեն հասել էր իր նոր բնակարանը՝ նկուղ Կոպենհագենի Վելբյու արվարձանում:

Գրպանները փորփրեց, բայց բանալիները չգտավ: Երևի սառած մատների պատճառով պարունակությունը չէր զգում: Գրպանները շուռ տվեց: Ոչ մի բանալի: Հավանաբար ընկել են, երբ հեռախոսը դրել է գրպանը: Կռացավ, շոշափեց ասֆալտը: Ոչինչ: Կարող էր նաև դրսում եղած ժամանակ գրպանից գցել: Դա նշանակում էր, որ տրցակն ընկել էր ինչ-որ տեղ Ամայի և Վելբյուի միջև՝ աշխատավայրից մինչև Ֆակտա, Իսլանդս բրյուգե կայարան, մետրոն, Նորեպորտ, քաղաքի կենտրոնը, ջազ կաֆեն, նորից մետրոն, գնացք և վերջում՝ կայարանից նկուղ քայլելու ճամփան:

Սկսեց ինքն իրեն մեղադրել Բլումին գրելու և ոչ մի տեղ չտանող զրույց սկսելու և ընդհանրապես ջազ կաֆեում հայտնվելու համար, որովհետև գիտեր, որ Բլումին տեսնելը ոչ մի լավ բանի չի բերելու:

Գնացքում ճամփան պակաս ձանձրալի սարքելու համար մտել էր Ֆեյսբուք ու Բլումին 😊 ուղարկել:

«Բարև,– պատասխանել էր Բլումը,– ինչո՞ւ էդքան կարճ»:

«Շտապում էի»:

«Ընկերուհուդ խաթր պիտի մնայիր»:

«Ընկերուհուս խաթր գնացի»:

«Էդ դեպքում ինչո՞ւ եկար: Ինձ տեսնելու համար կարող էիր առանձին հանդիպում նշանակել»:

«Պոեզիայի համար: Շատ լավ գիտես, որ քեզ տեսնել չեմ ուզում»,– գրեց Լին, երբ արդեն հասել էր տան դռան մոտ, իսկ բանալիները չկային:

Գոնե առավոտյան հեծանիվով գործի գնացած լիներ: Թե ի՜նչ մի ալարկոտություն էր: Եթե հեծոն վերցրած լիներ, ամեն կանգառում կողպել-բացելուց պիտի բանալիները հաներ ու տեղում կիմանար՝ կորցրե՞լ է, թե՞ մոտն է, իսկ հետդարձի ճամփին հեծոյի վրա ուղղակի չէր կարողանա Ֆեյսբուքով շփվել:

Բայց նկուղի դռան մոտ կանգնած ժամանակ էնքան էլ կարևոր չէր, թե ինչ կարող էր չանել, կամ որտեղ էին բանալիներն ընկել: Նախ պիտի ներս մտ-

ներ, որ փողոցում չքներ: Մյուս մուտքը տանտիրոջ բնակարանի միջով էր: Վախվխելով մոտեցավ գլխավոր մուտքին և զանգը տվեց: Շունը հաչաց: Տանտերը բացեց դուռը՝ հագին մենակ տրուսիկ: Հազար անգամ ներողություն խնդրեց՝ փորձելով չնայել տկլոր մարմնին, ու վազեց դեպի նկուղի աստիճանները, մինչ տանտերը կբռներ կատաղած շանը:

Մտավ անկողին ու կամաց-կամաց վերլուծեց, թե ինչ էր տեղի ունեցել: Բանալիների տրցակը չկար, նշանակում էր՝ վաղը չէր կարողանալու տան դուռը փակել, չէր կարողանալու հեծանիվ քշել ու չէր կարողանալու գրասենյակ մտնել: Նաև նշանակում էր, որ եթե բախտը չբերեր ու չգտներ, ստիպված էր լինելու նոր կողպեքների համար վճարել և ինչ-որ կերպ կոտրել հեծնոյի փականները, նորերը գնել: Ինչ-որ կերպ, որովհետև չկար Բլումը, չկար նաև հեղուկ ազոտը:

Մի երեք ամիս առաջ հեծնոյի բանալին կորցրել էր, Բլումին գրել էր, թե փական կոտրելու գործիքներ չունի: Բլումը ժամանել էր երկու թերմոս հեղուկ ազոտով ու կես րոպեում հեծնոն ազատել փականից: Հեղուկ ազոտը լցրել էր փականի վրա, փականը սառցակալում էր, ու գոլորշիները տարածվում էին Բլումի ու Լիի ոտքերի շուրջ: Հետո մուրճի ընդամենը մի հարված էր պետք սառույցի մեջ կորած փականը կտոր-կտոր անելու համար: Հիմա ո՞վ կկարողանա փական կոտրել: Ո՞վ հեղուկ ազոտ ունի: Ուրեմն ստիպված է լինելու նոր հեծանիվ ճարել նոր կողպեքների հետ: Լիքը ծախսեր:

Բայց լավ, որտե՞ղ կորցրեց բանալիները:

Գործից դուրս գալուց առաջ Միան իրեն մի կողմ էր քաշել, ու մինչ Լին ուրախությամբ հայտարարել էր, որ արդեն մի ամիս է, ինչ Բլումին թողել է, Միան ասել էր.

– Լսիր, Բլումը գեյ է:

Բայց ինձ դեռ սիրում է, բայց նախկին ընկերուհիներ ունի, բայց, բայց…

– Ասում եմ՝ հաստատ գեյ է: Դեկտեմբերին էն վերջին հանդիպման ժամանակ կողքը նստեցի: Բոլոր լեզվաբանական նշանները կան. գեյական լիսպերը, ձայնավորների խզումը: Լիսպերի մասին ինքն էլ գիտեր:

Հա՛, էլի, գեյական լիսպերը: Էսքան ժամանակ չէր հասկանում, թե ինչու էր Բլումն Իսլանդիային Իշլանդիա ասում: Հոլանդական ակցենտ: Բա կալիֆոռնիական հնչողությամբ ձայնավորնե՞րը: Էշ-էշ կարծում էր, թե Բլումը հատուկ է Կալիֆոռնիայի անգլերենը նմանակում, որ Դանիայից հետո էնտեղ տեղափոխվի: Ասում էր՝ չգիտեմ՝ էնտեղ խոտն ավելի կանաչ է, թե չէ, բայց հաստատ ավելի արևոտ է: Բայց… բայց…

– Բայցերդ չգիտեմ: Հետս արի:

Միան Լիին տարավ խոհանոց, որտեղ թիմի գեյերը գործից հետո նստած գարեջուր էին խմում:

– Յենս, ասա:

– Ի՞նչ ասեմ,– Յենսը նայեց Լիին, նայեց ուղիղ աչքերի մեջ, էնպիսի հայացքով, որ Լին կմտածեր՝ ֆլիրտ է անում, եթե հաստատ չիմանար, որ Յենսը գեյ է:

– Նկարը, որ նոր ցույց տվեցի:

– Հա՛,– Յենսը հեռախոսը հանեց գրպանից, ինչ-որ բան փորփրեց,– սա՛,– Միային ու Լիին պարզեց Բլումի Ֆեյսբուքի պրոֆիլի նկարը, որտեղ Բլումը միամիտ երեխայի պես նայում է ձեռքին թառած թութակին,– գեյ է:

– Հաստա՞տ: Ի՞նչ գիտես:

– Փորձից: Ի՞նչ կասես,– Յենսը հեռախոսը պարզեց Ռունեին:

– Պսիխոպաթ էլ կլինի: Հըլը ինքնավստահ հայացքը: Ոնց որ ասի՝ հես ա քեզ կպանեմ ու լավ կանեմ,– ծիծաղեցին,– ուրիշ նկար չունե՞ս:

Ռեյկյավիկից ոչ հեռու մի անտառում մթության մեջ խարխափելով փորձում էին իրենց հյուրանոցը գտնել: «Հիմա որ քեզ սպանեմ, ոչ ոք ձայնդ չի լսի»: «Ո՞նց կսպանես»: «Դանակը փորդ կմտցնեմ»: Էդ պահին իսկականից վախեցել էր Բլումից: Աիավոր բան էր. երկուսով մենակ անծանոթ երկրի անծանոթ վայրում, տարածքում ոչ մի լույս չկար, բացի Բլումի հեռախոսինից: Լավ էր՝ շուտով հյուրանոցը գտել էին:

Հետո պիտի պատմեր իր հոգեվերլուծող ընկերոջն ու Բլումի հոգեբանական նկարագիր ուզեր: «Դանակը՝ ֆալոս, սպանությունը՝ պենետրացիա: Ինֆանտիլ վարքագիծ»:

Փորփրեց հեռախոսը, գտավ Բլումի պրոֆեսիոնալ էջի նկարը, փոխանցեց Յեննսին:

– Հըմ, տրանսգենդեր էլ կլինի:

– Բայց, ախր, ընկերուհիներ է ունեցել:

– Ուրեմն տղամարդու մարմնում բանտարկված լեզբի է,– Յեննսը նույն ֆլիրտոտ հայացքը գցեց Լիին,– շանսեր ունես հետը:

Անտառի հյուրանոցում պառկած էին կողք կողքի: Մութ էր: Սպասում էին հյուսիսափայլին: Ուժեղ անձրև էր գալիս: Հյուսիսափայլի հույս չկար, բայց անկապ զրուցում էին, որ քնով չընկնեն: «Ո՞վ ես դու»,– հարցրել էր: «Ես: Տղամարդ»,– Բլումը պատասխանել էր: «Հաստա՞տ»: «Յոթանասուն տոկոսով»:

Հաջորդ օրը Ռեյկյավիկում խանութներով պտտվելիս իսլանդական նախշերով սվիտր էին փնտրում: Բլումն անընդհատ կանացի պոնչոների վրա էր վազում: «Սրանք նույնիսկ ինձ համար են չափից դուրս կանացի»,– ծիծաղում էր Լին:

– Դե լավ, հա, անցած բան է,– Լին Յեննսին փորձեց պատասխանել նույն ֆլիրտոտ հայացքով,– գնացի, շտապում եմ:

Հետ գնաց գրասենյա՞կ դուրս գալուց առաջ: Պայուսակն ու վերարկուն հետն էին, ուրեմն բանալիները պիտի որ վերցրած լիներ: Այ, եթե հեծանիվով լիներ, հենց դուրս գար, կնկատեր, որ բանալիները չկային: Գուցե էդ ժամանակ դեռ կային:

Գրասենյակից դուրս գալուց հետո զանգեց Իննային:

– Գալի՞ս ես ջազ կաֆե: Էսօր պոեզիա կա:

– Կարդո՞ւմ ես:

– Չէ, լսել եմ ուզում… Համ էլ… Բլումն էնտեղ կլինի, կտեսնես վերջապես:

Քայլեց դեպի մետրո: Սոված էր: Ճամփին մտավ Ֆակտա, երկու հատ քրուասան առավ: Հերթի մեջ կանգնած ժամանակ ականջակալները գրպանից դուրս էին ցցվել: Շտապելուց փլեյերը չէր էլ անջատել, ու դեռ լսվում էր Քերեն Աննի նվնվիկ ձայնը: Ականջակալները հետ խցկեց: Երևի էդ ժամանակ էլ բանալիներն ընկան: Բայց ո՞նց էլ չլինի, կլսեր չխկոցը կամ հետևում կանգնած մարդը դանիերեն ինչ-որ բան կբլբլար, կհասկանար, որ ասում է՝ բանալիներդ ընկել են:

Խանութից հենց դուրս եկավ, նորից ականջակալները դրեց ու քայլեց դեպի մետրո: Քերեն Աննի «Անհետացումն» էր: Բլումի հետ առաջին անգամ էդ երգի տակ էր համբուրվել: Աչքերը փակել էր ու կարծել էր Լուիզան էր: Իսկ երբ աչքերը բացել էր, ասել էր՝ հավատս չի գալիս, որ սա դու ես: Հետագայում էլ միշտ Լուիզան աչքի առաջ էր գալիս Բլումի պոռշներին կպնելիս: Ու Լուիզայի պես Բլումը ձեռքերը սահեցնում էր որովայնի վրայով՝ բռնելով ճարպի ավելցուկը, չհամարձակվելով ավելի ներքև իջնել:

Քնելուց առաջ Լուիզային էլ հիշեց: Նա միակ կինն էր, որի հետ երբևէ եղել էր: Կիսահարբած-կիսաքնած, երբ աղջիկներով մնացել էին Լիենց տանը: Լուիզան պնդեց, որ Լին իր ծոցը քնի: Լույսերը հանգցնելուց հետո նրանց մար-

մինները մոտեցան, փաթաթվեցին ու սկսեցին պաչպչվել, ու Լուիզայի ձեռքը դանդաղ սահեց Լիի մարմնով, հասավ կակուղ տեղերը ու սկսեց խաղալ: Իսկ առավոտյան Լուիզան բոլորին հայտարարեց, թե մի սարսափելի երազ էր տեսել, թե ինչ-որ մեկն ամբողջ գիշեր իրեն զոռով համբուրում էր:

Մի անգամ էլ Բլումը հանկարծ սկսել էր Լիի մատը ծծել: Թեև տարօրինակ էր թվացել, բայց իր հիշելով միակ պահն էր, երբ Բլումի հետ ֆիզիկական շփումը հաճելի էր: «Օրալ ֆիքսացիա,– ասում էր հոգեվերլուծող ընկերը,– կանացի վարքագիծ»: Իսկ Միան թե՝ էդ տղայի հետ մի բան էն չի, ո՞նց եք նույն մահճակալում քնում առանց սեքս անելու:

Բլումն ուղղակի փաթաթվում էր Լիին ու գլուխը թաղում նրա մազերի մեջ: Մի առավոտ ձեռքը դրել էր Բլումի առնանդամին: «Ես քեզ թո՞ւյլ եմ տվել, որ ձե՞ռ ես գցում»: Հետո Բլումը մատները տարել էր Լիի ոտքերի արանքը, թեթևակի շոյել: «Հիմա քվիտ էղանք, վեր կենանք, արդեն ուշ է»:

«Որ ասում եմ՝ հետը մի բան էն չի,– ասել էր Միան,– հաստատ գեյ է կամ էլ շատ-շատ կույս»:

Մի րոպե, դեռ նոր չէի՞ն սկսել հանդիպել, երբ Բլումի մուգ վարդագույն ջինսը գեյական թվաց: Էն ժամանակ մտածել էր՝ ստերեոտիպեր են էլի, գուցե մարդն էսպիսի ճաշակ ունի: Բա որ էն թանկ ռեստորանում ընթրում էին, ի՞նչ մտքին փչեց, որ չորրով հարցրեց օրիենտացիայի մասին: Բլումը հեչ էլ չէր զարմացել հարցից, նայել էր ուղիղ աչքերի մեջ ու ամենայն անկեղծությամբ պատասխանել. «Հետերոսեքսուալ եմ»: Հետո սկսել էր նախկին ընկերուհիներից պատմել: Դրան նայեք հլը, ուրեմն սուտ էր ասում, հա՞: Էդ դեպքում ինչո՞ւ չէր կարողանում նախկինին մոռանալ:

«Ես էլ կարծեցի՝ գեյ է»,– ասել էր Միան Բլումին առաջին անգամ տեսնելուց հետո, երբ հաջորդ օրը գործի տեղը Լին հայտարարել էր, որ հենց նրա հետ է հանդիպում:

Բայց ի՜նչ խանդոտն էր Բլումը. խանդում էր, երբ երեկոյան տուն գնալու փոխարեն Միայի հետ գարեջուր խմելու էր գնում: «Լոբինե՞ր էիք խաղացնում»,– ասում էր:

Խանդում էր Լիի ընկերներին, հետաքրքրությունները, այցելած վայրերը, անգամ Լիի՝ ինքն իր հետ մենակ մնալու ցանկությունը:

Ամեն դեպքում, տխուր էր առանց Բլումի. կարոտում էր նրա հետ գետնին պառկած Քերեն Աննին լսելը, կիրակի օրերը Գյուլպտոտեկում Դեգայի կտավների մոտ թրև գալը, բուսաբանական այգու թունավոր բույսերն ուսումնասիրելն ու որոշելը՝ որ թշնամուն ինչով են թունավորելու, որն են պահելու ինքնասպանության համար:

Գիշերը չկարողացավ նորմալ քնել: Անընդհատ վեր էր թռչում երազներից. հայտնվում էր Բլումը՝ կանացի հագուստով, ձեռքին՝ բանալիների տրցակը: Հենց էդ նույն տրցակն էր՝ չորս կարևոր բանալիներով: Մեկը տան մուտքինն էր՝ արծաթագույն, կապույտ եզրերով: Երկուսը հեծանիվինն էին՝ իրար նման, սև գլխիկներով, որ ամեն անգամ Լին շփոթում էր, թե որը որ կողպեքինն է: Ու մեկն էլ գրասենյակինն էր՝ մեծ, սուր ծայրով: Էս բոլոր բանալիները կախված էին արջուկով բռելոկից, վրան գրված՝ I ♥ Berlin: Լուիզան էր նվիրել:

Մեկ էլ հայտնվեց Լուիզան: Տկլոր պառկած էր, Լին գալիս էր մոտը: Հենց էնքան մոտեցավ, որ կարող էր համբուրել, տեսավ, որ պարանոցը մազածածկ է: Մազածածկ էին նաև թևերն ու կրծքերը: Լուիզան շեկ էր, իսկ մարմնի մազերը սև ու հաստ էին: Երբ սարսափած գլուխը հեռացրեց, Լուիզայի մարմինը դարձավ Բլումինը, կրծքերն անհետացան, անհետացավ նաև սև մազածածկույթը: Բլումի կրծքավանդակի ուղիղ կենտրոնում բանալիների տրցակն էր նույն արջուկով: Ձեռքը մեկնեց, որ վերցնի, բայց անհնար էր, ամեն մատից մի-մի

կտոր սառույց էր կախված, թե՛ մատները սառույցներ էին: Ձեռքը ոնց պտտեցնում էր, բանալիներին չէր հասնում: Սառույցը ի՞նչ է նշանակում: «Էմոցիոնալ սառնություն է»,– պատասխան գրեց հոգեվերլուծողը:

Առավոտյան զուգլեց Կոպեննհագենում կորած իրերի ծառայությունների հեռախոսահամարներ: Լիքն էին: Կոպեննհագենում բնակվող Ֆեյսբուքի էքսպատների խմբում հարց գրեց: Ինչպես միշտ, հարյուրավոր պատասխաններ ստացավ, բայց դրանցից որևէ մեկը որևէ օգուտ չտվեց: Ոմանք մեղադրում էին նրան, որ ուշադիր չի եղել ու կորցրել է բանալիները: Մյուսները էլի զուգլի տեղն էին ցույց տալիս, ինչքան էլ բացատրեր, որ զուգլը բան չի ասում: Չոր հեռախոսահամարներից ավելի կորած իրեր գտնելու մյուսների փորձն էր հետաքրքրում:

Նկուղից դուրս եկավ առանց դուռը կողպելու: Կայարանի ճամփին զանգեց երկաթուղու կորած իրերի բաժին: Երբ նկարագրեց իր հետագիծը, կինը գոռգոռաց, թե սխալ համարով է զանգել, մետրոյինն ուրիշ հեռախոսահամար է, եթե գնացքում է ինչ-որ բան կորցրել, կարող է մոտենալ գլխավոր կայարանի կորած իրերի բաժին:

Գլխավոր կայարան գնալուց առաջ արժեր նախ ջազ կաֆե ու մետրո զանգել, Ֆակտա մտնել, կապվել ոստիկանության կորած իրերի բաժնի հետ, որը շաբաթը երկու օր էր աշխատում: Ութից տասը օր է տևում կորած իրը գտնելը, եթե գտնում են ընդհանրապես: Դա միակ օգտակար տեղեկությունն էր, որ կարողացավ կորզել էքսպատների խմբից՝ պոչին մեկնաբանությունների շարան՝ «Կարծում ես՝ ոստիկանությունն անելիք չունի՞», «Ինչո՞ւ զապաս բանալին ընկերոջդ մոտ չես թողել»...

Ինչո՞ւ գնաց ջազ կաֆե ընդհանրապես: Ինչո՞ւ Բլումին գրեց: Դա պակա՞ս գեյ էր սարքելու նրան: Հենց Նորեպորտում Իննային հանդիպեց, դողդողացող ձայնով ասաց, որ շատ է ուզում Բլումին տեսնել: Ջազ կաֆե գնալու ճամփին մենակ գործից ու դանիացիներից էին բողոքում: Ոչինչ չասաց Միայի ու թիմի գեյերի հետ ունեցած խոսակցության մասին: Երբ ներս մտան, Բլումը նստած էր՝ շրջապատված մի խումբ աղջիկներով: Հենց տեսավ Լիին, աչքերը փայլեցին: Մի պահ ուզեց մոտենալ, գրկել Բլումին, բայց միայն քաղաքավարությամբ բարևեց ու մնաց իր անկյունում:

– Ո՞րն է Բլումը,– շշնջաց Իննան: Չէր տեսել, միայն Լիի պատմածներից գիտեր:

– Այ էն մեկը՝ հագին վարդագույն սվիտր:

Իննան դես նայեց, դեն նայեց:

– Բայց վարդագույն սվիտրով տղա չեմ տեսնում: Մենակ էն սևովն է,– ու ցույց տվեց Բլումից բացի սեղանի շուրջը նստած միակ տղային՝ Միգելին, որին Լին ջազ կաֆեից գիտեր:

Մի սևամորթ բեմի վրա պաթոսով ֆրանսերեն բանաստեղծություն էր կարդում: Ոչ ոք չէր հասկանում:

Իննան սկսեց նվնվալ, թե ուշ է, հաջորդ օրը գործի է: Հագան վերարկուները ու մարդկանց հրմշտելով քայլեցին դեպի դուռը: Բլումը ձեռքով արեց: Լին ժպտաց: Իննան հարցրեց՝ էդ ո՞ւմ ես ժպտում:

Բլումին գրեց ջազ կաֆեից դուրս գալուց հետո, երբ Իննայից բաժանվեց ու մտավ Նորեպորտ կայարան: Ուրեմն հեռախոսն էդ ժամանակ է գրպանից հանել, ուրեմն բանալիներն ընկել են էնտեղից դուրս գալուց հետո: Սա կիսով չափ կրճատում է տարածությունը՝ կենտրոնից մինչև Վելբյու: Բայց Աման չի բացառվում: Ֆակտայից հետո մտավ մետրո: Տրանսպորտի քարտը լիցքավորվա՞ծ էր: Ուրեմն ապարատին չի մոտեցել, մենակ ծնգացրել է քարտը: Գնացքը համարյա անմիջապես եկավ, հազիվ հասցրեց քարտը նորից պա-

յուսակը դնել: Թե՞ գրպանը: Չէ, հաստատ պայուսակում էր, որովհետև Նորեպորտում հետևից եկող կինը նյարդային շարժումներ էր անում, մինչ ինքը կփորփրեր պայուսակն ու քարտը կգտներ, որ նորից ծնգացներ:
Աշխատանքի գնալու ճամփին մտավ Ֆակտա: Էնտեղ բանալիներ չէին գտել: Գնաց իր աշխատավայրի կորած իրերի բաժին: Հսկայական փայտե դարակում բազմաթիվ բանալիներ, հեռախոսներ ու կրեդիտ քարտեր էին լցված: Արջուկով բռելոկ չկար:
«Բանալիներս կորցրել եմ»,– գրեց հոգեվերլուծող ընկերոջը: «Ֆալոսներից հրաժարվո՞ւմ ես»,– պատասխանեց:
Էդ անտեր սմայլիկն ինչո՞ւ ուղարկեց Բլումին: Բայց եթե բանալիներն ընկել էին ջազ կաֆեից մետրո քայլելիս, երբ առաջին անգամ հանեց հեռախոսը, գտնելը շատ դժվար էր լինելու: Ուրեմն պիտի ևս երկու օր դիմանար, զանգեր ոստիկանություն, դիմանար ևս ութ օր: Կարող էր Միայից վերցնել գրասենյակի բանալին, կարող էր տանտիրոջը խնդրել, որ նկուղի բանալի տա, մինչև ոստիկանությունից լուր ստանար: Մի շաբաթ էլ հեծանիվ չէր քշի, հասարակական տրանսպորտից կօգտվեր: Սթրեսային օրեր էին սպավում: Արդեն սթրեսված էր:
Գրասենյակ մտնելիս զգաց, որ աշխատելու էներգիա չունի: Գլուխը դրեց գրասեղանին: Մետաղյա սառը ինչ-որ բան կպավ ճակատին: Բանալիներն էին: Սառը բանալիները:
Էլ ոչ մի ջազ կաֆե:

Կացության իրավունք

Հարգելի տիկին/պարոն,
Վեց ամիս առաջ տեղափոխվել եմ Դանիա, բայց դեռ չեմ ստացել կացության իրավունքս: Դեսպանատան տված նամակում հստակ ասվում էր, որ հենց քաղաքապետարանում գրանցվեմ, կացության քարտս չորս շաբաթվա ընթացքում կուղարկվի հասցեիս: Ես ձեզ դիմել եմ գրանցվելուցս մեկ ամիս անց, բայց ինձ ասացին, որ ևս երկու շաբաթ սպասեմ: Հետո ասացին՝ ևս չորսը: Հետո նորից բիոմետրիկ տվյալներս վերցրին: Հետո երկու ամիս պիտի սպասեի:
Արդեն երեք ամիս է, ինչ ամեն օր ձեզ նամակ եմ ուղարկում, բայց չեք պատասխանում: Երևի անգլերեն եմ գրում, դրա համար: Հավանաբար համոզված եք, որ արդեն պիտի կարողանամ դանիերեն արտահայտվել կամ պարզապես ամաչում եք ձեր անգլերենից: Հանգիստ կարող եք ձեր լեզվով գրել: Սովորել եմ, որ իմ անգլերեն մեյլերին դանիերեն են պատասխանում: Բացի դրանից, գրավոր խոսքը շատ ավելի լավ եմ հասկանում, քան բանավորը, չնայած գաղափար չունեմ, թե կարդացածս ոնց է արտասանվում: Ծայրահեղ դեպքում գուգլ թրանսլեյթը կա ու կա:
Հիմա երևի կթռնեք դեմքիս ու կասեք, որ էս ընթացքում պիտի բավարար չափով դանիերեն իմանայի, որ հարցումս անգլերեն չուղարկեի: Հա, բայց դա ինձնից չի: Ձեզ հետ էնքան էլ հեշտ չի: Երեկ սրճարանում տաք շոկոլադ պատվիրեցի: Չգիտեի՝ կրեմ ոնց են ասում: Վաճառողուհին ինչ-որ բան հարցրեց, և հասկացա, որ կրեմի մասին է: Բացականչեցի՝ uden: Գլխով արեց, ես էլ մեջս ուռեցի, որ վերջապես ասելիքս հասկացրի: Բայց մի երկու վայրկյանից հետ եկավ, անգլերեն հարցրեց՝ կրեմո՞վ, թե՞ առանց:
Էն օրն էլ գործընկերուհուս հետ խոսում էի, բայց ասածներիցս բան չհասկա-

ցավ, նույնիսկ երբ անգլերեն թարգմանեցի: Երբ վերջապես հեգեցի ասելիքս, բացականչեց. «Հա՜, նկատի ունես dødtræt, իսկ դու ասում ես՝ døltræt»: Հետո շրթունքները ծամածռելով սկսեց բացատրել, թե ինչով է ø-ն ø-ից տարբերվում: Դրան էլ ավելացրեց փափուկ ու կոշտ «դ»-երի մասին լեկցիան, որն արդեն միլիարդ անգամ լսել էի, մենակ մի հարյուր անգամ հենց իրենից: Ասացի՝ փափուկ «դ» չեմ լսում, «լ» եմ լսում: Ասաց՝ «լ» չի, փափուկ «դ» ա: Ասացի՝ մեկ ա, «լ» եմ լսում: Ասաց՝ փափուկ «դ» ա, անգլերեն th-ի նման: Մեռնեմ թե th եմ լսում:

Մի անգամ մի փորձառու դասատու ինձ խորհուրդ տվեց փափուկ դ-ն արտասանելու համար լեզու ցույց տալ: Կներեք, բայց ես չեմ ուզում ամեն անգամ հիմարի նմանվել, երբ ուզում եմ ասել՝ սատկած եմ: Իսկ ես շատ հաճախ եմ սատկած լինում, հատկապես երբ օրերը մթնում ու կարճանում են, անձրևն էլ չի դադարում:

Լեզուն ու եղանակը չհաշված՝ լավ է Դանիայում: Ա՛յ որ կացության քարտս էլ ուղարկեք, լրիվ ընտիր կլինի: Էստեղ իմ անձնական տարածքն ունեմ: Երևանում շնչելու ժամանակ հեչ չկար: Անընդհատ կային մարդիկ, որոնք դուրս էին կանչում: Նենց չի, որ ես չէի ուզում իրենց տեսնել, ուզում էի: Բայց շաբաթվա վերջին լրիվ քամվում էի: Հետո ժամանակ էր պետք, որ վերականգնվեմ: Իսկ հեռախոսս նոնստոպ զանգում էր: Կարող էր ընկերուհիներիցս մեկը լիներ, որ հարցնում էր, թե որ համարի երթուղայինն է Կոմիտասից Օպերա գնում, կամ էլ մամաս էր լինում, անհանգստանում էր, թե որտեղ եմ: Իրա պատճառով էր, որ հեռախոսս չէի անջատում: Հենց անհասանելի եմ դառնում, խառնվում է իրար, սկսում ընկերներիս զանգել, հետո՝ ավելի հեռու ընկերներիս, հետո Ֆեյսբուքում ստատուս է գրում, իսկ վերջում՝ ոստիկանություն:

Չեմ հիշում՝ դանիական համարիս վերջին անգամ երբ են զանգել: Երևի մամաս եղած կլինի, ես էլ ջիմ գնալու պատճառով օֆլայն դառած: Էսպես կյանքը հիասքանչ է. մի երեք լավ ընկեր, իսկ մնացած ժամանակը՝ ինքս ինձ հետ: Հիմա արդեն մենակ երկուսն ունեմ, էն մեկին ռադ արեցի: Բայց դա անձնական է, դրա մասին չի նամակս:

Երևանը չեմ կարոտում, լուրջ չեմ կարոտում: Իհարկե, էնտեղ արև ու կապույտ երկինք կա, ուտելիքն էլ համով է: Թուզն էնտեղ կիլոյով, ոչ թե հատով են վաճառում: Բայց ահավոր ծխած է: Ամեն անգամ Երևանից հետ գալուց հետո օրեր շարունակ իրերիս վրայից ծխի հոտն եմ վերացնում: Երևանում էդ հոտը չես զգում, որովհետև բոլորի վրայից է գալիս:

Էլ Երևան չեմ գնա: Իրոք Կոպենհագենում ավելի լավ է: Չեմ հասկանում՝ ինչու են էքսպատներն էսքան դեպրեսված էստեղ: Էրեկ լիքը ահավոր պատմություններ լսեցի, թե ոնց են մարդիկ օրերով լացում, չեն ուզում ուրիշների հետ շփվել, հետո էլ գնում են բժշկի, նա էլ չի ուղարկում հոգեբույժի մոտ, ասում է՝ Դանիայում լիքը դեպրեսված մարդ կա, եթե անցած շաբաթ չես բռնաբարվել, կարիք չկա, որ օգնություն ստանաս:

Մի ամիս առաջ ես էլ գնացի բժշկի, բողոքեցի, թե սատկած եմ: Երակիցս լիքը արյուն վերցրեց, ուղարկեց անալիզների: Զանգեցի, արդյունքներն իմացա: Ասաց՝ երկաթը նորմալ, վիտամին D-ն նորմալ, շաքարը նորմալ, վահանագեղձը նորմալ: Ձմեռ ա, դրանից ա: Եթե գարնանն էլի սատկած լինես, նորից զանգի: Աչքիս զանգեմ, ասեմ՝ բռնաբարել են:

Էս էքսպատներն էլ կարծում են, թե մնացած երկրներում ամեն ինչ օք ա: Որ ասում եմ՝ ամեն տեղ նույնն ա, չեն հավատում: Էն ա, մոտիկ ընկերուհիս վերջերս Իտալիա ա տեղափոխվել: Նենց բաներ ա պատմում, որ ես էղած-չեղած աստվածներին շնորհակալություն եմ հայտնում, որ ինձ հյուսիսներն են բաժին ընկել:

Մենակ ֆիզիկական կոնտակտն եմ մի քիչ կարոտում: Չէ, սեքսի մասին չեմ ասում: Մարդկանց ուղղակի հպվելը նկատի ունեմ: Մենք՝ հայերս, իրար շատ ենք ձեռք զցում, շատ ենք գրկում: Դանիայում հազվադեպ եմ որևէ մեկի կպնում: Ու եթե նույնիսկ գրկում եմ, իսկական չի, էներգիայի փոխանակություն չի, ավելի շուտ ողջույնի տեսակ ա: Մի քանի օր առաջ յոգայի դասին եռանկյան դիրքը սխալ էի արել: Դասատուս մոտեցավ, ձեռքով ուղղեց: Նենց լավ էր:

Թեմայից չշեղվենք: Ուզում եմ տեղեկացնել նաև, որ հասցես շուտով փոխվելու է: Առաջին անգամ տեղափոխվելուց հետո ձեզ ուղարկեցի նոր հասցես, բայց վստահ եմ, որ դուք ձեր Մեծ եղբոր համակարգի շնորհիվ արդեն գիտեիք դրա մասին: Նոր հասցես էս քանի օրը կիմանամ, դեռ տուն չեմ ճարել: Ինչո՞ւ է ձեզ մոտ էսքան դժվար տան հարցը: Արդեն երրորդ անգամ պոտենցիալ բոմժ եմ դառնում ու մի քանի օր առավոտից երեկո տուն եմ ման գալիս: Էս ընթացքում հեչ չի պես մի հարյուր հատ նամակ գրած կլինեմ: Ու ինչի ասես չեմ հանդիպել: Մեկը, օրինակ, Ամայում ընդամենը 10 քմ սենյակի համար 7500 էր ուզում: Վա՜տ էր: Չորս տարեկան երեխայի մի մայր էլ տան կեսը վարձով տալիս էր էն պայմանով, որ վարձակալողն ամենահաճախը երկու ամիսը մեկ պիտի հյուր ընդուներ: Հասկացանք, որ իմ սոցիալիզացիան խիստ սահմանափակ է. մենակ չորեքշաբթի օրերն եմ ընկերներին տրամադրում: Բայց ի՞նչ է նշանակում երկու ամիսը մեկ: Ես եմ ու ամեն չորեքշաբթի ուզում եմ մարդ բերել:

Մի միայնակ տղամարդ տունը վարձով տալիս էր պայմանով, որ շաբաթ-կիրակի օրերին տարածքն ազատեմ, որ ինքը գա: Էսօր էլ հնդկական ակցենտով մեկը զանգեց ու սկսեց աղաչել, որ իր բնակարանի մի սենյակը վարձով վերցնեմ: Ասում էր, թե ժամանակին էնտեղ զույգ էր բնակվում, էն էլ բաժանվեցին, հիմա աղջիկը մենակ է մնացել ու հետը քնող է ման գալիս: Մի ուրիշն էլ թե՝ սենյակը կարող ես վերցնել, բայց հասցեն չես կարող գրանցել, փոխարենը 500 կրոնի դիմաց ուրիշ հասցեում կգրանցեմ:

Մինչ տուն կճարեմ, կարող եք կացության քարտս հին հասցեիս ուղարկել: Ձեզ մոտ վերահասցեավորումը շատ լավ է աշխատում: Երբ բանկային քարտս հաշիվ բացելուց երկու ամիս հետո վերջապես ստացա, հին հասցեիս էր ուղարկվել, բայց նորի փոստարկղում գտա: Ամեն դեպքում, հույս ունեմ դուք ավելի շուտ կուղարկեք, քան ես կհասցնեմ նոր տուն տեղափոխվել: Խնդրում եմ՝ ուղարկեք ինձ իմ կացության իրավունքը: Իսկապես դրա կարիքն ունեմ. ես պետք է էս շաբաթ-կիրակին Իտալիայում անցկացնեմ, թե չէ չեմ դիմանա:

Անուշ Քոչարյան

Մտածում եմ՝ երկու տողանոց սենտիմենտը էս քաղաքում մի ամբողջ հավերժություն է… ես մեկ մեռնում եմ ինձ հետ, մեկ մեկնում եմ ոտքս ոտքիս:

Թվային հիասթափություն

Պատմում է. ստատիկ քառակուսի, օդը՝ մի քիչ խոնավ, կտուրները՝ մի քիչ մեծ՝ բնակարանի պես. նստելու տեղերը՝ շատ, բայց փոքր:

Պատմում է. մեծ, անծայրածիր եզրագծերով, չերևացող տրամադրությամբ, կիսամեռ հայացքներով, մոտավորապես երանելի տեղ, որտեղ կարելի է չսպասել ավտոբուսների:

Պատմում է. դժվար, ապրելու համար կիսապատրաստ, վճարունակությունը՝ ցածր, կիլոմետրերով բաժանվող քաղաքներ, անձրև, նորից կիլոմետրերով բաժանվող քաղաքներ, ու անձրևը չի դադարում:

Թոքերի քաղցկեղից մեռած մեկը, ոտքի ոսկորները՝ բաց, երազներն արդեն չկան, հավատալու ամեն ինչը՝ սիմետրիկ գծած․ թվային հիասթափություն. ավտոտնակները՝ նեղ ու սխալ, մտնելու տեղ չկա:

Ես ապրում եմ, սահմանափակում եմ կյանքս, կրճատում եմ այն, որքան հնարավոր է. և ավելի լավ, երբ դրա մասին կարող եմ գրել,

որովհետև երբեմն այդ ամենն ինձ թվում է՝ ստատիկ քառակուսի, օդը՝ մի քիչ խոնավ, կտուրները՝մի քիչ մեծ՝ բնակարանի պես, նստելու տեղերը՝ շատ, բայց փոքր,

մեծ, անծայրածիր եզրագծերով, չերևացող տրամադրությամբ, կիսամեռ հայացքներով…

Հետո ի՞նչ, թե ես ուշանում եմ, ծխում եմ, հոգնում եմ, ոտքերս իմը չեն, բնավորությունս սարսափելի է, կեցությունս՝ ծով դուրս ելածի պես.

ասում եմ՝ գժվել կարելի է,

և սա իմ մասին է, որն ուշանում է, ծխում է, հոգնում է, ոտքերն իրենը չեն, բնավորությունը սարսափելի է,

և նրանը, ով պատմում է՝ մեծ, անծայրածիր եզրագծերով, չերևացող տրամադրությամբ, կիսամեռ հայացքներով, մոտավորապես երանելի մի տեղ, որտեղ կարելի է չսպասել ավտոբուսների,

և նրանը, ով լուզեր է, երեսը՝ ֆեյք, լցրածը՝ հիմարություն,

և նրանք, ով գիտի՝ ինչ է քաղցկեղից մեռնելը,

ավտոտնակները՝ նեղ ու սխալ,

նստելու տեղերը՝ շատ, բայց փոքր,

չերևացող տրամադրությունը,

կիսամեռ հայացքը

և կիլոմետրերով բաժանվող քաղաքները:

***
Տարբերությունը, որից պատմում է, ոչնչանում է,
գիտակցությունը ոտքերիս ծայրն է հասնում
ու չի քայլեցնում.
նվազագույնը, որ կարող եմ, պատմել կյանքն է,
առավելագույնը՝ դրա բոլոր դետալները՝
որպես մանրէաբան, որ ամեն պահի կարող է ասել՝
ինչպես առաջացավ այդ քաղցկեղը:
Եվ կարող եմ ասել նաև, թե սահմանումն ինչքան ուժեղ է,
երբ դրա պատճառով նստում ես, նստում ես մինչև վերջ,
ոչ մի համաներում չի կարող փրկել քեզ,
որովհետև ուրիշ նստելու տեղերն ազատ են:
Կա՞ մի տեղ, որը սահմանված չէ որպես ապրում.
տրամադրությունս ձևազուրկ պարկ է,
որի մեջ կարող ես մտնել, գլորվել, անփույթ զգալ
թավալվել, որքան ուզում ես.
էնտեղ ազատ է թվում,
բայց ոչ դատարկ:
27. 04. 2015
Լյովեն, Բելգիա

Դվինը ծախեցին

Վարձով տունը,
որտեղ արդեն 2 տարուց մի քիչ պակաս ապրում եմ,
բալկոն չունի.
յոթերորդ հարկից միակ բանը,
որ կախվում է,
ոտքերս են,
երբ հորիզոնական նստում եմ աթոռին
ու սկսում ճոճվել:
Հիանալի տեսարան՝
Մասիսը,
Հրազդանի ձորի կանաչ բլուրը,
Ծիծեռնակաբերդը,
կամուֆլյաժային համալիրը

ու հորիզոնական տափակ շենքը,
որն ընկնում է «հորինված» բարդիների տեղը:
Քաղաքին կապող անկյունը ձախն է՝
սովետական վիստոսկայի կեսը,
Սբ Հովհաննեսը,
մի քիչ հեռվում՝ Լուսավորչի կատարը,
ու ամենաուժեղ պրիզման՝ ԴՎԻՆ հյուրանոցի կմախքը,
որի անլուսամուտ, անշունչ կառուցվածքը
թույլ է տալիս քաղաքի մնացած հատվածին նայել ընենց,
ոնց որ կնայեիր Դվինի պատուհանից…
Ես այս ամենի համար վճարում եմ 200$-ից ավելի
ու սուրճ եմ խմում անընդհատ:
Գրելուս ընթացքում Դվինի հետ նստած ենք անպատուհան,
սվսվացող քամիների արանքում՝
առանց ավելորդ չուլ ու փալասի…
Դվինն այս տարի ծախեցին:

Մինչև ծախելը
1

Հիմա նուրբ եմ մի քիչ,
կարող եմ ներկվել որպես կին,
կարող եմ նստել ոտքերիդ,
ու պատրաստես ինձ քնի:
Օրվա մեջ երկու-երեք րոպե
կտրվում են կոպերս ինձնից.
ես մեկ մեռնում եմ ինձ հետ,
մեկ մեկնում եմ ոտքս ոտքիս:
Քաղաքում ոչ ոք չգիտի այնքան,
որքան հարկավոր է,
և ծանրացած, չիմացած
քաղաքիս ջինսե ցերեկը
անհյութ պառավի պես թառել է քթիս…
Տներ կան, որտեղ դանդաղել ես իմ մեջ,
կան տներ, որտեղ շտապեցիր մի քիչ:
Դադար, դադար, դադար:
Մտածում եմ՝ երկու տողանոց սենտիմենտը
էս քաղաքում մի ամբողջ հավերժություն է,
ու եթե գրում ես դրա մասին,
երկու տողը բավական է.
տներ կան, որտեղ դանդաղել ես իմ մեջ,
տներ կան, որտեղ շտապեցիր մի քիչ:
Եվ նորից աստիճաններին կտկտացնում եմ
բարակ, հանգիստ, թեթև,
վերադառնում եմ
լրագիրների, մեղիախառը օրերի տիղմից,
ինքնաթիռները պայթում են միայն հարևան սենյակում,
դիմացս՝ Դվինն է՝
առանց պատուհան հյուրանոցը միակ,
որ վաղը գուցե վաճառվի:
23.02.2014

2
Շառլը Ազնավուր, Վիոլետի 93-ի մի գործ ու Անին Հովհաննիսյան.
այն, ինչով փոխվեց տրամադրությունս պատերազմից առաջ.
որ գուցեև չլինի,
բայց ես արդեն տեսնում եմ քեզ մեռնելու հրաշալի պահին,
որովհետև դեռ չսկսած ասում ես՝ գնալու եմ:
Եվ լռության մեջ թնդում է Շառլը,
ու Անին պատկերացնում է արձակած մի կրակոց,
ես քեզ եմ տեսնում պառկած մի ուրիշ կրակոցից՝
ցինիկ քո ժպիտով,
որ ինձ համար տարիներով եկած պարտությունների փոխարեն
հանկարծ լուսացնում էր գիշերը:
Ես քեզ տեսել եմ ուրիշ մի կնոջ հետ,
մի ուրիշ սեռասարսափ եմ տեսել աչքերիդ,
ու ոչինչ չի փշրել իգությունս,
որքան ուրիշ այս կրակոցը:
Սև, կոշտ մազերիդ մեջ նստած է Աղդամի կամ մի ուրիշ փոշի,
չգիտեմ՝ որտեղ ես,
բայց ես սլանում եմ
ուժեղ՝ ամեն բան արձակած...
և արձակածս ինձնից առաջ
վազում, խառնվում է մազերիդ:
Հիմա քաղաքում լիալուսին է.
Դվին հյուրանոցի դատարկ հարկերում պտտվում է սերս,
և թշվառությունս, և հիասքանչ մի կիսատ մարմին,
որի ամեն անկյունը անհագ կերել եմ:
Եվ ամենը դադարելու է վաղը,
և այս քաղաքն էլ, որ շենքերի կտուրին
ուղղաթիռներ է հարմարեցնում փախուստի համար,
և ձեռքից գնացած մայրս,
և հիանալի պահը ապրումի,
երբ սարսափի մեջ թեթև մի շորով,
իջնելու եմ...
09.08.2014

3
Երեկ ինձ անդաստիարակի պես պահեցի,
հետո ներս ընկա,
կոլա խմեցի, պատուհանից կախված՝ քեռուս պես մի հատ ծխեցի
ու կարդացի, որ Դվին հյուրանոցը ծախել են:
Սիրտս տրաքեց,
գիշերվա կեսին ընկավ հազար տեղ,
ու ինձ թվաց՝ կողքի սենյակում
մեկը մռթմռթաց,
պատի տակ նստած մեկը ջեքը գլուխը քաշեց,
սեղանին հացը չորացավ,
կատուներ բեղմնավորվեցին,
Մոցարտը հանկարծ կաֆե դարձավ,
ճանճերը ցրտից ներս ընկան,

մազերս թափվեցին,
(կտի յուղը չօգնեց),
նկարիչ ընկերս Կալիֆոռնիայում
ծնգաց խանութից գողություն անելիս,
ծխախոտս վառեց կողքի շենքը,
հարևանս տկլոր դուրս թռավ,
բոլորը ծիծաղեցին.
ես էլ:
04.11.2014

2015-ն է սեպտեմբեր

***

Թափվում եմ.
տունս բազկաթոռ է՝ կարմիր ծածկոցով,
չմտածված օրեր կան, երբ առավոտից
լուրերը դառնում են դոմինանտ,
սեռը՝ երկրորդային,
բաժանումները՝ միայն արևելքի և արևմուտքի մեջ:
Հոսում եմ սովետական պարկետի վրայով,
պատուհաններիս մեջ
(որի փեղկերում ապրողներ ու ապրումներ կան),
թաթերս կպնում են իրար:
Ցի՛ց, դռան հետևում մեկն է,
երկուսն են, երեքը
. . . .
մտածո՛ւմ եմ իրենց մասին
և իմ հարաբերության.
– լրագրող եմ՝
ուժասպառ,
կինոման,
նարկոզ տարած միջին քաշային,
հորս հետ ունեցած վերջին խոսակցությունը
եղանակից է,
հոսանքներն էլ անցնում են տանս միջով ու դուրս գալիս.
այն, ինչ բռնում եմ, իմը չէ
և չեմ էլ համակերպվում սեփականությանս,
տվածին, տրվածին, ինքնուրույն ծնվածին,
և գնացողը գնացած է,
մնացողը՝ մնացած,
ոտքերս՝ բաց,
ոտքերս՝ փակ...
բնակարանիս պես:

\`***

ես ու սերս,
ես ու մետրոյի դռները,
ես ու անհամբեր վարորդը,
ես ու սև, սև, սև մի քանիսը,
սարսափած վայրէջքները քայլելիս,
ուղղահայաց փողոցները,
հատվող խաչմերուկները,
լույսը՝ կանաչ, կարմիր և միջանկյալ,
սպասումներն ու արդարացումը,
Սարյանը, որ գինետներ է շարել իրար կողք,
բացթողումները՝ բանավոր հատկապես,
միշտ դատարկ օդանավակայանը,
թռիչքները՝ տրանզիտ,
միջնորդավորված պլանային ծնունդները,
քաղաքը, մայրաքաղաքը,
անտանելին ու տանելին,
դրանց միջև ընկած կեցության տարօրինակությունը,
կիսատ բացված միջնամատս,
երկար ձգվող կիսատ օրերը,
սակագները, զեղչերը,
նոտարական հաստատումները
մեկնված իրականությունը,
անմեկնելի հպումներս սառը պատերին
. . . .
Անհամատեղելի ենք:

18. 09. 2015

***

Թույլ, թեթև, սահուն
գիշերն այնքան ատամ ունի.
եթե հիմա բաց ոտքերիս առաջ
քեզ գլորեմ գետնին,
ոչինչ արդեն հեշտ չի լինի.
բարձրացնելը ուժերից վեր,
սավանները՝ առագաստներ,
պատուհանը՝ մեծ լաստանավ,
և ներս լցվող աղմուկի հետ
մի ողջ քաղաք քեզ հետ անհետ
կտապակվի գետնի վրա:
Եվ քեզ համար արդեն մեկ է՝
Մերկ եմ, նվաղ, սաստիկ հոգնած,
թե հազարներ աչքիս առաջ
քեզ խանգարող կարմիր ներկ են…

22.09.2015

***

Մարմինս դրված է՝
կողքի, հոգնած, սարսափելի՜ հոգնած:
2015-ն է, սեպտեմբեր,
կիսով չափ օրագրություն է ապրումս,
կիսով չափ թվայնացում.
ձեռքդ սահեցրու,
մեկ է, ոչինչ չեմ զգում,
ոսկորներս այնպես խառնիր իրար,
որ մարմինս փոխի ձևը,
արտառոց պատկերի մեջ
ինձ էլ չտեսնեն իրենց պատկերացմամբ
և թվա՝ հրեշը նստել է բազմոցին՝
թույլ, նվաղած,
ուր որ է՝ կմեռնի,
և թվա, որ հավերժ խաբված են եղել ինձնից,
իմ նմաններից, նրանցից, ովքեր սեր են տվել իրենց,
ովքեր ընդգծել են սրացումները,
աչք փակել նվվոցի վրա,
ովքեր կանգնել են՝ թաթերը ջարդելով ու ձեռքով թեթև,
թեթև օր են մաղթել:
Ու տվածդ թող ընկալվի որպես ստորացում,
որպես կիսատ, արդարացում չեղած մեկի,
թող քեզ փնտրեն, թող այլայլվեն ու գազազեն,
իմ մարմինը թող *պեղ* դառնա՝
ոտնահետքի, մատնահետքի, թքած տեղի համար,
իմ մարմինը՝ *գործողություն*՝
որպես անհայտ կորած մեկի…

26.09.2015

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Աննա Դավթյան

Բարակություններից ու լիքություններից միջով եկողն եմ՝ վայրի կակաչի պես բարակ, նրա սերմի պես լիքը, ծածանվելու տեղ եմ փնտրում ամպերի ու սակավության մեջ, ապրում եմ իմ խոնարհությունը, ապրում եմ իմ ուժը. պատահական չեն դրանք: Բարակությունը՝ այդ ձեռք բերվածը, որ ունեմ որպես կամավոր հանգրվան՝ մեծ լինելու ինձ ավելի: Եվ առավել մեծ մեկ այլ բանի: Այս աշխարհի ափսոսանքը՝ որպես հազար ձեւով ունեցածի, եւ ուրիշ աշխարհի գլորվելը դեպի ինձ, որի թափը պահել է պետք. պատահական չեն դրանք: Սպասելու այդ ձիրքը՝ մանր մակույկներով նավարկելու եղեգների տակ թաքնված հոծ ջրերով ներսի, եւ մեծամեծ նավեր չգցելու ճամփա՝ առանց քարտեզ: Դեպի բացություններ: Եւ այդ հապաղումը՝ թռչուն. պատահական չեն դրանք: Եվ սիրելու ձեւը՝ լույսի միջով:

Դիարբեքիր՝ քուր

Գիշերային թռիչք վերցրինք: Դիարբեքիրում ծանոթ չունեինք, որ դիմավորելու գար, ու գիշերը թռնելով՝ արկածի հետևից էինք, թե չէինք՝ չիմացանք: Նախապատրաստական միջոցառումներից Սոնան կատարել էր միայն էն, որ ճշտել էր մի հայկական տան հասցեն, որն հիմա որպես *օթել* էր ծառայում, և էն, որ մեզ մի քիչ էժան կտան: Բայց օդանավակայանի սպասասրահում անհանգստանալու առիթներն սկսեցին մի թեթև բզել արդեն, ու ես ու Սոնան իրար երես նայեցինք՝ բոլոր բառերը սպառած հին ընկերության անբառ արտահայտություններով: Անկանոն իրավիճակներում Սոնան հիմնականում հարցականներն է կախում օդում կամ մերժումները, ես՝ հուսադրումներն ու հաստատումը՝ մի վախեցի, ես ստեղ եմ:

Աիագին դխկդխկացինք ամպերի վրա, հետո իջանք կրպակի մոտ, որ Դիարբեքիրի օդանավակայանն էր, պտտվող ժապավենի վրայից բեռներն արագ թռշկվեցին, ու սրահը դատարկվեց, դռներն անգամ փակեցին: Մնացինք մենք՝ մթության մեջ դիմագրավելու մի քանի տաքսու վարորդներին, որ երկար մոլտում էին Սոնայի handmade քարտեզի վրա, որ փոքրիկ նոթատետրում աճապարանոք գծված երկու գիծ էր ու որևէ կետ մատնանշել չէր կարող՝ պոկված լինելով մեծ տարածքի հետ հարաբերությունից ու հասցված անընթեռնելի փոքրության: Վարորդները շտապում էին, հասցեն տեղը չէին բերում, բայց բեռներն արդեն տեղավորել էին թափքում ու իրար մեջ քննարկում էին, թե որ մութ անկյունում կարող է գտնվել այդ հայկական տունը, ուր ուզում են գնալ այս երկու աղջիկները, որ ներկայացան՝ իբր թե Ջորջիայից են: Ապակյա դռներից մի քիչ դեսը մի կին կանգնած ծխում էր՝ հենված իր սև ճամպրուկին: Զարդաքարը պեծպեծում էր քթի վրա: Հետո եկավ էն մեքենան, որին սպասում էր, ու վերջին պահին մեզ ձեռքով կանչելով՝ պոկեց գոռռացող վարորդներից, ու երկու ափը իրար սեղմած ականջի տակ դնելով՝ հասկացնում էր, թե գնանք, մեր տանը կքնեք, առավոտյան կզարթնեք, կորոշեք՝ ինչ անեք: Իրար երես նայեցինք ես ու Սոնիկը, կինը Սաղախլուի առևտրականի էր նման, նստեցինք մեքենան:

Վարորդը դուրս եկավ նրա հայրը՝ բենիմ բաբամ, որ քրդական երաժշտությունը քոքած՝ թռցնում էր մոխրագույն Հոնդան ու բոռբոռում աղջկա վրա, թե էս ինչ խաղեր ես խաղում: Էն էլ ոնց որ ասում էր՝ տաքսիստները հարձակվել էին վրեքը, հո գիշերով չէի՞ թողնելու դատարկ ճամփեքին: Բայց իրավիճակն էն տիպի էր, որ հայր ու աղջիկ ավելի անկանխատեսելի էին մեզ համար, քան տաքսու վարորդները, որոնք քիչ թե շատ նույնն են աշխարհիս բոլոր ծագերում: Հասանք: Կոշիկները հանել դռան մոտ ու ներս մտնել մի տուն, որ անհրաժեշտ ամեն բանով կահավորված է, բայց դատարկ է թվում, ու առարկաներից փչում է դատարկության պաղությունը: Սենյակներում մարդիկ են քնած: Բազմոցներին, հատակին: Մեզ առաջնորդում են հյուրասենյակ, որտեղ օդը սառն է, լույսը՝ շատ թույլ: Պապին արդեն իմացել է, որ Հայաստանից ենք, ու անդադար կրկնում է՝ Կարապետ Խաչո, մենք էլ սիրալիր գլխով ենք անում՝ ցույց չտալով մեր տարակուսանքը: Ընտանիքը քրդական է՝ իմանում ենք, երբ Սոնային հասկացնում է, որ տարիներ առաջ ռադիոյով միայն Էրիվանն էին լսում, ու մեծ աշխարհի հետ այդ կապը նրանց համար ապահովում էր Կարապետ Խաչոն, ու մենք որոշում ենք, որ Կարապետ Խաչոն, ուրեմն, քրդական հաղորդման հաղորդավարն էր, և ում անունը հետո լսելու էինք դիարբեքիրցի շատ մարդկանց բերանից:

Աննա Դավթյանը Ստամբուլում: Լուսանկարը՝ Հայարփի Հովհաննիսյանի

Անկողնուց ելավ եկավ բարևեց, մեր դիմաց նստեց Մեհմեդը: Որպես ուրախ լուր հայտնեցին, որ Մեհմեդը բանտից նոր է դուրս եկել, ու քույրը՝ Հեմդիեն, որ Ստամբուլում էր, բանտից հետո առաջին անգամ է տեսնում նրան: Ժպտում էինք ու փորձում էինք հասկանալ, թե ինչ է *սիլան*, որ անդադար կրկնում էին՝ փորձելով հստակեցնել Մեհմեդի նստելու պատճառը: Պապը մատը ատրճանակ սարքեց ու նշան բռնեց ինձ վրա: Պապի հոմանիշների բառարանն էր: Զենք: Եթե չիմանայիր, որ նստել է, Մեհմեդի դեմքին նայեիր, կիմանայիր, որ նստել է: Սև դեմքի վրա կախված ծանրություն, աչքերն արնակոխ, արտահայտության մեջ շփոթ ու շփոթեցնող համ կենտրոնացածություն, համ ցրվածություն: Աչքերին նայելու համար դեմքի վրա ինչ-որ բան պիտի հաղթահարեիր,

որ մի պահ թվում էր՝ հոգնած ծալքերն են, մաշկի թխությունն ու մազակալած ծնոտը, հետո ավելի անշոշափելի բան էր դառնում ու էդ պատճառով՝ ավելի անշրջանցելի: Հայացքս խխունջի աչքերի պես հետ էր քաշվում: Ինքն էլ չէր նայում: Հայրը բարձր բոռբոռում էր՝ նեղվելով, որ թուրքերեն լավ չենք հասկանում, ու հորդորելով, որ քրդերեն սովորենք: Քուրմանջի, քուրմանջի:

Անկողիններից ելան եկան Հեմդիեի տղաները: Սեյհանը եվրոպական իր արտաքինը հրամցրեց գիշերով բաղնիքում թրջած-ղզած բացգույն մազերով, սիպտակ մաշկով, ու սենյակում պտտեց իր մարմնի տպավորիչ մոտորիկան, որ ամեն մարդու բերանի բան չէ: Հաջորդ օրվանից մեզ շատ էր օգնելու թուրքերենի հարցում՝ բոլորից շուտ գուշակելով, թե ինչ ենք ուզում ասել, ու փոխադրելով մյուսների ասելիքը մեզ հասկանալի բառերի ու ժեստերի: Երկու ժամ հետո պապը մեզ հայտարարեց իր աղջիկները, Հեմդիեին՝ մեր քույրը, Մեհմեդին՝ մեր եղբայրը, ու ասեց՝ ոչ մի հյուրանոց, մեր տանն եք մնալու: Մեր տանն ասելով՝ նկատի ուներ Հեմդիեի տանը, քանի որ ինքն ու կինն ապրում էին երկու շենք էնկողմ՝ Մեհմեդի, նրա կնոջ ու չորս երեխաների հետ: Ասեց՝ Մեհմեդն էլ իրա արաբայով ձեզ վարորդ, ուր պետք լինի, կտանի: Էդպես, քաշվեցինք մեզ հատկացված սենյակը, երկու կցված մահճակալների բրդե վերմակի տակ ու առավոտյան զարթնեցինք Ստամբուլից հորքուրի բերած նվերներն ստացող երեխաների ճռվողյունից: Նվիրված շորերն հետո տարածվեցին տնով մեկ, որ անփույթ ձեռքով հա խոթվում էին տոպրակները, բայց հետո էլի ոտ առած ելնում ու փռվում էին տան միջանցիկ ճամփեքին: Նախաճաշը գետնին էր փռված, սեղանի ոտքերին շատ մոտ, Մեհմեդի որդի Աhմեդը համարյա սեղանի տակից էր հաց ուտում: Երեսին թաթուներ ունեցող տատը նամազ էր անում նախաճաշի սինիին կից: Սինու վրա ֆռֆռում էին նեղփոր թեյի բաժակները և այլն:

Մեհմեդն իր արաբա Հոնդայով մեզ տարավ ման տալու: Կաղում էր: Գիշերը բացել, ցույց էր տվել ոտքը. ծնկի բաժակը խրել, դանակով քանդել էին, հետո դանակը բռնել էր, երբ հարվածն ընթացել էր սրտի ուղղությամբ, բայց պտտել ու կտրել էին բութ մատը: Հիվանդանոցից դրել, մեկից բանտ էին տարել, որից Մեհմեդը երկու բառ էր ասում՝ չոք զոռ: Մատը չէր ծալվում, ծունկը չէր ծալվում, բայց ինչքան ասեցի՝ էս պարիսպը մի բարձրացի, չլսեց: Դիարբեքիրի պարիսպը:

Պարիսպը՝ պարիսպ–ամրոցը, դիտաշտարակ–քաղաքը տարածվում է Դիարբեքիրի միջով՝ երկար, հաստ ու սև: Քաղաքի բազալտե անգին քարը: Թեքադարս աստիճաններով: Շուրջբոլորը եղած ամեն բան թղթե սաղավարտ է՝ առևտրի ու կենցաղային աղբի պաճուճանքներով: Մեհմեդն ասում է՝ չինականից հետո երկրորդն է, ու դիք մարմինն ուղղում է դեպի պարսպի վերընթաց աստիճանները, որոնք բարձրանալիս կարծես երկու տակ է լինում: Մեծ սև քարերով մեծ սև պարիսպ, որ խոյանում է դաշտի տկար բոստանների վրա: Հզորության ու գեղեցկության գեներատոր: Վիքիպեդիան ասում է՝ ասորիներն են սարքել: Մենք մեր ներսում նրան հայկական համարելով ենք քայլում, ու էդ համարելը ընդունել են մենակ մեր ոտքերը, որ հաստատուն հենվում են աստիճաններին ու առաջ հրվում: Խոր Վիրապին է նման, դիտաշտարակի նեղ լուսամուտները նույն ձևով նայում են բաց դաշտին, մյուս կողմից էլ՝ պարսպի սեփական երկար պոչին, որ սև պայթում է կանաչի մեջ: Զգացողություններս խուսափում են հստակությունից, գնում-գալիս են հետաքրքրության ու հոգնածության շրջանակի մեջ, գիտակցությունս թափառում է, չի ուզում կենտրոնանալ, ընդհանրապես ուզելու հարցը վերանում է, միտքս սկսում է հածել

միայն լուսանկարչական պարտադիր կանոնակարգի վրա, որը նույնպես չեմ ուզում կատարել: Ընդամենը մի նկար արեցի, մի պարզ ընդհանուր տեսարան դաշտի ու պարսպի մի հատվածի, ու միտքս տարված մնաց միայն Մեհմեդի ծնկի ցավով, որը զսպած՝ դիք մարմինը քարշ էր տալիս՝ փոքրիկ տեսախցիկս ափի մեջ սեղմած՝ ինչպես բեռ: Զբոսաշրջիկները շատ էին, ու լուսանկարների մի ամբողջ հորդա գնաց միանալու լուսանկարների անսպառ հորձանուտին, որտեղ առարկաները զրկված են իմաստից ու անանուն:

Մեհմեդն արագ էր քշում՝ քրդական երաժշտության խզզոցը հասցրած վերջին խազին: Նուրբ դաստակները պտտվում էին ղեկի վրա. թափով թեքում էր կամ շեշտակի կանգնում: Մեհմեդի նման երկար, ճարտարապետական ձև ունեցող եղունգներով մարդկանց ֆիզիոգնոմիկական թեստերը համարում են ստեղծագործական մեծ հակումներ ունեցողներ: Բայց Մեհմեդն ինտերնետ կաֆե ուներ: Ձեռքերը պատված էին անհամար սպիներով ու դողում էին, երբ մանր շարժումներ էր անում, օրինակ՝ երբ շրթունքներին էր տանում թեյի բաժակը կամ հեռախոսի մեջ ինչ-որ բան էր ցույց տալիս: Ներքին ինքնակա բարեկրթությունը բեռնվել էր ավանդույթների ու դաստիարակության հաստակճեպ շերտով, ու կնոջը չէր թողնում զանգել իրեն կամ լուսանկարվել կամ Ֆեյսբուքի էջ բացել, մի տեղ գնալ ու հազարումի այլ քաքութեք:

Մերջանը՝ կանաչ աչքեր, բաց կանաչ մաշկ, լայն կուրծք ու անընդհատ գլխից սահող գլխաշոր, որ ուղղում էր հմուտ ձեռքով, բայց դժկամորեն ու շատ ուշ, երբ արդեն բացվել էին ներկած մազերի ամենաներքևի փնջերն անգամ: Քսանյոթ տարեկանում չորս երեխա ուներ, երկուսն էլ մահացել էին: Խեղճ չէր, իրեն հասանելիքը պահանջում էր, ինչքան թույլ էր տալիս ավանդույթը. ավանդույթն էր քիչ բան թույլ տալիս: Կեսրարն օկուպանտի իր վարքագծով նստում էր մինչև ուշ գիշեր՝ անապատի ժամանակն ուզող զրույցների, ու մի օր Մերջանի համբերությունը հատավ: Կեսրարին շիշը շարեց, որ ջերմությունը վրեն երեխեն գրկին, Աիմեդն էլ ատամը ցավելով՝ նստած սպասում են, թե երբ պիտի բաբամի քեֆը թմմի, որ տուն տանի իրենց: Կեսրարն ու Հեմդիե տալը կատաղի աբառոտ ֆռռացին, իսկ Մեհմեդը լռեց: Հետո դուռը շրխկացրեց ու գնաց, կնոջը չտարավ:

Մեհմեդի հայացքի դժվարամարսությունը երկրորդ օրվանից անցավ: Աչքերը սկսեցին ձեռք բերել խաղողի ողկույզի հայտնի համեմատությունը, որը, ինչ որ է, էդպես էլ կար: Ու, Սոնայի ասելով՝ անուշություն էր լցվում դրանց մեջ, երբ փափուկ թաթերի վրա նրան էր մոտենում աղջիկը՝ Էջեմ Սուն, որ վայրի ձևեր ուներ՝ հոխորտալու, չհնազանդվելու, անթարթ նայելու: Վայրի, որ է հիասքանչ: Մեհմեդի աչքերը կուլ էին գնում, երբ քթով հետևում էր գրկի մեջ շարժվող աղջկա մազերին, հոտ էր քաշում մի բանից, որի անունը թուրքերենից թարգմանվում է՝ *թագուհու ջուր*: Էջեմ Սու…

Հեմդիեի տունը ոստիկանության որոնումներից խուսափողների ապաստարանն էր: Մեհմեդն իր տանը չէր քնում, քնում էր Հեմդիեի տանը, այստեղ էր քնում նաև ոստիկանության մյուս փնտրածը՝ Հաքանը, նրանց մեծ քրոջ որդին՝ մի տասնվեց տարեկան պատանի, որի պատմության շուրջը ծավալված թուրքերենի մեջ էլի պտտվում էր *սիլա* բառը: Իսկ Ստամբուլում գողության համար դատված էր նրանց բազմաթիվ քույրերից մյուսը, որի համար զանգել ու բարեխոսում էր քույրերից երրորդը, որ լավ դատապաշտպան վարձելու համար փող ուղարկեն: Մեհմեդը վրդովված շարժում էր երկար ձեռքերը թե՝ ինքը կիլոյով ոսկի ա գողացել, ես երկու ամիս շարունակ փորել եմ, որ հայկական պահած ոսկիներ գտնեմ, իսկ աշխատանքը ուտել կուզի, խմել կուզի, էդքան

աշխատել եմ, մի քոռ կոպեկ էլ չեմ գտել, գտածս ոսկորներով ու ատամներով լի մի կճուճ ա եղել, էն էլ ո՞ւմ էր պետք, ասում է մեզ: Ասում է Մեհմեդը՝ մեզ:

Երբ գրքերի խանութում հանդիպեցինք Ֆրեդերիկին, որ հոլանդացի լրագրող կին էր, ու արդեն քանի տարի է՝ Դիարբեքիրում էր ապրում, ու երբ իմացավ հայաստանցի ենք, անմիջապես խնդրեց հարցազրույց վերցնել: Նստեցինք հայկական իջևանատան կամարակապ անկյունում, որը հիմա գրախանութ էր, և որի տերը հայերեն էր սովորել ու փայլում էր ուրախությունից մեզ հանդիպելու համար: Ֆրեդերիկն ինձ հարց տվեց, ես ասեցի՝ ոչինչ չեմ զգում, դատարկ եմ, տեղին չեմ կապվում, Մեհմեդի ընտանիքն եմ սիրում, հա, գիտեմ, որ հայկական շինություններ են, Սոնայի հետ մեկ-մեկ ափերս դնում ենք պատերին, սև, սիրուն քար է, բայց կտրված, հեռու եմ զգում, ջարդված, երկու կես: Մի քիչ զարմացավ ու ավելի զարմացավ, երբ իմացավ՝ քրդերի ներողության տերը չենք զգում մեզ. թե իսկապես հասել են էն տեղին, որտեղից արձակվում է ներողության շշուկը, իրենց հոգու հանգստին լավ: Որ ներողություն խնդրողը ես լինեի, չէի խնդրի, չէի կարողանա, կուզեի գետինը բացվի, մտնեմ մեջը: Հարցական մնաց Ֆրեդերիկը: Բարձրահասակ կին էր, ինձ համար միշտ տարօրինակ է վերև նայելով խոսելը:

Հաջորդ օրվանից սկսեցինք քաղաքում առանց Մեհմեդի շրջել: Մերջանն ու Մեհմեդը կռվել էին: Նախորդ օրը Մերջանն իրեն թույլ էր տված եղել զանգել Մեհմեդին՝ ասելու, որ Ահմեդի ատամը ցավում է, պետք է բժշկի տանել, Յուսուֆն էլ տաքություն ունի, իսկ Մեհմեդը չէր գնացել, մեզ հետ էր: Մերջանին տվեցինք մեր համարները, ասեցինք՝ մեզ զանգի, ու մարդուդ էլ հետներս չենք տանի, իրան պատիժ: Ու չտարանք:

Նոր ու մեծ թաղամասերով շրջանակված պարսպից ներս ընկած է հին քաղաքը, հին քաղաքի մեջ՝ կենտրոնական հրապարակի շուրջը, ընկած են սևքար տները՝ աչքից ծածկված աշխույժ առևտրային գոտով, ու սև տների ու նեղ փողոցների ցանցի մեջ կանգնած է Սուրբ Կիրակոս եկեղեցին՝ շուրջը հավաքած ու պահած բոլոր այն գեղեցիկ ու նրբաճ շինությունները, որոնց վրա հերթով մատը դնելով Արմենն ասում է՝ հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն, հայու դուն… Անվերջ: Որոշները դատարկ են, մի մասը վերածվել է գողտրիկ թեյարանների, մեծ մասը բնակեցված է: Քրդեր են ապրում: Տներն անմիջապես չես նկատի, դրանք առանձին-առանձին չեն կանգնած. քայլում ես նեղ սալքարե նրբանցքով, որի երկու կողմից բարձր պարսպի նման պատեր են միշտ, ու միայն ցածրիկ փայտե կամ երկաթե դուռը բացելով է, որ կարող ես տեսնել՝ ինչ է հայու դունը: Երկհարկանի գեղեցիկ կառույց է, որ չորս կողմից շրջանակել է բակը՝ իր փոքրիկ ավազանով, ծաղիկներով, կամարակապ իրար կողքի շարված բարձր լուսամուտներով, ճաղաշար աստիճաններով, ու դռներ ամեն տեղ: Կարծես սենյակներն իրար են կցվել ոչ թե ներքին դռներով, այլ բոլոր սենյակներն ունեցել են դեպի բակը բացվող իրենց առանձին դռները: Ամեն դեպքում, այդպես է այն տներում, որոնք վերածվել են թեյարանների ու խնամքով պահպանվում են՝ հիմնականում նկատի ունենալով զբոսաշրջության մեծ հեռանկարները Դիարբեքիրում:

«Մշակույթի տուն» կոչվող տղամարդկանց հավաքատեղին, որի դուռը հետաքրքրությունից դրդված բացեցի, ու ընկանք Դիարբեքիրի քրդական ինտելիգենցիայի միջավայրը՝ բժիշկներ, դասախոսներ, արվեստի ու արհեստի մարդիկ, որ շրջան բռնած նստած էին բակում՝ անհամար բաժակների թեյագույն խճանկարի մեջ, էլի հայու դուն էր: Այդ մարդկանցից երկուսից մեկի

պապն էր Արշալույս եղել, մյուսի՝ տատը։ Նա, ում տատն էր Արշալույս եղել, խնդրեց տատի անունը հայերեն գրել թղթի վրա, ու Սոնայի հանձնած թերթիկին երկար նայելուց հետո՝ խնամքով ծալեց, դրեց ծոցագրպանը։ Ինչ-որ մեկը ինչ-որ տվյալ էր ասել Սոնային, որ քաղաքի երկու միլիոն բնակչությունից յուրաքանչյուր հինգերորդը հայ է, որ վախից կամ ամոթից թաքցնում է իր ինքնությունը։ Բայց ինչ ես էի զգում, ոչ էնքան վախից ու ամոթից, ինչքան արդեն իներցիայից, որի տակ ճզմվում է յուրաքանչյուր ձեռնարկի ցանկություն։ Թեյ էինք խմում հայու դան բակում, ու մի տեսակ լուռ, խոնարհ հետքաշվածություն կար այդ մարդկանց մեջ, որոնց լրիվ տղամարդկային միջավայրը, որտեղ երբեք կին չէր լինում, երկու կին էին մտել, ում ավելի շատ իրավունք վերապահեցին հանկարծ, քան իրենց։ Ու մենք մեզ հատկացվածից բաժին հանեցինք՝ խնդրելով՝ երբեմն էստեղ հրավիրեք ձեր կանանց կամ ձեր կին ինտելեկտուալ ընկերներին։ Տխուր ժպտացին ինտելեկտուալ տղամարդիկ երկու երիտասարդ կանանց՝ եկած անտանելի հեռու մի երկրից, որի ներկայությունն զգում ու չէին զգում իրենց ոտքերի տակ։

Գնում էինք ձայների, հոտերի ուղղությամբ, սև քարերի ուղղությամբ, հետևում էինք մեր ներքին GPS-ներին։ Մեհմեդը մեզ էդ տեղերը չէր տանի, ինքն էլ տեղյակ չէր դրանցից։ Քրդական երաժշտության օրերի հանդիպեցինք՝ նեղլիկ փողոցներից մեկն ընտրելով։ Որտեղ նվագվեց նաև հայկական երաժշտություն՝ քրդերեն բառերով, ու տոններով չիքյուֆթե վաճառվեց հայու դան ճաշակավոր բակում։ *Դելիլոն* է քրդերի ամենահայտնի պարը, որը նախորդ օրը կամրջի վրա էլ էի պարել՝ Տասակնանի կամրջի (Օն գյոզլու քյոփրու), որի տակից հոսում էր Տիգրիսը, որ այլ անուն ուներ արդեն՝ Դիջլե, ու պարելիս մի միտք էր սողոսկում անընդհատ, որ ինչ-որ բան եմ վերականգնում կամ հաստատում իմ պարով, բայց հետո էլի քանդվում ու բեկոր-բեկոր անհետանում էր դեղին պղտոր լույսով հոսող մարմանդ գետի մեջ։

Արամ Խաչիկյանը հայերին բարևելիս ու հրաժեշտ տալիս թուրքերեն է խոսում, որի միջից հանկարծ զատորոշվում է *քուրիկ* բառը։ Միշտ եկեղեցու տաբածքում է լինում՝ մուգ մոխրագույն կոստյումով։ Եկեղեցում հանդիպեցինք նաև նրա դստերը, ում բարևի ողջույնը, որ պիտի ընդգրկեր երկու թոռցիկ համբույր յուրաքանչյուր այտին, ինչպես ընդունված է Թուրքիայում, տևեց երկար, Դիարբեքիրի պարսպի չափ երկար, ընդգրկեց ագուցված թևերի պինդ սեղմումներ, իրար աչքերի մեջ նայել-նայել, իրար մեջ շրջանառվել, լեզու հյուսել։ Հայրը հայերենի չիմացությունից կապված լեզուն դնում է եկեղեցու զանգերի բերանը, ու հնչեցնում է օրը երկու անգամ՝ քու-րիկ, քու-րիկ, քու-րիկ, քու-րի՜կ։

Քսան օր էր, ինչ Մալաթիայից տեղափոխվել ու եկեղեցում էր աշխատում Գյուզիդեն։ Խոսելիս հայացքը պտտվում էր եկեղեցու բարձր պատերի, բարձր զանգակատան վրա՝ անծանոթ ու սիրելի մի բան պաշտպանողի նման։ Տարիներ առաջ էր իմացել, որ մայրը հայ է։ Պարտք ուներ երևի, չգիտեմ, ինքն էլ չգիտեր։ Ֆրանսերեն ու անգլերեն էր խոսում, ամեն հարցով Գյուզիդեն էր կանգնած. եկեղեցու ուղեվարն էր, պահակն էր, հուշանվերների խանութի վաճառողն էր, Դիարբեքիրի տեղեկատուն էր, հայերենի ուսուցիչ ման եկողն էր, հայերեն սովորել ուզողն էր։

Իր հայությունից ու դրա գիտակցության ցավից ու հրճվանքից ներվահան եղած Արմենը՝ Աբդուռահիմը, որ հայու դներն էր ցուցանում հատ-հատ, անդադար կրկնում էր Հայաստանում կամ այլուր ճանաչած հայ մարդկանց անունները։ «Մերի Մուսինյան, հայ, հա՞, խնդիր չկա, Նարինե, բժիշկ, հայ,

գսիրեմ, արի դուն, հա՛, շատ լավ, խնդիր չկա»,– գրպանից հանում էր աշխարհի ամենափոքր օբսիդիանից քառակուսին, որի վրա խաչ էր փորագրված, ափի մեջ դրած սեղմում էր անտանելի, բայց քառակուսին փոքր էր, մատները տեղ չէին հասնում, ու նորից հառաչելով գրպանն էր դնում, միշտ այն փոքրիկ գրպանը, որ լինում է ջինսե տաբատների իսկական գրպանից ուղղանկյուն եզրով դուրս ցցված, ու որից փոքրիկ առարկաները դուրս են գալիս մի մատով փորփրելով միայն:

Մութն ընկել է, Արմենն անընդհատ ժամին է նայում, քուրդ կինը բացասական վերաբերմունք ունի նրա հայության ու դրա հետ կապված ուշացումների հանդեպ, բայց Արմենը դողդող փոքրիկ հեռախոսով երգեր է դնում՝ Դլե յաման, Նազան, Եվա Ռիվաս, Կոմիտաս, ու մենք փոքրիկ հրապարակում նստած երգում ենք՝ ձայնակցելով հեռախոսին, ու քուրդ երեխաների հրոսակախումբը գրոհում է ու ետ քաշվում՝ կատուների նման մագլցելով կանգառի մետաղյա ծածկատանիքի վրա, ավիրում է ծաղկաթաղարներն ու ճյուղակոտոր անում ծառը, ու հետաքրքրությունն սպառած՝ նորից դառնում է մեզ: Մեզ, որ ձայնատարած գիշերային ստվերներ ենք:

Երրորդ օրն ու մեր ճամփորդությունը եզրափակելու է Օննիկ Դինքչյանի համերգը: Նույն պատմությունն է. քրդերի ձեռքով փրկված հայր, հոր պատմությունները հիշող, ի վերջո հոր ծննդավայրը վերադարձող ու ճանաչող զավակ, կոտորածների մեջ կորած մայր, մոր երգելու շնորհ ու ձայն, փոխանցվող գեներ, որոնք Օննիկի որդու՝ Արայի ձեռքն են տվել ուդը, մինչ տարիներ հետո, երբ արդեն հասակավոր մարդիկ են երկուսն էլ, մի կնոջից կիմանան, որ մորեղբայրը նույնպես ուդ է նվագել, իսկ մոր ձայնի համբավը տարածված է եղել ամբողջ քաղաքում: Հետո ամեն ինչ մշուշ է, ու հիմա առաջին անգամ ու նորից Դիարբեքիրում հնչում է այդ կնոջ ձայնը՝ իր որդու բերանից, ու թոռան ձեռքին իր եղբոր ուդն է:

Դաhլիճը լիքն է: Բեմ է մտնում աշխարհի հասակավոր մարդկանցից ամենաանուշն ու ամենատխուրը, որ Տիգրանակերտ-Դիարբեքիրի երգերն է երգում հենց այն ձևով, որով դրանք պիտի երգվեն: Ես ու Սոնան հասկանում ենք, որ ուշ է: Համերգ էինք հրավիրել մեր բոլոր տնեցիներին ու Մեհմեդին երեք օր խնդրել էինք Մերջանին համերգ բերել. խոստացել էր... Այդ համերգով հետաքրքրված էր միայն Մերջանը, ով իր օրում ոչ մի տեղ չէր գնացել՝ համերգ, թատրոն, որևէ մշակութային իրադարձություն չէր կատարվել նրա կյանքում: Առավոտնից իրիկուն կռվշտում էր Մեհմեդի հետ համերգի համար, չէր խնդրում, պահանջում էր իր իրավունքը, բայց նախօրոք ընդունածի պես, որ դրա իրավունքը չունի: *Չոջուխ* բառով փակում էին Մերջանի բերանը: Մերջանը իր երեխաների մանկապարտեզն էր: Նրա համար ամենաանհասկանալի ու անհավանական բանն էն էր, որ ես Թուրքիայում եմ, ամուսինս՝ Ամերիկայում, իսկ Դիարբեքիրը ոտի տակ եմ տվել *իր* ամուսնու հետ: Մերջանին լեզու պետք չէր՝ ցույց տալու իր ապշանքն ու վարանումը: Դրանից բացի՝ Մերջանը ոչ վերբալ հաղորդակցության առաջնակարգ մասնագետ էր, ու նրա տաղանդը խփում էր մինչև սուրդոթարգմանություն, բայց աչքերի ու ձեռքերի օժանդակ կիրառությունից զատ՝ գիտեր ձայնարկություններն այնպես շարել ու հնչեցնել, որ բառարանի ու քերականության հարցը վերանում էր: Այդպես երկար զրուցել ենք Մերջանի հետ աշխարհի փոքր ու մեծ հարցերի շուրջ՝ ֆեմինիզմից մինչև Մեհմեդի ինտերնետ կաֆեն, ու որ ամեն գիշեր հիվանդանոց արշավել պետք չէ ամբողջ ընտանիքով՝ մենք էլ հետները, երբ երեխեքից մեկի ջերմությունը բարձրանում է: Լավ է՝ բոբիկ ման չգան, ու էն ասպիրինը, որ բժիշկն է տալիս, տանը խմեն:

Ընդամենը մի նկար արեցի

Մերջանին համերգ չթողեցին: Իրենք էլ չեկան: Տնից ոչ մեկը չեկավ, հիվանդանոց էին գնացել. Հուսեինի ջերմությունը բարձրացել էր, Սեյհանն էլ նույն ճամփին էր: Մերջանը առավոտնից պատրաստվել էր: Երբ սենյակում հագնվում էինք, խորհուրդներ էր տալիս: Հագանք էն, ինչ մատնացույց արեց, քսեցինք էն, ինչ մատնացույց արեց: Սիրուն էինք… Բայց Մերջանը չեկավ:

Էլի մի բան կորցրածի պես նստեցինք դահլիճում՝ Արմենը մեր մեջտեղում՝ քթինքը հուզմունքից վրայից չռռալով:

Կարոոոո՜տ, ախ, կա՜րո՜տ… սկսվեց երգը… Բռնեց՝ կոկորդ, աչք, քիթ, բերան, սեղմեց, սեղմեց, սեղմեց: Արմենի վրայով Տիգրիսն էր հոսում՝ աղի ջրերով թրջելով մարմինը: Երեք օրվա մեջ առաջին անգամ մի բան սուր ու բութ գլխով կոկորդով ստամոքսով մխրճվեց ու դմփոցով ընկավ որովայնիս հատակը, ու դմփոցի ձայնը հասավ ականջներիս: Մի վայրկյան միայն գիտակցեցի եղածը, ամբողջ մարմինս գիտակցություն դառավ, լողաց ցավի ու ճենճահոտի մեջ, թանձր ջուրը հաստ մակերևույթով զմփաց ափերին, կուլ տվեցի, կուլ տվեցի, կուլ տվեցի, հյուծվեցի, գլուխս հենեցի թիկնակին: Խորը շունչ: Հետո անանունին փոխարինելու եկավ վճիտ բանը: Սկսեցի տեսնել երգի պատանուն, ով մթնշաղի կապույտ լույսի մեջ առաջին անգամ բռնել է սիրած աղջկան, *ում մեջքը բարակ է, սեղմել չի կարելի*, ու դողահար սրսփում են իրար առաջ մեր կողքի նեղլիկ փողոցում, որտեղ իրիկվա այս ժամին շատ մարդ չի լինում:

Պատկերացրի, որ տղան Սերհատն է: Մի խորտկարանի մատուցողն էր, որ գնաց-եկավ, հարցեր տվեց, ու հաշիվը բերելիս ասեց, որ հայրը հայ է: Բարակ էր, սիրուն էր, սրսփան էր: Մեր մեջ մի բան էր տեսել, պտտվում էր, պտտվում էր, տեղը չէր բերում: Սերհատին էլ էինք համերգ հրավիրել, աշխատանքի լինելու պատճառով չեկավ, բայց հազար անգամ զանգեց, հազար հատ էլ հաղորդագրություն գրեց: Համերգի ժամանակ բռնվեցի Սերհատին թմբիրից արթնացնելու տենդով: Երևի նույնն էլ Սոնան, որովհետև համերգից հետո Դինքչյանի մասին պատմող ֆիլմի սկավառակն առավ Սերհատի համար, ու մենք գիշերով գնացինք նրա գործի տեղը՝ Արմենն էլ հետներս՝ աչքը հեռախոսին, որի վրա անընդհատ տզզում էր քուրդ կնոջ զանգը: Ես աղջկան

սպասողին Սերհատին էի պատկերացնում, նեղ փողոցներում Սերհատին էի պատկերացնում, պատկերացնում էի, որ պիտի իմանա, որ դրանք իրենն են պատկանում, որ ամենաշատը իրեն են սազում, որ իր բարակությունը դրանց համեմատ է: Բայց Սերհատն էնքան հոգնած էր գործից հետո, որ մոռացել էր էն մի քանի անգլերեն բառն էլ, որ խոսում էր նախորդ օրը, ու չնայած սկավառակն ուրախությամբ ընդունեց, բայց հնար ու ուժ չգտանք բացատրելու, թե ինչի էինք փոխակերպել նրան, ու էլ ինչ կարող էր նա լինել: Գնաց, հետո նոր գլխի ընկավ, որ առավոտյան գնում ենք, վերադառնում ենք Ստամբուլ, սկսեց էլի զանգել, մի կերպ, մի երկու անգլերեն բառով բացատրել, որ առավոտյան օդանավակայան կգա՝ մեզ ճանապարհելու:

Սպասեցինք Սերհատին, ինքնաթիռն արդեն նստեցնում էին, բայց մենք կանգնել էինք առավոտյան ժխորի ու տաքսիստների ոգևորության մեջ, սպասում էինք՝ ավելի շատ մտածելով, որ մեղք է՝ գա-հասնի ու մեզ չգտնի: Բայց Սերհատն էլի զանգեց թե՝ գործի եմ: Հետո որ երեկոյան արդեն Թաքսիմում քայլում էինք, հա զանգում էր, չգիտեմ՝ չէր հավատում, թե չէր հասկանում, որ արդեն Ստամբուլում ենք, անընդհատ հարցնում էր՝ you are in Diyarbakir? Ասում էինք՝ չէ, Սերհատ, Ստամբուլում ենք, մի վատ կազմակերպված հայկական համերգի էինք գնացել, հիմա դրանից հետո տուն ենք գնում, Թաքսիմում ենք, անձրև ա գալիս:

Անուշ Բաբաջանյան

Հայկի պատմությունը և

Ծանոթ մարդիկ պանդոկում

Ծանոթ մարդը աջից: Նայի առաջ, նայի առաջ: Միայն ճամփան եմ տեսնում, միայն ջուրը: Հալված ձնից: Ինչքա՜ն ա խորը, փորձի: Ոչ էնքան խորը, ինչքան մտածում էի: Նայի առաջ, ծանոթ մարդն արդեն՝ հետևում: Շատ լավ ա… Լրիվ մենակ իմ անունը շատ լավ ա:

Մի հատ էլ քայլեմ էս փողոցով: Մյուզիքը լավ ա, ունքերս ուղիղ են, ու քիչ քնելը նույնպես լավ ա:

Էլի քայլի: Էս փողոցով, հետո թեքվի աջ, ու մյուսով, նայի վերև՝ տես բիլբորդը, հետաքրքիր ա, իրական տեսք ունի: Էլի քայլի, պանդոկը աջից ա: Էսօր շատ մարդ կա: Բոլորի հետ խոսալու եմ:

– Ո՞նց ես:
– Լավ:
– Մի ժամից են չէ՞ նվագում:
– Հա:

Գնաց, շուռ եկավ, արագ գնաց: Շա՜տ կոպիտ էի: Երևի շատ արագ եմ խոսում: Զգույշ եղի, զգույշ եղի: Ի՞նչ մտածեց: Գնամ, նստեմ սեղանների միջև դատարկ աթոռին: Էլի եկավ… Չգիտեի, որ ստեղ էր նստած:

– Բա ինչո՞վ ես զբաղվում:
– Օպերայում եմ աշխատում:
– Ի՞նչ ես անում էդտեղ:
– Կանգնած եմ: Լույսերի վրա:
– Լավ ա… Կօգնեի՞ր, եթե ուզենայի մի բան նկարել օպերայի վերևից:
– Չգիտեմ:
– Կարա՞ս ծանոթացնես ինձ մեկի հետ, ում հետ կարամ խոսամ դրա մասին:
– Հա:
– Գիտե՞ս տենց մարդ:
– Հա:
– Կծանոթացնե՞ս հետը:
– Հա:

Ճամփով գնում, մտնում եմ սիրուն կլոր շենքը, վերև, դեպի վերև՝ լույս տալու, ես եմ լույսը: Ծանոթացրու լավ Պետրոսյանի հետ: Ոնց որ թե ես ուղղակի ուզում եմ ծանոթացնեմ, ես չեմ օգտագործում աշխատանքային դիրքս: Օգտագործում եմ մենակ, որ լույս տամ: Լավ… Ծանոթացրու Պետրոսյանի հետ, աղջիկը բարձրանում ա մարմարի վրա, նայում պատուհանից դուրս ու տեսնում մարդկանց՝ շատ, ինչքան որ Օպերայի հրապարակն ա, Ազատության

հրապարակը: Որովհետև մենք բոլորս ազատ ենք:
Հա, պանդոկը: Բարև: Ժպտա: Իրանք ջահել են ու իմ շուրջը անմակարդակ միջավայր են ստեղծում: Չէ, էլ ոչ մի հիվանդ բան: Հիվանդ, ես հիվանդ չեմ: Ուղղակի սենց մարդ եմ, որ սիրում ա հանգիստ իրա համար նստել լռության մեջ: Ես ունեմ իմաստուն լռություն, շատ խելացի: Ծիծաղում ա: Հա, դու ինձնից խելացի ես:
Անցնում եք ստեղով, ոնց որ ուղղահայաց օձեր լինեք, օձեր, ոնց որ Նոկիայի խաղի օձեր: Կոճակը ավելի ուժեղ սեղմի, էս օձին սենյակից դուրս հանի: Մի քիչ էլ, մի քիչ էլ… Ապրես: Կարացա: Հիմա օձը դիմացի սենյակում ա: Պիվա ա խմում, խմում ա Էլվիսի հետ: Էս Էլվիսն ո՞վ ա… Բայց ես իմ հանգիստ, լուռ, իմաստուն մարդն եմ ու չեմ անհանգստացնում ինձ, չէ-չէ:
Լավն ա էս մյուզիքը… Երբ կիթառի ձայնը դուրդ գալիս ա, կիթառն ա՞ դուրդ գալիս, թե՞ կիթառ նվագողը: Ինձ Ջիմին ա դուր գալիս, ու իրա ընկերուհին էն կինոյից: Սիրուն ա: Էնքան սիրուն ա էն պատմությունը, երբ ինքը գնում ա Մայլսի մոտ, հետո հանվում ու իրան ասում ա, որ Ջիմին իրան դավաճանում ա Մայլսի ընկերուհու հետ: Մայլսը հեչ չզարմացած սուրճ ա առաջարկում տկլոր աղջկան: Շատ հաճելի էր, շնորհակալ եմ, ու նրանք վարում են քաղցր խոսակցություն, որից հետո աղջիկը գնում ա: Մայլսը էնքան իմաստուն ա, աղջիկը էնքան սիրուն ա, Ջիմին էնքան տաղանդավոր ա, Մայլսի ընկերուհին՝ անծանոթ, բայց բավարարված:
Հիմա պիտի սպասեմ իրան: Կեննասապասարկում: Նա կգա, բայց ոչ իմ համար: Դա նորմալ ա, և դուք երբեք չեք իմանա իմ պատմությունը:

Թող սա հետևի ինձ այսօր

ինձ մեկը ասել ա, որ ինչ մտածես առավոտյան արթնանալուց, կհետևի քեզ օրվա ընթացքում: Ինչի՞ սենց միջին տեսակի մարդ: Ես պիտի լինեմ ամենալավ տեսակի մարդ: Թող սա հետևի ինձ այսօր:
Կտրուկ գցում է վրայից վերմակն ու նստում:
Հրաշալի առավոտ է, այո, նույնն է, ամեն ինչ նույնն է: Ես այնպիսի մարդ եմ, ում դուր են գալիս փոփոխությունները: Այս առավոտվա թեման ես եմ: Ես, իմ անունը Հայկ Գրիգորյան, հնադար Գրերգորյան, երկարակյաց Գրեգորեանական եկեղեցու աղաթի հետևորդ: Սուրբ Գրեգորի եղել է: Թեման լինելով ես, դպրոց: Վատ դպրոց, բավականին վատ:
– Ի՞նչ կուզես ուտես:
– Ձու:
Ձվածեղ սարքի, մամա, ինչ կլինի: Տղադ ամեն առավոտ գնում ա գործի: Իմ դպրոցը հեռու չի տնից: Ու Հայաստանի մայրաքաղաքը Երևանն ա:
Ես գնում եմ դպրոց ամեն օր:
Օր ամեն դպրոց եմ գնում ես:
Դուրս է գալիս սենյակից, տեսնում քրոջը, ով անցնում է կողքով ու մտնում խոհանոցը:
Շատ ա խոսում: Շատ ես խոսում: Սուս, լուռ իմաստուն մարդ, սուս:
Գնում է զուգարան, նստում ու լսում, թե ինչպես են խոսում խոհանոցում ծնողները:
– Մտածում եմ՝ մենակ բռնիչները չպիտի փոխենք: Դռներն էլ ա պետք փոխել:
– Ինչի՞ դռները: Մի քանի ամիս առաջ ենք առել:
– Հա, բայց նայի, զուգարանի դուռը թափանցիկ ա:

Ճիշտ ա: Միշտ պիտի հեռու մնամ դռնից, որ չերևամ: Մեկ ա սիլուետը երևում ա: Սիլուետ, Ալուետ, little Ալուետ: Play the game with me.

Նամակ Minesweeper ստեղծողներին

Բարև ձեզ: Իմ անունը Հայկ է: Ես 23 տարեկան եմ: Ես միայնակ եմ և ես սիրում եմ խաղալ Minesweeper:
Առաջին հերթին ես ուզում եմ հայտնել շնորհակալություն հրաշալի Windows Vista-ի ստեղծողներին, որովհետև այս նոր և մանրամասն ձևավորված համակարգում Minesweeper- ը ստացել է երկու տեսակ (ականներ կամ ծաղիկներ) և երկու գույն (կապույտ կամ կանաչ): Ես կարծում եմ՝ սա մեծ և հոգատար քայլ էր, որովհետև դա անելով՝ ստեղծողները ցույց տվեցին հատուկ ուշադրություն հակապատերազմական ակտիվիստների և բոլոր նրանց նկատմամբ, ովքեր դեմ են պատերազմներին և ականներին:
Ես ինքս ընտրում եմ ծաղիկները և կանաչ գույնը: Սա բավականին բարձրացրել է խաղի հեղինակությունը ինձ համար, և ես երբեք չեմ անհանգստանում ծաղիկներ ջնջելու համար: Եթե հանկարծ դա ինձ անհանգստացնի, ես հեշտորեն կարող եմ նորից ընտրել ականները:
Բացի այս ամենից, ես հիմա կարող եմ ձգել իմ Minesweeper-ի պատուհանը՝ հասցնելով այն ավելի մեծ չափսի, շատ ավելի մեծ:
Շնորհակալություն ամեն ինչի համար: Շնորհակալություն, Minesweeper:

Հիլը երբեք չի մեռնում

– Ալլո՞:
– Ալլո:
– Հիշո՞ւմ ես ինձ: Պանդոկից:
Վայ-վայ: Շուտ չի՞: Շուտ ա:
Տարօրինակ տեսք ունի հիմա, մարմարի վրա: Մոտիկ տեսք ունի: Մոտիկ: Հեռու: Ժողովուրդն էլ տարօրինակ տեսք ունի: Երամի մտածելակերպ: Հաջողություն ձեզ, չստուգված նյութեր, բարձրախոս դեբիլներ:
– Եղավ, հերիք ա:
– Վերջացրի՞ր:
– Հա… սենց մի հատ բան ունեմ հետս, կուզե՞ս մի քիչ:
Սենց մի հատ բան ուներ հետը:
Հիմա առավոտվա ութն ա: Այս աստիճաններով ես կվերջացնեմ բարձրանալ ժամը տասին: Երեկ վերջացրեցի երեկոյան յոթին, իսկ մի տարի առաջ դա կտևեր երկու ժամ: Ես կառուցվո՞ւմ եմ, թե՞ քանդվում:
Իմ անունը Հիլ է: Ես ապրում եմ այս աստիճանների վրա: Ես միջատ չեմ, ես իսկական մարդ եմ:
Ինչպես ասեցի, հիմա առավոտվա ութն ա: Եվ ես առաջին աստիճանի մոտ եմ: Ահավոր նյարդայնացնող է հայտնվել առաջին աստիճանի մոտ ամեն առավոտ: Այս աստիճանի մասնիկները, նրա գունավոր քարիկներն արդեն աննշան են: Ես նայում եմ նրանց, ինչպես նորեկը կնայեր:
Այո… շատ անհաջող եղավ… Նա, ում ես հանդիպեցի, խոսեց ինձ հետ չորս անգամ, և նայեց իմ վրա մի քանի անգամ:
– Դե, ես եկա,– նա ասաց,– համեցիր իմ իրականություն, աստիճանամարդ, դու տգետ:
– Բարև, իմ հրաշալի: Չնայած քո դատարկությանն ու պարզությանը՝ դու

ինձ շատ ես դուր գալիս: Ես կարող եմ պատմել քեզ ամեն ինչ:
– Պատմի՛ր:
– Առաջին հերթին ես ուզում եմ ասել քեզ, որ տալիս եմ քեզ ինձ ամբողջությամբ: Ես տրվում եմ քո պարզությանը:
Ես տրվեցի: Բայց պետք է ասեմ ձեզ՝ նա փոփոխական է:
– Դե, ես եկա,– նա ասաց,– նայիր ինձ՝ զվարթ ու բալկանյան: Տես՝ ինչպես եմ ես ընդունում բոլոր կրքոտ ոգիներին:
– Հիմա ես տեսնում եմ: Ես երբեք քեզ չեմ թողնի: Նայիր իմ արտահայտությանը, երբ քո կողքին եմ, բոլոր շորերին, որ կարող եմ հագնել, բոլոր ուղղություններին, ուր կարող եմ թռչել: Այո, Հիլը երբեք չի մեռնում:
Նա ավելի լավն էր: Նա ճշմարիտ էր:
Ես ապրում եմ իմ աստիճանների վրա և արթնանում եմ առաջինի դիմաց ամեն առավոտ: Վատ չի: Հիլը երբեք չի մեռնում: Հիլը երբեք չի մեռնում: Հիլը երբեք չի մեռնում: Հիլը երբեք չի մեռնում: Հիլը երբեք չի մեռնում: Հիլը երբեք:
Բաց պահիր աչքերդ: Աչքերդ բաց պահիր: Ես իմ լուռ հերոսն եմ: Աչքերս կիսափակ են, փորս ներս ա ընկած:
Ես վերջինն եմ:

Վերջինի համար, ընկերներից

Գլխիս մեջը շատ զանձեր, էնքան որ ֆռում ա: Ես ինձ չեմ զգում իսկական մարդ: Կուզենայի լինել իսկական մարդ:
Դեպրեսիայի պահերը ոնց որ սովորական ցավ լինեն, ուղղակի ուզում ես, որ չլինեն: Եթե չես ուզում, ուրեմն իսկականից վատ չես: Հերիք ա փնտրես ոգեշնչում, ընկեր:
Որտեղի՞ց են գալիս էս բոլոր մարդիկ: Հատուկ ու արտակարգ իրավիճակ մեր երկրում, էնքան տարօրինակ մարդ կա: Գալիս են վրես: Հեռու գնացեք, հեռու:
Թուլության պահերը բացահայտում են եղբայրության, ցավի, համախոհության, ու, հետևաբար, մտահոգության զաղտնիքները: Մտահոգվեք մեզ համար՝ ձեր եղբայրների, ինչպես կմտահոգվեիք ձեզ համար:
Էլ երբեք չտեսնել քո վարդագույն շապիկը ինձ այդքան մոտիկ: Եվ խնդրում եմ, որ ձեռք չտաս քթիդ տենց, ես սկսում եմ մտածել, որ կեղտոտ ես: Ու ամբողջ քո ցեղն էլ: Տհաճ կին: Լավ ա, որ շատ մարդ կա էս ակումբում: Ավելի լավ ա, քան տունը: Վրես են գալի՜ս:
Կանգնում եմ այս անգույն ակումբի գունավոր բաղնիքում ու երգում եմ ազատության երգը: Ես Բոբ Մառլին եմ, հանած շատ ու շատ բաներ:
Նոր տեսակի երիտասարդություն ա գալիս: Երբեք նման չեն հին տեսակի երիտասարդությանը, հին ու կնճռոտ, հին օրենքներ, հին բարոյականություն, կնճռոտ ճշմարտություն, կնճռոտ եսիմինչ...
Տեսա՛ր իրանց: Սև են հագնում սուր քթերով, մեր մոտով քայլում են, ոնց որ մենք կարևոր մարդիկ չենք: Ես կասեի՝ էդ դեբիլներին լրիվ տարել ա: Չէ, օրինակ՝ մենք, մենք սիրող երիտասարդությունն ենք: Մենք սիրում ենք ամեն ինչ: Մենք սիրում ենք AC/DC, սիրում ենք Կուրասավա, սիրում ենք տարօրինակ նացիներին, մենք սիրում ենք քեզ, ինչպես Հիտլերը սիրում էր Գերմանիան, ընկեր:
Նույնիսկ ի՜նձ, կոշիկներով, որ շատ սև են, շորերով, որ շատ կեղտոտ են: Ո՞վ եմ ես ձեզ համար: Ոչ մի ախպեր: Ոչ, իմ ախպեր: Դու եղի Գերմանիան:
Որովհետև միշտ չի, որ նստած մտածում ես՝ նվնվա՜ս, թե՞ չէ, մտածում ես՝

մտածես՝ մենա՞կ ես, թե՞ չէ: Միշտ չի, որ նայում ես շուրջդ, որ գտնես մեկին, ով մտածում ա քո պես: Նաև միշտ չի, որ դու լցնում ես արաղ ծեր մարդու, ով հում հավի միս ա ուտում ու սոկ ա խմում՝ իրա հայաթի խնձոր ու տանձից սարքած…էտ սաղ լավ ա…

Մի անգամ նորից ես կհանդիպեմ իմ սիրուն, ու ինքն ինձ չի վերաբերվի ինչպես ես ուզում եմ: Ու նորից իրանք բոլորը կլինեն:

Ես սպասում եմ, որ բոլորդ ինձ չեք հասկանա ու կհասկանաք: Ես դուք եմ, որովհետև ես ուզում եմ, որ դուք իմ պես մտածեք: Ես այնքան եմ դուք, որ մոռանում եմ իմ մասին մտածել: Ես մոռանում եմ լինել, մոռանում եմ մտածել, մոռանում եմ ապրել, մոռանում եմ արթնանալ:

Ես կուզենայի վերջացնել այս կյանքը, բայց կուզենայի դա միայն մեկ-մեկ: Ոչինչ առանձնապես որոշյալ չի, բացի նրանից, որ գիտեմ՝ հանգիստ կլինեմ, եթե մենակ լինեմ: Նաև եթե փոփոխություններ լինեն իմ կյանքում:

Ամառը գալիս է Հայկի համար

Ամառը գալիս է Հայկի հետևից: Ամառային Հայկ: Պիտի տաս ընկերոջդ, դա բերում է հաջողություն: Չէ, չէ: Ինձ պետք չի ոչ մի ակադեմիկ գիտելիք: Դատարկության մեջ ես կգտնեմ ինձ: Իսկ դա պահանջում է մեծ կենտրոնացում: Ես խորհրդակցում եմ մորս հետ՝ մարդկանց հետ շփվելու ձևերի մասին: Ինքը ինձ ոչ մի ձև չի ասում, ոչինչ չի սովորացնում:

Իմ ճամփին դեպի պանդոկ՝ ես հիմա զգում եմ երջանկություն և կասկած դեպի այդ երջանկությունը: Չկա իրական ազատություն, եթե դու խելքին մոտ մարդ ես: Բայց էտ էլ սաղ հեչ: Ես շարունակում եմ սովորական ապրուստս՝ ապահովվելով ինձ ամենօրյա անհրաժեշտություններով, ինչպիսիք են ուտելիքը, շորերը ու մտքերը:

Հենց հիմա, որտեղ երջանկությունը խառնված է կասկածի հետ, վերջնականն է: Ես Հայկն եմ ու ես սա անում եմ, որ հասնեմ այնտեղ, որտեղ կենդանիներն են: Հիթ:

Ես արթնանում եմ այս առավոտ ու ստեղծում եմ կռիվ: Կռիվը իմ կասկածի մասին է: Դժբախտաբար, ամեն ինչի ամեն շարժումը առաջացնում է ինձ մոտ կասկած: Այս երեսը, որ եղունգ է կրծում, բավականին տհաճ տեսք ունի: Պիտի ինչ-որ կոնկրետ փիլիսոփայություն լինի: Որպեսզի ստեղծեմ հիմա իմ սեփական կռիվը, ես նստում եմ քաղաքական ակտիվիստների դիմաց ու մտածում եմ, որ նրանք գիտեն պրոբլեմները: Գումարեք իմ կասկածին, խնդրում եմ: Ես բավարարված չեմ: Գումարեք ձեր սարսռեցուցիչ ապուշությունից:

Գումարելին արթնանում է այս առավոտ ու տեսնում Կոկա-կոլայի կարմիր թղթի կտորը: Ոչինչ, կարմիրը կբուժի քո գերուրախ բնավորությունը: Այո, ամեն ինչը կարող է լինել գույներում: Կարող է՝ նրանք են կառավարողը: Կարող է՝ կարմիրն է թագավորը:

Կարմիրը արթնանում է այս առավոտ ու մտածում, որ կյանքը հետաքրքիր չէ:

Սիրելի Գ

Խոր մի տեղից քո նյարդը կհայտնվեր ու կանհանգստացներ քեզ ու քո կողքիններին: Այդ օրը այն նորից դուրս էր եկել: Քո գլխում շատ գանձեր: Որտե՞ղ, բոլոր կետերից ու կետադրումներից, կարող էի ես մատնանշել այն մեկը, որը կսազեր ինձ: Այդ գինու բաժակը քեզ այդքան չէր պատկանում, ինչքան ինձ: Մի կենդանի դուրս սղաց քո գրկից: Դու ի՞նչ արեցիր: Դու այն բաց թողեցիր:

–

Սիրելի Գ, այստեղ՝ Բողազիչիի տարածքում, ես զգում եմ միայնության թեթևությունը՝ ամենաահանգիստ կերպով: Հին շենքերը, նրանց դիմացի ծուռ ճյուղերը, և ամեն ինչից վեր՝ այս թատրոնն ու այս ներկայացումը: Ես քո քաղաքի ծայրերից մեկում եմ: Ես երբեք չեմ հասնի քո՝ ստամբուլցի լինելու զգացմանը, բայց երևի ինչ-որ իմաստով մոտենում եմ քո ասածը հասկանալուն:

Այստեղ հանդիպում եմ Ջաբելին: Ես անընդհատ ուզում եմ նրան այդպես կոչել, որովհետև նա խաղում է Ջաբելին: Նա վազվզում է, խոսում իր ընկերների հետ, վերադառնում ինձ մոտ, մոտիկ նստում ու հարցնում իմ պլաններից: Ինձ թվում է, որ պետք է ընկերներ լինենք: Մանավանդ, եթե թողնի, որ իրեն Ջաբել կոչեմ:

Այստեղ համարյա ոչ ոք ինձ ուշադրություն չի դարձնում, ու դա ինձ դուր է գալիս:

–

Նա գիտեր, որ ինչ-որ կարևոր բան էր կատարվում շուկայում: Եվ որ նրա համար իսկապես նշանակություն չուներ, թե որն էր այդ կարևոր բանը: Նա ուղղակի ուզում էր, որ լռություն ունենային իրար հետ: Մեքենայի մեջ, որը չափազանց մոխրագույն էր, որը սազում էր մոխրագույն ամպերին՝ մոխրագույն շենքերի վերևում: Մոխրագույն մեքենայում՝ մուգ նստարաններ: Նստարանների մեջտեղում նա նստեց՝ սպասելով պահի, որը արժանի կլինի հիշողության: Զգացմունքների պաշար: Նա գիտեր միայն այն, ինչ զգում էր՝ իր սառնոտ ձեռքերով ու չխնամված եղունգներով: Սևություն աչքերում, աշխարհ մտքում՝ նա պատրաստ էր արկածների: Արկածը չափազանց քաղցր բառ իր փորձի համեմատ: Նա լսեց երգ, որ քերծում էր ուղեղը երկար ժամանակ: Դիմադրեց դրան՝ կորցնելով կենտրոնացումը տարբեր ուղղություններով: Իսկ հետո գնաց՝ նախքան իր կողքի մարդուն խղճալը: Ներողություն խնդրի ու գնա, անարժան:

Նրա անհամաչափ շուրթերը դողացին ու հանգստացան՝ կասկածի, անփութության ու էլի ինչ-որ անհասկանալի վիճակի մեջ: Մի քիչ ֆեմինիստիկ ու մի քիչ հարմարվող կեցվածքով՝ նա փնտրեց իր շուրջը մի լոնք անելու ուղղություն: Այդքան էլ չգտավ, քայլեց ինքն իր մեջ, շատ ավելի հեռու: Իրականում հոգոց հանեց. ոչ ոք չնկատեց: Ավելի ուշ, ոչ ոք չնկատեց:

–

Այո, դա ինձ դուր է գալիս: Իսկ հետո ես որոշում եմ ճանապարհորդել ու տեսնել նրան, որտեղ էլ աշխարհում լինի: Ես ասում եմ նրան՝ ցույց տուր, թե ի՞նչն է քեզ անհանգստացնում, երբ դու նայում ես հայելու մեջ, իսկ հետո՝ ի՞նչն է քեզ անհանգստացնում, երբ նայում ես ներս: Ինչի մասին ես ստում ու ինչի մասին ես ճշմարտություն ասում: Ես ուզում եմ ամեն ինչ քեզ վստահել՝ գիտենալով անընդհատ, որ մի քանի ժամ հետո ես քեզ կմոռանամ: Իմ

ամենաքաղցր մանդալա: Բոլոր քո գույները, բոլոր ավազները ու գույները: Այդքանով ազնիվ եմ ուզում լինել քո նկատմամբ: Ամբողջությամբ, ամբողջ-քանդող-ությամբ:

–

Մյուս անգամ ես տեսնում եմ նրան այստեղ՝ իմ երկրում: Այո՛, Զաբելը հենց այստեղին է պատկանում, մտածում եմ ես: Սա ինքնախաբեություն չէ: Նա բարձր ձայնով խոսում է բեմից՝ արտասանելով, արտաբերելով, հայտարարելով, չեղյալ հայտարարելով: Փոխում է շորերը ներկայացումից հետո, հագնում է երկար շապիկ ու նստում հանդիսատեսի աթոռներին: Նրա տվող տեսակը ուզում է իմանալ՝ ինչ է նշանակում ստանալ: Նա հասկանում է ու հետո վերադառնում: Հագնելով նորից շորերը, վերադառնալով բեմ: Ծիծաղելով, սիրելով:

Նա պատրաստ է անհանգստություններին ու բախումներին: Նա բացում է իրեն, նստում է սրճարաններում, խոսում է, քննարկում է, վիճում է, որսում է, ծիծաղում է, խմում է, լացում է, ասում է այո, ասում է ոչ, տալիս է, վերցնում է: Նա պտտվում է, ասում է բոլորին, որ իրենք իր տեսակի չեն: Նա գալիս է սիրելու համար, իրեն ոչինչ չի վերադարձվում: Նրա անձնուրաց տեսակը էլ չի դիմանում, ու դառնում է ինքնասեր: Նա պարում է: Նրա տաք մարմինը պարում է դահլիճներով ու լաբիրինթոսներով, որոնք տուն չեն: Նա գնում է տուն վաղը ու նա պարում է այնքան տխուր: Կարող է չգնալ. նա պետք է չպարի: Հերի՛ք է: Մի՛ պարի: Նա պարում է…

–

Սիրելի Գ, ես նոր իջա ավտոբուսից: Վարորդն ինձ ասաց՝ ես պետք է իջնեմ, ես սխալ ուղղությամբ եմ գնում: Ճանապարհից հետո, որ տևեց մեկ ժամ՝ 15 րոպեի փոխարեն, ճանապարհից հետո, որտեղ ամեն մեկի մուգ ու հոգնած դեմքը՝ երեկոյան ժամը 7-ի լույսի տակ, իմ ընկերը չէր ու իմ ընկերն էր: Կապույտ ավտոբուսում, ուր մենք բոլորս քրտնում էինք՝ ներդաշնակության մեջ: Ընկերությամբ ու տհաճությամբ: Նկարած հոնքերը, ջահել աղջիկը, ջահել տղան, ծեր տղամարդը, կինը, ավելի շատը, ավելի տխուրը: Գողացած պիկ ժամին՝ լուռ հետևելով իրար: Ճանաչելով մյուսի դիմագծերը, ցանկանալով իմանալ նրա կյանքը, ով ուզում է իմանալ այն մյուսի կյանքը:

Բոլորը մի ուղղությամբ՝ ծանր հետևելով անցնող երթին: Նրանք անցնում են, ես մտածում եմ իմ տան բազկաթոռի մասին: Նրանք անցնում են, ես մտածում եմ կնոջ իմ խոհանոցում եփող հավի մասին: Նրանք անցնում են, ունե՞մ բանալին: Նրանք անցնում են, պիտի լողանամ: Նրանք անցնում են, կպատասխանի՞, եթե գրեմ: Նրանք անցան, նա ավելի արագ կքշի: Նա մեր ընկերն է: Սխալ ուղղությամբ ես գնում:

Նա գնում է տուն վաղը, բայց նա պարում է այնքան տխուր: Նա սխալ ուղղությամբ է գնում: Նա պետք է իջնի ավտոբուսից: Մի՛ պարի: Հերի՛ք է: Նա պարում է: Նա չի իջնի ավտոբուսից:

Լուսինե Խառատյան

Եթե ծնված լինեի միջնադարյան Եվրոպայում, ինձ երևի վաղուց որպես վհուկի այրել էին՝ տասի փոխարեն տասնմեկ մատ ունենալու համար: Բայց XX դարի սովետում նման հարցերն այլ լուծում էին ստանում. ինձ զրկեցին «ավելորդ» մատիցս, որ այն հետաքրքրասերների ուշադրությունը չգրավի, որ կարողանամ հանգիստ ապրել՝ առանց ուրիշներից տարբերվելու: Ու հիմա գրական բոլոր փնտրտուքներս երևի մատիս որոնումներն են, մատիս, որին երբեք չեմ տեսել, բայց որին զգում եմ ու քանի դեռ զգում եմ, տիեզերքի հետ կապն էլ եմ զգում՝ իմ տասըմատանի ոչ ամբողջական գոյության մեջ:

Սահմանային պատում

1

– Այսօր ես գեր, սևամորթ կին եմ:

Ասողը վաթսունն անց, բարձրահասակ, նիհար, ճաղատ, սպիտակ, արևմտաեվրոպական արտաքինով տղամարդ էր, մոխրագույն ջինսով ու սպիտակ սպորտային շապիկով, որի վրա բնապահպանական թեմաներով ինչ-որ բան էր գրված: Ագարակի հյուրանոցում նախաճաշողները փորձում էին կարդալ գրվածը, բայց ամաչում էին ուղիղ նայել և հարմար էլ չէր նայելը, քանի որ վզից թելով ակնոցն էր կախված:

2008-ի սեպտեմբերն էր: Ռուս-վրացական պատերազմը նոր էր ավարտվել: Հայ-իրանական սահմանին գտնվող այդ փոքրիկ հյուրանոցը զարմանալիորեն մարդաշատ էր: Նախաճաշողների մեծ մասը հետազոտական արշավախմբից էր՝ 20-30 տարեկան երիտասարդներ Ռուսաստանից, Վրաստանից և Հայաստանից՝ իրենց գիտական ղեկավարների հետ միասին: Արշավախմբի՝ Ագարակում գտնվելու երկրորդ շաբաթն էր: Ցերեկներն անց էին կացնում քաղաքում և շրջակա գյուղերում մարդկանց հետ զրուցելով, իսկ երեկոյան հյուրանոցի ռեստորանում քննարկում էին օրվա «դաշտը»:

Նարեկը հորանջեց. արշավախմբի ղեկավարն այսօր որոշել է մինչև վերջ կոնստրուկտիվիստ լինել: Ղեկավարը Ռուսաստանից էր, նախկին ԽՍՀՄ-ում և Եվրոպայում հայտնի գիտնական, բազմաթիվ հետազոտությունների հեղինակ:

– Ալեքսանդր Բորիսիչ, դուք ինչքան ուզում եք՝ կարող եք ձեզ գեր, սևամորթ կին համարել, բայց չէ՞ որ ուրիշները ձեզ այդպիսին չեն համարում,– մի քանի րոպեից ասաց արշավախմբի հայ փորձագետը,– եթե ամեն բան այդպես պարզ լիներ, չէին լինի կոնֆլիկտներ, պատերազմներ, ցեղասպանություններ: Երեկ, օրինակ, հարցազրույց ունեինք մի բաքվեցի հայի հետ: Մարդը ռուսերենից բացի որևէ այլ լեզվով չի խոսում: Ողջ կյանքում ինքն իրեն բաքվեցի է համարել. պապն էլ է այդ քաղաքում ապրել, ապուպապն էլ… Տատն առհասարակ հրեա է, իսկ կինը՝ ռուս: Ունեցած միակ հայկական բանն ազգանունն էր: Մի խոսքով, ինքն իրեն բաքվեցի էր համարում: Սակայն արի ու տես, որ ջարդարարները նրան այդպիսին չհամարեցին: Մի կերպ փախել է, իսկ եղբորն առհասարակ սպանել են, որովհետև ջարդարարները նրանց հայ էին համարում:

– Ըհը, արդեն պիտակ կպցրեցիք: Հենց նոր ինքներդ ասացիք, որ ինքն իրեն հայ չի համարում, իսկ երբ բնութագրում եք մարդուն, ասում եք՝ Բաքվի հայ: Մարդն ինքն իրեն բաքվեցի է կոչել, չէ՞:

Նարեկը կողքից հետևում էր խոսակցությանը ու մտածում, որ Վրաստանից տասը հոգի պետք է մասնակցեր արշավախմբին, սակայն եղավ պատերազմը, ու արդյունքում երկու հոգի եկան՝ մեկը Թիֆլիսի հրեա, մյուսը՝ ադրբեջանցի, որ էս լեն ու բոլ աշխարհում բոլոր վրացիները հրաժարվեցին ռուսների հետ, անգամ իրենք իրենց չաղ սևամորթ կին համարող ռուսների հետ նույն հետազոտական ծրագրում ընդգրկվել: Դե հիմա ինչքան ուզում ես հայտարարի, թե չաղ սևամորթ ես, ինքն էլ կին: Քո էդ կոնստրուկտիվիզմը քաղաքական գործիք ա, ուրիշ ոչինչ: Արդյունքում միայն ավելի շատ մարդ ա զոհվում: Նարեկն արդեն պատկերացնում էր, թե ինչպես են կատաղած վրացիները, ռուսներն ու օսերը համատեղ քարկոծում Ալեքսանդր Բորիսիչին, երբ սա կանաչ շապիկի վրա կապույտ Երկիր մոլորակը նկարած, իսկ մեջքին գրած, թե ինքը ծառ ա, փորձում ա ռուսական տանկերի դեմն առնել:

Երեկ շատ էին աշխատել նախկին ադրբեջանաբնակ գյուղերում: Կողքի սեղանի շուրջ արշավախմբի մասնակիցները հիմա քննարկում էին նյութը, հատկապես գյուղերի նոր բնակիչների՝ ադրբեջանահայ փախստականների երազները: Մարդիկ, որոնք ապրում էին նախկինում ադրբեջանցիներին պատկանող տներում, տարբեր գյուղերում ապրող, տարբեր վայրերից եկած, տարբեր տարիքի ու սեռի մարդիկ, երազում տեսնում էին իրենց տների նախկին տերերին: Երազը պատմողների կարծիքով՝ այդ տանտերերը կարոտում են ու գալիս իրենց տուն-տեղը տեսնելու:

– Երեկ Ալդարայում մի բաքվեցի կին ամենայն մանրամասնությամբ նկարագրում էր իր տան նախկին տիրոջը,– պատմում էր Կարինեն, որն ինքը Շահումյանից էր, փոքր հասակում ծնողների հետ ոտքով սար ու ձոր էր կտրել ու մի կերպ հասել Հայաստան,– ասում էր, որ տանտիրոջն ինքը երբեք չի տեսել, բայց որ սա իրեն 2-3 ամիսը մեկ այցելում է, հարցնում՝ նա վար նա յոխ, տան պատերի մեջ ինչ-որ բան փնտրում:

Աղջիկները շատ էին: Արշավախմբի ղեկավարներին չհաշված՝ Նարեկն ու պիտերցի Կոլյան միակ տղա մասնակիցներն էին: Նարեկին զարմացնում էր, թե ինչու է երազների թեման կանանց այդպես հետաքրքրում: Կարինեն դեռ շարունակում էր պատմել Ալդարայում ապրող բաքվեցի կնոջ երազը, երբ Գոհարը դիմեց Ալեքսանդր Բորիսիչին:

– Երբ փոքր էի, միշտ նույն երազն էի տեսնում: Երազում ուշ գիշեր ա, ես մեր տանն եմ, մեկ էլ հանկարծ դուռն ահավոր ուժեղ ծեծում են, համարյա ջարդում, ու ես միանգամից մտածում եմ, որ թուրքերն են, էկել են մեզ տանելու: Մտնում եմ սեղանի տակ: Դուռը ջարդվում ա, ու ներս են խուժում հիտլերյան բանակի համազգեստով ու գերմանական կասկաներով ավտոմատավոր մարդիկ՝ ճիշտ և ճիշտ սովետական ֆիլմերում պատկերվող գեստապոյականների նման: Հենդե հոխ, շնելե շնելե՝ ու ես ձեռքերս բարձրացրած դուրս եմ գալիս սեղանի տակից, բայց գլխումս մեխված ա, որ դրանք թուրքերն են ու էս ա ինձ տանելու են ամբարում վառելու: Հիմա որ կոնստրուկտիվիզմի տեսանկյունից երազս վերլուծում եմ, մտածում եմ, որ ուղեղումս բնավորված թշնամին, գազանը թուրքն ա՝ հայկական պրոպագանդայի արդյունքում, բայց էդ թուրքը ֆաշիստի կերպարով ա՝ սովետական պրոպագանդայի արդյունքում, իսկ թե էդ երկուսի արանքում իմ կենսափորձը որն ա՝ չգիտեմ: Չգիտեմ նաև, որովհետև մաքուր արևելահայ եմ՝ թե՛ հայրական, թե՛ մայրական կողմից, ոչ էլ ըն-

տանեկան պատմություն ունեմ ցեղասպանության հետ կապված: Բայց երազում ես այդ ամենը զգում էի շատ ուժեղ, նենց, կարծես հետս էր իսկապես կատարվում: Հետո նույն երազն էլի էր գալիս, ու ես փախչում էի թուրքերից նեղ փողոցներով, ու հետևիցս վազողները մեկ ա ավտոմատավոր ֆաշիստներն էին…

Նարեկը նայում էր Գոհարին ու մտածում, որ Գոհարը սիրուն ծիտ ա, հատկապես երբ ոգևորված որևէ բան ա պատմում: Էդ ժամանակ Գոհարի թշերը կարմրում էին, ու սիրտն սկսում էր արագ աշխատել, այնպես, որ անգամ կողքին նստածն էր նկատում, գրեթե լսում նրա սրտի աշխատանքը: Դե իհարկե, Ալեքսանդր Բորիսիչն ասաց, որ Գոհարի երազը հենց կոնստրուկտիվիզմի արդյունք է, որ հայերը տարիներով կառուցել են իրենց թշնամու կոնստրուկտը, բայց քանի որ այդ թշնամու համոզիչ էկրանիզացիա չկա, թշնամին այցելում է սովետական պրոպագանդայի կառուցած հենդե հոխ ու շնելե ասող գերմանացու տեսքով: Նարեկն էլ մտածեց, որ թուրքը հայերենում բառերի մեջ ա, իսկ պատկերներում՝ արյունոտ յաթաղանով ու կարմիր ֆեսով, դրա համար էլ Գոհարի տեսած թշնամին ավելի մոդեռն էր ու երևի անգամ մոտո էլ ուներ: Համ էլ քանի որ երազները պատկերներով են խոսում, այն, ինչ բառերում ա, մնում ա որպես գաղափար, այդպես էլ միս ու արյուն չդառնալով, ու դառնում ա թշնամու հիբրիդ, որին մնում ա ավելացնել չեկիստի սև մեքենան:

– Գիտեք,– ասաց Կարինեն,– մի երազ ունեի, տեսնում էի մեր տան բակի բալենին, որի ճյուղերը ճկռել էին բերքի ծանրությունից, այդ բալենու բալն ուտող ու կորիզները թքող ռուս զինվորներին, ու հին, քանդված մեքենայի տակ վախից դողացող ինձ ու եղբորս: Մեր աչքի առաջ էդ զինվորները սպանել էին մեր դիմացի հարևաններին: Դրանցից մեկը կրակահերթը թողեց, կալաշնիկովը գցեց ուսին, թեքվեց ու սկսեց ծառից բալ քաղել: Դանդաղ ուտում էր ու կորիզները թքում՝ какая вкусная вишня[1] ասելով: Ես ու եղբայրս էլ դողում էինք պապիկիս հին ՈՒԱԶ-ի տակ: Առաջ էդ երազը շատ էի տեսնում: Հիմա էլ չեմ տեսնում, բայց երազում շարունակում եմ մեր տուն վերադառնալ: Երեկ, երբ էդ բաքվեցի կինը պատմում էր, որ իր երազներում ինքն էլ է Բաքվի իր տուն գնում, ման գալիս ու ամեն անգամ վերջում տեսնում, որ տանը նոր բնակիչներ կան ու էդ բնակիչներն իրեն չեն տեսնում, ես մտածեցի, որ հիմա ես մեր տունը միշտ դատարկ եմ տեսնում, որ իմ երազում այնտեղ մարդ չկա, որ մենակ տունը, բալենին ու մեքենան են:

Կարինեն պատմում էր, Նարեկը նայում էր Գոհարին, իսկ Գոհարը բալով յոգուրտ էր ուտում: Կարինեի պատմության կեսից Գոհարը գդալը թողեց յոգուրտի մեջ ու մի կողմ դրեց այն, իսկ կուրծքն սկսեց վեր բարձրանալ՝ արագ սրտխփոցներից: Աչքերում էլ արցունքներն էին փայլում, ու Գոհարն էս ու էն կողմ էր նայում, որ ոչ ոք իր արցունքները չնկատի:

2

Ալեքսանդր Բորիսիչը Նարեկին խնդրել էր իր հետ գնալ սահմանամերձ սրճարաններից մեկը՝ հարցազրույցի: Նա, ում հետ պիտի զրուցեին, ռուսերեն չգիտեր և օգնություն էր պետք: Սրճարանը մի հին տնակ էր, որտեղ մի երկու պլաստմասե սեղան-աթոռ էր դրված՝ երկար ճանապարհից ու սահմանի անցակետի սպասումից հոգնած պարսիկ վարորդներին սուրճ ու թեյ հյուրասիրելու համար: Ներսում ծուխ էր ու ցածրորակ սուրճի, սալյարկայի, մեկ էլ կատվի հոտ: Մի քանի կատու էլ էին ներսուդուրս անում: Նստեցին սեղաննե-

րից մեկի մոտ: Սրճարանի տերը երկար սև մորուքով ու սև մազերով, ցածրահասակ ու փոքր-ինչ գեր տղամարդ էր: Ալեքսանդր Բորիսիչը սկսեց հարցուփորձ անել սրճարանի անցուդարձից, հաճախորդներից, առևտրից, կյանքից: Տիրոջ անունն Արմեն էր: Արդեն տասը տարի կլիներ, որ աշխատացնում էր սրճարանը: Մինչ այդ մեքենա էր քշել: Փորձել էր Ղարաբաղ գնալ՝ կռվելու, բայց չէին վերցրել, որովհետև երևանյան հիվանդություն ուներ: Էն հայրենասեր տարիներին շատ էր ուզում մի օգտակար բան անել, դրա համար հացի մեքենա էր քշում, որ չեկով հացը հասցնի մարզի քաղաքներին: Մինչև տեղ հասնելը, ճանապարհին հացը բաժանում էր սոված գյուղերի սոված մանուկներին: Հետո էլ պարսկական սալյարկա էր սահմանից Երևան տանում: Մի անգամ Քաջարանի շրջադարձերի վրա բեռնատարը ձորն էր շուռ եկել: Արմենը հրաշքով փրկվել էր ու մինչ օրս վստահ էր, որ իր տված մի կտոր հացն էր փրկողը: Կրծքին մեծ խաչ էր կախած, տնակի պատերին՝ սրբապատկերներ:

– Իսկ ինքը ռո՞ւս ա,– Ալեքսանդր Բորիսիչի մասին հարցրեց Արմենը:

– Չէ՛, ինքը կոնստրուկտիվիստ ա,– ժպիտը դեմքին պատասխանեց Նարեկը:

– Էդ ո՞րն ա,– հետևեց հարցը:

– Էդ էն ա, ով չի հավատում, որ ազգությունը գենետիկորեն ա փոխանցվում: Մի խոսքով, ինքը հավատում ա, որ ազգերն էսպես ասած կոնստրուկտներ են, այսինքն՝ մարդը էս կամ էն ազգի ոչ թե ծնվում ա, այլ դաստիարակվում: Մանկուց իրա ծնողները, միջավայրը, պետությունը իրա մեջ լցնում ա կամ, կոնստրուկտիվիստների լեզվով ասած՝ կառուցում ազգայինը: Հետո էդ էրեխեն խոսալ սովորում ա էդ լեզվով, շրջապատից իմանում, թե իրա ազգի թշնամին ով ա ու սկսում իր ազգությունը հասկանալ՝ էդ ազգությունը թշնամուն հակադրելու միջոցով: Օրինակ, եթե հայ էրեխուն ծնված օրվանից թուրք ընտանիք մեծացնի, ու ինքը չիմանա, որ հայ ա, ինքը թուրք կլինի: Մի խոսքով, գենը կապ չունի, միջավայրն ա կարևոր:

Արմենը խոժոռեց հոնքերը: Մի քիչ լուռ մտածեց ու հետո ասաց.

– Տո եսիմ, է… Բա որ էդ գենն սկի կապ չունի, բա ինչի՞ երևանյան հիվանդություն մենակ հայերն ունեն: Ուրեմն էդ ազգային հիվանդություն ա, չէ՞: Մի հատ իրան ասա, տես ինչ ա ասում:

Նարեկը թարգմանեց Արմենի հարցը: Պարզվեց, որ Ալեքսանդր Բորիսիչն այդ հիվանդության մասին չի լսել ու չգիտի, թե դա ինչ է: Նարեկն էլ սկսեց բացատրել, որ դա գենետիկորեն փոխանցվող տենդի տեսակ է, ու որ գիտնականները կարծում են, թե դրանով միայն որոշ հին ազգեր են տառապում, ինչպես, օրինակ՝ հրեաները, հույներն ու հայերը: Ասաց նաև, որ գիտական անվանումը միջերկրածովյան տենդ է: Ալեքսանդր Բորիսիչն ասաց, որ ինքը դեռ կկարդա այդ հիվանդության մասին, որ հասկանա, թե ինչ կապ ունի այդտեղ գենետիկան, բայց ամեն դեպքում հիվանդության անունը՝ միջերկրածովյան, հուշում է, որ այն ավելի շատ աշխարհագրական տեղանքի, քան ազգության հետ կապ ունի:

3

Հյուրանոցի բարում նոր հյուրեր էին հայտնվել: Բարը ո՞րս է: Մի փոքրիկ տարածք էր, որտեղ չորս սեղան կար, իրենց աթոռներով ու մեկ էլ բարի ստոյկա: Էդ նույն վայրում համ նախաճաշում, համ ընթրում, համ էլ իրենց երեկոյան քննարկումներն էին անցկացնում գիտարշավի մասնակիցները: Այսօր ցերեկը մի քիչ շուտ էին ազատվել ու հիմա սեղաններից մեկի մոտ նստած Նարեկն

ու թիֆլիսցի հրեա Քեթին նարդի էին խաղում: Դիմացի սեղանի շուրջ երկու ֆիններ բանակցություններ էին վարում Ագարակի պղնձահանքի ազգությամբ վրացի կառավարիչների հետ: Որ ռուսների տնօրինմանը հանձնված կոմբինատի կառավարիչները վրացի են, հենց առաջին օրն էին իմացել: Քառասունին մոտ տղաներ էին ու, հաճախ ջիպերն առած, Ջանգելանի կողմի ամայի տարածքներում վարազի որսի էին գնում:

Ֆինները երկու օր կլիներ, որ հյուրանոցում էին: Հետներն էլ մի ռուս թարգմանիչ ունեին՝ ճիշտ և ճիշտ սովետի վերջին տարիներին մեծ հանրայնություն վայելող «Ինտերդեվոչկա» ֆիլմի հերոսուհու կերպարով ու իննսունականների սկզբի երկարատ մինիավոր մոդայով: Արշավախմբի մասնակիցներն իրար մեջ նրան հենց այդպես էլ կոչում էին՝ ինտերդեվոչկա: Ֆիններն ու վրացիները էս ռուս աղջկա օգնությամբ բանակցում էին, թե Ագարակի ընդերքը ոնց Ֆինլանդիա արտահանեն: Նարեկն ու թիֆլիսցի հրեա Քեթին նարդի էին խաղում, պիտերցի Կոլյան, որ երեկվա թթի արաղ քաշելու ներգրավված դիտարկումից հետո դեռ խումհարի մեջ էր, խաղն էր նայում: Բարմենը փորձում էր բոլոր հաճախորդներին հավասարապես գոհացնել, երբ սենյակում նոր մարդիկ հայտնվեցին: Աղմկոտ խումբ էր: Չորս հոգի էին: Երկուսը ռուսական բանակի սպայական համազգեստով ռուսներ էին: Մյուս երկուսից մեկը քաղաքացիական հագուստով էր, ու Նարեկն արդեն գիտեր, որ տեղի անվտանգության աշխատակիցն է: Վերջինը նույնպես հայ էր, բայց հագին ռուսական համազգեստ էր: Բացի անվտանգության աշխատակցից, մյուս երեքի քեֆն ակնհայտորեն լավ էր: Նստեցին բարին ամենամոտ գտնվող ազատ սեղանի մոտ, քաբաբ-խորովածի և օղու անհրաժեշտ դոզան պատվիրեցին ու շարունակեցին աղմկոտ զրույցը: Նորեկները խաթարեցին երկու սեղանների շուրջ ձևավորված մթնոլորտը. ֆիններն ու վրացիները սկսեցին մերթընդմերթ նրանց կողմ նայել, իսկ Նարեկն էլ մոռանում էր զառը գցել: Նարեկը նոր էր դու շեշը գցել ու հիմա նայում էր քարերին՝ մտածելով, թե որտեղից ուր տեղափոխի, երբ բարմենը մոտեցավ իրենց սեղանին ու մի շիշ կոնյակ դրեց, ապա երկրորդ շիշը դրեց ֆինների սեղանին: Նարեկն ու Կոլյան նայեցին շշին, հետո իրար, հետո կողքի սեղանի վրացիներին ու նոր էին աչքերը թեքել բարմենի կողմը, երբ համազգեստավոր հայը ոտքի կանգնեց, բաժակ բարձրացրեց ու ամենայն հանդիսավորությամբ հայտարարեց.

– Российская армия угощает[2].

Մինչդեռ Նարեկն ու Կոլյան շշին նայելով որոշում էին խմել-չխմելու ցավոտ հարցը, կողքի սեղանի վրացիները խոսքները մեկ արած ոտքի ելան ու դուրս եկան բարից:

– Ջհար ու սե,– ասաց Քեթին, ու քանի որ Կոլյան արդեն կենաց էր ասում կողքի սեղանից իրենց միացած ֆինների հետ, որոնք սրա հարազատ քաղաք Պիտերի գովքն էին անում, իսկ Նարեկը բաժակը բարձրացրած կենացի ավարտին էր սպասում, Քեթին նորից կրկնեց,– ջհար ու սե,– ապա աղմկոտ տեղաշարժեց քարերը:

Նարեկը չէր նկատել, թե քաղաքացիական հագուստով հայկական անվտանգության աշխատակիցը երբ էր դուրս եկել բարից: Բայց հիմա տեսավ, որ դուռը բացվեց, աշխատակիցը ներս մտավ, մոտեցավ ուղիղ իրենց, Քեթին մեկնեց ձեռքի բջջայինն ու ասաց.

– С вами хотят поговорить[3].

Քեթին զարմացած նայեց աշխատակցին, ձեռքից բաց թողեց նարդու քարը, վերցրեց հեռախոսն ու սկսեն վրացերեն «խո, խո» անել: Հետո հեռախոսը վե-

բաղարձրեց տիրոջը, աթոռից վեր կացավ, ներողություն խնդրեց ու ասաց, որ պետք է դուրս գա՝ ձեռքով Նարեկին նշան անելով, որ իրեն ուղեկցի: Նարեկը թողեց կոնյակի բաժակն ու հետևեց Քեթիին: Հյուրանոցի բակում վարդագունած Քեթին սկսեց ծիծաղել, ապա Նարեկին պատմեց, որ վրացի մենեջերները վիրավորվել էին ռուսական բանակի հյուրասիրությունից, դրա համար ցուցադրաբար լքել էին բարը, ապա զանգել էին անվտանգության աշխատակցին, խնդրել հեռախոսը փոխանցել Քեթիին ու իրեն պատվիրել, որ հայրենիքի հանդեպ համապատասխան հարգանք դրսևորի: Հիմա Քեթին որոշել է գնալ սենյակ՝ հանգստանալու:

Բար վերադառնալով՝ Նարեկը տեսավ, որ իրենց սեղանի շուրջ ջերմ խոսակցություն էր ծավալվել Կոլյայի, ֆինների ու նրանց թարգմանչի միջև: Ֆիններն արդեն հասցրել էին ալկոհոլից կարմրել ու հիմա պատմում էին, թե Պիտերի ո՞ր բարում ի՞նչ կայֆ են արել, ու թե ի՜նչ լավ երկիր էր Սովետը, ափսոս քանդվեց:

– Ախպերս, հա՞յ ես,– հարցրեց հայ համազգեստավորը Նարեկին:

Չէ, կոնստրուկտիվիստ եմ՝ մտածեց Նարեկը բայց փոխարենը բարձրաձայն հաստատեց հայ լինելը:

– Ախպերս, Չեչնիայում էնքան վրացի եմ կզցրել, դրանք կռվել չգիտեն, հորս արև,– լեզուն արդեն փաթ էր ընկնում: Գլանակ վառեց ու Նարեկի թևը մտնելով՝ հետը դուրս տարավ:

Բակում արդեն մայրամուտ էր: Համազգեստավորը հազիվ էր ոտքի վրա մնում: Նարեկը հայացքը չէր կտրում երկրի ծոցը մտնող արևից, իսկ սա հայհոյախառը պատմում էր ու պատմում իր հերոսություններից՝ թե ո՜նց ա վարձկան եղել ռուսական բանակում ու կռվել չեչենների դեմ, թե ո՜նց ա աբխազների հետ վրացիներին կզցրել ռուսների պատվերով, որ ռուսից լավը չկա՝ ոչ մեկ ռուսի պես իրան չի նայում: Հիմա էլ Գյումրիի ռուսական չաստի համար պարսկական սայլարկա տանելու ա էկել:

– Արա՛, հորս արև, ամերիկացիք էշ են, սանկցիա-մանկցիա՝ սաղ սուտ ա, ինչքան պետք ա պարսիկից նավթ ենք առնում ու մեր ախպերներին էլ ստեղ էդ նավթով պահում: Արա՛, ես ռուսի ցավը տանեմ: Արա՛, որ դրանք չլնեն, մենք ապրողը չենք: Արա՛, էդ ապուշ վրացիք ի՜նչ են տուտուցացել՝ չեմ ջոգում: Տենց ուժեղ տղերք էին, թող կռվի վախտ ցույց տային…

Խոսում էր ու խոսում: Նարեկը տխուր էր: Նայում էր մայրամուտին ու աչքին մի մեծ արնաշաղախ ռազմի դաշտ էր երևում, որտեղ լեգո-մարդուկները կռվում էին իրար դեմ՝ դեռ չծնված էրեխեքի անունները շուրթերին ու չապրած կյանքի պատկերները աչքերում:

4

Վազգենը Նարեկի համալսարանական ընկերներից էր: Համալսարանն ավարտելուց հետո չէին հանդիպել: Հիմա իմացել էր, որ Ազարակում են, եկել էր տեսակցության: Այնպես ստացվեց, որ գալու ժամը համընկավ իրենց երեկոյան դաշտային քննարկման հետ: Իմանալով, որ Վազգենը մասնագիտությամբ պատմաբան է, արշավախմբի մասնակիցներն ուրախացան և խնդրեցին մի քիչ պատմել տեղի պատմության մասին: Վազգենն իհարկե ուրախացավ ելույթի հնարավորությունից ու սկսեց քարի դարից, անցավ Տիգրան Մեծով, Ավարայրով, փոքր-ինչ անդրադարձավ Պապ թագավորին, հասավ Բեռլինի Կոնգրեսին և Խրիմյան Հայրիկի թղթե շերեփի ու կաթսայի

արանքում զգաց, որ նստածները հորանջում են:

– Извините пожалуйста, но мы бы хотели немножко узнать об истории этой конкретной местности, а не армянского народа[4], – զգուշորեն միջամտեց Կազանից եկած Զեմֆիրան:

Ստեղ Վազգենս շփոթվեց: Դե, ինքը հո տենց մանր-մունր բաներից չի՞ խոսա: Պատմաբանը պետք է դարակազմիկ երևույթների մասին պատմի, որ մեր ազգին լավ ճանաչեն, հասկանան, թե ում հետ գործ ունեն: Երբ մենք կայինք, Կիևյան Ռուսիան դեռ երազում էլ չկար: Այ, օրինակ՝ գիտե՞ք, որ մենք մաքուր արիացի ենք, մեզ նման զտարյուն ժողովուրդ համարյա չի մնացել: Նարեկն անհանգստացավ, սկսեց Վազգենին նշան անել, որ քիչ խոսա: Բայց Վազգենին մի ուրիշ ձևի բացել էր: Հաջորդ տասը րոպեների ընթացքում Նարեկը բացահայտեց, որ Վազգենի նման ակտիվ ուսխորհուրդ, արհմիություն և ուսանողական այլ կառույցներում ընդգրկված, կոնֆերանսներին զեկույցներով հանդես եկող, դասերին միշտ պատրաստ ու քաղաքականապես չսթրվող երիտասարդի համար համալսարանն ավարտելուց հետո Մեղրի վերադառնալուն պես դաշտը շատ էր նեղացել: Մի քիչ իրեն էս ու էն կողմ էր տվել, սակայն ինքնարտահայտման հնարավորությունները ոչ մի կերպ չէին շատացել, ու Վազգենը՝ որպես տարածաշրջանի լավագույն պատմաբան, դարձել էր Սյունյաց Արծիվ: Ու հիմա մեր արիական տեսակի գովքն էր անում, արանքում էլ պատասխանում Ալեքսանդր Բորիսիչի հարցերին, որոնց անթաքույց հեգնանքն անգամ չէր էլ նկատում՝ а кто старше, вы или турки? Кто тут был раньше? Азербайджанцы или вы?[5]

Եվս կես ժամ, և ներկաներն իմացան, ով էլ գիտեր՝ ևս մեկ անգամ համոզվեց, որ հայերից է սերում ողջ աշխարհը: Նոյյան տապանից ու Արարատից Վազգենը հասավ Իվանով-Գամկրելիձեին, ձեռի հետ էլ հղեց Հիտլերին, որը չէր մոռացել հայերին հիշատակել իրական արիացիների շարքում, մեջբերեց Նժդեհից՝ արանքում ներկայացնելով վերջինիս ով լինելը: Նարեկն իր համար հայտնաբերեց, որ արծիվները «Մայն Կամպֆը» թարգմանել են հայերեն, ու որ իրենց դպրոցական օղակներում այն շրջանառվում, ընթերցվում ու քննարկվում է:

– А все же, кому по праву принадлежит эта земля? Вам или азербайджанцам?[6]– հանգիստ չէր թողնում Ալեքսանդր Բորիսիչը:

Նարեկը չգիտեր ինչպես փրկել իրավիճակը և որոշեց կատակի դիմել:

– Վազգեն, հիմա դու վստա՞հ ես, որ քո արյունը հարյուր տոկոս արիական ա, մեջդ հեչ թուրքի կամ պարսիկի արյուն չկա՞: Ասում են՝ չէ՞ որ միջնադարում շատ ենք խառնվել տարբեր զավթողների, թե չէ պիտի որ կապտաչյա ու խարտյաշ լինեինք…

Վազգենի դեմքը կատաղությունից կարմրեց:

– Թշնամու ջրաղացին ջուր ես լցնում,– ասաց նա,– հիմա նույն հարցը ես եմ քեզ տալիս՝ դու վստա՞հ ես, որ հարյուր տոկոսով հայ ես: Ես իմ փայով վստահ եմ, իսկ դո՞ւ:

– Ես վստահ եմ, որ մարդ եմ, իսկ ա՜յ դու կոնստրուկտ ես:

– Ի՞նչ,– աչքերը չռեց Վազգենը:

– Ասում եմ՝ ես մարդ եմ, իսկ դու՝ կոնստրուկտ:

– Ես խաղ չեմ խաղում, Նարեկ, ես լուրջ եմ խոսում: Այ, որ Քոչարյանն ուզում էր Մեղրին փոխանակեր, տար Ղարաբաղի դիմաց, որ ադրբեջանցիք Նախիջևան ուղիղ ելք ունենային ու դրա դիմաց Ղարաբաղը Լաչինով Հայաստանին տային, ու ստեղ հայաթափեր, նրանից ա, որ ինքը հայ չի, դարա-

բաղցի ա, այսինքն՝ իրա լոկալ պատկանելությունն իր համար ավելի կարևոր ա, քան հայությունը: Իսկ ես նախ և առաջ հայ եմ:
– Հա, բայց էդ հայ ասածն ի՞նչ ա: Որ բառերը հանես, տակը բան չի մնա: Իմ համար դու ավելի հայ կլինեիր, եթե նախ և առաջ մեղրեցի լինեիր՝ էս հող ու ջրում, էս միջավայրում ձևավորված… Հիմա ես ասում եմ, որ կոնստրուկտ ես, ասել ա թե՝ քեզ ուրիշներն են լցրել լիքը զիբիլով, ու դու հիմա մտածում ես, թե հայն էդ ա: Եթե մեջս լիքը ատելություն լցնեն ու ասեն, որ ես բացառիկ եմ, միակն եմ, ամենահինն եմ ու իմ նման երկրորդը չկա, ես կդառնամ դատարկ, բայց աղմկոտ փուչիկ, իսկ ես գերադասում եմ մարդ լինել, ոչ թե փուչիկ:
– Да, кстати, Нарек джан,– խոսակցությանը խառնվեց Ալեքսանդր Բորիսիչը,– я тут немного поисследовал, и оказывается этой вашей средиземноморской лихорадкой болеют не только ваши так называемые старые народы, но еще и турки с арабами…[7]

5

Էդ գիշեր Նարեկը երազ տեսավ: Երազում Լոռվա անտառներն էին ու էդ անտառների գարնան հոտը: Պապն էր՝ փայտը ձեռքին ու ինքը՝ 6-7 տարեկան երեխա, պապի հետևից ընկած սինդրիկի որոնումներով: Ամենամատղաշ ու համով սինդրիկը ձյան տակ էր լինում, ու պապն ու ինքը մրցում էին, թե առաջինն ով կքաղի: Հողը նոր էր տաքանում, օդը դեռ սառն էր, իսկ ծառերի արանքից ծիկրակող արևն ընկնում էր աչքերի մեջ ու խուտուտ տալիս:
Առավոտյան, երբ վերջնահաշվարկ էին անում ու ճամպրուկներն արագ-արագ դուրս հանում հյուրանոցից, Նարեկին մոտեցավ հյուրանոցի բարմենը, խնդրեց երկու րոպե տրամադրել իրեն: Երկուսով նստեցին ընդունարանի բազմոցին: Բարմենը Նարեկին սուրճ հյուրասիրեց ու շատ ցածր ձայնով հայտնեց ըստ երևույթին երկար ձևակերպած միտքը.
– Ամեն երեկո ես ձեր բոլոր քննարկումները լսել եմ: Նայի, հա, եթե հանկարծ Մեղրիի հարցը բանակցություններում նորից շոշափվի, ու ստեղ մի բան նենց չգնա, ես գիտեմ՝ ում փնտրեմ:

[1] Ինչ համեղ բալ է:
[2] Ռուսական բանակը հյուրասիրում է:
[3] Ձեզ հետ ուզում են խոսել:
[4] Ներեցեք, խնդրեմ, բայց մենք կցանկանայինք այս կոնկրետ տեղանքի պատմության մասին մի քիչ իմանալ, ոչ թե հայ ժողովրդի:
[5] Իսկ ո՞վ է ավելի հին՝ դո՞ւք, թե՞ թուրքերը; Ո՞վ է այստեղ ավելի շուտ եղել՝ դո՞ւք, թե՞ ադրբեջանցիները:
[6] Այնուամենայնիվ, օրենքով ո՞ւմ է պատկանում այս հողը՝ ձե՞զ, թե՞ ադրբեջանցիներին:
[7] Հա, ի դեպ, Նարեկ ջան, ես այստեղ մի քիչ հետազոտեցի, և պարզվում է, որ ձեր այդ միջերկրածովյան տենդով ոչ միայն ձեր, այսպես կոչված, հին ազգերն են տառապում, այլև թուրքերն ու արաբները:

Այդ ճմերուկահոտ ամառը

1

– Ըհհհ,– հաճույքից տնքաց Հայկանուշը:
Մերսողը շարունակում էր յուղերով խաղալ մարմնի հետ: Մտքերն իրար հերթ չէին տալիս: Գալիս էին իրար շալակ բարձրանալով, իրար հրելով ու խմբովի՝ հոտերի, համերի, գույների մանրամասներով:
Այո՛, ինքը՝ Հայկանուշը, Թուրքիայում է, Անթալիայում, և իր մարմնի հետ խաղում է թուրք մերսողը, և դա այնքան հաճելի է, որ կուզեր հավերժ այդպես լիներ: Բայց, ախր, երդվել էր, չէ՞, որ թուրքական ապրանք չի առնելու, Թուրքիայում չի հանգստանալու, առհասարակ ոչ մի ձևով չի նպաստելու թուրքական տնտեսության զարգացմանը: Տատը տեսներ՝ իր փոխարեն ամոթից գետինը կմտներ. հերիք չի կրծքերը բացել ա անծանոթ տղամարդու առաջ, հերիք չի էդ տղամարդը թուրք ա, հլա ինքն էլ անամոթաբար տնքում ա:
Պապն ու տատն ադրբեջանահայ էին: Տատը տխուր ու նամուսով կին էր: Պապը կամքին հակառակ փախցրել էր նրան 20 տարեկանում: Տատն ամբողջ կյանքում պապին չներեց: Երբ փոքր էր, չէր հասկանում, թե տատը ինչի է կյանքից դժգոհ: Մտածում էր, թե տատի բնավորությունն է՝ դժգոհ ու տխուր մարդ է: Ամառները, երբ բոլոր թոռներով հավաքվում էին տատի տանը, տատի բնավորության վրա կատակներ շատ էին անում: Աշոտը՝ թոռներից ավագը, մի անգամ ասել էր. «Տատի, եթե ոչ մի տեղ չցավա, կգնաս կողքի սենյակ, ոտդ էնքան պատին կխփես, մինչև կոտրվի, որ դժբախտ լինես ու բախտիցդ բողոքես»:
Հայկանուշի Արփենիկ հորաքրոջ տղա Աշոտը տատի ամենասիրելի թոռն էր: Նրան տատն էր մեծացրել ու այնքան երես տվել, որ հետո էլ ոչ ոք չէր կարողանում հախից գալ:
Երկար ու անհեթեթ բակային-գողական-խոպանա-ռուսաստանյան կյանքից հետո Աշոտին Երևան էին բերել առողջության կտրուկ վատացման պատճառով, որ պարզվեր, որ ՁԻԱՀ-ի վերջին փուլում է:
Գլխում մանկության պատկերներն էին. Աշոտը բակից տուն էր գալիս ու զարմիկներին շորերից կախում տան դռներից, ու նրանք անօգնական ճոճվում էին: Ընտանեկան պատմությունն ասում էր, որ իրեն՝ Հայկանուշին, Աշոտն էր քայլել սովորեցրել: Ինքը չէր հիշում: Փոխարենը հիշում էր, թե ինչպես էր Աշոտն ընկերների հետ նարդի խաղալիս իրեն կանգնեցնում աթոռի վրա ու ստիպում ժամերով արտասանել: Սկզբում ոգևորված, առոգանությամբ սկսում էր՝ «Մանուկները գոռում, գոչում…» Երբ ավարտում էր, Աշոտը դիրիժորի պես չափ էր տալիս, թե՝ նորից: Հետն էլ իր տնազն էր անում՝ ստորին շուրթը «Անորսալի վրիժառուների» Ջիգարխանյանի նման դեպի վեր ծռելով, քանի որ արտասանելիս Հայկանուշի բերանը ծռվում էր: Ու էսպես ժամերով: Մինչև ինքն այնքան էր հոգնում, որ կատաղությունից սկսում էր լացել:
Հայկանուշի մանկությունն անցավ գրքերի մեջ: Կարդում էր ամեն բան, կարդում էր ինքնամոռաց: Նստում էր դասերն անելու՝ դասագրքի տակ միշտ որևէ գեղարվեստական գիրք պահած: Ուղարկում էին քնելու՝ վերմակի տակ լապտերով գիրք էր կարդում: Հետո ամբողջ օրն էլ գրքերում էր, երկխոսությունների մեջ՝ տռ կոմսուհի Դե Մոնսորոն էր, տռ Մարգո թագուհին, մի քիչ որ մեծացան, հերոսուհիները փոխվեցին՝ Նաստասյա Ֆիլիպովնան կամ Նա-

տաշա Ռոստովան: Հենց լսում էր վերելակի ձայնն ու պատկերացնում, որ էս ա տուն մարդ կմտնի, արագ ամեն բան հավաքում էր, նստում գրասեղանի մոտ՝ իբր դասերն է անում: Դրա համար բոլորը գիտեին, որ ինքը կյանքից բացակա ա, գրքերի ու դասերի մեջ, ոչ էստեղ ու ոչ հիմա: Հիմա էլ գիրք չի կարդում, բայց էլի էստեղ չի, Անթալիայում պառկած, աչքերը փակ՝ էլի մտքով ուրիշ տեղ ա:

2

– Ահ,– հանկարծակիի եկած բացականչեց Հայկանուշը, գլուխը թափ տվեց ու բացեց աչքերը: Մերսողը համբուրել էր շուրթերը:

– If you don't like it, I'll not do it madam[1], – ժպիտը դեմքին Հայկանուշի մազերի հետ խաղալով՝ ասաց մերսողը:

Կլիներ մի 4–5 տարեկան, երբ Աշոտը նրան փակեց ննջարանում, իջեցրեց իր շալվարն ու տրուսիկը, ապա Հայկանուշին մոտ կանչեց, բարձրացրեց շրջազգեստը, իջեցրեց տրուսիկն ու ասաց՝ «Հայկուշիկ, տե՛ս սառը կոճակս», ապա «կոճակը» փորձեց կոճկել Հայկանուշի կոճկանցքին: Աշոտն այդ ժամանակ 12–13 տարեկան էր: Հայկանուշը բան չհասկացավ, բայց Աշոտը կարգադրեց, որ ոչ ոք պիտի չիմանա: Եվ իհարկե, ոչ ոք չիմացավ:

Աշոտի սառը կոճակը աչքի առաջ է: Ինքն աչքերը փակ իրեն երկնքում էր զգում թուրք մերսողի փափուկ, հանգստացնող հպումների շնորհիվ: Հանկարծ մերսողը բռնեց ձեռքն ու թեթև բարձրացրեց տեղից: Հայկանուշը զարմացած բացեց աչքերը ու հարցրեց.

– Finished?[2]

Մերսողը ժպտաց ու ասաց.

– No, the mask[3],– ապա ձեռքից բռնած տարավ մութ ու նեղ միջանցքներով, նստեցրեց մի կիսախավար սենյակում, թափանցիկ վարագույրի հետևում, թեյ բերեց ու պատվիրեց,– relax![4]

Թեյը մի տեսակ տարօրինակ համ ուներ ու շատ քաղցր էր:

Թեյը: Շոգ հետմիջօրե Լուքսորում: Անհամար քանակությամբ խմված թեյ: Լուքսորի տաճարի մոտ արաբ տղան մոտեցավ ու ասաց.

– Come with me, I'll show you the world[5].

Երեքով էին, 20–23 տարեկան աղջիկներ: Իրար նայեցին, ապա հետևեցին ժպտերես ու արևահար արաբին: Քարերի ու ավերակների միջով քայլեցին, քայլեցին մինչև ինչ-որ կիսաքանդ պատի հասան: Տղան շարունակում էր ժպտալ՝ ձեռքով պատը ցույց տալով: Սկզբում չէին հասկանում՝ ինչ է ուզում: Հետո ուշադիր նայեցին ու տեսան լավ պահպանված որմնանկարը՝ եգիպտացի տղամարդ, բաց ֆալոսով: Ֆալոսը կանգնած էր, տիրոջ մարմնի չափ: Ահա աշխարհը, որը տղան համառորեն ուզում էր ցույց տալ: Հետո մի ոտքից մյուսին հենվելով, մի քիչ շփոթված ժպիտը դեմքին՝ ձեռքը մեկնել, փող էր ուզում՝ աշխարհը ցույց տալու դիմաց: Շոգ, անապատային, կապտաերկինք օր էր: Դարերի շունչը կախված էր օդում և անգամ անթիվ զբոսաշրջիկների օծանելիքի ու քրտինքի հոտերը չէին կարող վերացնել այն:

Պատկեր պատկերի հետևից, կաղր օդին, դուբլ դվա, ու Հայկանուշն արդեն Դամասկոսում է: Քսան տարեկան էր, մի տարվա ուսանողական ծրագրով Սիրիա էր եկել: Հունվար ամիսն էր, մանր անձրև էր մաղում: Հայկանուշը ճերմակ շրջազգեստով էր, կարմիր շարֆով ու կարմիր, երկար ականջօղերով: Երևանից նոր էր եկել, խնդրել էին ինչ-որ փաստաթղթեր փոխանցել Վարդա-

նին՝ պոլիտեխնիկի դիպլոմ, էլի մի էրկու սերտիֆիկատ: Պայմանավորվել էին հայկական եկեղեցու մոտ:

Եկավ Վարդանը՝ հին սովետական մեքենայով: 39 տարեկան, նիհար, մկանուտ, ցածրահասակ տղամարդ էր: Վարդանն անընդհատ իրեն էր նայում՝ ոտքից գլուխ: Մի ամիս առաջ երազ է տեսել՝ ճերմակ ու կարմիր հագած աղջիկ, հայկական եկեղեցու մոտ, մանր անձրևի տակ, ինչ-որ արաբական երկրում: Մտադիր էր Լատինական Ամերիկա տեղափոխվել: Բայց օր անց, երբ արդեն պիտի տոմսերը գներ, զանգեց ընկերն ու ասաց, որ Սիրիայում փող աշխատելու հնարավորություն կա: Ինքն էլ գնաց երազի ետևից: Ուղիղ մի ամիս անց երազն իր ոտքով եկել է: Հայկանուշը Դամասկոսում երկու շաբաթում հասկացել էր, որ անհավանական ոչինչ չկա: Զարմացավ: Անգամ հաճելի էր ուրիշի երազում հայտնվելը: Ճամփորդում ես անծանոթների երազներում: Ինքն իրեն լատինամերիկյան վեպում էր զգում:

Մեքենայով Դամասկոսում պտտվեցին, հեռախոսի համարներ փոխանակեցին, ու Հայկանուշը տուն վերադարձավ այնպես սահուն ու թեթև, կարծես դեռ ուրիշի երազում զբոսնելիս լիներ: Վարդանը պրոֆեսիոնալ մրցարշավորդ էր: Սկսվեցին մեքենա վարելու դասերը, Դամասկոսի գիշերային գոնկեքը, անակնկալ այցելությունները, գիշերային շրջագայությունները հին քաղաքի նեղլիկ փողոցներով, հրեաների լքված տների ուրվականահոտ բակերով, թեյարանների ու սրճարանների օդը, պտտվող դերվիշները, նարգիլեն, հեքիաթասացները:

Վարդանենց տանն էին, երբ Վարդանը վատացավ: Հայկանուշի հայրը 39 տարեկանում էր մահացել՝ սրտի կաթվածից: Մահվան անհեթեթությունը հասկանալու համար կարդացել էր կաթվածի մասին ամեն ինչ ու վստահ էր, որ Վարդանինը կաթված է: Հենց այդ վստահությամբ էլ նա արագ մոբիլիզացրեց Վարդանի ընկերներին, ու նրան հիվանդանոց տեղափոխեցին: Հաստատեցին, որ սրտի սուր նոպա ունի:

Վարդանի ուղեղն ամբողջությամբ մթագնեց: Հայկանուշից զատ ոչինչ չէր տեսնում: Երբ մի տասը հոգով որևէ տեղ էին գնում, նստում էր անկյունում ու աչքը Հայկանուշից չէր կտրում: Հենց տան բակում Հայկանուշը քայլում էր, քայլած տեղը կավիճով գծում էր ու բոլորին արգելում էնտեղ ոտք դնել: Հայկանուշի խմած ջրի շշերի՝ շուրթերը կպած տեղերը կտրում ու պահում էր ինչ-որ գաղտնի տեղ: Հայկանուշը սկսեց վախենալ: Խուսափում էր հանդիպելուց: Չէր պատասխանում զանգերին: Երազի հերոսուհի լինելն այլևս սարսափ էր ներշնչում:

Մի քանի օրից Վարդանը դզվեց ու մեծ ծաղկեփնջով հյուր եկավ: Հայկանուշի ընկերուհիներն էլ նրան սիրով ընդունում էին: Նրա հետ հետաքրքիր էր: Նա երաժշտություն էր գրում ու երգում: Փայտից, քարից հետաքրքիր քանդակներ էր անում Հայկանուշի համար: Այդ օրը շատ էին խմել, և Վարդանն այլևս վախենալու չէր: Մայրամուտի վերջին ազանն էր: Երկուսով հայտնվեցին Հայկանուշի ննջարանում: Վարդանը ծիծաղելով ու հապշտապ իջեցրեց շալվարը, ապա կիսավարտիքը՝ բացելով ճլորած ու կախված կոճակը: Հայկանուշի հարբածությունն անմիջապես ցնդեց ու դեմքին նորից սառեց սարսափը: Հայկանուշի դեմքը Վարդանին էլ օյաղացրեց: Շալվարը բարձրացրեց ու ամաչելով ասաց՝ կարծում էի՝ դու փորձ ունես: Վարդանն էլ էր աշխարհը ցույց տալիս, ճիշտ այնպես, ինչպես եգիպտացի պատանյակը: Աշխարհը տեսնելու սպասումն ավելի մեծ էր, քան աշխարհն ինքը: Ու Հայկանուշը փախավ:

3

Մերսողը վերադարձավ՝ հետը մի սրվակ, մեջն էլ վրձին: Վրձնով դեմքին քսեց դիմակն ու պատվիրեց չշարժվել, մինչև չորանա:

«Ահա թե ինչի հասցրեց թուրքի վախը»,– դեմքին չորացող դիմակից ձգված քմծիծաղ տվեց Հայկանուշը:

Տատն ու պապն ապրում էին Ադրբեջանում, թուրքերի մեջ ու թուրքի վախը սրտում: Երբ ավագ դուստրը՝ Արփենիկը, հասունացավ այնքան, որ սկսեց տղաների ուշադրությունը գրավել, ծնողները խառնվեցին իրար ու սկսեցին քննարկել, թե ինչպես դստերը փախցնեն ադրբեջանցի վավաշոտ տղաների աչքից: Արփենիկը թուրք դասընկերներից սիրո խոստովանությամբ նամակներ էր ստանում: Անգամ բանակում ծառայող թուրք հարևանն էր նրան գրում: Փողոց դուրս գալն էլ օր օրի անախորժությունների պատճառ էր դառնում՝ ռեպլիկներ, կռիվներ և այլն: Ծնողները որոշեցին, որ «մարդի տալու վախտն ա»:

Հայկանուշի պապը՝ Արփենիկի հայրը, շրջանում հարգված մարդ էր, ընկերներ ու ծանոթներ շատ ուներ: Հերթական ընկերական հավաքի ժամանակ պատմում է դարդը, ու ընկերներից մեկն առաջարկում է աղջկան ամուսնացնել իր եղբոր հետ: Տղան Երևանում մանր պաշտոնյա էր, նոր էլ բնակարան էր ստացել: Պապը տեղում համաձայնվում է:

Մինչև տատը կառարկեր՝ ով ա, ինչ ա, ինչացու ա, աղջկան արդեն նշանել էին: Տղան գրավիչ տեսք ուներ, համ էլ խոստացել էր, որ կթողնի Արփենիկը սովորի:

Արփենիկին 17 տարեկանում ամուսնացրին, տեղափոխվեց Երևան, ընդունվեց տեխնիկում, իսկ մի տարուց ծնվեց Աշոտը: Հարսանիքի օրը փեսան էնքան էր խմել, որ տան տեղը կորցրել էր, հարսանքավորները սաղ գիշեր փեսա էին փնտրել: Բայց դե ոչինչ՝ հարսանիք ա, մի անգամ ա կյանքում, ուրախությունից ա երևի, Արփենիկը հո Երևանում ա, թազա տուն, լիքը սիրուն շոր կհագնի, ու իրա սիրուն-ջահել մարդու թևը մտած լավ-լավ տեղեր կգնա:

Չէ, էդքան էլ տենց չեղավ: Մարդը հարբում, հայհոյում ու ծեծում էր, ու դեռ երեխեն չէր ծնվել, Արփենիկը հասցրեց մի քանի անգամ հորանց փախչել: Բայց ամեն անգամ ամուսինը հետևից գալիս էր, խոստանում, որ էլ չի կրկնվի, որ էլ չի խմի, հետը լավ կվարվի, ու Արփենիկը վերադառնում էր Երևան:

Ու հարմարվելով, մի կերպ յոլա գնալով չորս երեխա շարեց: Ի՞նչ աներ, էնպես էին մեծացրել, որ բաժանվելը ամոթ բան էր, երեխեքին էլ հեր ա պետք: Լավ, ամոթը կորցրեց, բայց մյուս կողմից էլ վախենում էր մենակ մնալուց, առանց տղամարդու ո՞նց էր գլուխ հանելու էս կյանքում, ո՞նց կպահեր չորս երեխուն: Իրեն մխիթարում էր, թե՝ մարդը կփոխվի, հո ամբողջ կյանքը չի՞ խմելու ու կռիվ սարքի: Չէր փոխվում, արդեն անհնար էր դառնում, ու ուժերը հավաքեց, դիմեց դատարան, որ բաժանվի, բայց դատավորը կանչեց, խնդրեց, որ «պաշտոնյա մարդուն խայտառակ չանի»:

Արփենիկը չէր ուզում մեծ տղեն՝ Աշոտը, մարդու դեբոշները տեսնի, շուտ-շուտ ուղարկում էր ծնողների մոտ: Հերը հեր չի, բայց պապն աշխատասեր, հարգված, պատվախնդիր մարդ ա՝ տղուն լավ օրինակ կծառայի:

Իսկ Երևանում էլ Աշոտը փողոցից տուն չէր գալիս, Արփենիկն էլ չէր կանչում, հարբեցող հորից ինչքան հեռու, էնքան լավ:

Աշոտը որ մեծացավ, իրիկունները հեր ու տղա հաճախ էին վիճում: Տասներորդ դասարան կլիներ Աշոտը, երբ հորը ծեծեց, որ մորը նեղացրել էր: Հետո

տնից փախավ ու ամբողջ գիշեր Արփենիկն Աշոտ էր փնտրում:
Առավոտվա կողմ, երբ Հայկանուշը պատրաստվում էր դպրոց գնալ, դուռը թակեցին: Աշոտն էր: Գիշերը ոտով Երևանի մի ծերից մյուսն էր հասել:
Աշոտն անհեր մեծացավ, փողոցից տուն չեկավ: Տանել չէր կարողանում տունը, հորը, հոր հարբած քֆուրները, մոր խեղճանալը: Ամառներն էլ գյուղում էր, բայց տատն ու պապն էլ չէին կարողանում հսկել՝ օրը մեկի հետ կռվում էր, օրը մի պատմություն սարքում, մյուս թոռներին էլ շարունակ տեռորի մեջ պահում:
Իննսունականներին ղարաբաղյան պատերազմը որ սկսվեց, Աշոտը ուզում էր կամավոր գնալ: Հայրն ու մայրն ամեն ինչ արեցին, որ չգնա: Վստահ էին, որ շատ կարճ ժամանակում Աշոտի անունով սև ժապավենն իրենց փողոցում կկապվի: Տնով-տեղով, ազգով-ցեղով խնդրում-աղաչում էին, որ տենց բան չանի: Բոլորը հասկանում էին, որ պատերազմ ա ուզում գնա, որ հոր էրեսը չտեսնի:
Աշոտը պատերազմ չգնաց, բայց որ տնից պրծնի, թալանեց հարևանին: Պատուհանով մտել էր, էղած-չէղածը հավաքել, կապոց արել, ու նստել սպասել, որ գան բռնեն. ավելի լավ ա՝ բանտ ընկնեմ, քան ամեն օր դրա էրեսը տենամ: Ձերբակալեցին, մի քանի ամիս կալանքի տակ մնաց: Դատի օրը ազատվեց, դատապարտել էին էնքան, ինչքան մինչև դատը նստել էր: Հենց բանտից դուրս եկավ, ծնողներն ուղարկեցին Ռուսաստան, որ հանկարծ գիժ-գիժ պատերազմ չգնա:

4

Մերսողը վերադարձավ, ստուգեց դիմակը և պատվիրեց լվացվել: Հայկանուշը երկար լվացվում էր, մտքում անջուր պատերազմական տարիները, 14–15 տարեկան դեռահասներ, ինը հարկ աստիճաններով ջուր էր կրում: Աշոտը գնաց Ռուսաստան ու «փրկվեց» թուրքի գնդակից: Իրենք մնացին, մութ ու ցուրտ օրեր, ուրեմն, միակ ապրելու տեղը գրքերն են: Տես, իր սիրելի հերոսուհիների գլխին ինչ ասես գալիս ա, բայց նրանք ամեն բան հաղթահարում են ու գտնում իրենց երջանկությունը: Որ ջուր էր կրում՝ իրեն Անժելիկա էր երևակայում, նա հանուն սիրո՝ Ժոֆրեյի, տեղափոխվել էր Ամերիկա ու ծառաներին հավասար չարքաշ աշխատում էր: Մեկ-մեկ էլ Ջեյն Էյրն էր: Կյանքը տանելի դարձնելու համար փոխադրվում էր գրքերի աշխարհ ու կյանքին գրքի հետ դավաճանում:
Աչքի պոչով նայեց մերսողի ձիգ, մկանուտ, արևահար մարմնին:
Վարդանն ասում էր, որ նկատել կարողանալը ապրելու միակ իրական կարողությունն է: Վարդանը մարդկանց բաժանում էր սպառողների ու ապրողների: Սպառողներն ապրում են ապրողների հաշվին: Սպառողները գիտեն ինչի են ճամփորդում, որ «գալոչկա» դնեն, որ տես՝ Եգիպտոսում էլ եղա, ու վերջ, նրանք շարունակ լուսանկարվում են, գնում կինո, թատրոն, համերգ, բայց ոչ մեկով չեն ապրում: Անկետա են լրացնում՝ been there done that[6]. Հետո մի օր մեկը զգում է, որ չէ, մեկ է, դատարկ է կյանքը, ու փորձում է լցնել: Իսկ ինչո՞վ լցնի: Լցնում է սիրով: Ինքն իրեն համոզում է, թե սիրում է: Բայց քանի որ սպառող է, սերը դառնում է իր տեսած կինոյի պես՝ կամ «գլամուրոտ» կամ «ռոմանտիկ», կամ «դժբախտ»:
Հալեպում էր, որ ուկրաինացի Սերգեյը սեր խոստովանեց: Գիշեր էր, լիալուսին, զբոսնում էին Հալեպի բերդի շրջակայքում: Սերգեյը ինչ-որ բան էր

պատմում, չես հասկանում՝ իր հե՞տ է պատահել, գրքո՞ւմ է կարդացել, թե՞ սուտ գլուխ է գովում: Հանկարծ կանգնեց: Նայեց արմավենիների գլխին կախված լիալուսնին ու արտասանեց.

– Сейчас удобно[7],– արագ բռնեց Հայկանուշի երկու ձեռքերը ու համբուրեց շուրթերը: Հետո ասաց, – я люблю тебя. Давай я перееду к тебе?[8]

Հայկանուշը սկսեց ծիծաղել: Ծիծաղեց, ծիծաղեց, ապա կտրուկ թեքվեց ու արագ քայլեց դեպի տուն: Հիշեց իրեն՝ երկրորդ դասարանում, երբ դպրոցի միջանցքում իրենց դասարանի Վահանը բարձրացավ ոտքերի ծայրերին ու համբուրեց թուշը: Ֆիլմերում, երբ տղան նման բան էր անում, աղջիկն ապտակում էր: Տարավ բերեց՝ ապտակեց Վահանին: Խեղճը կարմրած թշով մտավ դասի: Ֆիլմերը իր մինուճար կյանքը բազմացնում, մի քանիսն են դարձնում՝ թույլ տալով ապրել տարբեր կյանքեր: Այնպես, ինչպես գրքերը:

Տեսնես հիմա որտե՞ղ է Սերգեյը: Դժվար թե Մայդանում լիներ, ինչքան էլ նրա կարդացած գրքերի հերոսները Մայդանինը լինեին:

Աշոտը ոչ կարդում էր, ոչ էլ առանձնապես կինո նայում: Անգամ երաժշտություն էլ չէր լսում: Սիրում էր ու խնամում իր սենյակային բույսերը ու մեկ էլ շատ էր սիրում փոքր երեխաների հետ խաղալ: Ազգականների հետ չէր շփվում, ձնականությունների հետևից զահլա չկա ընկնելու:

Հասկացե՞լ էր, թե ինչ է անում: Խմբովի նստել են, նույն ասեղն իրար փոխանցելով կիսել կայֆը ու արդյունքում սպիդը նվեր ստացել: Հայկանուշն անգամ չգիտեր, թե Աշոտը երբ և ինչպես էր սկսել դեղ անել: Սկսելը չգիտեր, բայց իմացել էր, որ ինչ-որ պահի թարգել էր: Աշոտը փոքր ժամանակ խմիչքն ատում էր: Ոչ միայն խմիչքը, կախվածություն առաջացնող ցանկացած բան: Ատում էր կախվածությունը, բայց ինքն իրեն վնասելու մոմ էր: Հայկանուշն անգամ մտածում էր, որ տանջանքից հաճույք է ստանում՝ մազոխիստ: Դե բա ուրիշ ի՞նչ մտածես. բաց վերքի մեջ հատուկ ժանգոտ մեխ էր մտցնում ու շուռ տալիս, հետո էլ բժշկի չի գնում, որ վերքը «ծաղկի», քցվում էր վարարած ջրանցքը, որտեղ ընկնողը հազիվ ա փրկվում, ամեն տարի մեկը խեղդվում էր, հատուկ ուտում էր ժամկետանց, ուռած պահածո: Ամբողջ կյանքում Աշոտն ինքն իր հետևից էր ընկած ու արանքում էլ ուրիշներին էր զոհ տալիս:

***

«1988 թ.-ից մինչև 2014 թ. հուլիսի 31-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1793 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 238-ը՝ 2013 թ. ընթացքում, ինչն առավելագույնն է բոլոր նախորդ տարիների համեմատ…

ՄԻԱՎ վարակով հիվանդներից 930-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ, ընդ որում 143-ի մոտ՝ 2013 թ. ընթացքում: Համաճարակի սկզբից գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների մահվան 388 դեպք: Մահացածների թվում կան 68 կին և 7 երեխա»:

Մտավ ծով: Աչքերը փակեց ու գրկեց ալիքները: Առաջներում, երբ մտնում էր ծովը, աշխարհը դատարկվում էր: Հիմա աշխարհը դառն էր ու լի անցյալի ուրվականներով:

5

Այդ ամառը ձմերուկաշատ էր: Ամառը հիշողության մեջ մնացել է ձմերուկագույն ու ձմերուկահոտ: Կարող էր, չէ՞, Աշոտին տեսնելու գնալ, բայց չէր գնում ու անընդհատ ձմերուկ էր ուտում:

Վրուբելի Դևը, Հայկանուշի ու Վարդանի միակ ընդհանուր սերը: Այնքան տարօրինակ ու անսպասելի չարք էր՝ ամբողջ աշխարհից հոգնած, կորած, մոլորված, ասես մարդկանց ասում էր՝ ինձ հանգիստ թողեք: Աշոտը նման էր այդ չարքին: Վարդանն էլ էր նրան նման:

Երբ Վարդանը գիշերներն իրենց մոտ էր գալիս՝ աչքերն արյունով լցված, դողալով ու գդալով շաքար կուլ տալիս, Հայկանուշն ուզում էր Վարդանին սպանել: Մի անգամ նույնիսկ ինքն իրենից թաքցրել էր խոհանոցային սուր դանակը, որ կատաղության պահին հանկարծ չսպանի: Իրեն թվում էր, որ Վարդանի մեջ երկու մարդ է ապրում, և հենց մյուսը ակտիվանում էր, Վարդանի վարքը փոխվում էր: Ընկերներով որոշեցին, որ Վարդանը չարքերոց է եղել: Ասում էին, որ Դամասկոսից ոչ հեռու, Մաալուլայում հզոր եկեղեցիներ կան, որտեղ մի հոգևորական կարողանում է աղոթքով քշել չարքերին: Վարդանին տարան Մաալուլա: Երեկոյան կողմ հասան, գտան հոգևորականին: Նա ձեռքը դրեց Վարդանի ճակատին ու սկսեց աղոթել: Վարդանն ընկավ գետնին, սկսեց թավալվել, ապա սկսեց երկու տարբեր ձայներով ինքն իր հետ խոսել, ասես երկու տարբեր մարդիկ էին խոսում: Աղոթքն արամերեն էր, և ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Վարդանը բռնել էր փորը, կուչ եկել, գալարվում էր, լացում ու խոսում, խոսում: Իսկ հոգևորականը շարունակում էր բարձրաձայն անել իր անհասկանալի աղոթքը: Գիշեր էր: Մաալուլայի ժայռափոր տներում վառվում էին լույսերը: Լուսինն ասես կլանում էր աղոթքը: Վարդանը թպրտում էր, իսկ հոգևորականը ձեռքը ճակատից չէր հանում: Այնքան, մինչև երկուսն էլ ուժասպառ եղան: Վարդանի երեսին խաղաղություն իջավ: Լիալուսնի տակ նրա դեմքը հոգնած ու դառն էր, ծեր, սևացած, բայց խաղաղ: Փոքր-ինչ շունչ քաշելուց հետո հոգևորականը դարձավ իրենց կողմն ու արաբերեն ասաց.

– Նրա մեջ երկու չարք կար: Ես դրանց հանեցի: Բայց եթե հանկարծ մեկը վերադառնա, իր հետ յոթին կբերի:

Վարդանը խաղաղվեց, աչքերն էլ արյունոտ չէին, ու չէր էլ դողում: Բայց հիմա էլ Հայկանուշից չէր կտրվում: Նա ամենուր էր: Հայկանուշը ֆիզիկապես զգում էր Վարդանի ներկայությունը, անգամ եթե դեռ չէր հայտնվել: Արյունը երակներում սառում էր, ծոծրակը քարանում, շարժվել չէր կարողանում, երբ զգում էր այդ ներկայությունը: Հայկանուշը փախավ: Տեղափոխվեց այլ բնակարան, այնպես, որ Վարդանն իրեն չգտնի: Նույնիսկ երբ արդեն Երևան էր վերադարձել, նրան երբեմն թվում էր, թե Վարդանը շարունակում է իրեն հետապնդել: Նույն զգացողությունն էր ունենում. արյունը սառում էր երակներում, բերանը ցամաքում և սկսում էր չորս կողմը նայել՝ համոզված, որ շուտով ինչ-որ տեղից կհայտնվի Վարդանը: Ճիշտ է, Վարդանն այդպես էլ երբեք չհայտնվեց, բայց Հայկանուշը վստահ էր, որ դա այն պահն է, երբ Վարդանն իրեն է տեսնում երազում:

***

Ձմերուկի հոտը գրավում-կանչում էր, բայց Հայկանուշը երկար չէր կարողանում մնալ խոհանոցում: Ինչ-որ բան ան-

հանգստություն էր պատճառում ու ստիպում այս ու այն կողմ նայել, ու փախչել՝ կարծես իրեն մեկը հետևում էր: Քրտինքը վրայից hոսում էր, ինքն էլ ջեռոցի մոտ կանգնած հա աջ ու ձախ էր նայում՝ դեմքը լարված, գլուխը մրքերի ու պատկերների տարափից ծանրացած ու ինքնաբերաբար անընդհատ խառնում էր ամառային բրնձով ու դաղձով ապուրը: Երբ մի անգամ էլ գլուխը հետ շրջեց, աչքը սառեց սառնարանին: Ամեն ճամփորդությունից մի մագնիս էր բերել, ու հիմա սառնարանից աչքով էին տալիս Վենետիկը, Մոնա Լիզան, Կիսլովոդսկը, ամերիկյան հնդկացիների կորած ցեղերից մեկի ժպտերես ներկայացուցիչը, վրացական գինիները, Պիզայի աշտարակը, ուղտին նստած մի բեդուին, սֆինքսը…. Աhա թե ինչ: Փասպորտն այդ արնագույն, միլիմետրանոց դրոշն էր, որ ծածանվում էր Բոսֆորը պատկերող մագնիսի վրա: Գնելիս երկար փնտրում էր, որ առանց դրոշի մագնիս գտնի, բայց չկար: Էն ժամանակ մտածեց՝ ինձ էդ դրոշն ինչ կանի, մանավանդ, որ շատ փոքր է ու ըսկի չի էլ երևում: Թողեց ապուրը, մի վայրկյանում սառնարանից պոկեց մագնիսն ու աղբարկղը նետեց:

6

Երբ Աշոտն «Արմենիկում»-ում պառկած էր, ամեն օր տնեցիներով քննարկում էին, թե արժե՞ր տեսակցության գնալ: Երևի ուզում էր, որ իրեն արգելեին գնալ, բայց արգելող չկար:

Հայկանուշին շարունակում էր տանջել Անթալիայում մերսումից ստացած դառնաքաղցր հաճույքի աղոտ գիտակցումը՝ խառնված մերսման ընթացքում իրեն այցելած դրվագների, ծովի անզորության, ՍՊԻԴ-ի սարսափի, մարմնի գրավչության ու իր՝ իրենից առաջվա սերունդների ստեղծած թակարդից դուրս գալու անկարողության հետ: Համալսարանի երկրորդ կամ երրորդ կուրսում էր: Աշուն էր, դասերը նոր էին սկսվել: Ընկեր չուներ, բայց տղաներ կային, որ դուրն էին գալիս: Ընկերուհու հետ երկար զրուցել էին և տղաների մասին երկար խոսել, հետո ինքը դասի էր գնացել: Հանկարծ լսարանի դուռը բացվեց, ու ընկերուհին խնդրեց, որ Հայկանուշին թույլ տա դուրս գալ: Լսարանի դուռը հենց փակեց, լսեց ընկերուհու հարցը՝ «Հա՛կ, կարո՞ղ ա դու ֆրիգիդնի ես»: Էն ժամանակ ինքն էդ բառի իմաստը կարգին չէր հասկանում, բայց, դե, հո ցույց չէ՞ր տա, որ չգիտի: Երևի լավ բան չի ֆրիգիդնի լինելը ու ասեց, թե չէ, ֆրիգիդնի չի: Ասեց ու վերադարձավ լսարան: Գուցե թուրքի ու ՍՊԻԴ-ի սարսափի՞ց էր ինքը ֆրիգիդնի: Պատկերներն էլի հեռու մի տեղ էին տանում, այնտեղ, ուր ինքը մեն-մենակ էր Աշոտի սառը կոճակի հետ:

Աշոտին «Արմենիկում»-ում մկրտեցին: Արդյոք դա՞ քշեց նրա չարքերին: Պատահարա՞ր, թե՞ օրինաչափորեն, մկրտող քահանան Ղարաբաղում կռված տղա էր: Ներկաներն ասում էին, որ քահանան հանգիստ խոսում էր մահվան մասին, իսկ Աշոտը շարունակ անձայն լացում էր: Օգոստոսի սկզբին Աշոտին տեղափոխեցին Աբովյանի տուբերկուլոզի դիսպանսեր: Հայկանուշն ինչ-որ տեղ կարդացել էր, որ աշխարհի շատ երկրներում ՁԻԱՀ-ի վիճակագրությունը հստակ չի, քանի որ շատերն ի վերջո մահանում են տուբերկուլոզից, որն էլ գրանցվում է որպես մահվան պատճառ: Լսել էր նաև, որ Հայաստանում տուբդիսպանսեր տեղափոխում են ՍՊԻԴ-ով այն հիվանդներին, որոնց ապ-

ընելու հույսն այլևս չկա: Այստեղ այցելություններն առհասարակ արգելված էին: Աշոտին այցելած հարազատներն ասել էին, որ Աշոտը կուրացել է, ոչինչ չի տեսնում: Մեկն էլ ասաց, որ խոսելիս բերանը ծռվում է: Իր մանկության այն նույն Աշոտն էր դարձել, որն իր տնազն էր անում՝ Ջիգարխանյանի պես ներքևի շուրթը վերև ծռելով:

Օգոստոսին, երբ ձմերուկն ամենահամեղն էր, իրենց քառասնամյա խոպանչի հարևանը մահացավ տուբերկուլոզի դիսպանսերում: Հարազատները մահվան պատճառը չէին ասում, բազում վարկածներ էին շրջանառվում: Օգոստոսի կեսերին Աշոտն էլ մահացավ: Հայկանուշը գործերով Բաթում էր գնացել ու Աշոտին այդպես էլ չտեսավ: Անգամ մահացած չտեսավ:

Այդ ամառվա ձմերուկահոտ մեղքը հիմա մի ահռելի հսկա էր՝ Վրուբելի չարքի կերպարանքով: Հայկանուշն իրեն չէր ներում, որ չայցելեց Աշոտին: Չգիտեր էլ, թե ինչու չգնաց: Կոճա՞կն էր պատճառը, ՍՊԻԴ-ի վա՞խը, թե՞ ինքն իրեն ավելի ցավացնելու ցանկությունը: Գուցե գնար ու էլ չմղկտար՝ պարտքը կատարած կլիներ, բոլորի աչքին ճիշտ քույր կլիներ:

> *Դրոշը նետեց, ու սկսեց լացել իր էդպես էլ կյանքում երբեք չունեցած սեքսի, Արփենիկ հորաքրոջ չսպասված կյանքի, փախցված ու երևի բռնաբարված քսանամյա փափի, նրա թուրքավախի, Վարդանի երազների, Աշոտի հոգու փրկության, նաև Ֆրեդի Մերկուրիի, Էմի Վայնհաուզի ու էլի շատ ու շատ բաների համար:*

***

Ադրբեջանն սկսեց սահմանի կրակահերթը: Եղավ հերթական Պուտին-Ալիև-Սերժ հանդիպումը: Սահմանային բախումների հետևանքով պատնյակ երիտասարդներ մահացան: Այսիսը Սիրիայում շարունակում էր առաջխաղացումը, իսկ սիրիական բանակին հաջողվել էր հետ վերցնել Քեսաբը: Եգիպտոսում դեռ չէր վերջացել Մուբարաքի դատավարությունը, իսկ Ուկրաինայում այդ ամառ խփեցին ՁԻԱՀ-ի 20-րդ միջազգային կոնֆերանսին մեկնող մասնագետներով մալայզիական ինքնաթիռը: Ինքնաթիռում զոհվողների մեջ էր նաև հոլանդացի Ջափ Լեյնը՝ «Ինթերնեշնլ Էյդս Սոսայեթիի» նախկին նախագահը: Նա ասում էր, որ եթե Աֆրիկայի կորած անկյունները հնարավոր է սառը կոլա ու գարեջուր հասցնել, ապա ՁԻԱՀ-ի դեղ հասցնելը չպետք է պրոբլեմ լինի:

[1] Եթե ձեզ դուր չի գալիս, այլևս չեմ անի, տիկի՛ն:
[2] Ավարտեցի՞ք:
[3] Ոչ, դիմակը:
[4] Թուլացեք:
[5] Եկե՛ք ինձ հետ, ես ձեզ ցույց կտամ աշխարհը:
[6] Եղել եմ այնտեղ, արել եմ դա:
[7] Հիմա հարմար է:
[8] Ես քեզ սիրում եմ: Արի մոտդ տեղափոխվեմ:

Մանասը

Ինքնաթիռը դանդաղ էր իջնում: Առավոտյան ժամը 4-ն էր: Ներքևում շարված բազմաթիվ ինքնաթիռները մեծ օդանավակայաններ էին հիշեցնում՝ «Շառլ դը Գոլի», «Հիթրոուի» կամ Նյու Յորքի Ջեյ Էֆ Քեյի նման: Արփինեն զարմացավ, որովհետև փոքր, գավառական օդանավակայանի ակնկալիք ուներ: Վայրէջքից հետո միայն հասկացավ, որ դրանք Աֆղանստան զինամթերք տանող մեծ ամերիկյան բեռնատարներն էին, և որ այդքան շրջանառված ամերիկյան ռազմաբազան Ղրղզստանում ու «Մանաս» օդանավակայանը նույն բանն են:

Ինքնաթիռից իջնելուն պես սկսվեց հրմշտոցը: Ինքնաթիռում կողքին նստած ռուս կինը բոլորին հրելով առաջ էր վազում, բայց միևնույն է, այնպես ստացվեց, որ անձնագրային ստուգման հերթում կրկին իրար մոտ հայտնվեցին: Մոսկվա-Բիշքեկ չվերթի ժամանակ կինը հասցրել էր պատմել, որ արդեն տասը տարի է՝ Գերմանիայում է ապրում, բողոքել Գերմանիայից ու գերմանացիներից, շեշտել, որ գերմանական անձնագիր ունի, սակայն բացի ռուսերենից ոչ մի այլ լեզվով չի խոսում՝ ձեռի հետ էլ ասելով, որ չնայած ծնվել-մեծացել է Բիշքեկում, ղրղզերեն ոչ մի բառ չգիտի ու երբևէ չի էլ ուզել իմանալ: Ճանապարհին ցույց էր տվել նաև ողջ գերդաստանի ֆոտոները, պատմել ամեն մեկի մասին առանձին-առանձին, հայտնել, որ երկու մեծ ճամպրուկ նվերներ է բերել: Երբ իջան, շտապում էր՝ աղջկան տեսնելու ու նվերները թոռներին մեկ վայրկյան շուտ հասցնելու: Բայց մյուս ուղևորներն էլ պակաս չէին շտապում, և կինը հևոցով հայտնվեց հերթի վերջում, Արփինեի կողքին: Քանի որ ինքնաթիռում իր և իր ընտանիքին առնչվող թեմաների մեծ մասը սպառել էր, հիմա ևս մեկ անգամ ոտքից գլուխ նայեց Արփինեին՝ ասես առաջին անգամ էր տեսնում: Զննող հայացքը կանգ առավ Արփինեի ձեռքի կապույտ անձնագրի վրա ու հարցրեց.

– Деточка, а вы откуда?[1]

– Из Армении[2],– հոգնած պատասխանեց Արփինեն:

– Аааа… А у вас тоже Путин президент?[3]

Հարցը մնաց անպատասխան, որովհետև հենց այդ պահին անձնագրային անցակետի մոտից համազգեստավոր մեկը ձայն տվեց կնոջը.

– Теть Свет, сюда идите[4].

– Ой извините, дайте пройти, Света – это я, меня зовут[5],– դիմացիններին հրելով՝ կինն առաջ նետվեց:

Հերթի մեջ դժգոհության ալիք բարձրացավ, մի երիտասարդ աղջիկ էլ, որը «Շերեմետևոյի» սպասասրահում անդադար պատմում էր Ալաբամայում ուսանողական փոխանակման ծրագրով անցկացրած տարվա մասին, ղրղզերեն ինչ-որ բան շշնջաց, ավելացրեց անգլերեն ֆաքը, հետո էլ ռուսերեն փնթփնթաց՝ совок есть совок: Բայց դե ծյոծ Սվետի հեչ պետքն էր: Արդեն անցակետի մոտ էր՝ գերմանական անձնագիրը հպարտորեն մեկնած:

Արփինեն հորանջեց: Օդում կախված անորսալի մի բան իրեն շատ խորը ինչ-որ տեղ տարավ: Նա այստեղ օտար ու մենակ էր: Հերթում կանգնածների մեծ մասը տուն էր վերադառնում: Այսպես մեկ էլ Երևանում է լինում, որտեղ վերանորոգված ու նոր, «միջազգային ստանդարտներին համապատասխանող» օդանավակայանում գրված է «Բարի վերադարձ», կարծես Հայաստան միայն վերադառնում են: Էդ մտքի վրա ֆիլմի կադրի պես աչքին երևաց Գերմանիայի Վիլհելմսհաֆեն քաղաքի երկաթուղային կայարանը, որտեղ երկաթգիծը վերջանում էր: Բարեկամություն, վերջին կայարանն է: Հաա, նոր միայն որսաց այն անորսալի հոտը, որն իրեն տարավ խորը ճամփորդության: Ման-

կությունից ռունգերում մնացած մի բան էր, նավթի հոտը, որով սովետական տարիներին փայլեցնում էին «Զվարթնոց» օդանավակայանի հատակը: Քանի անգամ էր էդ հոտը քթում, հայրիկի ձեռքն ամուր բռնած մարդ ճանապարհել ու դիմավորել: Պայուսակն ամուր սեղմեց ձեռքում:

– Гражданочка, что вы стоите как истукан? Ваша очередь, подходите[6],– կողքին կանգնածը օդանավակայանի հավաքարարն էր, համ հատակն էր փայլեցնում, ճիշտ իր ոտքերի տակ, համ էլ ցույց տալիս ազատ սահմանապահին, ում պետք էր մոտենալ:

Արփինեն ուշքի եկավ, մոտեցավ անցակետին, մեկնեց անձնագիրը: Ապակու ետևում նստած սահմանապահը նայեց անձնագրին, ապա՝ իրեն:

– А правда, что у вас коньяк лучше нашего?[7]– հարցրեց սահմանապահը:

– Не знаю, ваш не пробовала[8].

– Обязательно попробуйте. А у вас для меня не найдется?[9]– կատակեց սահմանապահը:

Արփինեն շփոթվեց, չգիտեր՝ ինչ պատասխաներ, ու հիմա էդ նավթի հոտին խառնվեց նաև կոնյակինը և անքուն գիշերն էլ վրադիր՝ սրտխառնոց առաջացրեց: Վերցրեց անձնագիրն ու անցակետն անցնելուն պես՝ վազեց զուգարան:

Մինչև հասավ իրերը ստանալու կետին, պարզվեց, որ իր ճամպրուկն ինչ-որ մեկն արդեն վերցրել ու մի կողմ էր դրել: Արփինեն անգամ ուրախացավ, որ այլևս սպասել պետք չէ: Վերցրեց ճամպրուկը, նայեց, թե ելքի նշանը որտեղ է ու քայլեց այդ ուղղությամբ:

– Есть что декларировать?[10]– դռների արանքում հարցրեց հերթական համազգեստավորը:

– Нет[11],– պատասխանեց Արփինեն:

– Пройдемте со мной[12],– կարգադրեց համազգեստավորը:

Արփինեն մեկ ուզեց դժգոհել, մեկ էլ հիշեց, որ Ամերիկայում էլ են պատահականության սկզբունքով մարդկանց ընտրում ու իրերը բացել տալիս և լուռ հետևեց համազգեստավորին: Բացեց ճամպրուկը: Համազգեստավորը հարցրեց, թե ալկոհոլ չունի՞: Արփինեն ասաց, որ երկու շիշ կոնյակ պիտի լինի, որ նվեր է բերել: Համազգեստավորը հրահանգեց հանել իրերը: Արփինեն նայեց իրերին ու մեխանիկորեն սկսեց հանել դրանք: Միայն այն բանից հետո, երբ համազգեստավորը հարցրեց, թե ուր է կոնյակը, Արփինեն հասկացավ, որ շշերը չկան, ու որ ճամպրուկն ինչ-որ մեկն իրենից առաջ արդեն տակնուվրա է արել:

– Так, гражданка, как вас зовут? Вы тут ждите, я сейчас приду[13].

Արփինեն ուզում էր ամեն բան թողնել հենց այդպես ու գնալ: Այնքան հոգնած էր, որ միակ միտքը փափուկ բարձն ու տաք անկողինն էր: Հիշեց, որ ճամպրուկից վերջին անգամ իրեր անհետացել էին, երբ էլի Մոսկվայով ինչ-որ տեղ էր գնում: Անհետացածը մեծ բան չէր, բայց մեկ ա, տհաճ էր: Հոգնած ընկավ հենց կողքի աթոռին: Մի քանի րոպեից համազգեստավորը վերադարձավ, ներկայացավ որպես կապիտան այսինչ, ու Արփինեին մեկնեց իր երկու շիշ կոնյակը:

– Извините пожалуйста. Добро пожаловать в Киргизию![14]– ասաց ու ուղեկցեց մինչև ելք:

Էս սովետահոտ ստուգումներից, իրերը ստանալուց հետո, ինչպես իրեն բացատրել էին մոտեցավ հենց օդանավակայանում տեղակայված տաքսի ծառայությանն ու մեքենա խնդրեց: Տաքսու անունն էլ էր «Մանաս»: Աշխատակցի ուղղորդմամբ դուրս եկավ ու մոտեցավ հենց առաջին պատահած Մանասին:

Վարորդն օգնեց իրերը տեղավորելու և ապա նստեց ղեկի առաջ, իսկ Արփինեն տեղավորվեց հետևում: Վարորդին հանձնեց Բիշքեկում իր գիշերակացի հասցեն, և շարժվեցին: Գիշերը դեռ չէր գնացել և շատ մութ էր, ձմեռային անհրապույր մութ: Ոչ մարդ էր երևում, ոչ մեքենա, ոչ էլ որևէ շնչավոր արարած: Բիշքեկում առաջին անգամ էր և ոչ օդանավակայանի հեռավորությունն էր պատկերացնում քաղաքից, ոչ ճանապարհը, ոչ էլ այն վայրը, որտեղ պիտի գիշերեր: Մի քանի րոպե լուռ քշելուց հետո, վարորդը, որը միջին տարիքի ոչ դրդզական արտաքինով տղամարդ էր, հարցրեց.

– А вы откуда?[15]

– Из Армении[16],– պատասխանեց Արփինեն:

Մի քանի րոպե տևած մթությանն ու լռությանը հետևեց վարորդի հաջորդ նախադասությունը.

– А я из Азербайджана[17].

Արփինեն լարվեց: Միտն էկավ, որ ոչ աշխատող հեռախոս ունի, ոչ էլ պատկերացում՝ թե ուր է գնում: Լռության րոպեները կրկին ընդհատեց վարորդը.

– А вы откуда из Армении?[18]

– Из Еревана[19].

– А вы замужем?[20]

– Да[21].

– А у вас дети есть?[22]

– Да[23].

Կրկին լռություն: Մեքենան գնում էր խարխլված ճանապարհով: Շուրջ բոլորը ոչ մի բնակավայր չէր երևում, միայն ինչ-որ դաշտեր էին ու մեկումեջ Սովետից մնացած բնակավայրերի անուններով ցուցանակներ: Ցուցանակները կային, բայց տներ չկային: Այլ մեքենա էլ չէր երևում: Ճանապարհն էլ նորմալ չէր լուսավորվում:

– Никому не доверяйте[24],– հետևեց վարորդի հաջորդ նախադասությունը:

Լավ, բա էրեխեքի մասին ինչու՞ հարցրեց: Երևի ուզում ա պատկերացնի, թե ո՛նց բռնաբարի: Աչքի առաջ երևացին Սումգայիթի իրադարձությունները, այն կինը, որին մերկ իջեցրել էին բակ, խոշտանգել, բռնաբարել: Հատկապես մի միտք հանգիստ չէր տալիս. զոհերից մեկի հեշտոցը խրած երկաթի կտորը: Հեշտոցը լարվեց, սեռական շուրթերն ամուր սեղմվեցին ու փակեցին հեշտոցամուտքը: Փաստորեն հեշտոցով են վախենում… Հետո մի տեսակ հիմար պատմություններ միտն էկան ռուսական ինչ-որ անկապ ժուռնալից, որը մի անգամ անգործությունից թերթել էր օդանավակայանում: Դե դա լրիվ աղբ էր, սկի կարդալու ու հիշելու բան էլ չէր, բայց այնտեղ էլ մանրամասն նկարագրում էին, թե բռնաբարողներն ինչպես էին ընտրում զոհերին, որ նրանք երեխա ունեցած լինեն, որ մուտքը լայն լինի, որ ինչ չափի առարկա ու ո՛նց ուզեն կարողանան խրել ու հրճվել: Վարորդի հարցերը կապվեցին Սումգայիթի, Բաքվի, ապա և չգիտես որտեղից ուղեղում լռված այդ մյուս պատմության հետ, ու վախը գալարվեց, հեշտոցն ի վեր բարձրացավ, հասավ արգանդին, սկսեց թակարդից ելքեր փնտրել, ներծծվեց արյան մեջ, տարածվեց ողջ մարմնով ու քը՛րթ, խփեց գլխին: Հայացքը պատուհանից դուրս՝ փախուստի տարբերակներ էր փնտրում:

– А как там у вас в Армении?[25]

– В каком смысле?[26]

– Есть еще азербайджанцы?[27]

– Если даже есть, то очень мало[28].

Տեսնես քաղաքն ինչքա՛ն հեռու ա:

– Никому не доверяйте. А что будет с Карабахом, как у вас в стране думают?[29]
Չգիտեր ինչ պատասխանել: Վարորդն էլ հեռախոսով էր խոսում ինչ-որ մեկի հետ: Տեսնես մենա՞կ կբռնաբարի, թե՞ խմբով: Կարո՞ղ ա խմբի հետ ա պայմանավորվում: Էդ Բիշքեկն ո՞ւր մնաց: Դաշտեր, դաշտեր: Երևի մի տեղ ճամփից դուրս կթեքի ու… Բա Սաֆարովը: Կացինն էկավ աչքի առաջ: Ավելի լավ ա սաֆարով անի՝ պրծնի:
– А вам в какую гостиницу?[30]
Էս խի՞ ա նորից հարցնում: Էդ հասցեն իրան տվեցի, չէ՞: Նորից փոխանցեց հասցեով թերթիկը:
– Это что за гостиница что я не знаю?[31]
– Это не гостиница, а какая–то квартира, так называемый bed and breakfast[32].
– Никому не доверяйте[33].
Լավ, ի՞նչ անի: Հանեց հեռախոսը, որը ռոումինգ չէր արել՝ մտածելով, որ Բիշքեկում տեղական քարտ կգնի: Ձևացրեց թե զանգում է, ապա՝ իբրև խոսում է ինչ-որ մեկի հետ ու հայտնում, որ արդեն ժամանել է: Ժամանակը չէր սպառվում…
– А вы работаете?[34]
– Да[35].
– А муж кем работает?[36]
– Журналист[37].
– Аааа[38].
Ճանապարհը ոչ մի կերպ չէր վերջանում: Երևի հիմա կանչել է ընկերներին, և դաշտի մի ծայրում իրենց են սպասում:
– Я вспомнил. Как–то возил я в эту гостиницу каких–то иранцев. Кроме них там никто не останавливается. А вы к нам на долго?[39]
Հա, էդ էլ ու պըրծ: Էդ ի՞նչ անհասականալի տեղ ա: Կարո՞ղ ա ընկերներին հենց ընդեղ ա կանչել: Էլի հեռախոսով ա խոսում: Վայ, տուն: Վերջապես: Բայց շունչ չկա: Քաղաքն էլի չի պատկերացնում: Տեսնես արդեն Բիշքեկո՞ւմ են: Տեսնես ո՞նց կխոշտանգեն: Լավն էն կլինի, որ կացնահարեն պրծնեն: Քշում ու քշում ա: Ոչ մարդ կա, ոչ մեքենա: Անհասկանալի պտույտներ ա անում: Վերջապես մի քիչ ավելի լուսավոր փողոցներում հայտնվեցին: Մի շունչ արարած էլ երևաց՝ ցախավելով պապիկ, որ փողոցն էր ավլում: Կանգնեց: Պապիկից ճշտեց կացարանի տեղը: Պապն էլ չգիտեր՝ չնայած ըստ վարորդի այդ կողմերում պետք է լիներ: Էլի պտտվեց: Վերջապես կանգնեց մի բարձրահարկ շենքի բակում: Վարորդն իջեցրեց ճամպրուկը, իսկ Արփինեն դուրս թռավ մեքենայից: Վարորդը գրպանից մի թղթի կտոր հանեց:
– Никому не доверяйте,– թղթի վրա ինչ-որ բան գրեց, ապա մեկնեց իրեն,– у меня мамка армянка. Звоните, с мамкой пообщаетесь[40].

[1] Աղջիկ ջան, իսկ դուք որտեղի՞ց եք:
[2] Հայաստանից:
[3] Աաաա… Ձեզ մոտ էլ ա՞ Պուտինը պրեզիդենտ:
[4] Սվետա տոտա, ստեղ էկեք:
[5] Ներեցեք, թույլ տվեք անցնել, Սվետան ես եմ, ինձ են կանչում:
[6] Քաղաքացուհի, ի՞նչ եք քարացել: Ձեր հերթն է, մոտեցե՛ք:
[7] Ճի՞շտ է, որ ձեր կոնյակը մերինից լավն է:
[8] Չգիտեմ, ձերը չեմ փորձել:
[9] Անպայման փորձեք: Իսկ կարո՞ղ ա ինձ համար ունենաք:
[10] Հայտարարագրելու բան ունե՞ք:
[11] Ոչ:

[12] Եկեք ինձ հետ:
[13] Այսպես, քաղաքացուհի, ի՞նչ է ձեր անունը… Այստեղ սպասեք, ես շուտով կգամ:
[14] Ներեցեք խնդրեմ: Բարի գալուստ Ղրղզստան:
[15] Իսկ դուք որտեղի՞ց եք:
[16] Հայաստանից:
[17] Իսկ ես Ադրբեջանից եմ:
[18] Իսկ դուք Հայաստանում որտեղի՞ց եք:
[19] Երևանից:
[20] Ամուսնացա՞ծ եք:
[21] Այո:
[22] Իսկ երեխաներ ունե՞ք:
[23] Այո:
[24] Ոչ ոքի մի վստահեք:
[25] Իսկ ո՞նց ա ձեզ մոտ Հայաստանում:
[26] Ի՞նչ առումով:
[27] Ադրբեջանցիներ դեռ կա՞ն:
[28] Եթե անգամ կան՝ շատ քիչ են:
[29] Ոչ ոքի մի վստահեք: Իսկ Ղարաբաղի հետ ի՞նչ ա լինելու, ձեր մոտ ի՞նչ են մտածում:
[30] Իսկ ձեզ ո՞ր հյուրանոցն է պետք:
[31] Էդ ի՞նչ հյուրանոց ա, որ ես չգիտեմ:
[32] Հյուրանոց չի, այլ ինչ-որ բնակարան, այսպես կոչված մահճակալ և նախաճաշ:
[33] Ոչ ոքի մի՛ վստահեք:
[34] Իսկ դուք աշխատո՞ւմ եք:
[35] Այո:
[36] Իսկ ձեր ամուսինն ի՞նչ է աշխատում:
[37] Լրագրող է:
[38] Ասա:
[39] Հիշեցի: Էդ հյուրանոց մի անգամ ինչ-որ պարսիկների եմ տարել: Դրանցից բացի ոչ ոք ըտեղ չի մնում: Իսկ մեզ մոտ երկա՞ր եք մնալու:
[40] Ոչ ոքի մի՛ վստահեք: Մայրս հայ է: Զանգե՛ք, մորս հետ կշփվեք:



Թամար Պոյաճեան

Ծնած եմ «Լեռներու տեսարան» քաղաքը: Բայց թափառական եմ: Միջնադարեան գրականութիւն (եւ ալ տարբեր ազգերու գրականութիւնները) համալսարանը կը դասաւանդեմ: Փոքր տարիքէս ինքզինքս ասպետ ձիաւոր կը սեպէի: Սովորաբար իմ աշխարհս միջնադարեան է՝ բայց ուրիշ միջավայր ալ կ՚այցելեմ: Ես կը հաւատամ որ կեանքի արանքներուն մէջ կ՚ապրին յատուկ ճշմարտութիւններ՝ որ շատ անգամ անյայտ են ու այդպէս ալ կը մնան: Կեանքիս արուեստագէտը ես եմ:

Լուռ հայելի

լո՛ւռ լուր լռէ
լռէ լո՛ւր լուռ
լուռ լուր լռէ՛
՝՝

լսէ՛
լինի առ ոք
ելանէ՛ լրոյ ուրուք
ուր ի լրոյ
՝լռէ

լռէ
լսէ
լռէ
լսէ
լռէ
լսէ
լռէ
լռէ
լսէ
լռէ
լսէ
լռէ
լսէ
լռէ

լուրջ
լալկան
լռասէր
լուսնակ՝ լուրը

սեւ հայելի՝

սիրտս
սէր ըրիր

սիրոյ
մոխիրը
մարեցիր

կարմիր
մոխիրը

որ
օր
մոխրոց

մ   տաւ
մատ   աղ
մարմինը

քոյ

սեւ հայելի՝

Ես՝ կը պառկիմ մահուան անկողինը
մահը ես եմ... քու մահդ որ կ՚ապրիս
կը յանձնես՝ դէպի կեանքի մահը
մահու ասպարէզ

կեանքի կռունկդ
կրնաս յիշե՞լ

մայր մահ
ճակտին վարակուած միւռոն
քսէ՝ մահու եւ կեանքի մեղրը
կը կնքես՝ քու արիւնով

ջուրին մէջ իմ դիմագիծը
բայց քու շուքը

աչքին մէջ
կը լողայ՝ դէպի հայելին

ի նոյն նմին
նորին ի նմին
եւ
դու՛ ընդ նմին

կը ներե՞ս
երբ ժամանակին հասնինք
վերջին անգամն է

որ սեւ մազդ կը կտրես
ճեղքուած հայելի ո՞վ
դիմագիծը անտեսանելի
վարդ

շուքին դիմագիծը
տեսանելի
սարսռալի նայուածքով
իմ ով՜ ով իմ

մոռցած ես դուն
կը սգաս հայելի՛ն
ոչ քեզի

բայց դուն ես կեանքը եւ դուն ես հայելին

անծածք ծածկող
ներէ՛ զիս
որ իմ լեզուովս կը խօսիմ

ո՜ հ եւ ըլլայ խ
աղ՝ ապագայի հոգիներու
մութի մետաքսեայ վարագոյրը վերցնելով՝
քօղարկէ՛
կուրծքին

լուռ նինջը բառնալով՝

գծագրէ՛
հայելին
լուծելով՝
ո՜ հ եթէ
ըլլար
խաղ՝
ոստայն
քակելով՝

մարմնի
յօդը
քու

բառերով՝

գոհ
հօտը
հոտը
հայելիին՝

Տիգրան Ալեքսանյան

Ծնված օրվանից ես լրտեսում եմ: Լրտեսել եմ մանկությունն ու պատանեկությունը, սայլարկայի վառարանն ու կերոսինը: Լրտեսել եմ մանկապարտեզը, դպրոցն ու «Ժողը»: Լրտեսել եմ Կոմիտասի բեսեդկի ու ռոմանոյի բուֆետի բլոտը: Լրտեսել եմ ռոք ակումբներն ու կարգին «օբյեկտները», դասերից թռնելն ու գերազանցիկությունը, վերջին լիկվիդն ու տնտեսագիտությունը: Լրտեսել եմ եվրոպաներն ու Ամասիա գյուղը, Լիլի, Անթվերպենի, Պրահայի համալսարաններն ու Ամասիայի մանկապարտեզը, դաշնամուրի դպրոցն ու գրադարանը: Ես լրտեսել եմ: Լրտեսել եմ բանկը, հաշվապահական գրասենյակը, ավտոմեքենաների վաճառքի սրահը, միջազգային բարեգործականը և անգործությունը, հենց էնպես աշխատանքից դուրս գալը ու բանկի պատմության մեջ ամենավատ աշխատակիցը լինելու երջանկությունը: Լրտեսել եմ հազարավոր կիլոմետրերով հարբած ու կեղտոտ ավտոստոպն ու Շտուտգարտից Փարիզ ձգվող ամենաարագ գնացքի վագոն-ռեստորանի գարեջուրը, Շումփիոնից Բանգկոկ ընթացող գնացքի զուգարանը, զուգարանակոնքը, զուգարանակոնքին նստած ֆլեմուիու կոնքը: Լրտեսել եմ կոստյումն ու գունավոր անդրավարտիքը, սափրվածն ու մորուքը: Ես լրտեսել եմ: Լրտեսել եմ տարբեր տեսակի աղջիկների խորքերն ու տարբեր տեսակի տղաների՝ տարբեր տեսակի աղջիկների խորքերը լրտեսելու հաջող ու անհաջող փորձերը: Լրտեսել եմ դանակի հարվածը մեջքիս ու խումհարը վերակենդանացման բաժանմունքում: Լրտեսել եմ ուրիշի ընկերուհու և մեր մի բուռ հայրենիքի հյուրընկալ գրկերը: Լրտեսել եմ կիթառը, դաշնամուրն ու շվիի բարձր օկտավան: Լրտեսել եմ Սարյանի այգու թափառականների օղու շիշը իմ շուրթերով: Իմ շուրթերով լրտեսել եմ արյունս ու բառերը: Նույն շուրթերով լրտեսել եմ աշխարհի խմիչքներն ու հետաքրքիր տարբեր միջոցներ՝ Աթայի հետ Թեհրանի երկնքում մեքենայով ճախրելիս: Լրտեսել եմ ստիրիական դիրնդլբալը, Պրահայում հարբելն ու Բեռլինում արթնանալը: Լրտեսել եմ պատահական գրական մրցանակը, իմ ու Դրիսի միզած ֆիլմի ցուցադրմանը սպասող լուրջ հայացքները և լուսանկարչական ցուցահանդեսի մասնակիցը լինելու չոր փաստը: Լրտեսել եմ: Լրտեսել եմ «Կարամազով եղբայրները» բալետի ներկայացումից՝ հարբած լինելու և քթի տակ Վագներ նվնվալու պատճառով դուրս վռնդվելը և Ռուդոլֆինիումում Դվորժակի տարեդարձի փառատոնի բացման ժամանակ ամենաէժան տեղից՝ ոտքի վրայից, օրկեստրին 9-րդ սիմֆոնիան չափ տալը: Լրտեսել եմ տարբեր բաներ՝ արևի ջերմությունը սառը սենյակի պատուհանի ապակուն, կատվիս գոմռոցը գլխիս վրա, մորս գրիպի ցավը կաշվիս տակ, հորս ընկճվածությունը, ախպորս տղու ոտնաթաթերը բերանիս վրա, մյուսների երազանքները ինձ համար իրագործելը, փափուկ բարձը ու տաք տեղը, բաճկոնով սառնարան-զուգարան գնալը, ստելը, հարբուխի գինեբուժությունը, Աբովյանի քաղմասը, հայրենասիրությունը և իսկա-

կան հայրենասիրությունը, տարբեր տեսակի այլ սիրություններ, մոլորվելը քաղաքում, ուր ապրում եմ, ու անտառում, ուր մի օր կապրեմ: Լրտեսել եմ ծնողներիս դեմքերը՝ լիտվուհուս հետ կեսգիշերի հարբած այցին: Լրտեսել եմ ինձ անդավաճան մնալը, մյուսներին դավաճանելը: Լրտեսել եմ գազարի թարմ քամած հյութը և ուկրաինուհու հետ բուսակեր սեքսը, լեհից առած սեռավարակը, էկվադորուհու անկողինը, արաբի հետ չեխերով փոխանակվելը, ամերիկուհու վիզան մերժելը… ա՜խ, աղջիկները… Մի քանի բան էլ եմ լրտեսել, բայց չեմ ասի: Լրտեսել եմ նպատակասլաց պատանի տնտեսագետների դեմքերը նրանց համար 25 դրամի դիմաց սուրճ եփելիս, երբ իմանում եմ Յուրոփիան Մասթեր Ին Էքոնոմիքս օֆ Յուրոփիան Ինթեգրեյշնիս մասին: Լրտեսել եմ Պրահայի արվարձանների կարմիր կտուրների տակ տեղի ունեցողը, կատալոնական գյուղում ցեմենտից աստիճան շինելը ու Հռենոսի ափի փոքրիկ հողմաղացը: Լրտեսել եմ ինձ՝ հայելու առաջ խմբավարելիս: Լրտեսում եմ ինձ գրելու դաժան փորձեր անելիս:

Ջհանդամի գյոռը

Երբ «քաղաքից» աղը պակասում ա, մնում ա քարը:

Հենց էն պահին, որ պիտի պրծնեի, մեր բակի շինարարությունը սկսվում ա: Սվետային ասում եմ՝ կներես, բայց պիտի զարթնեմ: Զարթնում եմ խումհարի, քրտինքի ու փոշու մեջ, մի հատ էլ բժժած ճանճ կա ճակատիս: Զարթնում եմ, որովհետև մեր բակի շինարարները, մուրճերը ձեռքներին, սկսում են խփել գանգիս ուղիղ կենտրոնին: Մի նմանություն կա, անխոս, Սվետայի հետ իմ երազի ու մեր բակի շինարարության մեջ՝ երկու դեպքում էլ պրծնել չկա:

Մամային ասում եմ՝ մամ, բա մի հատ դիպուկահար զենք չլինե՞ր՝ կրակեի շինարարներին: Մաման ասում ա՝ բա մենք քեզ տե՞նց ենք դաստիարակել: Ասում եմ՝ հա՜, դե ուրեմն իջնում եմ քաղաք:

Իջնում եմ քաղաք:

Հանդիպում եմ ընկերներիս: Զրոսնում ենք: Պատմում եմ. «Մամային ասեցի՝ սնայպերը տուր՝ կրակեմ ինձ ամեն օր շինող շինարարներին. մաման էլ ջղայնացավ»: Ծիծաղում են: Մեքենա ա գալիս, կանգնում ա կողքներս, ու մեջից չորս հոգի սկսում են հռհռալ վրեքս՝ հըըըըընննննն: Ասում ենք՝ հըն: Ասում են՝ հըն: Ասում ենք՝ հըն: Ասում են՝ կայնեք, հեսա կգանք, կասենք: Կանգնում ենք: Գալիս են: Ասում են՝ հըն: Ասում ենք՝ հըն: Ասում են՝ շնորհք չունե՞ք, չգիտե՞ք, որ անծանոթներին ասում են՝ ի՞նչ, ոչ թե՝ հը՞ն: Հա, չէ, չգիտեինք, բայց արդեն իմացանք: Տենց երկու ժամ: Հարցնում են՝ վռա՞զ եք, ասում եմ՝ չէ, բայց նենց էլ չի, էլի, որ մեր հանդիպումը պիտի հարատևի:

Ներվայնացանք. գնանք փաբ՝ պիվա խմելու: Բարևում ենք անվտանգության աշխատողին.

– Բարի օր, ախպեր:
– Հա՞յ եք:
– Հա, ինչի՞:
– Չէ, ապե, չի կարելի:
– Հը՞ն…. Կներես, ի՞նչ:
– Միայն պարսիկների համար:

– Հըըըըըըը՜ն:
– Մուտքը՝ միայն պարսիկների համար: Համ էլ քեզ չասի՞ն՝ հըն չի, ինչ ա:
Տղերքը ինձ հետ են քաշում, պահակների հետ խաղաղ բանակցում, վերադառնում ինձ մոտ.
– Գնացինք ուրիշ փաբ:
Երեքով նստում ենք, խմում, հաշիվն ենք ուզում. «Hovo: Kotayk – 2x- 1600»: Մատուցողուհու հետ կատակում ենք՝ մենք լատինատառ չենք հասկանում, խնդրում ենք արտագրել հայերենով: Ասում են՝ չենք կարա, ասում եմ՝ ես էլ չեմ կարա վճարել, որովհետև չեմ հասկանում՝ էստեղ ինչ ա գրած: Փաբում եղած բոլոր մարդիկ մեզ փաբից դուրս են քաշում: Հայրենասիրության, լատինագիտության և կոնֆլիկտոլոգիայի թեմաների ինտելեկտուալ բուռն քննարկումներն ավարտվում են նրանով, որ քթիցս արյուն ա գալիս: Խաչմերուկից քաղմասն ա գալիս: Քաղմասը ասում ա՝ ինչ ա եղել, ասում եմ՝ դե ամեն ինչ սկսվեց նրանից, որ հաշիվ ուզեցինք, բերեցին՝ լատինատառ էր գրած: Ես էլ դպրոցում լատիներենի դասերից միշտ թռել եմ ու հիմա մեղքս եմ քավում: Ասում ա՝ ձեռ ես առնում, հեսա կտամ՝ քիթդ կջարդեմ: Ասում եմ՝ չէ, կներեք, կատակում եմ. ո՞նց կարող ա լատինատառ չհասկանալու համար տան քիթդ ջարդեն: Հեծանիվից եմ ընկել:
– Հա, էդ ուրիշ:
– Հա, լրիվ ուրիշ,– ճղված շապիկիցս մի կտոր եմ ճղում, ջրում ու կոխում քիթս:
Հոգնած եմ, գնում եմ տուն քնելու: Բայց քաղաքի տունը չէ՝ գյուղի տունը. գնամ՝ էս քաղաքից պրծնեմ:
Գիշերվա ժամը երեքն ա: Պառկում եմ: Զանգ ա գալիս:
– Ալլո, բարև, ով ա՞:
– Դո՞ւ ես գրել sms:
– Հա, ի՞նչ կա:
– Կտամ, գլուխդ կջարդեմ, բոզի տղա:
– Ո՞վ ա:
Չէ, էստեղ էլ մենք քաղաքից չպրծանք: Հեռախոսը անջատում ա: Ուղեղս անջատվում ա: Քունս փախնում ա: Հայկական «Կամասուտրան» վերցնում եմ ու հետ եմ զանգում.
– Հորդ կղնեմ մորդ դոշին ու քրոջդ կտանեմ, մեր հայաթի բանվորները կշինեն, բոզի տղա:
Տենց մի հինգ րոպե գոռում եմ, մինչև մեկին մյուսի վրա դնելու ու էն մյուսին շինելու բոլոր տարբերակներն ավարտվում են:
Հարևանները խփում են պատերիս:
– Գալիս եմ քեզ տենամ, ո՞ւր ես:
– Ջիանդամի գյուղը: Արի՛,– ձեռքս եմ վերցնում դանակը:
Սպասում եմ. չկա: Չիմացա՝ ով էր: Իմացա՝ ինչ sms էր՝ «Բարև գեղեցկուհի»: Հա, բայց լուրջ, էնքան վատ բան եմ գրել, որ դրա համար գիշերը երեքին զանգում են ու առանց ներկայանալու՝ քրֆում, անջատո՞ւմ են: Էդ աղջիկը սկի ընկեր չունի հիմա…
Զարթնել եմ, ներվային եմ: Զանգում եմ ախպորս.
– Ապե, մեկը զանգեց երեկ գիշերը, ասեց՝ բոզի տղա, ու անջատեց:
– Ո՞վ էր:
– Չասեց: Չիմացա:
Ախպերս զանգում ա տղերքին:

Գնում եմ Ավդալյանի մոտից մի շիշ արաղ եմ առնում:
Պիվի բանկեքը իրար հետևից 3 բանկա/ժամ արագությամբ դատարկելով՝ Ջհանդամի գյուղը Ջհանդամի քաղաքից բաժանող տարածքը անցնում եմ երեք ժամում:
Ախպերս ա զանգում: Ասում ա՝ դրան գտել ենք, տղերքով էթում ենք՝ գլուխը ջարդենք: Ասում եմ՝ սպասեք, առանց ինձ չջարդեք, ճամփին եմ:
Հասնում եմ քաղաք՝ ախպերս կա, տղերքը կան. սաղ ճիշտ ա: Մեկ էլ տենամ՝ մեր Գագոն.
– Իա, Գագ ջան, ախպերս, բա ի՞նչ կա, քե՞զ էլ են տղերքը ձեն տվել:
– Սովորական, էլի, Տիկ ջան:
Տղերքը էշացած նայում են վրես: Ախպերս նայում ա վրես՝ ապե, ինքն ա:
– Իա, Գագ ջա՞ն, էդ դո՞ւ էիր երեկ զանգել ինձ:
– Հա:
– Բա, ա՛յ ախպեր, զանգել ես ու չես էլ ասում, որ դու ես: Իա: Բա իմանանք, որ մեր ախպերն ա զանգել, ասել՝ բոզի տղա, մեզ շատ վատ չզգանք, էլի:
– Դե…
– Դե գնա՝ քու տիրոջ մերը:
Տալիս եմ բերնին: Մի քանի անգամ մի քանիսով տալիս ենք սրան, էսի փախնում ա:
Վազում ենք հետևից, որ էլի տանք, բայց չենք հասնում:
– Քաղմասը, քաղմասը:
Տղերքը ցրվում են: Մնում ենք մի քանիսս:
– Գնանք մի տեղ՝ խմենք, պարենք, լիցքաթափվենք:
Գնում ենք, խմում ենք, տղերքը գնում են պարելու, ես՝ լիցքաթափվելու: Դուրս եմ գալիս ակումբից, տենամ՝ մի հատ տղա ա կանգնած.
– Բարի օր, ապեր:
– Բարի օր, ապեր:
– Ապե, ուրեմն երեկ զարթնում եմ էն բանից, որ էս մեր հայաթի բանվորները չագուչով տալիս են գանգիս մեջտեղին…
Էս տղեն կիսատ ա թողում խոսքս՝ գի՞ժ ես:
– Չէ, լիցքաթափվում եմ, էշ,– ու տալիս եմ բերնին. չգիտեմ, հնարավոր ա՝ անքնությունն էր պատճառը:
Դուրսը հավաքվածները գալիս բաժանում են, տղերքը հասնում, ինձ բռնում, նստացնում են տաքսի:
– Ո՞ւր ենք գնում:
– Աերոպորտ:
«Ջան, գնում եմ Ջհանդամի գյոռից, փախնում եմ, պրծնում եմ… Կեթամ Անթվերպեն, Դրիսին կտենամ, կեթանք հանգիստ խմելու»:
Հասնում ենք աերոպորտ, տաքսիստը հիշում ա, որ ինքը մոռացել ա հաշվիչը միացնի ու մեկ էլ, որ մանր չունի:
«Ջան, գնում եմ, պրծնում եմ…»
Քայլում եմ դեպի «Մեկնումներ»: Տղերքը ասում են՝ էդ ո՞ւր, ասում եմ՝ չե՞մ մեկնում: Ասում են՝ արա, էս ի՞նչ խմած ես. չենք եկել, որովհետև դու մեկնում ես, եկել ենք, որովհետև մեր Արմանն ա ժամանում:
– Իյաաա, Արմ ջա՞ն, էն ո՞ւմ ախպերն ա եկել, կարոտե՞լ էիր:
Վազում եմ:
– Հա բա ո՞նց, ախպերներ, մանավանդ քաղաքն եմ կարոտել. գնա՞նք փաբեր տժժալու: Էս էն մեր մյուս ախպե՞րը ուր ա:

Հահա, տղերքը չեն ջոկել, որ «էս մեր մյուս ախպերը» վազում ա արդեն: Տենց վազելով ուզում եմ հասնել Անթվերպեն: Ճամփին մեկը ասում ա.
– Ապե, կամաց վազի հլը:
– Ի՞նչ:
– Հա՛յ ես, ապե:
– Հա:
– Դե կայֆավատ էլի:
Վազելով հասնում եմ Անթվերպեն:
Մտնում եմ փաբ. Դրիսն ա, Փիթըրն ա (էս Փի՛թըրը տեննաս ինչի ա Գրացից հետ եկել Անթվերպեն, կարո՛ղ ա իրանց քաղաքից էլ ա աղը պակասել):
– Hey bro, how come?! Welcome back!
– Hey guyzzzz!,– ուրախ թռնում եմ գիրկները:
Ուսանողական ընկերներս են: Կարոտել էի: Չէի մտածում, որ մի օր հետ կգամ, նորից կհանդիպեմ իրանց, մեր սիրած փաբերը կգնանք միասին: Ու մինչև տենց ինքնամոռաց ժպտում էի, ջոկեմ մեկը՝ սենց սափրած գլխով ու սպիտակ, կիպ մայկով, ջղային նայում ա վրես: Զգում եմ՝ հեսա գալու ա ու առանց խոսալու խփի: Ձեռիս գարեջուրը դնում եմ սեղանին: Էսի բռունցքը դնում ա քթնիս: Փաբի բոլոր այցելուներով երեքիս շպրտում են փողոց: Ոնց որ էն լատինատառի դեպքը լինի՝ էլի երեքով, էլի սաղ փաբով. ուղղակի էս անգամ թեման չիմացա: Դե հաստատ լատինատառը չի կարա լինի. սկի հայերեն էլ չենք խոսացել: Կատաղած հետ եմ վազում դեպի փաբ, երկու հատ հաստավիզ պահակ են կանգնած: Ասում եմ.
– Գժվե՞լ եք, չտեսա՞ք՝ ով սկսեց:
– Բա ասում էիր լատիներեն չե՞ս հասկանում,– ասում են պահակները:
– Հա, բայց նախ՝ անգլերեն էինք խոսում, լատիներեն չէր: Հետո էլ՝ խոսակցականը հասկանում եմ, տառերը չգիտեմ: Հետո էլ, որ վազելով գալիս էի, ճամփին սովորում էի ձեռի հետ, որ էլ տենց դեպք չլինի:
– Ձեռի հետ ես սովորել, դրա համար էլ չգիտես, որ guys-ը s-ով ա, ոչ թե z-ով:
– «Ս»-ով գիտե՞ք որն ա: ՍԻԿՏԻ՞Ր, ՍԻԿՏԻ՞Ր եղեք, արա՛, ՍԻԿՏԻ՞Ր:
Հարձակվում եմ… Փորձում եմ հարձակվել սրանց վրա: Տղերքը մտնում են թևերս ու քարշ են տալիս Անթվերպենի փողոցներով: Տենց քարշ տալով՝ ուզում են բերել ինձ հետ՝ Ջհանդամի քաղաքը: Հակառակվում եմ, փորձում եմ ազատվել ձեռներից: Մի երկու անգամ ստացվում ա, բայց գալիս, էլի բռնում են.
– Տղերք, չի՞ լինի ձեր հետ մնամ:
– Չէ՛, պիտի տանենք. Եվրոպայում ներգաղթյալները իրանց լավ չեն պահում. կռիվ-մռիվ են սարքում:
– Բայց դուք էլ hn տեսաք, որ ես բան չարեցի: Հազիվ հասցրել էի ձեզ բարևել:
– Հա, բայց էդ կապ չունի: Գնացինք:
– Հա, բայց դու էլ, կարող ա, չէ՞, Ջհանդամի գյոռում ծնվեիր:
– Չև չի:
– Հիշո՞ւմ ես, որ իրար հետ Պրահայում խմեցինք ու զարթնեցինք Բեռլինում:
– Հա:
– Մի օր Դավոյի հետ մեր քաղաքում խմում ենք, ու ռեանիմացիայում եմ զարթնում:
– Պատմել ես արդեն: Հասանք: Մեկ-մեկ նամակ գրի: Գնացինք:

Գնացին: Ի՞նչ անեմ: Էս քաղաքից չես փախնի: Գնում եմ փար: Մտնում եմ՝ Հո-վոն ա գետնին նստած: Երկուսով հարբած նստում ենք իրար կողքի:
– Հով, ի՞նչ կա:
– Սովորական, էլի, ի՞նչ պիտի լինի:
– Արի գնանք Արգենտինա:
– Ինչի՞:
– Դե… հեռու ա, էլի: Համ էլ կարծեմ՝ օվկիանոս կա էնտեղ. ոնց էլ չլինի՝ աղ կլինի:
– Արի:
Զարթնում եմ՝ խումհարի, քրտինքի ու փոշու մեջ, մի հատ էլ բժժած ճանճ կա ճակատիս: Զարթնում եմ, որովհետև մեր բակի շինարարները, մուրճերը ձեռքներին, սկսում են խփել գանգիս ուղիղ կենտրոնին: Սվետան էլ էլ չկար:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Անոյշ Ակներեան

Ծնած եմ Պէյրութ եւ ներկայիս կ՚ապրիմ Գանատա: Ուսանած եմ Անգլիական գրականութիւն եւ Վերլուծական իմաստասիրութիւն: Սկսած եմ գրել շատ փոքր տարիքէս, աշխատակցելով մանկապատանեկան եւ ապա երիտասարդական պարբերաթերթերու: Եղած եմ խմբագրական կազմի անդամ շաբաթաթերթի, իսկ ներկայիս՝ Հորիզոն Գրական ամսագրի: Նաեւ՝ մաս կը կազմեմ Թէօլէօլեան Գրական Մրցանակի (ԱՄՆ) դատական կազմին: Կը խմբագրեմ հայերէն եւ անգլերէն բնագրեր: Կը կատարեմ նաեւ թարգմանութիւններ: Կը գրեմ բանաստեղծութիւն, յօդուած եւ արձակ (fiction & non- fiction), հայերէնով եւ անգլերէնով: Հոկտեմբեր 2015ին լոյս կը տեսաւ բանաստեղծութիւններու հատորս՝ Սկիզբ խորագրով: Առաւօտուն՝ գաւաթ մը Մաթէ թէյի հետ եւ կատուներուս՝ կը նստիմ գրելու: Առօրեայիս մաս կը կազմեն եոկան եւ խոկումը: Իսկ ընթերցումը ներկայիս շռայլ հաճոյքներէս մէկն է, երբ ժամանակ գտնեմ: Կը հաւատամ, որ անասուններու իրաւունքը թել մը պակաս չէ մարդոցմէ: Բուսակեր եմ:

Անպատասխան

Սովորական է հիմա եւ ընդունուած տարածուած՝
հարցումները կախել լուացքի պարանէն
ձգել պարանը տունէ տուն մարդէ մարդ քաղաքէ քաղաք:

Երեկոյեան, երբ մութ է արդէն,
հաւաքել հարցումները տուփի մէջ
թխել անկողնին տակ եւ մոռնալ:

Հարցումները օդէն կախեալ եւ մարդոցմէ
ամէն օր կը թրջուին կը չորնան
կը վերադառնան անկողնին տակ
օրուան վերջաւորութեան:
Հարցումները չեն հարցուիր.
կը պտըտին կ՚օրօրուին կը ճօճուին
եւ կը ննջեն դարձեալ:

Դրամի պէս կը մսխուին կը ցնդին հարցումները
երբ հոն են – ներկա՛յ – բայց երկչոտ ու համր:

Ինչո՞ւ հարցնել բողոքել
բորբոքել հանգիստը բազմոցներու.
չէ՞ որ անկարելի է շարժել խանգարել
մինչեւ անգամ թել մը մազ:

…

Պատասխանը կը սպասէ լուռ
որ հարցումը իր դուռը թակէ
խուժէ ներս եւ խլէ զինք – իւրացնէ՛:
Օ՛, հարցումը կը ծագի պատասխանին օգնութեամբ
երբ անոր լուսամուտը մեղմիկ բացուի եւ
ճառագայթ մը թափանցէ ներս:
Ծածուկ պահուած պատասխաններ
կարօտ են հարցումներու
կարօտ են լոյսի
կարօտ են բացայայտման.
մինչ հոս՝ հարցումները կը սանձուին կը կորսուին
տուփերու մէջ անկողնին տակ,
հոն՝ հարցերը կը թաղուին կը խրին
անդունդին մէջ խուլ:

Իսկ եթէ պատահաբար ձայնի խօսքի գիրի պատերուն
հարցականներ զարնուին՝
կ՚իյնան գետին
անարձագանգ
անաղմուկ:
Պատասխանները կը խափանուին
այս կողմ ինկող շպրտուող
լռզունգներով:
Անոնց բացուածքները լուսամուտ
կը խցուին վախկոտ ու մունջ հարցումներով,
կը մթագնին:
…
Մինչդեռ կան պատասխաններ
թափանցիկ բառերու օգնութեամբ բիւրեղացած,
որոնք չեն իսկ բացուած տակաւին:
Կան եւ հարցումներ
խիզախ,
չհարցուած տակաւին,
որոնք կը տենչան պատասխանին՝
դիմակազերծ ու մաքուր:

Իսկ ազնիւ խօսքը կը մնայ անդին,
մեզմէ
հեռու.
Ինչ որ բաժին կ՚իյնայ՝
ոսկորն է գիշատուած միսին,
տակ տակի

քով քովի ձեւաւորուած
բառերը՝ կեղծ անկշիռ:

…

Պէտք է օդը ծակող ծակծկող
այս անդունդէն վեր մագլցող
բառեր գտնել ղրկել այն կողմ
որպէս բացուող պատասխաններ
դրան ետին կանգնած հարցումներուն:

Պէտք է ներկել ներկան
հորիզոնով կապոյտ կապոյտ,
որ կարմիր բիծեր չկաթկթին,
եւ չհասնի փոշին ժամանակի,
մրոտելու օդը կրկին:

Վերջ

Կը հեռանաս դուն ինձմէ…

Ալիքը կը փշրուի,
կը տարածուի ծովափին վրայ
ու կը շիջի:

Մակընթացութեան ազդանշաններ
կը յայտնուին:
Ես աչքերս կը փակեմ
ու կը լսեմ խուլ աղաղակ:

Օդին մէջ յանկարծ
ժպիտդ կը հնչէ,
եւ ահա տօն է,
կը ծագի արեւ:
Բայց մատներուս արանքէն
դուրս կը սպրդիս:

Վայրկեանին պահանջքը՝
վաղուց անտեսուած՝
կը ցցուի դարձեալ:
Սակայն բառերուն վրայ
կրկին կը դիզուին
զգեստաւորումներ…

Եւ ես դարձեալ կը մսիմ ցուրտէն:
Եւ դուն դարձեալ
լուռ ես:

Ու մենք,
մեր բառերուն դիմաց,
իմ՝ արտասանուած
բայց քօղարկուած,
քու՝ վերապահ
բայց նայուածքիդ մէջ աղմկող
բառերուն դիմաց՝
մենք տկար ենք:

Մենք կը փախչինք մեր բառերէն
եւ իրարմէ:
Կը մնայ զգացումը՝
լքուած,
զգացումը՝
պարզ ու վճիտ:

Կը հեռանաս դուն ինծմէ…

Եւ ահա ամպեր կը կուտակուին
անկիւնները աչքերուդ:

Անձրեւ կը մաղուի մեղմիկ
եւ կը թրջին մայթին փռուած
չոր տերեւներ:

Ժպտէ՛ ընկեր,
թէկուզ թախիծը խրի ժպիտիդ:
Ժպտէ՛
եւ ահա տօ՛ն է,
կը ծագի արեւ:

Երկիր իմ

Կու գամ դէպի քեզ իբրեւ իմ հայրը, որուն
պէտք է ներկայանալ եւ յայտնել
ո՛ւր կը կանգնիմ, ո՛ւր եմ հասեր:
Կու գամ քեզի իբրեւ հայրս, որուն
հարկ կը զգամ պարզել ինքզինքս եւ
ցոյց տալ իմ հետ բերած
ճամպրուկիս մէջ կոկիկ ծալլուած
վրայ վրայի դիզուած
յաջողութիւններս ու սխրանքներս:

Կու գամ քեզի ծիսաբար խնկադիր
սենեակս կարգի դրած եւ
թուղթերս դասաւորած:
Բայց եւ կու գամ առանց բացատրելու

կիսատ պռատ յաղթանակներս:
Գիտեմ, յաջողութեան հիմնաչափերն
ա՛յլ կերպ կը դատես դուն:

Ամրագրուած են այսօր մեր միջեւ երկարող բառերը
հողիդ վրայ թողած ոտնահետքերովս:
Ճանաչումէ անդին սակայն
իմաստայինի եզրէն դուրս
կայ փորձառութիւնը ներքին, որ
անբառ անխօսք կ՚անցնի քեզմէ ինծի:
Կու գամ դէպի քեզ իբրեւ իմ մայրը, որուն
պէտք է նուիրեմ ծաղիկներ
անձամբ քաղուած փնջուած եւ
ներում հայցել ուշացումիս:
Կու գամ քեզի իբրեւ մայրս, որուն
պէտք է պատմեմ յանձնեմ
կողք կողքի շարուած
տարանջատուած
օրերս սեւ ու ճերմակ:

Կու գամ քեզի անձկութեամբ
մազերս սանտրած եւ
հագած կիրակնօրեայ հագուստներ:
Բայց եւ կու գամ առանց բացայայտելու
զանցառումներս ու զեղումներս:
Գիտեմ, միեւնոյնն է քեզի համար.
ես ինկած եմ ներբերման ուռկանիդ մէջ եւ
այս կամ այնպէս քուկդ եմ հիմա:

Հեռակայ աղերսս կը ներլուծուի այսօր
առանցքային ճերմակ առօրեայիդ:
Կը միախառնուի բառս քու ձայնիդ,
հայեացքս քու լոյսիդ,
շունչս քու վայրկեանիդ:

Կու գամ քեզ ընդունելու
առանց զանգատի ակնկալիքի պահանջքի, այլ
քեզ ընկալելու էութեանդ լրումին մէջ:

Բայց Երկիր իմ,
դո՛ւն ինչպէս կ՚ընդունիս զիս:

Լուսանկարը՝ Անահիտ Հայրապետյանի

Շուշանիկ Թամրազյան

Ծուղակների բացատը

15.08.2013
Աչաջուր

Կապույտ այդ քունը մեզ օրորում է
ու մեր թևերին թողնում դաջվածքներ:
Այնտեղ, ուր կածանները բոլոր մոլորվում են,
արձագանքները ոլորաններում խաղում են
կապույտ մի պահմտոցի:
Ու անօթևան կկուներին քունը
նվիրում է խավոտ հուլունքներ:
Ու ծուղակները էլի երկարում են:
Ու մտել ենք մի ուրիշ բացատ:
Կապված աչքերով մութ ծառերին
շարում ենք ծորուն այն հնչյունները,
որ փոշիանում են լուսաղեմին:
Մութ գեղեցկուհին սալորենու
իր գինդերն է կախել:
Անցնելիս ժպտալ:
Որտե՞ղ են ստվերները:
Այդ պուրակում հետքերն ընկղմվում են,
ու ծաղիկները չունեն թերթիկներ:
Կապույտ այն քունը մեզ փաթաթում է
անօթևան կկուների պարանոցներին:
Ու լուսաղեմին անտառեզրին հավաքում ենք
սփրթնած մեր մարմինները:

Խարույկ

15.08.2013
Աչաջուր

Ու լուսադեմին խարույկ ենք վառում:
Թանձրացող պաղի ցեխոտ ժանյակներ
փաթաթել մրսած մեր մարմիններին:
Ու գահավիժող զարկերակի հետ
փորձում ենք հերթով կոները հաշվել:
Հողը եղյամոտ երկյուղ է հագել
ու ծակծկում է մեր կրունկները:
Խրճիթը հեռու մի հորինվածք է:
Այստեղ միայն ամայությունն է՝
մեր մարմինների պես անսահմանելի:
Ձկները մարել են օրվա հատակին:
Մեր մերկությունը թափառում է
իրար հակառակ ուղղություններով
համրացած եղևնուտներում:
Երկարող կծիկը բացվում է,
փակվում:
Հողոտ մեր պաղությունը չի երևակվում:
Ի՞նչ եմ ճողփյունով կորզել հատակից.
տե՛ս ճողոպրող այն սկյուռիկներին,
չստացվող խարույկը,
որ կափկափում է գոցված փեղկերին:
Ի՞նչ եմ գողացել նրանց խոսքերից,
որ շղթաներն այդ մեզ չկառանեն:
Օդում ցնդող քո մերկությունը՝
օրվան պարզված ցուրտ շնչառություն:
Ու սիրել եմ աքաղաղականչ եռակի այն
մատնությունը,
երբ անդրադարձն է ներսդ կողոպտում:
Մոշենիների փշերը հյուսել են
փայլուն վզնոցներ:

Խոսք անդրադարձի

15.08.2013
Աչաջուր

– Ու վերջում էլ՝ ես:
Ու տես՝ քո ներսը անծայրածիր հիմա մի դուրս է:
Գիտեմ՝ այս ցուրտը քեզ սիրելի է:
Ու չե ս վախենում անհագուրդ այն

սկյուռիկներից, որ
խնդությունդ գավաթ առ գավաթ
կցրեն փակ թփուտներում:
Մոշենիները փշերն են սրել:
Մատնությունս՝ անբեկանելի,
որ քեզ բացում է, տարածում է
օրվա պնակին,
կկախեմ, որպես շողշողուն գինդեր,
ես սակավարյուն քո պարանոցից
ու վազելով կհեռանամ մերկացող
այն արահետով:

Հրաժեշտ Աչաջրին

21. 08.2013
Աչաջուր

Խլահավերն ինձ նորից բերել են
մամուռի զգեստը
– խուփ կապտականաչ:
Կախել են խոնավ հեռագրալարից:
Ու հարազատ էր ամեն օր ինձ
նիհար սերն այս նոճիների:
Ու ոսկրոտ շները՝ իրենց քաղցերով՝
անհագ ու բանտված,
կեսգիշերին գալիս էին ջրի:
Ու սրունքներս սիրեցին զբոսնել
ստվերի տերևոտ, նուրբ գուլպաներում:
Բայց մեկնում եմ՝ զգեստը չփորձած:
Շարունակությունը՝ հեռագրասյանը:

Աստղերի և աքաղաղի մասին. ուրիշ ոչինչ

14.08. 2013
Աչաջուր

Ուրիշ ոչինչ. ընդամենը երկու աստղ էի
քամել քեզնից:
Քեզ տեսել էի լուսադեմի դալկացող
փեղկերից մեկում. ուրիշ ոչինչ,
հանգչող կարմիրի մի խզբզոց՝
ծանր հյուսքերը կախած
մութ ջրհորդաններից:

Երբ աքաղաղականչերի մոխիրը ցնցվում էր
չբացված օրվա արտևանունքներին։
Ծղրիդների կանաչ ապարանքում
մարմինդ բարձր էր,
լցված աստղերի կարծր դատարկությամբ,
որ գիշերը սկսում է թարթել.
ուրիշ ոչինչ։
Հետո ճանապարհների երկար հյուսքերը
սկսում էին թրթռալ։
Ու վերջին համազարկի հետ
մատներս պոկել էի քո կոկորդից,
գրպանումս դրած երկու աստղ՝
պատանի աքաղաղի հետ
ընկել էի ճանապարհ։

Քամիների քարտեզներում

21.07.2013
ք. Ծաղկաձոր

Քամու ձեռքերում աշխարհը հանկարծ
դարձել էր այնքան իրական։
Քեզ տուն էի տվել իմ ապարանքում՝
մոխրագույն փոշուց մի հարկաբաժին։
Ապավինել էինք չորս բարդիներին։
Ու կտակել էինք երիցուկներին այն ինչքը, որ
մեզ էր պատկանում երկու օր ու կես։
Զգեստս կապույտ էր, անիմանալի։
Ու քեզ պոկել էի ես բազմախոստում,
այնքան խճողված այն քարտեզներից։
Ու կյանքը՝ դարձած մի դեղնափորիկ։

14.08. 2013
Աչաջուր

Ու կյանքը սկսել բարակ այս գծից,
որ մոտեցել է ասես սահմանին։
Դրանից անդին՝ մի քանի կտուր։
Լվացքը ննջում է տաք պարաններին։
Ձեռքերը նորից դառնում են հողին,
բայց ցողունները դեռ չեն տաքանում։
Պետք է սպասել։
Ու չափից դուրս մեծ է կսկիծը
սևուկ ճուտիկի։
Ու կյանքը սկսել բարակ այս գծից։

Արման Գրիգորյան
Նկարազարդումը՝ Վահագն Ղուկասյանի

2012-ի նեղ ջինսերով ամառը

2008-ի փետրվարին,
ընդամենը
10 օրվա մեջ
ամեն ինչ փոխվե՛ց:
Տոնակատարությունները
ու կիրակիները վերացա՛ն,
մրցակցություն,
շահագործում
ու խտրականություն
էլ չկա՛,
չկա՛ն օտարվածությունը, պարտադրանքն ու բռնությունը,
մեզ միացնում է
աշխատանքի անհետացումը,
սև ու ծանր գործը,
քյաշ փողը,
ստիպողական ծառայությունները,
էդ կարգի չեմ հիշում, թե էլ ինչերը…
Դրանք էլ չկա՛ն,
կառավարիչներն ու կառավարվողները չքացա՛ն,
գյուղերն ու
քաղաքները



նույնպես վերացա՛ն:
Բարև՛, մարդկություն,
մենք հաղթեցինք,
նավթի հորերի մեջ
չխեղդվեցինք:
Ողջո՛ւյն, երկրագունդ,
մենք
այս ամառ
միասին ենք պտտվում,
իսկ բենզինի
շարժիչներն անտիկվար
Երևանի
Պատմության թանգարանում են հանգչում,
քարե դարի ու բրոնզի,
երկաթի ու քարածխի
ժամանակների
գործիքների
հին ու մոռացված
զենքերի կողքին փոշոտվում
հիմա:

Միգուցե դեռ կան պոետներ,
որ փնտրում են
այս իրերը





ու երգում են
փառքը նրանց,
ով տառապել է
տեխնիկայից հետամնաց,
բայց ոչ դու ու
ես…
Որովհետև
մենք գովերգում ենք
ջրածնային շարժիչը
և կիսահաղորդիչը
նաև էլեկտրականությունը:



Հեծանվորդներն արեցին իրե՛նց
հեղափոխությո՛ւնը.
ամեն տեղ
կարող ես հանդիպել
ազատագրված մարդկանց`
մերկ, հպարտ ու լուրջ,
իրենք իրենց գտած,
զբաղված չեն նրանք
ու չեն շտապում,
ուտում են, խմում
կամ խաղ են անում,
չորս տարի առաջ



դրան սեքս էին ասում,
երևի դեռ կան նրանք,
որ հին ձևով են մտածում,
թե ծանր աշխատանք է սեքսը,
սերը այս կյանքում,
ոնց որ շախտյոր-ռոբոտի գործը,
տառապանքով է վաստակվում,
թող տենց էլ կարծեն,
նստեն իրենց բակում
ու մեր հետևից բամբասեն,



բայց ով
դուրս է եկել
իր տանից,
հասարակության սահմանից,
հանդիպել է հաստատ
ուրախ մարդկանց
………………………………………………
…………………………………………
………………………………
………………………
Հետաքրքիր է,
թե որտե՞ղ
կարելի է տեսնել
նրանց

-Խոսքի օրինակ՝
մենք
դեռ
հավաքվում ենք
Կարապի լճի շուրջ:
-Չէ հա…
-Լուրջ:



-Արա, շուշուտ խոսա,
հեռախոսիս զարյատկան նստում ա:
-Դե, ես չգիտեմ:
-Շոգ ա,
ու հավես չկա…
որովհետև
-Դե, միանգամից ասա,
որ ամաչում ես
քո փրչոտ մարմնից,
ճարպերից, սպիներից,
ու ծուռ ոտքերից:
-Հա, ինչ,
շորերի աշխարհը դեռ կա,



հո մի օրում չի վերանա:
-Լսի, Արո,
դու էլ հագի քո սքինի ջինսը,
վարդագույն մայկան ու կարմիր չարուխները,

չէ, ավելի լավ ա՝
էն նոր կեղերը:
Բա տնեցինե՞րը,
քույրերն ու եղբայրները,
ո՞ւր են իրանք,
իջել են
քաղաք՝ Օպերա,
Հըմմմ, դա,
գուաշով ու ֆլոմով
նկարում են
իրանց
մարմինների վրա,





շուրեր են նկարում,
դրոշներ,
լողազգեստներ,
ծաղիկներ ու
լիքը տեքստեր,
կոչեր,
լոզունգներ...
-Մերկ մարմինների վրա՞:
-Հա՛:
-Նարեկին տեսա՞ր,
դոշին գրել ա՝
էկոլոգիապես մաքուր վառելիք,





ու փորին էլ սլաք ա արել,
որ բոլորը նայեն սափրած առնանդամին,
Միերն էլ էր նույնը գրել...
-Նարեկից էր թխել:
-Չէ, տենց կլիպ ունեն,
ընտեղ իրանք բոլորը կան՝
Տեկտոնիկների իրանց տուսովկան,
բայց ասա, որ սուպեր ա, հա՞,
քույրիկների ու ընկերուհիների ներկայությամբ,
մամաների ու պապաների աչքի առաջ,
տատիկների ու պապիկների կողքին,
ոստիկանների դիմաց
ու էդքան բաց...
-Արո,
բա դու ռեպեր չէի՞ր:
-Դե հա:
-Պարզ ա:
-Ի՞նչը:
-Դե էն, որ ռեպերները ռաբի՛զ են
ու կոմպլեքսավորված:
-Դե, ես չգիտեմ,
հիմա ինչ,
լրիվ
հանվե՞մ,





բայց …
-Հենա, նայի
խոտերին պառկած
հավեսով
աղջիկներ ու տղերք են՝
կապույտ մաշված
տռուբա ջինսերով:
-Էլի հենա,
ընդեղ էլ կան կանգնած:
-Արո, հո չպետք ա համոզեմ,
մնա հագնված,
արի մոտենանք,
հետները ծանոթանանք,
կարող ա՝ մոտները ներկ լինի,
իմ վրա Մոնդրիանի
եռագույնը նկարի,
լավ չի լինի՞,
կնկարես, չէ՞…
-Խի չէ…
-Բարև, ախպեր,
-Բարև, ապե…



-Էս ո՞վ ա:
-Ի՞նչ ա ասում:



-Մանիֆեստ ա կարդում:
-Ինչքան էլ մարդ ա հավաքվել,
էն աղջկան գիտե՞ս...
-Ախպեր, սպասի լսենք…

Մենք հռչակում ենք կենդանի կյանքը՝ բացարձակ արժեք:
Մեզ պետք ա դեմոկրատիա,
Որ պաշտպանվենք չինովնիկից…
Դու քո սեփականությունն ես,
Դու պատկանում ես ինքդ քեզ,
Դու ունես,
Նա ունի,
Ես ունեմ,
Բոլորն ունեն իրավունք,
Հենց
Ապրելու փաստից
Դուրս բերվող
Բացարձակ իրավունք՝
Տնօրինել,
Չէ, ավելի լավ ա՝ ասենք
Կառավարել
Սեփական կյանքը,
Սեփական մարմինը,
Խոսքն ու արարքները





Ու մնացած բաները,
Որոնք արդեն վաղուց
Համարվում են անձնական,
Ու ամեն մարդ, ով ունի
Այս իրավունքները,
Պարտավոր ա հարգել
Նույն իրավունքները
Ուրիշների,
Մենակ սրանից հետո
Կարող ենք խոսել
Հավատից,
Բարոյականությունից,
Քաղաքականությունից…



-Պարզ ա:
-Արա, էս ո՞վ ա:
-Եսիմ ով ա:
-Ես նա եմ, ով դեմ ա բյուրոկրատիայի ու
հարուստների իշխանությանը,
հասարակական կյանքում
ամեն տեսակի խտրականությանը,



կեցցե՜ առանց բռնության
Հայաստանը:
-Փա՜ռք ինքնասեփականատեր աշխատավորին,

-Նեղ ջինսերով ջահելներին,
-Ելույթ ունեցողին,
-…ու իրան լսողներին…
-Ծափահարողներին,
-Լրիվ տկլորներին,
-Ապե, մերկը, էդ տկլորը չի, չէ՞…





Մեր մոտակա նպատակն ա
մշակույթի ստեղծումը, որը
հիմնված կլինի
բռնության արգելքի վրա…
:



Ես հարցնում եմ ձեզ՝
ե՞րբ է արտահայտվում մարդու ստեղծարար ոգին,
ճիշտ է, այն արտահայտվում է
իսկողության և շահագործման համակարգերի դեմ,
պայքարի մեջ

Մենք տալիս ենք
փիլիսոփայական մի հարց՝
կա՞ արդյոք կյանք մահվանից առաջ։
Մենք այս ամառ՝ 2012-ի Հայաստանում
հռչակում ենք
արտաքին աշխարհի և ներաշխարհի կոնֆլիկտի ավարտը։
……………………..
-Լավ, պարզ ա։
-Քել ընդեղ գնանք։
-Էն խոտերին պառկած
չփլախների մո՞տ։
-Դէ, հա էլի։



Անի Ասատրյան

ենթադրում եմ, որ ինչ-որ պատահարի արդյունքում կորցրել եմ հիշողությունս, որովհետև չգիտեմ՝ ես ով եմ, որտեղ եմ ծնվել, երբ ու հատկապես ինչու: ես մոռացել եմ, թե որտեղ է իմ տունը, որովհետև տուն չունեմ, ու չգիտեմ՝ ովքեր են նախորդներս, որովհետև չեմ հանդիպել նրանց: չեմ հիշում, թե որն է եղել իմ հարազատ լեզուն, որովհետև լեզուն, որով գրում եմ հիմա, ինձ խորթ է թվում, բառերը դժվար եմ իրար կապակցում ու միշտ մոռանում եմ ճիշտ բառերը: ենթադրում եմ, որ այնուհանդերձ ինչ-որ կրթություն ունեմ: երևի արվեստի հետ կապ ունեցող կրթություն: աղոտ հիշում եմ սպիտակ պատերով փոքր սենյակ, որտեղ միշտ ցուրտ էր, լույսերը մարած, ու սպիտակ պատին արդիության շրջանի արվեստագետների աշխատանքների ցածրորակ արտապատկերումներ էին իրար հաջորդում: ընդհատ հիշողությանս աղոտ պատառները, որ միակ ունեցածներս են, հենց էդ սենյակից են սկսվում: նույն սենյակում եմ գտել ընկերներիս: հույս ունեի իմ մասին ինչ-որ բաներ նրանցից իմանալ, բայց պարզեցի, որ իրենք էլ են հիշողությունը կորցրել: չեմ հիշում, թե երբվանից եմ գրել սկսել: հիշողությանս կորստից հետո՞, թե՞ դրանից առաջ: մի գիրք ունեմ՝ սպիտակ շապիկով: անվերնագիր: առաջին էջի տառերի հերթականությունը անվանս հետ է համընկնում: հույս ունեի այնտեղ իմ մասին ինչ-որ բան իմանալու, բայց ծայրից ծայր ջնջված է: ենթադրում եմ, որ գիրքն էլ է կորցրել հիշողությունը: միակ բանը, որ գիտեմ իմ մասին, գրելու անտիրապետելի ցանկությունն է: ոչինչ չի կարողանում ինձ կանգնեցնել: ենթադրում եմ, որ էդքան շատ գրելս էլ հիշողության կորստի հետ կապ ունի: երևի ինչ-որ պահի սկսել եմ ամեն ինչ գրառել, որ չմոռանամ: հիմա ամեն բան, ինչ գիտեմ իմ մասին, գրվածքներիցս եմ իմանում: գրում եմ, որ էլ չմոռանամ, ու կարդում եմ, որ կարողանամ հիշել:

մակուկաչու

…գրականությունն սկսվում է այն պահին,
երբ այն դառնում է հարց[1]:
մ. բ.

մակուկաչուն տարածությունից և ժամանակից դուրս փորձագրություն[2] է, որը տեսանելի չէ աչքով և ոչ էլ պատմելի՝ խոսքով: այն չունի սկիզբ և չի կարող երբևէ ավարտուն լինել, որովհետև անընդհատ վերսկսվելու և նորից ավարտվելու ներհատկություն ունի. սա վերժամանակյա և անտեղ կամ թափառող տեքստային հյուսվածք է, որի ներքին ժամանակը միշտ համընկնում է ընթերցման ժամանակին: այս թափառականը տձև է. նրա տձևությունը փոփոխական է՝ կախված տեղից, իսկ տեղը միշտ տարբեր է: «ես երևակայական շարժիչ եմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին:

մակուկաչուն երևակայական է. այն մարմին է ստանում միայն ընթերցվելիս և ցրիվ է գալիս դրա ավարտից հետո: ամեն նոր տեղում հայտնվելիս մակուկաչուի մարմինը նոր կերպ է առնում՝ կապված այդ տեղի այլ տեքստային

արտադրության հետ իր հարաբերություններից։ այս շարժիչ-փորձագրության կամ պատմվածքի յուրահատկությունն այն է, որ ցանկացած ընթերցող կարող է տեղադրել այն մտքին եկած ամեն տեղում, և մակուկաչուն կփոխակերպվի ու այդ տարածությանը բնորոշ ձև կընդունի, կսողա մյուս տեքստերի արանքում և դրանց մեջ, հետքեր կթողնի անծանոթ մարմիններում և երբուն կդարձնի դրանք։ մակուկաչուն կրծող որդ է հիշեցնում։ ամեն նոր հյուսվածքի հանդիպելիս այս որդը կրծոտում է այն ու բառերի ներսում անցքեր[3] է առաջացնում՝ ինքը նոր երանգ ու այլ ձև առնելով։ այս փորձագրությունը կամ պատմվածքը, ընկնելով ցանկացած ընթերցողի ձեռքը (օրինակ ապագայում՝ հարյուրավոր կամ հազարավոր տարիներ հետո) և հրապարակվելով ցանկացած տեղում, վերակառուցվելու է ըստ նոր տեղի՝ իր մեջ առնելով այդ ուրիշ ժամանակում ստեղծված բոլոր այն տեքստերի հատկանիշները, որոնց շարքում իրեն հրապարակել են։ «ես անմահ ու միշտ երիտասարդ եմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին։

ինչու՞ է մակուկաչուն երևակայական։ որովհետև այն գործարկվում է միայն այն ժամանակ, երբ հրապարակվում է որևէ տարածքում, որտեղ կան այլ տեքստեր։ մակուկաչուն ակտիվանում է միայն այն ժամանակ, երբ տեղ է գտնում ամենաբազմազան ձևի ու ոճի[4] տեքստային արտադրանքների շարքում։ տեղից դուրս այն իր սեփական հետքի մարմնավորումն է։ սրանով է պասիվ վիճակից ակտիվ վիճակի անցնելու համար տեղ ունենալը կարևոր մակուկաչուի համար։ «երբ շրջապատված չեմ այլ տեքստերով, ես վստահ չեմ, որ գոյություն ունեմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին։

որևէ տեղում՝ բանաստեղծությունների, պատմվածքների, էսսեների կամ անժանր բառային հյուսվածքների շարքում հայտնվելիս մակուկաչուն սկսում է հարցեր տալ այդ գրություններին։ այս կրծող որդն ամեն նոր տեղում փոխակերպվում և վերածվում է այն բանին, ինչ է այդ տեղը։ այն ներքին հատկություն ունի ձեռք բերելու նույնքան երևակայական մարմիններ, որքան տեղերում կհայտնվի։ ամեն նոր տարածքում մակուկաչուն փոխակերպվում է այլ պատմվածքի, քանի որ ինքնաձևավորվում է իր շուրջը գտնվող այլ տեքստերի միջոցով։

բոլոր այն գրությունները, որոնց շարքում հայտնվում է մակուկաչուն, դառնում են մակուկաչուի օբյեկտները։ մակուկաչուն հարցեր է տալիս այդ բազմաժանր[5] տեքստային արտադրություններին և պատասխաններից կառուցում իր երևակայական մարմինը՝ ամրագրելով այդ ժամանակը։ «իմ մի երեսակով ես պատմվածք եմ՝ կառուցված այն տեքստային արտադրանքներից, որոնց շարքում տեղադրվում եմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին։ մակուկաչուի մարմինն այն տեքստերի հավաքական պատկերն է, որոնց շարքում այն հայտնվում է։

ինչո՞ւ է մակուկաչուն վարակիչ։ մակուկաչուին ամբողջական պատկերացնելու համար կարևոր է իմանալ, որ այս յուրահատուկ կրծող որդը տեղակայվում է որևէ հարթակում՝ առանց պատկերացում ունենալու այնտեղ տեղ գտած այլ տեքստերի մասին։ ստացվում է, որ այն հարցեր է ուղղում իրեն անծանոթ տեքստերի, այսինքն՝ հարցերը կոնկրետ հասցեատեր չունեն՝ պատահական են։ «իմ զբաղմունքը պատահական հարցեր տալն է»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին։ անկախ այն բանից՝ կգտնվի՞ արդյոք գոնե մի ընթերցող, որը կփնտրի մակուկաչուի հարցերի պատասխանները, թե՞ ոչ, միևնույն է՝ եթե դրանք արդեն ուղղված են, ապա ներսից իսկույն կպչում են այդ տեքստերին՝ դրանց դարձնելով վարակակիր։ մակուկաչուն համոզված է,

որ անծանոթ տեքստերին ուղղելով այնպիսի պատահական հարցեր, որոնց մասին այդ արտադրանքները չեն մտածել, ինքը դրանց կրծվելու վտանգի տակ է դնում:

«ես իմ երևակայական մարմինը կառուցում եմ այն հարցերի պատասխաններից, որ աջուձախ տալիս եմ: որքան տարբեր տեղերում ես հայտնվեմ, որքան տարբեր պատասխաններ տրվեն, այնքան շատ մարմիններ կառնեմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին:

այս նորահայտ կրծողը համոզված է, որ արդի ժամանակների բոլոր հրատարակչությունները, գրական հանդեսները, տպագրվող բոլոր անթոլոգիաները, բոլոր խմբագրությունները շահագրգռված պիտի լինեն այս վիրուս-տեքստի մեկ օրինակ իրենց մեջ ներառելու համար:

ինչո՞ւ: մակուկաչուն պատահական հարցեր տալով շարքի բոլոր տեքստերին՝ երևան է հանում այն ընդհանուր պատկերը, որի շրջանակում դրանք գոյություն ունեն: «իմ մյուս երեսակով ես ինքնահռչակ լակմուսի թուղթ եմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին: մյուս կողմից՝ այս կրծող որդը, իրենից աջուձախ գտնվող տեքստերին անտեղի հարցեր տալով, ստիպում է դրանց երերալ, վարակիչ կապ է հրահրում միմյանց հետ կապ չունեցող արտադրությունների միջև, դրդում է այդ գրվածքներին վերջապես սկսել մտածել իրենք իրենց մասին՝ ինչպես ինքը՝ մակուկաչուն է անում: առաջանում է իրարանցում:

«ես բոլոր հնարավոր տեքստային հյուսվածքներից միակ իսկական ժամանակակիցն[6] եմ, որովհետև միշտ արտացոլում եմ այն ժամանակը, երբ հրապարակվում եմ: միևնույն ժամանակ ես դուրս եմ որևէ կոնկրետ ժամանակից և բոլոր ժամանակների մեջ եմ: ես ժամանակակից լինելու ինքնահռչակ խորհրդանիշն եմ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին:

մակուկաչուն ինքն իրեն այլ է համարում, որովհետև ոչ թե հորինվել է հեղինակի կողմից կամ համոզել է հեղինակին գրել իր մասին, այլ հեղինակը ծրագրել է իրեն: «ես երևակայական եմ. ես ոչ թե գրվել եմ, այլ ծրագրվել՝ որպես կրծող գիր-վարակ»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին:

մակուկաչուն այնպես է ծրագրված, որ նրան շրջանցելու որևէ հնարավորություն չկա: այն ակտիվանում է անմիջապես այն պահին, երբ x խմբագիրը «մակուկաչու» վերնագրով էլեկտրոնային նամակ է ստանում: սա նշանակում է, որ տվյալ տեղին տրվում է երևակայական շարժիչ ունենալու հնարավորություն: «ցանկացած x տեղի համար մակուկաչու ունենալը ժամանակակից լինելու և անշարժ վիճակի դեմ դիրքորոշում հայտնելու արարք է»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին: սակայն մակուկաչուն այնպես է ծրագրված, որ անգամ մերժվելու դեպքում այն չի վնասազերծվում: «մակուկաչուից հրաժարվելը նույնպես դիրքորոշում է, և դրանից նույնպես առաջանում են հարցեր»,– մտածում է մակուկաչուն ինքն իր մասին: հարցե՞ր: նշանակում է շարժիչը գործի է դրված:

այս ամբողջ նախաբանը նվիրված էր մակուկաչուի ներկայացմանը, և ես փորձեցի հնարավորինս մանրամասն պատմել ձեզ մակուկաչուի յուրահատկությունների մասին այն ամենը, ինչ հայտնի է ինձ, որովհետև մակուկաչուն մտածում է, որ ինքը բոլորովին նոր և անծանոթ երևույթ է այս իրականության մեջ: հաջորդ՝ վերջին հատվածում, ես գրի կառնեմ մակուկաչուի հարցերն այն հերթականությամբ, ինչ ինքը կտա:

իր տասը հարցերից առաջին հինգը մակուկաչուն ուղղում է իրեն նախորդող հինգ տեքստերին, վերջին հինգը՝ հաջորդող հինգին: եթե մակուկաչուն

առաջին տեքստն է, բոլոր տասը հարցերն ուղղվում են հաջորդող տեքստերին, եթե վերջինն է՝ նախորդող տասին:
– ինչո՞ւ է այս տեքստային արտադրանքում վերջակետը դրված նախադասությունների արանքում և ոչ՝ տառերի, կամ հակառակը,– հարցնում է մակուկաչուն առաջին տեքստին:
– ինչպե՞ս ընթերցեմ բառերի միջև գրված բացատներն այս ստեղծագործության մեջ,– հարցնում է մակուկաչուն երկրորդ տեքստին:
– ի՞նչ են նշանակում «ա» և «վ» հնչյուններն այս տեքստում,– հարցնում է մակուկաչուն երրորդ տեքստին:
– ի՞նչ գործ ունի քերականությունն այս գրավոր արտադրանքում,– հարցնում է մակուկաչուն չորրորդ տեքստին:
– ի՞նչ ավանդույթի հետ է առնչվում այս տեքստը,– հարցնում է մակուկաչուն հինգերորդ տեքստին:
– արդյո՞ք այս տեքստը լեզվի բանտից ազատագրվելու արարք է, ինչպե՞ս, իսկ եթե ոչ, ինչո՞ւ: նրա տեղը լեզվի բանտի ներսո՞ւմ է, թե՞ ուրիշ տեղ,– հարցնում է մակուկաչուն վեցերորդ տեքստին:
– որո՞նք են այս տեքստում այն բառերը, որոնք հանդես են գալիս որպես բառ և ոչ որպես անվանվող երևույթի վերապատկերում,– հարցնում է մակուկաչուն յոթերորդ տեքստին:
– ո՞րն է այս տեքստի մակերեսը,– հարցնում է մակուկաչուն ութերորդ տեքստին:
– ի՞նչ նոր հնարավորություն է ստեղծում այս տեքստը, ստեղծո՞ւմ է, թե՞ ոչ, ինչո՞ւ,– հարցնում է մակուկաչուն իններորդ տեքստին:
– ոչ թե ի՞նչ է, այլ ի՞նչ է անում այս տեքստը,– հարցնում է մակուկաչուն տասներորդ տեքստին:

[1] «admettons que la littérature commence au moment où la littérature devient une question. cette question ne se confond pas avec les doutes ou les scrupules de l'écrivain. s'il arrive à celui-ci de s'interroger en écrivant, cela le regarde ; qu'il soit absorbé par ce qu'il écrit et indifférent à la possibilité de l'écrire, que même il ne songe à rien, c'est son droit et c'est son bonheur. mais ceci reste : une fois la page écrite, est présente dans cette page la question qui, peut-être à son insu, n'a cessé d'interroger l'écrivain tandis qu'il écrivait ; et maintenant, au sein de l'œuvre, attendant l'approche d'un lecteur – de n'importe quel lecteur, profond ou vain – repose silencieusement la même interrogation, adressée au langage, derrière l'homme qui écrit et lit, par le langage devenu littérature.»

[2] փորձագրություն – փորձարարական գր\ական\ ություն

[3] անցնելու տեղ. ճանապարհ, դուռ, ծակ:

[4] մակուկաչուն համոզված է, որ նման բառ գոյություն չունի:

[5] ֆրանսերեն genre բառից, որ նշանակում է ճահիճ, քարացած ձև, կարծրատիպ, անշարժություն:

[6] ժամանակակիցը ոչ թե այսօրեականն է, այլ դուրս լինելը այն ժամանակից, երբ ապրում ես, դուրս լինելը հիմնական հայտարարված ժամանակային միտումներից: ժամանակակիցը ոչ թե առկա հնարավորությունների օգտագործումն է, այլ նոր հնարավորություններ ստեղծելու կարողությունը: ժամանակակիցը կենսունակության, շարժման, լարման ու հարցի հոմանիշն է:

Բառեր

Հերիք է աչքերդ փակես ու
մտքում մեկ անգամ բառերով կրկնես, որ
հայրդ չի մահացել, կլինի այնպես, որ
մահացողը հայրդ չէր:

Սկսում եմ հերթական փորձագրությունս[1]: Գրառումը հնարավորություն է ստանում միայն մի պատահարից հետո: Բառերի ժամանակը միշտ մի բանից հետոն է: Գրառելու համար պետք է իրերն ու երևույթները բառերի մեջ իրականացնելու անդիմադրելի կարողություն ունենալ. Աշխարհը բառերով իրականացնելու, քեզ բառերի մեջ իրականացնելու կարողություն:

1

Մի բան ավարտել կարողանալը մտասևեռում էր դարձել: Միշտ, երբ (*մոռացել է բառը*) իրականանալու շեմին էր հասել, ինքը թիկունք էր դարձրել: Քայլում էր սենյակի մի անկյունից մյուսը, մեկից մյուսը, մեկից մյուսը, մեկից մյուսն ու հաշվում ամիսները, որ մնացել էին ավարտելու համար:

Ավարտե՜լ:

Վերջացնե՜լ:

Դադա՜ր:

Մտքում հազար անգամ բոլոր մանրամասնություններով վերստեղծում էր օրերի հերթափոխի պատկերը, որոնք արդեն երկու տարի է՝ անընդմեջ հաջորդում էին իրար: Նույն օրն անընդհատ կրկնվում էր: Եթե մի քանի ամիս էլ ոչինչ չպատահեր, ուսումը կավարտեր:

Ավարտե՜լ:

Ամբողջացնե՜լ:

Ուրեմն ինքը զրկվելու էր կյանքի այս շրջափուլը բառե պատմության վերածելու հնարավորությունից:

Զրկվե՜լ:

Իզո՜ւր:

Զո՜ւր:

Երկու տարվա ընդմիջումից հետո նորից զգում էր անդիմադրելի կարողության սարսափեցնող ուժը, որ գլուխ էր բարձրացրել ու իրականացում էր պահանջում:

Երեկոյան երկու շիշ գարեջրից հետո ընկերոջը պատմեց կիսատ թողնելու մտադրության մասին: Հաջորդ օրն արդեն ափսոսում էր միտքը **բառերով** պատմած լինելու համար: Հիմա վստահ էր, որ էլի ոչինչ չի (*մոռացել է բառը*): Քայլում էր սենյակի մի անկյունից մյուսն ու փորձում **բառ** առ **բառ** վերհիշել երեկվա խոսակցությունը: Հույս ուներ, որ մտքինը գոնե սխալ **բառերով**[2] էր պատմել:

2

Կիսատ թողնելու անտիրապետելի ցանկությունը նորից գլուխ էր բարձրացրել: Նրա մեկնելուց անմիջապես հետո: Միասին ապրած արագ ամռան ամբողջ ընթացքում ինքը ոչ մի բառ չէր գրառել: Ջմռանն էին ծանոթացել: Սկզբում ամեն ինչ սովորական էր: Պատմությունը սկսվել էր աննշան բանի

մասին կարճ զրույցից: Տարբեր բաներից խոսելիս երկուսն էլ «**իսկական**» բառն էին արտասանել, ու ինչ-որ կարևոր բան էր փոխվել: Սկսվող կապի մասին տան ճանապարհին «**իսկական**» բնորոշված բառերով էր մտածում: Բառերն առաջին անգամ զիջում էին իրենց տեղն իրականությանը, որին «**իսկական**» բնորոշիչն էր տրվել: Ոչ մի կերպ չէր կարողանում կատարվածը բառերով մտածել, որովհետև այն արդեն սահմանվել էր որպես **իսկական**: Իրականությունը դադարել էր բառային հյուսվածք լինելուց: Այն **իսկական** էր:

Արագ ամռան ամբողջ ընթացքում որևէ բան կիսատ թողնելու ցանկություն իսկ չէր առաջացել: Իրականությունը բառերով փոխարինելու ցանկությունը գլխիվայր էր շրջվել: Բառերը, որ այդ արագ ամռան ընթացքում հոսող օրերից ու վայրկյաններից էլ շատ էին, միմիայն մեկ նպատակի համար էին հնչեցվում. **ի-րա-կա-նա-ցում**: Պատմություններն ամենահետաքրքիր տեղերում կիսատ թողնելու ու դրանք բառերով փոխարինելու գժական մղումն իր տեղը զիջել էր բառերով գրված բոլոր պատմություններն իրականացնելու կրծող ցանկությանը: **Ցանկություն**: Առավոտյան մի պահ աչքին ընկած գովազդային վահանակի պատկերը նույնությամբ իրականացվում էր նույն օրը երեկոյան: Որևէ նոր միտք՝ թեկուզ ամենավերացականը, կարդացած ամեն տեքստ՝ փիլիսոփայականից մինչև լրագրային, ականջի ծայրով լսած երաժշտական մի ֆրազ, էկրանավորված վեպից մի պատկեր կամ բանաստեղծության մեկ վանկ, որ կարող էր զբաղեցնել միտքը, մի քանի ժամ անց իրականացված պատմությունների էին վերածում: Բառերը, ձայները, զգացողությունները, մտքերը, պատկերները, տառերը, գծերը, ամեն ինչ քայքայվում էր իրականացված լինելու հաճույքի ծանրությունից: Հատկապես բառերը: **Բառերը**: Լույսի արագությամբ ամեն բան խժռող ուժի ազդեցությամբ բառերն իրականության մեջ համարժեքներ էին ձեռք բերել: Հնչած ամեն բառ անմիջապես առարկայի կամ գործողության էր վերածվում: Թվում էր, թե այդ ռիթմը, որ ամեն ինչ լցրել էր ալիքի անկանոն հոսունությամբ ու ժամանակը վերածել էր ընթացքի, անընդհատ էր: **Ռիթմը**: Ինքը ժամանակի իր ընթացքից արտաքսել էր բառերը՝ հույս ունենալով, որ գոնե այս անգամ իրականությունը չի ընկրկելու բառերի դեմ: Հիմա, երբ դրսում դանդաղ ձմեռ է, և երկուսին բաժանող տարածությունն անիրական չափերի, բառերը նորից հավակնում են փոխարինել աշխարհին:

3

Փոքր էր, երբ բացահայտել էր իրականությունը բառերի մեջ վերստեղծելու և բառերով աշխարհին տիրանալու մոգական ուժը: Դպրոցի[3] ճանապարհին, աչքերը պինդ փակելով, մտքում բառերով կրկնել էր. **«հայրը չի մահացել, հայրը չի մահացել, հայրը չի մահացել»**, և մահացողն այլևս երբեք իր հայրը չէր եղել: Նոր բացահայտած մոգական հմտությունը, երեխաներին բնորոշ ինքնավստահությամբ, սկսել էր ամեն տեղ փորձարկել: Կարճ ժամանակ անց բոլոր ընկերները համոզված էին, որ ինքն ապրում է աղախիններով լի հնաոճ առանձնատանը՝ կատարյալ երջանիկ ընտանիքում: Ինքը նույնպես վստահ էր: Ավելի քան: Ինքը **կարողանում էր** միայն մի պահ փակել աչքերն ու բառերով կրկնել մտքով անցած ցանկացած բան, և իրականությունը փոխակերպվում էր այն բառերին, որ մտքում արտասանել էր: Ժամանակի ընթացքում մոգական կարողության ամենատարբեր հնարքներ յուրացրեց: Հետո սկսեց ապրել մի տեղում, որտեղ ամեն ինչ բառերով էր ծածկված: Նույնիսկ ճարտարապետական հսկա կառույցների շաղախն ու երկաթբետոնն

էին բառե։ Հասցրել էր յուրացնել նաև ուրիշների իրականությունը բառերով վերստեղծելու հմտությունը։ Սա իսկական հայտնագործություն էր, մոգական **կարողություն,** որը բոլոր մանկական խաղերից ավելի գրավիչ էր։ Իր ծանոթներին անազն փոքրիկ զինվորների պես սկսել էր հերթով փոխադրել այդ բառե ճոճվող տարածության մեջ։ Ուսուցիչներին սովորական բնակարաններից տեղափոխել էր հսկայական լուսավոր առանձնատներ, ազատել էր բոլոր հոգսերից այնպես, որ կարողանային առանց որևէ կարիքի մասին մտածելու գրել իրենց կարևոր աշխատությունները։ Չէր բավարարվել այդքանով։ Այնքան էր հմտացել, որ մի օր նույնիսկ ընթերցել էր այդ աշխատություններից մեկը, հետո՝ մյուսը, ուրիշը, հաջորդը։ Մի երկուսն էլ թողել էր, որ հետո կարդա։ Ընկերներին տիեզերական կարևորության ազգանուններ էր տվել ու հետևողականորեն հսկել էր նրանց ամեն քայլը։ Պետք է համապատասխանեին նորանշանակ կոչումներին։ Եթե ոչ, նորից փակում էր աչքերը, մտքում բառերով կրկնում, որ իր ընկերներն այդ ազգանունավորներն էին, ու լինում էր այնպես, որ այդ ազգանունավորներն իր ընկերներն էին։ Իրականությունը նորից ճկվում էր։

4

Ոչինչ չիմացավ նրա ապրած օրերի մասին։ Համառորեն ոչինչ իմանալու համար մի բան էր պետք անել. խզել կապերը նրանց հետ, ովքեր բառերով պատմություններ անել գիտեին նրա մասին։ Հատկապես նրանց հետ։ Հեռավորությունն իր բառերի հնարավորությունն էր։ Ժամանակի այդ փուլն այնքան էր ծանրաբեռնել բառե շերտերով, որ հետո՝ երկու տասնամյակ անց, երբ նախապատմությունը վերհիշելու փորձ էր արել, պարզել էր, որ բառերն այնքան հաստ շերտ են դրել իրականության վրա, որ դրանք շրջանցելն արդեն ուրիշի կյանք կդառնար։ Էլ երբեք նման փորձ չէր արել։ Ջնջված **հիշողությունը** վերջնականապես փոխարինվել էր բառե **հիշողությամբ**։ Ցանկացած մեկին, ով կարող էր այլ **հիշողություն**[4] վկայել, մոռացել էր։ Միշտ, երբ հանդիպել էր մոռացվածներից մեկին, զարմացել էր, որ անծանոթը ճանաչել էր իրեն։

5

Ամեն տեղ բառերի հաստատուն ներկայությունն իր համար լինելու անհրաժեշտություն էր։ Բոլոր այն տեղերում, ուր բառերը չէին գերիշխում, ինքը վստահ չէր, որ գոյություն ուներ։ Սկզբում՝ երբեմն, իսկ ավելի ուշ՝ արդեն միշտ ստիպված էր լինում ընկրկել՝ բառային գոյությանը հնարավորություն տալու համար։ Ամեն բան **կիսատ** թողնելը երևի միակ կանոնն էր, որ կարողացել էր ձևավորել։ Պաշտպանելու համար։ Բառերը։ Հիմա, երբ դրսում դանդաղ ձմեռ էր, բառերի գերիշխանությանը տրվելու անդիմադրելի ցանկությունը նորից գլուխ էր բարձրացել։ Այս անգամ ուսումն էր **կիսատ** մնալու։ Հարմար բառեր էր փնտրում **կիսատ** թողնելը պատմության վերածելու համար։ Կիսատ թողնելը երևի միակ հնարավորությունն է բառերին տեղ տալու համար։ Ցանկացած հարաբերություն, գործողություն, պատմություն, որ կարող էր ամբողջականանալ ու ավարտվել լռության մեջ, վտանգ էր բառերի համար։ Այդպես, երբ հեռանում էր տնից ու պետք է վերջին կրակոցն արձակեր, ձեռքը դողացել էր։ Եթե կրակոցը հնչեր, ինչպես սովորաբար հնչում են աշխարհի բոլոր կրակոցները՝ bang-bang, ինքը կզրկվեր պատմության ավարտը բառերով իրականացնելու հնարավորությունից։ Ուրեմն հետո հազարավոր անգամներ փա-

կել էր աչքերն ու կրակոցի ձայնի հազարավոր մեղեդային վարիացիաներ էր մտածել: Այդպես, երբ սիրային հարաբերության մեջ էր լինում (դրանք միշտ մնում էին առկախված), հետո իր տղաները կամ աղջիկները անհեթեթ, շփոթված կանգնում էին այդ պատմության մեկ այլ՝ բառե տեսիլի առջև՝ սեփական պատմություններին անծանոթ ու անմասն: Վարպետորեն համադրված բառե իր տեսիլը բացարձակ իշխանություն էր ձեռք բերում իրականության վրա, ու այն նորից ճկվում էր:

6

Ինքն արդեն սովորել էր, որ երբ իրականությունը ձիերի երամակի պես ծառս է լինում բառային հյուսվածքների առաջ, հեռավորություն է պետք, որպեսզի բառերն իրենց ուժը վերականգնեն: Ու փակվում էր՝ բառային նոր ձևեր ու համադրություններ մշակելու: Երևի թե կղզում: Չէ: Իր չորսպատանի խորանարդի մեջ: Հա, էլի, նույնն է՝ թե կղզում:

***

Համալսարանի[5] առաջին տարում պատմության դասընթացը գերազանց ավարտելուց հետո որոշել էր աշխատել ոչ թե հիշողության զարգացման ուղղությամբ, այլ հակառակը: Հիշողության մեջ թշնամիներ են ապրում: Մտասևեռում ուներ, որ պատմական իրադարձությունները, թվերն ու մարդկանց անունները զբաղեցնելու էին իր հիշողության ամբողջ ծավալը, որ խնամքով պահում էր բառերի համար: Պետք էր ամեն ինչ ժամանակավոր հիշել: Սովորել, հետո իսպառ մոռանալ սովորածը: Նույն կերպ էր կարդում սիրած հեղինակների գրքերը: Կարդացածն անմիջապես մոռանալ էր պետք՝ հետո դրանք ուրիշ բառերով նորից գրել կարողանալու համար[6]: Այդպես՝ հիշողությունը պարբերաբար բռնի բեռնաթափման էր ենթարկում: Այնքան էր կատարելագործել այդ տեխնիկան, որ երեկ հետը պատահած ցանկացած բան հաջորդ օրն արդեն իսպառ մոռանալու իշխանություն ուներ: Այն ջնջված տարածքը, որ առաջացնում էր հիշողության մեջ, բառերի համար խնամքով բացված տարածությունն էր: Պետք էր ամեն բան մոռանալ, որպեսզի դրանք բառերով պատմելու հնարավորություն ստեղծվեր: Ուրեմն ստիպված էր մոռանալ սովորել՝ իրականության այլ հիշողություն կառուցելու համար:

7

Տեքստի 7-րդ հատվածը չի հիշում

8

(*չի հիշում բառը*) հասել էր մի տեղ, ուր խաղը հավակնում էր վերածվել իրականության: Զգում էր, որ բառային հյուսվածքների համադրողն արդեն ինքը չէր. հիմա դրանք էին ստիպում հարմարվել իրենց համադրություններին: Համադրությունների հիմքում որևէ սկզբունք չկարողացավ գտնել: Դրանք կամայական էին: Մի ժամանակ մոգական թվացող հմտությունը հիմա շարժիչի պես գործի էր դրվել ու անդադար աշխատում էր: Նախկինում իրականության վրա ներազդելու համար ինքը ստիպված էր լինում օրերով փակվել՝ բառային եզակի համադրություն գտնելու համար: Հիմա բառերը մեկ վայրկյանում կամայականորեն շարվում էին կողք կողքի՝ առանց որևէ համադրության անհրաժեշտության:

9

Ամեն ինչ մոռանալու մոլուցքը
Խըռթ
Բառի կարոտը
Խըռթ
Բացատները խզվածքները դատարկ տեղերը
Խըռթ
Ջրոյական ու թեթև ցեխոտ փրփրակալած թեթև անկշիռ զրոյական ու թեթև

10

Բառերով աշխարհին իրականացնելու կարողությունը եզրագծին էր հասել ձմռանը: Պատմությունները կիսատ թողնելու մոլուցքը՝ դրանք բառերում ավարտելու համար, ընկրկել էր: Փոխարենը սկսել էր բավարարվել հորինված իրադարձությունների մասին պատմություններ անելով: Բառերը հաստատել էին իրենց լիակատար գերիշխանությունը: (*չի հիշում բառը*) որևէ բան ձեռնարկելու կարիք չկար: Ցանկացած պատմություն պատմելն իսկ բավարար էր: Նույնն էր արել, երբ երկու շիշ գարեջրից հետո պատմել էր ընկերոջը, որ մտադիր է ուսումը կիսատ թողնել: Հերիք էր, որ մտադրությունը բառերով էր պատմել: (*չի հիշում բառը*) պատմելու վայրկյանին հենց ուսումը կիսատ էր մնացել: Առանց աչքերը փակելու՝ բարձրաձայն ասել էր. «Ուսումս կիսատ թողնելու մտադրություն ունեմ»: Եվ ուսումն ընդհատվել էր: Երկուշաբթի օրը հագել էր նրա նվիրած կոշիկներն ու գնացել էր դասի՝ համոզված, որ ուսումը կիսատ է մնացել:

***

Բառերը ձիերի պես ծառս էին եղել ու հրաժարվում էին շարունակել իրականությունը, հրաժարվում էին խմբագրել իրական պատմությունները. դրանք իրականություններն իրենցով փոխարինելու կարողություն ունեին: Աշխարհը ոչ թե շարունակություն էր գտնում բառարաններում, այլ աշխարհը սկսվում ու ավարտվում էր միմիայն բառարաններում:

Հ.Գ. Տեքստը կազմվել է 1821 բացատներից և 1844 կամայական բառերի կամայական համադրությամբ՝ ներառյալ հետգրությունը:

[1] Փորձագրություն – փորձարարական գրություն (experimental literature):
[2] Բառ – ֆանտազմ. Աղայան Էդուարդ. *Արդի հայերենի բացատրական բառարան,* Եր., «Հայաստան» հրատ., 1976:
[3] Դպրոցում իր անունը Հելեն Սմիթ էր: Հիշողությունը մոռացել է, թե այդ ժամանակ քանի տարեկան էր կամ որ թվին է դպրոց գնացել: Բայց եթե իր անունն այդ ժամանակ Հելեն Սմիթ էր, ուրեմն պետք է ծնված լիներ 1861-ին: Ուրեմն ինքը 1870-ականներին էր դպրոցական:
[4] Հիշողություններ – նյութեր, որոնք կրում են օրգանիզմի համար գենետիկորեն օտար ինֆորմացիա և օրգանիզմ ներթափանցելիս առաջացնում են սպեցիֆիկ իմունային պատասխան՝ հակամարմինների և T-լիմֆոցիտների միջոցով: «Հիշողություն» անվանվում են այն բոլոր նյութերը, որոնք օրգանիզմ ներթափանցելու դեպքում օրգանիզմի իմունային համակարգի կող-

միջ ճանաչվում են որպես օտար և ինդուկցում են իմունային պատասխանի ձևավորում:

[5] Համալսարանում իր անունը Հելեն Կելլեր էր: Հիշողությունը մոռացել է, թե այդ ժամանակ քանի տարեկան էր կամ որ թվին է ուսանող եղել: Բայց եթե իր անունն այդ ժամանակ Հելեն Կելլեր էր, ուրեմն պետք է ծնված լիներ 1880-ին: Ուրեմն ինքը 1900-ականներին էր ուսանող:

[6] Մեկը գրում է. «Երբեմն հեղինակը գրելիս է լինում կանխավ հղացած հաստատուն ծրագրով` փորձելով լուծել իր հարցադրումը կամ զարգացնել պատմության գիծը, երբ հանկարծ հեռանում է ուղեգծից: Հավանաբար` նրա մեջ թարմ միտք է առաջացել, կամ այլ պատկեր, կամ էլ մի ամբողջ նոր ենթասյուժե: Եթե հարցնես, թե ինչով է պայմանավորված այդ շեղումը, նա չի կարողանա պատասխանել: Հնարավոր է, որ նա չի էլ նկատել այդ փոփոխությունը, չնայած հիմա արդեն արտադրում է ամբողջովին թարմ և, ըստ երևույթին, նախկինում իրեն անծանոթ մի նյութ: Սակայն երբեմն կարելի է համոզիչ կերպով ցույց տալ, որ այն, ինչ նա գրել է, ակնհայտորեն նման է մեկ այլ հեղինակի ստեղծագործությանը. ստեղծագործություն, որը նա կարծում է, թե երբեք չի էլ տեսել»:

Սագօ Արեան

Չգրող Մարդու Աւետարան

Ընկերոջս՝ Վահան Իշխանեանին

Ես բանաստեղծութիւն չեմ գրեր:
Վերցուցէք փշրուած դաւերը եւ մառանի կերակուրը ձեր ամաններուն տարէք:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր, հանգիստ ու խելացի մարդիկ, աղմկարար մարդիկ:
Վիրաւոր աչքեր մի փնտռէք իմ սրտի երակներուն վրայ,
Կամ համազգեստիս գրպաններուն մէջ,
Որ ես պահած եմ մեծ թաղումներուն համար:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր կաւիճէ բառերով եւ յոգնած այս աղմուկէն որ կը պատէ ձեր հոգիի սենեակները:
Չեմ գրեր, գոլորշիին մէջ եղող խեղդեալ ու թեւնոցներ հագած կարմիր թէյ բերող սպասեակներու պէս:
Կարմիր թէյ, երկու հազար դրամով
Մինակութեան բոլոր սուլոցներէն անցնելու համար:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր տաղանդաւոր գրողներ,
Ճիշդ է պայուսակիս մէջ ՀԳՄ-ի կարմիր քարտն է մրցանակէ-մրցանակ ու թաղումէ-թաղում մաշուող բառիս հետ:
Անցեալի երգերը յիշատակելու համար:
Ցինիք, ծաղրական սեռային չբառերով զարմացնելու ձեր գրական աշխարհի բոզութիւնը:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր ծաղկաւոր հագուստներ հագած չղջիկ հոգիներ, ձեր մէջ կուսութիւնը կը տաշուի:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր մէկ ձեռքս սեռանդամիս վրայ:
Ըսելու համար, որ եկած եմ հաշտուելու ձեր աշխարհին հետ:
Ընկերներս ուրացած են անունս, ես չեկայ յօշոտուելու եւ շարքի կենալու մառանէն հաց գողցողներուն հետ:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր, Անուշին կտրուած թթի ծառերուն շոյանքը երակներուս մէջ պահելու պէս:
Չեմ գրեր յոգնած ու փրկութիւն սպասողի պէս:
Ես բանաստեղծութիւն օրէն չեմ գրած յօրանջելու պէս:
Ծալլած եմ անցագիրը հին ճանապարհին ու պայուսակիս մէջ ցաւի կափարիչներ են, որոնց վրայ կը սափրուի Պէյրութ մնացած գրամեքենայիս աղմուկը:
Կեղծիքի, նկարուելու, գիրքերուս տպագրութիւնը ապահովելու համար չեմ գրեր:
Մեռնելու, մահը սիրելու եւ Դուրեանի բերանէն ակրատ մը հանելու համար չեմ գրեր:
Ես Կարիկ Պասմաճեանին համար բանաստեղծութիւն չեմ գրեր: Անոր թաց մօրուքին, լուսէ Երուսաղէմին, անոր լքուած ճակատագրին ու մոռցուած ակնոցներուն համար չեմ գրեր:

Ես բանաստեղծութիւն չեմ գրեր մուրացկանի պէս, որպէսզի հիւր դառնամ ժամը տասը անց քսաներկուսի Պետրոսի հաղորդումին:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր մօրուքաւոր վարդապետներուն ձեռքը պագնելու պէս, որ զիս կանգնեցնեն բեմին ձախ անկիւնը եւ մեռնելուս համար աղօթեն:
Աղօթեն, որ հոգիս այս աշխարհիկ ցաւերէն հեռու երթայ ու հանգչի մամային ռունգերուն մէջ:
Բանաստեղծութիւն չեմ գրեր, որ զիս փայփայեն փուռէն նոր դուրս եկած հարիւր յիսուն դրամանոց Պուրի հացին պէս, յետոյ դանակներ խոթեն ու կտորկտոր ուտեն զիս:
Կամ պատիս վրայ փայլուն ստատուս մը տնկեմ անիծելու բախտը բառին, որ ամէն օր կախաղանի պարանով կը մեռնի:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր այս քաղաքի բանաստեղծին՝ Միհրին պէս, որ փոքրատառ գիրերով իր եւ Աւազին խօսակցութիւնները տետրակներուն մէջ հանապազօրեայ հացի պէս կը պահէ:
Չեմ գրեր իմ թաւիշ ընկերներուս համար, որոնք թաւիշ մօրուք ունին:
Չեմ գրեր բառի մուրացիկներուն պէս: Կամ անոնց պէս, որոնք իրենց կուսաթաղանթը շփոթած են բառի սրբութեան հետ:
Չեմ գրեր արագիլներուն կտուցին վրայ ըլլալու փափաքին համար: Ինծմէ ճամբորդող ոգիին համար: Կամ մեծ երկինքներուն մէջ բնակող Պոլսոյ մեռելներուն համար:
Քրիստոսի արեան կարմիր կաթիլներուն համար ես բանաստեղծութիւն չեմ գրեր: Կամ եկեղեցի կառուցող հեթանոսներուն պէս ես բանաստեղծութիւն չեմ գրեր:
Չեմ գրեր անոնց համար, որ սուտ են:
Դուն ԳՊ, դուն Գ, ու դուն ՝ Այբ Բեն Գիմ Դա Եչ Զա
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր:
Սրտիս մէջ մոխիր չկայ:
Իմ աչքերէս պիտի բուսնի ձիթենիի ծառը, եթէ հաւատամ:
Որուն վրայ դուք պիտի կախէք սեւ զէյթունի սեւ տուփերը ու խնդաք ափերուս մէջ եղող աստղերուն վրայ:
Ես աչք պիտի ըլլամ ձեզի, երբ մարմնէս դուրս գայ ցաւի եւ անիծեալ գրողի գոլորշին: Այս կեղտերէն, որ մայթի ծանր ու շերտաւոր սալիկներու պէս կը գլտորեն մեր սերունդը ողբին մէջ:
Ես բանաստեղծութիւն չեմ գրեր:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Վահե Ղուկասյան

Ես ծնունդով 1987 թվականից եմ ու եթե վիսկիի շիշ լիներ, պիտակիս վրա հպարտորեն գրված կլիներ՝ Since 1987… Այս ողջ ընթացքում ես գրել եմ լիքը պատմվածքներ, որոնցից մի քանիսը տպագրվել են «Գրեթերթում», «Հայկական ժամանակում», «Հրապարակում»: Մի պահ ես տպել եմ ինքս ինձ՝ «Այլ Քաղաք» թերթում, որի խմբագիրն ու հրատարակիչն էլ հանդիսանում եմ: Մի պատմվածք ունեմ՝ թարգմանված հունգարերեն ու մի քանիսը՝ ռուսերեն: 1987 թվականից այս կողմ, բացի մանկապարտեզից ու դպրոցից, ավարտել եմ ԵՊՀ արևելագիտականն ու աշխատել տարբեր վայրերում, ինչով հպարտանում եմ, երբ ուրիշ ոչինչ չեմ ունենում անելու: Ունեմ գրած նաև «Գրողի տարածը» վիպակը, որը, սակայն, հին է, ու պատրաստվում եմ գրել ավելի լավը:

փայտիկներ

Տանել չեմ կարողանում գրել գերեզմանների ու թաղման արարողությունների կարդաբալետի մասին: Զզվում եմ, երբ ձեռքս են խոթում «ժամանակակից մեծերից» մեկի գերեզմանային գլուխգործոցն ու սպասում, որ կարդալուց հետո հիացական բացականչություններ եմ անելու: Ոչ: Երբեք: Ինձ երբեք դուր չեն եկել մեռած տատիկ-պապիկների թաղումները նկարագրող պատմվածքները: Գրում եք՝ գրեք, միայն թե՝ մի փորձեք դա ինձ մատուցել որպես գրողի տարած գլուխգործոց:

Մեկը լիներ, ասեր՝ եղբայր, քեզ պես անճար ու խեղճ գրողի համար մի քիչ շատ են դիտողություններդ ու զզվանքներդ, մարդիկ ինչ կարող են, այն էլ գրում են, դու ես, որ նորմալ բան չես գրում: Ու մի քիչ համեստ պահիր քեզ, վերջ ի վերջո:

Հիմա հենց այսպիսի բան էլ, ճիշտն ասած, սպասում եմ լսել: Արդարացված կլինի: Ես գնալով վերածվել եմ գրական տկարության: Առաջվա տոննաներով պատմվածքներն այլևս չկան, փոխարենը՝ թեթև մանրդաժ և ժամանակ առ ժամանակ ատամները փրփուրով պատող գրական կատաղություն, երբ բախվում եմ ինչ-որ գերեզմանային ժամանակավրեպության:

Բայց եթե չչափազանցնեմ, ապա ես այդքան էլ վատ չեմ նայվում: Հիմա, կարելի է ասել, գրական որոշակի հասունության փուլ է, բլա-բլա-բլա, կուտակված պատմվածքները դեռ հրապարակվում են, բլա-բլա-բլա, երբեմն քիչ թե շատ աղեկվատ բաներ եմ գրում, բլա-բլա-բլա, իսկ ֆեյսբուքյան ստատուսները մեկ-մեկ կարող են մեկ-երկու-երեք-չորս քսուտ լայք հավաքել: Մի խոսքով՝ բլա-բլա-բլա: Ու մոռացա՝ իմ ալկովեպը կարդում են մինչև հիմա ու ինչ-որ մեկը ինչ-որ ժամանակը մեկ կգտնվի ու կասի, որ հրաշալի է իմ ալկովեպը: Բլա-բլա-բլա:

Ի դեպ, ալկովեպը գրելիս ես այնքան չեմ խմել, ինչքան այն ավարտելուց հետո: Հիշում եմ, որ հենց այդ օրերին էր տեղի ունենում մի գերեզմանային իրադարձություն, որին ականատես էի լինում էթիլային մառախուղների հետ-

նից: Դե լավ, համաձայն եմ՝ էթիլային մառախուղների մասը չափազանցված է, և իրականում խոսքը սովորական, կոշտուկոպիտ մարդկային անտարբերության մասին է: Ուրիշի դժբախտության հանդեպ: Միգուցե հենց այդ անտարբերության պատճառով էր, որ այդ ժամանակներից հետո գրելն անասելի դժվար դարձավ: Ասես մատներս ժանգոտեցին: Չնայած հենց սա իրոք հենց էթիլային մառախուղների պատճառով էր: Երևի:

Ի՞նչ էի ասում: Պատմում էի ահագին ժամանակ առաջ տեղի ունեցածի մասին, թեև միևնույն ժամանակ ասում էի, որ տանել չեմ կարողանում ու զզվում եմ գերեզմանային պատմվածքներից: Այն պատմվածքների, որոնցում տատիկ-պապիկի թաղումներ են նկարագրվում: Բայց ես կխուսափեմ բուն թաղման նկարագրումից, թեև ամեն ինչ շատ մոտ է: Իմ պատմածում էլ մահացածը տատիկ է: Անչափ ծեր ու անչափ հին մի տատիկ, ով այս աշխարհում իրենից հետո թողել էր միայն իր պես ծեր և իր պես հին մի ծեր պապիկի: Այս մարդկանց հետ ազգակցական կապ ես չունեի և այդ օրերի իրադարձություններին մասնակցում էի սովորական, կոշտուկոպիտ մարդկային անտարբերության շրջանակներում: Իսկ գերեզմանների ճանապարհին ծեր ու հին պապիկը պատմում էր, որ փայտեր է տաշել, որպեսզի խունկ վառի հողաթմբի վրա: Այդ մասին նա խոսում էր ողջ ճանապարհին: Ասում էր, որ փայտերը տաշել է, մի քանի ժամ տաշել է փայտերը, որ դրանք գերեզմաններում վառի և վրան խունկ լցնի, և դա պետք է, քանի որ ընդունված է գերեզմաններում խունկ վառել, և դրա համար փայտեր են պետք, որոնք էլ ինքը տաշել է: Չգիտեմ՝ ինչ էի մտածում ես այդ պահին: Մտածում էի, որ ինչ լավ ու բարի է այդ ծեր ու հին մարդը, որ ողջ գիշերը փայտեր է տաշել: Միգուցե, «տաշել» բառը ես պատկերացնում էի ավելի այլ կերպ: Օրինակ՝ քանդակել, փորագրել: Այդպիսի մի բան: «Ես փայտեր եմ տաշել, որ վառենք խունկը: Խունկը վերցրե՞լ եք»,- ասում էր ծերն ու հինը: Նրա հետ եկող նիհար ու միգուցե ինձ պես անտարբեր ազգականը ասում էր՝ վերցրել է: «Ես փետերը տաշել եմ»,- կրկնում էր հինն ու ծերը:

Երբ գերեզմանոցում թասը դրեցին հողաթմբի վրա, ծերն ու հինը գրպանից ցելոֆանով փաթաթած ինչ-որ բան հանեց: Դրա մեջ ևս մեկ ցելոֆան էր, հետո՝ ևս մեկը: Ցելոֆաններից հետո թերթի էջեր էին: Էլի մի քանիսը: Վերջին թերթի մեջ փայտի փոքր կտորներ էին: Մանր- մանր: Լուցկու հատիկներից մի քիչ հաստ: Երևի ժամանակին ինչ-որ տախտակ էր, որն այս ծեր ու հին մարդը կտրատել էր: Տաշել: Նա այդ տաշած փայտերը լցրեց թասի մեջ ու հետագա շուրջ քսան րոպեների ընթացքում ինքն ու իր նիհար-լղար ազգականը փորձում էին կրակ վառել: Կրակը պետք է կուլ տար այս մարդու հին ու երկար տարիների ամփոփիչ հոգատարությունն ու միգուցե՝ սերը: Նաև պետք է տաքացներ խունկը, որպեսզի այն հալվեր ու ծուխ տար: Ես նայում էի, թե ինչպես են մարդիկ փորձում վառել կրակը: Նրանց մոտ չէր ստացվում երկրորդ-երրորդ-չորրորդ անգամից: Չէր ստացվում: Գիտեք, որպեսզի կրակ վառես, ինչ-որ տարրական հմտություն է պետք: Կարող ես *տաշել* ամենաբարակ փայտերը, բայց կրակ ստանալու համար մեկ այլ գործողություն է պետք:

Վերադառնալու ճանապարհին ես վախենում էի նայել ծեր ու հին մարդուն: Նա անկարության մարմնավորում էր, որից ես ուղղակի սարսափում էի: Ես վախենում էի, որ ողջ կյանքը կարող է ամփոփվել *տաշել* գործողության մեջ: Կապրես-կապրես քեզ համար, կունենաս կին, ընկերներ, երեխաներ, տուն, իսկ հետո ի վիճակի կլինես ուղղակի փայտեր *տաշել*: Ես պինդ սեղմում էի ղեկն ու փորձում ինքս ինձ համոզել, որ գրողի ծոցն ուղարկեմ այդ մարդուն

էլ, իր ազգականին էլ, հողաթումբն էլ, տաշելն էլ, փայտիկներն էլ: Դա հեռու է ու անիրական: Ու նաև՝ տաշել-տաշել, ի՞նչ կա որ, բառ է, էլի, սովորական բառ, ի՞նչ գիտես՝ ո՞վ է այդ մարդը, կամ նրա նախնիների բարբառն ինչ նրբություններ է ունեցել:

Ո՛չ: Մոռանալ ինձ մոտ չէր ստացվում: Նույնիսկ ալկովեպի հետադարձ գոլորշիները չցրեցին այդ միտքը, ու հիմա, երբ ես հերթական անգամ կատաղած ու փրփրած բախվել եմ սպիտակ էջերի սառնությանը, սարսափում եմ մի օր գրական փայտիկներ տաշելու հեռանկարից: Ու գրողը տանի՝ ես հիմա գրում եմ գերեզմանների մասին, միայն թե լցնեմ այդ սպիտակ էջերը, միայն թե այդ սառնության մեջ տեսնեմ տառերիս ջերմությունը: Միայն թե համոզվեմ, որ փայտիկներն իմ մասին չեն:

Հ.Գ.1 Երբ այս մասին գրելուց հետո ես նույնը պատմեցի ալկովեպիս սիրահար հոգեբաններից մեկին, նա ասաց, որ սա նորմալ է, և իմ տարիքի տղամարդկանց մոտ ժամանակ առ ժամանակ արձանագրվում են ճգնաժամեր՝ կապված հասունության նոր փուլի հետ:

Հ.Գ.2 Ալկովեպը նախկինում կատարված խզբզոց է, որը միգուցե գոյություն չունի, իսկ միգուցե ունի և ուրիշ անվանում նույնպես ունի, ու հնարավոր է՝ դուք դա կարդացել եք, և միգուցե ձեր մտքով ևս անցել է, որ դա *ալկովեպ* անվանելն ավելի ճիշտ է, եթե, իհարկե, այն իրականում գոյություն ունի:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Էդիկ Պօղոսեան

Ավարտել եմ գեղանկարչական ֆակուլտետը, Թեհրանում: Քանի տարի առաջ տեքստի հետ լուրջ հարաբերություն սկսեցի: Ինձ գերեց Է.Է.Քամինգսի ու Գերտրուդ Սթայնի պոեզիան: Bot poetry-ի կողքով նույնպես չկարողացա անտարբեր անցնել: Զուգահեռ թարգմանում եմ իրանական ժամանակակից պոեզիա: Վերջին շրջանում կարդացածս գրականության մեծ մասը, իրանական պոեզիայից զատ, կազմում է «Եթեր» շաբաթաթերթը: Որոշեցի մասնագիտությունս ու մասսայական տեքստը խառնել՝ տեսնեմ ի՞նչ կստացվի: Տեխնիկան նոր չէ, բայց առաջին անգամն է, որ հայերեն տեքստի նկատմամբ նման վերաբերմունք է ցուցաբերվում: Ընտրված տեքստերը հեռուստաալիքների ծրագրերն են, առքուվաճառքի հայտարարությունները, ոչ թե շարադրված ու խմբագրված միաձույլ տեքստեր. սա է հիմնական տարբերությունը նախկին բոլոր փորձերից, որ տարածված է Արևմուտքում՝ որպես black out poetry: Արդյունքը տեսնում եք. անվանում եմ՝ «Մաքրագիր»: Այսքանը՝ վրձնից ինքնագիր:

Լուսանկարը՝ Լիլիթ Մուրադյանի


«Գրավիտացիա»
0
0
0
0
0
0
0
0
0
0
0
22.11.14
©Edik


Լռությունը լսելով
0 00, 0.00, 00, 00, 00,
0 0 0 0
00, 00
0, 0.00,
0, 0
00, 0 0
0
00
00, 00
0
00
00
0
00
00.00:
24.10.13
©Edik


«ԱՆՇՆՉԱՑԱԾՆԵ-
ՐԸ»
Ափ նետված
ընտա-
նիքը
ձ
կ
ն
ե
ր
ի
8.12.14
©Edik


ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
պատերի ֆանդում ուժով
սկսած 180.դր./կմ
Տրամադրվում է նաև
Գերեզման
սալիկապատ
25.04.13 ©Edik


Կանայք հրավիրում են տղամարդկանց
Մեկ ուրիշ աշխարհի
Հանե-լուկներով լի
Կինը փորձանքի մեջ է
Միայնակներին տրամադրվում է հան-րակացարան
2.12.14 ©Edik


«Լիկվիդացիա»
Հայաստան
Ճակատագրով
Արատավոր
03.11.13 ©Edik


Խորհրդարանն իրակա-նում
ազգային
Տելեմարկետ
Օրը ցերեկով
23.11.14 ©Edik


Ոճիր եւ պատիժ
Ատել ու
Վերջ
Դեռ միասին չենք
03.11.14


վերջին գործը
ՍԻՐՏԸ
ՔՆԱԾ Է
ՀԵՌԱՆԱԼ
03.11.14


10.50 Ճաշելու ժամն է
«Ամենալավ ամուսինը»
Բոլորի հետ առանձին
12.11.13
սություններ Եվգենի Եվտու-
շենկոյի հետ»


65-00-15
Մեր մեջ ասած
Կյանքը սեր է
Ազատ
Մանկական
Մեր մեջ ասած
Կյանքը սեր է
Բարո ու
հիմնական
12.10.14
1.15 ՀՌ «Մեր գյուղը»
2.00 Բարո երկուշաբթի


«100 երգ»
Հայի
հարցը
Թուրքիա-
յից
Գերմանիա
22.11.14

Թարգմանություն

Միշել Լերիս

Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Եվա Հակոբյանի

Միշել Լերիսը (Michel Leiris) ֆրանսիացի գրող է, արվեստի քննադատ, էթնոլոգ: Ծնվել է Փարիզում 1901-ին: Գրական գործունեության առաջին շրջանում ազդվել է սյուրռեալիստներից: 1929 թվականին աշխատել է Ժորժ Բատայլի հիմնադրած Documents ամսագրում: 1929 թվականից մինչև 1935 թվականը Լերիսը հոգեվերլուծության կուրս է անցնում, ինչի արդյունքում էլ ձեռնարկում իր առաջին խոշոր փորձը ինքնակենսագրականի ոլորտում՝ գրելով «Մարդու տարիքը»: Գիրքն էլ կարծես նույն հոգեվերլուծությունն է, որ հեղինակն այս անգամ անում է ինքն իր հետ՝ երևան հանելով իր գաղտնի ցանկություններն ու հույզերը: Հետագայում այս ստեղծագործությանը հաջորդում են «Խաղի կանոնները»՝ չորս հատորով: Լերիսը մայիս 68-ի ձախ հեղափոխական շարժման ակտիվ մասնակից է եղել: Սիմոն դը Բովուարի հետ միասին եղել է «Ժողովրդի հիմնահարց» մաոիստական ամսագրի համակիրներից: Այս դիտանկյունից ընթերցելով նրա ավելի վաղ գրված ստեղծագործությունը՝ շատ նուրբ երանգներ են ի հայտ գալիս անձնականի ու հասարակականի ձախ ընկալման մեջ: Լերիսը մահացել է 1990-ին Սենտ Իլերում:
1942 թվականին Հավր քաղաքում Միշել Լերիսը հանդիպում է Սարտրին, որը այնքան որոշիչ է դառնում, որ նա գրում է «Մարդու տարիքը» գրքի նախաբանը՝ այն վերնագրելով «Գրականությունը՝ որպես ցլամարտ»: Նախաբանը արձագանք է Սարտրի առաջ բերած «ներգրավված գրականության» թեմատիկային (այս թեմայով տե՛ս՝ Մարկ Նշանեան՝ «Հանգանակ մը»): Այստեղ հեղինակը համեմատում և փորձում է նույնացնել գրողի՝ ինքնախոստովանությամբ անկեղծանալու վտանգը ցլի դեմ մարտնչող մարտիկին սպառնացող վտանգի հետ: Եվ քանի որ խոսքը ինքնակենսագրական գրքի նախաբանի մասին է, ապա ճիշտ գրքի նման, նախաբանն էլ հարուստ է երկար, անվերջանալի թվացող նախադասություններով՝ հաճախ բացվող փակագծերով, ուր միտքը կարծես կտրվում է, հետո նորից վերագտնում ես թելը: Սա նման է ինքն իր հետ խոսող մարդու մտքի ընթացքին, երբ այն չի կառուցվում հստակ ու հակիրճ նախադասություններով, այլ պարույրաձև ու անկանոն թռիչքներ է կատարում:
Քանի որ նախաբանի մեջ հարկ եղավ թարգմանել նաև գրքի վերնագիրը, պետք է նշել, որ ֆրանսերենով այն կոչվում է l'Age d'homme: Homme բառը ֆրանսերենում ունի երկու իմաստ՝ մարդ և տղամարդ: Փորձելով հավատարիմ մնալ բնագրին՝ ճիշտ համարեցի թարգմանել «Մարդու տարիքը»՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «մարդ» բառը հայերենում նույնպես երկիմաստ է և երբեմն օգտագործվում է տղամարդ նշանակությամբ:

Գրականությունը որպես ցլամարտ

Հավատարիմ մնալով Ֆրանսիայի օրենսդրության հաստատած ժամանակային այն սահմանագծին, որին յուրաքանչյուր քաղաքացի ենթակա է ի ծնե՝ կարելի է ասել, որ 1922-ին է «Մարդու տարիքը» վեպի հեղինակը հասել կյանքի այն շրջադարձին, որից ներշնչվել է իր գրքի վերնագիրը: 1922 թիվ, չորս տարի անց պատերազմից, որ նա անցկացրեց, ինչպես իր սերնդի շատ տղաներ, երկարատև արձակուրդի նման՝ նրանցից մեկի բնորոշմամբ: Այդ թվից ի վեր նա այլևս սին հույսեր չուներ, թե իրական է այն կապը, որը տեսականորեն պիտի օրինական մեծամասնությանը օգտակար հասունությամբ օժտեր: 1935-ին, երբ նա ավարտին հասցրեց իր գիրքը, անկասկած երևակայում էր, թե իր գոյությունն արդեն բավարար չափով վայրիվերումներ ապրել է, որպեսզի կարողանար հպարտանալ, թե ի վերջո հասել է առնական հասունության տարիքի: 39 թվականին, տարի, ուր հետպատերազմյան երիտասարդությունը քանդում էր հարմարավետության այն կառույցը, ուր նա հուսահատորեն ջանացել էր դնել թե՛ իրական ոգևորություն և թե՛ մի սարսափելի տարանջատում, հեղինակը անկեղծորեն խոստովանում է, որ իր իրական «մարդու տարիքը» դեռ նոր պիտի գրի, երբ այս կամ այն ձևով կենթարկվի իր նախնիների նույն դառը փորձությանը:

Այսօր, փորձելով թեթևակիորեն հիմնավորել իր գրքի վերնագիրը, հեղինակը ճիշտ համարեց այն թողնել անփոփոխ՝ գտնելով, որ վերջիվերջո չի հակասում նրա վերջնական գաղափարին՝ կենսական կատարելության ամբողջականության որոնմանը, որ կհաջողվեր միայն կատարսիսից, անկումից առաջ: Դրա լավագույն գործիքներից մեկը այսպես կոչված «խոստովանության» գրականությունն է կամ գրական գործունեությունը: Բազմաթիվ ինքնակենսագրական վեպերի, օրագրերի, հուշատետրերի ու խոստովանությունների մեջ, որոնք արդեն մի քանի տարի է, ինչ արտառոց տարածում են վայելում (կարծես գրական գործի մեջ անտեսելով այն, ինչ ստեղծագործություն է և այն դիտարկելով միայն արտահայտչական տեսանկյունից, այնտեղ տեսնելով ոչ թե ստեղծված արդյունքը, այլ մարդուն, որ թաքնված է կամ իբրև թե թաքնված է դրա հետևում), «Մարդու տարիքը» ի հայտ է գալիս որպես հեղինակի մի փորձ՝ խոսելու առավելագույնս պայծառամտությամբ և անկեղծությամբ, առանց ավելորդ հավակնության: Մի խնդիր սակայն հանգիստ չէր տալիս հեղինակին և խանգարում էր գրելուն. այն, ինչ տեղի էր ունենում գրելու պրոցեսի մեջ, արժեքը չի՞ կորցնում արդյոք, եթե մնում է միայն «գեղագիտական», անմեղ, զուրկ բոլոր սահմանափակումներից, եթե ստեղծագործություն գրելու մեջ չկա ոչինչ, որ ունենա նույն նշանակությունը (այստեղ առաջ է գալիս հեղինակի սիրած պատկերներից մեկը), ինչ ցլամարտիկի համար ցլի սուր եղջյուրը, որն իր մեջ եղած նյութական սպառնալիքով մարդկային իրականություն է հաղորդում արվեստին՝ չթողնելով, որ այն մնա որպես սոսկ բալետի պարուհու դատարկ նազանք: Մերկացնել որոշ զգացմունքային կամ սեռական մտասևեռումները, խոստովանել ամենաամոթալի թերություններն ու թուլությունները, այսպես էր հեղինակը ցլի եղջյուրի ստվերը մտցնում գրական գործի մեջ: Դա կոպիտ միջոց էր անկասկած, բայց հանձնելով մարդկանց՝ հույս ուներ այն հարստացնել:

Սա էր այն նախաբանը, որ «տարօրինակ պատերազմի» նախօրեին գրում էի «Մարդու տարիքի» համար: Այն վերընթերցում եմ այսօր Հավրում, քաղաք, ուր որերորդ անգամ գալիս եմ արձակուրդս անցկացնելու մի քանի օրով, և որտեղ

ունեմ բազմաթիվ հարազատներ (ընկերներս՝ Լեմբուրը, Քենոն, Սալակրուն, որը դասախոս է այստեղ և որի հետ ես մտերմացա 1941-ին, երբ օկուպացված Ֆրանսիայում մնացած գրողների մեծամասնությունը միավորվել էին նացիստական ճնշման դեմ): Հավրը այս պահին մեծ մասամբ ավերված է, և ես դա տեսնում եմ իմ պատշգամբից, որը բավական հեռվից և բավական բարձրից նայում է դեպի նավահանգիստը: Այս դիրքը թույլ է տալիս իրապես գնահատել ռումբերի գործած ավերը, կարծես կենդանի արարածներով բնակեցված ամենաիրական աշխարհում կրկնվել էր դեկարտյան հայտնի օպերացիան: Այս համատեքստում անձնական այն տառապանքը, որի մասին խոսվում է «Մարդու տարիքը» գրքում, իրականում մեծ նշանակություն չունի: Ինչքան էլ մեծ լինի նրա ուժն ու անկեղծությունը, պոետի անձնական ցավը կշիռ չունի պատերազմի արհավիրքների դեմ և ատամի ցավ է հիշեցնում, որից բողոքելը անպատեհ է թվում: Աշխարհի այս տանջահար թոհուբոհի մեջ ի՞նչ է անում այս տկար հեծեծանքը նեղ անձնական ու սահմանափակ դժվարությունների մասին: Այդուհանդերձ Հավրում ամեն ինչ նույնն է, և քաղաքային կյանքը շարունակում է իր սովորական ընթացքը: Կանգուն մնացած տների, ինչպես նաև ավերված վայրերի վերևում, չնայած անձրևոտ եղանակին, մերթընդմերթ հայտնվում է պայծառ ու սիրուն արև: Ջրամբարներն ու շողշողացող տանիքները, հեռվում երևացող փրփրոտ ծովը և ավերված թաղամասերի հսկայական զանգվածը (որոնք վաղուց ամայացել էին ինչ-որ տարօրինակ իրար հերթագայող մշակումների բերումով…), ինչպես կասեին օդերևութաբանները՝ գտնվում էին խոնավության ազդեցության տակ, որի միջով երբեմն ծորում էին արևի ճառագայթներ: Մոտոցիկլները դղրդում են, տրամվայներն ու հեծանվորդները անցնում, մարդիկ աննպատակ քայլում են կամ հապճեպ ինչ-որ տեղ շտապում, և մի խիտ ծուխ է բարձրանում: Ես նայում եմ այս ամենին՝ մի անմասնակից հանդիսատես (այդ ամենի մեջ ոտքիս ծայրն է միայն թրջվել) և անամոթաբար ինձ իրավունք եմ վերապահում հիանալ այս կիսաամայի տեսարանով, որպես մի գեղեցիկ կտավ՝ գնահատելով ստվերն ու լույսը, հոգեխռով մերկությունն ու դյութիչ խլրտանքը: Դեռևս բնակեցված այս վայրում տեղի է ունեցել ողբերգությունը, որից դեռ մեկ տարի էլ չի անցել:

Այսպիսով, ես երազում էի ցլի եղջյուրի մասին: Չէի ուզում լինել միայն գրականության մարդ: Ցլամարտիկը, որ վտանգը առիթ է դարձնում ավելի քան երբեք փայլուն լինելու, ցույց է տալիս իր ոճի ողջ որակները այն պահին, երբ սպառնալիքը ամենից մեծն է. ահա թե ինչն էր ինձ հիացմունք պատճառում, ահա թե ես ինչ էի ուզում լինել:

Ինքնակենսագրականը վերաբերում է այնպիսի մի բնագավառի, ուր խոստովանությունը պետք է խիստ վերապահումով լինի, քանի որ դրա իրապաբակումը ինձ համար վտանգներով լի էր. ինչքան այն հստակ լիներ, այնքան պետք է դժվարին ու վարկաբեկիչ լիներ անձնական կյանքիս համար: Եվ ուրեմն ինքնակենսագրականը այն միջոցն էր, որով ես ձգտում էի ազատագրվել մի շարք խանգարող պատկերացումներից, դրա հետ մեկտեղ առավելագույն մաքրությամբ գծագրել իմ բնավորության գծերը՝ թե՛ իմ և թե՛ այլոց աչքին սխալ տպավորությունները վերացնելու համար: Որպեսզի կատարսիսը և իմ ազատագրումը տեղի ունենային, անհրաժեշտ էր այս ինքնակենսագրականին որոշակի ձև հաղորդել, ձև, որը կկարողանար ինձ ոգևորել՝ միևնույն ժամանակ հնարավորինս լսելի դառնալ ուրիշների համար: Այս նպատակին հասնելու համար ես հույս դրել էի այն խստապահանջ խնամքի վրա, որով ես պետք է վերաբերվեի գրությանը, ողբերգական այն շողի վրա, որով լուսա-

վորված կլիներ իմ ողջ պատմությունը՝ այնպիսի խորհրդանիշներով, որոնք ես գործածել էի նրա մեջ, օրինակ՝ աստվածաշնչյան կերպարներ դասական անտիկ աշխարհից, թատրոնի հերոսներ կամ էլ Ցլամարտիկ, հոգեբանական առասպելներ, որոնց նորարար արժեքը ինձ հանգիստ չէր տալիս, և որոնք աշխատանքի գրականագիտական տեսանկյունից, մի քանի գլխավոր թեմաների հետ միասին, կազմում էին այն հնարքները, որ մի ակնհայտ մեծություն էին բերում մի տեղ, ուր ես հստակ գիտեի, որ այն չկա: Բծախնդրորեն և հնարավորինս ինձ նման պատկերել այն կերպարը, որ ես էի (ինչպես ոմանք փայլուն կերպով նկարում են տհաճ բնապատկերներ կամ առօրյա պարագաներ), թողնել, որ արվեստի հոգսը միջամտի միայն ոճին և կառուցվածքին, ահա այս խնդիրներն էի առաջս դրել՝ կարծես նախապես իմանալով, որ նկարչի իմ տաղանդը և մտքիս օրինակելի պայծառությունը, որ ես պետք է կարողանայի ապացուցել, կփոխհատուցեն մոդելի իմ միջակությունը, ու կարծես այս նախաձեռնության խենթությունը բարոյական ինչ-որ աճի պետք է հանգեցներ, անգամ եթե չէր վերացնելու իմ որոշ թուլություններ, ապա առնվազն ինքս ինձ պետք է ցույց տար, որ ես ունակ եմ կրել դեպի ինձ ուղղված այս անաչառ հայացքը: Բայց ես մի բան չգիտեի, որ ներհայեցումի հիմքում ընկած է ինքն իրեն նայելու հաճույքը, և որ ամեն մի խոստովանության խորքում թողության ցանկություն է թաքնված: Անաչառ հայացք զցել ինքս ինձ վրա նշանակում է նայել ինքս ինձ, աչքերս գամել ինձ վրա, փոխանակ հեռուն գնալու, ինձնից այն կողմ մարդկայնորեն ավելի լայն ինչ-որ բանի վրա: Այլոց առաջ մերկանալս իրագործելով մի գրությամբ, որ ուզում էի լավ շարադրանք և կառուցվածք ունենար, հարուստ լիներ հուզիչ ակնարկներով, նույնն է, թե փորձեի մարդկանց գայթակղել, որպեսզի իմ հանդեպ ներողամիտ գտնվեն, կամ թե ինչ-որ ձևով մեղմացնեի սկանդալը՝ տեքստին հաղորդելով գեղագիտական ձև:

Եվ ուրեմն կարծում եմ, որ եթե մարտահրավերը նետված էր, իսկ ցլի եղջյուրը՝ խաղի մեջ, ոչ առանց փոքր-ինչ երկերեսության էր, որ ես համարձակվեցի այս արկածախնդրության մեջ մտնել՝ մի կողմից տեղի տալով իմ ինքնասիրահարված ձգտումներին, մյուս կողմից՝ փորձելով ուրիշների մեջ փնտրել ոչ այնքան դատավոր, որքան համախոհ: Ցլամարտիկը նույնպես, որ թվում է՝ իրեն մահվան վտանգի է ենթարկում, խնամում է իր մարմինը և վտանգի հանդեպ հաղթանակ տանելու համար հույսը դնում իր տեխնիկական խորաթափանցության վրա: Բայցևայնպես ցլամարտիկի համար գոյություն ունի մահվան իսկական սպառնալիք, իսկ արվեստագետի համար՝ ոչ, կամ գուցե կա, բայց արվեստից դուրս է (օրինակ՝ գերմանական գրավման ժամանակ ընդհատակյա գրականությունը իրենից ինչ-որ վտանգ ներկայացնում էր, բայց միայն այն չափով, երբ ավելի համընդհանուր պայքարի մաս էր կազմում, և ի վերջո, ինքնին գրությունից անկախ էր): Եվ ուրեմն արդյոք հիմնավորվա՞ծ է համեմատությունը, «ցլի եղջյուրի ստվերը գրական գործի մեջ» մտցնելու փորձը: Գրելու փաստը կարո՞ղ է արդյոք այդ մասնագիտությամբ զբաղվող մարդուն ենթարկել մի վտանգի՝ անգամ եթե ոչ մահացու, այլ գոնե նվազագույն չափով դրական: Գիրք գրելը որպես մի արարք, սա էր, խորքում, նպատակը, որին ինձ թվաց պետք է ձգտեմ, երբ գրում էի «Մարդու տարիքը»: Արարք հենց ինքս իմ հարաբերությամբ, քանի որ հենց այս բանաձևի շնորհիվ գրելու ընթացքում առանց լրիվ պարզաբանելու լուսաբանվում էին դեռևս մութ մնացած որոշ բաներ, որոնց հանդեպ հետաքրքրությունս հոգեվերլուծությունն էր արթնացրել, երբ ես որպես հիվանդ անցնում էի բուժման կուրս:

Արարք ուրիշի հարաբերությամբ, քանի որ ակնհայտ էր, որ չնայած իմ

հռետորական նախազգուշությանը, մարդկանց հայացքը իմ հանդեպ այլևս չէր լինի այն, ինչ կար այս խոստովանության հրատարակությունից առաջ: Եվ վերջապես, արարք գրական հարթության հարաբերությամբ, ցուցադրելու խաղաքարտերի մյուս երեսը, ոչ շատ գրավիչ իրողությունները իրենց ողջ մերկությամբ, իրողություններ, որոնք այս կամ այն չափով քողարկված դիտավորյալ արված փայլփլուն շղարշի տակ կազմում են իմ մյուս գրությունների առանցքը: Այստեղ խոսքն այնքան էլ այսպես կոչված «ներգրավված գրականության» մասին չէ, այլ այնպիսի գրականության, որի մեջ ես էի փորձում ներգրավվել ամբողջ էությամբ: Սպասումով, թե այն ինձ կփոխի ներսից և դրսից, ինձ օգնելով գիտակցել, և որ ուրիշների հետ հարաբերությունների մի նոր մասնիկ կբացահայտի ինձ համար՝ սկսած հարազատներիս հետ հարաբերություններից, որոնք գուցե այլևս նույնը չլինեն, երբ հրապարակեի այն, ինչի կասկածն արդեն իսկ ունեին, չնայած այն դեռ խիստ անորոշ էր: Ցանկություն չկար լինել ցինիկորեն կոպիտ: Ավելի շուտ, ամեն ինչ խոստովանելու մի մղում նոր հարթություններ գրավելու՝ պահելով հարգանքի ու սիրո այն զգացումը, որոնք այլևս զուրկ էին խաբեությունից: Զուտ գեղագիտական տեսանկյունից ինձ պետք էր խտացնել փաստերի և պատկերների մի ամբողջություն, իրենց հումքային վիճակում, որոնց ես մերժում էի ենթարկեցնել իմ երևակայության հոքին. ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ սա վեպի ժխտումն է: Մերժել յուրաքանչյուր առասպելաբանություն և որպես նյութ ընդունել միայն ճշմարտությունը (և ոչ թե ճշմարտանման իրադարձությունները, ինչպես դասական վեպերում), ողջ ճշմարտությունը և ոչ մի բան, բացի ճշմարտությունից: Սա էր իմ ընտրած կանոնը: Նման մի ճանապարհ արդեն բացել էր Անդրե Բրետոնը իր «Նադյա»-ով[1], սակայն իմ երազանքն էր հանձն առնել, որքանով հնարավոր է, այս նախագիծը, որ Էդգար Պոյի Մարգինալիայից[2] Բոդլերի ներշնչվելու արդյունքն էր. սիրտդ մերկացնել, գրել այս գիրքը քո մասին, ուր այնքան մեծ է անկեղծ լինելու ցանկությունը, որ, ինչպես հեղինակն է ասում՝ «թուղթը կկնճռոտվի և կբոցկլտա կրակաշունչ գրչի ամեն մի հարվածից»:

Տարբեր պատճառներից ելնելով՝ գաղափարական տարբերություններ, անձնական խնդիրներ, որոնց մասին խոսելը անտեղի կերկարացներ այս գրությունը, ես խզեցի կապերս գերիրապաշտության հետ: Սակայն փաստ է, որ ես ամբողջովին ներծծված եմ դրանով: Ընկալունակ լինելով այն ամենի հանդեպ, ինչը մեզ թվում է ի վերուստ տրված, չնայած մենք այն երբեք չենք փնտրել (ներքին մի թելադրանքի կամ պատահական մի հանդիպման նման), երազների հետ կապված բանաստեղծական մի արժեք (որ միաժամանակ հարուստ է համարվում իր բացահայտումներով), ֆրոյդյան հոգեբանության հանդեպ մեծ հավատ (որը գրավիչ պատկերների մի նյութ է խաղի մեջ դնում և, ի միջի այլոց, յուրաքանչյուրին մի հարմար միջոց է տրամադրում բարձրանալու մինչև մի ողբերգական հարթություն՝ ինքն իրեն երևակայելով մի նոր Էդիպ), զզվանք ցանկացած հարմարեցման կամ համաձայնեցման հանդեպ, այսինքն՝ մի խաբուսիկ փոխզիջում իրական փաստերի և երևակայության մաքուր արգասիքների միջև, պահանջմունք առ անվայելչություն (օրինակ՝ սիրո մեջ, որը բուրժուական կեղծավորությունը չափազանց հեշտությամբ դարձնում է վոդևիլի նյութ կամ մղում ինչ-որ անիծյալ մի հարթություն): Սրանք են, ընդհանուր առմամբ, այն հիմնական կետերից մի քանիսը, որոնք շարունակ իմ մեջ էին՝ խճճված բազմաթիվ աղբերով և ոչ առանց հակասությունների, երբ իմ մեջ միտք առաջացավ գրել այս գործը, ուր առերեսում են մանկական հուշերը, իրական դեպքերի պատմությունները, երազները և իրապես զգացած տպա-

վորությունները, մի գերիրապաշտ կոլաժի կամ, ավելի ճիշտ՝ մի լուսանկարչական մոնտաժի ձևով, քանի որ այնտեղ չկա ոչ մի տարր, որ չլինի խստորեն հավաստի կամ չունենա փաստագրական արժեք: Իրապաշտության հանդեպ նման կողմնապահությունը, ոչ թե ձևական, ինչպես սովորաբար լինում է վեպերի մեջ, այլ դրական (քանի որ խոսքը բացառապես ապրածի և այն առանց նվազագույն խեղաթյուրման ներկայացնելու մասին էր), ինձ պարտադրված էր ոչ միայն իմ առջև դրված գործի բնույթով (ամեն ինչ վերլուծել ինքս իմ մեջ և ինքս ինձ գաղտնազերծել հանրության առաջ), այլ համապատասխանում էր նաև գեղագիտական հստակ մի պահանջի. խոսել միայն փորձառությամբ իմացածի և ամենամոտ ձևով ինձ առնչվածի մասին, որպեսզի հնարավոր լիներ իմ ամեն մի նախադասությանը յուրահատուկ մի խտություն, հուզական մի ամբողջականություն հաղորդել, այլ կերպ ասած՝ «բնականին» հատուկ մի որակ: Լինել ճշմարիտ, հասնելու համար մի արձագանքի, որ դժվարությամբ կարելի է սահմանել և որին «բնական» բառը չի կարող լիարժեք բացատրություն տալ (այն բազմազան կիրառություն ունի՝ մասնավորապես զուտ բանաստեղծական ստեղծագործությունների մեջ). ահա սա էր իմ ձգտումը՝ գրելու արվեստի մասին իմ ունեցած պատկերացումը համադրել գրի հանդեպ իմ տածած պատասխանատվության բարոյական գաղափարի հետ:

Վերադառնալով ցլամարտիկին՝ ես գտնում եմ, որ նրա համար նույնպես կան օրենքներ ու ինչ-որ «բնականություն», որ նա չի կարող խախտել, քանի որ իր խաղացած ողբերգությունը իրական է, այնտեղ նրա արյունն է հոսում, և վտանգի ենթարկվում սեփական մաշկը: Կարևոր է իմանալ, թե նման պայմաններում բառախաղ չէ՞ արդյոք այն հարաբերությունը, որ ես հաստատում եմ ցլամարտիկի և իմ բնականության միջև:

Միանգամայն հստակ է, որ ինքնակենսագրական գրելն ու հրատարակելը այդ գործի պատասխանատուի համար մահացու վտանգ չի ներկայացնում, բացի հատուկ հանգամանքներից (եթե իհարկե գրողը չի արել այնպիսի հանցանք, որի խոստովանության համար կենթարկվեր մահապատժի): Նա անկասկած տանջվելու է հարազատների հետ հարաբերություններում, հասարակության կողմից անարգանքի արժանանալու վտանգին է ենթարկվում, եթե նրա խոստովանությունները չափազանց դեմ են ընդունված կարծրատիպերին: Սակայն հնարավոր է՝ չլինելով անգամ մաքուր ցինիկ, այնքան էլ արժեք չտա նման հետևանքներին (անգամ բավարարության զգացում ունենա, եթե այդկերպ կարծում է կառողջացնի իր շուրջը ստեղծված մթնոլորտը), հետևաբար նա մղում է իր պայքարը՝ իր առջև ունենալով լիովին ձևական մարտահրավեր: Ինչ էլ որ լինի, նման բարոյական խիզախումը չի կարող համեմատվել այն նյութական վտանգի հետ, որին բախվում է ցլամարտիկը, անգամ եթե ընդունենք, որ քանակական հարթության վրա նրանք կարող են ընդհանրություն ունենալ (եթե մեկի հետ կապվածությունս կամ ուրիշների կարծիքը ինձ համար նույնքան կամ ավելի կարևոր են, քան նույնիսկ իմ կյանքը՝ չնայած այս բնագավառում ավելի հեշտ է ինքդ քեզ խաբելը), այն վտանգը, որին ես ինձ ենթարկում եմ հանրորեն հրապարակելով իմ խոստովանությունը, որակական հարթության վրա արմատապես տարբերվում է այն մշտական վտանգից, որին իր մասնագիտության բերումով ենթակա է ցլերին սպանողը: Ինչքան էլ մեծ լինի ինքն իր մասին ճշմարտությունը հայտարարելու քայլի բերած կատաղությունը (նրանց, ում սիրում ենք, դրանից պիտի որ տանջվեն), ինչպիսին էլ լինեն դրանից բխած ավերները, այն միևնույն է, շատ տարբեր է սպանությունից: Ուրեմն արդյոք պե՞տք է սխալմունք համարել իմ գտած այս

համանմանությունը, որն իմ կարծիքով գծագրվում է գործելու և վտանգի են-թարկվելու այս երկու դիտարժան ձևերի միջև:

Վերևում ես խոսեցի հիմնարար կանոնի մասին (ասել ողջ ճշմարտությու-նը և միայն ճշմարտությունը), որին ենթակա է խոստովանություն անողը, ես ակնարկեցի նմանապես այն հստակ վարքագիծը, որին պայքարի ժամանակ պետք է հարմարվի ցլամարտիկը: Նրա համար, պարզվում է, կանոնը ոչ թե իրեն պաշտպանելու միջոց է, այլ ընդհակառակը, նպաստում է, որ նա ինքն իրեն վտանգի ենթարկի. օրինակ՝ նախքան ցլին վերջին մահացու հարվածը հասցնելը կանոնը պահանջում է, որ ցլամարտիկը մարմինը մի որոշ ժամա-նակ պահի եղջյուրներին շատ մոտ: Հետևաբար ուղղակի կապ կա կանոնի պահպանման և վտանգի չափի միջև: Բայց և այնպես, եթե չընկնենք չա-փազանցությունների մեջ, խոստովանություն անող գրողը ինքն իրեն չի՞ են-թարկում արդյոք իր ընտրած կանոնի խստությանը ուղղակիորեն համարժեք վտանգի: Քանի որ ասել ճշմարտությունը, և ոչինչ բացի ճշմարտությունից, դեռ ամենը չէ: Այն պետք է նաև շիտակ ասել և առանց այնպիսի ձևականու-թյունների՝ որպիսիք են հարգանք ներշնչող վեհաշուք մեղեդիները կամ ձայնի մեջ տագնապն ու հեկեկոցը, որոնք գունազարդում ու ոսկեջրում են ասելիքը և որոնց արդյունքում ճշմարտությունը այսպես թե այնպես կեղծվում է՝ մեղ-մացվում է նրա դաժանությունը, իսկ նրա բերած ցնցումը՝ պակաս զգալի է դառնում: Վտանգի մեծությունը կախված է կանոնը հարգելու հանգամանքից. սա է այն փաստը, որին ես հասա շնորհիվ այն համեմատության, որ հարմար տեսա կատարել, առանց շատ մեծ հանդգնության իմ՝ որպես խոստովանու-թյուն անողի և ցլամարտիկի միջև: Եթե ամենասկզբում ինձ թվում էր, թե իմ կյանքի մասին էրոտիզմի տեսանկյունից գրելը (նախընտրելի տեսանկյուն, քանի որ սեռականությունը ինձ համար անձնական կառուցվածքի հիմնա-քարն է), եթե ինձ թվում էր, թե նման խոստովանությունը, որ քրիստոնեու-թյան մեջ անվանում են «մորթապաշտություն», բավարար էր, որ ես ինքս ինձ այդ արարքի միջոցով ինչ-որ կերպ դարձնեի ցլամարտիկ, պե՞տք է արդյոք եզրակացնել, թե այն կանոնը, որն ինքս ինձ էի պարտադրել, կանոն, որի խստությունը ի գոհունակություն ինձ, իր մեջ վտանգ էր պարունակում, նույ-նանում է, վտանգի հետ հարաբերությունը մի կողմ թողնելով, ցլամարտիկի շարժումները կառավարող կանոնի հետ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ ցլամարտի կանոնը մի հիմնական նպատակ է հետապնդում. բացի նրանից, որ այն ստիպում է մարդուն իրեն լրջորեն վտանգի ենթարկել (դրա հետ մեկտեղ նրան տալով մարտարվես-տի համար անհրաժեշտ տեխնիկա)՝ թույլ չտալով, որ մարտիկը անիմաստ ձևով հաղթի հակառակորդին, այն նաև արգելում է, որ մարտը դառնա հասա-րակ սպանդ. բծախնդիր, որպես մի ծես, այն ունի մարտավարական դիտան-կյուն (կենդանուն հասցնել մի վիճակի, երբ նա կարող է հարվածը ընդունել՝ առանց նրան պահանջված չափից ավելի հոգնեցնելու): Դրա հետ մեկտեղ կա նաև գեղագիտական կողմը. ամբարտավանությունը, որ պետք է ի հայտ գա մարտիկի կեցվածքում, կախված է այն բանից, թե նա կկարողանա՞ ինչպես հարկն է «իրեն ցուցադրել» այն պահին, երբ հասցնում է սրի հարվածը: Կկա-րողանա՞ արդյոք անշարժանալ ու ոչ մի քայլ չանել փոխկապակցված ու ճշգ-րիտ պասսերի ընթացքում թիկնոցը դանդաղորեն շարժելով, կենդանու հետ կկազմի՞ այն հրաշալի ամբողջությունը, որտեղ տղամարդը, թիկնոցն ու եղջե-րավոր ծանր զանգվածը միմյանց կապված են փոխադարձ ազդեցությունների խաղով. մի բառով ասած, մեկտեղվելով՝ ցլամարտիկի և ցլի առճակատմանը դրոշմելով արձանային բնույթ:

Իմ այս ձեռնարկումը նախատեսելով որպես մի ֆոտոմոնտաժ, և արտահայտվելու համար ընտրելով հնարավորինս օբյեկտիվ տոն, փորձելով կյանքս հավաքել պինդ մի բեկորի մեջ (որից կառչելով ինքս ինձ կարծես կարող էի ապահովագրել մահվան դեմ մինչդեռ, միևնույն ժամանակ պարադոքսալ կերպով ես հավակնում էի ամեն ինչ վտանգի ենթարկել), եթե անգամ ես դուրս լայն բացում էի երազների առաջ (հոգեբանորեն արդարացված տարրեր՝ գունազարդված ռոմանտիզմով, ճիշտ ցլամարտիկի թիկնոցով խաղերի նման, որոնք տեխնիկապես օգտակար լինելով, նաև քնարական թռիչքներ են), վերջին հաշվով ես ինձ պարտադրում էի նույնքան խիստ մի կանոն, որ կարծես դասական ստեղծագործություն ուզենայի գրել: Եվ ի վերջո, հենց այդ խստությունը, այդ «կլասիցիզմն» է, որ, չբացառելով անգամ մեր ամենակոդավորված ողբերգությունների մեջ եղած չափազանցությունը և հիմնվելով ոչ միայն ձևի մասին հարաբերական պատկերացումների, այլ նաև առավելագույն ճշմարտության հասնելու գաղափարի վրա, իմ ձեռնարկմանը հաղորդել է մի բան (այնքանով, որքանով ինձ դա հաջողվել է), որը նույնանում է ցլամարտի օրինակելի արժեքի հետ և որը ստեղծագործությանը չէր կարողանա հաղորդել երևակայական ցլի եղջյուրը:

Գործածել այնպիսի նյութեր, որոնց վրա ես իշխանություն չունեի, որոնք ես պետք է վերցնեի այնպիսի վիճակում, ինչպիսին գտել էի (քանի որ իմ կյանքն այն էր, ինչ կար, և ինձ հարիր չէր փոխելու իմ անցյալից անգամ մեկ ստորակետ, սա հիմնական դրույթ էր՝ նույնքան դժվարամերժելի ինձ համար, ինչպես ցլամարտիկի համար ախոռից պոկվող կենդանին), ամեն ինչ ասել և դա անել արհամարհելով ցանկացած ճոռոմաբանություն, տեղ չթողնելով հետաքրքրության համար և կարծես ենթարկվելով մի պարտադրանքի: Սրանք էին և՛ այն պատահականությունը, որի հետ ես հաշտվել էի, և՛ այն օրենքը, որը ես ինձ համար ամրագրել էի, և՛ այն վարքաձևը, որից ես այլևս չէի կարող նահանջել: Չնայած ինքս ինձ ցուցադրելու ցանկությունը (բառի բոլոր իմաստներով) դարձավ առաջնային մղիչ ուժը, պարզվեց սակայն, որ այս պարտադիր պայմանը բավարար պայման չէր, և անհրաժեշտ եղավ, որ այս սկզբնական նպատակից բացի պարտադրանքի գրեթե ինքնուրույն ուժգնությամբ բխեր որդեգրվելիք ձևը: Այն պատկերները, որ հավաքում էի, տոնը, որ գործածում էի, խորացնում էին իմ մասին իմ գիտելիքները ու կենդանություն հաղորդում նրանց. միևնույն ժամանակ այդ իսկ պատկերներն ու տոնը պետք է դառնային մի բան, որն իմ զգացմունքը լավագույնս կկիսեր ուրիշի հետ, իհարկե, եթե չձախողվեր: Նմանապես, ցլամարտի կարգապահությունը (խիստ կաղապար, որ պարտադրված է մի գործողության, որտեղ, ինչպես թատրոնում, պատահականությունը պետք է տեղ չունենա) մարտի տեխնիկա և միևնույն ժամանակ ծիսակատարություն է: Անհրաժեշտ էր ուրեմն, որ մեթոդական այս կանոնը, որ ես ինձ պարտադրել էի՝ ինքս իմ մեջ հնարավորինս սրությամբ թափանցելու ցանկությունից մղված, միաժամանակ խաղար, ընդ որում արդյունավետ կերպով, եկեղեցական կառուցվածքային կանոնի դեր: Եթե կուզեք, ձևի և բովանդակության նույնացում, իսկ ավելի ճշգրիտ՝ բացառիկ մի քայլ, որն ինձ համար բացահայտում է խորքը այնքանով, որքանով ես իրեն ձև էի տալիս, մի ձև, որն ընդունակ էր գրավիչ լինել այլոց համար և (ծայրահեղ դեպքում) հնարավորություն էր տալիս իրենց մեջ բացահայտելու մի բան, որ համահունչ կլիներ իմ բացահայտած խորքին: Ակնհայտ է, որ այս ամենը ես ձևակերպում եմ շատ ու շատ ավելի ուշ՝ փորձելով լավագույնս սահմանել իմ տարած խաղը, և չնայած այն ինձ չի պատկանում, բնական է, որ ես որոշեմ,

թե այս «ցլամարտիկի» կանոնը, որ միաժամանակ գործունեության ուղեցույց է և պաշտպանում է հնարավոր ծուղակներից, ընդունակ եղա՞վ արդյունավետ լինելու որպես ոճական միջոց, թե՞ այն (որոշ մանրամասների առումով), ինչի մեջ ես ուզում էի մեթոդական անհրաժեշտություն տեսնել, իրականում կառուցվածքին վերաբերող մի գաղտնի մտադրության արգասիքն էր:

Այնուամենայնիվ, նկատի առնելով այն, որ գրականության մեջ ես առանձնացնում եմ ինձ համար կարևոր մի ժանր (որը ներառում է այնպիսի ստեղծագործություններ, ուր այս կամ այն կերպ առկա է եղջյուրը. ուղղակի վտանգը, որին ենթարկվում է խոստովանության կամ կործանարար բովանդակությամբ գրության հեղինակը, այն ձևը, որով առերեսում կամ բռնվում ենք մարդկային ճակատագրի «եղջյուրներից», կյանքի այն ըմբռնումը, որն իր կրողին պատասխանատու է դարձնում այլ մարդկանց առաջ, կեցվածքը այնպիսի բաների հանդեպ, ինչպիսիք են հումորը կամ խենթությունը, անողոք ձգտումն առ մարդկային մեծ ողբերգականության թեմաների բարձրաձայնումը), ես կարող եմ ամեն դեպքում ցույց տալ (բայց գուցե սա բաց դուռը ուժով բացելու նմա՞ն է), որ անհնար է կառուցվածքային մեկ այլ կանոն բացահայտել, բացի այս մեկից, որ Արիադնեի թելի[3] նման ձգվում էր հեղինակի կցկտուր բացատրությունների ողջ ընթացքում, որ նա անում էր ինքն իր հետ՝ երբեմն հեռվից գալով, երբեմն էլ ուղիղ ճակատին ասելով, և որ միայն նման ստեղծագործությունն է կարելի տառացիորեն համարել «բնական»: Սա ըստ սահմանման, այն պահից սկսած, երբ ընդունում ենք, որ գրական գործունեությունը, իր ունեցած առանձնահատկությամբ՝ որպես մտքի կարգապահություն, ոչ մի այլ արդարացում ունենալ չի կարող, բացի ինքն իր համար լուսաբանելուց որոշ բաներ, միևնույն ժամանակ դրանք հաղորդակից դարձնելով ուրիշներին, և որ ամենաբարձր նպատակներից մեկը, որ կարելի է նրա մաքուր ձևին վերագրել, նկատի ունեմ բանաստեղծությունը, բառերի միջոցով վերականգնելն է որոշ ուժգին իրավիճակներ՝ հստակորեն ապրված և նշանակություն ձեռք բերած, ու այսպիսով՝ բառեր դարձած:

Այստեղ ես շատ հեռու եմ այն շատ թարմ և չափազանց տխրեցուցիչ իրադարձություններից, որոնցից, օրինակ՝ Հավրի մեծ մասի կործանումն էր. քաղաք, որն այլևս նման չէ այն քաղաքին, որ ես գիտեի, և անդամահատված է այն վայրերից, որոնք ենթակայական կերպով ինձ կապում են հուշերիս հետ. Օրինակ՝ Ամիրոտեի հյուրանոցը կամ այն տաք փողոցները՝ այսօր արդեն վերացած կամ վիրավոր շինություններով, որոնցից մեկի ճակատին մինչև հիմա կարելի է կարդալ «LA LUNE The Moon»[4] գրությունը, հետն էլ լուսնի մահիկ հիշեցնող մի ուրախ դեմք: Կա նաև ծովափը, երկաթեղենի մի ծաղկե տարօրինակ սփռվածքով՝ ծածկված ջանասիրաբար ի մի բերած քարերի կույտով, ծովի դիմաց, ուր մի երկու օր առաջ բեռնատար նավ պայթեց ականի վրա՝ իր բեկորներն ավելացնելով բազմաթիվ այլ բեկորների: Ես իհարկե շատ հեռու եմ պատերազմի այդ իրական եղջյուրից, որի քանդած տները իմ տեսած ամենամեղմ հետևանքներն են: Եթե իսկապես ավելի ներգրավված ու ավելի գործուն լինեի, և, հետևաբար, ավելի շատ սպառնալիքի տակ, գուցե գրական գործին ավելի թեթևորե՜ն վերաբերվեի: Կարելի է ենթադրել, որ պակաս մոլեգնությամբ ինձ կտանջեի, որպեսզի գրականությունը վերածեի արարի կամ դրամայի, որտեղ ես պետք է ինձ ենթարկեի վտանգի, դրական իմաստով, կարծես հենց այդ վտանգն էր այն պարտադիր պայմանը, որպեսզի ես ինքս ինձ կատարելապես իրագործեի: Այնուամենայնիվ, անժխտելի է, որ հետևյալ պատասխանատվությունը հիմնարար է, և իրավունք ունենք այն պահանջել

գրողից, դա բխում է հենց իր արվեստի բնույթից. չչարչրկել լեզուն և հետևաբար այնպես անել, որ խոսքը (ինչ եղանակով էլ գրողն այն հանձնի թղթին) մնա մշտապես ճշմարիտ: Անժխտելի է, որ մտավոր և զգացմունքային հարթությունների վրա գրողը պետք է հանցանշաններ բերի այսօրվա մեր արժեհամակարգի դատին և ճնշում բանեցնի, իրեն հաճախ ճնշող այն ողջ ծանրությամբ, բոլոր մարդկանց ազատագրման ուղղությամբ, հակառակ դեպքում ոչ ոք չի կարողանա հասնել իր անձնական ազատագրմանը:

[1] Գերիրապաշտ գրող Անդրե Բրետոնի «Նադյա» պատումը տպագրվել է 1928 թ (ծնթ. թարգ.):
[2] Մարգինալիա են կոչում լուսանցքում արված նշումները: 1845-1849 թթ. Էդգար Պոն իր որոշ մտածումներն ու հատվածական գործերը վերնագրել է Մարգինալիա:
[3] «Արիադնեի թել» արտահայտությունը գալիս է հունական դիցաբանությունից: Նշանակում է ուղղորդող գիծ:
[4] Լուսին՝ ֆրանսերենով և անգլերենով:

Ալեն Գինսբերգ

Առաջաբանը, թարգմանությունը և
ծանոթագրությունները՝
Աննա Դավթյանի

Կարեկցանքի համար

BBC-ի լրագրողը հարց է տալիս՝ Ալեն Գինսբերգ, Դուք Ամերիկայի ամենաահռչակավոր բանաստեղծն եք, բիթ շարժման հիմնադիրներից մեկը՝ Քերուաքի ու Բարրոուզի հետ, բայց հիմա կարճ մազերով ու մորուքով, կոստյումով ու փողկապով Դուք նույն Գինսբե՞րգն եք, ինչ մենք գիտեինք առաջ: Հաստ շրթունքները իրար վրա դրած, մեծ ատամները տակը, մազերը մոխրագույն՝ աչքերով լսում է հարցը, հետո ասում՝ չնայած բուդդայական եմ, ու բուդդայականները համարում են, որ մշտակա իրական «ես» չկա, այլ կան «ես»-ի տարբեր դեմքեր, բայց հաստատ է, որ բիթ պոետ եմ, հաստատ է, որ հրեա եմ, հաստատ է, որ գեյ եմ, հաստատ է, որ ամերիկացի եմ, ու հաստատ է, որ զբաղվում եմ մեդիտացիայով:
Ալեն Գինսբերգը (1926–1997) հաղորդումների ու հարցազրույցների մեջ միշտ պատմում է՝ Նաոմին էր մայրս: Ռուսաստանից Ամերիկա ընկած փախստական, որ տեղ հասնելուց անմիջապես հետո նյարդային ցնցում է ունենում ու մինչև կյանքի վերջը տառապում է մի հիվանդությամբ, որ գործ ուներ գերզգայնության հետ՝ ձայների, շոշափելիքի, համի, հոտի հանդեպ: Հայրը բանաստեղծ էր, ուսուցիչ: Ալենն էր հոգեբուժարանում մորը այցելում: *Կանչեք էդ լրտեսին, որ իրեն Ալենի տեղն է դրել, ու ասեք՝ թող ինձ տուն տանի:* Մորս շնորհիվ, ասում է, ձեռք եմ բերել անսահման հանդուրժողականություն ամեն տեսակ բնույթի ու պահվածքի հանդեպ, ու միշտ ուրախության դիմակ եմ կրել, արցունքներս փղձկացել եմ բանաստեղծություններիս մեջ:
Տասնինը տարեկան էի, երբ հանդիպեցի բանաստեղծ Քերուաքին: Անտանելի ամաչկոտ ու քաշված էի, երբ մարդիկ խոսում էին, միայն լսում էի, միշտ մտածում էի՝ նրանցից ավելի ի՞նչ պիտի ասեմ: Սեռական ոչ մի փորձառություն չէի ունեցել, բայց գիտեի, որ տղամարդկանց եմ հավանում: Մի օր սիրտ արեցի, Քերուաքին պատմեցի ամեն բան, բայց բանի տեղ չդրեց: Դե, մոր հոգատարության, սիրո կարիք եմ ունեցել միշտ, այո, կարոտ եմ եղել կանացի լույսի, բայց նաև վախեցել եմ դրանից, չգիտեմ, ինքս իմ հանդեպ վստահություն չունեի: Մինչև հանդիպեցի Բարրոուզին ու Նիլ Քասադիին: Ու մի անգամ Նիլն ինձ մոտ մնաց, գնալու տեղ չուներ էդ գիշեր, իմ սենյակն ահավոր փոքր էր, ստիպված

միասին պառկեցինք: Ու երբ որ զգացի՝ ձգվում է, ամոթից պատի կողմը շրջվեցի, չէի ուզում, որ իմանար: Բայց Նիլը հասկացավ, վիզս գրկեց ու ձեռքս դրեց կրծքին ու դե… սեր տվեց ինձ: Ազատեց իմ մենակությունից, Քերուաքի հետ մենակությունից: Նիլը բանաստեղծ էր, բայց գրել չգիտեր: Անընդհատ կպնում էր Քերուաքին, որ իրեն գրել սովորեցնի: Քերուաքն էլ գրել գիտեր, բայց չգիտեր ոնց գրի, ուրիշ մի բան էր ուզում: Հետո հասկացավ, որ պիտի գրի էնպես, ոնց ինքն ու Նիլն իրար նամակ են գրում, ոնց իրար հետ ենք խոսում՝ նույն անկեղծությամբ, նույն բառերով, նույն ցավով ու հրճվանքով: Հասկացավ, որ հասարակ խոսքը բարձր խոսքն է: Գրեց իր «Ճանապարհին» վեպը, ու էդպես սկսվեց բիթը: Բիթնիկների սերունդը:
Հասարակ սկսվեց բիթնիկների շարժումը, որ հետո վերաճեց ամբողջ հիպիական շարժման: Ամեն ինչ սկսվել էր նրանց նամակներից, վարձով սենյակներից, ճանապարհներից, ազատության տեղից, որով մերժել էին միջին դասի նորմերն ու պատկերացումները կյանքի մասին, որոշել էին քողը հանել, բաց ասել ամեն ինչ, իրենց դրել էին ալկոհոլի ու թմրանյութերի փորձարկման տակ՝ այն անկեղծ մտքից, որ պարտավոր են ուրիշ իրականություններ հայտնաբերել ու գրել դրանց մասին: Քերուաքը հարցազրույցներից մեկի ժամանակ իրեն տված հարցին, թե մեկ բառով ինչպե՞ս կբնութագրեք բիթ շարժումը, պինդ քաշելով սիգարետն ու փնչալով կապույտ ծուխը, մարմնով պաշարած ամբողջ աթոռն ու աչքը ճտելով հաղորդավարի վրա՝ պատասխանում է՝ կարեկցանք: Ու կարեկցանքը լցրած բանաստեղծությունների մեջ՝ Գինսբերգը նվագում է իր *հարմոնիում* երաժշտական գործիքն ու երգում է իր բանաստեղծությունները և ցուցարարների բանակներ է գլխավորում, որ առաջին անգամ բարձրաձայնում էին սեռական ազատության, խոսքի ազատության, ազատ ընտրության մասին, էկոլոգիական խնդիրների, ատոմային ռումբերի, զենքի ու պատերազմի անիրավության մասին, *(Make Love not War)* տարփողում էին սերը, փոխըմբռնումն ու մարմնի ազատությունը: Բանաստեղծությունն առաջին անգամ խոսում է այնքան մարդու անունից, որ 1968-ի Պրահայի ցուցարարների հարյուրհազարանոց բանակը առաջնորդ է ընտրում Գինսբերգին ու տալիս է նրան *Մայիսի արքա* տիտղոսը (The King of May), բայց կառավարությունը ձերբակալում ու վտարում է նրան հետ Ամերիկա: – Կարծում եք՝ Ձեզ այդքան հավանողների բանակը հենց նույնասեռականների՞ց է բաղկացած, քանի որ այդ սիրո մասին եք գրում: – Ոչ, իմ գրածի ինքնահեղ անկեղծությունն է գրավում մարդկանց – բոլոր մարդկանց: – Դուք ոչինչ չե՞ք թաքցնում, չունե՞ք գոնե մի թաքուցյալ տեղ Ձեր մեջ, որի մասին չեք խոսում: – Երբ լրիվ թափանցիկ ես դառնում, ամբողջ աշխարհին է դառնում քո թաքուցյալ տեղը:
Գինսբերգի բլեյքյան տեսիլները – երեք դեպք է պատմում, երբ բանաստեղծությունները կարդալիս լսել է Ուիլյամ Բլեյքի ձայնը, Բլեյքն ինքը նույնպես տեսիլներ էր ունենում: Շատ ազդված էր նրա «Արևածաղիկ» բանաստեղծությունից, համարում էր, որ դարերի միջից հաղորդագրություններ են փոխանցվում, ու լուսավորված միտքը ի զորու է որսալու դրանք: Տարիներով Նյու Յորքի թանգարաններում ուսումնասիրում է Սեզանի գեղա-

նկարները՝ փորձելով դրանց մեջ գտնել դարձափոխիկ այն պահի գաղտնիքը, որում *«վենետիկյան շերտավարագույրն է հանկարծակի ինքն իր վրա դառնում, շրջվում»*: Նաև այն ընդարձակ տարածությունը, որի մեջ առարկաները կարծես սարքված լինեն փայտից, լինեն պինդ մարմիններ ու գոյություն ունենան եռաչափության մեջ: Հետո նամակներից մեկում գտնում է Սեզանի պատասխանը՝ աչքիս առաջ եղածը գեղանկարի վերածելու համար օգտագործում եմ խորանարդներ, քառակուսիներ ու եռանկյունիներ, բայց դրանք իրար կից եմ դնում այնքան, որ արանքներից բոլորովին լույս չթափանցի: Տեսնում է նաև, որ նկարում խորություն ստանալու համար Սեզանը հեռանկարի գծեր չի օգտագործում, այլ գույնն այնպես է դնում գույնի վրա, որ նկարը եռաչափություն է ստանում: Փորձում է այս տեխնիկան կիրառել բանաստեղծությունների մեջ՝ այնպես անել, որ բոլոր բառերն ասելու փոխարեն՝ բառերն այնպես դրվեն իրար կողքի, որ միտքը դրանք իրար հյուսի արանքում մնացած տարածության, բացվածքի միջով: Հայկու է օրինակ բերում՝ Օհ, մրջյուն,/բարձրացիր լեռը Ֆուձիյամա/բայց դանդաղ, դանդաղ:
Բանաստեղծ Փիթր Օրլովսկու հետ ծանոթությունից է պատմում դողացող մորուքով՝ մի սրճարանում գրեթե ամուսնության երդում տվեցինք իրար, մեր կյանքում առաջին անգամ ամբողջովին սիրված զգացինք, երկուսս էլ, հենարան գտանք իրար մեջ ու տարիներ ապրեցինք իրարով, երդվեցինք միասին լքել այս աշխարհը, երբ ժամանակը գա: Հենց նրան գտնելու ուրախությամբ է կիսվում Քերուաքի հետ թարգմանված բանաստեղծության մեջ:
Երբ ալկոհոլի բերած քայքայումից մեռնում է Քերուաքը, Գինսբերգը շարունակում է նամակներ գրել նրան ու Բոբ Դիլանի հետ նրա գերեզմանի մոտ նստած՝ կարդում է մեռած ընկերոջն ուղղված բանաստեղծությունը. *– Ու քանի այստեղ եմ, ես կանեմ գործը: – Ո՞ր գործի հետ ես: – Ապրելու ցավը թեթևացնելը:*

ՈՌՆՈՑ[1]
Կարլ Սոլոմոնին[2]

I

Տեսա իմ սերնդի լավագույն ուղեղներին գժությունից ավիրված, սոված
hիստերիկ ու մերկ,

որ լուսաբացին քարշ էին տալիս իրենց սևական փողոցներով գժված կայֆի
հետևից, հրաշագլուխ հիփսթերներ որ վառվում էին հինավուրց մի
հաղորդակցության համար երկնքի աստղային մեխանիզմի հետ
գիշերվա հաստոցի մեջ,

ով աղքատ ու քուրջ դատարկաչք դոզված նստում էր պաղջուր բնակարանի
գերբնական մութի մեջ որ քաղաքների գլխին լողալով վայելում էր
ջազ,

ով մերկացրեց ուղեղը Երկնքի առաջ Էլի[3] աչքի տակ ու մահմեդական
հրեշտակներին տեսավ ճոճվելով կացարանների տանիքի վրա
պայծառակերպված,

ով ճառագող պաղ աչքերով անցավ համալսարանների[4] միջով աչքերում
տեսիլքներ Արկանզասի[5] ու Բլեյքի[6] լույս ողբերգություններ
շրջապատված պատերազմի գիտակներով,

ովքեր շպրտվեցին ակադեմիաներից դուրս խենթության համար ու պիղծ
ներբողներ թողած լինելու գանգի պատուհաններին[7],

ով անթրաշ սենյակում ներքնաշորերով կծկված վառեց իր փողը աղբամանի
մեջ ու պատի միջով լսեց Սարսափը[8],

ով բռնվեց Լարեդոյով[9] վերադառնալիս շեքի մորուքի մեջ մարիխուանայի
գոտի Նյու Յորքի համար,

ով կրակ էր կուլ տալիս ներկե[10] հյուրատներում կամ Փարադայզ
Ալեյում[11] սկիպիդար էր խմում, մահ, ու քավության էր հանձնում
սեփական մարմինը գիշերը գիշերի հետևից,

հետը երազներ, հետը թմրանյութ, հետը հարթմնի մղձավանջ, ակլոհոլ, կլիր
ու անսպառ ձվեր,

անզուգական կույր փողոցներ ցնցվող ամպերով ու կայծակով լուսավորված
միտք որ ցատկոտում էր բևեռների միջև Կանադայի ու Փաթերսոնի[12]՝
լույս սփռելով մեջտեղի ամբողջ անշարժ աշխարհի վրա որ
Ժամանակն[13] է,

Կակտուսային[14] ամրություն պատերի, ետնաբակի կանաչ ծառերի
գերեզմանի արշալույս, գինե հարբածություն տանիքների վրա, ուռած
զվռնոցի խանութամայթ քաղաքներում, երթևեկության լույսերի
նեոնային թրթռացումներ, արևի լուսնի ու ծառի վիբրացիա
Բրուքլինի մռնչացող ձմեռային մթնշաղում, մոխրամանային

հոխորտանք ու մտքի բարի տիրակալ լույս,

ովքեր կապանքում էին իրենց մետրոյի հարատև վազքին Բաթըրիից սուրբ
Բրոնքս բենզեդրինի վրա[15], մինչև անիվների ու երեխաների
աղմուկը ցած էր բերում նրանց դողահար կախքերան ուղեղի
դժգույն տրորվածքը քամված իր երբեմնի մեծությունից
Գազանանոցի սոսկալի լույսի մեջ,

ովքեր ողջ գիշեր ընկղմված էին մնում Բիքֆորդսի սուզանավային
լույսեում, դուրս էին լողում ու անցնում էին գարեջրի քառթու
ցերեկների միջով ամայի Ֆուգացիսում՝ ականջ դնելով անդունդի
ճաքոցին ջրածնային երաժշտարկղով[16],

ովքեր յոթանասուն ժամ շարունակ խոսում էին այգուց տուն տնից բար
բարից Բելվյու թանգարան ու Բրուքլին կամուրջ,

ընտիր խոսակցաքանների կորած մի գումարտակ որ ցած էր թռչում
հակահրդեհային աստիճաններից պատուհանագոգերից Էմփայր
Սթեյթից լուսնի վրայից,

բարբաջելով գոռալով որձկալով շշնջալով փաստեր ու հուշեր ու
անեկդոտներ ու աչքի տեսած ու շոկ հիվանդանոցներում ու
բանտերում ու պատերազմներին,

ամբողջ ուղեղներ փսխված լման վերհուշի մեջ յոթ օր ու գիշեր փայլուն
աչքերով, սինագոգի միս՝ նետված մայթերին,

ովքեր անհետացան ոչմիտեղ Զեն[17] Նյու Ջերսի թողնելով միայն երկդիմի
բացիկների հետքը Ատլանտիկ Սիթի Հոլից[18],

տառապելով արևելյան քրտինքներից ու Թանջիերի[19] ոսկորջարդոցից ու
չինական միգրենից՝ դեղի տակից դուրս գալուց Նյուարքի[20] մռայլ
սենյակում,

ովքեր կեսգիշերին շրջաններ էին գծում թափառելով երկաթգծի
կայաններում մտմտալով ուր գնալ, ու գնում էին, հետևներից
չթողնելով ջարդված սրտեր,

ովքեր ծխախոտ էին վառում ապրանքատար վագոններում ապրանքատար
վագոններում ապրանքատար վագոններում որ ճղում էին ձյունը
դեպի մենակ ագարակներ զառամ գիշերների միջով,

ով ուսումնասիրում էր Պո Պլոտինուս[21] Սբ Հովհաննես Կրուզ[22] տելապատիա
բիբոփ[23] կաբալլա որովհետև տիեզերքը տրոփում էր բնազդային
նրանց ոտքերի տակ Կանզասում[24],
ովքեր միայնակ փնտրում էին Այդահոյի[25] փողոցներում պայծառատես
հնդկացի հրեշտակներ, որ պայծառատես հնդկացի հրեշտակներ
լինեին,

ովքեր կարծում էին թե գժվել են ընդամենը երբ Բալթիմորը[26] փայլեց
գերբնական էքստազի մեջ,

ովքեր լիմուզիններ թռցրին[27] Օկլահոմայի պլանի[28] տակ ձմեռվա գիշերային փողոցալույս փոքրքաղաքային անձրևի հետ,

ովքեր թրև էին գալիս Հյուսթոնով[29] սոված մենակ ջազի սեքսի կամ ապուրի հույսով, ու հետևում էին ընտիր իսպանոիդներին[30], որ խոսեին Ամերիկայի ու Հավերժության մասին – անհույս մի գործ, և ուրեմն ելան Աֆրիկա տանող նավը[31],

ովքեր Մեքսիկայի հրաբուխների մեջ չքացան[32] բան չթողնելով իրենցից բացի ջինսի ստվերից լավայից ու պոեզիայի մոխրից շաղ եկած բուխարի Չիկագոյում,

ովքեր հայտնվեցին նորից արևմտյան ափին[33] հետաքննելով ՀԴԲ-ն[34] մորուքներով ու շորտերով խոշոր խաղաղարար աչքերով սեքսուալ իրենց մուգ մաշկի մեջ բաժանելով անմեկնելի թռուցիկներ,

ովքեր սիգարետով ծակեր բացեցին թևերին բողոքելով Կապիտալիզմի նարկոծխային մշուշի դեմ,

ովքեր սուպերկոմունիստական թերթիկներ բաժանեցին Յունիոն Սքուերում արտասվելով ու հանելով հագուստները[35] մինչև Լոս Ալամոսի սիրենները ողբով ցած բերին նրանց, հետո ցած բերին Ուոլ սթրիթով, ու Սթեյթըն Այլընդի փոխադրանավն էլ ողբում էր,

ովքեր կոտրվեցին լացելով սպիտակ բաժանմունքներում կմախքե այլ սարքավորումների առջև դողահար ու մերկ,

ովքեր կծեցին քննիչների վիզը[36] ու ցնծուն գոռացին ոստիկանական մեքենայում՝ գործած չլինելով ոչ մի հանցանք բացի իրենց սեփական վայրի խոհանոցը այլասերությունն ու թույնը,

ովքեր ծնկների վրա անցումներում ոռնացին ու դուրս զցվեցին երդիկից թափ տալով սեռանդամներ ու ձեռագրեր,

ովքեր թույլ էին տալիս իրենց քունեն ոռից մոտոցիկլիստները սրբատես, մի բան էլ ուրախությունից գոռում էին[37],

ովքեր որ ծծում էին և ում ծծում էին մարդկային դեմքով սերովբեները այն՝ նավազները, ատլանտյան գգվանքներ ու կարիբյան սեր,

ովքեր կցվում էին առավոտյան երեկոյին վարդաստանում հասարակական այգու խոտերին ու գերեզմանում շաղ տալով սերմերն իրենց ազատորեն ում պատահի եկեք ով կարող է,

ովքեր փորձելով ծիծաղել զկռտում էին անվերջ որ փոխվում էր հեծկլտոցի թուրքական բաղնիքի միջնորմի ետևում, որտեղ շեկլիկ ու մերկ հրեշտակը գալիս էր խրելու թուրը նրանց մեջ,

ովքեր պարտվել էին իրենց սեր-տղային բախտի երեք ծեր քածերին միաչքանի քածը հետերոսեքսուալ դոլարի միաչքանի քածը որ ծիկրակում է արգանդից ու միաչքանի քածը որ բան չի անում մենակ

ռռին նստած կտրտում է խելացի ոսկե թելը արհեստավորի դազգահի,

ովքեր զուգավորվում էին ցնծագին ու անհագ մի բաժակ գարեջրով մի սիրահար սիգարետի մի տուփ մի մոմ ու ցած էին ընկնում անկողնուց ու շարունակում էին հատակին սենյակի միջով մինչև պատի տակ նվաղելը գերագույն մի տեսիլ պուց ու պրծնել որ սողոսկում էր գիտակցության վերջին ցայտի միջով,

ովքեր քաղցրացնում էին միլիոն աղջկա ծակ սրսփալով արևմուտին, ու առավոտը կարմիր աչքերով պատրաստ էին էլի քաղցրացնել արևի դուրս գալը, բռնկուն աճուկներ մարագներում ու մերկ լճերի մեջ,

ովքեր վզզալեն ճղում էին Կոլորադոն գողցած անթիվ գիշերային ավտոներով, Ն.Ք.[38], այս բանաստեղծության գաղտնի հերոսը, կլրամարդը Ադոնիսը Դենվերի – այն անհամար կանանց ուրախությունը հուշերի ում պառկեցրել է անմարդ վայրերում, բիստ-րոների ետնաբակում, կինոթատրոնների խախուտ աթոռներին, լեռների գագաթներին անձավներում ու ծանոթ ճամփեզրին բարձ-րացրել է վտիտ սպասուհիների մենավորիկ փեշը,
ու հատկապես գազակայանների զուգարանի ծածուկ սոլիփսիզմում[39] ու հայրենի քաղաքի նրբանցքներում նույնպես,

ովքեր վերանում էին անսահման կեղտոտ կինոներում, փոխարինվում էին երազով, արթնանում էին հանկարծակի մի Մանհեթընում, դուրս էին քաշում իրենց գետնահարկից անսիրտ Տոկեյի[40] խումհարի ու Երրորդ պողոտայի երկաթե երազի սարսափների միջից, ու գայթելով գործազրկության գրասենյակներ էին գնում,

ովքեր քայլում էին ամբողջ գիշեր[41] կոշիկները լիքը լցված արյուն ձյունակող կայաններով սպասելով որ Իսթ Ռիվըրում կբացվի մի դուռ մի սենյակի լցված շոգու տաքությամբ ու ափիոնով,

ովքեր հոյակապ ինքնասպանի դրամաներ կերտեցին Հուդզոնի ժայռապատ ափերի կացարանում լուսնի պատերազմային կապույտ հեղեղի մեջ ու գլուխները նրանց դափնով կթագադրվեն որպես մոռացություն,

ովքեր կերան գառան միսը երևակայության ապուրի կամ մարսեցին ծովախեցգետինը Բաուըրիի[42] գետերի տղմոտ հատակներին,

ովքեր արտասվեցին փողոցների քնարականության վրա ձեռնասայլակները[43] նրանց լցված սոխով ու վատ երաժշտությամբ,

ովքեր նստեցին արկղերի մեջ կամրջի տակ շնչելով մթությունը, հետո ելան ու իրենց տանիքներում կլավիկորդ սարքեցին[44],

ով հազում էր վեցերորդ հարկում Հարլեմի կրակով թագադրված թոքախտավոր երկնքի տակ շուրջն աստվածաբանության նարնջավուն դարաններ[45],

ով խզբզում էր ամբողջ գիշեր օրորվելով ու հածելով վսեմ հմայանքի վրա

որոնք դեղին առավոտին դուրս էին գալիս զառանցանքի հանգեր,

ովքեր հոտած կենդանիներ էին տապակում թոք սիրտ կճղակ ու պոչի բորշ ու տորտիլլա երազելով բանջարեղենների մաքուր արքայության մասին,

ովքեր մսով բեռնատարի տակ էին տալիս իրենց՝ ձու գտնելու հույսով,

ովքեր իրենց ժամացույցը տանիքից ցած գցին մի օր[46] նետելով Հավերժության իրենց քվեաթերթը Ժամանակից անդին, բայց հաջորդող տասը տարիներին ամեն օր նրանց գլխին զարթուցիչ էր ընկնում,

ովքեր կտրեցին երակները երեք անգամ հաջորդաբար անհաջող[47], վերջ տվեցին ու ստիպվեցին անտիկ ապրանքների խանութ բացել որտեղ մտորում էին որ ծերանում են ու լացում,

ովքեր կենդանի այրվեցին իրենց անմեղ ֆլանելե կոստյումներով Մեդիսոն պողոտայի վրա կապարե հանգերի պայթյունների, նորաձևության երկաթե վաշտերի ու գովազդի փերիների նիտրոգլիցերինային ճղղոցի տակ, գրագետ նենգ խմբագիրների մանանեխի գազից կամ Բացարձակ Իրականության հարբած տաքսիները իրենց անիվներով ճխլտեցին նրանց,

ովքեր ցած նետվեցին Բրուքլինի կամրջից[48] իսկ սա իսկապես է եղել ու քայլելով հեռացան մոռացված ու անհայտ Չայնաթաունի նրբանցքների ու հրշեջների շիլայե շլմորանքում, ու անգամ մի ձրի գարեջուր էլ չեղավ,

ով իր հուսահատությունը իր լուսամուտից երգեց ու դուրս ընկավ մետրոյի գնացքից, թռավ կեղտոտ Փասեիքը[49], դեմ առավ նեգրերին, փողոցով մեկ բղավեց, բոբիկ պարեց ջարդված գինու բաժակների վրա ջարդուփշուր արեց կարոտախեղդ Եվրոպայի 30-ականների գերմանական ջազի ձայնապնակները խմեց պրծավ վիսկին ու սիրտը թափեց գոռալով արյունոտ զուգարանում, տնքոց ականջների խորքում ու շոգու շչակների վիթխարի թնդյուններ,

ովքեր սուրացին անցյալի մայրուղիներով ցած ճամփորդելով դեպի միմյանց վերահաս Գողգոթան բանտային մենությունը կամ Բիրմինգհեմի ջազի մարմին առնելը,

ով երկրի լայնք ու երկայնքով քշեց յոթանասուներկու ժամ իմանալու տեսիլք ունեցել եմ տեսիլք ունեցել ես կամ տեսիլք ունեցել է Հավերժության մասին,

ով ճամփորդեց Դենվեր, մեռավ Դենվերում, ով հետ եկավ Դենվեր ու իզուր սպասեց, ով Դենվերի վրա աչք պահեց, ծվարեց ու մենակ մնաց, ու ի վերջո գնաց Ժամանակի ետևից, ու հիմա Դենվերը թախծում է իր հերոսների համար,

ովքեր ծնկի իջան անհուսալի տաճարներում աղոթելով միմյանց փրկության

նաև լույսի ու կրծքերի համար, մինչև հոգին մի վայրկյանով
շողացրեց մազերը իր,

ովքեր իրենց մտքի պատերը խորտակեցին բանտում սպասելով անհնար
հանցագործներին ոսկե գլուխներով ու սրտերում
իրականության հմայքը, որ երգում էին քաղցր բլյուզ Ալքաթրազին[50],

ովքեր հեռացան Մեքսիկա սովորույթը մշակելու[51] կամ Ռոքի Մաունթ՝ դեպի
քնքուշ Բուդդան կամ Թանջիեր՝ պատանիների մոտ կամ Սադերն
Փասիֆիք՝ սև լոկոմոտիվների կամ Հարվարդ՝ Նարցիսի մոտ
Վուդլոն՝[52] երիցուկե պսակ կամ էլ տապանաքար,

ովքեր դատավարություն էին պահանջում խելամտության դեմ մեղադրելով
ռադիոյին հիպնոսելու համար ու թողնվում էին իրենց
խելագարության հետ, իրենց ձեռքերի ու շվարած ժյուրիի,

ովքեր կարտոֆիլով աղցան էին շպրտել[53] դադաիզմի դասախոսի վրա
Նյու Յորք Սիթի քոլեջում ու ըստ այդմ ներկայացել գժանոցի
գրանիտե սալերինածիլված գլխով ու խեղկատակի
ճամարտակմամբ ինքն իրեն սպանելու մասին՝ պահանջելով
վայրկենական լոբոտոմիա[54],

և ում նետել էին փոխարենը ինսուլինի բետոնե տարտարոսը Մետրազոլ
էլեկտրաշոկ ջրաթերապիա հոգեթերապիա աշխատանքային
թերապիա պինգպոնգ[55] ու ամնեզիա,

ով անկատակ բողոքի մեջ շուռ էր տվել ընդամենը պինգպոնգի սիմվոլիկ մի
սեղան ընկնելով կարճատև կատատոնիայի[56] մեջ,

վերադառնալով տարիներ անց իսկապես ճաղատացած՝ չհաշվածարյունե մի
կեղծամ, արցունքներ ու մատներ, դեպի արևելյան ափի
խելապակաս քաղաքների խորխորատը որտեղ
հիվանդասենյակներում ապրում են ակներև խելագարներ,

դեպի Փիլգրիմ Սթեյթի, Ռոքլանդի ու Գրեյսթոունի[57] գարշահոտ սրահները,
որտեղ կռիվ են տալիս հոգու արձագանքների դեմ, օրորվում են ու
կոծում սիրո անցումային աշխարհի կեսգիշեր – նստարանի
վրա մենության մեջ, կյանքի երազը՝ մղձավանջ, մարմինները
փոխակերպված քարերի՝ ծանր հանց լուսինը,

ու վերջապես մերը քունված ու ֆանտաստիկ վերջին գիրքը դուրս շպրտած
կացարանի պատուհանից, վերջին դուռը առավոտվա 4-ին փակած,
վերջին հեռախոսը շփցրած պատերին ի պատասխան, ու
կահավորված վերջին սենյակը դատարկած մտավոր ամբողջ
կահույքից, ու մի դեղին թղթե վարդ փաթաթված խորդանոցի
կախիչին, ու անգամ այդ պատկերը՝ ցնորք, ոչ ավելին քան
մտահնարանքի հուսալի մի փոքրիկ կտոր –

էհ, Կարլ, քանի դու ապահով չես ես չեմ կարող լինել ապահով, իսկ հիմա
դու լրիվ հոսուն անասուն շիլայի մեջ ես ժամանակի –

և ովքեր վազեցին հետևապես սառցե փողոցներով՝ համակված թերասության գործածման հանկարծական բռնկմամբ կատալոգով տատանվող չափի ռիթմի ալքիմիայով տրոփող միջոցով[58],

ովքեր կարողացան երազել ու մարմին սարքել անջրպետին Տարածության մեջ ու Ժամանակի՝ իրար վրա դրված պատկերներով, ու հոգու հրեշտակապետին թակարդեցին 2 տեսողական պատկերի արանքում կպցրին տարրական բայերը եւ գոյականի ու գիտակցության միացման գծիկով ցնծացրին Ամենակալ Հայր Աստըծո երանությունը,

հանելու վեր մարդկային խեղճ պրոզայի շարահյուսությունն ու չափը ու կանգնելու ձեր առջեւ անբարբառ խելացի ու ամոթից դողահար, մերժված բայց դեռ հոգին խոստովանելով դուրս՝ տուրք տալու մտքերի տրոփին որն իրենց մերկ ու անվերջ գլխում է,

գիժ ավարան ու բիթ հրեշտակը Ժամանակի հոլովույթում, անհայտ, սակայն դնելով այստեղ այն ինչ դեռ մնացել է ասելու մահից հետո եկող ժամանակից անդին,

ու ելան մարմնավորված ջազի ուրուային շորերի մեջ նվագախմբի ոսկեեղջյուր ստվերներում ու Ամերիկայի մերկ մտքի տառապանքը սիրո համար սաքսոֆոնի լացին հանձնած լցրին մի էլի էլի լամմա լամմա սա բաքթանիի[59] մեջ, որ դողացրեց քաղաքները մինչև վերջին ռադիոն,

բանաստեղծության բացարձակ այն սրտով որ կազմված էր նրանց սղկած մարմիններից մզած կյանքի մսից որ մի հազար տարի էլ դեռ լավ կուտվեր:

II

Ցեմենտի ու ալյումինե ի՞նչ սֆինքս է բացել նրանց գանգերն ու կերել նրանց ուղեղն ու երևակայությունը:

Մողո՜ք[60]: Միայնությո՜ւն: Ա՛ղտ: Տխեղծությո՜ւն: Աղբամաննե՜ր ու անձեռնմխելի դոլա՜ր: Սանդուղքների տակ ճչացող երեխանե՜ր: Տղանե՜ր բանակում հեկեկացող: Այգիներում լացող ծերե՜ր:

Մողո՜ք: Մողո՜ք: Մղձավանջ Մողո՜ք: Մողոք անսե՜ր: Ուղեղային Մողո՜ք: Մողոք մարդկանց ծանր դատավո՜ր:

Մողո՜ք բանտ անըմբռնելի: Մողո՜ք խաչված ոսկորներով անհոգի բռնատուն ու վշտերի Կոնգրես: Մողո՜ք ում շենքերը դատավճիռներ են: Մողո՜ք պատերազմի հսկայական քար: Մողո՜ք շլացած կառավարություն:

Մողո՜ք ում միտքը սոսկ մեխանիզմ է: Մողո՜ք ում արյունը փողն է հոսող: Մողո՜ք ում մատները տասը բանակներ են: Մողո՜ք ում կուրծքը հաստոց է մարդակեր: Մողո՜ք ում ականջը ծխացող գերեզման է:

Մողո՜ք ում աչքերը հազար կույր պատուհան են: Մողո՜ք ում երկնաքերները կանգնած են շարքով հանց անսպառ Եհովաներ: Մողո՜ք ում

գործարանները երազում ու ճռնչում են մշուշի մեջ: Մողո՛ք ում ծխնելույզներն ու անտեններն են քաղաքների պսակը:

Մողո՛ք ում սերն անվերջ նավթ ու քար է: Մողո՛ք ում հոգին էլեկտրականություն է ու բանկ: Մողո՛ք ում աղքատությունն հանճարի ուրվականն է: Մողո՛ք ում ճակատագիրը անսեռ ջրածնի ամպ է: Մողո՛ք ում անունը Միտքն է:

Մողո՛ք ում մեջ նստած եմ մենակ: Մողո՛ք որտեղ Հրեշտակներ եմ երազում: Գժվա՛ծ Մողոքի մեջ: Ծծո՛ղ Մողոքի մեջ: Սիրապակաս ու անտղամարդ Մողոքո՛ւմ:

Մողո՛ք որ վաղ է մտել հոգիս: Մողո՛ք ում մեջ գիտակցություն եմ առանց մարմնի: Մողո՛ք որ վախով դուրս քշեց բնական էքստազս: Մողո՛ք ում թողնում եմ: Զարթնո՛ւմ Մողոքի մեջ: Երկնքից թափվող լո՛ւյս:

Մողո՛ք: Մողո՛ք: Ռոբոտ տնե՛ր անտես արվարձաննե՛ր արժեքների կմա՛խք կույր կապիտալնե՛ր դիվային ինդուստրիա՛ ուրվական ազգե՛ր անպարտելի գժանո՛ց գրանիտե կլիրնե՛ր հրեշավոր ռումբե՛ր:

Մեջքները պոկվե՛ց Մողոքին Երկինք հանելուց: Մայթերո՛վ, ծառերո՛վ, ռադիոյո՛վ, տոննայո՛վ բարձրացրին քաղաքը Երկինք որ կա ու ամենուր է մեր շուրջը:

Տեսիլքնե՛ր նշաննե՛ր ցնո՛րք հրաշքնե՛ր էքստա՛զ ցած քշվեցին ամերիկյան գետով:

Երազնե՛ր պաշտումնե՛ր պայծառացո՛ւմ կրոննե՛ր զգայուն էշության մի ամբողջ նավաբեռ:

Անցո՛ւմ գետի միջով հաղթահարո՛ւմ շրջո՛ւմ ու խաչելությո՛ւն ցած քշվեցին գետով: Դոզված երանությո՛ւն: Աստվածհայտնությո՛ւն: Հուսալքումնե՛ր: Տասը տարվա կենդանական ռռնո՛ց ու ինքնասպանությո՛ւն: Ուղեղնե՛ր: Նոր սերե՛ր: Խելագարված սերո՛ւնդ: Ցխվեցին ժամանակի ժայռերին:

Իսկական սուրբ ծիծա՛ղ գետում: Ամենա՛յն ինչ տեսան՝ վայրի աչքե՛ր, սուրբ տնքոցնե՛ր:

Նրանք հրաժե՛շտ են տալիս: Նրանք տանիքից ցատկեցին մենությո՛ւն, ձեռքով անելո՛վ, ձեռքներին ծաղիկնե՛ր: Ցա՛ծ դեպի գետը դեպի փողո՛ց:

III

Կարլ Սոլոմո՛ն: Հետդ եմ Ռոքլանդում[61]

որտեղ դու ավելի ես գժված քան ես

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ պիտի որ տարօրինակ զգաս

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ կրկնօրինակում ես մորս ստվերը

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ սպանել ես քո տասներկու քարտուղարներին

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ ծիծաղում ես անտես այս կատակից

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ մեծ գրողներ ենք միևնույն ահավոր գրամեքենայի վրա

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ վիճակդ լրջացել է հաղորդում է ռադիոն

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ գանգի տաղավարներն այլևս չեն ընդունում զգայարանների որդերին

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ խմում ես Յութիքայի[62] անմարդ կանանց կրծքի թեյը

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ փոստ ես կապում բուժքույրերիդ մարմնի վրա՝ Բրոնքսի հարպիաների[63]

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ զսպաշապիկի մեջ գոռում ես որ պարտվում ես անդունդի պինգպոնգի խաղը ըստ էության

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ բռունցքներով ծեծում ես կատատոնիկ դաշնամուրը հոգին անմեղ է ու անմահ ու չպիտի մեռնի անաստված ճաղապատ գժանոցում

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ հիսուն շոկն էլ չեն վերադարձնի հոգիդ իր մարմնին դեպի անդունդի խաչը իր ուխտից

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ բժիշկներիդ մեղադրում ես խելապակասության մեջ ու իրեական սոցիալիստ հեղափոխություն ես մտմտում ազգային ֆաշիստական Գողգոթայի դեմ

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ ճեղքելու ես Լոնգ Այլընդի երկինքներն ու հարություն տաս քո մարդկային կենդանի Հիսուսին գերմարդկային աճյունասափորից

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ քսանհինգ հազար խելառ ընկեր բոլորը միաձայն երգում են Ինտերնացիոնալի վերջին տները

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ գրկում ու պաչում ենք Միացյալ Նահանգներին մեր անկողնու ծածկոցի տակ Միացյալ Նահանգներին որ հազում է ամբողջ գիշեր ու չի թողնում քնենք

հետդ եմ Ռոքլանդում

որտեղ ցնցված զարթնում ենք կոմայից մեր իսկ հոգու ինքնաթիռները բզվում են տանիքներին եկել են հրեշտակային ռումբեր նետեն հիվանդանոցը լույս է սփռում ինքն իր վրա երևակայական պատերը քանդվում են O լղար լեգեոններ դուրս վազեցեք O կարեկցանքի աստեղազարդ փայլունավոր ցնցում հարատև պատերազմն այստեղ է O հաղթանակ մոռացիր ներքնաշորդ մենք ազատ ենք

հետդ եմ Ռոքլանդում

երազներիս մեջ քայլում ես նավարկություններից թրջված Ամերիկան հատող մայրուղիով արտասվախեղդ դեպի իմ քոթեջի դուռը արևմտյան գիշերի մեջ

Սան Ֆրանցիսկո, 1955–56

ՏՈՂԱՏԱԿ ՈՌՆՈՑԻՆ

Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ: Սո՜ւրբ:

Աշխարհը սո՜ւրբ է: Հոգին սո՜ւրբ է: Մաշկը սո՜ւրբ է: Քիթը սո՜ւրբ է: Լեզուն ու կլիրը ու ձեռքը ու ծակը սո՜ւրբ են:

Ամեն բան սո՜ւրբ է, ամեն ոք սո՜ւրբ է, ամեն տեղը սո՜ւրբ է, ամեն օրը հավերժի մե՜ջ է: Ամեն մարդ հրեշտա՜կ է:

Ավարան սո՛ւրբ է ինչպես սերովբեն: Խելագարը սո՛ւրբ է ինչպես դու իմ հոգի սո՛ւրբ եք:
Գրամեքենան սո՛ւրբ է բանաստեղծությունը սո՛ւրբ է ձայնը սո՛ւրբ է լսողները սո՛ւրբ են էքստազը սո՛ւրբ է:
Սուրբ Փիթր սուրբ Ալեն սուրբ Սոլոմոն սուրբ Լուսիեն սուրբ Քերուաք սուրբ Հանքե սուրբ Բարոուզ սուրբ Քասադի սուրբ անհայտ ոռահան եղածներ ու տառապյալ մուրացիկներ սուրբ զարհուրելի մարդկային հրեշտակներ:

Սուրբ իմ մա՛յր խելագար ապաստարանում: Կանզասի պապերի սուրբ կլիրներ:

Սուրբ մղկտացող սաքսոֆո՛ն: Սուրբ բիբոփ ապոկալիպսի՛ս: Սուրբ ջազ նվագախմբի մարիխուանա– հիփսթեր խաղաղ– կակտուսե ծխամորճ ու թմբո՛ւկ:
Սուրբ երկնաքերների ու մայթերի մենությո՛ւն: Սուրբ միլիոններով լցված բուֆետներ: Սուրբ արցունքների խորհրդավոր գետեր փողոցների տակ:

Սուրբ մենավոր քանդո՛ղ: Սուրբ միջին խավի հսկայական գառնո՛ւկ: Սուրբ ապստամբության խելագար հովիվներ: Լոս Անջելեսը փորողը Է՛ Լոս Անջելես:

Սուրբ Նյու Յորք Սուրբ Սան Ֆրանցիսկո Սուրբ Փիորիա ու Սիըթըլ Սուրբ Փարիզ Սուրբ Թանջիեր Սուրբ Մոսկվա Սուրբ Ստամբուլ

Սուրբ ժամանա՛կ հավերժության մեջ սուրբ հավերժությո՛ւն ժամանակի մեջ սուրբ ժամացույցներ տարածությունում սուրբ չորրորդ չափո՛ւմ սուրբ հինգերորդ Ինտերնացիոնա՛լ սուրբ Հրեշտա՛կ Մողոքի մեջ:

Սուրբ ծո՛վ սուրբ անապա՛տ սուրբ երկաթուղի՛ սուրբ լոկոմոտի՛վ սուրբ տեսիլքներ սուրբ ցնո՛րք սուրբ հրաշքներ սուրբ ակնագո՛ւնդ սուրբ անդո՛ւնդ:

Սուրբ ներողամտությո՛ւն: կարեկցա՛նք: ողորմությո՛ւն: հավա՛տ: Սո՛ւրբ: Մե՛ր: մարմիններ: տառապա՛նք: մեծախոհությո՛ւն:

Սուրբ գերբնական գերընտիր խելացի բարությո՛ւն հոգու:

Բերքլի, 1955

[1] «Ոռնոցն» առաջին անգամ տպագրվել է 1956-ին՝ «Ոռնոց և այլ բանաստեղծություններ» գրքով: 1957-ին գրքի հրատարակիչ Լոուրենս Ֆերլինգետտին դատի առաջ է կանգնում՝ անպարկեշտ գրականություն տպագրելու մեղադրանքով, բայց դատավոր Քլեյթոն Հորնը արդարացնում է հրատարակչին. գործը փակվում է: «Ոռնոցը» համարվում է ամերիկյան գրականության մեծագույն ստեղծագործություններից մեկը:
«Ոռնոցի» մեկ այլ թարգմանություն տպագրվել է «Գարուն» ամսագրի 1999-ի 7-րդ համարում՝ Արտեմ Հարությունյանի թարգմանությամբ: Երկու հատված թարգմանել է նաև Սամվել Մկրտչյանը, որը տպագրվել է «Անգլիական և ամերիկյան բանաստեղծություն» ժողովածուում, 2014-ին:
[2] Գինսբերգը հանդիպել է ամերիկացի գրող Կարլ Սոլոմոնին Կոլումբիայի հոգեբուժական հիվանդանոցում, որտեղ Սոլոմոնին բուժում էին ընկճախտից ինսուլինի շոկով: Գինսբերգը հայտնվել էր հոգեբուժական հիվանդանոցում իր երկու դասախոսների միջնորդությամբ՝ որպես բանտարկման այլընտրանք այն բանի համար, որ իր բնակարանում էր թաքցրել բանաստեղծ Հերբերթ Հանքեի ու ընկերների գողոնը:
[3] Բարձր կամուրջի վրայով անցնող գնացք Նյու Յորքում (Elivated train), բայց «Էլ» եբրայերենով նշանակում է նաև աստված, աստվածություն: Խաղարկում է երկու իմաստն էլ:
[4] Գինսբերգը բանաստեղծ Ջեք Քերուաքի հետ միասին սովորել է Կոլումբիայի համալսարանում, որի ընթացքում հիմնականում զբաղվում էին թմրանյութեր փորձարկելով ու հետևելով իրենց տեսիլքներին:
[5] Այստեղ նախնական տարբերակներում եղել է «անարխիա» բառը, որը Գինսբերգը հետագայում փոխարինել է «Արկանզասով»՝ համադրելու նաև Քերուաքի «Ճանապարհին» վեպի հետ, որ պատմում է նրանց անվերջ ճամփորդությունների ու փորձարկումների մասին:
[6] Գինսբերգի ամենամեծ ազդեցություններից մեկը անգլիացի բանաստեղծ Ուիլյամ Բլեյքն էր, որի ձայնը մի քանի անգամ լսել է հալյուցինացիաների ժամանակ:
[7] Գինսբերգի ընկերներից շատերը՝ Քերուաքը, Բարոուզը, հեռացվել էին համալսարաններից տարբեր պատճառներով, իսկ Գինսբերգն ինքը հեռացվել էր Կոլումբիայի համալսարանից, քանի որ կասկածելով, որ հանրակացարանային սենյակները մաքրող հավաքարարը, հակաիրեական նկրտումներից ելնելով, չէր մաքրում իր սենյակի պատուհանները՝ փորձել էր նրա մտքերն արտահայտել՝ դրանք անձամբ բարձրաձայնելով. իր փոշոտ պատուհաններին մատով գրել էր «Fuck the Jews», նկարել էր սվաստիկա ու ավելացրել, որ համալսարանի ռեկտորը ձվեր չունի:
[8] Գինսբերգի ընկերներից Լուսիեն Քարրը (նա էր Գինսբերգին ծանոթացրել Քերուաքի ու Բարոուզի հետ) մոր հորդորով վառել է իր «գժի թուղթը», որի հետ նաև ունեցած 20 դոլարը:
[9] Լարեդոն տեխասյան քաղաք-անցակետ է՝ սահմանակից Մեքսիկային, որտեղից ներքնաշորերի մեջ թաքցրած մարիխուանա էին փորձում անցկացնել:
[10] Որոշ թմրանյութերի օգտագործումը առաջացնում էր այրոցի, վառվելու զգացողություն, ու դրա ժարգոնային արտահայտությունն էր «կրակ կուլ տալը»: «Ներկել» (paint) բառի գործածումը ակնարկում է երկու իմաստ՝ հալյուցինացիաների հասնելու

համար ներկ կամ սոսինձ շնչելը, և ներկած, այսինքն՝ անպաստառ, հետին, էժան հյուրատներում ապրելը:
[11] Գինսբերգը հիմնականում նշում է այն ճաշարանների, սրճարանների, հյուրատների անունները, որտեղ ժամանակ էին անցկացնում ընկերներով, և որոնք դարձան բիթ սերնդի կազմավորման վայրերը՝ Փարադայզ Ալեյ, Բիքֆորդս, Ֆուգացիս և այլն:
[12] Գինսբերգը մեծացել է Փաթերսոնում, Նյու Ջերսի, իսկ Կանադա երբեք ոտք չի դրել (Քերուաքն ուներ ֆրանս-կանադական արմատներ), բայց թմրանյութերի ազդեցության տակ բևեռները կարող էին տեղակայվել ծանոթ լիբերալ Փաթերսոնում ու անծանոթ մռայլ Կանադայում:
[13] Այս և մյուս տեղերում, որտեղ թարգմանության մեջ օգտագործվել է «Ժամանակ» բառը, Գինսբերգը գրում է Time բառը, որն ամերիկյան հայտնի պարբերականների անունն է («Նյու Յորք թայմս», «Վաշինգտոն թայմս» և այլն): Բնագրում երկու իմաստն էլ միաժամանակ գործում են:
[14] Օգտագործում է peyote բառը: Կակտուսների այն տեսակն է, որ կարող է հասցնել այնպիսի հալյուցինացիաների, որից պատերը կարծես հալչում են, իրերը ձուլվում են, նաև առաջանում է շատ խոսելու ցանկություն: Բիթնիկների շրջանում ամենահայտնի թմրամիջոցներից մեկն էր, որի օգտագործման թույլտվությունն ունեին միայն Ամերիկայի որոշ բնիկ ցեղեր, քանի որ դա նրանց շամանական ծիսակարգի մի մասն էր: «Ոռնոցը»՝ ըստ Գինսբերգի, գրվել է peyote-ի ազդեցության տակ: Բանաստեղծության մեջ էլ իմաստային պատերը ձուլված են, գրեթե չկան կետադրական նշաններ, որոշիչները կարող են միաժամանակ վերաբերել և՛ նախորդող, և) հաջորդող բառին այնպես, որ իրականությունը քանդվի ու հնարավորություն տա տարբեր ձևերով հավաքելու:
[15] Բենզեդրինի ազդեցության տակ Գինսբերգն ու ընկերները կարող էին մետրոյով մի ծայրից մյուսը գնալ անդադար, մինչև թմրանյութի ազդեցությունը թողներ:
[16] Գինսբերգի հորինած արտահայտությունն է (hydrogen jukebox), որը վերաբերում է ջրածնային ռումբին: Բիթնիկները շատ էին անդրադառնում ատոմային և ջրածնային ռումբերի փորձարկումներին, էկոլոգիական մեծամասշտաբ խնդիրներին՝ կազմակերպելով հարյուրհազարանոց ցույցեր:
[17] Բիթնիկները տարված էին բուդդայական գաղափարներով՝ հատկապես զեն- բուդդայականությամբ: Հաճախ էին ճամփորդում բուդդիստական երկրներ: Նրանց հիմնական պրակտիկաներից էին թմրանյութերը, յոգան ու մեդիտացիան:
[18] Նյու Ջերսի նահանգի Ատլանտիկ Սիթիի քաղաքային դահլիճն է, որ կառուցվել է Գինսբերգի ծննդյան տարում: Այստեղ ընդունվել են կոնվենցիաներ, գումարվել են ժողովներ «պատերազմի գիտնականների» կողմից, նաև անցկացվել են համերգներ, այստեղ է գտնվում աշխարհի ամենամեծ երգեհոնը: Գինսբերգի համար երկիմաստ այս կառույցի լուսանկարը պատկերվում էր Անտլանտիկ Սիթիի բացիկների վրա:
[19] Քաղաք Մարոկկոյում, որտեղ որոշ ժամանակ ապրել է Բարոուզը, ուր նրան այցելել են բիթնիկներից շատերը: Այստեղ են փորձարկել Արևելքում հայտնի թմրամիջոցներ:
[20] Գինսբերգը ծնվել է Նյուարք քաղաքում, Նյու Ջերսի:
[21] Հույն փիլիսոփա (204–270 մ.թ.), ում փիլիսոփայությունը

հիմնված է երեք սկզբունքների վրա՝ Մեկի, Մտքի և Հոգու:
[22] XVI դ. իսպանացի միստիկ մտածող, բանաստեղծ: Աշխատություններ է գրել հոգու զարգացման մասին:
[23] Բոփ կամ բիբոփ – ջազի ոճային տարբերակ է՝ արագ տեմպով, իմպրովիզային, պահանջում է վիրտուոզ կատարողականություն, հիմնված է հարմոնիկ կառույցի վրա, որին որոշ միջակայքերով վերադառնում են իմպրովիզային հատվածներից հետո: Գինսբերգը օրինակ է բերում Լեսթեր Յանգին՝ https://www.youtube.com/watch?v=YZ_aoZyJgw4:
[24] Կանզասը համարվում էր ջազի ու բոփի Մեքքան:
[25] Ոչ շատ բերրի, լեռնային նահանգ է, որտեղ ժամանակին սպանվել է բնիկ հնդկացիական բնակչությունը գրեթե ամբողջությամբ:
[26] Գինսբերգը իր լսողական հալյուցինացիան ունենում է Բալթիմորում, երբ լսում է Բլեյքի ձայնը, թե ինչպես է կարդում իր բանաստեղծությունը: Թմրադեղերի հետագա փորձարկումները՝ ըստ նրա, նույն հալյուցինացիային հասնելու փորձեր էին:
[27] Բանաստեղծ Նիլ Քասադին մեքենաներ էր գողանում, որոնցով ճամփորդում էին Ամերիկայով մեկ մինչև բռնվելն ու հերթական դատավարությունը:
[28] Գինսբերգը բնագրում օգտագործում է «չինացի» բառը, որը եթե հայերեն թարգմանվեր նույն բառով, չէր փոխանցի իմաստը: «Չինացի» բառը թմրամոլների շրջանում ընդունված ժարգոն էր, քանի որ չինական որոշակի տեսակի թիանավի անունը համանունություն էր ստեղծում անգլերեն ժարգոնային «թմրանյութ» բառի հետ՝ junk. թիանավով էլ, թմրանյութով էլ «լողում են», «նավարկում են»: «Չինացին» վերաբերում էր մասնավորապես հերոինին:
[29] Հյուսթոնը նույնպես հայտնի էր իր ջազով ու թմրանյութերով:
[30] Բիթնիկների վրա մեծ ազդեցություն է թողել Լատինական Ամերիկան: Գինսբերգը մեծ հիացում ուներ մասնավորապես մեքսիկական բնիկների մշակույթի հանդեպ:
[31] «Ոռնոցի» տպագրությունից հետո Գինսբերգը ճամփորդել է Աֆրիկա:
[32] Ընկերներից Ջոն Հոֆմանը մահացել է Մեքսիկայում՝ լեռնային արշավի ժամանակ, բայց այս տողով հղում է կատարում նաև Մալքոլմ Լոուրիի «Հրաբխի տակ» վեպին:
[33] Կոլումբիայից հետո Գինսբերգը գնում է Սան Ֆրանցիսկո, որտեղ էլ հանդիպում է իր ամբողջ կյանքի «սեր տղային»՝ բանաստեղծ Փիթր Օրլովսկուն:
[34] Հետաքննությունների դաշնային բյուրո (FBI – Federal Bureau of Investigation):
[35] Կապիտալիզմի դեմ բողոքի այս ակցիան կազմակերպել էր Ջուդիթ Մալինայի ու Ջուլիան Բեքի «Կենդանի թատրոն» փորձարարական արվեստի խումբը, ովքեր բողոքի ակցիայի ժամանակ լացում էին ու հանում շորերը՝ բաժանելով կոմունիստական թռուցիկներ: Գինսբերգը որոշ ժամանակ տարված է եղել կոմունիստական գաղափարներով:
[36] Սա իսկապես արել է բիթ ընկերներից Բիլ Քանասթրան, ով մահացել է՝ ընկնելով մետրոյի պատուհանից, երբ փորձել է դուրս մագլցել այն պահին, երբ գնացքն արդեն շարժվել էր:
[37] Սա այն հիմնական տողն է, որի համար «Ոռնոցը» դատավարության է քաշվել 1957-ին:
[38] Նիլ Քասադի – բանաստեղծ, բիթնիկների ամենախարիզ-

մատիկ կերպարներից մեկը: Մեծացել է Կոլորադոյի Դենվեր քաղաքում: Անհամար դատերի առաջ է կանգնել՝ գողություն-ների, թմրանյութերի ու մանր հանցագործությունների համար: Մահացել է Մեքսիկայում մի հարսանիքից հետո, երբ հարբած երկար քայլել է գնացքի գծերով ու փետրվար ամսին հագին ունենալով շատ բարակ վերնաշապիկ՝ սառել է ու առավոտյան անզգայացած հայտնաբերվել երկաթուղու աշխատակիցների կողմից:

[39] Տեսություն, ըստ որի՝ միակ բանի գոյության գիտակցությունը կարող է վերաբերել միայն *ես*-ին (self): Այսինքն՝ գոյությունն ինձ համար *իմ* գոյությունն է կամ *իմ* մտային վիճակի գոյությու-նը: *«Ես գոյություն ունեցող միակ միտքն եմ»:*

[40] Հունգարական գինու տեսակ:

[41] Բանը պատահել է ընկերներից բանաստեղծ Հերբերթ Հան-քեի հետ:

[42] Բաուըրին տարածք է Մանհեթընում, որն իր հերթին գտնվում է երկու գետերի՝ Հուդզոնի և Իսթ Րիվրի արանքում:

[43] Քերուաքը Նյու Յորքի Վաշինգտոն հրապարակից բանջարե-ղենով լցված ձեռնասայլակ է գողացել, որն ի վերջո հանգրվա-նել է Գինսբերգի տանը:

[44] Ընկերներից Բիլ Քեքը իսկապես կլավիկորդներ էր սարքում:

[45] Գինսբերգը բլեյքյան հալյուցինացիան ունենալու ժամանակ վարձով ապրում էր աստվածաբանության մի ուսանողի՝ Ռասըլ Դուրգի հետ, ով իր թուղթ ու գիրքը պահում էր նարնջագույն պանակներում:

[46] Դեպքը պատահել է Գինսբերգի ուսանողական ընկերոջ՝ Լուի Սիմփսոնի հետ, ով իր ժամացույցը դուրս էր նետել հոգեբու-ժարանի պատուհանից, որտեղ բուժվում էր հետտրավմատիկ խանգարումից:

[47] Գինսբերգի մայրը՝ Նաոմին, նույնպես կատարել է ինքնաս-պանության փորձեր:

[48] Ընկերներից Թուլի Քուփֆերբերգը իսկապես թռել է Բրուքլի-նի կամրջից ցած, բայց անհամար կոտրվածքներով տեղափոխ-վել է հիվանդանոց:

[49] Փասեիքը գետ է հյուսիսային Նյու Ջերսիում, որն անցնում է Նյուարք և Փաթերսոն քաղաքների միջով, որտեղ Գինսբերգը համապատասխանաբար ծնվել և մեծացել է:

[50] Փոքրիկ կղզի Սան Ֆրանցիսկոյի մոտ, որտեղ կային մի լու-սաշտարակ, մի զինվորական բանտ և մի դաշնային բանտ:

[51] Բիթնիկներից շատերը գնում էին Մեքսիկա՝ մշակելու թմրա-նյութերի օգտագործման իրենց տեխնիկան՝ ինչպես Բարոուզը, որ հետո մի քանի տարով հաստատվեց Մարոկկոյի Թանջիեր քաղաքում: Իսկ «Սաղերն Փասիֆիք» երկաթուղային ընկերու-թյունում մի կարճ ժամանակ աշխատել է Նիլ Քասադին:

[52] Գերեզմանատուն է Նյու Յորքի Բրոնքս շրջանում, որտեղ թաղված են Ամերիկայի հայտնի մարդկանցից մի քանիսը:

[53] Կարլ Սոլոմոնի ձեռքի գործն էր:

[54] Վիրահատական միջամտություն, որի ժամանակ ուղեղից կտրում կամ քերում էին ախտահարված այն մասը, որը հա-մարվում էր հոգեկան խանգարման պատճառը:

[55] Պինգպոնգը բարերար ազդեցություն էր թողնում Ալցհայմե-րով հիվանդների առողջության վրա:

[56] Նյարդային ու հենաշարժական համակարգի անկանոն վի-ճակ, որ բնորոշվում է կամ լրիվ անշարժությամբ, կամ գերակ-

տիվ շարժումներով, որը հիվանդը ի վիճակի չէ կառավարել: Պինգպոնգի սեղանը շուռ է տվել Կարլ Սոլոմոնը:
[57] Հոգեբուժական հիվանդանոցներ:
[58] **Թերասությունը** (elipses), որտեղ բառերը գործածվում են հեռագրային ձևով՝ միայն հիմնականները, դուրս թողնելով միջանկյալ, ենթադրվող բառերը, Գինսբերգը որդեգրել է ճապոնական հայքուից, բանաստեղծ Էզրա Փաունդից:
Կատալոգը Ուոլթ Ուիթմենի նախընտրած բանաստեղծական ձևն էր՝ երկար տողեր, որ կատալոգային կարգով բաներ են թվարկում՝ միշտ վերադառնալով նույն հիմնաբառին, ինչպես Գինսբերգի դեպքում տողը սկսող «ով», «ովքեր» բառերը առաջին մասի մեջ:
Տատանվող ռիթմը ջազի ոճական տարբերակներից մեկի՝ բիբոփի ռիթմն է տողի մեջ, իսկ տողի չափը համապատասխանում է Գինսբերգի մեկ շնչին, որը՝ ըստ նրա, ավելի երկար է, քան, օրինակ, բանաստեղծ Կարլոս Ուիլյամսինը՝ ազդված լինելով եբրայերենի չափից:
Տրոփող միջոցով նկատի ունի տարածաժամանակային հոլովույթ, որը ընթերցողի կամ դիտողի մոտ առաջ է բերում եռաչափ պատկերի զգացողություն: Այս հնարքը վերցրել էր Սեզանից և փորձում էր բառերն իրար հետ դասավորել այնպես, ինչպես Սեզանը՝ գույները: Գինսբերգը նույնիսկ հատուկ արտահայտություն է հնարել՝ eyeball kick, որը բնորոշում է աչքի անցումը, աչքի ցատկը մի գույնից մյուսը կամ մի բառից մյուսը, և հենց անցման պահի՝ «ակնագնդի ցատկի» մեջ է, որ առաջանում է եռաչափության զգացողությունը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է, որ գինսբերգյան իրար կողքի շարված բառերը թարգմանվելիս ոչ թե վերածվեն ճիշտ քերականական նախադասությունների, այլ պահպանեն «ակնագնդի ցատկի» սկզբունքը: Թարգմանության մեջ փորձել ենք պահպանել բանաստեղծության կառուցման գինսբերգյան բոլոր հնարքները:
[59] «Տե՛ր իմ, Տե՛ր իմ, ինչո՞ւ լքեցիր (զոհեցիր) ինձ»: Հիսուսի վերջին բացականչությունն է խաչի վրա:
[60] Մողոքը քանանացիների կրակե աստվածության անունն է, որին երեխաներ էին զոհաբերում՝ նետելով կրակի մեջ: Այս բանաստեղծության մեջ «Մողոքը» կապիտալիզմի, արդյունաբերության դարաշրջանի խորհրդանիշն է: Իր տեսողական հալյուցինացիաներից մեկի ժամանակ Գինսբերգը տեսել է Մողոք աստվածության հսկա պատկերը Սան Ֆրանցիսկոյի «Ֆրենսիս Դրեյք» հյուրանոցի ամբողջ պատի երկայնքով:
[61] Կոլումբիայի հոգեբուժական հիվանդանոցն է, որի համար Գինսբերգը օգտագործում է Rockland բառը: Թարգմ.՝ ժայռերի, քարերի տեղ, երկիր: Ամենամեծ հոգեբուժական հիվանդանոցներից էր, որտեղ կար քանիհինգ հազար հիվանդ:
[62] Քաղաք է Նյու Յորքի շրջանում, որի մոտ է գտնվում «Ռոքլանդը»:
[63] Հարպիան (harpy) միֆական արարած է՝ թռչնի մարմնով ու կնոջ դեմքով: Ըստ միֆի՝ գողանում է իր զոհերի ուտելիքը: Փոխաբերաբար օգտագործվում է որպես ձանձրալի, նյարդայնացնող կին:

Malest Cornifici Tuo Catullo[1]

Ուրախ է սիրտս, Քերուաք, քո խելառ Ալենն
ի վերջո գտավ ուզածը. մի նոր ջահել որձակ,
ու հավերժական տղայի տիպարը մտքիս
քայլում է Սան Ֆրանցիսկոյի փողոցներով,
գեղամարմին, դիմավորում է ինձ բուֆետներում
ու սիրում է ինձ: Էխ, մի մտածի գլուխ եմ տանում:
Զղայնացած ես վրաս: Սիրածներիս համա՛ր:
Դժվար է քաք ուտել՝ առանց տեսիլների.
երբ աչքերը վրաս է, դրախտի պես է:

Սան Ֆրանցիսկո, 1955

Սիրային բանաստեղծություն Ուիթմենի թեմայով

լուռ ննջարան մտնեմ ու պառկեմ փեսայի ու հարսի արանքում,

երկնքից լույս ընկած մարմիններ ընկողմանած սպասման մեջ անխոնջ ու մերկ,

մթան մեջ թևերն աչքերին տարածած,

գլուխս նրանց ուսերի ու կրծքերի մեջ թաղեմ՝ շնչելով նրանց մաշկը,

ու շոյեմ ու համբուրեմ վիզ ու բերան ու հետևը բաց ու իմանալի անեմ,

ոտքերը վեր ծալված ներս ընդունելու, առնանդամը մթության մեջ խելահեղ ու

հարձակվող

բորբոքված ծակով հասնելու մինչև քսվելը գլխին,

մարմիններն ագուցված մերկ սրսփանքին, վառվող կոնքերն ու հետույքներն իրար մեջ հագած,

ու աչքերը, աչքերը ցոլուն ու կանչող, որ լայնանում են նայվածքների մեջ ու արձակման,
շարժումների տնքոց, ձայներ, ձեռքեր օդի մեջ, ազդրերի միջև,

ձեռքեր թացության մեջ նվաղած կոնքերի վրա, որովայնների տրոփուն կծկումներ,

մինչև սպիտակ սերմը հոսի ոլորուն սավաններին,
ու հարսը լաց լինի ներումի համար, ու փեսան ցողվի կրքի ու կարեկցանքի արցունքներով,

ու ես վեր ելնեմ անկողնուց լրացված վերջին մտերմամոտ շոյանքներով ու համբույրներով հրաժեշտի –

և այս ամենը՝ մինչև միտքը կարթնանա, ստվերների ու փակ դռների ետևում մթնած մի շենքի,

որտեղ ապրողներն հածում են չբավարարված գիշերում,

մերկանդամ ուրուներ, որ լռության մեջ փնտրում են իրար:

Սան Խոսե, 1954

ՔԱՂՑՐ ՏՂԱ, ԹՈ ՄԵՋԴ ԴՆԵՄ

պաչեմ դեմքդ, լիզեմ վիզդ
շուրթիդ կպնեմ, լեզվի խտիտ լեզվի ծայրի
քիթը քթին, մունջ հարցումներ
տղամարդու հետ քնած կա՞ս.
ձեռքը թավալ մեջքով դեպի թացը մազի փափուկ անցքը
աչքը աչքին նայի աղոտ, ու նայելուց արցունք քամվի –

Դե գործդ տես, մազերիս մեջ մատներովդ
Մորուքիցս քաշի, լեզվով ականջներս արա, ու կոպերս ու ճակատս շրթունքներով
– քեզ փողոցում հանդիպեցի, տոպրակս տուն բերիր –
Ձեռքդ իջացրու ոտքերիս,
հուպ տուր թե էդտեղ է կանգնած ձողս նրբին
կլորացած ափիդ մեջ տաք, փափուկ բթամատդ գլխին –

Դավայ դավայ կեր ինձ լիաշրթունք ու թացլեզու, բացաչք –
գազանանոցում կենդանին դուրս է նայում գանգի սեղմ վանդակից – դու ժպտա ինձ, ես էստեղ եմ ո՛նց որ և դու, որովայնիդ վրա ձեռքը պտուկներից կրծոսկրերի վանդակով ցած ողորկամաշկ փորիդ երակի երկայնքով մկաններով մինչև
մետաքսափայլ շեքդ
կանգնած կոկոնիդ վրայով ազդրրիդ աջ
մկանների պատով ողորկ վերև նորից –
Դե վրայովս ցած գնա կոկորդովդ
կլանելով կոթս մինչև հիմքը լեզվիդ
կլիրս ձիգ ծծիր –
ես էլ նույնը կանեմ քոնի պրկված փափուկ մաշկին, բնծակդ կլիզեմ –

Դավայ դավայ, դե բաց, ոտքերդ տարածի առ էս բարձը
տակդ
Դավայ ներս առ, էս վազելինը ձգվածին, էս էն

անուշ ոռդ օդում պառկած – ու մի
վառվող կլիր փափկաբերան ծակիդ – թուլացիր ու ներս թող –
Թուլացի էյ Կարլոս ներս թող, սիրում եմ քեզ, ո՛նց եղավ
որ եկար կարևոր չի բացի այս համբույրից վիզս գրկող թևերիցդ
                    բերանդ բաց երկու
աչքդ կլանված վեր, ուժեղ դանդաղ դոփումը այս
փափկությունը արձակված քաղցր հառաչը:

Նյու Յորք
հունվարի 3, 1974

[1] Լատ.՝ Գործերը վատ են քո Կատուլլոյի, Կոռնիֆիկի: Խաղարկել է հռոմեացի բանաստեղծ Գայուս Կատուլլուսի բանաստեղծությունը (մ.թ.ա. 1-ին դար)՝ նախատիպ բանաստեղծության տոնայնության մռայլությունը փոխարինելով զվարթությամբ: Ինչպես Գինսբերգը՝ բիթնիկների խմբին, Կատուլլուսն էլ պատկանում էր լատինական պոեզիայի նեոթերիկների (նոր պոեզիա) խմբին, ովքեր հակադրվում էին ավանդական հասարակական ու գրական նորմերին, մերժում էին պատկերել էպիկական հերոսներին ու աստվածներին ու նոր, նուրբ, խաղացկուն ոճով անդրադառնում էին մարդուն ու կյանքին: Կատուլլուսի բանաստեղծությունը, ուղղված իր ընկեր Կոռնիֆիկիուսին, սա է.

Գործերը վատ են քո Կատուլլուսի, Կոռնիֆիկիուս,
Գործերը վատ են, Հերկուլեսը վկա, ցավալի է, բայց այդպես է,
ու դեռ ավելի են վատանում, քանի անցնում են օրերն ու ժամերը:
Կարեկցության ի՞նչ խոսքերով ես, որ նվազագույնն է ու
ամենահեշտը, սփոփել դու նրան:
Զայրացած եմ վրադ: Այդպե՞ս ես վերաբերվում իմ սիրուն:
Ինձ սփոփանքի մի նշույլ տուր գոնե՝
ավելի տխուր, քան արցունքները Սիմոնիդեսի:
(Ծնթ. թարգմ.)



Մայքլ Ջիրա

Թարգմանությունը՝ Լիլիթ Հակոբյանի

Ռոք երաժիշտ և գրող Մայքլ Ջիրան (Michael Gira) ծնվել է Լոս Անջելեսում 1954 թվականին: Շուտով իոր հետ տեղափոխվում է Եվրոպա: Ճամփորդում է Եվրոպայով, մեկ տարի ապրում Իսրայելում, չորս ու կես ամիս անցկացնում Երուսաղեմի բանտում՝ թմրանյութերի վաճառքի համար: Նրա տասնվեց տարին լրանում է բանտում: Վերադառնում է Կալիֆորնիա, հաճախում համայնքի քոլեջ, ապա՝ Լոս Անջելեսի արվեստի ու դիզայնի քոլեջ: Տեղափոխվում է Նյու Յորք 1979-ին, որտեղ էլ նվագում է Circus Mort կոչվող խմբում, մինչև կձևավորվեր մեկ այլ խումբ՝ Swans-ը: Բացի երաժշտությունից, Ջիրան նաև ակտիվ զբաղվում է գրական գործունեությամբ: Նրա պատմվածքների առաջին ժողովածուն հրատարակվում է 1995-ին: Պատմվածքներում արծարծվում են ինսցեստի, ինքնությունը կորցնելու, սպանության, ինքնատեւության, բռնաբարության և ֆիզիկական ու մտավոր անկման թեմաները:

Ապրումակցում

Երբ քրոջս դուրս գրեցին գժանոցից, նա եկավ ինձ հետ ապրելու իմ կիսաթեք ու ավիրվող երկսենյականոց տանը, որը գնել էի այն չնչին գումարով, որ ժառանգել էի, երբ մահացան մեր ծնողները: Նա ժամանեց մի օր կեսօրին, տաքսիով՝ առանց նախօրոք զգուշացնելու: Պետք է որ նա բնազդաբար զգացած լիներ, որ ես իրեն կընդունեի: Չգիտեմ՝ ինչպես և ինչու էին նրան դուրս գրել: Միգուցե պատճառը գժանոցի գերծանրաբեռնվածությունն էր, ու նրան ստիպել էին խզբզել իր անունը փաստաթղթերի վրա ու հետո շպրտել էին դուրս: Կամ գուցե նա պարզապես փախել էր, երբ ուշադիր չէին եղել (ո՞նց է հնարավոր նման վայրում ուշադիր լինել), ամեն դեպքում, նա երբեք դրա մասին չէր խոսում, ես էլ չէի հարցնում: Այնքան երջանիկ էի, որ նորից միասին ենք լինելու, որ ի վիճակի չէի թույլ տալու իրականությանը ներխուժել այդ կախարդանքի մեջ: Այն օրվանից, երբ նրան տարան, երբ նա հեկեկալով ու ծիծաղելով փորձում էր ձգվել-հասնել ինձ՝ ձեռքերը պարզած, որոնց վրայից կարմիր ձեռնոցի նման դեռևս հոսում էր մեր ծնողների արյունը, ես ինձ անդամահատ էի զգում, ասես նրան գոռալով դուրս էին քաշել իմ սեփական աղիքներից:

Տունս գտնվում էր մայրուղու կողքին, մի խումբ ուղղանկյունների մեջ, որոնք ուղիղ շարքով տեղավորված էին Լոս Անջելեսի օդանավակայանի թռիչքուղու մոտ: Ուղղանկյունների վերին հատվածում գտնվում էին բնակելի տները, որոնք տեղադրված էին ավտոտնակներից վերև: Ավտոտնակներում արձագանքում էր թռչող ու վայրէջք կատարող ինքնաթիռների անդադար ու անողոք ոռնոցը, որը խուլ բլթբլթոց էր հիշեցնում հին ու փխրուն պատերի ներսում ու, անցնելով փայտե հատակին, դառնում էր ցածր հաճախականությամբ ձայնային ալիք:

Մինչ քրոջս՝ ինձ մոտ տեղափոխվելը, ես ժամերով մերկ կանգնում էի սենյակի կենտրոնում՝ նրա մասին երազելով ու զգալով, թե ինչպես է տունը ճոճվում ու տատանվում, ու այդ զգացողությունը բարձրանում էր բոբիկ ոտնաթաթերիցս ու անցնում ոսկորներիս, ասես մարմինս փուչ զանգ լիներ, որը լարված էր ու ցնցվում էր կատարյալ հարմոնիայի մեջ այն հաճախականություններից, որոնք ինձ էին հասնում դրսի աշխարհից։ Արյունս մռռում էր հաճույքից։ Քույրս երգում էր իմ ներսում, կանչում էր ինձ հեռվում գտնվող իր խցից՝ ներելով ինձ իմ գաղտնիքներն ու մաքրելով գիտակցությունս։ Բայց օդն իմ տանը, ինչպես նաև իմ մարմնի ներսում նեխած էր, ասես ես իմ մարմնի ծակոտիներից կեղև էի տալիս ու կծկվում էի դրա ներսում՝ փտելով ու քայքայվելով, ու խղճալով ինքս ինձ այն բանի համար, որ չէի կարող քրոջս կողքին լինել։

Ես էլ ընդհանրապես դուրս չէի գալիս տանից, միայն ալկոհոլ ու միս գնելու համար։ Հարբում էի, կորցնում կապն ինքս ինձ հետ, հում միս էի ուտում՝ ձևացնելով, թե այն քույրս է, տնկում էի նրա մարմինը ստամոքսումս, որ նա աճեր իմ ներսում ու ապրեր իմ մեջ քաղցկեղի նման։ Երբ նրան գժանոց տարան, իմ սեփական կյանքն անմիջապես սկսեց դուրս գալ մարմնիցս։ Երբ դուրս եկա դատարանից ու կանգնեցի Լոս Անջելեսի թունավոր արևի տակ, զգացի, թե լույսն ինչպես է անցնում աչքերիցս դեպի գանգիս ներս՝ առանց ֆիլտրացվելու, ուղեղիս կենտրոնում առաջացնելով աճող ուռուցք։ Ուռուցքը նման էր վարդի, որի թերթիկներն ածելու պես սուր էին։ Ամեն մի նոր մտքի հետ մի թերթիկ սկսում էր ոլորվելով անջատվել ծաղկից ու ոլորաններ բացել ուղեղիս ծալքերում՝ գիտակցությանս լայն հատվածներ դանդաղ հեռացնելով։

Ես նրան երեք տարի չէի տեսել, երբ եկավ։ Ամռան կեսն էր։ Դեղին մրի շարունակական փսխուք էր թափվում տների վրա վերևի մայրուղուց՝ վառելով մաշկս ու աչքերս, ու գունավորելով շրջապատը ոսկեգույն խալերով, որոնք շնաձկան կաշվի պես շողշողում էին արևի տակ։ Շոգը փարվում էր սմոգի հետ։ Այն ամեն շնչի հետ ծանր ու ցավոտ իջնում էր կրծքավանդակովս՝ հեղեղելով մարմինս թունավոր նյութերով։ Ես մի քիչ հարբած էի, նստել էի տանը՝ լույսերն անջատած ու վարագույրները փակ, քրտնում էի։ Նայում էի հեռուստացույցի դատարկ էկրանին, որում արտացոլվում էր ծխախոտն ու պատկերացնում էի, որ սավառնող կարմիր ածուխի կետը ես եմ, ու ապրում եմ ապակուց այն կողմ, խողովակների ու էլեկտրոնիկայի տաղտկալի աշխարհում։

Մայրուղուց լսվեց տաքսու ազդանշանի ձայնը։ Դուրս նայեցի պատուհանից, և տեսա նրան ուղիղ նստած մեքենայի հետևի նստատեղին, շփոթված շուրջը նայելիս, անվստահ, թե ինչ էր կատարվելու հետո, միգուցե նաև անվստահ, թե արդյոք ճի՞շտ հասցեով է եկել։ Նա կծկվեց նստատեղին, ասես այն կենդանի մարմին էր, ու ինքը փորձում էր ազատվել դրա ճանկերից։ Թվում էր, թե մոռացել է, որ կարող է պարզապես բացել դուռն ու դուրս գալ։ Նրա մազերը յուղոտ էին, գլխին էին կպել ու այնպես էին փայլում, որ թվում էր, թե նա հենց նոր է դուրս եկել լոգարանից։ Նա պոկեց մազափունջը, որը կպել էր ճակատին՝ քաշելով այն սուր եղունգներով մատներով, ասես իր մազերը երկար սև որդեր լինեին, որոնց չէր ուզում դիպչել։ Բայց ինձ համար նա գեղեցիկ էր։ Վիզը ձգված բարձր ու նրբագեղ, կարապի նման, ճիշտ ինչպես մեր մոր վիզը, մինչ քույրս այն կկտրեր։ Այն ավարտվում էր դեմքով, որն ասես փափուկ օվալ քանդակ լիներ՝ փայլուն պատվանդանի վրա։ Դա մի բարձրագույն, ընտրյալ էակի դեմք էր, այնքան սև աչքերով, որոնք այնքան լի էին դաժանությամբ ու անգութ խելքով, որ երբ հիմա նայում էի նրան, հասկանում էի, որ միշտ էլ

իրեն ինձ մոտ եմ զգացել, ինչպես մի կտրտված, միաչափ ֆիգուր, ու երկրորդ ստվերն էր պլոկվում նրա ուրվագծից, որը նա թողնում էր աշխարհի վրա:

Վարորդը նորից հնչեցրեց ազդանշանն ու ձանձրացած նայեց պատուհանից երևացող իրարից անջատված վարագույրների ճեղքին: Բայց ես կանգնել էի հիպնոսացած, նայում էի, թե ինչպես էր դողում քրոջս ստորին շուրթը, ճիշտ այնպես, ինչպես տպավորվել էր հիշողությանս մեջ, երբ մենք մերկ պառկում էինք նրա անկողնու զով սավաններին, իր սենյակում փակված, երբ մեր ծնողները քնած էին, ու շոյում էինք մեկս մյուսի էլեկտրականացած մաշկը սիրամարգի փետուրներով, որոնք գտել էինք տան հետնաբակից այն կողմ գտնվող դաշտերից: Այն ժամանակ նրա շուրթը դառնում էր դողդողացող կենդանի, ու նա ինձ սովորեցնում էր, թե ոնց կծեմ այն, խաղամ հետն ու տանջեմ, ասես ես գիշատիչ լինեի, իսկ նրա շուրթն՝ իմ զոհը:

Ես, երջանկությունից թմրած, վազեցի աստիճաններով ցած: Մեր համատեղ կյանքի հիշողությունները սառեցին, ապա ձվի նման կոտրվեցին կոկորդումս, քրոջս անօգնական վիճակը տարածվեց ներսումս ու ինձ ուժ տվեց: Գրպաններս քչփորեցի՝ վարորդին վճարելու համար: Քույրս դուրս եկավ մեքենայից՝ ըմբոստ բարձրացնելով հայացքը դեպի արևը, ասես ասեր՝ հապա փորձիր ինձ տապալել շոգի ու սմոգի ալիքով: Նա կանգնած դողում էր՝ հագին գժանոցի խալաթն ու հողաթափերը: Նրա ոտերից մեկը մանրակրկիտ սափրած էր, ու փայլում էր կրեմից՝ գունատ վարդագույն մարմարի նման արտացոլելով արևի լույսը: Իսկ մյուս ոտը նման էր ինչ-որ հանածոյի, որը քայքայվել էր՝ կեղտի մեջ թաղված մնալուց: Այն դուրս էր ցցվել լույսի դիմաց, խալաթի տակից, կապիկի թաթի պես, որը սողոսկել էր մութ անձավից դուրս: Այն պատված էր կոշտ մազածածկույթով, որն ավարտվում էր նրա կրունկի նուրբ ոսկորների մոտ, ասես դրանց տակով վազող արյունը չափազանց քիչ լիներ՝ այնտեղ ևս բուսականություն աճեցնելու համար: Մազածածկույթի տակի մաշկը նման էր սողունի նեխած որջի, որը ճերմակ թեփուկների բծեր էր սփռել, որոնք կառչել էին մազերից ու շողշողում էին արևի տակ շաղ տված մարգարտահատիկների պես:

Նա առաջ թեքվեց ու համբուրեց այտս: Շուրթերը սառն էին ու թաց: Ես թուլություն զգացի: Ինչ-որ նեխած հոտ զգացի նրա խալաթի տակից, որը նման էր իմ ներքին նեխման հոտին: Երբ նա շուրթերը հեռացրեց, նրա թքի արծաթե մի թել միացրեց մեզ՝ մեր մաշկն իրար միացնող նուրբ կիսաթափանցիկ նյարդի նման: Այն շարժվում էր տապից, որը բարձրանում էր ճերմակ մայրուղուց: Զգացի, թե ինչպես է նրա սերը բաբախում հեղուկ լարի միջով դեպի գիտակցությունս՝ ինձ գաղտնիքներ պատմելով ու ներարկելով ինձ իր միայնությունը:

Նրա խալաթը մի քիչ բացվել էր դողալուց: Մի կուրծքը բացվել էր՝ արևի տակ երևալով ուռուցիկ ու խոցելի: Տաքսու վարորդն այն նկատեց, բայց ձևացրեց, թե չի տեսել, ու ես էլ մի պահ էդպես վարվեցի՝ զգալով նրա ճկուն պտուկն ատամներիս արանքում, ծծելով ու ներս քաշելով քաղցր, բուժիչ կաթը: Վերջապես վճարեցի կեղտոտ այլանդակին ու ասացի, որ կորչի իմ տարածքից: Ծածկեցի քրոջս խալաթի բաց մասն ու օգնեցի, որ աստիճանները բարձրանա:

Մենք կանգնել էինք դռան դիմաց, հենվել էինք փայտե փտած բազրիքին ու նայում էինք մայրուղուն: Մշուշը նմանվել էր շագանակագույն արյան հաստ շղարշի: Ես նրան գրկել էի: Երկինքը ծածկոցի նման ճնշում էր մեզ, ու չէր շփռվում տարածության մեջ, այլ ձայների ու գոլորշու միջից կախված էր մնում մեզ վրա: Օդը քաղցր սիրոպի նման կպչում էր մեր դեմքին: Օդանավերի որռ-

վայններն այնքան մոտ էին թռչում մեր գլխից, որ թվում էր, թե իսկայական նավերի ներքնամասն ենք տեսնում ջրի տակից: Երբ նրանք թռչում էին մեր գլխավերևում՝ ցնցելով ու դողացնելով տունը, մենք տեսնում էինք ուղևորներին, որոնք զարմացած ցած էին նայում, ասես մենք փոքրացած մանեկեններ լինեինք՝ լայնարձակ ատրակցիոնների այգում:

Ես ձեռքս պարզեցի դեպի մայրուղին: Նա հայացքով հետևեց ձեռքիս: Մայրուղին մեզ հետ նույն բարձրության վրա էր գտնվում, այնքան մոտ, որ ես գրեթե կարող էի դիպչել բազրիքին: Բայց վարորդներն իրենց մեքենաներում, ամուր փակված զով տարածքում, պատուհաններից այն կողմ, ճամփորդում էին իրենց պարկուճներում՝ մեկ այլ աշխարհի միջով, ամբողջությամբ կտրված իրականությունից, ասես մեզ նրանցից ակվարիումի ապակե պատեր բաժանեին:

Նա գլուխը հենել էր ուսիս ու նայում էր: Նրա արցունքները թրջում էին վերնաշապիկս ու ածխաթթվի նման վառում մաշկս: Ես համբուրեցի նրա խոնավ ճակատն ու նկատեցի, թե ինչպես է հայացքը հետ ու առաջ գնում անցնող մեքենաների հետ: Նա փորձում էր յուրաքանչյուր վարորդի հայացքը բռնել, երբ նրանք անցնում էին մեր կողքով: Կենտրոնացված ատելության շիթեր էին թռչում նրա աչքերից, երբ փորձում էր կապ հաստատել նրանց անպաշտպան գիտակցության հետ: Եթե մեկնումեկը տեսներ նրա հայացքը, քույրս անմիջապես կեռացներ նրանց աչքերի հետևում գտնվող մոխրագույն սպունգը: Բայց ոչ ոք մեզ չէր նայում: Մայրուղուց այն կողմ աշխարհն անտեսանելի էր:

Տան ներսում մութ էր: Երբ մեր աչքերը սովորեցին լույսի բացակայությանը, սենյակի դետալները սկսեցին հայտնվել մթության միջից դանդաղորեն առաջ գալով՝ մառախուղի միջից մոտեցող հուշերի նման: Նա կանգնել էր սենյակի կենտրոնում ու շրջանաձև պտտվում էր՝ մատները պարզած դեպի վեր, օդ որսալով, վհուկի նման, ով հմայում էր թաքնված մի աշխարհ, իմ էությունն իր մեջ կլանելով՝ մատների ծայրերին բացված բերաններով: Աստիճանաբար, նրա բացակայությունից առաջացած իմ թուլությունը բացահայտվեց երկուսիս համար էլ: Մարմինների փուչ պատիճները, որոնք ես սփռել էի, կախվել էին առաստաղի հեծաններից, ծորում էին հատակին ամբողջ տնով մեկ՝ հալչելով տապի ու մթության մեջ ու լցնելով օդն իրենց նեխումով, ինչպես շուշանները, որոնք թռշնում են թարախածոր պարտեզում:

Քույրս խալաթը զցեց գետնին: Նրա մարմինը դուրս եկավ դրա միջից բազմագույն, ասես գիշերային ծաղիկ, որը ձգվում է դեպի լուսինը: Նա մերկ պարում էր ուտելիքի մնացորդների, աղբի ու գարեջրի շշերի արանքում, ասես անցնելիս լիներ փրփրալի կարմիր ծովի ալիքներով: Նրա մարմնի ներսի բույրը դուրս եկավ մաշկից ու տարածվեց սենյակի փակ օդում՝ աստիճանաբար շատանալով ու իմ թախծի հոտը փոխարինելով իր ներքին բուժիչ բույրով՝ մի բույր, որն այնքան մոտ էր իմ սեփական մարմնի հոտին, որ ես արբեցա դրանով, ինչպես միջատներն են արբենում իրենց թազուհու բույրից: Նրա դեմքը լույս էր ճառագում, ինչպես մի կախարդական ակնագունդ, որն իր շրջապատից վերցնում է լույսն ու ջերմությունը: Իմ մարմնի էներգիան նույնպես հոսում էր դեպի նրա աչքերը: Նա թևերը պարզեց ու պարուրեց ինձ մի համբույրով, որը և՛ դատարկեց ինձ, և՛ լցրեց մի այնպիսի ջերմությամբ, որ ինձ թվաց, թե նա իր կյանքն է լցնում իմ մեջ: Նրա լեզուն նման էր թավշե մտրակի, որը թափառում էր բերանումս, հետո իջնում ներքև՝ կոկորդովս, որտեղ բույն էր դնում, որ ապրեր:

Նա արձակեց շալվարս, շշնջալով այն նույն երգն ականջիս, որը երգում էր,

երբ մենք դեռ երեխա էինք, ասես այն մի գաղտնի ողջույնի կանչ լիներ, վաղուց մոռացված: Իմ մերկ էրեկցիան այրվում էր նրա փորի սառը, յուղոտ մաշկի վրա: Ես ավելի գրգռվեցի նրա ուժից: Նա սկսեց ինձ ձեռք տալ ու շոյել: Երբ տաք, ճերմակ հեղուկը դուրս ցայտեց, նա հավաքեց այն երկու ձեռքով ու սկսեց ուղղել որովայնից դեպի կրծքերը, վիզն ու դեմքը՝ ինքն իրեն փակելով մաշկի երկրորդ կեղևի մեջ, անարև անտառում կախված բոժոժի պես:

Մենք մեր տան դռները ներսից մեխեցինք: Նա ապրում է այն մսով ու արյունով, որ աճում է ամենուր, մեր շուրջը: Արևի շողերը մեզ հիման ներս են ընկնում փակ վարագույրների միջով: Նա քարշ է գալիս ու սողում է իմ փորոտիքում՝ վնասելով ինձ: Ես կամազուրկ օբյեկտ եմ, բայց կենդանանում եմ նրա հպումից: Ամեն անգամ, երբ նա պրծնում է, ինձանից ավելի քիչ բան է մնում մարմնումս: Շուտով ես կդատարկվեմ, կմնա կախված մաշկի մեռած խեցին, ինչպես մնացածներինը: Երթևեկության ու գլխավերևում անցնող ինքնաթիռների ձայները խփվում են պատերին ու լցնում տան ներսը հաճույքով: Գիշերելով աշխարհի ծոցում՝ մենք պրծնում ենք, երբ նա ճչում է: Ես շարժվում եմ նրա ներսում, ու ինձ լավ է: Ես աշխույժ եմ ու լցված եմ սիրով, կազմալուծվում եմ՝ շնչի նման, որը տարածվում է սառը օդում՝ սավառնելով: Քույրս ներքաշում է ինձ իր մարմնի մեջ՝ ինձ մարսելով:



Էրքքա Ֆիլանտէր

Առաջաբանը և թարգմանությունը՝
Թամար Պոյաճեանի

Էրքքա Ֆիլանտէր (Erkka Filander) կը համարուի Ֆինլանտայի ամենախոստումնալից ու ճանչցուած երիտասարդ հեղինակներէն մէկը: Արժանացած է բազմաթիւ մրցանակներու, որոնցմէ մէկն է Ֆինլանտայի ամենաhեղինակաւոր գրական մրցանակը – Helsingin Sanomat Literature Prize – իր անդրանիկ «Ճերմակ փոթորիկի արթնացումը» (*Heräämisen valkea myrsky*, Poesia, 2013) գիրքին համար: Գիրքը քննադատները կը նկարագրեն իբրեւ «ապրելու ուրախութեամբ բաբախող սքանչելի բանաստեղծութիւն մը»:

Այս բանաստեղծական կտորները Է. Ֆիլանտէրին նոր, տակաւին անտիպ Torso գիրքէն են, որ հեղինակը կը նկարագրէ իբրև հատուածային բանաստեղծութիւն, տեսակ մը mediation, որ կը խօսի արուեստագէտներու մասին, մասնաւորաբար անոնց որոնց անունները չենք գիտեր, բայց որ իրենց կեանքը նուիրած են և նախատակուած արուեստի համար: Ի՞նչպէս կրնանք մենք ճանչնալ այդ նախատակները ու այդ անանուն ու կորսուած հոգիները: Կարելի՞ է հասկնալ այդ յարաբերութիւնը մարդու եւ արուեստի միջեւ, եւ այդ նուիրուած ճիգը՝ բանի մը որուն արդիւնքն ու ապագան չենք գիտեր:

Այս կտորները թարգմանուած են ֆինլանտերէնէն, հեղինակին մասնակցութեամբ: Ամէն մէկ հատուած մանրամասնօրէն քննարկուած եւ երբեմն նաեւ բերանացի թարգմանուած է անգլերէնի, որմէ ետք հայերէն թարգմանութիւնը աճած է:

TORSO
(կտորներ)

կայ՝ ծառ մը որ զինք մերկացուց
առաւօտեան արեւը հիւրընկալելու

կայ՝ ժամ մը որ պիտի չհիւանդանայ

կը սկսինք մենք հոս:
…
կարծես ինչ որ բան մը կը հաւաքէ
բծախնդրօրէն եւ սիրով
ամէն ինչ
որ ջախջախուած է՝ դէպի մէկ ուղղութիւն

ուղղութիւն մը՝ որուն հովը քու դաստակդ կը սեղմէ

մեր կացութիւնը որքան աւելի նեղնայ՝
ան աւելի կը սեղմէ

…

ծիսական զգեստը մթնող երկնքի
կը զգայ պահանջ մը զինք մերկացնելու

…

իրեն համար գիշերը հիմա սրինգ մըն է
որուն միջոցաւ կ՚արտօնէ իր պրկուած կուրծքը՝
չալեկոծուի

…

լռութիւնը իր արարողութիւնները կը տօնէ իրմով

…

մատուռ մը՝ իրենց աղտոտ երեսներու տակ

…

ծարաւ մը՝ որ բարձրացաւ իր նայուածքի սեւեռումին ու ծակեց

…

իր շնչառութեան ծակած լիթրերը…

համարձակօրէն գիտէ իրենց պսպղուն երամակները

…

այդ պահերը որ անծանօթներու կը շնորհեն
ընկերներ՝ հանդիպեցանք

…

շղթան նահատակներուն
կը շարունակուի ու կը շարունակուի
ամայի տեղերու ճեղքերու մէջ

…

Յատուկ անօթութիւն մը՝ որուն ամէն մէկ
շունչը կը մթնցնէ մարմնի մէկ մասը

Անօթութեան գիշերը կ՚արթննայ
Աքսորի պահուն
եւ վէրքի նման կը հոսի

…

մեր ամենէն դժուար որոշումներուն հիւսուածքը
է՝ արիւնի փրփուրը մեր մկաններու շրթունքներուն

…

ժամեր, ժամեր
կը պսպղան իբր շղթայ մը
մեր նայուածքի սեւեռումին

մենք ինքզինքնիս կը գտնենք մեր միջանցքին
որ տարածութիւնը զինք կը բացայայտէ միշտ
մեր ներքին հանդարտութեան համար

…

մեր խոստովանութիւնը՝
նման խոստովանութեան
լեռներու հողմին
ոտքերու ծայրէն
ցգլուխ

…

կարիքը՝ որ ըլլայ ձայն մը առանձնութեան
այդ մինակ, անօթի ամայութեան
միաժամանակ

կարիքը՝ որ մնայ անձայն
հեռաւոր
որ տեղաշարժ ըլլայ մինակ աչքերուն մէջ

…

անմիջականութիւնը նահատակներուն
անմիջականութիւնն է
քանդակի մը գլխու յաւիտենական շարժումին

անմիջականութիւն մը՝ որձաքարի մէջ ապրող

…

մեզի համար անանուն են – չճանչցուած դէմքեր՝
բայց կարծես իրենց վերջին օրերու բեռը
մեզի կը ճնշէ երբ առանձին ենք:

իրենց մերձաւոր արտայայտութիւնները
քարի բեկորներ են
որոնք իրենց գագաթը կը հասնին, մեր երեսներու մէջ
իրենց արիւնը՝ ծանրութիւն մը մեր ուսերը կ՚այցելէ

…

իրենց մէջ՝
ձուլածոյ պղինձ մը չյիշուած խոստումներու
իրենց փոցղուած կուրծքերը կապուած
գետի մը, որ պիտի չվարակուի:

մի մոռնար՝
ինչպէս իրենց ժպիտները քաղեցին դէպքերէ
որ տակաւին չեն պատահած:

այդ ժպիտները որ կ՚ուղղեն մեր մատներու ոսկորները
հասկնալու ծանրութիւնը՝ այդ ամայի այգիներուն
եւ ամէն ինչ որ կոտրուած է
ամէն ինչ որ հիմա կամար մըն է

…

աչքերուն մէջ յոյսի այրած նշանները
որ դաւաճանեցին զինք՝

լայնարձակ ծով մը կը ծփա՛յ հոն

…

պատկերագրութիւնը խարանուած մարմնին
անտերեւ ծառերու կրկներեւոյթին մէջ

…եւ յետոյ գարունը

…

նորանշան լռութիւն մը կը ծնի մեր ձեռքերու ափերէն

Ռոլան Տիւպիյառ

Թարգմանութիւնը՝ Վազգէն Անդրէասեանի

Ռոլան Տիւպիյառ (Roland Dubillard, 1923–2011). ֆրանսացի գրող, թատերագիր եւ դերասան: Իր նուրբ անհեթեթ ոճով, կը համարուի Սամուէլ Պէքէթի եւ Էօժէն Իոնեսքօի կրտսեր գրչեղբայրը: Գրած է բանաստեղծութիւններ, թատրոններ, նաեւ հաղորդումներ ձայնասփիւռին համար:

Անձրեւը

ՄԷԿ. Տանիլ չեմ կրնար:
ԵՐԿՈՒ. Ինչո՞ւ:
ՄԷԿ. Չեմ գիտեր:
ԵՐԿՈՒ. Մի՞շտ այդպէս եղած էք:
ՄԷԿ. Մանուկ հասակէս:
ԵՐԿՈՒ. Եւ երբեք չէ՞ք փորձած:
ՄԷԿ. Անձրեւին տակ դուրս գա՞լ: Ի հարկէ փորձած եմ, քանի մը անգամ նոյնիսկ, բայց միեւնոյն է, տանիլ չեմ կրնար:
ԵՐԿՈՒ. Կրթութեան հարց է: Երանի Ձեր ծնողները Ձեզ ստիպէին:
ՄԷԿ. Ոչ: Աւելի բնաւորութեան հարց է: Իսկ դո՞ւք, վստահ, բաներ կան որոնք չէք տանիր:
ԵՐԿՈՒ. Ի հարկէ: Կրակը օրինակ: Ես ոչ մէկ գնով կը պտըտէի հրդեհէ բռնկուած անտառի մը մէջ: Բայց ես գիտեմ ինչու:
ՄԷԿ. Անբաղդատելի բաներ են:
ԵՐԿՈՒ. Ճիշտ էք, քանի որ կրակին հետ, նոյնիսկ եթէ ստիպէին… Բայց Ձեր պարագային, եթէ քիչ մը ջանք թափէիք… վստահ եմ որ անձրեւի տակ պտոյտ մը շատ տանելի կը գտնէիք:
ՄԷԿ. Բնականաբար: Պարզապէս ես կը նախընտրեմ սպասել որ օդը լաւ ըլլայ:
ԵՐԿՈՒ. Իսկ ե՛ս ալ կը նախընտրեմ սպասել որ օդը լաւ ըլլայ:
ՄԷԿ. Իսկ ես լաւ օդին սպասելու համար յատուկ նախընտրութիւն ունիմ:
ԵՐԿՈՒ. Բայց ի վերջոյ, յատուկ բան մ'ունի՞ք անձրեւին դէմ:
ՄԷԿ. Ե՛ս, ոչ: Կը սիրեմ անձրեւը: Աղուոր բան է: Կը սիրեմ իր ձայնը: Ծաղիկներուն օգտակար է: Ինչ որ չեմ սիրեր, անձրեւին տակ պտըտիլն է:
ԵՐԿՈՒ. Բայց ե՛ս ալ չեմ սիրեր անձրեւին տակ պտտիլ: Միշտ ալ պէտք է Դուք Ձեզի արտակարգ անձի դեր տաք: Ոչ ոք կը սիրէ անձրեւին տակ պտտիլ: Սակայն բոլորն ալ կը տանին:
ՄԷԿ. Իսկ ես իւրայատուկ ձեւ ունիմ այդ չսիրելու. չեմ տանիր:
ԵՐԿՈՒ. Այդքան ալ պարզ չէ հարցը: Ենթադրենք որ դաշտերուն մէջտեղը կը գտնուիք: Պաշարուած էք: Աջին գտնուող անտառը կ'այրի, ձախ կողմէն ալ անձրեւ կը սկսի: Հիմա ի՞նչ կ'ընէք:
ՄԷԿ. Կը սպասեմ որ այդ ամէնը վերջ գտնէ:
ԵՐԿՈՒ. Բայց վերջ չի՛ գտներ: Ընտրութիւն պէտք է կատարել: Ի՞նչ կ'ընտրէք:

ՄԷԿ. Անձրեւը կ՚ընտրեմ: Բնականաբար: Բայց առանց ուրախութեան:
ԵՐԿՈՒ. Սակայն նոր ըսիք որ անձրեւը կը սիրէք:
ՄԷԿ. Անձրեւը կը սիրեմ, այո, բայց հեռուէն:
ԵՐԿՈՒ. Տարօրինակ մարդ էք:
ՄԷԿ. Ո՛չ, տարօրինակ մարդ չեմ: Որոշ բաներ կրնաք սիրել, բայց ոչ շատ մօտիկէն: Օրինակին համար կրակը, որը չէք տանիր, վստահ եմ որ կրակ կը սիրէք:
ԵՐԿՈՒ. Ի հարկէ կը սիրեմ: Կը սիրեմ ծխամորճս հետը վառել… կը սիրեմ մաքարոնիները հետը եփել…
ՄԷԿ. Բայց հրդեհին մէջտեղը պտտիլ չէք սիրեր: Իմ պարագայիս, չեմ սիրեր անձրեւին տակ պտտիլ, նոյն բանն է:
ԵՐԿՈՒ. Ո՛չ, կրակը տարբեր է: Որովհետեւ կրակը կ՚այրէ: Երկար ժամկէտով նոյնիսկ մահացու է:
ՄԷԿ. Բայց նոյն բանը կ՚ըսեն ալքոհոլի մասին, սակայն Դուք լաւ ալ ալքոհոլ կը խմէք:
ԵՐԿՈՒ. Ալքոհոլը երկար ժամկէտով մահացու է, բայց կրակի ժամկէտը տարբեր է: Կրակի պարագային, ժամկէտը խիստ կարճ է:
ՄԷԿ. Երկար եւ կարճ ժամկէտներ… Ձեր ըսածը յստակ չէ:
ԵՐԿՈՒ. Լաւ, կ՚ընդունիմ որ կրակն ու ալքոհոլը նոյն բանն են քանի երկուքն ալ կ՚այրեն: Բայց անձրեւը չայրեր:
ՄԷԿ. Ոչ, բայց կը թրջէ:
ԵՐԿՈՒ. Անձրեւը չի թրջեր, ջուրն է:
ՄԷԿ. Բայց անձրեւն ի՞նչ է եթէ ոչ տեղացող ջուր: Որպէսզի ջուրը թրջէ, պէտք է տեղայ: Այն ջուրը որ միայն հոսելով կը բաւարարուի, ափերուն վրայ պտտող մարդկանց չի թրջեր:
ԵՐԿՈՒ. Այո: Որպէսզի գետը քեզ թրջէ, պէտք է մէջը իյնաս:
ՄԷԿ. Իյնալ: Ահաւասիկ: Թրջուելու համար պէտք է բան մը իյնայ: Կամ ջուրը վրադ կ՚իյնայ, կամ դուն ջուրը կ՚իյնաս: Երկու պարագային ալ անկում մը կայ… Կարելի է նոյնիսկ հարց տալ. անկո՞ւմն է թրջողը կամ ջուրը:
ԵՐԿՈՒ. Այո… Սակայն ոչ հասարակ անկում: Եթէ օրինակին համար քար իյնայ Ձեր գլխուն կամ Դուք իյնաք աստիճաններուն մէջ, երկու պարագաներուն մէջ Դուք չոր պիտի մնաք: Որպէսզի անկումը թրջէ, հարկաւոր է ջուրով ըլլայ:
ՄԷԿ. Այս պէտք է արձանագրեմ ծոցատետրիս մէջ. «թրջուելու համար պէտք է 1) ջուր, 2) անկում»: Բաւական բարդ է:
ԵՐԿՈՒ. Ի՞նչ կը կարծէիք… Հիմա, ինչ որ Ձեզ կը խանգարէ անձրեւին մէջ, անկումը չէ այլ թրջուիլը:
ՄԷԿ. Հա… Չնայած անձրեւը ինծի կը խանգարէ երբ ես տակը կը պտտիմ: Միակ պարագային, երբ անձրեւը չեմ տանիր, անձամբ թրջուելու ժամանակ է: Մնացած ժամանակը, ով կ՚ուզէ թող թրջուի… ինչպէս Լուկրեցիուսը կ՚ըսէր, իմ հոգս չէ:
ԵՐԿՈՒ. Եւ եթէ անձրեւը չթրջէր, Դուք սիրով կ՚ընդունէի՞ք տակը պտտիլ:
ՄԷԿ. Վստահաբար: Եթէ չթրջէր…
ԵՐԿՈՒ. Լաւ: Ուրեմն անձրեւը չէ Ձեզ խանգարողը:
ՄԷԿ. Ապա ի՞նչ է:
ԵՐԿՈՒ. Թրջուիլն է:
ՄԷԿ. Թրջուիլը խանգարիչ է, ճիշտ է:
ԵՐԿՈՒ. Ինչ ալ թրջէ միեւնոյնն է, անձրեւը կամ ուրիշ բան:
ՄԷԿ. Այդպէս է: Չեմ սիրեր թրջուիլ, ինչ ալ զիս թրջէ, անձրեւը կամ ուրիշ բան:
ԵՐԿՈՒ. Ուրեմն կ՚ենթադրեմ որ երբեք չէք լոգնար:

ՄԷԿ. Ի հարկէ կը լոգնամ, ամէն օր նոյնիսկ:
ԵՐԿՈՒ. Բայց առանց թրջուելու:
ՄԷԿ. Ի հարկէ կը թրջուիմ: Ջուրին հետ ուրիշ ձեւով չ'ըլլար:
ԵՐԿՈՒ. Եւ չէ՞ք տանիր:
ՄԷԿ. Ոչ, կը տանիմ:
ԵՐԿՈՒ. Ինչու:
ՄԷԿ. Ինչ ալ ըսէք, անձրեւը ցնցուղէն տարբեր է:
ԵՐԿՈՒ. Ինչո՞վ տարբեր է:
ՄԷԿ. Անձրեւը ցնցուղէ՛ն: Պարզ է, ցնցուղին տակ ես մերկ եմ:
ԵՐԿՈՒ. Լաւ: Ուրեմն անձրեւը չէք սիրեր որովհետեւ Ձեզ կը թրջէ հագուած վիճակին մէջ:
ՄԷԿ. Այդպէս: Ատիկա չեմ սիրեր:
ԵՐԿՈՒ. Տարօրինակ է: Ըսել է որ երբ բոլորովին մերկ էք, անձրեւին տակ պտտիլ Ձեր հոգը չէ:
ՄԷԿ. Այո: Չնայած… իրականութեան մէջ երբեք չէ պատահած:
ԵՐԿՈՒ. Երբե՞ք:
ՄԷԿ. Ոչ, երբեք:
ԵՐԿՈՒ. Ինչու:
ՄԷԿ. Հըմ, կ'ենթադրեմ որ ոստիկանութեան պատճառաւ է…
ԵՐԿՈՒ. Ահա: Ահաւասիկ թէ ինչ կը յայտնաբերուի երբ քիչ մը ջանք կը թափենք տրամաբանելու համար: Կ'ըսէք՝ «անձրեւը չեմ սիրեր», եւ իրականութեան մէջ, ի՞նչ կը նշանակէ: Պարզապէս որ ոստիկանութենէն կը վախնաք: Ամօթ բան չէ: Բայց ի՞նչու անմիջապէս չըսիք:
ՄԷԿ. Որ ոստիկանութենէ՞ն կը վախնամ:
ԵՐԿՈՒ. Քանի որ իրականութիւնն է:
ՄԷԿ. Ուրեմն ահա, Ձեզի կ'ըսեմ՝ ոստիկանութենէն կը վախնամ:
ԵՐԿՈՒ. Այո: Ահաւասիկ իրականութիւնը… բայց ամենեւին պարզ չէ: Տակաւին հարկաւոր է իմանալ թէ ի՞նչու ոստիկանութենէն կը վախնաք…
ՄԷԿ. Սպասեցէ՛ք, մէկ վայրկեան: Ես տեւական կերպով ոստիկանութենէն չե'մ վախնար: Անկէ միայն կը վախնամ երբ դուրս ելլելու սիրտ ունիմ եւ կ'ուզէի մերկ ելլել որովհետեւ անձրեւ կու գայ:
ԵՐԿՈՒ. Դուք ոստիկանութենէն կը վախնաք անձրեւի պարագային:
ՄԷԿ. Այո:
ԵՐԿՈՒ. Երբ անձրեւը կը դադրի, այլեւս չէք վախնար:
ՄԷԿ. Ոստիկանութենէ՛ն: Այո… տրամաբանական է:
ԵՐԿՈՒ. Ուրեմն բան չխանգարեր որպէսզի մերկ պտտիք երբ օդը լաւ է:
ՄԷԿ. Բան չխանգարեր:
ԵՐԿՈՒ. Հա, հա:
ՄԷԿ. Չնայած դեռ արգելք մը կայ:
ԵՐԿՈՒ. Անձրեւը չի կրնար ըլլալ, նոր համարեցինք որ օդը լաւ է:
ՄԷԿ. Ճիշտ է, ուրեմն հաւանաբար ոստիկանութիւնն է:
ԵՐԿՈՒ. Նորէն ոստիկանութիւնը… ըսել է որ կրնայ վախ պատճառել նոյնիսկ երբ անձրեւ չի տեղար:
ՄԷԿ. Ճիշտ է, անձրեւին կամ արեւուն, միշտ ոստիկանութենէն կը վախնամ:
ԵՐԿՈՒ. Եւ այդ ոստիկանութեան վախէն կը վախնաք, որ Ձեր վրայ անձրեւէ:
ՄԷԿ. Այո: Կարծեմ որ ատոր ապացոյցը բերիք: Այս ի՞նչ վիճակ է:
ԵՐԿՈՒ. Ի վերջոյ, հաւանաբար ճիշտ էիք ըսելով որ արտակարգ անձ էք: Զարմանալի է որ ոստիկանութիւնը Ձեր վրայ այդպիսի ազդեցութիւն ունենայ…
ՄԷԿ. Այո, մանաւանդ որ չեմ կարծեր թէ ան դիտմամբ կ'ընէ:

ԵՐԿՈՒ. Այդպէս ալ կը մտածեմ: Անկէ չի գար, Ձեզմէ կու գայ:
ՄԷԿ. Ոչ, որովհետեւ եթէ ոստիկանութիւնը գոյութիւն չունենար, ես ոստիկանութենէն պիտի չվախնայի:
ԵՐԿՈՒ. Վստա՞հ էք:
ՄԷԿ. Այո:
ԵՐԿՈՒ. Երբ ոստիկանութիւն չկայ չէ՞ք վախնար:
ՄԷԿ. Ոչ:
ԵՐԿՈՒ. Այս վայրկեանին օրինակ, ոստիկանութիւն չկայ…
ՄԷԿ. Ոչ:
ԵՐԿՈՒ. Բո՜ւ:
ՄԷԿ. Վա՜յ, վախցուցիք ինծի:
ԵՐԿՈՒ. Կը տեսնէք: Այնուամենայնիւ վախցաք: Սակայն ես ոստիկանութեան աշխատող չեմ:
ՄԷԿ. Ոչ:
ԵՐԿՈՒ. Ուրեմն:
ՄԷԿ. Ուրեմն…
ԵՐԿՈՒ. Ուրեմն վախցաք որովհետեւ…
ՄԷԿ. Որովհետեւ…
ԵՐԿՈՒ. Որովհետեւ վախկոտ էք, այդ է իրականութիւնը: Ինչու սկիզբէն չըսիք, փոխանակ ձեւեր թափելու:
ՄԷԿ. Չեմ գիտեր… չեմ գիտեր…
ԵՐԿՈՒ. Երբեք բան մը չէք գիտեր:
ՄԷԿ. Կ'ենթադրեմ որ վախկոտ ըլլալու ամօթէն կու գայ:
ԵՐԿՈՒ. Ատոր դէմ բուժում կայ:
ՄԷԿ. Կա՞յ:
ԵՐԿՈՒ. Այո, օրինակ ինչու անձրեւանոց չէք գներ:
ՄԷԿ. Անձրեւանո՞ց:
ԵՐԿՈՒ. Այո, անձրեւանոց մը, իմինիս պէս: Տեսնենք ո՞ւր դրի զայն…
ՄԷԿ. Հիմա ատոր պէտք չունիք: Այլեւս չանձրեւեր: Որովհետեւ անձրեւին դէմ, միայն անձրեւանոցները չեն որ օգտակար են: Համբերութիւնն ալ կայ:
ԵՐԿՈՒ. Համբերութիւնն ալ կարելի է կորսնցնել, աւելի դիւրութեամբ քան անձրեւանոց մը:
ՄԷԿ. Եւ սակայն, ինչքան համբերութիւն պէտք է երբ անձրեւանոցդ կորսնցուցեր ես: Բայց երբ համբերութիւնդ կը հատնի, անձրեւանոցով չէ որ ետ կը գտնես:
ԵՐԿՈՒ. Համբերութիւնս ինչով կրնամ ետ գտնել:
ՄԷԿ. Համբերութեամբ:

Վիսլավա Շիմբորսկա

Առաջաբանը և թարգմանությունը՝
Տաթև Չախեանի

Ամեն անգամ բանաստեղծություն թարգմանելիս ոնց որ երեխա լինեմ, ով մենակ է մնացել ուրիշի տանը և ուզում է տնտղել բոլոր գաղտնի անկյունները: Բայց Վիսլավա Շիմբորսկայի (Wisława Szymborska) ստեղծագործության դեպքում փակ դռան գայթակղությունը վերանում է, որովհետև ընթերցողը (թարգմանիչը) զգում է ինչպես իր տանը. առաջին հայացքից ամեն ինչ տեսանելի, շոշափելի է, ամեն իրի գոյություն բանական է ու պատճառաբանված: Սակայն սովորականը, առօրյան հեղինակի ստեղծած համատեքստում զարմացնող, անծանոթ կերպավորումներ են ստանում, ինչպես լույսի անկյունը փոխելիս կարող են անճանաչելիորեն փոխվել ծանոթ մարդու դիմագծերը:
1996-ին իր Նոբելյան բանախոսության մեջ Շիմբորսկան ասում է. «Մեզ զարմացնում է այն, ինչը տարբեր է հայտնի կանոններից… Զարմանքն առաջանում է նրանց հետ համեմատության մեջ, մինչդեռ այդ թվացյալ ակնհայտ աշխարհն իրականում չկա, և ուրեմն մեր զարմանքն ինքնաբուխ է… Պոեզիայի լեզվում, ուր կշռադատվում է յուրաքանչյուր բառը, ոչինչ սովորական ու բնականոն չի համարվում»:
Շիմբորսկան ստեղծում է տարածքներ (կուզեի ասել՝ սոցիալական տարածքներ), ուր հեղինակի հեռացվածությունը տեքստից ընթերցողին էլ է տալիս ազատ տեղաշարժի հարմարավետություն, ուր դիտողը նաև մասնակից է, մասնակիցը՝ կրող:
89 տարեկանում մահացած Շամբորսկան (1923-2012), ում առաջին ժողովածուն 1949 թ. չհրատարակվեց՝ ստեղծագործություններում հետպատերազմյան կոմունիստական իդեալներին պատշաճ վերաբերմունք ցույց չտալու պատճառաբանությամբ, մեծ ժողովրդականություն է վայելում Եվրոպայում և Ամերիկայում, մինչդեռ միայն վերջին տարիներին է սկսել թարգմանվել և ընթերցվել հետխորհրդային երկրներում: Հայերեն թարգմանության օրինակներ ևս կան՝ թե՛ միջնորդ լեզուներից, թե՛ բնագրից, որոնց կողքին էլ դնում եմ Վիսլավա Շիմբորսկայի՝ ուշ շրջանում հրատարակած ժողովածուներից արված թարգմանություններս:

ԻՆՉՊԵՍ ԳՐԵԼ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է պետք անել։
Նախ կազմել դիմումի ձև,
ապա լցնել այն կենսագրությամբ։

Անկախ կյանքի տևողությունից՝
ինքնակենսագրականը պիտի կարճ լինի։

Պետք է հստակ ու սեղմ շարադրել փաստերը,
փոխարինել բնապատկերները հասցեներով,
աղոտ հուշերը՝ ճշգրիտ տարեթվերով։

Սիրային պատմություններից
թողնել միայն ամուսնությունը,
երեխաներից՝ միայն լույս աշխարհ եկածներին։

Ավելի կարևոր են քեզ ճանաչողները,
քան մարդիկ, ում ինքդ ես ճանաչում։
Միայն դեպի արտերկիր ուղևորությունները։
Անդամությունդ՝ ինչին, կապ չունի՝ ինչու։
Պարգևներդ՝ կարևոր չէ՝ հանուն ինչի։

Գրիր այնպես, ասես
բառ անգամ չես փոխանակել
ու հեռվից հեռու ես շփվել քեզ հետ։

Լուռ շրջանցիր կատուներին,
շներին ու թռչուններին,
հիշարժան խենթությունները,
ընկերներիդ ու երազներդ։

Նշիր գինը, ոչ թե արժեքը,
բովանդակության փոխարեն՝ վերնագիրը,
կոշիկիդ համարը, ոչ՝ անցած ուղիդ։

Ու այս ամենին հավելիր լուսանկարդ՝
բաց ականջներով.
էականը ականջների ձևն է, այլ ոչ լսածը։
Իսկ ի՞նչ է լսածը –
Թղթակեր մեքենաների աղմուկը։

ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մենք չափազանց քաղաքավարի ենք,
մենք ասում ենք. «Ուրախ եմ քեզ տեսնել այսքա՜ն տարի անց»:

Մեր վագրերը կաթ են խմում:
Մեր բազեները ճանկում են հողը:
Մեր շնաձկները խեղդվում են ջրում:
Գայլերը՝ հորանջում բաց վանդակներում:

Մեր օձերը թափել են թույնը,
կապիկների աշխուժությունը մարել,
սիրամարգները՝ փետրաթափ եղել:
Չղջիկները մեր մազերից չվել են վաղուց:

Խոսքի կեսին լռում ենք,
անօգնական ժպտում.
մերոնք չգիտեն՝ ինչպես զրուցել:

ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԱՇՏԱՐԱԿՈՒՄ

– Ժամը քանի՞սն ա:
– Հա, երջանիկ եմ, միակ ուզածս զանգուլակ ա վզիս, որ զնգզնգացնեմ գլխիդ վերևում, երբ քնած ես:
– Չլսեցի՞ր փոթորկի աղմուկը: Հյուսիսային քամին ցնցեց պատերը, աշտարակի դարպասը, առյուծի երախի պես, ծխնիներից կախ հորանջեց:
– Ո՞նց կարայիր մոռանայիր: Էն հասարակ մոխրագույն շորն էի հագել, որ ամրանում ա ուսի վրա:
– Էդ պահին պայթյուններից դղրդաց երկինքը:
– Ո՞նց մտնեի. ախր, մենակ չէիր:
– Ես որսացի գույներ, որ ավելի հին են, քան աչքը:
– Ի՜նչ վատ ա, որ չես կարա խոստանաս:
– Ճիշտ ես, պիտի որ երազ եղած լինի:
– Ինչի՞ ես խաբում, ինչի՞ ես ինձ իր անունով կոչում, դեռ սիրո՞ւմ ես:
– Բա ո՛նց, ուզում եմ հետս մնաս:
– Չեմ բողոքում, պիտի գլխի ընկած լինեի:
– Դեռ նրա՞ մասին ես մտածում:
– Բայց չեմ լացում:
– Ու վե՞րջ:
– Քեզնից բացի ոչ ոք:
– Դու գո՛նե ազնիվ ես:
– Մի՛ մտածիր, ես լքում եմ աշտարակը:
– Ի՜նչ սիրուն են ձեռքերդ:
– Հին պատմություն ա. շեղբն անցավ միջով, բայց չճեղքեց ոսկորը:
– Բանի տեղ մի դիր, ջանս:
– Չգիտեմ՝ քանիսն ա ու պետքս էլ չի:

ԴԱՐԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Մենք դարի զավակներն ենք,
ու դարը քաղաքական է:

Օր ու գիշեր ինչ լինում է
քեզ հետ, մեզ հետ, ձեզ հետ՝
քաղաքական է:

Ուզած թե չուզած՝
գենիդ ապագան,
մաշկիդ գույնը
և հայացքդ քաղաքական են:

Եթե ասածդ արձագանք ունի,
թե լռությունդ խոսուն է՝
ուրեմն դա էլ քաղաքական է:

Անգամ անտառում քայլելիս
քայլերդ քաղաքական են
քաղաքական հիմնահողին:

Ապաքաղաքական
բանաստեղծություններն էլ են քաղաքական –
Մեր վերևում լուսինն է շողում
և իր լույսն իրեն էլ չի պատկանում:
«Լինե՞լ, թե՞ չլինել» – այս է խնդիրը:
Ի՞նչ էլ խնդիր է.
սրա պատասխանն էլ, սիրելիս,
քաղաքական է:

Քաղաքականացվելու համար
պարտադիր չէ լինել մարդ:
Եղիր անմշակ նավթ,
արհեստական կեր,
վերամշակված աղբ,
եղիր սպիտակուց,
բանակցային սեղան,
որի ձևի շուրջ ամիսներ շարունակ վիճել են
իբրև կենաց ու մահու հարց՝
քառակուսի՞, թե՞ կլոր լինի:

Ու այս ամենի ընթացքում
մարդիկ են մեռնում,
կենդանիներ սատկում,
տներ են այրվում,
դաշտեր չորանում
ինչպես անհիշելի ժամանակներում,
երբ դեռ ամեն բան այսքան քաղաքական չէր:

ՎԵՐՋՆ ՈՒ ՍԿԻԶԲԸ

Ամեն պատերազմից հետո
ինչ-որ մեկը պիտի
շուրջը կարգի բերի: Ի վերջո,
թափվածն ինքնուրույն չի հավաքվում:

Ինչ-որ մեկը պիտի
ճամփի մեջտեղից քարերը հրի,
որ դիակառքերի ճամփան բացվի:

Ինչ-որ մեկը պիտի քարշ գա
ցեխ ու մոխրի միջով,
ջրափոսերի, բզկտված բազմոցների,
ապակու կտորտանքի,
արյունոտ լաթերի:

Ինչ-որ մեկը պիտի քարշ տա
գերաններն ու հենի պատին,
ինչ-որ մեկը պիտի ամրացնի ապակին,
դուռը տեղը գցի:

Նկարելու արժանի ոչ մի տեսարան
ու այսպես տարիներ.
ֆոտոխցիկները գնացել են ուրիշ պատերազմներ:

Կամուրջները պիտի նորոգվեն,
կայարաններն էլ…
Թևքերը քշտելուց կմաշվեն:

Ցախավելով ինչ-որ մեկը
դեռ հիշում է իր գործը,
մյուսը լսում է, գլխով անում,
իսկ ուրիշները պարզապես
ձանձրանում են մոտակայքում:

Ժամանակ առ ժամանակ ինչ-որ մեկը պիտի
թփի տակի ժանգոտ փաստարկները քանդի
ու գցի աղբը:

Նրանք, որ գիտեին ինչի մասին է խոսքը,
պիտի հեռու մնան նրանցից, որ գլխի են ընկնում,
կամ ենթադրում են,
կամ բան էլ չեն հասկանում:

Ինչ-որ մեկը պիտի պառկի
պատճառի ու հետևանքի վրա աճած խոտերին,
ու շյուղն ատամների արանքում,
ամպերին նայելով երազի:

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-ԻՑ

Լուսանկարիչ՝ Ռիչարդ Դրյու
Աստշիեյթեդ պրես

Գցեցին իրենց հրդեհվող շենքից
մեկը, երկուսը, էլի մի քանիսը,
մի քիչ վեր, մի քիչ վար:
Լուսանկարը նրանց ողջ է ֆիքսել,
իսկ հիմա պահում է
գետնից վեր, հողի ճամփին:
Ամենքն էլ դեռ կենդանի են
իրենց իսկ դեմքերով
ու չերևացող արյամբ:
Բավական ժամանակ կա,
մինչև մազերը խառնվեն,
իսկ գրպաններից թափվեն
բանալիներ, կոպեկներ…
Նրանք դեռ սավառնում են օդում՝
հենց նոր բացված սահմաններում:
Նրանց համար ես կարող եմ անել երկու բան –
նկարագրել թռիչքը
և չավելացնել վերջին տողը:

ԲՐԵՅԳԵԼԻ ԵՐԿՈՒ ԿԱՊԻԿՆԵՐԸ

Ահա պատկերը իմ ավարտական երազ-քննության:
Պատուհանին՝ զույգ շղթայված կապիկ,
պատուհանից դուրս՝ ալիքվող ծով ու ճախրող երկինք:
Մարդկության պատմության մասին խոսելիս
ես շփոթվում եմ ու կարկամում եմ…
Եվ այն կապիկը՝ աչքերը չռած
վրաս է նայում ցինիկ հեգնանքով,
իսկ մյուսը կարծես անցած է քնով:
Իսկ երբ լռում եմ, հարցից պապանձվում,
իր շղթաներն է թույլ զնգզնգացնում իբրև ինձ հուշում:

ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

Ոչինչ չի փոխվել:
Մարմնում ապրում է ցավը,
այն պիտի ուտի, շնչի ու քնի,
բարակ մաշկ ունի, մաշկի տակ՝ արյուն,
բավարար ատամ ու եղունգ,
ոսկորներ կոտրվող, հոդեր ճկվող,
և կտտանքներում այս ամենը հաշվի է առնվում:

Ոչինչ չի փոխվել:
Մարմինը դողում է, ինչպես դողում էր
Հռոմի հիմնումից առաջ ու հետո,
Քրիստոսից առաջ ու հետո, XX դարում,
տանջանքը նույնն է, պարզապես հողն է կծկվել,
ու թվում է՝ ամենն ընթանում է պատի հետևում:

Ոչինչ չի փոխվել:
Միայն մարդիկ են շատացել,
հին մեղքերի կողքին հիմա կան նորերը՝
անգոյ, վաղանցիկ, իրական, հորինվածները:
Եվ մարմնից անկախ պոռթկացող ճիչը,
ըստ հավերժի ցուցակի,
եղել է, կա ու կլինի ճիչ անմեղության:

Ոչինչ չի փոխվել:
Կարծեմ միայն բարքերը, ծեսերն ու պարերը:
Նույն կերպ են առնում գլուխն ափերում:
Կծկվում է մարմինը, ցնցվում, մասնատվում,
ոտքերից պոկվում, ընկնում, ծնկները ծալում,
կապտում, ուռչում, թուք ու արյուն է ծորում:

Ոչինչ չի փոխվել:
Բացի գետերի վազքից, անտառներից,
ծովափերից, անապատներից ու սառցադաշտերից:

Եվ այս բնապատկերներում
թափառում է հոգին.
կորչում, վերադառնում, մոտենում, հեռանում,
ինքն իրեն օտար, անորսալի,
մեկ վստահ, մեկ կասկածելով՝ թե կա,
այնժամ, երբ մարմինը կա, կա ու կա
սակայն չքվելու ոչ մի տեղ չկա:

ԳՈՎՔ ՔՐՈՋՍ

Քույրս չի գրում բանաստեղծություններ
ու դժվար թե մի օր սկսի գրել:
Իսկը մոր կտորն է, ով չէր գրում բանաստեղծություններ,
ու հոր նման, ով նույնպես չէր գրում բանաստեղծություններ:
Քրոջս տանը հանգիստ եմ.
աշխարհին էլ շուռ գա, իր ամուսինը չի գրի բանաստեղծություններ:
Ու չնայած այս պատմությունը ոնց որ Մակեդոնացու հորինածը լինի,
բայց բարեկամներիցս ոչ մեկը բանաստեղծություն գրելու հավես չունի:

Քրոջս գրադարակում չկան հին բանաստեղծություններ,
ոչ էլ նորերն է պահում պայուսակում:
Իսկ երբ քույրս ճաշի է հրավիրում,
գիտեմ՝ չի պատրաստվում կարդալ բանաստեղծություն:
Նրա ապուրներն առանց դրա էլ ընտիր են,
իսկ ձեռագրերին չկան սուրճի հետքեր:

Այնքա՜ն ընտանիքներ կան, ուր ոչ ոք չի գրում բանաստեղծություն,
կամ հազվադեպ՝ տնից մեկը:
Երբեմն պոեզիան յոթ պորտով է փոխանցվում,
ինչը գլխիվայր շրջում է հարաբերությունները:

Քրոջս բանավոր խոսքն այնքան էլ վատը չէ,
իսկ եղած-չեղած գրական ժառանգությունը
բացիկներն են արձակուրդից՝ ամեն տարի նույն խոստումով,
թե հենց վերադառնա՝
ամե՜ն,
ամե՜ն,
ամե՜ն բան կպատմի:

Յուլիա Կրիստևա

Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Եվա Հակոբյանի

Հոգեվերլուծաբան, ֆեմինիստ և գրող (բուլղարերեն՝ Юлия Кръстева, ֆրանսերեն՝ Julia Kristeva): Ծնվել է Բուլղարիայի Սլիվեն քաղաքում 1941 թվականին: 1966-ից տեղափոխվել է Ֆրանսիա՝ աշխատելու Tel quel ավանգարդիստական ամսագրում Միշել Ֆուկոյի, Ժակ Դերիդայի հետ: Հեղինակ է մի շարք գրքերի, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, այդ թվում՝ Կանանց ազատության համար Սիմոն դը Բովուար մրցանակի: Դասախոսում է ԱՄՆ-ի և Ֆրանսիայի մի շարք համալսարաններում:

Այս տեքստը թարգմանվել է իմ և «Ինքնագրի» խմբագրի նախաձեռնությամբ: Առաջին անգամ հրապարակվելուց հետո (1995) Բուլղարիային վերաբերող մի շարք որակումներ այժմ փոխվել են: Բայց իմ և խմբագրի համար ակնհայտ է երկու բան: Առաջին՝ այս փոքրիկ էսսեն արտահայտում է Յուլիա Կրիստևայի այն կարևոր հղացքներն ու հայացքները, որոնք պարադոքսալ կերպով համահունչ են և համապատասխան մեր իրականությանը: Վերջին ժամանակներս եմ հաճախ եմ լսում հայ, վրացի, ուկրաինացի գրողներից այն դժվարությունների մասին, երբ նրանք հայտնվում են իրենց փոքր լեզվի և մեծ գրականությունների լեզուների ընտրության առջև: Ամեն օր մենք կանգնած ենք ոչ միանշանակ երևույթի առաջ, որ Կրիստևան անվանում է մատրիցիդ (մայրասպանություն):

Այդպիսի մայրասպանության անհրաժեշտությունը կամ անխուսափելիությունը լեզվի մեջ կարող է բերել նրան, որ կոչվում է ճաշակի բացակայություն, հենց այն բանի բացակայություն, որը մենք կարող ենք զգալ մեր հոգեբանության և լեզվի միջոցով: Հնարավոր չէ շարադրել սեփական ցավոտ զգացումները, սուգն ու վնասվածքները՝ առանց զննելու Ուրիշին: Այս իմաստով Կրիստևայի գրությունը այն անհրաժեշտ ուրիշությունն է, որի միջով մենք ավելի պարզ ենք տեսնում սեփական կորուստներն ու ցավը:

Երկրորդ. Կրիստևան ժամանակակից աշխարհի այն մեծ փիլիսոփաներից մեկն է, որ ստեղծում է հասկացություններ՝ իր սեփական փորձի սահմաններից դուրս գալով, միշտ ձգտում է ուրիշ տարածքներ և ուրիշ իրականություններ: Բայց Ուրիշի ցանկությունների մերկությամբ հանդերձ՝ Կրիստևայի տեքստը գրություն է ինքն իր մասին:

Դա այն բեղուն օտարությունն է, ներքին փորձընկալման այն դեպքը, որը չի մնում որպես վնասվածք (травма), փակ բեռնարկղ և առատորեն ներմուծվում է նրա գեղարվեստական և տեսական տեքստեր: Հենց այդ ինքն իր մասին գրությունը (Ինքնագիր) հանդիսանում է այն առանցքային հղացքը, որը թույլ չի տալիս՝ հնանա հեղինակի ոչ մի տեքստ: Նա իր վեպերում, հոգեվերլուծական, փիլիսոփայական և հրապարակախոսական տեքստերում գրում է անձնական փորձառության մասին. գրել ինքն իր մասին, ձևակերպել իրեն գրության մեջ՝ ընթերցողին հնարավորություն տալով սեփական փորձը վերասահմանել և կարդալ իր մասին:

Այսպիսի տեքստ թարգմանելը կնշանակի ընդլայնել փորձառության պարադոքսը, մահանալու փորձառությունը: Սահման և մահանալու ռեֆլեքսիայի թեման ամենակարևորներից են այսօր: Այդ մասին ես լսել եմ Յուլիա Կրիստևայի դասախոսություններում: Այս թարգմանությունը կընդլայնի Ուրիշի փորձառությունը ճանաչելու սահմանները:

Հաջորդիվ իմ հոդվածն է, ուր ես խոսում եմ Կրիստևայի ստեղծագործական և տեսական գործունեության տարբերության ու ճյուղավորման մասին:

Տիգրան Ամիրյան

Բուլղարիա, իմ ցավ

1. Ո՞ր լեզուն

Ես չեմ կորցրել իմ մայրենի լեզուն: Այն երբեմն վերադառնում է ինձ, խոստովանեմ՝ ավելի ու ավելի մեծ դժվարությամբ: Մեկ երազում, մեկ երբ լսում եմ, թե ինչպես է մայրս խոսում, ու երբ քանչորս ժամ շարունակ գտնվում եմ արդեն հեռավոր դարձած այդ ջրերի մեջ, ինքս ինձ բռնացնում եմ այն բանի վրա, որ հանգիստ լող եմ տալիս այնտեղ: Կամ երբ օտար մի լեզու գործածելիս, ռուսերեն կամ անգլերեն օրինակ, ինչ-որ բառ կամ քերականական ձև եմ մոռանում, կախվում եմ այդ հին փրկօղակից: Այն հանկարծ ինչ-որ սկզբնաղբյուրից, որ ինչպես պարզվում է, այդքան էլ խոր քուն չի մտել, հայտնվում է իմ տրամադրության տակ: Եվ ուրեմն ֆրանսերենը չի, որ ինձ օգնության է հասնում, երբ ես դժվարություն եմ զգում ինչ-որ նշանային համակարգի առաջ կամ երբ հոգնած ժամանակ գումարումներ ու բազմապատկումներ եմ անում մտքումս, այլ բուլղարերենը՝ ինձ նշան տալով, որ չեմ կորցրել ակունքներս:

Բայց և այնպես բուլղարերենն արդեն ինձ համար գրեթե մեռած լեզու է: Կարծես իմ մի մասը դանդաղորեն մարել է ֆրանսերեն սովորելուն զուգընթաց՝ սկզբում դոմինիկյանների մոտ, ապա՝ Ալիանս Ֆրանսեզում, հետո էլ՝ համալսարանում: Իսկ աքսորը վերջնականապես սպանեց այդ ծեր մարմինը՝ փոխարենը նրան տալով մեկ ուրիշը՝ նախ փխրուն ու արհեստական, ապա ավելի ու ավելի անհրաժեշտ, իսկ հիմա՝ միակ կենդանի լեզուն՝ ֆրանսերենը: Ես գրեթե պատրաստ եմ հավատալու հարության մասին քրիստոնեական առասպելին, երբ զննում եմ մտքիս և մարմնիս այս երկփեղկված վիճակը: Ես չեմ սգացել մանկությանս լեզվի մահը, այն իմաստով, որ «իրագործված» սուգը ենթադրում է հեռացում, սպի, նույնիսկ մոռացում: Ընդհակառակը, հոդածձկ այս դամբարանի վրա, այս քայքայվող ու լճացող ամբարի վրա ես կառուցեցի մի նոր կացարան, ուր ես բնակվում եմ, և որը բնակվում է իմ մեջ, և որի մեջ ընթանում է այն, ինչը ոչ առանց հավակնության գուցե, կարելի է կոչել հոգու և մարմնի իրական կյանք:

Ես ենթարկվում եմ այդ անանուն մարգարտե մառախուղին, որը թեթև ալեկոծում է Ատլանտյանի ճահիճները և չինական մետաքսի մեջ է ներծծում ծիծաղկոտ ճայերի ճիչերն ու վայրի բադերի անխռով նինջը: Ես երազում եմ մի գարնան մասին, ուր բոլոր մեքենաները անուշ կբուրեն, իսկ խեղճ ձիերը ծաղիկներ կուտեն: Ապոլիներ: Կեցության մեջ իմ խորասուզվելու անորոշ պատկերից, որը դժվար է միանգամից մի բառով նկարագրել՝ «ուրախություն» բառով հասարակ է դառնում, մինչդեռ «էքստազը» զմռսում է, ես մտապահում եմ

ֆրանսերեն բառերի հստակ պարզությունը: Իմ ընկալումների սահմաններից դուրս մի անընկալելի դող փնտրում է ֆրանսերեն բառը. միաժամանակ ինչ-որ տեղ վերևից, լույսի պայծառ հոսքով դեպի ինձ է գալիս ֆրանսերեն զրույցների ու ընթերցանության մի ամբողջ շտեմարան՝ առաջ բերելով մի լուսավոր հյուսվածք, որը ես ընտրում եմ զգացողությամբ և դրանով կյանք տալիս իմ ներքին պարզությանը: Բառի անվանման ալքիմիայի մեջ ես մենակ եմ ֆրանսերենի հետ: Կեցությունը անվանելով՝ ես սկսում եմ լինել. հոգով ու մարմնով ես ապրում եմ ֆրանսերենի մեջ:

Բայց երբ այս ամենի մեջ խառնվում է սյուժեն, այսինքն՝ամեն անգամ, երբ կեցությունն ինձ որպես պատմություն է ներկայանում՝ որպես մարգարտե մառախուղի կամ վայրի բաղերի, կամ էլ մի երազի, կրքի կամ սպանության պատմություն, բառերից զուրկ մի ալիք՝ միայն իրեն հատուկ երաժշտությամբ, ինձ մի անհաջող շարահյուսություն է պարտադրում, ու խորունկ փոխաբերությունները, որոնք ոչ մի ընդհանրություն չունեն ֆրանսիական փայլի և բարեհնչյունության հետ, սողոսկում են իմ հանդարտ պարզության մեջ՝ այն լցնելով բյուզանդական տագնապով: Ես մեղանչում եմ ֆրանսիական ճաշակի առաջ: Ֆրանսիական ճաշակը նույն արտահայտչամիջոցները կիսող մարդկանց միջև քաղաքավարության դրսևորում է, նույն պատկերներն ու նախադասությունները, ընթերցանության և զրույցների նույն շտեմարանը մեկ կայուն հասարակության մեջ: Ու չնայած ահա արդեն մոտ հիսուն տարի է, ինչ ես շարունակ հարություն եմ առնում ֆրանսերենով, միևնույն է, իմ ֆրանսիական ճաշակը միշտ չէ, որ դիմադրում է դեռևս արթուն հիշողության շուրջ պարուրված՝ մի հին մեղեդու հանկարծակի ջղակծկումներին: Այս փոխկապակցված անոթներից ի հայտ է գալիս մի օտարոտի խուսք՝ օտար ինքն իրեն, ոչ այստեղից, ոչ այնտեղից, նեղ անձնական հրեշավոր մի ծիլ: Ինչպես Պրուստի «Վերագտած ժամանակի» կերպարները, որոնք մարմնավորում են կամավոր և ակամա հիշողությունների երկարաձիգ տարիները անչափելի տարածության մեջ, ես էլ խաչմերուկի հրեշ եմ:

Երկու լեզուների ու առնվազն երկու ժամանակների խաչասերումով ես խմորում եմ մի լեզու, որը բարեհնչյունության որոնման մեջ թաքցնում է փոքրիկ պաթետիկ ակնարկներ, իսկ քարե ցողամանի պես հղկված ֆրանսերեն բառերի լերկ արտաքինի տակ բացահայտում եմ ուղղափառ սրբաքանդակների ոսկեզօծ սև շերտերը: Այդտեղից դուրս եկած հրեշը, հսկա լինի թե թզուկ, հաճույք է ստանում անդադար ինքն իր հետ վիճաբանելուց՝ միևնույն ժամանակ զայրացնելով բնիկներին: Թե՛ իմ հարազատ երկրի բնակիչներին և թե՛ այն երկրի, որն ինձ ապաստան է տվել:

Երբ այս տագնապը, որն իրականում օդի մի պարկ է, շնչելու մի ճեղք, հոգեմետ մի հաբ, հանդարտվի՝ ուրիշների աչքին արդարացնելով իր գոյության հիմքը, ես գուցե կարողանամ ձեզ բացատրել, թե ինչպես այդ սահմանային արարածները, այդ անդասակարգելիները, այդ կոսմոպոլիտները, որոնց թվին ես նաև ինքս ինձ եմ դասում, մի կողմից ժամանակակից աշխարհի զարկերակն են, աշխարհի, որը կորցրել է իր հրաշալի արժեքները՝ շնորհիվ գաղթականության և խառնածնության հոսքի կամ ի հեճուկս դրանց, իսկ մյուս կողմից և որպես արդյունք այդ ամենի՝ մարմնավորում է դրականի նոր միտումը՝ առճակատելով ազգայնական հարմարվողականներին և միջազգայնական նիհիլիստներին: Այլ կերպ ասած, եթե պատմությունը այն է, ինչ գրվում է թերթերում, երկու լուծում կա դիմակայելու կամ միգուցե վերջ դնելու Սարանոյին ու Ղրիմին. մի կողմից զարկ տալով ազգային լեզուներին ու մշակույթ-

ներին (սրան դեռ կանդրադառնամ), մյուս կողմից՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով այս դեռևս հազվագյուտ, բայց տարածվող տեսակի համար, պաշտպանել այս հիբրիդ հրեշներին, որ մենք ենք՝ գաղթական գրողներս, որ մեզ վտանգել ենք՝ նստելով միանգամից երկու աթոռի: Իսկ հանուն ինչի՞, թույլ տվեք հարցնել: Հանուն այն բանի, որ ստեղծվեն նոր տեսակի մարդիկ, որոնց լեզուն և արյունը արմատներ չեն ունենա ոչ մի այլ լեզվի և արյան մեջ, լեզվական դիվանագետների մի նոր դաս՝ ի ծնե միջնորդներ, Կեցության մեջ մոլորյալ հրեաներ, որոնք մարտահրավեր են նետում ամեն տեսակի բնիկ, հետևաբար այս կամ այն կերպ ռազմատենչ քաղաքացիների՝ հանուն մի քոչվոր մարդկության, որն այլևս չի ուզում հանգիստ նստել մի տեղում:

Իսկ ո՞ւր է ցավը այս գեղեցիկ ծրագրի մեջ: Սպասում էի այդ հարցին, բայց պատասխանս միայն կիսով չափ է հղկված: Մայրենի լեզուն լքելը ինչ-որ չափով նման է մայրասպանության, և եթե ես տանջվել եմ իմ թրակիական փեթակից հեռանալիս, իմ երազների մեղրի կորստից, ես անշուշտ վայելել եմ նաև վրեժխնդրության հաճույքը, և հատկապես հպարտության զգացումը, քանի որ ես իրագործել էի այն ծրագիրը, որի մասին երազում էին իմ հայրենակից մեղուները: Թռչել ավելի բարձր, քան ծնողները, ավելի բարձր, ավելի արագ, ավելի հեռու: Պատահական չէ, որ մենք հույների ժառանգորդն ենք, մեր երեխաները կտիրապետեն ռուսերենին, անգլերենին, ֆրանսերենին, ողջ աշխարհին: Գաղթականի ճակատագիրը ցավոտ է, բայց Ռաբլեից ու Բեռլինի պատի անկումից ի վեր աքսորը մեզ մնացած միակ ուղին է գտնելու աստվածային խմիչքը: Այն կարելի է գտնել միայն այն որոնման մեջ, որն արվում է հանուն որոնման, այն աքսորում, որն իրենից աքսորում է աքսորականի գիտակցությունը, աքսորականի մեծամտությունը: Այս անվերջ սգի մեջ, ուր լեզուս ու մարմինս հարություն են առնում փոխպատվաստված ֆրանսերենի զարկերի շնորհիվ, ես զննում եմ իմ մայրենի հիշողության դեռևս տաք դիակը: Այդ հիշողությանը ես մայրենի կոչեցի ոչ իմ կամքից անկախ և ոչ էլ անգիտակցաբար, ես հատուկ շեշտում եմ՝ մայրենի, քանի որ մեղեդի հագած բառերի և բառերով չարտահայտվող պոռթկումների սահմանին, զգացմունքի և կենսաբանության եզրագծին, որոնց իմ երևակայությունը, բարեբախտաբար, հնարավորություն ունի կյանք տալու ֆրանսերենով, ինձ մոտ է վերադառնում ցավը, Բուլղարիան, իմ ցավը:

Դա ես չեմ: Դա այն մայրենի հիշողությունն է, այդ տաք և դեռևս խոսող դիակը՝ մարմին իմ մարմնի մեջ, որը թրթռում է՝ ներդաշնակվելով ինֆրահնչյուններին[1] ու տեղեկությունների հոսքին, խեղդված սերերին ու ակնհայտ հակասություններին, գրեգորյան մեղեդիներին[2] և գռվազդային հայտարարություններին, մանկական քնքշանքներին ու մաֆիական կոպտություններին, թշվառ քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական հիմարություններին, չկողմնորոշված մարդկանց կամ փառասեր վայրենիներին, օգտապաշտ ու ծույլ, ճարպիկ խարդախներին, առանց ամոթի ու առանց ծրագրերի անհատապաշտներին, և ձեզ, որ պատմությունից վտարված լինելով՝ փորձում եք հասնել նրան առանց իմանալու, թե ինչպես, բուլղարացիներ, անտեսանելի, անցանկալի, լույսի վրա սպիտակ հետք, մռայլ բալկանցիներ՝ խցված Արևմուտքի անտարբերությունից, որի մի մասն եմ ես: Ձեր հաճոյախոսությունները հանդիմանություն են, ձեր շնորհակալությունը պահանջի է նման, ձեր հույսերը ճնշված և դատապարտված են՝ դեռ չծնված, ձեր երգերը լաց են, ձեր ծիծաղը դժբախտություն է գուժում, դուք երբեք գոհ չեք, ցանկություն չունեք ինչ-որ բան անելու՝ չնայած շուտ եք մեկնում, բայց չափազանց ուշ եք հասնում

այս ձեր, բայց անդադար նորացող աշխարհում, որը չի սիրում ուշացողներին: Ձեզ, չգիտես ինչու, թվում է, թե բոլորը ձեզ պարտք են, հենց այնպես, դուք ամեն ինչ ուզում եք, բայց ինքներդ նիրհում եք, ծուլանում եք, խոտորում եք, թերանում եք, խարդախում եք, իսկ երբեմն էլ աշխատում եք մինչև ինքնասպանություն: Բայց, Աստված սիրեք, ինչո՞ւ եք ձեզ սպանում: Դուք ինձ ցավ եք պատճառում, իմ ազգակիցներ, իմ եղբայրներ: Բուլղարիա, իմ ցավ:

2. Մեղանչում ճաշակի առաջ

Իրերը քննենք հակառակ կողմից: Ես ինձ դնում եմ ձեր տեղը՝ գիտակցելով, որ դա մեծամիտ հավակնություն է: Քանի որ, ինչպես բոլորը գիտեն, հենց ձեր, այնտեղ մնացողներիդ վրա է ծանրանում իրականը, այլ կերպ ասած՝ անհուսությունը: Ի վերջո, իմ խնդիրը լիովին համահունչ է ձերինի հետ, բայց հակառակ ուղղությամբ: Դուք պետք է ձեր մայրենի լեզվին (բաղկացած մտքերից ու կյանքերից) պատվաստեք բառեր (որոնք նույնպես մտքեր ու կյանքեր են ներառում), որոնցից բաժանված եք եղել երկաթե վարագույրով հիսուն տարի շարունակ, մի դար շարունակ թոթովախոս ժողովրդավարությամբ, ընդդիմադիր ազգայնականությամբ, որի միակ բովանդակությունը իսլամին դիմադրելն էր, և մի կրոնով, որ միջնադարից ի վեր հավատարիմ է մնում իր միջնադարին:

Ես չէի ցանկանա ձեր տեղը լինել և չէի ցանկանա վիճաբանել մեկի հետ, որն ինձ կմեղադրեր այդ դժվարությունից փախուստի համար:

Սկսեցիք Շեքսպիր և Դոստոևսկի թարգմանելով, ապա հասաք մինչև Ֆոլքներ, Բեքետ, Նատալի Սարոտ, Բարթ, Ֆուկո, Կրիստևա (շատ քիչ) և այլն: Տեսաք, որ բառերը չեն հերիքում, և այս զգայուն գյուղացիների ու միամիտ մտածողների խեղճ լեզուն լցրեցիք անհամ ու անարմատ փոխառությունների մի ողջ զինանոցով: Շարահյուսությունը ծանրացավ, իսկ միտքն այդպես էլ ավելի ճկուն չդարձավ, և թվաց, թե ճիշտ կլինի այդ էսպերանտոն փոխադրել բազմալեզու համալսարանականների համար նախատեսված «ազատական», «կրթված» և «ազատամիտ» թերթերի սյունակներ: Ամեն ինչ այլափոխելու վատ սովորություն է սա, կարծես արժեքավոր է միայն այն, ինչը «նո՛ր է բացահայտվում»: Եվ ահա մենք գլուխկոտրուկի առաջ ենք, որի ձևավորման մեջ անգնահատելի է Պատի անկումից հետո առաջ եկած մամուլի դերը. մի կողմից՝ խուլիգանական հայհոյանքներ, որոնք իրենց խուլիգանական լեզվով, բայց առանց սյուրռեալիստներին հատուկ սուր հանդգնության, խուլիգան են կոչում ուրիշ խուլիգանների, որոնք առաջիններին ոչնչով չեն զիջում: Մյուս կողմից՝ մի ածանցով հազիվ փոփոխված օտարալեզու բառեր, որոնք դուրսպրծուկի մոտ հիացմունք են առաջացնում, երբ վերջինս այն տեսնում է կիրիլիցայով գրված, իսկ ինձ նման անհայրենիք մարդու մեջ այդ բառերը խղճահարություն են արթնացնում, միջին կարգի կրթված մարդկանց մեջ՝ ուժեղ գլխացավ: Մի կողմից բավականին անվայելուչ մղումների ալիքներ (ո՜, Սադ, ո՜, Ռաբլե, Մի քիչ ճաշա՛կ), մյուս կողմից՝ ծիծաղելի սեթևեթումներ (օ Դիաֆուարուս, ո՜, Մոլիեր, մարդատյաց լինենք): Ամեն կողմից՝ ճաշակի պակաս: Սա է խնդիրը: Այն ձեզ աննշա՞ն է թվում: Չշտապենք:

XVIII դարում ֆրանսիացիները շատ են խոսել ճաշակից: Ճաշակ ասելով՝ նրանք նկատի ունեին «հոգու հաճույքները», այնպես, ինչպես դրանք գիտակցում ենք և հատկապես՝ ինչպես զգում ենք: Հանրագիտարանը նույնիսկ հոդվածներ էր առաջարկում ճաշակի մասին՝ Վոլտերի ու Մոնտեսքիոյի կող-

մից ստորագրված, որոնք մտածում էին ճաշակը ձևավորող համընդհանուր կանոնների (հիմնվելով մարդկային բնույթի ընդհանրության և նույն պատմության վրա), ինչպես նաև անձնական շեղումների օրինաչափությունների մասին: Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ ճաշակը ճանաչումի հռետորաբանությունն էր. անհրաժեշտ է, որ ես ինձ ճանաչեմ, որ դու քեզ ճանաչես, որ մենք մեզ ճանաչենք կա՛մ ինչ-որ իշխանության միջոցով (Եկեղեցի կամ միապետություն, ցանկալի է երկուսը), կա՛մ որևէ ընտրախավի, որ կոչված է Երկրի վրա առաջինի էությունը մարմնավորելու (Վերսալյան արքունիքը), կա՛մ էլ անհատի արժեքային նշանակության միջոցով, որը, լինելով քրիստոնեության զավակը, ի հայտ է գալիս ծայրահեղ ոգեղենության կամ զգացմունքային բռնկման մեջ (համամարդկային բանականություն և պարզ զգայասիրություն): Ճաշակը այս ճանաչման հռետորաբանությունն է, որի միջոցով «Ես»-ը, կենտրոնացած լինելով Իշխանության, կլանի կամ անձնական ենթակայության տակ, ուրիշի մոտ գտնում է նույն լեզուն, ինչ իր մոտ: Ճաշակը հաստատում է «Ես»-ի և ուրիշի միջև եղած տարբերությունը միայն ու միայն այն դեպքում, երբ այդ տարբերությունը ներդաշնակ է, և ես վայելում եմ այդ ներդաշնակությունը, ինչպես սիրած կերակուրն եմ համտեսում՝ ընտրելով մեկ Իշխանություն, կլան կամ անձ, որոնք այլևս խոսում են նույն լեզվով: Ճաշակը հղկված է, քանի որ ուղղված է յուրայիններին, նրանց, ովքեր կիսում են նույն իշխանությունը, նույն կլանը, անձնական նույն արժեքները: Լա Բրույերը[3], Սևինյեն[4] և Սեն Սիմոնը[5] կարիք չունեին այն սահմանելու, ճաշակը ինքնին ակնհայտ բան էր: Հանրագիտակնները, որ խարխլել էին Հին Ռեժիմի հիմքերը, սկսեցին մտածել նոր ճաշակ ձևավորելու հնարավորության մասին, որը չէր անտեսի զգացմունքների ազատությունը, նույնիսկ նրանց խոտորումը սովորական ուղուց: Այս նախահեղափոխականները Արևմուտքի երբևէ ճանաչած ամենակիրթ մարդկանցից էին: Մեր ժամանակներից ոչ շատ հեռու անցյալում Պրուստը, այլևս նեցուկ չգտնելով ո՛չ Սուրբ Մարկոսի եկեղեցու մկրտարանում, ո՛չ էլ նույնիսկ Գերմանտի արքունիքում, իրեն նվիրեց ճաշակի դեմ մեղքերի հետազոտություններին, նույնիսկ սկսեց ծաղրել այն՝ հանուն այն բացառիկ իշխանության, որն իր կարծիքով կարող էր փրկել ճաշակը՝ գրականությունը:

Բայց անցել է այն ժամանակը, երբ փլվում էր բարբարոսությունը, և մաֆիան պայքարում էր ազատ ձեռնարկատիրության դեմ: Չկա իշխանություն, չկա համայնք, չկա անհատ: Մտավորականը, որն էլ վերջին հաշվով լեզու է ստեղծում, չունենալով այս երեք առանցքը, անխուսափելիորեն մեղանչելու է ճաշակի դեմ: Եվ ոչ ոք բավարար հավատ չունի գրականության հանդեպ, ինչպես Պրուստը, որ ծաղրի, բայց շարունակի թերթել էջերը: Ոչ ոք, կամ շատ քչերը:

Ես շեշտը դնում եմ ակնհայտորեն աննշան այս կետի վրա: Կարող էի լացել սև շուկայի չափազանց բարձր գների, ծերերի խղճուկ թոշակների, անցյալում այնքան մաքուր Սոֆիայի, այժմյան աղբանոցների և ճանճերի վրա, կամ սոցիալիստների, որոնք վերածվել են լիբերալների, ու հակառակը՝ մի երևույթ, որ ամեն ինչ դարձնում է կասկածելի, որոշում ընդունելը՝ անհնար: Ես նախընտրում եմ բավարարվել ճաշակով: Պետք է սկսել փոքր բաներից, այնտեղ են խաչաձևվում մեծերը:

Ես վստահ չեմ, բոլորովին վստահ չեմ, որ ձեր փոխարեն կկարողանայի փնտրել ինչ-որ իշխանություն, համայնք, անհատ և հետևաբար ինչ-որ ճաշակ: Սակայն ես կփորձեի խուսափել այն բառերից, որոնք չեն բխում ինչ-որ

խմբի հեղինակությունից կամ այն անձի խարիզմայից, որի կրթվածությունն արտահայտվում է իրեն ճանաչելի դարձնելու ձգտումի մեջ նրանց մոտ, որոնք նույնպես ձգտում են ճանաչելի լինել: Առանց մարդկանց միջև այս քաղաքավարության դրսևորումների՝ բառերը կմնան օտար նորաբանություններ՝ մեռած ավազի մեջ, անիմաստ սնոբներ, ունայն հնչյուններ: Եթե բառերը իրենց մեջ չունեն ուրիշների հանդեպ քաղաքավարություն, վիրավորական են: Ճաշակի այս բացակայությունը մատնում է հասարակության բարբարոս վիճակը: "Другостта на фалическия ДИСКУРС", կամ ավելի պարզ` "Той се грижи за своя ИМИДЖ", կամ ավելի ծանր` «Освен това, знаейки твърде добре историята на революциите, тъжната истина, че те изяждат своите деца, демократичните избори би трябвало да бъдат известна ПРЕВЕНЦИЯ, средство за спиране на революцията с нашето участие в тях – прекъсване на ужасяващата връзка с историческия революционен опит» ինձ ցավ են պատճառում: Ես ձեզ չեմ առաջարկի այլընտրանք, չնայած ДИСКУРС-ը реч-ն է, ИМИДЖ նշանակում է образ, представа, картина, իսկ ПРЕВЕНЦИЯ-ն` възпрепятствие, пречка, предпазна мярка.

Խի՞ղճ ունեցեք, ո՞չ: Համարձակությո՞ւն ունեցեք ստեղծել բառեր, որոնք իմաստ ունեն` թեկուզև ձեզ անհայտ: Կտրեք օտար շարահյուսության այն հատվածը, որի իմաստը բացակայում է ձեր լեզվում: Փոխե՛ք ռիթմը, մի՛ կմկմացեք թերաճ հնաբանությունները, բայց նաև մի՛ կապկեք այն մարդկանց նրբակրթությունը, որոնց համար, հակառակ ձեզ, «ալկով»[6] ու «բարոկկո» բառերը սովորական են, բառեր, որոնց մասին դուք գաղափար անգամ չունեք: Մի՛ կպեք ուրիշի, նա ոչնչով առավել չէ ձեզնից, ու նույնքան հեշտ է փոխվում, ինչքան դուք: Ջանացե՛ք լինել ինքնավստահ, ոչ մի պատվաստում չի հաջողվում թառամող մարմնի վրա:

Սկզբունքորեն, ես նույնիսկ չեմ պայքարում նորաբանությունների դեմ: Այն պայմանով, որ նրանք լինեն նորովի մտածելու ջանքի արդյունք, որ տղամարդկանց և կանանց համայնքները դրանք հասունացրած լինեն` ելնելով եզակիության ձգտումից ու հիմնվելով իրենց լեզվի հիշողության և գաղափարները բյուրեղացնող բանավեճերի վրա: Ես ո՛չ այդ համայնքներն եմ տեսնում, ո՛չ այդ եզակիությունը, չեմ տեսնում այդ լեզվի հիշողությունը, չեմ տեսնում բանավեճերը: Սա է իմ ցավը: Գուցե ես կույր եմ, կամ հեռավորության բերումով զուրկ եմ տեղեկություններից: Եթե այդպես է, ուրեմն ամեն ինչ այդքան էլ վատ չէ, ես ձեզանից ներողություն եմ խնդրում: Բայց եթե իմ ցավը արդարացված է, ուրեմն այս անճաշակությունը մի ժողովրդի (ու մի շարք այլ ժողովուրդների) մղում է հնազանդորեն անձնատուր լինելու մի նոր աշխարհակարգի, որի տեսլականն է՝ բոլորի վրա դնել միայն մեկ գլուխ, ավելի ճիշտ` ընդամենը մեկ համակարգիչ:

3. Երբ է Աստված մեռել Բալկաններում

Դուք տանջվում եք քաոսից, բարբարոսությունից, բռնությունից: Տանջվում եք անիշխանությունից: Տանջվում եք կաշառակերությունից, նախաձեռնությունների բացակայությունից, ամենաթողությունից, որ կրկնապատկում են մարդկանց աննախադեպ կոպտությունը, մաֆիայի ամբարտավանությունը, նոր հարուստների դավադրությունները:

Արևմուտքի համար դժվար է պատկերացնել ձեր տառապանքը, ձեր նվաստացումը: Ես չեմ համարձակվում ասել, որ կիսում եմ դրանք, քանի որ հա-

մաձայն եմ ձեզ հետ, հեռվից այնքան հեշտ է թվում: Ասեմ այսպես. ես տանջվում եմ մի մեծ ու դժվարին խնդրի առաջ, որը մենք բոլորս՝ թե՛ այստեղ և թե՛ այնտեղ ապրողներս, ստիպված ենք լուծել մոտ ապագայում: Անհրաժեշտ է իմաստավորել «ինչո՞ւ» հարցի պատասխանը: Ինչի՞ համար է այս ամենը: Մինչև որ գտնենք ելքի միջոցները:

Արժի՞ արդյոք ասել, որ ես պատասխան չունեմ: Ձեզ չեմ էլ կրկնելու այն, ինչ արդեն հայտնի է կոմունիստական ռեժիմի հանցանքի կամ էլ բուլղարական երիտասարդ պետության մեջ ժողովրդավարության թերացումների մասին, որը 1878 թվականին թուրքերից ազատագրվելուց հետո ենթարկվեց եվրոպական դիվանագիտության և երկու համաշխարհային պատերազմների հակահարվածներին: Լեզվի մասին խորհրդածություններս հանգեցրին մի շատ նուրբ խնդրի՝ մտակերտվածքի խնդրին: Եվ ես, միանալով շատ ուրիշ ձայների, հաստատում եմ, որ կոմունիստական ճամբարի բարոյական ճգնաժամն ավելի անմխիթար և գուցե ավելի բարբարոս կերպ է ստանում ուղղափառ հավատքի երկրներում՝ տեղ չթողնելով շուտափույթ լուծման հույսի: Սերբական նեոֆաշիզմը այդ աղետի գագաթնակետն է: Եվ ինքս ինձ հարց եմ տալիս. ինչո՞ւ:

Չեմ կարծում, թե գոյություն ունի համընդհանուր «ժողովրդական հոգեբանություն», քանի որ հավատում եմ անհատների եզակիությանը: Նմանապես ես կրոնին չեմ վերագրում մարդու վարքագիծն ուղղորդող միակ որոշիչ ուժը: Գիտեմ նաև, թե քրիստոնեական հավատն ինչքան անկարևոր է բանահյուսությամբ ու հեթանոսությամբ ողողված այս տարածաշրջանում, հատկապես ներկայիս սերունդների մեջ: Բայց և այնպես այլ դերակատարների թվում, անհատի կրոնական գաղափարը, ձևավորվելով պատմության կողմից և ձևավորելով այն, անկախ մեզանից իր հետքն է թողնում մեզ վրա: Այն ձևավորում է հոգեբանության կարևոր այն մասը, ինչը Եվրոպայի ժողովուրդների համար, որոնց մենք այնքան ուզում ենք նմանվել, հակամարտությունների հիմք է ծառայում: Այդ հակամարտությունները կրոնական պատերազմներ են դառնում (վատագույն դեպքում), կամ փոխադարձաբար անհաղթահարելի անհամատեղելիություններ (լավագույն դեպքում):

Ես բախտ եմ ունեցել հորս շնորհիվ ճանաչելու և զգալու ուղղափառ հավատի մեջ ննջող դիմադրության ուժը: Ես սիրում եմ նրա զգայականությունը, նրա խորհրդավորությունը, այդ առանձնությունը, որ մեզ թույլ է տալիս ծիսական պատարագների ժամանակ հաղորդակից լինել անդրաշխարհի ցավերին և ուրախություններին: Եվ այն մեզ ներշնչում է բանականությամբ անընկալելի մի զգացում, թե մենք այս աշխարհից չենք: Տպավորությունն անշուշտ ցնորական է, բայց միևնույն ժամանակ այնքան երջանիկ, ազատագրող և հնարավորություններ ստեղծող: Եվ ուրեմն գնահատական չեմ ուզում տալ և չեմ ուզում գովերգել քրիստոնեության մի ճյուղի «առավելությունները» մեկ այլ ճյուղի «թերությունների» հանդեպ: Այլ կփորձեմ բացատրել, թե ինչպես են ի հայտ գալիս ուղղափառությամբ ձևավորված անձի զարգացումն ու սահմանափակումները: Փորձելու եմ պատասխանել այն հարցին, թե արդյոք ուղղափառությունն ունի՞ է հաղթահարելու բարոյական ճգնաժամը: 1054 թվականի եկեղեցիների պառակտումից առաջ քրիստոնեության ուղղափառ ճյուղը երկու միտում է զարգացնում, որոնք գնալով ավելի են սրվում, և ի հայտ գալիս տարբեր ազգային եկեղեցիներում (ռուսական, հունական, բուլղարական և այլն): Դրանք են՝ գործիականացում և խորհրդազգածությունը:

Գործիականացում ասելով՝ ես հասկանում եմ եկեղեցու կախվածությունը

քաղաքական իշխանությունից: Վերջինը եկեղեցուն հաճախ հետին պլան, երբեմն էլ՝ լիակատար հնազանդության է մղել: Սա բյուզանդական սկզբունքն է, ըստ որի պատրիարքը իր տարածքի տերն է *աշխարհիկ* իրավունքի նորմերի համաձայն՝ քաղաքական իրավիճակով պայմանավորված (մինչդեռ ընդհակառակը՝ Հռոմում օգտվում էին *աստվածային* իրավունքից), այնպես որ Բասիլեուսը[7] միջամտում է եկեղեցու գործերին, նա է ընտրում պատրիարքին, փոխարենը Եկեղեցին նպաստում է հասարակական կայունությանն ու կրոնի անփոփոխ պահպանմանը: «Քրիստոնյայի համար չկա եկեղեցի՝ առանց կայսեր»՝ պատրիարք Անտուանի (1391-1397) այս նախադասությունը սարսափելի արձագանք ունեցավ. XX դարի ուղղափառ եկեղեցիները հավատարմության երդումներ էին տալիս և ծառայում քաղաքական իշխանություններին: Այս երևույթը հասնում է իր բարձրակետին, երբ եկեղեցին նույնանում է ազգի հետ, միջնադարի սլավոնական երիտասարդ պետությունների համար ձեռնտու նույնականացում (հիշենք Բորիսին, Սիմեոնին և կիրիլական այբուբենի ստեղծումը), և հանգեցնում է *հավատի* և *ազգայնականության* տարօրինակ սերտաճմանը: Նման կոկտեյլի կործանարար և պայթյունավտանգ հետևանքները ցավոք թերագնահատվում էին, երբ մինչև XIX դարի վերջը եկեղեցուն էր վերագրվում թուրքական բռնազավթումից «ազատագրողի դերը»: Այս ֆունդամենտալիզմի բոլոր վտանգներն այսօր ի հայտ են գալիս հարավսլավական դրամայի մեջ:

Գործիականություն ասելով՝ նկատի ունեմ նաև ուղղափառ Երրորդության որոշ գծեր: Ուղղափառության մեջ *Աստված* երրորդություն է, բայց ոչ այնպես, ինչպես կաթոլիկների մոտ: Ուղղափառների մոտ Սուրբ Հոգին գալիս է Հորից Որդու *միջոցով* (Per Filium[8]), իսկ կաթոլիկների մոտ Սուրբ Հոգին գալիս է Հորից *և* Որդուց (Filioque[9]), այսպիսով կանխորոշելով անձի ինքնուրույնությունն ու անկախությունը (Որդու անձի, ինչպես նաև հավատացյալի անձի համար ճանապարհ է բացում դեպի արևմտյան անհատապաշտություն և անձնականություն), իսկ ուղղափառների մոտ «միջոցով» բառը ենթադրում է գրավիչ, բայց վնասակար նվաստացում:

Հոր ամենակարող իշխանությունն անօտարելի է. *arkè– anarkos*,[10] Հայրը աստվածության աղբյուրն է: Որդին նրա ծառան է, ենթական, որն այնուհանդերձ այդ ծառայությունից («միջոցով») վեր է բարձրանում և աստվածանում: Լինելով միևնույն ժամանակ ստորադաս և աստվածակերպ՝ Որդին (հավատացյալը նրա հետ մեկտեղ) առաջնորդվում է ստորադասության և հափշտակության գրավիչ տրամաբանությամբ, որը նրան ներքին ցավեր և ուրախություններ է պարգևում՝ տիրոջ և ստրուկի դիալեկտիկայի, իսկ ավելի անձնական մակարդակում՝ արական միասեռականության դրսևորումով:

Ընդ որում՝ Որդու նման հափշտակված և հափշտակեցնող հնազանդության բերումով հավատը ընդլուսնյա[11] աշխարհի բարձունքից, ուր պլատոնիզմը Աստծուն էր տեղադրել, իջնում է՝ դառնալով *մարդկային* և *հասարակական* ծրագիր: Ռուս աստվածաբանները չեն զլացել ընդգծել ուղղափառության մարդասիրական «առավելությունները». Երրորդության և Որդու *ենթակա* դերի ճանապարհով ուղղափառությունը փառաբանում է «Մարդկություն–Աստծուն» կամ «Տիեզերք Աստծուն» (Սոլովև[12]), մինչևիսկ ասելով՝ «Երրորդությունը մեր հասարակական ծրագիրն է» (Ֆեդորով[13]):

Սակայն վաղ է ուրախանալ աստվածայինի նման մարդկայնացման համար: Գերագույն արժեքը (Աստծուն) հավասարեցնելով մարդկային արժեքին՝ չե՞նք ընկնում արդյոք նիհիլիզմի գլխավոր թակարդը, եթե ճիշտ է այն փաստը, որ

մարդկային արժեքները բնույթով ունայն են ու խեղաթյուրելի: *Մարդկայինի մեջ աստվածայինի այս գործիականացման* թակարդը կայանում է հենց իդեալի, այսինքն՝ Աստծո նվազեցման, արժեզրկման, նույնիսկ չեղարկման մեջ (Աստված ոչ այս է, ոչ այն, ոչ հաստատում, ոչ ժխտում, ոչ էլ նույնիսկ «Աստված»՝ ըստ Գրեգուար Պալամայի[14], ինչպես նաև հոգևոր իշխանության (ոչ պետական), նաև *eidos*-ի՝ գաղափարի, պատկերացման, մտքի: Ուղղափառությունը հենվում է ժխտողական աստվածաբանության վրա. Աստծո բացակայությունը այնտեղ տարրալուծվում է անճանաչելիի մեջ, Աստված չի մեռել, բայց այն վերամարմնավորվել է ուղղափառ մարդու՝ անհասանելի միկրոաստվածության և միկրոտիեզերքի ներսում:

Աստվածայինի այս տարրալուծման հակակշիռը *խորհրդազգածությունն* է: Լինելով Աստծո ծառան և ստորացնելով Աստծուն՝ մարդը ինքն է աստվածանում շնորհիվ անհասանելիի հետ անմիջական կապի: Ուղղափառ մարդը՝ Homo absconditus[15]-ը, ձևակերպման ենթակա չէ, նա անսահմանելի է: Այս խորհրդավորությունը շռայլ բերկրանքի աղբյուր է. լռության պաշտամունքը՝ հոգևոր կատարելությունը լուռ է[16], հեզության պաշտամունքը (*katanyxis*[17]), որը չի դատում, այլ ընդունում է, գիտակցության ու սրտի միավորման պաշտամունք, որ իրագործվում է *գեղեցկության հանդեպ տածած սիրով* (*philocallie*[18]*): Աստվածայինն* իրականություն է դառնում *Գթասրտության* միջոցով, օվկիանոսի լույսի պես, այն հասու է ոչ թե բանականությանը, այլ սրտին կամ զգացմունքներին. Իսահակ Սիրիացու «ամեն ինչ զգալ Աստծո մեջ»-ը վերածվում է «Աստծուն զգալու» պաշտամունքի, որը մերժում է *խոսքը* և հեռանում կաթոլիկ ու բողոքական աստվածաբանության տրամաբանությունից: Apophasis-ը[19] (անուղղակի հերքում) ժխտողական աստվածաբանության գագաթնակետն է, որը չի ընդունում Աստծո գաղափարի ձևակերպման ոչ մի սահմանափակում: Աստված չի սահմանվում ո՛չ արժեքով, ո՛չ գաղափարով, ո՛չ պատկերացմամբ. Աստված անհասանելի հաղորդակից ու հաղորդող է, անհատակ գաղտնիք ու անշոշափելի:

Ես համարձակվում եմ ասել, որ կրոնական նման փորձի ակնհայտ առավելությունների տակ թաքնված է արևմտյան մշակույթի երբևէ ճանաչած *նիհիլիզմի ամենահզոր ձևը*: «Ես այն Աստվածն եմ, որն Աստված չէ»: Բացարձակի և ոչնչի միավորում: Լիակատար իշխանության և լիակատար թշվառության ձգտում: Նման համադրությունը կարող է փորձություն դառնալ արևմտյան գոյաբանական աստվածաբանության համար: Այնորոշ պատմական և փիլիսոփայական հանգամանքներում միգուցե կկարողանա դրսևորվել որպես փրկարար հակակշիռ: Եվ հասկանալի է դառնում, թե ինչու է Հայդեգերը հանձնվել Աթոս լեռան վանականների հմայքին: Այնուամենայնիվ, ուղղափառությունը չի լուծում գոյաբանական աստվածաբանության խնդիրները, նա այն շրջանցում է՝ զրկելով գործոնն ուժից:

Մի կողմից, գործիականության ու խորհրդազգածության աքցանի մեջ առնված՝ ուղղափառությունը բավարարություն է տալիս Դոստոևսկու նիհիլիստների, մասնավորապես, Ռասկոլնիկովի պարանոյիկ ու մազոխիստական հակումներին: Ուղղափառ Երրորդության «Սիրո անշարժ շարժումը» (Մաքսիմ Խոստովանահոր[20] խոսքի համաձայն) միայն գործողությամբ կարող է դիմակայել պատմությանը. անհատական ահաբեկչությունը փշրում է այն ներհայեցումը, որի մեջ խորասուզված է «միկրոթեոսը», մինչդեռ պետության ահաբեկչությունը լրացնում է սկզբունքների, կրթության, մրցակցության պակասը:

Մյուս կողմից՝ երրորդության համակեցությունը ուղղափառության մեջ ան-

հնար է դարձնում Նիցշեի նախադասությունը. «Աստված մեռել է»: Ինչպե՞ս կարող է մեռած լինել, քանի որ «ես» *նա* եմ, և *նա* տարրալուծվել է «իմ» մեջ: «Աստված մեռել է» արտահայտությունը անշուշտ խելագարի ծրագիր է, վտանգավոր ու թերևս անհնարին: Սակայն այն գրավում է Արևմուտքը՝ XIX դարից սկսած ողջ ուժով, իսկ ավելի վաղ սողոսկելով հունական, աստվածաշնչյան ու ավետարանչական գրություններում: Այդ նախադասությունը Իդեալի մասին է, ինչպես նաև այն մտքի, որ մարդիկ կարող են իրենց սեփական Արժեքներն ունենալ: Մինչդեռ դրա տակ կարելի է հասկանալ նաև Եվրոպայի կաթոլիկ և բողոքական անցյալը: Նիցշեից մինչև Հայդեգեր՝ այս ճգնաժամը ուսումնասիրող փիլիսոփաները համարում են, որ Ինքնուրույն Սուբյեկտի լծակ է դառնում *արժեքների բնաշրջումը* և *ոչ թե արժեքների չեղարկումը*:

Բողոքականությունը ինչ-որ լուծում բերեց XVI դարի ճգնաժամի պատմական այդ շրջանում, բայց այն հիմնված էր արևմտյան ռացիոնալիզմի վրա: Հավատն առ նախասահմանվածության տարակուսանք արթնացրեց՝ բողոքական մարդուն մղելով ասկետիզմի, մեթոդական աշխատանքի, մասնագիտական հաջողությունների և գիտական որոնումների: Այս հարուստ հատկություններից կարողացավ օգտվել զարգացող կապիտալիզմը: Բողոքական էթիկան անգամ իր ամենապուրիտանական ճյուղավորումներում ի հայտ եկավ որպես անձնական ինքնավարության ձեռքբերման ձգտում և հաճախ մերժում էր խորհրդավոր երրորդության գաղափարը: Սա Իդեալին (կամ Աստծուն) ձգտելու կատարելագործումն է, ոչ երբեք նրա մահը: Բողոքականությանը փոխարինող աշխարհիկ, մասոնական կամ էզոթերիկ ուղղությունները հիմնվում են Արժեքների պահպանման գաղափարի վրա և խորշում են դրանց կործանման մտքից:

Նիցշեական ապստամբությունը այլ ընթացք է ստանում: Այն ընդհակառակը ուզում է սպառել Իդեալի աղբյուրները, նրա կամքի, ցանկության և հզորության հիմքը, դրանով տեղ բացելով Կեցության և մարդու այլ ուրվագծերի համար: «Գերմարդը», պիտի կրկնեմ, ոչ թե «հանրային կարգը խախտող չարագործ է», այլ մարդուն «հիմնա-քանդող» և այն «հեղա-շրջող», որի արդյունքում հասնում է նրա էության հնաբանական շերտերին:

Գործիականությամբ և խորհրդազգածությամբ ձևավորված ուղղափառ մարդը ոչ մի ձևով հնարավորություն չունի տեղ գտնելու ժամանակակից աշխարհը ձևավորած այս երկու մոդելների մեջ: Նրան դրա համար պակասում են բողոքականի ասկետական ինքնուրույնությունը, ժուժկալ աշխատասիրությունը, հակումն առ ընթերցանություն, քանի որ բողոքականը փրկություն է փնտրում գրության մեջ (Աստվածաշունչ) և քաղաքում (ձեռնարկատիրական ոգի): Նրան պակասում է այն փիլիսոփայական տարածությունը, որով կաթողի նիցշեականն իրեն տարանջատում է Աստծուց՝ երեք դար շարունակ հղկելով *Ego Cogito*-ն, որպեսզի դրանով զինված այլ հարաբերություններ հաստատի նախագո էության, ճանաչողության և բերկրանքի հետ: Մենք՝ ուղղափառներս, ուրիշ ենք, մենք հաղթանակող նիհիլիզմի ժառանգորդներն ենք: Դա հրաշալի ժառանգություն է, բայց նա մեզ ոտաբոբիկ է թողնում ժամանակակից պատմության առաջ, կամ դարձնում է «հանրային կարգը խախտող չարագործ»: Երկու հազար տարի շարունակ արժեքները տարրալուծվում են մեր մեջ, և մենք արտասվում ու հրճվում ենք այս ներքնայնացված ու չեղարկված գերազանցությամբ: Մենք մեզ պատմությունից դուրս ենք դրել, սա չափազանց մեծ սխրանք է: Բայց պատմությունը շարունակում է արարվել, և կոմունիստական շրջանը փակելուց հետո – այն ինչ-որ ձևով հնարավորու-

թյուն էր, քանի որ ազատեց ինքներս մեզ հարց տալու անհրաժեշտությունից, ինչի համար մենք թանկ վճարեցինք – այսօր պատմությունը մեզ կանչում է: Մեզ դա զայրացնում է, իսկ մենք ի վիճակի՞ ենք իրապես զայրանալու ինքներս մեզ վրա: Որպես նիհիլիստներ՝ մենք խաբված ենք: Այստեղից է գալիս իմ ցավը, և ես ելքը չեմ տեսնում, Բուլղարիա, իմ ցավ:

Ինձ մի՛ ծիծաղեցրեք, ինձ մի՛ վերագրեք բաներ, որ ես չեմ ասում: Ոչ: Չափազանց ուշ է ու անօգուտ ձեզ հավատափոխ անել դեպի կաթոլիկություն կամ բողոքականություն: Բայց գոնե թափանցենք այս վիթխարի իրադարձությունների հոսքի մեջ. զարգացած կապիտալիստական աշխարհում, ուր դուք այդքան ձգտում եք հայտնվել, Աստված մեռել է: Փորձենք ո՛չ նեղսրտել, ո՛չ էլ օգտվել դրանից: Ո՛չ ագահաբար նետվենք նրա խախուտ արժեքների վրա, ո՛չ էլ փորձենք դրանք անարգել: Բայց փորձենք մասնակցել դրանց վերափոխությանը:

Կարելի է սկսել շատ պարզ բաներից: Օրինակ՝ սկսել ընթերցել, գաղտնազերծել գրությունները՝ հույներին, Աստվածաշունչը, Կտակարանները, փիլիսոփաներին, գրողներին: Մեկնաբանել, զրուցել, հասկանալ: Կարելի է նաև ներհայել՝ այդպիսով մշակելով սեփական ինքնուրույնությունը, ցանկությունները, արժանապատվությունը, զբաղվել հոգեվերլուծությամբ, հոգեբուժությամբ: Կարելի է նաև փորձարկել մի քանի կրոններ. բողոքականների ասկետիզմը, կաթոլիկների բերկրանքը կամ ուրիշներ, ինչո՞ւ ոչ: Հետ վերադառնալով ուղղափառությանը՝ արձակել նրա թակարդները, ավելի կոնկրետ և արդյունավետ դարձնել նրա համայնքային պահանջները: Վերգտնել արժեքների իմաստը, դրանց մասին բարձրաձայնել, դրանք փոփոխել, դարձնել ավելի մատչելի, անդադար նորացնել… Դա երկար, շատ երկար կտևի, Բուլղարիա, իմ ցավ:

Ինձ հիշեցրեցին Թոմաս Մաննի մի հայտնի գրության մասին՝ նացիզմի օրոք աքսորյալի իր օրագիրն է՝ վերնագրված՝ «Գերմանիա, իմ ցավ»: Գրողն իր երկրի ողբերգությունն ապրում է ներսից և դրսից, և եթե նա ամոթի դրոշմով դատապարտում է հիտլերականությունը, գիտակցում է նաև, որ գերմանացիների մեծ մասը կեղծավորաբար օժանդակություն էր ցուցաբերում նրան, ում չէին վարանում կոչել «մեր եղբայր Հիտլեր»: Երրորդ Ռեյխի կոշտ բարբարոսությունը ոչ մի ընդհանուր բան չունի նախկին կոմունիստական կայսրության բարոյականության և քաղաքականության տապալման հետ: Արևմտյան ժողովրդավար երկրները իրապես գիտակցում են այդ ճգնաժամի ծավալը և ցնցված են «գործերի» ներկայիս ընթացքից, չնայած հեռվից են հետևում դրանց: Հետևաբար ոչ մի ուղիղ կապ չկա իմ անձնական գրառումների և Թոմաս Մաննի օրագրի միջև: Գուցե միայն ներսից– ու– դրսից արտահայտած իմ դիրքորոշումն է մեզ կապում և տագնապը վայրիվերումների հանդեպ, որոնց բերած չարիքը ձաղկում է մեզ այսօր, իսկ հետևանքները՝ անկանխատեսելի են:

նոյեմբեր 1994

L'Infini, N 51, Automne 1995, pp. 42– 52.

[1] Ձայն, որ մարդկային ականջը չի լսում:
[2] Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատարագի երգեցողությունը, անունը գալիս է Գրիգոր Մեծ (590– 604) Հռոմի Պապի անունից:
[3] Ժան դը Լա Բրույեր (1645– 1696) Ֆրանսիացի փիլիսոփա և բարոյախոս:
[4] Սևինյեենի Մարկիզուհի Մարի դը Ռաբյուտեն-Շանտալ (1626-1696), հայտնի է իր դստերն ուղղված նամակներով, որ 25 տարի շարունակ գրել է: Առաջին անգամ նամակները ընդհատակյա տպվել են 1725-ին:
[5] Կլոդ Սեն Սիմոն (1760-1825) ֆրանսիացի քաղաքական և տնտեսական տեսաբան փիլիսոփա, հատուկ ուղղություն է ձևավորվել՝ սենսիմոնիզմ:
[6] alcôve (ֆրանս.) հայերեն՝ անկողնախորշ, արքունիքներում պատի մեջ փորված խորշ մահճակալի համար, XVII դարում ստացել է գրական սալոնի իմաստ:
[7] *Basileus (հուն.), միապետ Հին Հունաստանում, հետագայում բյուզանդական կայսեր տիտղոս, այստեղ՝ որպես աշխարհիկ իշխանության ներկայացուցիչ:*
[8] Լատին.՝ որդու միջոցով:
[9] Լատին. և որդին:
[10] (Հուն.) անսկիզբ և անվախճան, ոչ մեկի կողմից չկառավարվող:
[11] Տեղ, որ գտնվում է Լուսնի և Երկրի միջև:
[12] Վլադիմիր Սոլովև (1853-1900) ռուս կրոնական փիլիսոփա, միստիկ:
[13] Նիկոլայ Ֆեոդորով (1829-1903) ռուս կրոնական փիլիսոփա:
[14] Գրեգուար Պալամա (1296-1359) ուղղափառ եկեղեցու սրբերից, ծնվել է Կոստանդնուպոլսում:
[15] Լատին.՝ մարդ անքննելի:
[16] *Hesychaste (հուն.)* Ուղղափառ խորհրդազգածական հոգևոր պրակտիկա, Աստծուն փնտրում է լռության և խաղաղության մեջ:
[17] (Հուն.) աստվածահաճո վիճակ, նաև՝ գորովաշար, սրտառուչ:
[18] (Հուն.) սիրել գեղեցկությունը:
[19] (Հուն.) հակառակ: Մի բանի հերքում:
[20] Մաքսիմ Խոստովանահայր (580-662) բյուզանդական վանական և աստվածաբան:

Տիգրան Ամիրյանի արխիվից

Տիգրան Ամիրյան

Թարգմանությունը՝ Միսաք Խոստիկյանի

Տիգրան Նորայրի Ամիրյան – ծնվել է 1985 թ. Երևանում: 2007-ին ավարտել է Կրթության ակադեմիայի համալսարանի բանասիրական ֆակուլտետը (դիպլոմի թեման՝ «Բանաստեղծի արձակը: Տեսական հայեցակետ. Մարինա Ցվետաևա»): 2012 թ. Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի արտասահմանյան գրականության պատմության ամբիոնում պաշտպանել է «Դավադրաբանական դետեկտիվը որպես ետարդիական գրական ժանր (Բրաուն, Ռևազով, Կրիստևա)» ատենախոսությունը: Հետաքրքրությունների շրջանակը՝ ԱՄՆ-ի և Ֆրանսիայի գրականության պատմություն, նշանագիտություն:

Հոդվածը նվիրված է ֆրանսիացի հայտնի հոգեվերլուծող և փիլիսոփա Յուլիա Կրիստևայի (ծնվ. 1941 թ.) ստեղծագործությանը: Հեղինակը ցույց է տալիս Կրիստևայի հայեցակարգի փոխակերպումները նշանագիտությունից մինչև հոգեվերլուծություն: Հետաքրքրաշարժ է քննադատական օպտիկայի և գիտական իմացության գեղարվեստական ստեղծագործության հետ միասնականանալը: Ցուցադրված են հասկացություններ, որոնք ռազմավարական կարևորություն ունեն ինչպես Կրիստևայի հոգեվերլուծությանը վերաբերող աշխատանքներում, այնպես էլ հորինվածքային տեքստերում[1]:

Յուլիա Կրիստևա. վեպ հակադարձման հեղինակ

… 2011 թվականին Երևանում չկարդացած զեկույցից

Այսօր բանասիրությամբ կամ հոգեվերլուծությամբ զբաղվողները հրաշալի գիտակցում են Յուլիա Կրիստևայի տեքստերի դերն ու նշանակությունը ժամանակակից գրականագիտության և քննադատական մտքի մեջ:

Ուրեմն, ի՞նչ անհրաժեշտություն կա կրկին «վերադառնալու» ֆրանսիացի հետազոտողի աշխատանքներին:

Պատասխանը կարող է լինել միայն շատ անձնական: Սոսկ ներքին պահանջն ու անձնական փորձը կարող են հեղինակին ստիպել այսօր Յուլիա Կրիստևայից խոսելու:

Ամեն անգամ, երբ բացում եմ Կրիստևայի գրքերը, լսում նրա դասախոսությունները, հիշողությանս խորշերից դուրս է լողում 1990-ականների սկզբին տպագրված նրա փորձագրություններից մեկի վերնագիրը՝ «Բուլղարիա, իմ ցավ»[1]: Դա Կրիստևայի ամենաանձնական տեքստերից մեկն է, ուր նրա ողջ

վերլուծական ներուժն ուղղված է մայրենի լեզվի և ակունքների վերաիմաստավորմանը, ուր միահյուսված են քննադատական միտքը, մտագործի[II] նրբագեղ ոճը և անձնական խորը ողբերգության, կորուստների և ձեռքբերումների՝ անձնական փորձի մասին մտորումները:

Ընթերցողին ակնհայտ է, որ ամենը՝ գրականությունն այսօր, ողջ լեզուն, բարբառներով, արտասանությամբ տարաբաժան մարդիկ, նաև հենց մատչելի բազմակի նույնականացումը (ազգային, կրոնական, սեռական և այլն) հանգեցնում են մի սահմանագծի, ուր կորուսյալ մայրենիի կարոտն ու ինքնանույնականացման մշտական փորձը սեփական տառապանքների մասին խոսելու ցանկություն են առաջացնում, մինչ «ինքնա»ն և «նույնականացումը» մշտապես սորում են այբուբենների ու լեզուների միջև, ինչպես ավազը՝ մատների: «Բուլղարիա, իմ ցավը»՝ որպես կենսակերպ կամ կերպակ (մոդել), կատարելապես արտահայտում է մեզ՝ որ ակունքներից կտրվելով, ամեն օր փոխում ենք մայրենի լեզուն «հոգեբանական հարմարավետության»՝ տեղ, տարածք, համընդհանուր տարածություն ձեռք բերելու (ի՞նչ տարածություն՝ «երջանկությա՞ն», «հանգստությա՞ն»... իրապես, «լեզվիդ ու ինքդ քեզ հետ» ներդաշնակության կորստի պատճառած ճաշակի բացակայության), ուր ապա հայտնվում ենք սեփական անլիարժեքության առաջ, ուրիշների, օտարների տիրույթներում, թախծի և ընկճախտի մեջ, նորից հաշիվ տալիս սեփական հոգեխառնվածքին, սեփական մարմնին ու լեզվին:

Այս կերպակը կատարելապես արտահայտում է մեր վերաբերմունքը լեզվի և աշխարհում սեփական տեղի նկատմամբ, ուր ցավով և հպարտ հաճույքով պարբերաբար իրագործում ենք Կրիստևայի ասած մայրասպանությունը: Եվ այս վերնագիրը հնչում է հենց իբրև հարցում, դիմում համայն մարդկությանը՝ բաժանված մայրական առարկայից, ներգրավված բազմալեզու տարածության մեջ, որի հակադիր կողմը լի է թախծով ու սևամաղձությամբ: Այս հարցմանը պատասխանել կարելի է՝ լռկ ներդնելով սեփական անունը, ցավի սեփական հայտանիշը մայրենի լեզվի համար: Երբ օտարալեզու բառերը ոչ թե պարզապես գոյակցում են մայրենի բառապաշարին, այլ՝ բառ առ բառ այլափոխում՝ արկածախնդիր գործարքում թողնելով մայր լեզվի ծեր մարմինը չանչող տարածին բառերի անճաշակությունը: Այդժամ «նոր աշխարհակարգին անձնատուր» են լինում. սա ոչ միայն Բուլղարիան է բնութագրում, այլև՝ Ռուսաստանը, Հայաստանը, Ուկրաինան, Վրաստանը և այլ շատ երկրներ (սխալ կլիներ կարծել, թե այդ ժողովուրդները երբևէ, ինչ-որ որոշակի պատմական պահի կորցրել են ինքնությունը), որոնք կանոնավորապես առօրյականության մեջ են կորցնում իրենց ինքնությունը ՝ գաղթելով երևակայական պաշտպանի, անխսկական, պատրանքային, կեղծված և օտար փաղոսային ուժի կողմը, ինչը հարձակողություն և ահաբեկչություն ծնող կորստի, ընկճախտի և հիասթափությունների է հանգեցնում:

Ըստ Կրիստևայի՝ ներքին ընդվզումն[2] է ելք դառնում մեզ շրջապատող, մեր անմիջական մասը դարձած օտարերկրությունից: Ընդվզողությունը և պայթուցիկությունը, որոնք կարելի է դիտարկել ոչ միայն առօրյա ընկերային, այլև գրական խոսույթում՝ վեպի մարմնում, ուր պայթուցիկությունը չի արտոնում մեկ և միակ գրանցակարգ, ձայնի, առոգանության իշխանություն: Կրիստևայի ընկալմամբ «ընդվզումը» (*révolte)* լռկ ինքնանորացման նպատակով վերադարձների շարահերթերով ձեռք բերվող մշտական թարմացում է, ազատություն: Կրիստևան պնդում է՝ ոչ թե «հեղափոխական» ընդվզման քաղաքական հասկացությունը, այլ խորանում է *révolte* բառի ստուգաբանության

Տիգրան Ամիրյան և Յուլիա Կրիստևա

մեջ և առաջարկում է նշանակություններ, ինչպիսիք են՝ «մերկացումը», «բոլոր ծածկույթների հանումը», Վերածննդի հասկացումը, մշտական նորացումը: Հենց մշտական նորացման ուղով կարելի է պահպանել «հոգեկան տարածությունը» մեր ժամանակներում, երբ սպառնալիքի[3] տակ է այդ սուրբ անձնականը: Այստեղից է հենց ներքին ցավին գոյակցող լավատեսական, արգասաբեր, «օտարականություն» հասկացությունը, ասես այստեղ-այնտեղ հանդիպող «ռուդիմենտ», որ հանգիստ չի տալիս:

Մեր ինքնությունները չպետք է դառնան ազգայնականության և բթացման գերեզմաններ, մեզ փակելով մի լեզվի տեղական տարածքում, մի ազգության, մի կրոնի, սիրո և սեքսի մասին մի պատկերացման մեջ: Հակառակը, մենք պետք է ազատության հասնենք հենց մշտական «մտորումների», մեր և մեր տեղի վերաբերյալ «կասկածների» միջոցով:

«Սա բնազանցական կազմաքանդման տարածություն է, [...] գաղափարն իսկապես եվրոպական է, այն ժամանակակից ազատության հիմքում է ներդրված: Մենք ազատ ենք, քանի դեռ փակված չենք ինքնին ուժեղ և այլ էություններին պատերազմող էությունների մեջ»[4]:

Հենց սրա համար եմ այսօր գրում Կրիստևայի մասին, կարդում Կրիստևա... Այսպիսի տեքստերի ընթերցման ծայրահեղ անհրաժեշտություն եմ տեսնում իրավիճակում, ուր հայտնվել են մեր երկրներն ու ժողովուրդները: Իրավիճակ, երբ լավ գիտենք՝ ինչպես և ուր է պետք վերադառնալ կրելու մեր սուգն ու ողբերգությունը, բայց շատ հազվադեպ ենք «վերադարձ» կատարում ինքնանորացման և ներքին ազատության նպատակով:

Հաճախ հայացքը անցյալին, կորստին այդպես էլ թողնում է մեզ մեր սգո ավերիչ շրջապտույտում ընդարմացման մեջ: Շրջվում ենք աստվածաշնչյան կերպարի հանգույն, իսկ մեր հայացքը մահաբեր է դառնում ՝ փշուր-փշուր ենք լինում:

Լսելի է ինձ տեքստի կոտորակվելը՝ ռիթմիկ, կրկնվող «Բուլղարիա, իմ ցավի», և սա հասուն փիլիսոփայի ձայնն է, իր հողին արժանի դստեր ձայնը, օտարերկրացու և իր սերնդի լավագույն ներկայացուցչի ձայնը՝ հենց ընդվզման ձայնն է: Ձայնը՝ իբրև բազմամյա պայքարի արգասիք, փործի ձայնը՝ տա-

րիներով անցած խոսույթների, կրթանքների, տեքստերի, փորձերի միջով: Եվ ուզում եմ հետևել այդ փոխ-անցումների, փոխ-հատումների միայն մի մասին: Այդ ցանկությունս հատկապես հստակորեն է ուրվագծվում հիմա, երբ անկրթությունն ու անճաշակությունը կրնկակոխ հետևում են անհետացող, կարդալու ընդունակ եզակի անձերին: Ու ոչ թե գրել եմ փորձում ` թողնելով այդ արտոնությունը և իրավունքը գրողներին, այլ բարձրաձայն կարդալ՝ ձեզ լսելի լինելու համար: Այսօր տեսնում եմ՝ թարգմանել են սկսում Ռոլան Բարտի և Ժիլ Դելյոզի աշխատությունները, միանգամայն երիտասարդ մարդիկ սկսում են հետաքրքրվել գիտելիքի ոչ միայն սահմանափակ շրջանով, որը ոմանք ամենաարդյունավետը կհամարեն... Հույս է ծագում, որ կա ելք ընդարմացումից և տեղայնությունից, և անդրադարձս Յուլիա Կրիստևայի ստեղծագործության այդ հույսի մասն է՝ լավատեսական հույսի:

«Պոետիկայի փլզումը»

Այժմ հետազոտողներին ակնհայտ պիտի լինի, որ ռուսական ձևաբան դպրոցի և Միխայիլ Բախտինի հղացքները ֆրանսիական ձևապաշտություն փոխարկելիս Կրիստևան սեփական գաղափարներին ամուր հիմք ստեղծելու անհրաժեշտ միջոցներ փնտրում էր կառուցապաշտության սահմաններից շատ անդին: Բախտինյան պոլիֆոնիայից և բազմաձայնությունից առնված հասկացություններն ստեղծեցին միջտեքստուալության հղացքը և իմաստի վերլուծման մեջ զարգացրին բազմակիության և միջխոսույթայինի տեսությունները՝ անհրաժեշտ հող դառնալով Կրիստևայի (*La Révolution du langage poétique, 1974)* և Բարտի ծրագրային գործերի համար: Ըստ որոշ հետազոտողների՝ նախորդ «կոշտ կառուցապաշտական» գործերը փակուղի տարան և հիասթափություն առաջացրին կառուցապաշտական մեթոդի նկատմամբ: Tel Quel խմբի մասնակիցները տեքստի խիստ գիտական լեզվա-նշանագիտական վերլուծությունից արագ անցան տարբեր խոսույթների համար ավելի բաց ապակառուցող վերլուծության և *արփադրվող* բանաստեղծական լեզվի խորքային որոնումների: Մասնագետների ուրիշ մասն այդ անցումային պահը բացատրում է նվազ արմատականորեն՝ գիտական մոտեցմամբ ստեղծելով անհրաժեշտ մեթոդաբանական ու եզրաբանական երկրույթ[III]: Կառուցապաշտական գաղափարների նախադրյալները տարածվեցին այլ կրթանքային և ժանրային ոլորտների հետազոտական և գեղարվեստական գործունեություն՝ բնորոշվելով որպես ետկառուցապաշտական:

Կրիստևայի արածը նշանագիտական հղացքների զարգացման փուլում այնքան էլ նշանագիտությունը չէ, որը մեկնաբանվում է այսօր որպես լեզվաբանության անցյալի ինքնուրույն և ինքնամփոփ հոսանք՝ տրամաբանության և լեզվաբանության միջև: Կարելի է ասել՝ Կրիստևան օգտվում է շրջապատող փիլիսոփաների ջանքերով՝ եվրոպական մտքի զարգացման նախորդող փուլերից միանգամայն տարբեր, նոր քննադատական դիրքի դրսևորման համար ստեղծվող նշանագիտական շարժարկից (механикой), լեզվից ու հղացքներից: Նրա ստեղծագործության մեջ զուգահեռաբար զարգանում են մի քանի գծեր: Առաջին հերթին, ռուսական ձևապաշտ դպրոցի փորձի, մասնավորապես, Բախտինի աշխատանքների փոխանցումն է կառուցապաշտություն և ֆրանսիական նշանագիտություն:

Ժամանակակից գիտնականները հաճախ մեծ կասկածով ու թերահավատու-

թյամբ են արձագանքում Կրիստևայի առաջին փորձերին՝ հագեցած մարքսիստական, անգամ մաոիստական բառապաշարով և նշանակիչների արտադրության առաջարկված կերպակներով[IV]: Բայց ֆրանսիական հետազոտողի (ինչպես նաև Ռ. Բարտի, Ա. Ժ դե Գրեյմասի) նշանագիտական աշխատանքներում որոշակի արմատականությունը (ինչից Tel Quel խումբը բավական արագ հրաժարվեց) ժխտելու կարիք չկա, քանի որ այդ փորձը հենց Կրիստևան կվերաիմաստավորի հեգնանքով: Շատ ավելի ուշ նրա վեպի հերոսուհու ձայնը կհնչեցնի. «… ոչ ոք այդպես էլ չհասկացավ ինչպես փիլիսոփայության ֆակուլտետի փայլուն ուսանողուհին՝ սկզբում տարված ճապոներենով, ապա կարճատև՝ նշանագիտությամբ, կարողացավ կերպարանափոխվել օտարականի, հետախույզ-լրագրողի…»[5]:

Միաժամանակ չարժի մոռանալ Դերիդայի միտքը, թե գաղափարների պատմաբանը կառուցապաշտությունը որպես հետազոտության առարկա սահմանել ջանալիս կբախվեր մեծ խոչընդոտի, քանի որ «կմոռանար դրա իմաստն ու այն փաստը, որ խոսքը նախևառաջ հենց հայացքի յուրահատուկ արկածի մասին, ցանկացած առարկայի հարց տալու եղանակի փոխակերպման մասին էր»[6]:

Նշանագիտական հետազոտությունների միջոցին Կրիստևայի գծած և մշակած ընթացքը ռուսական հրատարակության մեջ կոչվում էր «Պոետիկայի փլուզումը» (ինչպես 1970 թ. Փարիզում հրատարակած Դոստոևսկու պոետիկայի մասին Բախտինի գրքին նախադիր նրա տեքստի վերնագիրն է): Դա յուրօրինակ և հակառակ փոխակերպում էր արևելաեվրոպական մասի[7]:

Կանխելով հնարավոր հարցերը, թե ինչու է ասված հենց փլուզում, ուզում եմ ճշտել, որ խոսքն արարման արարքին հակադրվող պարզ փլուզում չէ՝ իբրև ընտրություն: Այստեղ փլզումը հասկացվում է որպես ենթակայության տրոհում և նախակառուցապաշտական շրջանում անշարժ, որոշակի, ամբողջական և այլն ընկալվող կառույցի հակառակ կողմն ու շարժունությունը ցույց տալու փորձ (հետագայում *ապակառուցում*[V] եզրի յուրացրած նշանակությունը):

Կրիստևան վերլուծում է գործելաեղանակների զարգացումը ռուսական ձևապաշտության մեջ և, ըստ նրա, Բախտինը պարզապես ետ-ձևապաշտ կամ՝ ձևաբան դպրոցի ժամանակի հետազոտող չէ (ֆորմալիստների խմբերի մեջ չմտած), այլ՝ տեքստի նշանագիտության հետագա մշակումներին պոլիֆոնիկ շեշտադրում տված փիլիսոփա: Նա ձևակերպում է ամենակարևորը Դոստոևսկու վերաբերյալ Բախտինի աշխատության մեջ. բախտինյան տեսությունում առաջին անգամ ի հայտ է գալիս գրի երկու հիմնարար տարբեր գոյակարգեր, վեպում ենթակայության կազմավորման երկու կամ ավելի եղանակներ: Կրիստևայի համար ռուս գրականագիտական մտքի զարգացման որոշիչ պահ է դառնում հենց Դոստոևսկու երկխոսական, երկձայն (բազմաձայն) և Տոլստոյի մենախոսական գրերի զատումը: Կրիստևայի կարծիքով՝ Բախտինի՝ ռազմավարական այդպիսի կարևոր դիրքը զատում է նրան ձևապաշտական պոետիկայից[8]: Իսկ ամենակարևորը, այդ ռազմավարությունը նոր պոետիկային հնարավորում է չփնտրել հնարքների հավաքածու, ամբողջական համընդհանրական կառուցվածքում հավաքվող նույնական դրվագներ, չզբաղվել պատմվածքի տեսությամբ, այլ հետազոտել պատմվածքները: Տեսական աշխատարանին հնարավորություն է տալիս ոչ թե նախապես համասեռ և քարացած լեզվանյութ նկատառել, այլ անվերջ բացահայտել բանաստեղծական լեզվի բազմաձևություն և բազմակիություն. «Ուրիշին» լսելու,

ցանկանալու պատճառով տրոհված ենթական ավերում է բառի՝ լեզվական միավորի նշանագիտական նույնականությունը (բառ, արտահայտություն, ասույթ)»: Բայց այն ավերում է նաև ասույթի, արտահայտության գաղափարական նույնականությունը նաև տեքստինը ամբողջությամբ, այլ կերպ ասած՝ որոշակի (ինքնին նույնական) գաղափարաբանության հիմքը»[9]: Կրիստևան նորից ձևակերպում է բախտինյան տեսության հիմնարար հասկացությունները, ինչպիսիք են՝ «բազմաձայնությունը», տեքստից հեղինակի դուրս լինելը, ոչ միարժեքությունը: Եվ այդ բոլոր հասկացություններն այս կամ այն կերպ ուղղված են «հեղինակի մասին առասպելը» փլելուն, ենթական տրոհելուն: Վերանայվում են եվրոպական քննադատության և հենց մշակույթի մեջ երկար զարգացող բոլոր պատկերացումները, հեղինակի կամ հերոսի կենտրոնական դերը, բազմադարյան ամբողջ ավանդույթը: Ենթակայի տրոհումը նրա շարժունության ճանաչումն է իր բոլոր հնարավորություններով ՝ կենտրոնից ծայրամաս և հակառակը, ամենայն կայուն գաղափարաբանությանը և կառուցվածքային կմախքներին հակադրվող, սահող, գաղթող, բազմակի ենթակայի ճանաչումն է. սա դեռևս «թագադրված անիշխանություն» չէ, բայց արդեն ժխտում և հրաժարում է իշխանական (ֆաշիական) խոսույթից և ենթակայի թելադրանքից: Դիմելով լականյան գաղափարներին՝ Կրիստևան մեթոդաբար և հետևողականորեն ավերում է վերաներկայացման հին հասկացությունը, որը նախ միմետիկ տեսության օգնությամբ մշտապես կապում էր պոետիկ լեզուն իրականությանը, ապա օգտագործում էր տեքստի վերաներկայացնող լինելը[VI] տեսության իրականապաշտական գծի զարգացման համար: Այժմ նշանագիտական վերլուծության շնորհիվ հնարավոր է դառնում հետազոտել պոետիկ լեզվի հենց խորությունը՝ ոչ թե իրականությունը կրկնօրինակող և գաղափարաբանություն արտադրող, այլ համարյա երազի պես իրականությանը հարաբերվող (հիշենք Ժակ Լականի կանխադրույթը, թե «երազը տեքստ է» և «երազը գործում է ըստ նշանակիչի օրենքի»)՝ ներառելով բազմաթիվ գաղափարախոսություններ տեքստի հարթության վրա դրանք իրար բախելու համար, որ «գլխատի»՝ թողնելով տարամետ (բայց ոչ աստիճանակարգված) ձայներ. «գրական կոչվող արարքը չի թույլատրում կատարելապես հեռու մնալ նշանակելու ընդունակությամբ օժտվածից, դրանով իսկ հնարավորում է արմատապես կտրվել լեզվից՝ որպես իմաստի կրողից, ինչպես ընդհանուր կարծիքն է այն համարում: «Գրականությունը», մեր խոսույթների նյութին ու երազներին մեկուսի հարող, և միաժամանակ մտերմորեն դրանցից կտրված, հանդիսանում է արարք դրանով իսկ, որը թույլատրում է հասկանալ լեզվի աշխատանքը և թե ինչ այն կարող է վերամշակել վաղը»[10]: Այդպիսով, հիմնվելով գրականագիտական գետնի վրա զարգացած բախտինյան պոլիֆոնիայի և տեքստից հեղինակի դուրս գտնվելու (вненаходимо сти) փիլիսոփայությանը, Յուլիա Կրիստևան մշակում է տրոհված ենթակայի սեփական միջխոսույթային ռազմավարությունը և կայուն դիրք զբաղեցնում Ռոլան Բարտ և Միշել Ֆուկո մտածողների շարքում: Հենց այդ պատճառով Կրիստևայի համար վեպը ստեղծագործության մեջ միատարրությունը կամ քննադատների փնտրելիք հեղինակային միտումը չէ, այլ՝ բազմաձայնությունը ցուցադրող իդեալական ժանր:

Այդպիսով ձևավորվում է միջտեքստայնության և «շարժուն տեքստի» հասկացությունները, որում վերլուծությունն առանձնացնում է տեքստ-երևույթն[VII] ու տեքստ-սերիչը[VIII] («մակերևույթն ու խորքը», «նշանակությամբ օժտված կառուցվածքը և նշանակող արդյունավետությունը»)[11]. այս հասկացությունների

հետ գրականության տեսությունը ցարդ շարունակում է աշխատել: Արդյունքում կրիստևյան միջտեքստայնությունն ընդունվում է ինչպես գեղարվեստական գործելակերպերում, այնպես էլ գտնում է իր անփոփոխակները (инварианты) ժամանակակիցների տեսական աշխատություններում: Ժերար Ժենետը գրեթե տասնամյակ անց կզարգացնի անդրտեքստայնության հասկացությունը, որը ներառում է մեջբերման որոշակի տեսակներ (*զերտեքստայնություն*[IX], *արքետեքստայնություն*[X], *հարատեքստայնություն*[XI], *տեքստազանցություն կամ վերտեքստայնություն*[XII] և հենց *միջտեքստայնություն*[XIII])[12]: Մայքլ Ռիֆֆատերը կառաջարկի հրաժարվել միջտեքստայնության ընթերցման-ճանաչման բացառիկ իրավունքից իբրև ահաբեկչության մի ձևից՝ նախապատվություն տալով անդրտեքստայնության երկակի հասկացմանը՝ *անհրաժեշտ և ընտրովի*[13]: Կրիստևայի բազմակիությունն ու բազմաձայնությունը, օրինակ, ակնհայտ արձագանքում է Ռոլան Բարտի *տեքստ* հասկացությանը: Եթե Կրիստևան «Պոետիկայի փլզման» մեջ օգտագործում է բարտյան «Հեղինակի մահից» (1968) ծնված *գրիչ* (*скриптор*) եզրը, ապա ինքը՝ Բարտը, «S/Z» (1970) գրքում մշակում է գրի-ընթերցման և բազմակի մեկնաբանման հասկացությունը՝ ակնհայտորեն հիմնված Կրիստևայի եզրակացությունների վրա. «Տեքստը մեկնաբանել՝ բոլորովին չի նշանակում որևէ կոնկրետ իմաստ տալ դրան (համեմատաբար օրինաչափ կամ հարաբերականորեն կամայական), բայց հակառակը՝ այն հասկանալ որպես մարմնավորված բազմակիություն»[14]: Հետագա տարիներին Կրիստևան չի դադարի իր ուսուցիչ Բարտին արժանին հատուցելուց և բազմիցս կվերադառնա նրա տեքստերին՝ արդեն որպես փիլիսոփա և հոգեվերլուծող[15]:

Հետագայում այս աշխատանքների մանրամասն ուսումնասիրության հսկայածավալ գրականություն կա, և խնդիր չեմ դրել վերլուծելու այդ տեքստերի ժողովածուն, առավել ևս, որ նման աշխատանքը կպահանջեր բոլորովին այլ ձևաչափ, քան հոդվածը կամ փորձագրությունն է: Երբ հարցնում են՝ «ավարտվե՞լ է արդյոք ետկառուցապաշտական դարաշրջանը», «ավարտվե՞լ է ետարդիականության աղմուկի ժամանակը», ամփոփելով կարելի է ասել, որ այն ամենևին էլ ժամանակաշրջան և ենթամշակույթի կամ նորաձևության հարթություն չէ, այլ՝ գործելակերպի մի ամբողջ ուսմունք: Աշխատանքի եղանակ ու գործելակերպ է, որից չենք կարող հրաժարվել, մինչ գրականությունն ինքը շարունակում է հենց իր ապակառուցողական-խուսափողական ընթացքը՝ խոսքի շարժ ստեղծելով ու նույն պահին ժխտելով… գրականություն Սադից՝ Բատայ, Մալարմեից՝ Գիյոտա, Պրուստից՝ Արտո…

Ուրիշ փորձ

Ռոլան Բարտը 1968 թ. կավարտի «Հեղինակի մահը» փորձագրությունը «Ընթերցողի ծնունդը հատուցվում է Հեղինակի մահվամբ»[16] արտահայտությամբ, որը կդառնա Արիադնեի թել այսօր հանգույցը քանդող հետազոտողների ամբողջ սերնդի համար: Կենտրոնադրող ենթակայի (սուբյեկտի) սնանկությունը, «հեղինակի մահը», «ստեղծագործություն» հասկացությունից՝ «տեքստ», նաև հեղինակից՝ պատմող/գրիչ փոխադրող միջտեքստայնության հասկացությունն իսկ հիմք են տալիս խոսելու ընթերցողի ծննդի մասին: Գրելու-ընթերցելու արարքի նշանագիտական գործընթացում ընթերցողի՝ որպես ակտիվ մասնակցի այդ ծնունդը Յուլիա Կրիստևայի տեսության լույսում երկու կարևորագույն եզրակացության է բերում: Նախ՝«ես»-ի անունից խոսելը և

գրող «ես»-ի կամ խոսող «ես»-ի ամենազորությունը զիջում է «ուրիշի» մշտական ներկայության գիտակցմանը: Մելանի Քլայնի աշխատությունների միջոցով Կրիստևան բազմիցս վերադառնում է ֆրոյդյան խոսույթին, ընդ որում՝ միանգամայն զգուշորեն սահմանազատվում է Լականի տեսությունից: Ամեն անգամ գրող «ես»-ը ակտիվ գործառույթի փուլ է մտնում այնտեղ, ուր ներկա է նաև «ուրիշը», «կողմնակին», «օտարը»՝ ի սկզբանե պարփակված իր մեջ, սեփական «ես»-ում: Այդ հոգեվերլուծական գաղափարը հիշեցնում է «ուրիշին» «ցանկանալու» պատճառով տրոհված ենթակային վերաբերող հիմնարար միտքը և տարածվում մշակույթի (տեքստի) վերլուծության մեջ և ստեղծում «Օտարականը հենց մեզնում» գիրքը (*Étrangers à nous-mêmes, 1988):* Այս գիրքը, իհարկե, շատ մտերմիկ և անձնական է Կրիստևայի համար: Օտարականությունը դիտարկվում է ոչ միայն մշակութային և հոգենշանագիտական տեքստի ոսպնյակով, այլև՝ անձնական, անմիջական փորձով: Ֆուկոյի ապրումի-փորձընկալման հասկացությունն է հիշվում՝ գրի մեջ փորձընկալումը կամ փորձարկումը, որից հետո հեղինակը ելնում է կերպարանափոխված կամ նորացած: Կրիստևայի համար հենց այդպիսի անձնական ապրում-փորձառություն է դառնում «Օտարականը հենց մեզնում» գիրքը: Դրանից բացի, Կրիստևան՝ որպես հոգեվերլուծող և փիլիսոփա, փնտրում է արդեն այն ժամանակ Եվրոպան անհանգստացնող հարցերի պատասխանները: Հեղինակը չի փորձում գաղթի համար քաղաքական արդարացում գտնել, այլ ցույց է տալիս որևէ օտարականի, գաղթականի հոգու տարածության «փխրունությունը» ոչ միայն հոգեվերլուծական տեսության դիմելով, այլև անդրադառնալով գրողների փորձին, գրականությանը:

Կրիստևայի նշանագիտական ռազմավարությունը, որի համաձայն «գրական տեքստն ընդգրկված է այլ տեքստերի բազմության միագումարի մեջ», կրկին գործող է. գիր-հակադարձում է՝ ուղղված այլ տեքստի (տեքստերի)[17], ինչը նշանակում է «գիր-հակադարձում» հասկացության տարածվելը ողջ գեղարվեստական գրականության վրա: Եթե նշանագիտությունն իր ողջ թափով ուղղված էր նշանակիչներին, ապա հոգեվերլուծական անդրադարձն «ուրիշությանը» պարզ վերադարձ չէ ֆրոյդյան հասկացություններին, այլ բախումնային խաչմերուկի վերլուծության փորձ, որտեղ «օտարականն» ընդհարվում է նշանակիչների հարթությանն ու չի գտնում անհրաժեշտ բառ/նշաններ զգացականն արտահայտելու: Կրիստևան չի մատնանշում ոմն նիրհող «ուրիշի» գտնվելու տեղը և կոնկրետ տարածքը, նա լոկ ցուցադրում է» սևամաղձությունն ու ընկճախտը «ես»-ի, որը թախծում է Քլայնի հոգեվերլուծական աշխատարանի եզրով ասած՝ կորուսյալ մայրական առարկայի համար (երբ «ուրիշն» արդեն «նիրհող» երևակայական տիրույթում չէ, այլ գործուն է տարբեր խոսույթներում): Օտարականը՝ ուրիշը՝ թափառողը՝ սևամաղձոտը… Արդեն այս աշխատության մեջ է հայտնվում սևամաղձոտի[18] տիպարը՝ մանրամասն հետազոտված «Սև արև. Ընկճախտ և սևամաղձություն» (*Soleil noir: dépression et mélancolie, 1987*) գրքում, որտեղ հոգեվերլուծական բառապաշարի օգնությամբ ընկճախտն ու մելամաղձությունն ուսումնասիրվում են ոչ որպես բուժարանային[XIV] դեպքեր, այլ՝ իբրև մշակույթի խորքային խնդիր. «Խորհրդապաշտության զրոյական մակարդակով զբաղվող նշանագիտության առաջ անխուսափելիորեն հարց է ծագում ոչ միայն սիրո, այլև դրա դալուկ արբանյակի վերաբերյալ՝ անմիջապես նկատելու, թե չկա գիր, որ սիրային չլինի, ինչպես չկա երևակայություն՝ առանց բացահայտ կամ թաքուն սևամաղձության»[19]: Հրաշալիորեն բազմիմաց հեղինակը հնարավորում է խո-

րամուխ լինել եվրոպական արվեստի և գրականության մեջ, ինչը հարստացնում է ընկճախտի ընկալման բժշկականացված ավանդույթը: Հոգեվերլուծողը, կտրվելով էդիպացված թախտից, դիմում է գրականության և արվեստի աշխարհ՝ Հոլբեյնի կտավներին, Ժերար դե Ներվալի և Մարգարիտ Դյուրասի տեքստերին: «Սև արևում» կարևոր տեղ են գրավում կանացի տխրությունը, մայրական ընկճախտը: Այսօր «կանացի հանճարի»[20] մասին եռագրության ի հայտ գալուց հետո որոշ գենդերաբաններ և մշակութաբաններ Կրիստևային հաճույքով դասում են «Սիմոն դը Բովուարից հետո» իգապաշտական շարժման սերնդին, թեպետ ֆրանսիական հետազոտողն ինքը մեծապես կասկածում է այդ շարժման արդյունավետությանը: Իր դասախոսություններում Կրիստևան չի դադարում պնդելուց՝ եթե իգապաշտներն ազատություն, իրավունքներ են ուզում, ապա դա անհնար է, թեկուզ այն պատճառով, որ ազատությունը չի լինում հավաքական, և ընդհանրապես՝ հետազոտողի տեքստերից հասկանալի է դառնում, որ նրա տեսությունը կանացի կամ կանանց կենսաբանական սեռի մասին չէ, այլ խոսույթ, նույնիսկ վերխոսույթ «կանացիի» մասին՝ որպես երևակայականի: Կրիստևայի համար իսկ կարևոր է հասկանալ հենց «կրկնելիությամբ» և «հավերժությամբ» չափվող և այդու *անժամանակյա* «կորսված առարկան» (կորուսյալ լեզուն, ինքնությունը, «մայր հողը») և «կանացի ենթակայականությունը»: Այդ հասկացությունները վերաբերում են երևակայականի ոլորտին, և «կանանց ժամանակը» վրա է հասնում այնտեղ, ուր առաջանում է այդ (ակունքների) տարածությունը, կամ՝ Պլատոնից փոխառած *քորա* հասկացությունը. «Հիշողության մեջ կանանց անվան և մասնակցության հառնումը լծորդվում է *տարածությանը*, որն ավելի հավանականորեն քան ժամանակը, *ծնում* է մարդկային ցեղը»[21]: «Կանանց ժամանակին» նպաստում է Եվրոպայի «խորհրդանշական հայտարարի» ճգնաժամը, որը, հետազոտողի կարծիքով, եզակի «խորհրդանշական» տարածություն ունի, հիմնված՝ մոնումենտալ պատմության որոշակի ժամանակակարգին: Եվրոպական մոնումենտալ պատմության նիցշեական տրոհման մեջ առաջադրվում է «համընդհանուրի» այլ տիպ՝ ճեպագրված պատմություն, ըստ երևույթին «մայրականի» պատկերացման և խորհրդանշական հայտարարի հյուսիսամերիկյան տիպին համապատասխանող. «կանացի զգայնությունը պետք է փնտրի սեփական, անդրեվրոպական ժամանակայնություն, եվրոպական անցյալի ու ներկայի, ինչպես նաև որպես հիշողության շտեմարան հասկացվող եվրոպական «համույթի» միջոցով»[22]:

Վեպերով անցնելիս...

Կրիստևան ներկառուցում է սեփական բանաստեղծագիտական աշխատաքանը գրական գործունեության մեջ և ստեղծում մի քանի վեպ: Սա արդեն 1960–70-ական թթ. զարգացող գրական տեքստի նախկին վերտեքստային հետազոտության գործունեությունը չէ, նշանագիտությունը չէ՝ ապավինող հումանիտար կրթանքներին գիտական կարգավիճակ տալու ընդունակությանը, ոչ էլ՝ Tel Quel խմբի ոգևորված աշխատանքն է: Կրիստևայի գործը տարբերվում է նաև հոգեվերլուծական աշխատություններից, և եթե անգամ «հորինման» այս հարթակում խոսվի հոգեվերլուծության մասին, կարելի է նշել գրական հյուսվածք տեսության ներմուծման երկու եղանակ: Հոգեվերլուծական արարքը շարունակվում է գեղարվեստական մակարդակում, իսկ վերլուծյալը հենց պատմողն է, կրկին զատված հեղինակից, որը նույնիսկ կենսագրությունը

ստեղծագործության հյուսվածք ներքաշելով շարունակում է հեռադիր դիրք պահել: Իսկ «կորստի», «սգի» հենց հոգեվերլուծական հղացքները և հոգեվերլուծության առարկայնության հարաբերությունների ծավալումը փոխադրվում են վեպի մարմին: Հնարավոր է Յուլիա Կրիստևայի տեքստերի այս մարմինը մնում է նվազագույն հետազոտված: Սակայն նշանակալիության առումով գրական փորձը ոչնչով չի զիջում վաղ տարիների տեսական գործերին, որի մասին նաև հենց Կրիստևան է ասում:

Մի գաղափար տեղ հասցնել ջանալիս հեղինակը չի սևեռվում ձևի վրա, որը կարևոր է՝ ոչ թե խոչընդոտ. ընդհակառակը՝ գեղարվեստական ձևը և հորինման տարածության ներուժը լոկ ընդլայնում են մտքի փոխակերպման հնարավորությունները:

Հեղինակի առաջին գեղարվեստական ստեղծագործությունը «Սամուրայներ» *(Les Samouraïs, 1990)* վեպը եղավ, որի գործողությունը կատարվում է ժամանակակից ֆրանսիական մտագործական միջավայրում՝ հենց 1960-90-ական թթ.: Այս վեպը յուրօրինակ անակնկալ եղավ նրանց, ում ծանոթ էին նրա մտագործական աշխատությունները:

Ինչո՞ւ է Կրիստևան վեպ գրում: Այս հարցի պատասխանը միանշանակ չէ արդեն այն պատճառով, որ հեղինակն ինքն է հրաժարվում մտադրությունը բացատրելուց, միանշանակ չէ նրանից, ինչը Ֆուկոն անվանում էր հերմենևտիկա՝ հակադրված գրականության հենց էությանը:

Իր առաջին վեպին վերաբերող հարցազրույցում[23] Կրիստևան վերլուծում է գեղարվեստական արձակին դիմելու իր պատճառները: Նրա կարծիքով՝ իր ստեղծած վեպը փորձ է համատեղելու ժողովրդականը (popular) մտագործականի հետ. ճգնաժամի և «ազգային ընկճախտի» պահերին անհրաժեշտ մի փորձ, երբ մարդիկ և մտագործությունն այնքան են հեռանում միմյանցից, որ երկխոսության հնարավորությունը հանգում է զրոյի: Իրականության զգացողության համար կենսագրության նույնիսկ փոքր բաժնի անհրաժեշտությունը պնդող հոգեվերլուծական դիրքը դրդում է տեքստեր ստեղծելու, ուր ինքնակենսագրությունը միասնացած է ստեղծագործության պատումային հիմքին: Բայց սա բացատրում է այդպիսի ստեղծագործությունների ստեղծման պատճառների ու մտադրությունների միայն կեսը:

Հորինվածքայինի էությունը չի կորցնում կարևորությունը Կրիստևայի համար, որի շնորհիվ է հնարավորվում ընթերցողի և հեղինակի միջև երկխոսությունը: Մտացածին կերպարները երևակայող արվեստագետի և ստացողի միջև միջնորդներ և համաձայնագրեր են: Հենց ժողովրդական վեպին դիմելով է Կրիստևան, իր իսկ բառերով ասած՝ իրագործում Մալարմեի հռչակագիրը՝ ստեղծելով լայն լսարանի համար անհրաժեշտն ու ցանկալին, ի հեճուկս հեռուստատեսության ու ԶԼՄ-ների ճնշմանը, որ հեռացնում է ընթերցողին գրականությունից և ինքն իրենից: Սա 1960-90-ականների մտագործական միջավայրին վերաբերող պատումի ստեղծման փորձ է, և միաժամանակ «հուշերի և երևակայությունների ցանցով մաղելու» շնորհիվ լեզվի «կատարսիսային» զգացական միջուկի նվաճում: Ես ոչ թե լեռ էի ուզում արարել Թոմաս Մաննի պես, այլ՝ կղզի,– ասում է Կրիստևան,– այնպիսի կղզի, ուր կարող էին կերպարները հանդիպել, կղզի՝ բաց բոլոր քամիների, հենց տեքստի դրվագների ու ընթերցողական մեկնաբանությունների համար[24]:

«Սամուրայներին» հետևեց «Ծերունին ու գայլերը» վեպը *(Le Vieil Homme et les loups, 1991)*, ուր Կրիստևան վերադառնում է իր հոր՝ իշխանությունների ոչնչացրած բուլղարացի բժշկի պատմությանը: Սարսափի ու ցավի զգացողու-

թյունից, ընկճախտից ու նոր աշխարհակարգի, Արևելքի անկման ու Արևմուտքի տափակության նկատմամբ ամբողջովին հիասթափությունից առաջացած վեպ է «Ծերունին ու գայլերը»: Կրիստևան կրկին խոսում է հենց վեպի ձևով գրելու անհրաժեշտության մասին՝ օգտագործելով փոխաբերություն, որը թույլատրում է խոսել ոչ միայն տեսական եզրակացություններից, այլև անձնական փորձից, տառապանքներից և ուրախություններից[25]:

Կրիստևայի արձակում իրականանում է «փորձառության» *(experience)* հասկացությունը: Միշել Ֆուկոյի ստեղծագործության մեջ լայնորեն ծավալված ապրումի-փորձառության, փորձառության-գրքի հղացքը յուրօրինակ իրականանում է ինչպես Ժորժ Բատայի, Ֆիլիպ Սոլերսի փորձագրության, այնպես էլ Կրիստևայի փիլիսոփայական ու հոգեվերլուծական աշխատություններում:

Կրիստևյան արձակի ևս մի յուրահատկության արմատները ֆրանսիական մտագործական գրի ավանդույթից են՝ կառուցվող ոչ միայն խելամտությամբ ու տրամաբանությամբ, այլև նրբաճաշակ լեզվով: Պատմականորեն ֆրանսիացի տեսաբանները հանգել են փորձագրայնությանը[XV] (բավական է դիմել Կրիստևայի ժամանակակիցների՝ Ռոլան Բարտի, Ֆուկոյի, Դելյոզի քիչ թե շատ ազատ փորձագրային տեքստերին): Դա գրականության ողջ կարողականությունը, բոլոր հնարավորություններն ու ունակությունները ենթադրող լիովին գիտակցված քայլ, արարք կամ շարժ է: Փորձառությունից խոսող տեսությունը պետք է գրվեր հենց այն ընթացակարգով, այն հարթության վրա, ուր փորձառության սահմաններն հասնելու հնարավորություն կա գրականության մեջ: Եվ Կրիստևան, գործունեության մեջ առավելագույնս ընդլայնելով գաղափարների տեսաբանական համալիրը, գրում է իր տեսաբանականացված (կամ պատումազանցական) վեպերը:

Կրիստևայի արձակի հիմքում ընկած երրորդ յուրահատկությունը հնչել է հենց հեղինակից «Մահ Բյուզանդիայում» *(Meurtre à Byzance, 2004)*[26] բազմաձայն վեպի լույսընծայումից հետո: Վեպի վերջին էջերում հերոսուհին ասում է, թե ճանապարհորդում է, տեղափոխվում է վեպերում (վեպի օգնությամբ), անցնում է գրականությունով: Դա ճանապարհորդություն է առ ենթակայականության, սեփական «ես»-ի սահմանները. ճամփորդություն՝ հնարավոր միայն հոգեվերլուծության կամ գրականության լեզվական հարթություններում: Կրիստևայի խոսքով՝ ամենևին էլ պատահական չէ անդրադարձը զանգվածային ժանրին, հետախուզական կառուցվածքին: Խուզարկապատումը ժանր է, ուր աշխուժությունը սկսվում է սպանությունից (մահից) հետո: Եվ քննիչը փնտրտուքի է անցնում այդ զգայազդու սահմանագծին: Խուզարկուականը գրավիչ է, այն ընթերցողին թույլ է տալիս նայել մահվանից անդին, սեփական փորձից, սեփական բարոյականությունից անդին: Չափազանց լավատեսական ժանր՝ ամենի սահմանը կարող է միայն մահը լինել: Խուզարկապատումի հորինվածքային էությունն իսկ թույլատրում է մահվան այդ տարածքը մտնել ու վերադառնալ Օրփեոսի պես՝ ելնել հուզանքի հերթաշար[XVI] ապրած:

Մահ և նորացում

«Մահը Բյուզանդիայում» բազմաձայն վեպում իրագործվում են Կրիստևայի ինչպես վաղ նշանագիտական, այնպես էլ տեսաբանական տեքստերում հեղինակի կանոնավորապես առաջադրած ժամանակակից հոգեվերլուծական և փիլիսոփայական դրույթներն ու հղացքները: Վեպի հերոս Քրեստ-Ջոնսը

պատմաբան դասախոս է Սանտա Բարբարա քաղաքում՝ «բնակության միջավայրի համընդհանրական կերպակում»: Նա տարված է վերջին բյուզանդական արքայադուստր Աննա Կոմնինայով, ում մասին գրում է իր խոհերը, հետազոտական նկատառումներն ու նոթերը: Քրեստ-Ջոնսի արարքը հուզանքի սահման և միաժամանակ հետախուզապատումի սկիզբ է դառնում՝ կրքի պոռթկումին նա սպանում է իր սիրուհուն ՝ հղի չին Ֆային, ապա՝ անհետ կորչում: Սեբաստիանը մեկնում է Փիլիպոպոլիս փնտրելու տեղն, ուր սկզբնավորվել էր իր գերդաստանը և ուր մահանում էր Բյուզանդիան: Սանտա Բարբարայում սկսվում է հետաքննություն, տեղի կոմիսար Ռիլսկուն օգնության է գալիս ֆրանսիական լրագրողուհի Ստեֆանի Դելակուրը: Հեղինակային ձայնն անվերջ միահյուսվում է խոսողներին, Քրեստ-Ջոնսի և Ստեֆանիի ներքին մենախոսություններին: Բացի այդ, առկա է ժողովրդականություն վայելող ամերիկյան դավադրաբանական խուզարկապատումի բանաձևերը մերկացնող ակնհայտորեն նմանակման հակադավադրաբանական մաս[27]՝ զուգահեռ ծավալվում է Ուքսյանի՝ հերթաշարային մարդասպանի պատմությունը, ով ոչնչացնում է գաղտնի քրեական խմբավորման բոլոր անդամներին Սանտա Բարբարայում: Արդյունքում պարզվում է՝ այդ մարդասպանը չինացի ուսանող է՝ սպանված Ֆայի եղբայրը: Վեպի գլուխները դիմադրում են հետաքննության ընթացքին և ստեղծում ոչ գծային դասավորությամբ դրվագներ, ուր հետաքննությունն իսկ և կերպարների գործունեությունը զիջում են ներքին ձայներին, հերոսների մտորումներին:

Ջանգվածային ժանրի այդ «ներքին» դիմադրությունը ցուցադրում է հերոսուհի Ստեֆանիի ձայնը. «Ես՝ Ստեֆանի Դելակուրս, գրում եմ՝ այն է՝ բնազանցական, այն է՝ հոգեբանական խուզարկապատումը, ընդ որում՝ ինձ հազիվ բնորոշ հումորով (չե՞ք նկատել), և ահա իմ առջև ընտրություն է՝ շարունակելու աղանդների գործունեությանը կապված հետաքննությանն ուղեկցող իրադարձությունները նկարագրել, կամ էլ գլխովին ընկղմվել հոգեվիճակների մեջ»[28]: Վեպը դառնում է քննարկումների առարկա, քանի որ ամբողջ պատումը կառուցվում է ինչպես մի խաղ, ուր ընթերցողն ինչ-որ պահից դադարում է զանազանել՝ ում ձայնն է հնչում՝ տեսաբան Կրիստևայի՞նը, վիպասանի՞ ձայնը, թե՞ Ստեֆանի կերպարի:

«Մահը Բյուզանդիայում» վեպի[29] արևմտյան քննադատության քննարկումների հիմնական միտումը, անշուշտ, կապված էր տեսաբանի գեղարվեստական գործունեությանը շրջվելու խնդրին: Եվ այդ քննարկումներին ինքը՝ Յուլիա Կրիստևան, աշխույժ մասնակցում էր: Վեպի լույսընծայմանը հետևեցին հեռուստատեսային ելույթներ, հարցազրույց մամուլում և գիտական զեկուցումներ[30]: Կրիստևան ներկայացնում է «Մահը Բյուզանդիայում» գործը որպես խոր անձնական «գաղտնագիր» վեպ: Նա ավելացնում է, թե ժամանակ էր պետք, մինչ կերպարները ձևավորվեին: Հեղինակը հրավիրում է ուշադրությունն իր ստեղծագործության յուրահատուկ ժամընթացին: Մինչ վեպն ընկալվում է միշտ որպես ազգային պատկերացումները վերակառուցող ժանր, Կրիստևան անդրադառնալով Պրուստի փորձին, Ֆրոյդի ու Հայդեգերի աշխատություններին, իր ստեղծագործությունը կազմակերպում է բոլորովին այլ կերպ՝ «սպասվող» գծայնությանը հակադրելով պատումի հիմքը: Երրորդ հազարամյակի սկզբին «բանաստեղծական ժամանակի» և «հավերժ պատումի» փոխարեն Կրիստևան սկսում է գործածել վաղ տեսական գործերում քննվող ժամընթացի նոր տիպ՝ անժամընթացություն (l'intemporalité): «Մահը Բյուզանդիայում» վեպում պատումի գծայնությունը լղոզելով՝ Կրիստ-

նան «կոտրում» է սովորական խուզարկուական բովանդակությունը՝ քրեականությունն ու հանցագործությունը ցույց տալով ոչ իբրև հանցագործության մասին «պատմության» սկզբին առնչվող բան, որին հետևում են կերպարները (քայլերը կանոնավորապես ետ ուղղելով՝ գտնվելով հետհայացության ինչ-որ շարժարկման ազդեցության տակ), այլ որպես գծայնությանը չենթարկվող խորապես մարդկային մի բան:

«Մաքրողը» գաղտնի կրոնական աղանդի անդամներին ոչնչացնող կերպար է՝ խորհրդանշական տարածության սահմաններն ավիրող, «բարու» և «չարի» բարոյագիտական զույգի տարբերությունը «սրբող» մի ենթակա, դա նաև «օտարականի», «օտարի» մարմնավորումն է հուզանքի պահին՝ ուրիշ մշակութային շերտի մեջ հուսահատության արդյունքում:

Ժամընթացի կայունության և բարոյագիտական «տարբերման» գծի բացակայությունը՝ ունակ կառուցելու ազգային պատկերացումի (imaginaire national) ետհայացը, անհնար է դարձնում գրի վերաներկայացումը, որի պատճառով Կրիստևայի կերպարները մշտապես ներքին շարժման մեջ են՝ նրանք տեղափոխվում են խորհրդանշական տարածություններում, ճանապարհորդում, գաղթում են:

Այդու Կրիստևայի այդ զեկույցի տեքստը Գիյոմ Քլեմանը վերնագրել է «Մահը Բյուզանդիայում» գործի հերոսուհու՝ Ստեֆանի Դելակուրի բառերով, որը վեպերը դիտարկում էր որպես ճանապարհորդություններ, տեղափոխումներ (voyager)[31] – «Why I travel by novel»[32]. ինչպես ժամանակին Կրիստևա նշանագետը և Ռոլան Բարտն էին խոսում բանաստեղծական լեզվի խորքերը «կտրել-անցնելու» (traverser) մասին:

Սեբաստիան Քրեստ-Ջոնսը մարմնավորում է դեպի անցյալ խաչակրաց արշավանքի ելած սևամաղձոտի կերպար՝ պատմության մեջ հանձինս բյուզանդական վերջին կայսրուհի Աննա Կոմնինայի իր՝ Քրեստ-Ջոնսի գերդաստանի ակունքները փնտրելիս, փնտրելիս կորուսյալ մայրական քաղաքը, սեփական ինքնությունը: Եթե Քրեստ-Ջոնսը ամերիկյան քաղաքից (համընդհանրական միջավայրից) փախուստի է դիմում «գիշերվա ծայրը», ապա Դելակուրն ընդհակառակը՝ Սանտա Բարբարա է գալիս՝ իր «կազմաքանդող» գիր-անդրադարձումն արևմտյան աշխարհ ներդնելով: Քրեստ-Ջոնսին դժվար է կոչել Կրիստևայի վեպի գլխավոր կերպար: Նա մեկն է կերպարների ձայների բազմության մեջ, որոնցից յուրաքանչյուրն «իրեն-խոսելու» իրավունք ունի: Աննա Կոմնինան՝ Սեբաստիանի սիրած պատմական անձնավորությունը, նկարագրության տարր չէ պարզապես, այլ հենց այն խոսույթային (պատմական) տարրը, որը ներկառուցվում է վեպի խուզարկուական, պատումային հենքին: Քրեստ-Ջոնսի պատմությունը «սևամաղձոտ օտարականի» փնտրումների ու դեգերումների պատմություն է. այնինչ նա Կոմնինային է փնտրում, սկզբում նամակի, իր տեքստում կերպարի վերակառուցման միջոցով[33], ապա ամենևին մեկնում է «կորուսյալ» և «սպանված» Բյուզանդիայի այն աշխարհագրական գոտին, խորհրդանշական հայտարարի տարածքը, որը «օտար միջավայրում»[34] ինքնանույնացման բարդ գործընթացում հարցերի պատասխանը կարող էր տալ: Սեբաստիանը հենց «դեգերում» է, տարածության մեջ փնտրում է կորուսյալ կետը: Ժամանակը տեղի է տալիս տարածությանը, քանի որ առարկայի, սևամաղձություն և ընկճախտ առաջացնող կորուստը որևէ մի եզակի ժամանակային շերտի առանձնաշնորհը չէ, («բուժարանական» դեպք չէ, այլ՝ բնական մի փուլ «նորմալ նյարդագարի» համար: Ջանգվածային գրում վիպական ժանրի ժամանակատարածական կառուցվածքը փոքր-ինչ այլ է՝ նույնիսկ

հակադիր կրիստևյան կերպակին: Զանգվածային խուզարկապատումի մեջ ժամանակը հանդես է գալիս որպես խորհրդանիշների ուղղաձիգ շինված համույթ, և հերոսը ընդհարվում է ժամանակայինին՝ հանելուկները «գուշակել» ջանալիս, խորհրդանիշները մեկնելով՝ «որոշակի» ժամանակատարածական «կետի» հանգելու, ուր և ենթադրվում է լուծումը, պատասխանը, կամ հոգեվերլուծական խոսվածքով՝ «հանումը»: Կրիստևան ընտրում է քրեական ժանրը, քանի որ թե՛ Խուզարկապատումը, թե՛ Սևամաղձոտը «դեգերումների» ու «խկության փնտրտուքի» մեջ են, կորուսյալ Առարկայի փնտրտուքի, բայց հորինվածքային տարածության մեջ այդ երկու ենթական արդեն հայտնվում են միանգամայն տարբեր շարժարկի մեջ, տարբեր «ընթացքներում»:

Կրիստևայի հերոսները չեն վարում իրենց գծային (ուղղաձիգ) «հետաքննությունը», գնահատումը, այլ մտնում են խաղային տարածություն, ուր կարևոր է ոչ թե «ով է սպանել», այլ «ինչու է սպանել»: Կարճ ասած՝ եթե «Դա Վինչիի կոդը» տիպի հանրահայտ խուզարկապատումը (որի յուրօրինակ պատասխան կարելի է համարել «Մահը Բյուզանդիայում»-ի ուղերձներից, հնարավոր իմաստներից մեկը) առաջարկում է պատումի «պարանոիկ» շարժարկ, ապա Կրիստևան դրան հակադրում է իր սևամաղձ/ընկճախտային կերպակը: Հնարավոր է՝ դա կապված է այն բանի հետ, որ «պարանոիկ» տեսիլքի, պարանոիկի համար նշանակալի դեր է խաղում Հայրը՝ ավելի շուտ էդիպյան, քան՝ նախաէդիպյան հայրը: Կրիստևան շեշտում է, որ «սևամաղձությունը» «մայր-դուստր» հակամարտության շրջված հետևանքն է, ուր աղջիկն ատելություն է տածում մոր հանդեպ, որը նույնացվում է հենց իր՝ դստեր հետ, դա մարդակեր ատելություն է՝ ուղղված իրեն (զզվանք ինքն իրենից, «սև մաղձն» իր մեջ Կրիստևայի մոտ կրկնվում է ինչպես «Սև արևում», այնպես էլ «Սարսափի զորությունում»), իսկ հորը Կրիստևան տալիս է միայն նախաէդիպյան երևակայական կերպարի դերը[35]: Իրեն ուղղված մարդակերությունը շրջվում է արդյունավետ հուն, քանի որ այստեղ բանը պարզապես «ինքնակերությունը» չէ. շնորհիվ հակամարտության ծավալմանը հորինվածքային տարածության մեջ, հանգում ենք «իրեն-գր»-ի վերաներկայացման եզակի ձևի, որն իրագործվել է ինչպես Ստեֆանի-պատմողի, այնպես էլ Քրեստ-Ջոնս-հեղինակի պարագայում: Վեպի հարատեքստուալ դրվագներից մեկը դիտարկելիս կտեսնենք, որ Սեբաստիանի և նրա «Աննա Կոմնինա» վեպի մասին գլուխը վերնագրված է «Սեբաստիանը կորսյալ հորը փնտրելիս», որը մեզ հերթական անգամ համոզում է գրական տեքստում Կրիստևայի տեսական հասկացությունների ներգրավվածությունը: Նման ենթավերնագրերը կարող են շփոթեցնել անփորձ ընթերցողին, քանի որ դրան հետևում է ոչ թե որոշակի «հոր», այլ գերդաստանի, Կոմնինա տանող ընտանեկան գծի փնտրտուքի պատմությունը. սա կանացի, մայրական տարածության փնտրումի պատումն է, որը չի նշանակում, սակայն, թե Կրիստևան տրվում է արդիապաշտական «խաղարկային» պատումին, ընդհակառակը՝ «երևակայական հայրը մայրն է» կառույցը Կրիստևայի դժվարին տեսաբանական փնտրումների արդյունքն է. «երևակայական հայրը մոր պես սիրելու ունակ հորը վերաբերող մտապատկերն է»,– գրում է Միգլենա Նիկոլչինան,– երևակայական հոր հղացքը «ժամանակակից հոգու պարապ երկնքի ներքո կարոտաբաղձությամբ փոխատունկ[XVII] արևելյան ուղղափառության Երրորդության մայրական աուրայից քաղված կերպարների կարգից է»[36]:

Հորը փնտրելը իրապես արքայիկ մորը փնտրելն է՝ միկենե-մինոյան նախամոր, կորուսյալ մոր, այսինքն հենց պատճառի… սևամաղձության, ցավի,

անվերջ դեգերումների թափառականների, օտարների:

Ըստ Միգլենա Նիկոլչինայի՝ մոր կորուստը Կրիստևայի համար նաև մոր սպանությունն է արևմտյան քաղաքակրթությունում. «հոգեվերլուծական մոտեցումը /.../ հասու է դարձնում այն գիտելիքը /.../, որ լեզվի մեջ դատարկությունը բացվում է որպես տարածք, ուր մայրը պարզապես մեռած չէ, այլ սպանված է»[37]: Իմաստության աստվածուհուն կլլած Զևսը սկիզբ դրեց կնոջը կլանելու ավանդույթին (Նիկոլչինայի կարծիքով՝ սրանից է Կրիստևայի «Սարսափի զորություններում» մոր «փսխելու» երևակայական պատկերը: Ֆա Չանին խեղդած Քրեստ-Ջոնսը արական գործառույթները կրկնորդող կերպար է՝ ա. կորուսյալ մորը փնտրելը, բ. լինելի մոր՝ հղի չինուհու սպանությունը): Նիկոլչինայի նկարագրած մայրասպանության հասկացությունը Կրիստևա-նշանագետի, Կրիստևա-հոգեվերլուծաբանի տեսության հիմքում է. հիմքերի ետկառուցապաշտական որոնումների այդ տեսաբանական հատանները[XVIII] փոխարկվում են գեղարվեստական գործունեության: Բազմագործառութականությունն[XIX] ի հայտ է գալիս ոչ միայն մի կերպարի առումով, այլև տարբեր անձնավորությունների երկու պատմություններում (Քրեստ-Ջոնս և Դելակուր): «Լռությո՛ւն, մայրս մահացել է» (*Silence, ma mère est morte*)՝ այսպես է կոչվում մյուս գլուխը, որում Դելակուրը Նորտրոպին գրում է իր մոր մահվան մասին: Եվ կրկին՝ գրական գործի մեջ սարսափելիի, ավերիչի և մյուս կողմից՝ գեղեցիկի, արտակեցության համատեղման տեսաբանական դիտարկումը խաղարկելու ետևում մոր «մահանալու» պատմությունն է:

«Լռությունը» (silence) նույնպես փոխատունկ տեսաբանական մշակումների տարր է «Սարսափի զորությունները» գրքից:

Պատահական չէ՝ Դելակուրի մոր անունը համընկնում եվրոպական կանացի գրի սկզբնավորողներից մեկի՝ Քրիստինա Պիզացու անվանը: Իհարկե, կարելի է բավարարվել՝ նշելով, թե տառացիորեն բոլոր ժամանակակից գրող իգապաշտները Քրիստինա Պիզացուն ճանաչում են որպես մշակույթի պատմության հեղինակավոր տիպարներից մեկը, քանի որ նա համարվում է Եվրոպայի առաջին կին գրողը: Սակայն, հավանաբար, Կրիստևայի հղման կարևորությունը Քրիստինա Պիզացուն կապված է ոչ պարզապես «Կանացի քաղաքի մասին քննախոսությունների» հեղինակի տիպարին: Պատումի կիզակետի տեղափոխումը քաղաքի մի տարատեսակից (Փարիզ) մյուսը (Սանտա Բարբարա), միջնադարյան Փիլիպոպոլիս բերող «յուրային», «մայրական» քաղաք-տարածության որոնումը «սևամաղձների դեգերումներ» են իդեալական, հարմարավետ «կանացի քաղաք», մայրական քաղաք փնտրելիս: Ընդսմին, չարժե մոռանալ, որ Քրիստինա Պիզացու «Ասքը կանանց քաղաքի մասին» տարածության առկա արական պատկերման դեմ «ընդվզման» միջնադարյան մի փորձ է. ուստի «կանացի քաղաքը» տեղ չէ, այլ՝ նշանակությունների բույլ, տեսողական սևեռում, «կանացի» դիտակետ, «մայրական տարածության» մայրական գիր[38]:

Կրիստևան՝ երեկ-այսօր-վաղը

Ըստ Կրիստևայի՝ հոգեվերլուծությունն ու գրականությունը եզակի փորձ են, որը թույլատրում է ենթակային հայացքը սեփական տարածությունից անդին նետել, հնարավորություն է գտնվելու սահմանային փորձառության մեջ: Բազմահատոր վեպերից հակիրճ sms- հաղորդագրության վերածված, ամենայն այլափոխումների ենթարկվող գրականությունը քննադատության համար

հետզհետե դառնում է դժվար մատչելի:
Գրականության անվերջ փոխակերպվելու ունակությունը քննադատական միտքը հանգեցնում է փակուղիների: Կրիստևայի համար էլ ելքը գրականության մասին խոսելու փոխարեն գրականության *հետ* խոսելն է: Հենց հորինվածքային տարածության ընձեռած փորձառությամբ[39] է միայն քննադատական միտքը դառնում հնարավոր ու արդյունավետ: Կրիստևան վեպ-փորձի, վեպ-հակադարձման (ռեպլիկայի) հեղինակ է, նոր տարասեռտ[XX] ժանրի հեղինակ[40]:
Նա ցուցադրում է՝ ինչպես կարելի է անձնական ընդվզում անել գեղարվեստական ստեղծագործության միջոցով՝ հորինվածքային տարածությունում: Սեփական փորձի սահմաններն անցնել նորանալու համար: Կրիստևյան փորձառությունը սահմանային վիճակի փորձառությունն է, խաչմերուկ է, ուր տարբեր խոսույթներ, ձայներ հանդիպում են իրենց ինքնությունները, փորձը փոխանակելու:
Ենթակաների փոխազդեցությունների ճգնաժամը երկխոսությունների անհնարության՝ մեկուսականության ճգնաժամն է, կամ տափակացումը, ճղճիմացումն է՝ ներփակման հետևանքով: Այս ամեն հիմնախնդիրները հեռացվում են ներքին դժվար աշխատանքով, որը տեսնում ենք Յուլիա Կրիստևայի թե՛ իբրև նշանագետի և գրականության տեսաբանի, թե՛ որպես հոգեվերլուծողի ու վեպերի հեղինակի ռազմավարություններում:

Հեղինակի ծանոթագրություններ

[1] **Kristeva J. Bulgarie, ma souffrance. // *L'Infini*, N51, Automne 1995, էջ 42-52.** Կրիստևայի «Բուլղարիա, իմ ցավ» գրության թարգմանությունը հրապարակել է «Ինքնագիր» գրական հանդեսը 2016-ի հունվարի 19-ին:
[2] Տես, օրինակ՝ հարցազրույցը «Юлия Кристева: изоляция, идентичность, опасность, культура…» //Вестник Европы №15, 2005: http://magazines.russ.ru/vestnik/2005/15/kri26.html
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Кристева Ю. Смерть в Византии. М.: АСТ, 2007. стр. 126.
[6] Деррида Ж. Письмо и различие. М., 2007. стр. 11.
[7] Չնայած այդ մշակութային վերա-փոխակերպող թարգմանությունից հետո առաջանում են հակաճառություններ և մեկնաբանություններ 1970-ականներին Կրիստևայի՝ մոսկովյան-տարտուական նշանագիտական գաղափարները ֆրանսիական կառուցապաշտության ոչ ճշգրիտ և ոչ պատշաճ փոխադրումների վերաբերյալ (տե՛ս, օրինակ՝ Ландольт Э. Один невозможный диалог вокруг семиотики: Юлия Кристева – Юрий Лотман//Новое литературное обозрение № 109 (3, 2011). стр. 135-150), այնուամենայնիվ Յուլիա Կրիստևան մշակում էր բացառապես արդյունավետ ռազմավարություն, որը «չունենալով անմիջական աշակերտներ և հետևորդներ», դարձավ մինչև առօրյականություն ձգվող մշակութային և գիտական ամբողջ դարաշրջանի հիմք: Ժամանակին Բարտի և Տոդորովի առաջարկած այդ «դաժան» կառուցապաշտության ետկառուցապաշտական մերժումը վերջակետ չդրեց Կրիստևայի մեթոդաբանական փնտրումներին, այլ հնարավորություն տվեց ընդարձակելու վերլուծության կրթական դաշտը, ընդլայնելու սեփական գիրը այս կամ այն հու-

մանիտար գիտությունների սահմաններից դուրս: Խնդիր չունեմ Կրիստևա-նշանագետի նկատմամբ կազմակերպելու հերթական դատավարություն, ինչն այդքան սիրում են ժամանակակից շատ մասնագետներ՝ նշելով նրա կառուցապաշտական և ետկառուցապաշտական աշխատանքների միջև սահմանը (կարգին չկողմնորոշված հենց ետկառուցապաշտություն հասկացության նկատմամբ), ցույց տալով «ուրիշ» լեզու փնտրելը, փակուղի տանող հակվածությունը «պատրանքային» մարքսիզմին և այլն: Հակառակը՝ նման վերապահումներին կառարկեի, ելնելով արդեն նրանից, որ Կրիստևան Կրիստևա չէր լինի, եթե չփոխեր սեփական «տարածքները»՝ չփոխելով շեշտադրումներն ու ձայնը՝ դառնալով «միգրացիոն» տեսության հեղինակը: Իսկ «կողմնափոխման» մեղադրանքը մտքի «ծագումնաբանությանը» հետևելու անընդունակ, մեկուսչական թակարդն ընկած հենց սովետական քննադատության թերզարգացման ցուցանիշ է, որի դեմ արդեն տասնամյակից երկար պայքարում է ֆրանսիացի հետազոտողը: Կրիստևային մեղադրել արմատական հայացքների կամ մի գիտակարգի ոլորտից մյուսին կտրուկ անցնելու մեջ՝ կնշանակի չտեսնել հենց տարբեր վերկրթանքային ոլորտներ փոխարկվող հիմնարար միտքը, որը տեղափոխում է վերժանրից ժանր (գրականություն)՝ պահպանելով «փորձառության» գիծը, ինչին կանդրադառնանք հետագայում: Նշված հոդվածում Էմանուել Լանդոլտը թեպետ ցուցադրում է, որ Յուրի Լոտմանի և Կրիստևայի գաղափարները չի կարելի հանգեցնել միմյանց, ֆրանսիական նշանագիտության և մոսկովյան-տարտուրյանի տարամիտությունը, մի դեպքում քաղաքական խոսույթների ներգրավումն ու դրանց լրիվ անտեսումը մյուսում հօգուտ «մշակույթի պոետիկայի» և, վերջապես, «տեքստի» գրեթե հակադիր ըմբռնումը, հետազոտողը ճիշտ է նկատում փիլիսոփայական կամ «փիլիսոփայա-նշանագիտական նախագծի» ստեղծման փորձերում կրիստևյան տեսության բաց լինելը դարաշրջանի (մարքսիզմ, ֆրոյդիզմ, հոգեվերլուծություն) մտավոր հոսանքներին:

[8] Деррида Ж. Письмо и различие. М., 2007. стр. 11.

[9] Նույն տեղում, էջ 20:

[10] Кристева Ю. Избранные труды, стр. 33.

[11] Նույն տեղում, էջ 295. Այս հասկացությունները բաշխում են նշանագիտական գործընթացները երկու մակարդակի կամ երկու փուլի. ներքին, խորքային, նախաէդիպային, նշանային արտադրության մակարդակի՝ տեքստ-սերիչը՝ հետագայում կծավալվի Կրիստևայի աշխատանքներում, ուր կանդրադառնա հոգեվերլուծական փորձին՝ հոգե-սոմայի հարցերին:

[12] Տե՛ս՝ Genette G. Palimpsestes, La littérature au second degré, 1982:

[13] Տե՛ս՝ Riffaterre M. La production du texte, 1979:

[14] Барт Р. S/Z. M, 2001. стр. 33.

[15] Տե՛ս, օրինակ, ելույթը Ռոլան Բարտի կենտրոնում 2010 թ. Kristeva J. Comment parler à la literature:http://kristeva.fr/comment– parler.html կամ զեկույցի տեքստը «La voix de Barthes», 2008: http://kristeva.fr/barthes.html

[16] Барт Р. Избранные работы: Семиотика. Поэтика. М., 1994. стр. 391.

[17] Кристева Ю. К Семиологии параграмм // Французская семиотика: От структурализма к постструктурализму. М., 2000. стр. 490.

[18] Kristeva J. *Étrangers à nous–mêmes.* P.: Gallimard, 2004. pp. 21-22.

[19] Кристева Ю. Черное солнце: Депрессия и меланхолия. М., 2010. стр. 12.
[20] Kristeva J. *Le Génie feminine*: tome I, *Hannah Arendt*, 1999; tome II, *Mélanie Klein*, 2000; tome III, *Colette*, 2002. Folio «Essai ».
[21] Кристева Ю. Время женщин //Гендерная теория и искусство. Антология: 1970-2000. М.: 2005, стр. 125.
[22] Նույն տեղում, էջ 128:
[23] On The Samurai – Guberman, Ross Mitchell. ed. Julia Kristeva Interviews. New York: Columbia University Press, 1996: https://www.msu.edu/user/chrenkal/980/SAMURAI.HTM
[24] Նույն տեղում:
[25] https://www.msu.edu/user/chrenkal/980/OLDMAN.HTM
[26] Վեպն ընծայվեց ֆրանսերենով, Fayard հրատարակչության կողմից, 2004 թ.: Ռուսերենով տես՝ Кристева Ю. Смерть в Византии. М.: АСТ, 2007.
[27] Չնայած Կրիստևայի 1970-ականների գործերն այժմ առարկա կամ կառուցապաշտության ու ետկառուցապաշտության ջրբաժանը հասկանալուն են ծառայում և կամ քննարկվում են իբրև անցյալի թողարկումներ՝ «1968-ի մայիսի» ազդեցությամբ առաջապահ ուղղվածության տեքստեր. չնայած ամենին այդ տարիներին մշակված նշանագիտական աշխատարանը լիովին կիրառելի է Կրիստևայի ժամանակակից գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ և միանգամայն արդյունավետ է նրա վեպերը վերլուծելիս, հատկապես երբ պետք է ցուցադրել վեպի հյուսվածքի կազմակերպման եղանակը, ավելի ստույգ՝ բազմաձայն վեպի «կառուցվածքը»՝ «տրոհված ենթակայի» հասկացության, միջտեքստուալության, բազմաձայնության և նմանակման: Մենք արդեն փորձել ենք կիրառել Կրիստևայի վաղ նշանագիտական աշխատարանը նրա ժամանակակից վեպերի նկատմամբ: Տե՛ս՝ Амирян Т.Н. Кристева и Кристева: опыт метадискурсивной конспирологии//Литература XX века: итоги и перспективы изучения. Материалы Восьмых Андреевских чтений/Под ред. Н.Т. Пахсарьян. М.: 2010. стр. 317-340.
[28] *Кристева Ю.* «Смерть в Византии», стр. 108.
[29] L'Histoire հանդեսում մեծ հոդված էր նվիրված Կրիստևայի վեպին, ուր հոդվածի հեղինակը համեմատում է Կրիստևայի «վերաբնակեցման» կենսագրական մանրամասները վեպի նյութի հետ (*Dupont–Monod C.* Julia Kristeva: c'est Byzance !: http://www.histoire.presse.fr/content/2_articles/article?id=865): Պիեռ-Լուի Ֆորտի «Լեզվի և ինքնության խաչմերուկում. Յուլիա Կրիստևայի երկլեզվությունը» 2008 թ. հոդվածը Կրիստևայի կենսագրության նկատմամբ նույն շեշտադրումն ունի (*Fort P.–L.* At the Crossroads of language and identity: Julia Kristeva's bilingualism (Université Paris 7– Denis Diderot) http://langlab.uta.edu/cultural_constructions/200705/html/fort.htm): Քանի որ վեպում Բուլղարիան պատմական ու մշակութային տոպոս է և նկարագրական մարմին՝ հեղինակի նշանագրային խաղում, վեպն անմասն չմնաց բուլղարական քննադատությունից (см., например, Ralitsa Mihailova–Frison–Roche «Une lecture du roman de Julia Kristeva «Meurtre à Byzance»http://www.bulgaria– france.net/im-cult/rajk.html):
[30] Տե՛ս, օրինակ՝ Maison Française d'Oxford կայքում 2006 թ. մարտի 6-ին Յուլիա Կրիստևայի «Սահը Բյուզանդիայում» զեկույցի մանրամասն հաշվետվությունը Université de Paris VII, կամ նոր

վեպի ընծայման մասին հարցազրույցը հեղինակի անձնական կայքում՝ http://www.kristeva.fr/meurtreabyzance.html.

[31] *Kristeva J. Meurtre à Byzance.* P.: Fayard, 2004. p. 422. Այստեղ նշում եմ բնագրի լեզվով հրատարակության էջը, քանի որ, ի տարբերություն ռուսական թարգմանության, նախնական ֆրանսիական տարբերակում ավելի ակնհայտ է վեպի «տեղափոխման» և «հատման» նշանակությունը:

[32] http://www.mfo.ac.uk/fr/system/files/images/CR_KRISTEVA_fr.pdf (30.10.2010):

[33] Ներկայացուցչականության հենց այսպիսի ներքին կերպակի ընտրությունը՝ ինչպիսին է գրող լինելը (Քրիստ-Ջոնսը վեպ է գրում Աննայի մասին, գրում է իր օրագիրը, որը հետագայում կարդում, ապակոդավորում է Դելակուրը) պատահական չէր և կրկին հղում է Կրիստևայի տեսական դիրքերին: Տե՛ս Միգլենա Նիկոլչինայի աշխատանքը՝ «…տեսական մոտեցումները /…/ ծավալվում են գեղարվեստական ստեղծագործության ոլորտում, ինչը ցուցադրում է խոսող էակի կայացումն ու փլուզումը: /…/ դրանց անհրաժեշտ է անավարտ, տրոհված և կոտրակված, բազմակի և շարժուն «ենթակա», որը Կրիստևան թեմատիկացնում է որպես ենթական-գործընթացում, իսկ այդպիսի ենթակայի լավագույն օրինակը տալիս է արվեստագետի աշխատանքը»: *Николчина М.* Значение и матереубийство. Традиция матерей в свете Юлии Кристевой. – М.: Идея-Пресс, 2003. стр. 16:

[34] «Ապա նրա ուղին տանում է մինչ Փիլիպոպոլիս, ուր հաստատվել էր Էբրարը, հանդիպել էր Միլիցային և Քրեստերի տոհմը սկզբնավորել, որը կրնդհատվի Սեբաստիանի վրա՝ գաղթի մասին իր հայեցողական դրույթներով և Աննայի մասին վեպով»: *Кристева Ю.* Смерть в Византии. стр. 243:

[35] *Кристева Ю.* Черное солнце: Депрессия и меланхолия. стр. 37.

[36] *Николчина М.* Значение и матереубийство… стр. 88.

[37] Նույն տեղում, էջ 16:

[38] Ժողովրդականություն վայելող «Դա Վինչիի» տիպի ժամանակակից խուզարկապատումը միշտ ցուցադրում է «ճշմարտության որոնումները», հերոսի ձգտումը՝ կոդազերծելու անցյալի գաղտնիքը, բայց այդ կոդերը հանրաճանաչ են, նրանք չեն պատկանում ենթակային, ուրեմն պարփակված են ժամանակակից հանրահայտ պատումներում: Կրիստևայի մոտ հակառակն է՝ հերոսը չի հետապնդում կառուցանելու ընդունակ ճշմարտությունը, նա մոռացված (իսկ խուզարկապատման պարագայում՝ թաքցված և անհայտ) խորհրդանշական տարածության կորուսյալ նշանակությունների «սևամաղձոտ» փնտրտուքների մեջ է: Եթե կրիստևյան եզրաբանության մեջ հակադրենք «փնտրումների» այդ տիպերը, ապա այսօր ժողովրդականություն վայելող խուզարկապատումը կարելի է դասել սարսափի փաղոսացված ոլորտին, որտեղ կորսված է մայրական տարածությունը և սուբյեկտին գործընթացում ծնելու ընդունակությունը՝ ինչպես դա իրագործված է «Մահը Բյուզանդիայում»: Վեպը դառնում է ժամանակակից զանգվածային գրականության հակադարձում և հակազդեցություն ինչպես ձևի, բազմաձայն կազմակերպման, այնպես էլ երկու քաղաքների, տարածքների և երկու տիպի ժամանակների (ամերիկյան և եվրոպական) հակադրությունների առումով: Եթե բրաունյան տիպի ժողովրդական վեպում կատարվում է շրջագայություն դեպի պատմություն կամ դեպի մշակույթ (օրինակ՝ Փարիզի ծանոթ, լեգենդար տեղերը), ասես զբոսաշրջիկ-

ների համար ուղեցույց է կազմվում՝ նկատի ունենալով ժանրը (վեպը)՝ փոքր-ինչ միստիֆիկացված, ապա կրիստևյան հակադարձումն ընտրում է ուրիշ «ճանապարհ դեպի պատմություն»՝ հակադրելով ոչ թե «հավաստիությունը», այլ՝ կերպարների ներքին փորձառության միջոցով ոչ գծային պատկերումը: Մինչ ապոկալիպտիկ առասպելը ծավալվում է Փարիզում, Լուվրում, որտեղ փնտրվում են գաղտնիքներ, կոդեր՝ գաղտնագրված այս կամ այն արտադրանքում, ապա կրիստևյան խոսույթը հանգեցնում է «նշանային կենտրոնների» պայթյունի կամ՝ ավելի շուտ՝ սիմուլյակրի. վեպի վերջում Ստեֆանի Դելակուրը Լուվրում կատարված ահաբեկչական ակտի ականատեսն է դառնում: Բայց պայթյունից հետո ընթերցողը տեսնում է, որ երկխոսության մեջ (հեռախոսազրույցում) Ռիլսկի Ստեֆանին կոմիսարին ասում է քրեական վեպի ինչ-որ «լավատեսական» փորձի մասին և որ «Լուվրը երբեք չի կործանվի, քանի որ Բյուզանդիայում ենք» («Մահը Բյուզանդիայում», էջ 350):

[39] *Kristeva J.* Comment parler à la literatture.

[40] Բելգիացի հետազոտող Աննելին Մասշլեյնը Կրիստևային հիշատակում է ժամանակակից այն հեղինակների թվում, որոնք ստեղծում են «տարասեռտային» ժանր՝ որպես հոգեվերլուծական փնտրումների նոր միջոց: Կրիստևայի ինքնակենսագրական խուզարկապատումները, ինչպես Ժ. Բ. Պոնտալիսի, Դ. Անզյեի, Ք. Բոլլասի, Ժ. Արպմանի և այլոց ստեղծագործությունը կառուցվում են միաժամանակ հոգեվերլուծական տեսությունների առարկայության հարաբերությունների և փորձարարական հորինվածքային տարածության դաշտում: Այսպես, Աննելին Մասշլեյնը անուն է տալիս «հորինվածքակերպ» (*фикционоидного*) ժանրի առաջացման հետ հորինվածքային տարածության մեջ հոգեվերլուծական տեսաբանական շարժարկի ամբողջացման նմանատիպ փորձերին, փոխառնելով գերմանուհի հետազոտող Մարի-Լոր Ռիանի եզրը: Մյուս կողմից՝ բոլոր այս փորձերը վերաբերում են ինքնահորինվածքային տեքստի ավանդույթին, որը սերում է Սերժա Դուբրովսկուց կառուցապաշտության վերելքի պահին: Մասշլեյնի համար ժանրի, վեպի և հոգեվերլուծական տեսությունների ճգնաժամին երկու հեղինակներ՝ Քրիստոֆեր Բոլլասը և Դիդյե Անզյեն հանդիսանում են ինքնահորինվածքային ժանրի վառ ներկայացուցիչներ: Կրիստևայի վեպը, կարծես, անբաժանելի է նրա ստեղծագործական կենսագրությունից, նույն կերպ կարելի է վերաբերվել նմանատիպ ինքնահորինվածքային փորձարարություններին գեղարվեստական խոսքի տիրույթում: Անդրադարձը ճգնաժամ ապրող «պատմական» խոսույթին, քրեական պատումին, այդ երկու գեղարվեստական հարթությունները ընդհարելը հոգեվերլուծական և նշանագիտական խոսույթների հետ ժանրերի «տարասեռտացում» է ինչպես խուզարկային կառուցվածքի, պատմական գրի, այնպես էլ հոգեվերլուծական «քլայնյան» առարկայության խոսույթի պահպանման և փոխանցման համար, այսինքն՝ այն ամենի, որ ժամանակակից փուլում կանոնավորապես ժողովրդական/զանգվածային ժանրերի սահմաններում հանգում է փակուղիների: Տե՛ս՝ *Masschelein A.* Psychoanalysts finding form: (auto)fictional experiments in contemporary psychoanalysis // RELIEF (*Revue électronique de littérature français*). – Igitur, Utrecht Publishing & Archiving Services, 2010. – Vol. 4, №1 (2010): Littérature et psychanalyse. – pp. 123-144.

Թարգմանչի ծանոթագրություններ

Նմանատիպ ծանոթագրություններով առաջարկված են որոշ եզրերի թարգմանական տարբերակներ, որոնց պատճառած անհարմարությունը, այլ լեզուներով այդ եզրերին վարժված ընթերցողին, թերևս, գոնե մասամբ արդարացվի հայերենում դրանք մտածելու հրավերով:

[I] *фикциональных текстах – հորինվածքային տեքստ*

[II] интеллектуал – մտագործ

[III] ландшафт – երկրույթ

[IV] моделями – կերպակներով

[V] деконструкция – ապակառուցում

կոնստրուկտիվիզմը առաջարկում ենք թարգմանել *կառուցելապաշտություն* ի տարբերություն*կառու(յ)ցապաշտության*, որը ներկայացված է որպես ստրուկտուրալիզմի համարժեք:

[VI] репрезентационизм – վերաներկայացնող լինելը (վերաներկայացուցչականություն)

[VII] фенотекст – տեքստ-երևույթ

[VIII] генотекст – տեքստ-սերիչ

[IX] гипертекстуальность – գերտեքստուալություն

[X] архитекстуальность – արքետեքստուալություն

[XI] паратекстуальность – հարատեքստուալություն

[XII] метатекстуальность – վերտեքստուալություն

[XIII] интертекстуальность – միջտեքստուալություն

[XIV] клинический – բուժարանային

[XV] эссеистичности – փորձագրայնության

[XVI] серия аффектов – հուզանքների հերթաշար

[XVII] трансплантированный – փոխատունկ

[XVIII] блоки – հատաններ

[XIX] полифункциональность – բազմագործառութականություն

[XX] гибридного – տարասերտայինի

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Քրիստոֆեր Ադամյան

Թարգմանությունը՝ Աննա Դավթյանի

Գրող, թարգմանիչ, կինոռեժիսոր (Christopher Atamian), ում աշխատանքները ցուցադրվել են միջազգային հարթակներում, հրապարակվել The Huffington Post, The New York Times, Book Review և այլ պարբերականներում: Նիկողոս Սարաֆյանի մասին պատմող նրա տեսաֆիլմն ընդգրկվել է 2009-ի Վենետիկի արվեստի բիենալեում, իսկ Սարաֆյանի «Վենսենի անտառը» երկի անգլերեն թարգմանության համար արժանացել է Գոհար և Մինաս Թոլոլյան գրական մրցանակին (2013 թ.): Հեղինակել է մեկ վեպ՝ «Խոսելով ֆրանսերեն»: OBIE Award-ի մրցանակակիր «Զախորդություններ դրախտում» պիեսի պրոդյուսերն է, աշխատանք է տարել նաև «Սիրելի Արմենի» թողարկման վրա – www.dearармen.com: Հարվարդի համալսարանի շրջանավարտ է:

Սուրբ բանաստեղծություններ

«Լուսահոգի հայրս՝ Ժորժ Ադամյանը, գրող էր ու լրագրող և հեռացել էր այնպիսի հայկական գետտոյից, ինչպիսին Բեյրութն էր: Հեռացել էր, որովհետև ընտանիքը պահելու համար աշխատանք էր պետք, նաև լեզվական հարցեր ուներ: Արևմտահայերենը նրա առաջին լեզուն էր, իսկ անգլերենն այդպես էլ կարգին չսովորեց, որ վարժ գրել կարողանար (չնայած խոսում էր նաև ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն, քրդերեն ու արևելահայերեն) – և, ինչ խոսք, կլացեր, ինձ թվում է, եթե գործս Հայաստանում հրապարակված տեսներ: Բայց, արի ու տես, որ գործս նրան լացել կստիպեր միայն այն պարզ պատճառով, որ կվրդովեր նրան…»:

Սուրբ

Փեթի Սմիթին

Սուրբ է գետինը, որ քայլում ես վրայով:

Սուրբ են Երկիրն ու երկինքը, սուրբ է ջուրը, որ խմում ես, սուրբ է օդը, որ շնչում ես

Սուրբ են բանաստեղծը, երգիչը ու պատկերներ արարողը

Սուրբ են Փեթին, Ռոբերտը, Սիլվիան ու Ալենը

Սուրբ է գիշերը, սուրբ է ցերեկը, սուրբ է զեփյուռը

Սուրբ են իմ վախն ու իմ թափը

Սուրբ է ծաղրը հոգեհան

Որ քայլում է դանդաղ կոնքերի շորորով ու բերանի մեղկ ծամածռությամբ

Սուրբ է մորս համբույրը այտիս, սուրբ են աչքերը նրա, մաշկը նրա, ծիծաղը նրա սուրբ է

Սուրբ է չերոկիների, իրոքեզների, չաքթաների ու սիուների հողը

Սուրբ են կորսված տասներկու վիլայեթները մեր՝ Սուրբ Վանը, Սուրբ Էրզրումը, Սուրբ Դիարբեքիրը, Սուրբ Մուշը, Սուրբ Ադանան

Սուրբ է քաղաքը Նյու Յորք, Փարիզը, Կոստանդնուպոլիսը

Սուրբ են Լոնդոնն ու Բեյրութը, Սուրբ Սոհոն, Սուրբ Թրայբեքան ու Քոբլ Հիլը

Սուրբ Մեքքան, Սուրբ Գանգեսը, Սուրբ Էջմիածինն ու Երուսաղեմը

Սուրբ է Վաշինգտոն Հայթսը, որ մեր ազատության ճամփաներն է հսկում

Սուրբ են միլիոնավոր գեյ կլիրները, որ բերան ու ծակ են ճեղքում ամեն օր

Սուրբ է խրածս առաջին տղան, ձեռնածս առաջին կուրծքը, ծծածս հեշտոցը առաջին

Սուրբ է նիհար շեկ տղան, որ առաջին անգամ շեքս մխրճվեց ու ներսս քանդեց շորե տիկնիկի պես սուրբ

Սուրբ են կոնքերը, որ դոփում էին վրաս, սուրբ ձվան պարկը՝ օդում ծափծափող, սուրբ է բերանը, որ հանգեցնում էր Քրիստոսի զոհաբերության

Սուրբ են մազերը, որ բացում-թաքցնում էին եղնաչյա չարը, գեղեցիկն աստվածատես

Սուրբ է տաք սերմը, որ ցայտում էր ծակին՝ ջուր ու օդ ժայթքող

Սուրբ է իմ խոռոչն ու սուրբ է քոնը

Սուրբ են աչքերդ, որ իմ աչքերում համտես են անում արտացոլանքդ

Սուրբ Ռումին, Սուրբ Շեքսպիրը, Սուրբ Պրուստը, Սուրբ Ուայլդն ու Սուրբ Ինտրան

Սուրբ ռուբայաթները, Սուրբ Աստվածաշունչը, Սուրբ Ղուրանը, Սուրբ Թորան, Սուրբ Կամասուտրան

Սուրբ կրկնակի խրոցին, սուրբ մերաքունը, սուրբ ձիաչափ կոթը ու սուրբ ծծերը, որ կաթ են ժայթքում սուրբ խեռ սուրբ խեռ սուրբ խեռ

Սուրբ է ասեղը, որ խրվում է թևի մեջ, սուրբ է ծուխը, որ լողում է օդում, սուրբ են դեղերը, որ ճամփորդում են երակիդ միջով սուրբ ծխելիք սուրբ ծխած

Սուրբ դրախտ ու սուրբ դժոխք

Սուրբ է Աստված, որ չկա: Սուրբ է ծակդ, ու սուրբ է հոգիդ:

Սուրբ է Աստված, որ չկա: Սուրբ է ծակդ, ու սուրբ է հոգիդ:

Սուրբ է մայրական համբույրը, սուրբ է երանությունն հեշտանքի

Սուրբ

Լյուքին

(Ում հետ շատ հաճախ անտեղի թարսվել եմ)

Ինձ խնդրեցիր քեզ համար էրոտիկա գրել,
Բայց ես մերժեցի:
Ինձ խնդրեցիր հասնել բերանիդ խորքն ու համբուրել օրհնված
Լեզուդ,
Բայց ես մերժեցի:
Մի ծաղիկի պես,
Ում թերթերը
Բացվում են
            Մեկ
                        առ
                                    Մեկ
Անասելի կարոտ էր սիրտս բացվելու
Քեզ համար:
Բայց վախը, սերերն անցած ու կորուստներից դեռ մնացող
Միտքը (մայր, հայր, սիրեցյալ)
Պինդ փակված էր պահում
Թերթը թերթի վրա,
Մինչև ծաղիկը թառամեց
… ու մեռա՜վ:
Դու վարդն էիր ծաղիկներից,
Ու քեզ ավելին էր վայել:
Սակայն սիրտս էլի կարոտ է քեզ՝
Պատրաստ նորից բացվելու
Սրբագործված մի օր, մի տեղ՝
Հույսի մարելուն անտարբեր:

Հրաժարվում եմ հայերեն խոսել…

(նվիրվում է Շավարշ Նարդունուն)

Հրաժարվում եմ հայերեն խոսել կատվի հետ,
Որ հածում է

Երազներիս մեջ՝
Ցնորված լուսնոտի նման:

Հրաժարվում եմ հայերեն խոսել կատվի հետ
Ես, ով երբեք չի մոռանա իր մայրենի լեզուն,
Քանզի երբեք էլ այն չի իմացել:

Հրաժարվում եմ հայերեն խոսել կատվի հետ,
Որ հածում է
Երազներիս մեջ՝

Ցնորված լուսնոտի նման:
Ու ոչ հույն հոգեբույժը,
Ոչ էլ դահիճը թուրք
Ինձ հայերեն խոսել կստիպեն:

Դրա տեղակ կզարթնեմ
Ամառվա մի արևոտ առավոտ
Ու կբռնեմ ձեռքդ, *մեծ մայրիկ,*
Ինչպես սիրում էի անել:

Հրաժարվում եմ հայերեն խոսել կատվի հետ,
Որ հածում է
Երազներիս մեջ՝
Ցնորված լուսնոտի նման:

Ձեռքդ կբռնեմ, *մեծ մայրիկ,*

Ու մենք միասին կերգենք՝
Հատելով մեր նախնյաց հովիտները:

Դու ինձ անունս կհարցնես,
Ու ես կպատասխանեմ հայերեն:

Երեք իմաստուն. սպանություն 187-րդ փողոցում[1]

(Սուրբծննդյան ինչպիսի՜ նվեր 1933-ի դեկտեմբերին...)

Ա՜խ, սպանել են եպիսկոպոսին:
Սուրբ էր, մարդն էր Աստծո,
Մեր հոտի առաջնորդն էր,–
Առաջին այս խոսողը ռամկավարն էր:

Ո՜ւխ, սպանել են եպիսկոպոսին:
Արժանի էր: Տականքը մատնել էր Կոմիտասին
Թուրքական գաղտնի բանակին, Զմյուռնիան բոցերի մեջ թողել,–
Երկրորդ այս խոսողը դաշնակն էր:

Է՜խ, սպանել են եպիսկոպոսին:
Բա ո՞վ է կնոջս հետ քնելու իմ փոխարեն,
Երբ անկողնում հոգնած լինեմ,–
Երրորդ այս խոսողը կուսակցություն չուներ:

Լավ է՝ զոհասեղանը լվանաք
Սուրբ Խաչ եկեղեցու՝ Վաշինգտոն Հայթսում.
Ինչքան գործած մեղքեր, այնքան հեղված արյուն:

Haredim[2]

Ուղղահավատներին հարցնում եմ՝ գիտե՞ք արդյոք
Որտեղ կարելի է գտնել տեղի Սթարբաքսը
Եւ.
Բերաններ, որ չեն (Ընդունելու ինձ, սեղմում են շրթունքները, լռում են)
Գլխարկներ, որ չեն
(Բացելու գլուխը երկնքի առաջ, մնում են անշարժ)
Փեշեր, որ չեն
(Համբուրելու գետինը, քսվում են իրար)
Ձեռքեր, որ չեն
(Դիպչելու հարամին, նահանջում են)

Ուրբաթ ժամը 5-ն է
Շուտով մարելու են լույսերն ու
Քաշվեն իրենց մոմավառ սենյակները
Կրոնը, որ լույս էր ուզում բերել
Մի ժամանակ,
Խավար է տարածում փոխարենը:

Անտառում

Ն.Ս.-ին

I

Ու մտնում եմ անտառ
Շատ ավելի արագ շատ ավելի դանդաղ
Երբ կանաչը փոխվում է կարմիրի
Քայլում եմ երկայնքով գետի
Ծառերը դառնում են փերիներ
Ծածանելով բարձրանիստ բներ
Հորդաներ իրար դեմ պայքարող
Սիրահարներ իրար փայփայող
Իմ աշխարհի պատմությունն անընդմեջ
Պատմվում է՝ ինչպես պատահեց
Առավոտ վաղ ու մութ գիշերով
Նահատակի պես մտնում եմ լույսի մեջ:

II

Անտառ եմ ոտք դնում
Ու այնքան եմ տրտում
Որ չգիտեմ ինչպես իմ ժողովրդին փրկել
Ինչպես աղոթք ասել
Կիլիկիայից ու Լիբանանյան լեռներից եկած
Փախստականներ ամեն տեղ:
Րիվրսայդ Դրայվի վրա նրանց մասին եմ մտածում
Մինչ ուղղափառ միանձնուհին փեշն է ճղում:

III

Ու մտնում եմ անտառ
Լցված հույսով լցված թմրաբույսով

Արագ չեմ գնալու դանդաղ չեմ գնալու
Գնալու եմ այնպես, ինչպես սիրտս է տանելու:
Մեկն եմ ով շատ բան չգիտե
Մատանիքս եմ խթում արծաթե –
Վենսենն ինչքա՞ն – 3000 մղոնի չափ հեռու կլնի՞
Բայց դե էլի
Սարաֆյանի մասին եմ մտածում
Գիշեր ու զօր:

Ես անտառ եմ մտնում
Ու այս պահին սքանչորեն տեղում է ձյուն:

[1] 1933-ի դեկտեմբերի 24-ին դաշնակցական երիտասարդների մի խումբ Նյու Յորքի Սուրբ Խաչ եկեղեցում սպանում է արքեպիսկոպոս Ղևոնդ Դուրյանին, ով նույն տարվա հուլիսի 1-ին Չիկագոյում Հայկական օրվա տոնակատարության ժամանակ հրաժարվել էր բեմ բարձրանալ, մինչև բեմից չհեռացվեր հայկական եռագույնը: Պատճառը վախն էր սովետական իշխանություններից ու Էջմիածնի վարած քաղաքականությանը ենթարկվելու ցանկությունը (ծնթ. թարգ.):

[2] Օրթոդոքս հրեաներ, որ հակադրվում են սիոնիզմին, մերժում են ժամանակակից աշխարհիկ մշակույթը, դեմ են Իսրայել պետությանը ու հրաժարվում են այդ պետության բանակում ծառայելուց: Տղամարդիկ հագնում են սև կոստյումներ, դնում սև լայնեզր գլխարկներ ու երկար խոպոպներ, կանայք՝ գլխաշորեր ու երկար շրջազգեստներ (ծնթ. թարգ.):

Ուրսուլա Կ. Լե Գուին

Թարգմանությունը և ծանոթագրությունը՝ Սիրանույշ Օհանյանի

Ուրսուլա Լե Գուինը (Ursula Le Guin, ծնվ. 1929 թ.) ամերիկացի գրող, էսսեիստ, ֆեմինիստ, ամենաիեղինակավոր ֆանտաստ գրողներից մեկն է: Այս էսսեն թարգմանվել է «Ալիքը իմ մտքում» (The wave in my mind) ժողովածուից:

Ինքս ինձ ներկայացնելով

Ես տղամարդ եմ: Հիմա կմտածեք, թե սեռի վերաբերյալ ինչ-որ հիմար սխալ արեցի, կամ գուցե փորձում եմ ձեզ հիմարացնել, որովհետև անունս վերջանում է *ա*-ով, ունեմ երեք կրծկալ, հինգ անգամ հղի եմ եղել և դրանց նման այլ բաներ, որ երևի նկատել եք. փոքրիկ մանրուքներ: Բայց մանրուքները կարևոր չեն: Եթե քաղաքագետներից սովորելու բան ունենք, դա այն է, որ մանրուքները կարևոր չեն: Ես տղամարդ եմ և ուզում եմ, որ դուք հավատաք ու որպես փաստ ընդունեք, ինչպես ինքս եմ արել շատ տարիներ:

Հասկանում եք, երբ հասակ էի առնում մեղացիների և պարսիկների պատերազմների ժամանակ, երբ քոլեջ էի գնում Հարյուրամյա պատերազմից անմիջապես հետո և երբ Կորեական, Սառը և Վիետնամական պատերազմների ընթացքում մեծացնում էի երեխաներիս, կանայք չկային: Կանայք ամենավերջին հայտնագործություններից են: Կանանց հայտնագործումը ես մի քանի տասնամյակով հետ եմ թվագրում: Լավ, եթե մանրախնդիր ճշգրտություն եք պահանջում, կանայք մի քանի անգամ հայտնագործվել են լայնորեն տարբեր վայրերում, սակայն հայտնագործողները չեն իմացել՝ ինչպես վաճառեն արդյունքը: Բաշխելու նրանց միջոցները տարրական էին, շուկայագիտական հետազոտությունը՝ զրո. և իհարկե, նրանց մտադրածը պարզապես տեղից չշարժվեց: Եթե հանճար էլ լինի հայտնագործության հետևում, այն պետք է իր շուկան գտնի, և կարծես երկար ժամանակ կանանց գաղափարը պարզապես բանի պետք չէր: Օսթինի և Բրոնտեի նման մոդելները չափազանց բարդ էին, և մարդիկ պարզապես ծիծաղեցին սուֆրաժիստների վրա, և Վուլֆը չափից դուրս առաջ էր իր ժամանակից:

Ուրեմն երբ ես ծնվեցի, փաստորեն միայն տղամարդիկ կային: Մարդիկ տղամարդ էին: Նրանք բոլորը միայն մեկ դերանուն ունեին՝ արականը ցույց տվող դերանունը[1], այնպես որ ես դա եմ: Ես սեռային արական «նա» եմ[2], ինչպես «Եթե որևէ մեկը հղիության արհեստական ընդհատում անի, նա[3] պետք է գնա այլ նահանգ»-ում կամ «Գրողը գիտի՝ իր[4] հացի որ կողմին է կարագ քսած»-ում: Դա ես եմ, նա[5] ինքը՝ գրողը: Ես տղամարդ եմ:

Հավանաբար ոչ բարձրակարգ տղամարդ: Կատարելապես համաձայն եմ ընդունելու, որ ես կարող է իրականում երկրորդ կարգի կամ շինծու տղամարդ եմ, տղամարդ ձևացնող: Որպես նա՝ ես սեռային արական նա-ի հանդեպ այն եմ, ինչ ձկան չորացրած ձողիկն է ամբողջական խորոված չինուկյան սաղմոնի հանդեպ: Նկատի ունեմ, վերջիվերջո, ես կարո՞ղ եմ բեղմնավորել: Կարո՞ղ եմ լինել Բոհեմյան ակումբից[6]: Կարո՞ղ եմ ղեկավարել Ջեներալ Մոթորսը: Տեսա-

կանորեն կարող եմ, բայց գիտեք, թե տեսությունը մեզ ուր կհասցնի: Ոչ Ջեներալ Մոթորսի գազաթին, և այն օրը, երբ ռադքլիֆցի կինը[7] Հարվարդի համալսարանի նախագահը կլինի, դուք ինձ կարթնացնեք և կպատմեք, չէ՞: Միայն թե դուք դա չեք անի, որովհետև ռադքլիֆցի կանայք այլևս չկան. պարզվեց, որ նրանք անպիտան էին, և վերացվեցին: Եվ հետո, ես չեմ կարող իմ անունը ձյան վրա գրել մեզով, կամ էլ եթե գրեմ, ահավոր աշխատատար կլինի: Չեմ կարող գնդակահարել կնոջս, երեխաներիս, հարևաններիցս ոմանց և հետո՝ ինձ: Ճիշտն ասած, չեմ կարող նույնիսկ մեքենա վարել: Այդպես էլ չստացա վարորդական իրավունքի վկայականս: Վախեցա: Ավտոբուսով եմ տեղ գնում: Ահավոր է: Ընդունում եմ, որ իրոք շատ խղճուկ նմանակում եմ կամ շինծու տղամարդ, և կարող եք դա նկատել, երբ հագիս այս պահեստային զինվորական հագուստն է՝ զինամթերքի համար նախատեսված երբեմնի նորաձև գրպաններով, և ես բարձի երես հագած հավի տեսք ունեմ: Ես սխալ եմ ծնված: Մարդկանցից ակնկալվում է, որ լինեն նիհար: Դու չես կարող չափից դուրս նիհար լինել, բոլորն են ասում, հատկապես անորեքսիկները: Մարդկանցից ակնկալվում է, որ լինեն նիհար և ձիգ, քանի որ տղամարդիկ հիմնականում հենց այդպիսին են՝ նիհար և ձիգ, կամ համենայն դեպս շատ տղամարդիկ այդպես են սկսում, իսկ նրանցից ոմանք նույնիսկ այդպես էլ մնում են: Եվ տղամարդիկ մարդ են, մարդիկ տղամարդ են, դա շատ լավ հաստատված է, և այսպիսով մարդիկ, իրական մարդիկ, ճիշտ տեսակի մարդիկ նիհար են: Բայց ես իրականում շատ վատն եմ մարդ լինելու համար, քանի որ ընդհանրապես նիհար չեմ, այլ մի տեսակ գնդլիկ, իրոք ճարպոտ մասերով: Ես կախ ընկած եմ: Եվ հետո, մարդկանցից ակնկալվում է, որ լինեն պինդ: Պինդը լավ է: Բայց ես պինդ չեմ եղել երբեք: Ես մի տեսակ փափուկ եմ և իրականում մի տեսակ նուրբ: Լավ սթեյքի նման: Կամ չինուկյան սաղմոնի նման, որը նիհար և ձիգ չի, բայց շատ յուղալի և նուրբ է: Բայց չէ որ սաղմոնները մարդիկ չեն, կամ համենայն դեպս մեզ այդպես են ասել վերջին տարիներին: Մեզ ասել են, որ միայն մի տեսակի մարդ կա, և դա տղամարդն է: Եվ կարծում եմ, որ շատ կարևոր է, որ բոլորս հավատում ենք դրան: Տղամարդկանց համար հաստատ կարևոր է:

Դուրս է գալիս, երևի, որ ես պարզապես տղամարդկային չեմ: Ինչպես Էռնեստ Հեմինգուեյն էր տղամարդկային: Մորուք, ատրճանակ, կանայք և փոքրիկ կարճ նախադասություններ: Ես փորձում եմ: Մորուքի նման մի բան ունեմ, որը շարունակում է աճել. ինը կամ տասը, երբեմն ավելի մազեր՝ ծնոտիս, բայց ի՞նչ եմ անում այդ մազերը: Պոկոտում եմ դրանք: Տղամարդն այդպես կանե՞ր: Տղամարդիկ չեն պոկոտում: Տղամարդիկ սափրվում են: Համենայն դեպս սպիտակ տղամարդիկ, լինելով մազոտ, սափրվում են, իսկ սպիտակ լինելու կամ չլինելու իմ ընտրությունը նույնիսկ ավելի պակաս է, քան տղամարդ լինելու կամ չլինելու: Ուզած թե չուզած՝ սպիտակ եմ: Բժիշկները ոչինչ չեն կարող անել ինձ համար: Բայց ես այս պայմաններում երևի ձեռիցս եկածն անում եմ սպիտակ չլինելու համար, քանի որ չեմ սափրվում: Պոկոտում եմ: Բայց դա ոչինչ չի նշանակում, քանի որ իրոք իրական մորուք չունեմ, որը մի բան կարժենար: Եվ ատրճանակ չունեմ, նույնիսկ կին չունեմ, իսկ նախադասություններս երկարում են ու երկարում՝ իրենց ամբողջ շարահյուսությամբ հանդերձ: Էռնեստ Հեմինգուեյն ավելի շուտ կմեռներ, քան շարահյուսություն կունենար: Կամ միջակետեր[8]: Ձեռի հետ դնում եմ լիքը միջակետեր. ահա դրանցից մեկը հենց հիմա. կար միջակետ «միջակետեր»-ից հետո, մեկ ուրիշն էլ՝ «հիմա»-ից հետո:

Եվ մի բան էլ: Էռնեստ Հեմինգուեյն ավելի շուտ կմեռներ, քան կծերանար:

Նա այդպես էլ արեց: Կրակեց ինքն իրեն: Կարճ նախադասություն: Ամեն ինչ, բացի երկար նախադասությունից՝ կյանքի նախադասությունից: Մահվան նախադասությունները կարճ են և շատ, շատ տղամարդկային: Կյանքի նախադասությունները՝ ոչ: Դրանք շարունակվում են ու շարունակվում՝ հագեցած շարահյուսությամբ, արժեքավոր կապերով, շփոթեցնող հղումներով, և մեծանում են: Եվ դա իսկական ապացույց է, թե ինչ խառնաշփոթ եմ սարքել՝ տղամարդ լինելով. ես նույնիսկ երիտասարդ էլ չեմ: Հենց այն ժամանակ, երբ վերջապես սկսվեց կանանց հայտնագործումը, սկսեցի ծերանալ: Եվ ճիշտ էի՝ դա անելով: Անամոթաբար: Ես ինձ թույլ տվեցի ծերանալ և ոչ մի բան չարեցի դրա համար՝ ատրճանակով կամ մի ուրիշ բանով:

Ուզում եմ ասել, եթե իրոք ինքնահարգանք ունենայի, գոնե դեմքի վիրահատություն կամ լիպոսակցիա[9] չէի անի՞: Չնայած լիպոսակցիան ինձ համար հնչում է այն բանի նման, որ շատ են անում հեռուստացույցով, երբ ջահել են կամ ջահելոտ, բայց ոչ ծեր, և երբ նրանցից մեկը տղամարդ է, իսկ մյուսը՝ կին, բայց ոչ որևէ այլ պայմաններում: Նրանց արածն այն է, այս ջահել կամ ջահելոտ տղամարդու և կնոջ, որ իրար պահում են և ձեռքերը սահեցնում իրար վրայով, և ապա լիպոսակցիա են անում: Ակնկալվում է, որ դիտեք, երբ նրանք անում են: Նրանք շարժում են իրենց գլուխները, հավասարեցնում բերանը և քիթը մյուսի բերանին և քթին, բացում են բերանները տարբեր ձևերով, իսկ ձեզանից ակնկալվում է, որ մի տեսակ տաքություն կամ խոնավություն կամ դրա նման մի բան զգաք դիտելիս: Ինչ որ զգում եմ, նման է լիպոսակցիա անող երկու մարդկանց դիտելուց զգացածին, և *արա՞* համար նրանք վերջապես հայտնագործեցին կանանց: Իհարկե ո՛չ:

Փաստորեն կարծում եմ, որ սեքսը որպես դիտարժան սպորտ նույնիսկ ավելի ձանձրալի է, քան դիտարժան սպորտի բոլոր մյուս տեսակները, նույնիսկ բեյսբոլը: Եթե պահանջվում է, որ սպորտ դիտեմ՝ դրանով զբաղվելու փոխարեն, ես ընտրում եմ ձիացատկը: Ձիերն իրոք լավ են նայվում: Նրանց քշող մարդիկ մեծ մասամբ մի տեսակ նացիստ են, բայց բոլոր նացիստների նման հզոր են և հաջողակ, քանի դեռ այդպիսին են իրենց քշած ձիերը, և վերջիվերջո ձին է որոշողը՝ ցատկե՞լ հնգակի ցատկատախտակով արգելքի վրայով, թե՞ հանկարծակի կանգնել և թողնել, որ նացիստը վզի վրա ընկնի: Միայն թե սովորաբար ձին չի հիշում, որ ընտրություն ունի: Ձիերը հեչ էլ ահավոր խելացի չեն: Բայց ամեն դեպքում ձիացատկը և սեքսն ահագին ընդհանուր բան ունեն, չնայած որպես կանոն ամերիկյան հեռուստատեսությամբ, եթե դնեք կանադական ալիքը, կարող եք ձիացատկ տեսնել, ինչը ճիշտ չէ սեքսի մասին: Ընտրություն ունենալով, չնայած հաճախ եմ մոռանում, որ ընտրություն ունեմ, ես իհարկե *կդիտեմ* ձիացատկ և *կանեմ* սեքս: Ոչ մի դեպքում՝ հակառակը: Բայց հիմա շատ ծեր եմ ձիացատկի համար, նույնը՝ սեքսի, ո՞վ գիտի: Ես գիտեմ. դուք՝ ոչ:

Իհարկե, այս օրերին ակնկալվում է, որ ոսկի ծերությունը անկողնուց անկողին կցատկի՝ ճիշտ ինչպես ձիերն են ցատկում հնգակի ցատկատախտակի վրայով. ոստյուն, ոստյուն, ոստյուն, բայց յոթանասունամյայի համար այս սուպերսեքսի մեծ մասը տեսություն է մնում՝ Ջեներալ Մոթորսի կին գործադիր տնօրենի և Հարվարդի կին նախագահի նման: Այս տեսությունը հորինվել է մեծ մասամբ քառասունամյա մարդկանց, այսինքն՝ տղամարդկանց մխիթարելու համար, որոնք անհանգստանում են: Ահա ինչու մենք ունեցել ենք Կարլ Մարքս և դեռ ունենք տնտեսություն՝ չնայած Կարլ Մարքսին կարծես թե կորցրինք: Որպես այդպիսին՝ տեսությունը դենդի է: Ինչ վերաբերում է պրակ-

տիկային կամ պրաքսիզին, ինչպես սովոր են ասել մարքսիստները, քանի որ ակնհայտաբար նրանք սիրում են *քս*-երը, պիտի սպասեք մինչև վաթսուն կամ յոթանասուն դառնալը և ապա պատմեք ինձ ձեր սեքսուալ պրակտիկայի կամ պրաքսիզի մասին, եթե ցանկություն ունեք, չնայած չեմ խոստանում, որ կլսեմ, և եթե լսեմ, հավանաբար խիստ կձանձրանամ և կսկսեմ հեռուստացույցով դիտել ձիացատկ: Ամեն դեպքում ինձնից չեք լսի իմ սեքսուալ պրակտիկայի կամ պրաքսիզի մասին հետո, հիմա կամ երբևէ:

Բայց այս բոլորը մի կողմ, ահա ես, ծեր, երբ գրում էի սա՝ վաթսուն տարեկան էի. «վաթսուն տարեկան ժպտացող հանրային գործիչը», ինչպես Յեթսը կասեր, բայց դե նա տղամարդ էր: Իսկ հիմա ես շուրջ յոթանասուն եմ: Եվ դա հենց իմ մեղքն է: Ես ծնունդ առա նախքան կանայք կհայտնագործվեին և այս բոլոր տասնամյակներն ապրում եմ՝ այնքան ջանասիրաբար ձգտելով լավ տղամարդ լինել, որ ամեն ինչ մոռանում եմ երիտասարդ մնալու մասին ու չմնացի: Եվ իմ բոլոր ժամանակները խառնվեցին: Հենց նոր երիտասարդ եմ, ապա միանգամից վաթսուն էի և հավանաբար ութսուն, իսկ հետո՞:

Շատ չի մնացել:

Ես շարունակում եմ մտածել, որ պետք է մի բան լինի, որով իսկական տղամարդը կարողանար դրա հարցերը լուծել: Մի բան, որ ատրճանակի կարիք չզգացվի, բայց Օլեյի քսուքից[10] արդյունավետ լինի: Բայց ձախողեցի: Ոչինչ չարեցի: Բացարձակապես ձախողեցի երիտասարդ մնալը: Հիմա հետ եմ նայում իմ բոլոր եռանդուն ջանքերին, քանի որ իրոք փորձել եմ, ջանասիրաբար փորձել եմ լավ տղամարդ լինել, և տեսնում եմ, թե ինչպես եմ ձախողվել: Ամենաշատը վատ տղամարդ եմ: Նմանակումով կեղծված երկրորդ կարգի արական նա՝ տասը մազանի մորուքով և կետ-ստորակետերով: Զարմանում եմ, թե օգուտը որն էր: Երբեմն մտածում եմ, որ պարզապես պիտի ձեռ քաշեի այս ամենից: Երբեմն մտածում եմ, որ նույն հաջողությամբ կարող էի կատարել իմ ընտրությունը՝ կանգ առնել հնգակի ցատկատախտակով արգելքի առաջ և թողնել, որ նացիստը գլխի վրա ընկնի: Ոչ տղամարդ ձևացնելուց եմ լավ, ոչ երիտասարդ լինելուց, նույն հաջողությամբ կարող եմ սկսել ձևացնել, որ ծեր կին եմ: Համոզված չեմ, որ մեկնումեկը արդեն հայտնագործել է ծեր կանանց. կարծում եմ՝ արժի փորձել:

[1] Բնագրում՝ his. արականը ցույց տվող դերանուն անգլերենում: Անձը մատնանշելու համար մինչև օրս էլ հաճախ միայն արական դերանունն է կիրառվում օրենսդրական ակտերում և այլուր:
[2] Բնագրում՝ he. արականը ցույց տվող դերանուն անգլերենում:
[3] Բնագրում՝ he:
[4] Բնագրում՝ his:
[5] Բնագրում՝ he:
[6] 1872-ին հիմնադրված մասնավոր ակումբ. լրագրողների, արվեստագետների, երաժիշտների, հիմնադրումից կարճ ժամանակ անց՝ նաև բիզնեսմենների հավաքատեղի:
[7] Ռադքլիֆի քոլեջը ազատ արվեստների կանանց քոլեջ էր Քեմբրիջում՝ հիմնադրված XIX դարում, հայտնի էր ազատամիտ և ինտելեկտուալ ուսանողական խորհրդով: Այժմ՝ Հարվարդի հատուկ հետազոտությունների Ռադքլիֆի ինստիտուտ:
[8] Բնագրում՝ կետ-ստորակետ (;). նախադասությունները կապող համապատասխան կետադրական նշանը անգլերենում:
[9] Ճարպահեռացում վիրահատական միջամտությամբ:
[10] Oil of Olay, մաշկի խնամքի միջոց:

Չարլզ Բերնսթայն

Թարգմանությունը՝ Կարեն Ղարսլյանի

Չարլզ Բերնսթայնը (Charles Bernstein) ծնվել է Նյու Յորքում 1950 թ.: Հեղինակել կամ խմբագրել է ավելի քան 50 անուն գիրք՝ ներառյալ լիածավալ պոեզիայի ժողովածուներ, էսսեներ, պամֆլետներ, լիբրետտոներ ու համագործակցություններ, այդ թվում՝ «Վերահաշվարկում» («Recalculating», University of Chicago Press, 2013), «Դժվար բանաստեղծությունների հարձակումը. էսսեներ և գյուտեր» («Attack of the Difficult Poems: Essays and Inventions», University of Chicago Press, 2011) և «Դրախտի ողջ վիսկին. ընտիր բանաստեղծություններ» («All the Whiskey in Heaven: Selected Poems», Farrar, Straus and Giroux, 2010): 1978–1981 թթ. Բրյուս Էնդրյուսի հետ համախմբագրել է «L=A=N=G=U=A=G=E» պարբերականը: Ռոբերտ Քրիլիի, Սյուզըն Հաուի, Ռեյմոնդ Ֆեդերմանի ու Դենիս Թեդլոքի հետ 1990-ականներին համահիմնադրել է Պոետիկայի ծրագիրը Բաֆըլոյի նյույորքյան պետական համալսարանում (Poetics Program at the State University of New York – Buffalo): Լոս Պեկենյո Գլազիրի հետ Բերնսթայնը Էլեկտրոնային պոեզիայի կենտրոնի (Electronic Poetry Center, epc.buffalo.edu) խմբագիրն է, իսկ Ալ Ֆիլրիսի հետ, «ՓեննՍաունդ»-ի համատնօրեն (PennSound, writing.upenn.edu/pennsound): Բերնսթայնն այժմ Փենսիլվանիայի համալսարանում անգլերենի և համեմատական գրականության՝ Դոնալդ Թ. Ռիգանի անվան վաստակավոր պրոֆեսոր է և Արվեստի ու գիտությունների ամերիկյան ակադեմիայի անդամ:

«Պատերազմական պատմությունները» Չարլզ Բերնսթայնի առաջին հայերեն թարգմանված բանաստեղծությունն է, որ հրատարակվում է հեղինակի արտոնմամբ: Ծանոթագրությունները՝ բանաստեղծ, թարգմանիչ Յան Պրոբշտեյնի և Կարեն Ղարսլյանի: Չարլզ Բերնսթայնի ծանոթագրությունները քաղված են նրա ու Ղարսլյանի էլեկտրոնային նամակագրությունից:

Պատերազմական պատմություններ

Պատերազմը արձակի շարունակությունն է այլ միջոցներով։

Պատերազմը նշանակում է երբեք ստիպված չլինել ներողություն խնդրել։

Պատերազմը բարոյական համոզվածության տրամաբանական հետևանքն է։

Պատերազմը հակամարտություն կարգավորելու ուղին է գեղագիտական հետամնացությամբ տառապողների համար։

Պատերազմը դրախտ տանող դանդաղ նավակ ու դժոխք տանող ճեպընթաց գնացք է։

Պատերազմը կա՛մ հաղորդակցման ձախողում է, կա՛մ հնարավոր ամենաուղղակի արտահայտությունը։

Պատերազմը ստահակների առաջին հանգրվանն է։

Պատերազմը հզորների բռնությանը դիմակայելու անզորների օրինակարգ իրավունքն է։

Պատերազմը ցնորք է, ճիշտ ինչպես խաղաղությունն է մտացածին։

«Պատերազմը գեղեցիկ է, որովհետև համատեղում է հրազենային կրակը, հրետակոծությունը, հրադադարը, բուրմունքն ու նեխման գարշահոտը մեկ սիմֆոնիայի մեջ»[1]։

«Պատերազմը ինքն է որոշում ինչպես մղվել երբ մղվել»[2]։

Պատերազմը արդարացում չէ իրեն ընդդիմացողների կեղծ բարեպաշտության համար։

Պատերազմը այլ մարդիկ են[3]։

Պատերազմը 5-մղոնանոց արշավ է 1-մղոնանոց գերեզմանոցում։

Պատերազմը բնության հիշեցումն է. «Բա որ ասո՜ւմ էի»։

Պատերազմը հնարավորության ստեղծում է։

Պատերազմը «վեցերորդ ավենյուի ճապոնականացված հին էլգնացքի կտոր»[4] է։

Պատերազմը արդարության դժկամ հիմքն է ու ազատության անգիտակից երաշխավորը։

Պատերազմը հայրենասերի կոտրված երազանքն է:

Պատերազմը իդեալիզմի դանդաղ մահն է:

Պատերազմը ռեալպոլիտիկ է տարեցների և անպաճույճ իրականություն ջահելների համար:

Պատերազմը պրագմատիզմ է անմարդկային դեմքով:

Պատերազմը պետության համար նույնն է, ինչ հուսահատությունը՝ անձի համար:

Պատերազմը ճանապարհի վերջն է մոլորվածների համար:

Պատերազմը սեփական ստվերից սարսափող, սակայն բովանդակությամբ ամեհի բանաստեղծություն է:

Պատերազմը պողպատի վերածված տղամարդիկ ու մոխրի վերածված կանայք են:

Պատերազմը երբեք պատերազմ չի արդարացնում, բայցև հազվադեպ է արդարացնում որևէ այլ բան:

Պատերազմը ճշմարտության զոհն է, ճիշտ ինչպես ճշմարտությունն է պատերազմի զոհը:

Պատերազմը թափով հազցնում է մերկերին:

Պատերազմը քաղաքական գործիչների օփիումն է:

Պատերազմը փոխզիջման նկատմամբ նույնն է, ինչ հիվանդոտությունը՝ մահացության հանդեպ:

Պատերազմը բանաստեղծություն է առանց երգի:

Պատերազմը աշխարհի դավաճանությունն է Երկրագնդի առատությանը:

Պատերազմը հեռատիպի դիմաց նստած գորիլլայի պես մի բան է. միշտ չէ լավագույն ընտրությունը, սակայն երբեմն՝ միակը:

Պատերազմը արյամբ սնվող տենդ է:

Պատերազմը ոչ ավելին է, քան Թանատոսի ընդարձակումը:

Պատերազմը սեփական երիտասարդության սխալների տակից դուրս գալու ավագ սերնդի ճարն է:

Պատերազմը բարոյական է, խաղաղությունը՝ էթիկական:

Պատերազմը ամենաթույն զվարճանքն է:

Պատերազմը մարմին առած դիմադրությունն է:

Պատերազմը սեփական սահմանները փորձարկելու կապիտալիզմի եղանակն է:

Պատերազմը դասակարգային պայքարի անխուսափելի արտադրանք է:

Պատերազմը տեխնոլոգիայի քեռին է:

Պատերազմը արդարացում է բազմաթիվ վատ հակապատերազմական բանաստեղծությունների համար:

Պատերազմը ճնշված ժողովրդի իրավունքն է:

Պատերազմը նորություն է, որ մնում է նորություն[5]:

Պատերազմը անիրականանալի հեղափոխության գլխավոր զենքն է:

Պատերազմը ձեռնտու է նրանց, ովքեր կորցնելու ոչինչ չունեն:

Պատերազմը սյուրռեալիզմ է առանց արվեստի:

Պատերազմը չեն հաղթում, վերապրում են:

Պատերազմը ճիշտը ոչնչացնող երկու սխալներն են:

Պատերազմը հանուն սկզբունքի՝ դատողությունից երես թեքելն է:

Պատերազմը զոհաբերություն է հանուն իդեալի:

Պատերազմը իրականի սրբապղծումն է:

Պատերազմը անարդար է, անգամ երբ արդար է:

Պատերազմը մեռածների վրեժն է ողջերի նկատմամբ:

Պատերազմը սխալ մարդու նկատմամբ լուծված վրեժն է:

Պատերազմը սևազգեստ երեխայի, կարմրազգեստ կնոջ և կապտազգեստ տղամարդու լացն է:

Պատերազմը անզորություն է:

Պատերազմը հումք է[6]:

Պատերազմը մի պետության հայտարարված պայքարն է մյուսի դեմ, սակայն նաև պետության չհայտարարված բռնությունը՝ սեփական ժողովրդի դեմ:

Պատերազմը արատ չէ՝ ազատությունը պաշտպանելիս, և հաշտեցումն արժանիք չէ՝ ինքնապաշտպանվելիս:

Պատերազմը բռնապետության մեծագույն թշնամին է:

Պատերազմը բռնապետության մեծագույն բարեկամն է:

Պատերազմը լուծում է, բայց ո՞րն է խնդիրը:

Պատերազմը հեծյալին սանձած ձի է:

Պատերազմը մարդկային հասարակության անհարիր խորհրդանիշն է:

Պատերազմը վաղեմի թշնամանքի հանգողածուխները թեժացնելու լավագույն եղանակն է:

Պատերազմը ճակատամարտ է հանուն անսիրտների ու անմիտների սրտերի ու մտքերի:

Պատերազմը հաղթողների գրած պատմությունն է:

Պատերազմը քաղաքակրթության մահն է հանուն քաղաքակրթության:

Պատերազմը նպատակ է, որն արդարացնում է միջակությունը:

Պատերազմը ամենագնաց է բոլոր ֆուտբոլասեր Պապաների ու բամբասանքչի Մամաների համար:

Պատերազմը նախաձեռնում են հարուստները, իսկ վճարում են աղքատները:

Պատերազմը որակյալ այլընտրանք է «Դուք Ջեքսոնից գլուխ չեք հանում. Մայքլի հետ խոհանոցում» և «Վախի գործոնը. ինչպես պսակվել չամուսնացած կնոջ հետ» հեռուստասերիալներին[7]:

Պատերազմը փոխաբերություն չէ:

Պատերազմը զավեշտալի չէ:

Պատերազմը բոլորապտույտ հաջորդական շարժումների անկեղծությունն է[8]:

Պատերազմը մարմնին փորագրված շախմատի պարտիա է:

Պատերազմը մարտավարական բռնություն է հանուն ռազմավարական տիրապետության:

Պատերազմը ներքին անտարբերությունը թաքցնելու նպատակով միջազգային ասպարեզում գործունեություն ծավալելն է:

Պատերազմը օրնիբուն աշխատող սատանան է:

Պատերազմը մեր միակ հույսն է:

Պատերազմը մեր ժառանգությունն է:

Պատերազմը մեր հայրիշխանությունն է:

Պատերազմը մեր իրավունքն է:
Պատերազմը մեր պարտավորությունն է:

Պատերազմը արդարացվում է միայն այն դեպքում, երբ պատերազմ է դադարեցնում:

Պատերազմը չի ավարտվում, երբ ավարտվում է:

Պատերազմը «այստեղ» է[9]:

Պատերազմը պատասխանն է:

Պատերազմը հենց այստեղ է:

Պատերազմը սա է:

Պատերազմը հիմա է:

Պատերազմը մենք ենք:

[1] Հատված Ֆիլիպո Մարինետտիի «Ֆուտուրիզմի մանիֆեստից» (*ծնթ.՝ Յան Պրոբշտեյնի*)
[2] Գերտրուդ Սթայնի «Կոմպոզիցիան որպես բացատրություն» էսսեից (*ծնթ.՝Յ.Պ.*):
[3] Ակնարկվում է Ժան-Պոլ Սարտրի «Ելք չկա» (1944) պիեսի հետևյալ արտահայտությունը. «Դժոխքը այլ մարդիկ են» (*ծնթ.՝ Կարեն Ղարսլյանի*):
[4] Հղում է.է. քամինգսի «պղատոնն ասաց» բանաստեղծությանը. «պղատոնն ասաց / նրան. նա չկարողացավ / հավատալ (հիսուսը / ասաց նրան. նա / չուզեց հավատալ) […]…դա անպայման պիտի / վեցերորդ պողոտայի / ճապոնականացված / հին էլգնացքի / կտորը նրա գլուխը / մտցներ»: Թարգմ.՝ Սամվել

Մկրտչյանի: Խոսքն այն մասին է, որ ճապոնացիները հնացած մետաղ էին գնում, վերաձուլում արկերի, որոնք էլ ապա արձակում էին ամերիկացիների ուղղությամբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (*ծնթ.՝ Յ.Պ.*):

[5] Ակնարկվում է Էզրա Փաունդի «Ընթերցանության այբուբենը» երկը. «Գրականությունը նորություն է, որ մնում է նորություն» (*ծնթ.՝ Յ.Պ.*):

[6] Բնօրինակում իմաստային շերտից զատ առկա է նաև անթարգմանելի հայելային գրաշրջային բառախաղ. «War is raw» *(ծնթ.՝ Կ.Դ.):*

[7] Ժողովրդականություն վայելող հեռուստասերիալների ձևափոխված անվանումներ: «Վախի գործոնը» իսկական անվանումն է, իսկ երկրորդ հատվածը՝ ծաղրում է այնպիսի հեռուստասերիալներ, ինչպիսիք են «Զամուսնացած կինը» և «Ինչպես ամուսնանալ միլիոնատիրոջ հետ»: You don’t know Jack արտահայտությունը նշանակում է. «Դուք խոսակցականից գլուխ չեք հանում» (ժարգոնից) և միաժամանակ նկատի ունի Մայքլ Ջեքսոնին (*ծնթ.՝ Յ.Պ.*):

[8] Ակնարկվում է Էդվարդ Մեյբրիջի «Ձին շարժման մեջ» (“Horse in Motion” by Eadweard Muybridge) հայտնի աշխատանքը: 1878 թ. Մեյբրիջը բազմաթիվ լուսանկարչական խցիկներ հաջորդաբար գործարկելով կարողացել էր նկարահանել ձիու վարգի հաջորդական շարժումները՝ ապացուցելով, որ վարգելիս ձիու չորս ոտքերը մի պահ կտրվում են հողից: Տե՛ս՝https://www.prestocentre.org/eadweard– muybridge– horse– motion (*ծնթ.՝ Զարլզ Բեռնսթայնի*):

[9] Ակնարկվում է 1917 թ. Ջորջ Քոենի հեղինակած «Over there» («Այնտեղ») հայտնի երգը, որում «այնտեղ»-ը վերաբերում է ԱՄՆ-ի սահմաններից հեռու ծավալվող պատերազմական գործողություններին: Տե՛ս՝ http://en.wikipedia.org/wiki/Over_There *(ծնթ.՝ Չ.Բ.)*

Հարցազրույց

Լեզուի եւ վէպի շուրջ
Արամ Պաչեանի հարցազրոյցը Գրիգոր Պըլտեանի հետ

«Ստացածդ բեռ է, ստեղծածդ՝ արարք»



Գրիգոր Պըլտեան եւ Արամ Պաչեան

Արամ Պաչեան. Եթէ վէպերի, բանաստեղծութիւնների լեզուն գրքերի շրջանակից դուրս չի գալիս, զուրկ է ներգործութեան կարողութիւնից, այդ դէպքում ո՞րն է նրա գործառոյթը: Արդեօք գրականութեան լեզուն չի՞ վերածւում մեծ արխիւի, որը պարզապէս թերթում ես, ուսումնասիրում, թղթատում:

Գրիգոր Պըլտեան Գրականութեան լեզուն, կամ ինչ որ կրնանք այդպէս որակել, բանաւորէն, խօսակցականէն կը մեկնի: Մեռած լեզուով կարելի է գրել բայց ոչ երբեք ստեղծել նորը: Իսկ այդ գրականութեան լեզուն կը կասկածիմ որ հասարակաց բնոյթ ունի, ըսել կ'ուզեմ գրականութեան մաս կազմող գրողներու, բանաստեղծներու կամ քննադատներու լեզուն տարբեր լեզուներ են, լեզուի տարբեր ստանձնումներ, langage ըսել կ'ուզեմ եւ ոչ langue: Հայերէնի մէջ մենք չունինք հնարաւորութիւնը զանազանելու այս երկուքը, բացի երբ թեքնիք բարբառին կը յղուին, այս պարագային լանկաժը լեզուախօսութիւնն է, այսինքն՝ լեզուի ստանձնումը, անոր խօսուիլը մէկու մը կողմէ, հոս՝ գրագէտի մը: Ուստի՝ գրականութեան մէջ կան լեզուախօսութիւններ, չկայ մէկ գրական լեզու: Որքան բանաստեղծ, այնքան բանաստեղծական լեզուախօսութիւն: Որքան վիպասան այնքան վէպի լեզուախօսութիւն: Ի հարկէ կրկնութիւնը գրական երեւոյթ մըն է, քանզի նմանակելը, միմելը, արտագրելը բնական է —Արիստոտէլի օրերէն իսկ...—: Իսկ կրկնութիւնը լեզուախօսութիւն մը կ'օգտագործէ, զայն չի ստեղծեր: Որով գրական լեզու կոչուածը ասոր կամ անոր կողմէ հնարուածն է, որ մտած է հասարակաց միջոց: Բոլոր արդէն կատարուած լեզուախօսութիւնները բերուած են նոյնին: Հարցը այն է, ըստ իս, գրողի հիմնական խնդիրներէն մէկը, ստեղծել է իր իսկ լեզուն: Ասոր համար

մեկնակէտը նշեցի. բանաւորն է, ըլլայ բարբառային, ըլլայ փողոցային, ըլլայ տնային, մէկ խօսքով՝ բնական լեզու կամ մայրենի լեզուն: Արդ գրողին համար նոյնքան զօրաւոր կերպով ներկայ են միւս լեզուախօսութիւնները, անոնք որ կը կարդայ: Կ'ենթադրեմ որ գրող մը կը կարդայ, այլապէս ուրկէ՞ կրնայ գիտնալ որ գրականութիւն կայ: Բանաւորի եւ արդէն գրուածի արանքին է որ կը բացուի ուրիշ լեզուախօսութեան մը միջոցը: Քանի գրողը կը փնտռէ երկրորդ լեզու մը, իրը: Սակայն անմիջապէս որ լեզու մը կը գրուի, նախ կը մտնէ միւսներու շարքին, յետոյ կը քարանայ, կ'անշարժանայ: Գրական երկերը ունին այս յատկութիւնը կայուն դարձնելու բանաւորէն եկողը, նոյնիսկ բանաւորը: Ժարկոն, շաբլոն, գաղտնալեզու, եւ բոլոր լեզուախօսութիւնները որոնք կը պատկանին խաւի մը կամ կը գործածուին միայն որոշ փակ կամ կէս-փակ խումբերու կողմէ, կը փոխուին շատ արագ մինչ գիրը կը դանդաղեցնէ այս բնական ընթացքը: Այս դանդաղեցումի արդիւնք է «գրական լեզուն», որուն դէմ կը պայքարի գրող մը, պարզ է: Պէտք չունիմ ըսելու որ կայունացման այս փուլը գրական աշխատանքի արդիւնք է: Անգամ մը կատարուած, անհատական բնոյթ ստացած, գրագէտի լեզուն կը մտնէ գրականութիւն, կը դառնայ գրականութեան բաղկացուցիչ մէկ մասը: Կարո՞ղ է իր կարգին վերադառնալ հասարակութեան: Ինչպէս թելադրեցի արդէն՝ այո, երբ ընթերցող հասարակութեան մէջ կը կրկնուի: Միայն թէ այլեւս գրուած է, այսինքն՝ որոշ իմաստով դարձած է «մեռեալ լեզու», այլ խօսքով՝ լեզուախօսութիւնը, ըսենք կենդանի, անմիջական, բնականօրէն բխողը եղած է կայուն, վերջնական թուող շերտ, գրեթէ նորմաթիֆ, արժեչափային: Ես կը խորհիմ որ ինչ ճիգ ալ ընենք որպէսզի գրուածքին մէջ մտնէ ու մնայ բանաւորը, լեզուի անհատական, անձնական ստանձնումը, ուրկէ կու գայ ոճը, որքան ալ ջանանք ձայնով պայքարիլ գրուածին դէմ, այս վերջինը կը տնօրինէ կացութեան: Սելինի վէպերը կը բանին այս պարատոքսին մէջ: Երբեմն ընդարձակ մենախօսութիւններ են ուր կը միջամտեն արկոն, ժարկոնը, աւազակայինը, եւայլն, բայց որոնք բոլորն ալ կ'ենթարկուին գրուածքի օրէնքին:

Ա.Պաչեան. Բեկէտի օրինակը եւս, երբ անգլերէնից անցաւ ֆրանսերէնի, ի սպառ ոճազրկեց իր առաջին շրջանի վէպերի լեզուն՝ նախադասութիւններն ու վէպի յատակային (ոչ տեսանելի, բայց առկայ պատմութիւնը), *ուրիշ ձայնով* դուրս բերելով բացարձակ մակերես եւ հեռահար շփուելով բանաւորի հետ:

Գ.Պ. Բեկէտի Մոլլոյ-ին կամ Ինչպէս է-ին մէջ, մենախօսութիւնը անդադար կը «սիրաբանի» բանաւորին հետ, առանց բոլորովին անհաստատ, անկայուն բանաւորին մէջ իյնալու, քանի պահպանուած է ուղիղ շարահիւսութեան կանոնը: Սակայն ինչ ալ ըլլայ ձայնին տեղը գրութեան մը մէջ, թանգարանային անշարժութիւնը հեռու չէ: Թանգարան ըսելով կը հասկնանք այն տեղը ուր սովորական առարկան իսկ կը կորսնցնէ իր օգտակարութիւնը, կ'առանձնանայ, կը դառնայ դիտելի, տեսանելի: Թանգարանի գաղափարը անշուշտ ներկայիս իր կարգին փոփոխուած է, մանաւանդ որ նկարիչներ շատ անգամ իրենց պաստառները կամ կերպուածքները —ինստալլատիոն — կը մտածեն արդէն թանգարանի մէջ զետեղելի, ըսենք զետեղուածքներ: Ըսել կ'ուզեմ որ "թանգարան"ի գաղափարը վերատեսութեան ենթարկելու է: Ի հարկէ գրականութեան մէջ որոշ գործեր, օրինակ Ինտրայի *Ներաշխարհ*ը կամ *Նոճեստանը*, ասոնց լեզուախօսութիւնը երբեք պիտի չդառնայ նորմալ արեւմտահայերէն, ինչպէս որ ատենին՝ Նարեկացիի *Մատեանը* ուշ շրջանի գրաբար, երբեք չմտաւ խօսակցական միջին հայերէնին մէջ: Հարցը այն չէ որ այս իւրայատուկ, առանձ-

նայատուկ լեզուախօսութիւնները կը մտնեն բանաւոր լեզուին մէջ, կը շրջագայի՞ն կամ ո՞չ: Հարցը այն է. արդեօ՞ք այս կամ ուրիշ գիրքեր կը փոխեն մեր հայեցակէտը, մեր աշխարհիմացութիւնը, կամ ըսենք պարզապէս մի՞թէ անոնք կը փոխեն մեր աշխարհը տեսնելու կերպը: Անտրէ Մալրօն էր որ կ՚ըսէր թէ մեծ նկարիչի մը գործերը կը միջամտեն մեր տեսողութեան: Աշխարհը կը սկսինք տեսնել ըստ Պիքասոյի, ըստ Վեր-Մերի կամ ըստ Մատիսի, անոնց աչքերով: Գրական երկերը, այն չափով որ արուեստի գործեր են, ասիկա էական է անշուշտ, քանի շատ մը գրուած բաներ արուեստի երկեր չեն, ըստ իս, ճիշդ ասոր համար — անշուշտ կը փոխեն լեզուախօսութիւնները, բայց մանաւանդ փառասիրութիւնն ունին շրջելու մեր տեսածը — անոնց շնորհիւ մեր տեսածը, զգացածը, մտածածը—: Անգամ մը երբ Մելվիլ կը կարդաս, երբեք այլեւս ծովն ու մրրիկները չես տեսներ այնպէս ինչպէս կը մտածէիր տեսած ըլլալ: Նոյնը՝ Պրուստին, նոյնը պիտի ըսէի Բալզաքին: Մոռնալու չէ, որ լեզու կոչուածը միայն փոխանակութեան միջոցը չէ, այլ է տեղը ուր կայ մարդուն մարմինն ու միտքը:

Ա. Պաչեան. Ձեր «Վայրեր» հատորը (Փարիզ, 1983) սկսւում է հէնց *Տեղի* սահմանումով՝ «Ստեղծել վայրը ուր ըլլալ»: Ուրեմն լեզուական միջոցներով գծել մի տարածութիւն՝ որտեղ մարդկային մարմնին ու մտքին *լինելու* երկրորդ հնարաւորութիւն է տրուած: Դիմել այդ հնարաւորութիւնների*թանգարանին,* եւ ի հարկէ յոյս ունենալ, որ կը գտնես ու կը միաւորես քեզ:

Գ.Պ. Գործը հարկ է ստեղծէ ինքն իր տարածքը, այս ձեւով կարելի է տարազել անգամ եւս խօսքով, լեզուով վայր ստեղծելու խնդիրը: Լեզուին մէջ՝ լեզու, որ ընդհանուր լեզուին մէկ պոթենցիալ կամ վիրտուալ կերպն է, գործի մը մէջ յայտնաբերուած: Անշուշտ, ասկէ անդին միշտ ալ պիտի ըլլան գործեր որ մեզ պիտի թանգարան-հնադարան առաջնորդեն, աւելի ճիշդ ասոր մառանները, իրենց հետ պիտի բերեն բառերու բրածոները: Մեր մէջ չեն պակսիր բառապաշտները, մաքրապաշտները, այսինքն՝ մանրուքի վարպետները: Սակայն միւս կողմէն՝ մտածել որ մեր ստեղծած կամ ստեղծելիք լեզուն պիտի մտնէ լեզուին մէջ, պիտի դառնայ հասարակաց փոխանակութեան միջոցի մէկ մասը կամ պիտի նպաստէ անոր աճին, ասիկա գրագէտէն կախեալ բան չէ: Չեմ ըսեր ցանկալի է թէ ոչ: Ըսեր եմ ուրիշ առթիւ ալ, գրականութեան նպատակը լեզու մը փրկելը չէ, այլ այդ լեզուին մէջ ստեղծել արտայայտութեան, խօսքի նոր հնարաւորութիւններ: Եւ լեզու մը կայ այնքան ատեն երբ կարող է ըսել աշխարհի ամբողջը առանց որեւէ զեղչի: Գրագէտ մը ասկէ չի կրնար հրաժարիլ, կը խորհիմ:

Ա. Պաչեան. Երբ են միատեղւում լեզուն եւ գրականութիւնը: Սերվանտէսի, Դոստոյեւսկու, Կալվինոյի վէպերում յանուն սիւժէտային գծի, տեղեկատուութեան ու պարզութեան լեզուն մի փոքր արտաքսւում է, յետ քաշւում, իսկ Պրուստի, Ջոյսի, Հէրման Բրոխի, Կլոդ Սիմոնի, Գրիգոր Պըլտեանի դէպքում առաջ է բերւում, ամէն քայլափոխի ստեղծւում է, քայքայւում: Մի՞թէ լեզուի ակնյայտ գերազանցութիւնը հիմնաւորապէս չի փոխում արձակի նախնական բնոյթը՝ զրկելով նրան, ասենք, պատմելու ունակութիւնից:

Գ. Պ. Շատ բարդ խնդիր: Որուն համար միանշանակ լուծում չեմ խորհիր որ կայ: Ես պիտի մեկնիմ գրողական արարքէն եւ ասոր յարաբերութենէն լեզուին հետ: Նովալիսէն ի վեր տարածուած կարծիք դարձած է թէ լեզուն ինք կը բանի, ինք կայ միայն, ինք կը մենախօսէ մեր մէջէն: Ասիկա երբեմն

գռեհիկ կերպով կը յայտնուի երբ մարդիկ կը մտածեն որ լեզուն է բանողը, գրողը հոն ենթարկուողի դիրքին մէջ է: Հանրածանօթ իրողութիւն է, որ կայ գրողի ենթակայութիւն, ըսենք գրող-ենթական, արեւելահայ՝ սուբեկտը: Ա՛ն է վէպին, բանաստեղծութեան «հեղինակը», ինչպէս կ՚ըսենք: Ան է տնօրինողը: Եթէ կը նախընտրէ պատմողականն ու տեղեկատուութիւնը, արդիւնքը կրնայ հասնիլ մինչեւ ոստիկանական վէպը: Նման վէպի մէջ, գիտէք, ամբողջ պատմութիւնը տեղեկութեան տնտեսումն է այնպէս որ էականը չտրուի սկիզբէն: Ոստիկանական վէպը տեղեկութիւն կու տայ այնքան որքան պէտք է: Միայն թէ պատմողականը արձակի մէջ ունի իր կողքին նկարագրականն ու վերլուծականը: Գրելու արուեստին յատկացուած հին գիրքերը կը սորվեցնէին, միայն թէ անոնք պատմողական ըսելով կը հասկնային առասպելաբանականը: Նոյնիսկ երբ տեղեկութիւնը մաքսիմում է, միշտ ալ կայ գրութենականը, այսինքն՝ գրուած լեզուն, գրուածքը: Ասով կու գայ շատ անգամ նկարագրականը: Հիներու մօտ նկարագրականը դեկորատիւ հանգամանք ունի շատ անգամ, զարդ կը թուի կամ décor մինչդեռ Սիմոնի կամ Պրուստի մօտ աւելի ուժական է, կը ձգտի նշանակութեան մը բացայայտումին: Ստենտալի մօտ պատմողականը մեծ դեր ունի, բայց վիպասանը շատ անգամ երբեմն երեք-չորս տողնոց զուտ «բանաստեղծական» հատուածներ կը զետեղէ, որոնք կ՚ընդհատեն պատումի արագ ընթացքը: Կարդացէք Բալզաքի նկարագրութիւնները կամ Րաֆֆիի նման երկար էջերը, որոնց վրայէն պատմութիւնը սիրող ընթերցողները կը ցատկեն, քանի կը նկատեն որ ատոնք «աւելորդ» են, հակառակ անոր որ վիպասանին համար անոնք երեւակայական չեն, ունին ճանաչողական նշանակութիւն: Պէտք չէ մոռնալ որ մարդ արարածը պատմութիւն սիրող էակ մըն է, հէքեաթ, առասպել կամ փորձանք-արկած վէպ: Թերեւս նոյնիսկ պատմելը ոչ թէ մտածելուն մէկ տեսակն է, այլ անոր ըլլալու կերպը…: Հարցը դոգաժի հարց է: Նայեցէք ինչպէ՞ս Դեկարթ իր մտածումին պատմութիւնը կը գրէ *Մեթոտի փրամաաութիւն* գրքին մէջ: Ֆլոպերէն ասդին վէպի աւանդութիւն մը ստեղծուած է — աւանդութիւն մը ըսի, հոսանք մը, որ ամբողջ վէպը չէ անշուշտ — որ կը ջանայ պատումը դանդաղեցնել, նուազեցնել անոր տեղը, ջանալ նոյնիսկ զայն ջնջել: Ֆլոպեր կ՚ուզէր վէպ մը գրել «ոչինչի» վրայ հիմնուած: Ըսել կ՚ուզէր միայն լեզուով ու ոճով: Ճիշդ ըլլալու համար ըսեմ որ պատումի դանդաղեցման փորձեր եղած էին արդէն անգլիական վէպին մէջ, նկատի ունիմ Ֆիլդինկի *Թոմ Ճոնզը,* որուն ամեն մէկ գլուխը կը սկսի վիպասանի կամ մենախօսող պատմասանի մը խորհրդածութիւններով, յաճախ պատումի մասին կամ ընթերցողի եւ պատումի, եւայլն: Որքան վէպը սկսաւ դառնալ հիմնական ժանր, գրական լիարժէք սեռ, այնքան սկսան յայտնուիլ խախտումներ — յատկանշական երեւոյթ մըն է ասիկա, գրական սեռ մը կ՚արտադրէ շատ անգամ, գրեթէ իր ծնունդի իսկ օրերուն, զինք հերքող, խախտող կամ խեղկատակող հակասեռը, հակաթոյնի դեր կատարող: Ասկէ կը բխին գրեթէ բոլոր փորձերը պատումը սահմանափակելու, զայն ձեռնելու, բարդացնելու, մասերը շրջելու, ժամանակագրական կարգը խախտելու եւ ասիկա շնորհիւ արձակի միւս երեսներուն. նկարագրութիւն, վերլուծութիւն, խոհագրութիւն: Երբ կը նկարագրես, յստակ է, գործողութիւնը կը դանդաղի, եթէ կանգ չ՚առներ: Օշական աս է որ կ՚ընէ յաճախ իր մեծ վէպերուն մէջ, երբ ներքին մենախօսութեան կերպին տակ նկարագրականն ու վերլուծականը կը խառնէ: Ինքն ալ կը նկատէ որ գործողութիւնը կը դանդաղի: Ուզուածն ալ այդ է: Պրուստէն ետք, Հենրի Ճէյմսի գործողութիւնը կը բերէ նուազագոյնին եւ կեանքի ամենայետին պահերն են որոնք կը դառնան սեւեռումի առարկայ:

Մինիմալ գործողութիւնը, որ դրուագ կը կոչենք, պահի մը մէջ ամփոփուող, ուստի՝ ժամանակը։ Իսկ նոր վէպի վիպասանները, ոչ միայն անոնք՝ նաեւ Բեքէթ, ինչպէս Բլանշոյ, գործողութեան կը վերածեն պատմելն իսկ, վիպելը։ Որով աշխարհը որուն կը յղուէր վիպասանը շատ անգամ կ՚անհետանայ կամ կը վերածուի ուրուանկարի։ Նման արձակ, ուր խոհականը, բանաստեղծականը կ՚իշխեն, իր անունն անգամ ունի, գոնէ իր մէկ այլակերպումին մէջ, կը կոչուի «բանաստեղծական» պատում։ Զապէլ Եսայեանի վիպակները ատ են։ Ասոր մէջ կարելի է զետեղել նոյնիսկ Չարենցի այնքան գովաբանուած *Երկիր Նայիրի*ն։ Արձակ՝ ուր գործողութիւն, կերպարներ, հոգեբանութիւն, դէպքերու խաղածիր բերուած են իրենց նուազագոյնին, ինչո՞վ կ՚ուզէք որ ապրի, եթէ ոչ իր իսկ ստեղծելիք լեզուախօսութեամբ։ Բայց ես կը խորհիմ որ նոյնիսկ նման պարագաներու պատումը ներկայ է, վէպի մէջ տեղաբաշխուած դրուագները կամ ասոնց մնացորդները, մենախօսական կառոյցը, ներքին կապերով կը հետեւին ընթածիրի մը։ Գիրքին մէջ անոնց դիրքը, տեղը բոլորովին անկարեւոր չէ, քանի կառոյցին մաս կը կազմէ։ Եւ կառոյցն է որ կը պարտադրէ պատումի որոշ ձեւ։ Կը յիշեմ Որբունին, որ իր *Ասֆալթը* վէպի մուտքին որպէս նոր վէպի պատկերացման մօտէլ կու տար «պծծըլ» — puzzle— խաղը։ Ըստ այս մոտէլին, գրութիւնը կու տայ բոլոր դրուագները որոնք անհրաժեշտ են պատկերը կազմելու, իսկ այդ դրուագները չեն կազմակերպուած ժամանակի ուղղընթացով։ Ընթեցողն է որ պիտի վերակազմէ ամբողջը։ Ասով հանդերձ դրուագները չեն գար բոլորովին պատահական կերպով, ընդհակառակը չափազանց որոշ, կազմակերպուած կերպով կը յաջորդեն իրարու։ Որքան ալ ամբողջը վերակազմելի թուի, խորքին մէջ ամբողջը կայ իր յայտնուելու կերպին մէջ։ Իսկ այդ ամբողջական պատկերը ի վերջոյ շատ ալ շահեկան չէ, քանի վէպը կարդալէ ետք ընթերցողը կարող է «պատմութիւնը» վերակազմել մտովի։ Նման վէպեր շատ անգամ կը պահանջեն ընթերցողին ուժական, գործօն, ակտիւ մասնակցութիւնը։ Գործողութեան խցկումին պատճառով է որ յաճախ վէպը կ՚ապաստանի «բանաստեղծականի» ոլորտին մէջ։ Ինչպէս կարծեմ Բոդլեր ըսած է. «Միշտ բանաստեղծ մնա՝ նոյնիսկ արձակի մէջ»։ Ակնյայտ է, չէ՞, որ վէպը չափազանց առաձգական, պլաստիք սեռ է, ամեն տեսակ ձեռնածումի կ՚ենթարկուի եւ փիւնիկի նման կը յայտնուի։ Ի զուր չէ որ յունա-հռովմէական վէպերը կը սիրէին «կերպարանափոխութիւններու» թեման։ Վէպին մէջ կարելի է զետեղել գրեթէ ամեն ինչ, փաստաթուղթ, արխիւ, վկայութիւն, ընկերային ու քաղաքական տեսութիւն, նոյնիսկ փիլիսոփայութիւն. տես Հերման Բրոխ, Մուզիլ, Թոմաս Մանն, Սոլժենիցին, եւայլն։ Վէպին այս պլասթիք կողմը, պատումի միուղի ընթացքէն հեռանալու, ըսենք շեղելու ջանքերը նոյն ատեն պատճառ կրնան դառնալ ձախողութեան։ Մեծագոյն ազատութիւնը կը յարուցանէ մեծագոյն դժուարութիւնները։

Ա. Պաչեան. Ինչպէ՞ս կազմաւորուեց «Գիշերադարձ» պատումների շարքի լեզուն։

Գ. Պ. Երկար ընթացքով մը։ Ծրագիրը յղացուած է 70ական թուականներուն սկիզբը, առաջին փորձ մըն ալ եղած է 1971ին, յետոյ ընդմիջումներով մինչեւ 1988, «լուսանկարներու մասին» գրելիք ու չգրած գիրքս։ Բայց ասիկա կանխահաս էր կարծեմ։ Կ՚ուզէի գրել արձակ մը որուն աշխարհը ըլլար ինծի ծանօթ 1945-65 շրջանը, Պէյրութի արուարձաններէն մէկուն մէջ խմբուած մարդոց, հայեր անշուշտ, պատմական Հայաստանէն հոն ապաստանած, 15ի դէպքերէն ետք։ Ասիկա ընդհանուր նիւթն է, իմ գիտցած-ապրածս, ինծի հասածը՝ ատաղձը։ Նպատակս պատմութիւն գրել չէր, ըսենք գաղութի մը պատմութի-

նը, այլ այդ մարդկային խլեակներու կեանքը, մարդոց որոնք շուրջս եղած էին մանկութեան եւ պատանութեան տարիներուս: Քիչ մը ամեն ինչ, արտաքին աշխարհ, ներքին աշխարհ, եւայլն: Միայն թէ բոլոր փորձերս կը մատնուէին ձախողութեան: Պատումը ղեկավարելու դժուարութիւնը կար, կար մանաւանդ անոր հանդէպ մեծ վերապահութիւն մը, որ քիչ մը ժառանգեր էի այդ ժամանակին տիրող Նոր վէպէն, թեքստի աւանդութենէն: Ակնյայտ էր որ պատումի լեզուն պէտք էր նուաճել: Բայց ասիկա այնքան ալ բացայայտ կերպով չէր ձեւաւորուեր մտքիս մէջ: Կ՚անդրադառնայի որ վերլուծումի, գրական ուսումնասիրութեան մը յատուկ լեզուն գեղարուեստական արձակի լեզուն չէր կրնար ըլլալ: Գիտէք, մեր մէջ լրագրողներ կամ պարզ խմբագիրներ, նոյնիսկ վաւերական բանաստեղծներ թերթի լեզուով վէպ կը գրէին կամ կը շարունակեն գրել —անունները զանց կ՚առնեմ— որովհետեւ անոնց համար արձակի լեզուն պարզ փոխանակութեան միջոց է, ատով «կ՚արտայայտեն» իրենց ապրածն ու տեսածը, նոյնիսկ չգիտցածը: Ոտանաւոր, բանաստեղծութիւն գրող մէկը, որ նոյն ատեն գրականութիւն կը վերլուծէ, չի կրնար չնկատել, չգիտակցիլ որ ինչ ալ ըլլայ գրելիքը, երկրորդ լեզուով մը պիտի ըլլայ ատիկա: Արձակը չի վրիպիր այս կանոնէն: Վերը խօսեցանք այդ մասին, չէ՞: Ուստի՝ պէտք էր աշխատիլ այդ ուղղութեամբ: Շատ կանուխէն վերապահ եղած եմ բանաստեղծութիւն-արձակ երկփեղկումին հանդէպ: Զանազան առիթներով փորձած եմ ատոնք խառնել իրարու, կամ ստեղծել «անվստահութեան» մթնոլորտ: Հետզհետէ շահեկան գտայ բանաստեղծութիւն կոչուածին մէջ մտցնել ոչ-բանաստեղծական, եթէ ոչ բոլորովին արձակունակ տարրեր, տեղեկութիւն ըսենք, սեռային, քաղաքական, գաղափարախօսական: Ասիկա ըրած էի արդէն *Տեղագրութիւն քանդուող քաղաքի մը համար*ին մէջ: Ատոր հետեւող բոլոր գիրքերուս մէջ այս շերտը կար, առօրեական, սովորական, նոյնիսկ գռեհիկ շեշտով—ինչ որ գռեհիկ կը նկատուի—, պարզապէս որովհետեւ գրականութիւնն ու իրականութիւնը անջատող խրամատը պէտք էր թէ՛ քանդել թէ՛ ալ տեղափոխել: Ատիկա միշտ կայ, ամեն տեղ, բոլոր լեզուներուն մէջ կամ ներքեւ: Յետոյ կայ նաեւ ձեւի խնդիրը: Քերթողութիւն կոչուածին մէջ ատիկա ակնյայտ է: Իսկ արձակի մէջ շատ յաճախ բոլորովին երկրորդական կը թուի, գոնէ հայ գրականութեան սահմաններուն մէջ: Արդէն ձեւէ խօսիլ կը նշանակէ շատերու համար տուրք տալ… արուեստը արուեստին կոչուած եւ ընթերցողներու մեծ մասին համար անհասկնալի բանի մը: Ուրեմն՝ լեզուի խնդիրը նոյն ատեն ձեւի հարց մըն էր: Սկիզբը, ըսենք մինչեւ 1988ի փորձերս ասոր կը բախէին: Հասկնալի է որ բազմաթիւ անգամներ քիչ մը յուսահատ դադրեցայ այս գեղարուեստական արձակին ուղղութեամբ աշխատելէ: Որոշեցի նոյնիսկ մեկնիլ արձակ բանաստեղծութիւն կոչուածէն, պզտիկ, կարճ, խիտ կտորներէն, որոնց ընդլայնումին վրայ միտքը կրնայ հսկել: Արդէն փորձ մը ըրած էի *Հապուածներ hօր*ով 1976-77 թուականներուն: Եւ այսպէս է որ «Անթիքա»ի մէկ էջը սկսաւ ծաւալիլ, նոյն ատեն ենթարկուիլ ներքին խիստ կանոններու, որպէսզի խօսքը տնտեսուի այնպէս ինչպէս կը մտածէի որ պէտք էր ըլլար: Գիտես, ես շատ չեմ հաւատար ներշնչումի, յեղաստեղծական, յանկարծակի բռնկումներու: Գրելը եթէ չի ղեկավարուիր հսկող մտքէն զիս շատ չի հետաքրքրեր: Արդէն շա՛տ վերապահ եղած եմ դէպի գերիրապաշտներու օթոմաթիք գրուածքը, իբր թէ անգիտակից աշխարհէն եկող, առանց իմացականութեան միջամտութեան: Արդէն երբ արձակը կը գլէ կ՚անցնի քանի մը էջը, կը յայտնուի տագնապը. ինչպէ՞ս ասիկա պիտի ընթանայ, մինչեւ ո՞ւր: Նման հարց ունէի արդէն *Մանիրա*ները գրած ատենս: Չեմ ուզեր երկար դանդաղիլ

այս անցեալ փուլին վրայ, բայց ո՞վ —եթէ կարդացած է— չ՚անդրադառնար որ գոնէ առաջին շարքի կտորները մինչեւ երեսուն էջերու սահմանը կը հասնին: Իսկ առանց պատումի քերթուած մը ինչպէ՞ս ոտքի պահել, երբ չես ուզեր գրել Թումանեանի պէս բալլադ կամ Վարուժանի պէս դիւցազնավէպ, կամ մենախօսական ընդարձակ քերթուած-պոէմա ինչպէս Վալերիի «Երիտասարդ Պարկան»: Լիբանանի պատերազմի ընթացքին՝ հակառակ այն ատեն տիրող մտաւորական հասարակաց կարծիքին —նկատի ունիմ ստրուկտուրալիզմի այն փուլը երբ դարձաւ գաղափարախօսութիւն եւ պատմութեան հերքում— պատմութիւնը կար: Այսինքն՝ խլեակները դուրս նետուած էին անկէ, անոր զոհերն էին ըսենք: Այլ խօսքով՝ կարելի չէր շրջանցել պատմութիւն կոչուածը: Եւ ասոր արդիւնքը եղաւ նշած *Տեղագրութիւն*ս, որ պատմութեան «վերադարձն» էր: Որով պատմութիւնը մասամբ «ընկալելի» կը դառնար:

Խորքին մէջ արձակի մէջ յայտնուող հարցերը քիչ մը տարբեր ձեւով կը յայտնուէին ոտանաւորի կալուածին մէջ: Միայն թէ գեղարուեստական արձակը, իմ ծրագրիս ծիրին մէջ, հարկին տակն էր ներառնել իր մէջ պատումը, անոր հանդէպ ունեցած ամբողջ վերապահութեամբս: Միայն թէ խնդիրը պատմական վէպ գրելու չէր վերաբերեր, պէտք է ըսեմ որ անթափանց եմ այդ տեսակ վէպի հմայքներուն հանդէպ: Ատիկա կասկածելի կը գտնեմ, որովհետեւ գաղափարախօսական զօրաւոր ճնշումներու կ՚ենթարկուի, ըսել կ՚ուզեմ, ազգային, ցեղային, «քրոմոզոմային» նկատողութիւններու եւ ուրեմն պատմութեան ձեռնածում կը թուի ինծի: Անշուշտ, պատմավէպը խնդրական դարձնել ինքնին շահեկան է եւ առիթը պիտի չփախցնեմ օր մը ատիկա ընելու —քիչ մը ըրած եմ արդէն *Կրկնագիր մարդը*ին մէջ—:

*Սեմեր*էն առաջ եղաւ խարխափումի շրջան մը, իսկ անկէ ետք կարծես հորիզոնը պարզուեցաւ, թէեւ ամեն հատոր իր խնդիրները ունէր: Երբեք մէկուն փորձառութիւնը յաջորդին յաջողութեան գրաւականը չէ, քանի կարծես նորէն զերոյէն կը սկսիմ: Նոյնը պիտի ըսէի՝ ուրիշ գրագէտներու փորձառութեան մասին: Ուրիշի կատարածը կրնայ քեզ օգնել, պայմանաւ որ դուն քեզ օգնես, այսինքն՝ աշխատիս, մտածես, փորձարկես: Ասիկա այսպէս՝ որովհետեւ չեմ որդեգրած ծաւալուն, տարիներու վրայ երկարող մենախօսական ընթացք մը —Պրուստեան եղանակը կամ Մուզիլի կերպը—: Ամեն մէկ հատոր սկիզբ մը ունի, վերջ մը ունի, ինչպէս մասեր: Առանձին միաւոր մըն է: Հոգս չէ թէ երբեմն նոյն երեւոյթը կամ նոյն կերպարը վերադառնայ, քանի երբեք նոյնը չէ: Սկիզբը երբեք վստահ չէի որ մէկ-երկու հատորէ անդին պիտի կարողանամ գրել, այսինքն՝ պիտի դիմանամ գրելու հսկայ ճնշումին, կեանքի լուսանցքին ապրելու-տեւելու մտավախութեան, հազար տեսակ մտահոգութեան —գրողական գործողութեան էմպիրիք կողմը—, տրուած ըլլալով որ բազմաշերտ, բազմաձայն խօսքն էր զիս գրաւողը, ինչպէս շատոնց, առաջին շրջանի գիրքերուս մէջ իսկ: Որով գրելը երկար գործողութիւն մըն էր: Նորութիւն չէ ըսածս: Գրելու տաժանքին մասին գրուած են այնպիսի էջեր որ ոչինչ պիտի կարենամ աւելցնել այդ դէզին: Հասկնալի է որ լեզուն, ասոր խնդիրները էական տեղ կը գրաւեն, կարծես կը բեմականանան, բայց կը խոստովանիմ որ ատոնցմով չեմ ուզեր բաւարարուիլ: Ինծի համար արտաքին աշխարհը գոյութիւն ունի, պատմութիւնը՝ նոյնպէս, մարդիկը՝ կերպարի ձեւին տակ՝ կան, բայց լեզուին մէջ, հո՛ն է անոնց տեղը: Ռեւէ կերպար կամ կերպարի անուն կամ կերպարի ձայն կը թուի թէ քեզմէ կը պահանջէ որ լեզուին մէջ տեղ ու վայր տաս իրեն, ըսենք «լեզուաւորես», ժամանակաւորես կամ ժամանակախառնես:

Ա.Պաչեան. Ինչո՞վ է պայմանաւորուած գրականութեամբ աղէտը պատ-

մելու անկարելիութեան հարցը… Չի գտնուում լեզո՞ւն, թէ պատճառը՝ պատմելիքը վերապրելու հոգեվախն է: Կարծիքներ կան, թէ աղէտի վերաբերեալ ստեղծուած գրականութիւնը ձախողուել է: Ինձ միշտ հետաքրքիր է մի հարցադրում՝ իսկ ո՞ր դէպքում մենք այն «յաջողուած» պիտի համարէինք… «Մնացորդացի» չորրորդ հատորը չգրելը, գուցէ *անկարելիութիւն* էր զուտ Օշականի գրողական խնդիրների համատեքստում, որի մէջ ինչու չէ կարելի է տեղաւորել նաեւ նրա անձնական կեանքը, առողջական վիճակը, եւ այլ տարատեսակ դրութիւններ:

Գ.Պ. Ընդարձակ խնդիր է սա, որ յատուկ չէ միայն մեզի՝ հայերուս: Հրէական ողջակէզէն ասդին եւրոպական, ամերիկեան գրականութիւններուն մէջ հարցը արծարծուած է շատ մը գրողներու, մտածողներու, գրականութեան տեսաբաններու կողմէ: Վերջերս լոյս տեսան Սորպոնի դասախօս Ք. Քոքիոյի երկու հատորները Շոայի գրականութեան մասին, ուր այս թեմայի բազմաթիւ երեսները քննուած են կարելի լրջութեամբ, գրականութիւն-փիլիսոփայութիւն ծիրին մէջ: (Ուրիշ հատոր մը որ նոյնպէս պէտք է կարդալ, նկատի ունիմ Մարկ Նշանեանի ֆրանսերէն նոր հատորը՝ *Պատմութեան ենթական, Դէպի վերապրողի երեւութաբանութիւն մը*[1], որ իր շատ մը մասերուն մէջ գրականութեան եւ հայ գրականութեան կը վերաբերի): Մեր մօտ ալ կան Օշականի փորձը եւ խնդրին մասին դիտողութիւնները, նկատի ունիմ *Մայրիներու շուքին փակ* հարցազրոյցին մէջ նշումները, յետոյ այլուր: Նիւթը բաւական մօտէն քննուած է: Պատահած է որ ես ալ գրած ըլլամ այլազան առիթներով, *Մարդ*ին մէջ, նաեւ ֆրանսերէն լեզուով, առանց հարցը սպառած ըլլալու յաւակնութեան: Դժբախտաբար ուրիշ լեզուով եղած այս գրականութիւնը մատչելի չէ «մեր» հիմնարկային աշխատաւորներուն, զանց կ՚առնեմ գրողները: Հիմնական կէտ մը կայ. Աղէտը, ցեղասպանութիւնը կամ եղեռնը կամ ողջակէզը —ինչ անուն ալ տաք ասոր— գրականութեան, մտածողութեան համար տագնապ կը ստեղծէ. ո՛չ գրական արդէն գոյ սեռերը, ժանրերը, ոչ ալ մտածողական աւանդական կաղապարները յարմար կը թուին: Կարելի է նոյնիսկ ըսել որ աղէտը խորհիլ-ըսելու, լեզուի սահմաններու խնդիրները կը դնէ անմիջապէս, վերապրողին թէ գրագէտին համար: Ասկէ ձեր կոչած «անկարելիութեան» հարցը: Հոգեբանները, հոգեվերլուծողները անդադար կը խօսին հոգեխոցէ, հոգեբանական խանգարումէ, որոնք վկան, վերապրողը կը մղեն լռութեան կամ խօսքի տագնապին, ուստի՝ նաեւ գրողը: Ինչպէ՞ս ըսել այն ինչ որ խնդրոյ առարկայ դարձուցած է քու, համայնքիդ, ազգիդ ու «ցեղիդ» գոյութիւնը: Կը յայտնուի վկայութեան հարցը, վերկայացման կամ պատկերացման դժուարութիւնը, քանի սկիզբէն աղէտը պապանձում կը ստեղծէ, խօսքի խորտակում նախքան խօսքին լեզուի գալը: Հոս տեղը չէ անշուշտ խնդրին պատմութիւնը պատմելու, թէեւ այնքա՜ն անհրաժեշտ է: Միայն ըսեմ որ աղէտի ստեղծած դժուարութիւնները բոլորովին նոր երեւոյթներ չեն: Կը բաւէ կարդալ մեր հին պատմիչները, սկսեցէք Եղիշէէն, անցէք Ղեւոնդին, Լաստիվերցիին, հին պատմական պոէմներուն, Առաքել Դաւրիժեցիին: Խնդիրը ներկայ է եւ կը յայտնուի ամեն անգամ երբ մեր ժողովուրդը կը գտնուի մահուան սպառնալիքին տակ: Այսինքն բազմաթիւ անգամներ, երբեմն քանի մը անգամներ նոյն դարու երկայնքին: Այո, 1915ի աղէտը կը գլէ կ՚անցնի թագաւորութիւններու անկումը եւ դեռ ուրիշ դէպքեր, ներառեալ 1895-96ի, ապա Կիլիկիոյ ջարդերը: Կարելի է ըսել որ աղէտը շատ մտերիմ խնդիր մըն է, որուն մասին շատ խորհուած է: Երբ կը խօսինք Օշականէն, գրեթէ առանձնաշնորհեալ կարգավիճակ վերապահելով այս մեծ գրագէտին, պատճառը այն է նախ՝ որ առաջինն է

նման հարցերով զբաղող, ապա՝ անոր մօտ կիրառական աշխատանքին կ՚ընկերանայ մտածողականը, որ մեր առջեւ կը դնէ աղէտի պատկերացման հիմնահարցը եւ ասոր յարակից խնդիրներ: Օշականի «ձախողութիւնը» մտածումի առիթ է: Կը նշանակէ, ի միջի այլոց, որ կարելի չէ նիւթին մօտենալ, զայն վիպել կամ ճշմարտել ջանալ, առանց մտածողական աշխատանքի, առանց հեռաւորացման: Մեր գրականութեան մէջ կան աղէտին վերաբերող գործեր որոնք արժանի են մեր ուշադրութեան: Չեմ կարծեր որ անպայման «յաջողութեան» խնդիրը կը դրուի: Ըսել կ՚ուզեմ՝ անոնք «աւետարան» չեն եղած, աղէտի «սուրբ գրքի» դեր չեն կատարեր: Օտեանի *Անիծեալ տարիները*, Անտոնեանի գրութիւնները, Եսայեանի *Աւերակներուն մէջ*ը թեման լայնօրէն եւ անհատական ընկալումով բերած են գրականութեան: Հարցը այն է որ մեր գրողներուն մեծ մասը, քսանական, երեսունական թուականներուն, նկատի ունիմ Սփիւռքի գրողները, քանի նոյն թուականներուն նիւթը քաղաքականօրէն եւ անշուշտ գեղարուեստականօրէն արգիլուած էր Սովետական Հայաստանի մէջ — Չարենցի *Դանթէական առասպել*ը գրեթէ հեռաւոր յուշ էր այն ատեն—, աղէտը կը մտածեն իբրեւ պատկերացման առարկայ, երբ աղէտը ո՛չ առարկայ է, ոչ ալ պատկերելի: Օշականի *Մնացորդաց*ի չգրուիլը կը բխի այս տեղէն, ըստ իս: Աղէտը չապրողը - Օշական թաքստոցի մէջ ապաստանած է 1915-1917 եւ նոյնիսկ այդ թաքստականի կեանքը չէ գրած… - կը մտածէ պատկերացնել կամ ալ վկաներու աներեւակայելիօրէն մեծ թիւ մը խօսեցնել, կարծէք թէ խօսողներու մեծ ամբոխ մը աւելի շատ բան պիտի ըսէր: Օտեան սպառիչ երգիծանք ունի այս մասին: Բոլոր վերապրողները կը կարծեն իւրայատուկ բաներ ապրած ըլլալ եւ երբ կը խօսին, կ՚ըսեն նոյնը: Չեմ մանրամասներ: Կարելի չէ ըսել որ Գալշոյեանի, Դաշտենցի «էրկիրը» պատմող վէպերը կամ Վահագն Գրիգորեանի *Ժամանակի յորձանքը* շահեկան չեն: Խորքին մէջ լաւ գրուած են: Միայն թէ երբ կը խօսին դէպքերէն, տեղերէն կամ կերպարվկաներէն, չեն յաջողիր մեզի փոխանցել «անասելիին» տագնապը, այսինքն՝ այն ամբողջը որ դուրս կը մնայ գրքի ընդգրկումէն: Բոլորին համար աղէտը իբր թէ դէպքեր են, իրողութիւններ, կոնկրետ տուեալներ, երբ դէպք, իրողութիւն, տուեալ, փաստ հաւանական ճշմարտութեան մը բոլոր տարրերը շատոնց ենթակայ են ջնջումի կամ անհետացումի: Վէպը մտածումի չափազանց պլասթիք կաղապար մըն է, ըսուեցաւ արդէն, որ բոլոր հնարաւորութիւնները ունի մտածման գետին մը եւ միջոց մը ըլլալու: Փորձառական հիանալի դաշտ մը: Ձեւ մը՝ որ ձեւ չունի եւ որ դուն պիտի ձեւաւորես, ըստ այն ատաղձին որ կը կարծես քուկդ: Ուրեմն՝ կը պակսին գրողները, Օշական կ՚ըսէր՝ «վիպող ուժը», ես պիտի աւելցնէի՝ կը պակսի հարցադրութիւնը: Իսկ եթէ հրաժարինք պատկերացումէն, եթէ հրաժարինք ուղղաձիգ պատումէն, եթէ մերժենք ժամանակագրութիւնը… եթէ հրաժարինք թեմայէն իսկ, ուղղակի եւ ճակատային մօտեցումէն թերեւս անկարելիութենէն կը ծնի «շանս» մը:

Ա. Պաչեան. Մի փոքր խօսենք արդի հայ վէպի, առ հասարակ մեր վիպարուեստի աւանդոյթի կամ դրա բացակայութեան մասին: Ակադեմիական եւ դրանից դուրս առկայ միջավայրերում հիմնականում գործածուող արեւելահայ վէպի լաւագոյն օրինակները սակաւ են՝ Չարենցի «Երկիր Նայիրին», Գուրգէն Մահարու «Այրուող այգեստանները», նաեւ ներառում է Կոստան Զարեանի «Նաւը լերան վրայ», մի քանի պատմավէպ, մի քանի վիպակ եւ ցանկը եզրափակում է – աւելին՝ Հրանտ Մաթեւոսեանը հարցազրոյցներից մէկում ասում է՝ «Իսկ գուցէ այդ ձեւը ընդհանրապէս հակացուցուած է հայերէնին: Գուցէ հայերէն ընդհանրապէս հնարաւոր չէ ճիշտ վէպ գրել» (1980 թ.):

Եթէ ճիշդ վէպ գրելու խոհով ենք առաջնորդւում, ուրեմն մեր գիտակցութեան մէջ ունենք ճիշդ վէպի անձնական, ընտրած օրինակներ։ Այնուամենայնիւ գրականութեան պատմութեան մէջ, այսպէս ասած, ճիշդ վէպերի համարում ունեն միայն վիպարուեստում նոր ճանապարհներ հարթած գործերը։ Օրինակ Ռաբլէի «Գարգանտուան և Պանտագրիւէլը», Սերվանտէսի «Դոն Կիխոտը», Սթէռնի «Թրիսթրամ Շէնդին», Ֆիլդինկի «Թոմ Ճոնզը», Պրուստի վիպաշարը, Ֆլոպերի «Տիկին Բովարին», Ջոյսի «Ուլիսէսը», Ռոբերտ Մուզիլի «Մարդը առանց յատկութիւնների» գիգանտ-վէպը, Կաֆկայի «Դատավարութիւնը» եւ այլն... եւ սրանց միջեւ այլ, բազում հրաշալի վէպեր, որոնք միայն երեսանց շրջադարձային չեն եւ ոչ էլ նմանօրինակ յաւակնութիւններով են օժտուած։ Ուրեմն գլխաւոր անջրպետը կրկին լեզո՞ւն է՝ հայերէ՞նը, որին մատնանշում է Մաթեւոսեանը, նմանապէս՝ արեւելահայ վէպում էպիկական պատումի հարցը, որի բնոյթն ու ընկալումը այլեւս խիստ պայմանական են։

Գ.Պ. Ծանօթ չեմ Մաթեւոսեանի այդ յայտարարութեան, ոչ ալ խօսքի շրջարկին։ Շահեկան է նորէն, մտածելի ըլլալուն համար, ոչ թէ առաջարկած կամ վարկածի ձեւով տուած պատասխանին։ Այս մասին խօսելէ առաջ գուցէ անհրաժեշտ է անդրադառնալ «վիպարուեստի աւանդոյթի բացակայութեան» ինչ կը վերաբերի արեւելահայ վէպին։ Նախ՝ արեւելահայ վէպը աւելի հին է քան արեւմտահայը։ Պիտի չկրկնեմ ինչ որ կայ դասագիրքերու մէջ, *Վէրք Հայաստանի*էն սադին։ Ճիշդ է որ մինչեւ *Երկիր Նայիրի* —ես այնքան խանդավառ չեմ այդ պոէմանման վէպով, բայց ասիկա ուրիշ խնդիր է— եղածները ժանրը կը պարտադրեն բայց «ճիշդ վէպ» չեն կարծես. Րաֆֆի, Մուրացան, Նար-Դոս վէպի լեզու մը կը յօրինեն աւելի քան Աբովեան, որուն «մեղքը» հիմա թափանցիկ կ'երեւի, աւելի քան վէպի հրատարակութեան օրերուն. անընթեռնելի է։ Պատճառը ուրիշ բան չէ եթէ ոչ ընտրած բարբառային խառնակ լեզուն որ չյաջողեցաւ ինքզինք պարտադրել ու պարտադրել վէպը։ Հոն ուր անհրաժեշտ էր ընդհանուր, ինչու չէ՝ քաղաքային — չըսի քաղաքական— լեզուն այնտեղ վէպին հեղինակը ընտրեց մասնաւորը, մասնակին, այնպէս որ վէպը չդարձաւ «համայնական», ըսել կ'ուզեմ համահայկական։ Այլ հարց՝ որ պատմութիւնը առասպելականացնելու ձգտումը այս քաղքենի ժանրին ներհակ էր։ Աբովեանի վէպը զուրկ ալ է հեգնանքէ, պարոտիայէն, երկխօսական կառոյցէն, հեռաւորացման սկզբունքէ, այն որ կը բանի ձեր նշած արեւմտեան վէպերուն մէջ, Սերվանտէսէն սկսած։ Սպանացի վիպասանը վէպի ի՞նչ աւանդոյթ ունէր. ասպետականը, որուն դէմ երգիծելով եւ անշուշտ անոր կցուելով է որ կը գրէ եւ անոր խնդրականացումով կը յօրինէ վէպի նոր լեզու, այսինքն՝ նոր վէպ։ Ռապըլէին վրայ չեմ դանդաղիր, պիտի չդանդաղիմ անգամ սպանական միւս «պիգարեսքական» հիանալի վէպերուն։ Աբովեա՞ն։ Հարցը կը փոխադրէ գրաբար-բանաւոր բարբառի կալուածը, որ նոյն ատեն վէպի լեզուի խնդիրին շատ մասնայատուկ ներկայացումն է։ Քանի՝ Աբովեան վիպային լեզուի նուաճումը կ'առնչէ միայն ու միայն բանաւորի գրականացման։ Շահան Շահնուր, դար մը ետք, *Նահանջ*ի մէջ պիտի կատարէ բան մը, Նարեկացիի քննադատութիւն-երգիծանքը, որ պիտի ուզէինք Աբովեան կատարած ըլլար, իր միջոցներով։

Կարծես հոս է որ Մաթեւոսեան կը մնայ աւանդոյթի հովանիին։ Հայերէնի խնդիր մը կը դնէ ըստ երեւոյթին։ Հայերէնով վէպ հնարաւոր չէ՞։ Կամ հայերէնը ներհակ է վէպի՞ն։ Ինչպէ՞ս հասկնալ ասիկա։ Արդեօ՞ք վիպասանի մը համար վիպային լեզուն կայ արդէն տուեալի ձեւին տակ լեզուին մէջ, իր տրամադրութեան տակ, սանկ գործիքի՞ մը պէս։ Ի՞նչ կը պակսի հայերէնին.

վիպականացնելու հնարաւորութի՞ւնը: Մի՞թէ լեզուն է վիպականացնողը: Ի՞նչ է այս բնածին «անատակութիւնը» որ կը վերագրուի հայերէնին եւ այդ պակասին պատճառով վէպ, «ճիշդ վէպ» կարելի չէ եղեր: Մաթեւոսեան կը հաւատա՞ր ասոր իսկապէս: Ամեն պարագայի՝ թերահաւատ կրնամ ըլլալ միայն լեզուի նման «բնազանցական», սուպստանցիալ պակասին հանդէպ, կարծես թէ ուրիշ շատ մը լեզուներու մէջ վէպի գոյութեան հնարաւորութիւնը կար ըստ բնութեան: Արդ՝ եթէ հայերէնին կը պակսի այս հնարաւորութիւնը, ես կը հանեմ եզրակացութիւնը՝ հայերէնը լեզու չէ… Ի՞նչ է այն ատեն: Գուցէ ահնիձորեան բարբառ մը:

Իրաւացի էք երբ «ճիշդ վէպը» կ՚ընդգծէք: Վէպ մը՝ զուտ վէպ: Միայն վիպո՛ւմ, ֆիքսիո՛ն: Ո՞ւր է այս վէպին ճշդութիւնը: Յայտնի չէ: Գուցէ վէպի ընդհանուր պատկեր, որ վիպասանը կը գտնէ այնքան տարբեր գրագէտներու մօտ ինչպէս են Տոլստոյը, Ֆլոպերը, Լագլոն, Ֆիլտինկը, Ֆոլքները, եւայլն: Բայց կա՛յ իսկապէս նման ընդհանրական միաւոր: Ո՞վ չի գիտեր որ ժանր կոչուածը յարաբերական ամբողջ մըն է, տարաբնոյթ օրինակներով: Ոչ մէկ գրական երկ իր ժանրի բացարձակ նմոյշն է: Մոտէլը վերացարկուած, իրացուած բան մըն է միայն, որ էտալոնի դեր կը կատարէ կամ ցուցանիշի եւ կ՚ենթադրէ շեղումներ: Շեղումներն են բնորոշը, ոչ կանոնականի վերարտադրութիւնը: Իսկ վէպը, ասոր ամբողջ պատմութիւնը փաստ, ցոյց կու տայ բաւականին մեծ պլասթիք հնարաւորութիւններ: Արդէն խօսեցանք այս մասին: Վէպի մէ՛կ տեսակ չկայ, այլ կան վէպեր, քանի կան վիպային լեզուներ: Եկէք խօսինք ո՛չ թէ մէկ վէպէ, ո՛չ թէ հայերէնի երեւակայական թերիէն, այլ վիպային լեզուէ: Վիպային լեզուն կամ լեզուները վիպասանները կը յօրինեն, իբրեւ լեզուախօսութիւն, ճիշդ ինչպէս փիլիսոփայութեան լեզուն կը յօրինեն փիլիսոփաները, ըստ պահանջի, ըստ իրենց գրողական, մտածողական կարողութեան, ըստ մտքի զօրութեան: Ի՞նչ կապ հայերէնին ու վէպի լեզուին, յղացքին: Եթէ ըսեմ. «հայերէնով ճիշդ վէպ հնարաւոր չէ քանի որ հայ ազգը կարող չէ ինքնիշխան ըլլալու», արդեօ՞ք իմացական կերպով ընդունելի հաստատում ըրած կ՚ըլլամ: Երբե՞ք: Պարզապէս վարկած մը գրած կ՚ըլլամ, որ հարկ պիտի ըլլայ ապացուցել, փաստարկել: Այլապէս անիկա կը մնայ ֆանթեզի կամ կը դառնայ ֆանթազմ: Հարկ է հարցը փոխադրել հայերէնի մակարդակէն —կոպիտ մօտեցումէն— լեզուական մակարդակին, լանկաժին, ինչպէս ըսի:

Վիպային լեզուն դո՛ւն պիտի ստեղծես, պիտի յօրինես եւ ոչ զայն գտնես որպէս լեզուին մէջ արդէն պատրաստի գործիք: Կարող ես զայն սորվիլ… Սերվանտէս կամ Ֆոլքներ կարդալով: Իսկ սորվելէ ետք՝ պարտաւոր ես քու լեզուդ գտնել: Միայն երկրորդական վիպասանները, բանաստեղծները, քննադատները հետամուտ կ՚ըլլան պատրաստիին: Ի վերջոյ հեշտ է պատրաստի տան մէջ բնակիլ… ինչպէս տնային հայերէնի, որ տեսակ մը Խոր Վիրապ է: Հասկնալի է չէ՞ վիպային լեզուն «բնական», մօրենական լեզուին հետ շատ հեռաւոր կապեր ունի, ցեղային հիմունք չունի, ինչպէս Մաթեւոսեան կը թելադրէ ակամայ, գրեթէ բոլոր անոնց պէս որոնք «ցեղ, ազգ, պետութիւն, եկեղեցի» կը մտածեն որպէս բնական «տուիք» եւ ոչ հոլովոյթ, որպէս էութիւն քան թէ լինելութիւն, պատմութիւնն ալ որպէս ճակատագիր: Աւելի լաւ պիտի չըլլա՞ր եթէ վիպասանը աշխատելու իր անատակութիւնը չվերագրէր հայերէնի անատակութեան վէպի լեզու հայթայթելու: Ի՞նչ կրնայ ըլլալ այդ վիպական լեզուն: Նախ՝ առարկայի, իրականի, աշխարհի հետ յարաբերութեան տեսակ, թեմայի ներկայացում, կերպարներու հանդէպ կեցուածք, ձայնի կամ ձայներու դիրքորոշում, դիպաշարի կամ խաղածիրի կառուցում: Ահա բաներ որ մենք քիչ

անգամ կը գտնենք «մեր» վիպասաններուն մօտ, որոնց ջախջախիչ մեծամասնութեան համար վէպը արտայայտութեան միջոց է, աշխարհը կամ հասարակութիւնը պատկերացնելու հայելի եւ քիչ անգամ մտածելու կերպ, ըսել կ՚ուզեմ արուեստ: Արձակը արուեստ: Ասիկա չէ՛ սկանտալը, քանի շատոնց է որ մեր մօտ արձակը կը գրուի թերթի յօդուածի պէս կամ ճառի եւ որեւէ ներքին, ինքնակաց կանոնի չ՚ենթարկուիր: Թոյլ տուէք աւելցնեմ. վիպասան մը երբ արուեստի, վիպարուեստի խնդիրներ չի դներ ինքն իրեն համար եւ կը զբաղի «քրոմոզոմային» գաղափարախօսութեամբ` հազիւ թէ կարողանայ իր նիւթին հանդէպ ունենալ գերիշխան ազատութիւն:

Ա.Պաչեան. Օշականի «Մնացորդացը», Որբունու «Հալածուածները», Պըլտեանի «Գիշերադարձը»... արդեօք արեւմտահայ արձակում շղթայական վէպի կառոյցը, (վիպաշարութեամբ) ժամանակն ու տարածութիւնը տեւականօրէն համադրելու նպատակ ունի, որտեղ պատկերահանւում են ժամանակի մէջ մեռնող ու վերափոխուող իրականութեան ձեւերը – վիպաշարի իւրաքանչիւր հատոր ասես առանձին ժամանակ է, որ յիշատակում է միւս կորուսեալ ժամանակների ներկայութիւնը:

Գ.Պ. Դուք ընդհանրութիւններ կը տեսնէք այդ երեք ծրագիրներուն կամ ի՞նչ գիտնամ երեք իրագործումներուն միջեւ: Գուցէ կան: Արեւմտահայ վէպը Օշականէն առաջ գրեթէ գոյութիւն չունի: Մատի վրայ կարելի է հաշուել ատոնք, եթէ մէկդի ձգենք Շիտանեանները, Սմբատ Բիւրատները, Օտեանի պոլսական վէպերը, այսինքն՝ ոճիր-արկած ու բարքի վէպի արտադրութիւնը: Յետոյ եկան Մալխասի պատանեկան բխումները...: Արեւմտահայ վէպի բացակայութեան պատճառները բազմաթիւ են, չեմ դանդաղիր: Սուլթանական գրաքննութիւնը ո՛չ մէկ ձեւով թոյլ կրնար տալ ընդարձակ կառուցումներու, որոնց մէջ վիպասանը յայտնօրէն ըսելիք պիտի ունենար: Կամսարականի, Երուխանի վէպերը Օշականէն առաջ աւանդոյթ մը չէին ստեղծեր, բայց կային, ի հարկէ: Օշականի մօտէլը արեւմտեան էր: Ի վերջոյ վէպը ընդծին սեռ մը չէ մեր գրական աւանդութեան մէջ, ուղղակի առասպելաբանութենէն չէր ծներ կամ ասպետական աւանդութենէն: Մենք նման աւանդոյթէ զուրկ ենք: Աս ալ աղէտ մը չէ՛: Կ՚անցնիմ: Սիքլիք վէպի գաղափարը կը սեռի Պալզաքէն: Միայն թէ Օշականի առաջին եռագրութիւնը, *Հարիւր մէկ տարուանը*, սիքլիք չէ, այն իմաստով որ կերպարները նոյն միջավայրին մէջ չեն շրջագայիր ու չեն վերադառնար, տարբեր կացութիւններու ենթակայ: Երեք վէպերու մեկնակէտը նոյնն է. Մոխիրնոցը, այսինքն՝ հարիւր մէկ տարուան դատապարտուածներու բանտախուցը: *Մնացորդաց*ը նման վիպաշարք չէ, գոնէ իր ներկայ ձեւին մէջ: Համապարփակ, համապատկերային ըլլալու ձգտումը սակայն յստակ է. Հայութեան մէկ մեծ հատուածին կեանքը 1850էն մինչեւ 1915: Այսինքն՝ ինչ որ *Համապատկեր արեւմտահայ գրականութեան* տասը հատորները կը յաջողին պատկերացնել, գրագէտներու եւ գործերու ընդմէջէն: Օշական արդէն կ՚ըսէ որ այս վերջին գիրքը վէպ մըն է... ի հարկէ իւրայատուկ, աւելի մտաւորական վէպ մը քան գործողութեան վրայ հիմնուած: Բայց քանի որ Օշականի համար գործողութիւնը երկրորդական դեր ունի, մենք կրնանք *Համապատկեր*ը նկատել *Մնացորդաց*ի ծրագրին մէկ նորոգ, մտածողական իրականացումը:

Ա.Պաչեան. Հապա Որբունի՞ն:

Գ. Պ. Որբունիի ծրագիրը աւելի համեստ կը թուի, քանի *Հալածուածները*—վեց հատորով— նկատի ունին եղեռնէն վերապրողները, այսինքն՝ իրենց արմատները-կորսնցուցած մարդիկը: Որբունիի գործը կ՚ընդգրկէ յետ-եղեռնեան ժա-

մանակաշրջանը։ Սիքլիք վէպի բնոյթ ունի, քանի մէկ վէպէն միւսը որոշ ակնար-կութիւններ կան, բայց կերպարներու շրջագայումը այնքան ալ տինամիք չէ։ Վէպերը առանձին միաւորներ են, բոլորն ալ սակայն կը յենին աղէտին, նախ՝ չրսուած *Փորձը*ին մէջ 1929ին, յետոյ գրեթէ թեմայի վերածուած *Թեկնածու*ին մէջ 1967, առաջին հատորի հրատարակութենէն քառասուն տարի ետք։ Ասոնց-մէ անջատ կայ տակաւին *Եւ Եղեւ մարդը*, որ գրուած է նոյնպէս պատմական աղէտի խորքին վրայ։ Անշուշտ, համապարփակ վէպերու ծրագիրներ եղած են ուրիշ գրողներու մօտ. Շահնուր՝ *Պատկերազարդ պատմութիւն հայոց*, Հրաչ Զարդարեան՝ *Մեր կեանքը*, եւայլն։ Ինչպէս Սարաֆեան կ՚ըսէ տեղ մը, անդա-դար փոփոխուող ու շիջող գաղութային կեանքը արձանագրելուն կը միտին այս վէպերը, այսինքն՝ աքսորական հաւաքականութիւններուն։ Ուրեմն՝ ո՛չ թէ անցեալ ժամանակի որոնում, այլ ներկայ օրերու արձանագրութիւն նախքան անոնց կորուստը։ Հետաքրքրականը այն է որ Փարիզի գրողներու սերունդը գիտէր Օշականի ծրագիրը, բայց զայն չէր «ժառանգած»։ Մանաւանդ որ Օշա-կանի ծրագիրը կը վերաբերէր աղէտին եւ 1930ի սերունդը այդ մասին չէր ու-զեր կամ չէր կրնար իսկ խօսիլ։ Շուշանեանը հետաքրքրական էջ մը ունի այս «անկարելիութեան» վերաբերող իր *Ալեկոծ պարիններ*ուն մէջ։ Բայց այդ էջը գրելէ ետք չես գիտեր ինչո՛ւ կը վերադառնայ իր թացիկ վիպերգութեան յան-կերգին։ Անլրջութեան աւելի մեծ փաստ… Ժառանգումի խնդիրը կարեւոր է անով որ Որբունիի նման վիպասան մը սկիզբը չի հասկնար Օշականի ծրագի-րը եւ անշուշտ քառասուն տարի կը փնտռէ ձեւը վիպաշարքը վերստին սկսելու համար, մեկնելով նորէն Պրուստէն, Նոր վէպէն, Վ. Վուլֆէն, բոլորովին անգի-տանալով Օշականը։ Որ այսպէս ալ աւանդոյթ չեղաւ իրեն համար։ Որբունիի մօտ ինչպէս Օշականի վէպի լեզու մը ստեղծուած է անշուշտ, բայց վիպասանի մօտ հայերէնի խնդիր մը կայ… որովհետեւ ան է որ բոլորովին տիրապետու-ած չի թուիր, եթէ խմբագրումի անհրաժեշտ գործ մը չըլլայ։ Կը տեսնէ՛ք որ հայերէնն ու վէպի լեզուն բոլորովին տարբեր բաներ են, նոյնիսկ երբ վէպը կը գրուի արդէն տուեալ բնական լեզուի մը մէջ։ Ի դէպ՝ պէտք է յուսալ որ օր մը Որբունիի *Հալածուածները* կ՚ամփոփուին մէկ-երկու հատորի մէջ եւ ընթեր-ցողը առիթը կ՚ունենայ գնահատելու վիպասանին կատարած աշխատանքը։

Մեր զրոյցին սկիզբը կարծեմ խօսեցայ արձակներու շարքին մասին որ հի-մա *Գիշերադարձ* կը կոչուի։ Անունը միաւորելու փորձ մը չէ անշուշտ, քանի ինչպէս նկատած էք ամեն մէկ հատոր առանձին միաւոր մըն է եւ կարելի է կարդալ իբրեւ այդ, իր ներքին լոժիքն ունի, իր հարցադրութիւնը։ Բայց կեր-պարներու շրջագայումը, տեղերու նոյնութիւնը, որոշ խնդիրներու վերադար-ձը սիքլիք վէպ կը յիշեցնեն։ Ինչո՛ւ ոչ։ Ինծի համար տեսակ մը մտաւորական հաճոյք է վերստին գտնել կերպար մը կամ լսել անոր ձայնը հոն ուր չի սպա-սուիր։ Ըսեմ, գաղտնիք չէ, ինծի համար ամբողջը կայ նոյն ատեն եւ անգամ մը յիշուած կերպար մը քանի մը հատոր ետք մէկէն կը յայտնուի եւ իր ձայնը կը գտնէ, իր պատմութիւնն ու տեղը կ՚ուզէ։ Թէ ինչո՛ւ նման համապարփակ գրու-թիւններու շարք կը գրուի, իննիսունական թուականներէն աւդին, այսինքն՝ 1915էն ութսուն տարիներ ետք, ինծի չի մնար բացատրել։ Նշեմ պարզապէս որ շարքի յղացքը մաս կը կազմէ պատումի յոգնակիութեան։ Ոչ թէ մէկ պա-տում, այլ պատումներ։ Ասոնց յաջորդականութիւնը, կարգը, պայմանական են։ Երեւակայեցէք ընդարձակ որմնանկար մը, անոնցմէ մէկը որ իտալա-կան Վերածնունդին կը սիրէին նկարիչները, որուն զանազան մասերը զիրար կ՚ամբողջացնէին։ Ֆլորանսի մէջ նման որմնանկարներ շատ կան։ Բայց մէկ «ամբողջական» պատկերի հեռանկար չեմ ունեցած, ինչպէս որ մէկ ժամանակ

եւ ժամանակի ընթացք զիս չեն գրաւած: Ինչ կը վերաբերի պատումին՝ ան ալ կտրատուած, երբեմն փոշիացած ձեւով կայ, կիրարկուած է քիչ մը որպէս վէպի քննադատութիւն, ըսենք քննարկում… ինչպէս ատենին հակաքերթուածը կը բանէր իբրեւ քերթուածին ու քերթողութեան մէկ «քննական» կերպը: Կը տեսնէ՞ք. չեմ փոխուած: …Կերպը փոխուած է, եղկը չէ փոխուած: Աւելցնեմ նաեւ հետեւեալը. որքա՜ն ուսանելի բան կայ Օշականի, Որբունիի մօտ, կամ իմ ու մեր նախորդներուն մօտ, հայ թէ օտար արձակագիր, բանաստեղծ կամ փիլիսոփայ — մտաւորական կալուածները կը թափանցեն իրարու, Կոստան Զարեան կը խօսէր միջներգործումէ, որ արձակին բախտն է: Նոյն ատեն այս բոլորը քննելի, խնդրարկելի են, որովհետեւ ինծի համար գրելը իմացական գործողութիւն մըն է: Ասոր ընթացքին աւանդոյթը կը ստեղծուի, չի ստացուիր միայն: Ստացածդ բեռ է, ստեղծածդ՝ արարք:

Ա.Պաչեան. Սիւզըն Սոնթագը իր «Օրագրերի» երկրորդ հատորում գրում է՝ «Միայն մի դէպքում իւրաքանչիւր մարդ կարող է արուեստագէտ համարուել – եթէ արուեստը բացառապէս ընկալուէր որպէս պերֆորմանս – կամ դէն նետելու մի բան»: Ֆուտուրիստները կոչ էին անում ծովի տակ թաղել Վենետիկը, մերժել Դանտէին, մերժել անցեալից ժառանգած «արժէքի» աղէտալի կարօտաբաղձութիւնը: Սիւրռէալիստներ Անդրէ Բրէտոնը, Պոլ Էլիւարը, Լուի Արագոնը հանրութեան առջեւ ցնծում էին Անատոլ Ֆրանսի մահը՝ նրան համարելով ֆրանսիական գրականութեան փտած դիակ եւ ի սպառ բացասում վէպի արուեստը: Անցնում են տարիներ եւ ահա, հետահայեաց ընթերցանութեամբ պարզւում է, որ Բրէտոնի «Նաճան», (որ ի հարկէ մօտ է վէպի ժանրին) նրա լաւագոյն գործն է, իսկ Լուի Արագոնը ընդհանրապէս իր առաջին եւ վերջին շրջանի վէպերով համարւում է XX դարի Եւրոպայի ամենահետաքրքրական արձակագիրներից մէկը – սրանից ելնելով կարո՞ղ ենք ասել, որ գրականութեան (վէպի, բանաստեղծութեան) պատմական-աւանդոյթը պարզապէս չի կարող շրջանցել այն մարդուն, ով գրում է եւ գրելու ունակութիւն ունի, ուստի *արարքը*՝ ինչքան էլ ինքն իրեն աւանդոյթից դուրս դնի՝ որպէս *դէն նետելիք* ենթարկւում է նրա յիշողութեանը եւ շարունակում այն:

Գ.Պ. Գրական կեանքի մէջ, արարքը, ժեստը, պայթուցիկ յայտարարութիւնը, մանիֆեստը եւ ուրիշ «կատարումներ» գրականութիւնը դուրս կը բերեն սենեակներէն, գրասենեակներէն դէպի փողոց, թերթ, քաղաք, այսինքն՝ դէպի հասարակութիւն: Ներկայիս street art կոչուածը նման ծրագրի կը հետեւի: Ապազգայապաշտները, Մարինետտին ամենէն աւելի, այդ արարքներուն հեղինակն է: Աւելի ծանօթ է իր այդ աղմկարար գործունէութեամբ քան իր գրական գործերով, որոնք անպայման անշահեկան չեն: Երեւոյթը սկսած է աւանգարդի աւանդութեան ստեղծումով, ըսենք մօտաւորապէս XIX դարուն վերջերը, երբ մանիֆեստը դարձաւ գրական դպրոցի մէկ ցուցանիշը: Անկէ ասդին գրական թէ արուեստի խմբակները իրենք զիրենք կը նկատեն յառաջապահ զինուորները պատերազմի դաշտին վրայ, իրենց չհետեւողները կամ «հինները» յետադիմական են: Ժամանակին, XVII–XVIII դարերուն հիները յոյն ու լատին դասականներն էին, որոնք մոտէլի դեր կը կատարէին: Աւանգարդը մոտերնիզմի ուղղակի «արտայայտութիւնն» է եւ կը նկատուէր անոր ըլլալու կերպը: Բոլոր աւանգարդները սահմաններ կ՚որոշէին, սա կամ նա արժեչափը կը հաստատէին: Որովհետեւ անշուշտ ունէին կամ կը յաւակնէին ունենալ տեսական ալ հիմունքներ: Բոլոր գրողներն ու արուեստագէտները որոնք «մեր հետ» չեն, արուեստագէտ չեն…: Հիմա աւանգարդներու վերջալոյսն է կարծես: Հի-

մա մանիֆեստ կը գրեն առանձին գրողներ...: Բռունցքի հարուածը, գրգռութիւնը կամ պերֆորմանսային ելոյթները որ կը տեսնենք երբեմն համացանցի վրայ, վճռական չեն թուիր: Շահեկանը այն է որ գրականութեան պատմութիւնը տասը-քսան տարին անգամ մը կը վերադասաւորէ «արժէքները», ինչպէս թանգարանի մը տեսչութիւնը՝ ցուցադրուած առարկաները, ինչպէս հրատարակչատուները վիպասանները: Ինչ որ անշահեկան կը թուէր երէկ եւ կը ժխտուէր, յանկարծ կը ստանայ գոյութեան իրաւունք: Բռունցքը չի բաւեր, չի բանիր: Ի հարկէ կը յայտնուին այսպէս «նոր» գրողներ, որոնք պարզապէս մոռցուած էին կամ ետ մղուած ներկայի բեմէն: Առաջին պլանի վրայ չեղողները կարծես վրէժ կը լուծեն: Ամեն պարագայի՝ գրականութիւնը տեւական վերիվայրումի տեղ մըն է, ըսեր եմ, տեսակ մը մրցադաշտ, ուր հինն ու նորը, մերժուածն ու ընդունուածը կը խառնուին իրարու, երբեմն նոյնիսկ տեղի կ՚ունենայ շփոթ: Իրողութիւն է որ բռունցքը բան մը կը փոխէ, կը քանդէ, որպէսզի կառուցէ, ի հարկէ Վենետիկը երբեք չի յաջողիր տապալել, բայց Վենետիկի շուրջը, մէջը կը գրաւէ, ուստի կը փոխէ նաեւ աւանդական կոչուածը: Որպէս այդ կայ: Չի մոռցուիր: Այսինքն՝ դուրս նետուածը կը մտնէ «հիմնարկին» մէջ, կը մերուի կամ կը համարկուի —բան մը որ մեր մէջ շատ դժուար կը կատարուի, քանի ֆեթիշներու պէտք ունին մեր հիմնարկները որպէսզի տեւեն կամ տեւելու պատրանքն ունենան: Թանգարանը նման տեղ մըն է: Հոն գործերը չեն պահպանուիր միայն այլեւ կը գտնեն իրենց ընկալող դիտորդները, ինչպէս նոր կատարողները կը նուագեն հին երաժշտութիւն մեր նորոգ ականջներուն համար: Հասկնալի է թէ ինչո՞ւ միջոցը կը դառնայ հետզհետէ աւելի թափանցիկ: Անշուշտ, մեր ժամանակը կարծես «համաձայնութեան», կոնսենսուսի ժամանակ է: Մէկ կողմէ բոլոր ծայրայեղ արարքները կը թուին ընդունելի, բոլոր գրաքննութիւնները —գոնէ Արեւմուտքի մէջ— կը մերժուին, գոնէ տեսականօրէն, միւս կողմէ տարբերութիւնները կը չէզոքանան: Իսկ արուեստը կը սկսի տարբերութեամբ, ինչ ալ ըլլան միջոցները որ կը գործադրուին հասնելու կամ յայտնաբերելու համար այդ տարբերութիւնը:

Գրախոսություն

Մարկ Նշանեան

Բանաստեղծօրէն բնակիլ. Ֆրիդրիխ Հէօլդերլինի շուրջ



1

2002ին Երեւանի մէջ լոյս տեսաւ իրապէս բացառիկ հատոր մը, առաջինը իր տեսակին մէջ, գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Հէօլդերլինի բանաստեղծութիւններու հաւաքածոյ մը, հայերէն թարգմանութեամբ, Յակոբ Մովսէսին կողմէ հրամցուած հանրութեան[1]: Չեմ գիտեր՝ հանրութիւնը որքանո՞վ անդրադարձաւ այդ երեւոյթին եւ այդ իրողութեան: Հայկական եւ հայագիտական աշխարհէն ներս՝ Հէօլդերլինի անունը անշուշտ անծանօթ էր: 1770ի ծնունդ, հրաշք պատանի, Հէօլդերլինը Տիւբինգենի դպրեվանքը յաճախած էր եւ հոն իրմէ հինգ տարի փոքր Շելլինգի եւ տարեկից Հեգելի դասընկերը, բարեկամը եղած էր, նաեւ զանոնք Հին Յունաստանի պաշտամունքով միացնող, Ֆրանսական յեղափոխութեամբ խանդավառ եւ Կանտի փիլիսոփայութեամբ սնանող ուխտաւորներու երրորդութեան մը անդամը: Տարիներու ընթացքին, եղած էր նաեւ Կանտը զանցող ու ձեւով մըն ալ թաղող իդէալապաշտ փիլիսոփայութեան առաջին շրջանի որմնադիրներէն մէկը, նոյնիսկ եթէ իրմէ չունինք բուն առումով փիլիսոփայական գործեր: Գրական գործը մեծ մասամբ 1795 եւ 1805ի միջեւ արտադրած բանաստեղծին միտքը ատկէ ետքը վերջնականապէս պիտի խաւարէր: Բայց Յունաստանի մտասեւեռումով ապրող գրողը, մտքի խաւարումէն ճիշդ առաջ, պիտի յաջողէր վերջացնել եւ հրատարակել Սոփոկլէսի երկու թատերգութիւններու՝ *Եդիպոս Արքայի* եւ *Անտիգոնէի* թարգմանութիւնները, երկու պրակով, ամէն մէկը կարճառօտ յառաջաբանով մը: Ատկէ առաջ իրմէ լոյս տեսած էր *Հիւպերիոն* վէպը, երկու հատորով (1797 եւ 1799ին), յունական աշխարհի յափշտակութեամբ տոգորուած արձակ մը, եւ ժամանակաշրջանի գրական հանդէսներուն մէջ ցրուած քերթուածներ, հետզհետէ աւելի բացայայտ կերպով յունական հնադարեան բանաստեղծութեան, վերջին տարիներուն՝ մասնաւորաբար Պինդարի ներշնչումով, անոր կշռոյթները (տաղի, օրհներգի, եղերերգի օրինակներով) փոխադրելու հաստատ եւ յայտնի ծրագիրով գրի առնուած: Խաւարումի տարիներուն, որոնց ընթացքին Նեքարի եզերքին իր սենեակին մէջ նստած՝ Հէօլդերլին կը շարունակէր գրել ի հարկէ (այդ գրութիւններուն մեծ մասը հրդեհի զոհ գացած է) բայց այլեւս չէր հետաքրքրուեր իր ներկայ ու անցեալ գրութիւններու ճակատագիրով, կապե-

րը խզած էր մարդկային աշխարհին հետ, այդ քերթուածներէն ոմանք պիտի հաւաքուէին նոյնիսկ բանաստեղծի կենդանութեան (1826ին) իր երկրպագուներուն կողմէ, Քրիստոֆ Թէոդոր Շվաբ եւ Լուդվիգ Ուհլանդ: 1846ին, մահէն ետք, Շվաբ Ամբողջական գործերու առաջին փորձ մը պիտի կատարէր: Եւ յետոյ անզգալի կերպով իր անունը պիտի անհետանար յիշողութիւններէն: Նիցչէն միայն, անցողակի կերպով, պիտի ողջունէր Դիոնիսոսի կերպարին գիւտը Հէօլդերլինի կողմէ: ԺԹ. դարու վերջաւորութեան, Հէօլդերլին գրեթէ ամբողջովին սրբուած էր գերմանական փիլիսոփայական եւ գրական «մշակոյթ»ի տախտակներէն:

Եւ ուրեմն այս հրաշք պատանիին բուն հրաշքը պատահեցաւ Ի. դարու սկիզբը: 1908ին Նորբերդ ֆոն Հելլինգրաթ անունով երիտասարդ բանասէր մը, որ այդ օրերուն տակաւին ուսանող էր, հանդիպեցաւ Հէօլդերլինի Պինդարոսեան թարգմանութիւններուն, խանդավառուեցաւ, զանոնք ուղարկեց Ստեփան Գէորգէին, որուն միջոցաւ հրատարակեց այդ թարգմանութիւնները գրքոյկով, ու միեւնոյն ժամանակ ձեռնարկեց լայնածաւալ պրպտումներու, գտնելու եւ քով քովի բերելու համար բանաստեղծին ձեռագիրները, փորձագրութիւնները, նամակները, նաեւ յունական աշխարհէն ներշնչուած ինքնագիր թատերգութեան՝ *Մահ Էմպեդոգլէս*ի տարբերակները: Վեց հատորով ծրագրուած ամբողջական գործերու առաջին հատորը լոյս տեսաւ 1913ին: Հելլինգրաթ իր աւարտաճառին մէջ կ՚ուսումնասիրէր Պինդարի գործէն կատարուած թարգմանութիւնները: Աւելի ուշ, պատերազմի տարիներուն, ճակատէն վերադարձին, 1915ին, երկու դասախօսութիւն տուաւ նաեւ Հէօլդերլինի մասին: Եւ այդ եղաւ իր նպաստը Հէօլդերլինեան գործի տարածման ու ճանաչման, քանի որ յաջորդ տարին ինկաւ պատերազմի դաշտին վրայ: Ամբողջական գործերու ձեռնարկը իր աւարտին հասցուցին ուրիշներ, մինչեւ 1923: Հէօլդերլինի գործերուն այդ առաջին հրատարակութիւնը աներեւակայելի արագութեամբ տարածուեցաւ Գերմանիոյ երիտասարդութեան մօտ: 1915ին արդէն իսկ, Հելլինգրաթի աշխատանքին վրայ հիմնուելով, Վալտեր Բենիամին իր խորութեամբ ու կանխահասութեամբ ապշեցուցիչ ուսումնասիրութիւն մը կը գրէր Հէօլդերլինի երկու յարակից բանաստեղծութիւններու շուրջ (Dichtermut, Blödigkeit, որոնցմէ առաջինը Յակոբ Մովսէսին պատրաստած հատորին մէջ հրամցուած է «Բանաստեղծին արիութիւնը» վերնագրով, իսկ երկրորդը, ընենք՝ «Վեհերոտութիւն», զոր նոյն կտորին երկրորդ տարբերակը կարելի է նկատել, չէ թարգմանուած կամ չէ հրամցուած): Բենիամինի ուսումնասիրութիւնը[2] մեծ հաւանականութեամբ գրուած էր Ստեփան Գէորգէի շրջանակէն բխած մեկնաբանութիւններուն առաջքը առնելու համար: Բայց ճշմարտութիւնը այն է, որ նոյն այդ շրջանակին շնորհիւ է որ գործին ճանաչումը Գերմանիոյ մէջ հասաւ անսպասելի համեմատութիւններու: Հէօլդերլին զինուորագրուեցաւ Պահպանողական Յեղափոխութիւն կոչուած շարժումին հեռուէն կամ մօտէն մասնակցող մտածողներու պայքարին ու պատգամին: 1934էն սկսեալ ու մինչեւ 1943՝ Մարտին Հայդեգեր, նորաբնոյթ փիլիսոփայութեան ռահվիրան, Հէօլդերլինի գործին նուիրեց առնուազն երեք լման դասընթացքներ, որոնք բնական է՝ բանասիրական բնոյթ չունէին, այլ՝ փիլիսոփայական լեզուով կը վերաշարադրէին Հէօլդերլինի բանաստեղծութիւնը կամ Հայդեգերի նախասիրած արտայայտութեամբ՝ երկխօսութիւն մը կը ստեղծէին մտածողութեան եւ բանաստեղծութեան միջեւ[3]: Աւելի ուշ Հայդեգեր ուսումնասիրութեան ձեւով հրատարակեց Հէօլդերլինի մասին իր մտորումները, ու մասնաւորաբար չորսը անոնցմէ հաւաքեց *Erläuterungen zu Hölderlins Dichtung* (Հէօլդերլինի բա-

նաստեղծութեան նուիրուած պարզաբանումներ), առաջին հրատարակութիւն՝ 1944ին, երկրորդ հրատարակութիւն՝ 1951ին։ Երկրորդ հրատարակութիւնը չորս փորձագրութիւններ կը պարունակէր ուրեմն, «Heimkunft / An die Verwandten» (Տունդարձ / Տնեցիներուն), «Hölderlin und das Wesen der Dichtung» (Հէօլդերլին եւ Բանաստեղծութեան էութիւնը), «Wie wenn am Feiertage…» (Ինչպէս տօնական օրը…), եւ «Andenken» (Յիշողութիւն)[4]։ Ասոնցմէ երկու հատը (երկրորդը եւ երրորդը) այսօր հայերէն թարգմանութեամբ կարելի է կարդալ Յակոբ Մովսէսի պատրաստած հատորին մէջ։ Աւելի ուշ քանի մը հակիրճ նկատողութիւններ կ՚ուզեմ հրամցնել այդ թարգմանութիւններուն մասին։ Առ այժմ զբաղած եմ Հէօլդերլինի գործին ընկալումը նկարագրելով։ Հայդեգերի 1951ի գիրքն է որ այդ ընկալումին նոր ու աննախընթաց թափ մը տուաւ։ Մինչեւ այդ թուականը Հէօլդերլին կը մնար գերման բանաստեղծ մը, ու գերմանալեզու աշխարհէն (կամ գերմանագէտներու շրջանակներէն) դուրս քիչ ծանօթ էր։ Հայդեգերի գիրքն է, որ Հէօլդերլինի բանաստեղծութիւնը վերածեց համաեւրոպական (եւ ուրեմն գրեթէ առանց չափազանցելու՝ համաշխարհային) երեւոյթի։ Այդ իրողութիւնն է, որ կը բացատրէ Յակոբ Մովսէսի հրամցուցած թարգմանութիւններուն կարեւորութիւնը։ Բայց նոյն այդ իրողութիւնը կը բացատրէ նախ եւ առաջ, թէ ինչո՛ւ թարգմանելը անհրաժեշտ դարձած էր, կը բացատրէ թէ ի՛նչ ճամբաներէ կ՚անցնի հեղինակի մը, բանաստեղծի մը անունին տարասփռումը։ Հայդեգերի անունին հետ կապուեցաւ երկար ատեն ուրեմն Հէօլդերլինի գործին ընկալումը գերմանալեզու աշխարհէն դուրս, եւ առաջին հերթին Ֆրանսայի մէջ։ Երեսունական թուականներուն արդէն իսկ Ֆրանսացիները սկսած էին Հայդեգեր թարգմանել եւ Հայդեգեր թարգմանելով հետաքրքրուիլ Հէօլդերլինով։ 1938ին լոյս տեսած *Qu'est– ce que la métaphysique?* հատորին մէջ, Հանրի Կորպէն (Corbin) անունով երիտասարդ փիլիսոփայ մը (որ ետքը պարսկական ուսմանց մասնագէտ դարձաւ) ո՛չ միայն կը թարգմանէր Հայդեգերի *Was ist Metaphysik?* (Ի՞նչ է բնազանցութիւնը) գրութիւնը, այլեւ հոն կը զետեղէր 1936ին հանդէսի մէջ լոյս տեսած «Հէօլդերլին եւ Բանաստեղծութեան էութիւնը» ուսումնասիրութիւնը։ Անկէ քիչ ետքը՝ Ժան–Պոլ Սարտրը Ֆրանսական փիլիսոփայութեան մէջ պիտի ներմուծէր Հայդեգերեան բնանիւթեր, բազմաթիւ անսրբագրելի թիւրիմացութիւններով անշուշտ։ Բայց պատերազմէն անմիջապէս ետքն է, Ժան Բոֆրէին ուղղուած *Über den Humanismus* (Հումանիզմի մասին) նամակով, որ Հայդեգեր իրապէս մուտք պիտի գործէր ֆրանսական մտածողութեան ծիրէն ներս, Ֆրանսացիներուն մօտ ընկալման զարմանալի նախատրամադրութեան մը հանդիպելով։ Այնպէս որ Ֆրանսայի մէջ է հաւանաբար որ Հէօլդերլինի մասին *Պարզաբանումները* գտան իրենց ամենէն նուիրուած ընթերցողները։ Եւ քանի որ Գերմանիոյ մէջ՝ Հայդեգերի փիլիսոփայական մեկնաբանութիւնները կասկածով եւ մեծ վերապահութեամբ կ՚ընդունուէին բանասէրներուն եւ գրականագէտներուն կողմէ (որովհետեւ Հայդեգեր ո՛չ մէկ տուրք կը վճարէր գրականագիտական մօտեցումներուն), Բեդա Ալլեմանի Հայդեգերեան շունչով գրուած եւ Հայդեգերեան մօտեցումը բանասէրներուն ընդունելի դարձնելու միտումով յղացուած *Hölderlin und Heidegger* գիրքը (առաջին հրատարակութիւն՝ 1954ին) անմիջապէս ընդունելութիւն գտաւ Ֆրանսայի մէջ, թերեւս աւելի քան Գերմանիոյ։ Մորիս Բլանշոյի ուսումնասիրութիւնը Հէօլդերլինի մասին, «Հէօլդերլինի ուղին», *L'Espace littéraire* (Գրական տարածքը, առաջին հրատարակութիւն՝ 1955ին) գիրքին վերջաւորութեան զետեղուած որպէս յաւելուած, ամբողջովին հիմնուած էր Բեդա Ալլեմանի ուսումնասիրութեան վրայ, զոր

Բլանշոյ կարդացած էր գերմաներէն լեզուով, նախ քան ֆրանսերէն թարգմանութեան երեւիլը (թարգմանութիւնը, Ֆրանսուա Ֆեդիէի ձեռքով, լոյս տեսած է 1959ին միայն)։ Առաջին մեծ ուսումնասիրութիւնն էր ֆրանսերէն լեզուով ներկայացուած, լայն հասարակութեան մը ուղղուած, եւ մասնագիտական շրջանակներէ դուրս։ Բայց պէտք է յիշեցնել որ ֆրանսացիի մը կողմէ գրուած առաջին մասնագիտական գիրքը Հէօլդերլինի մասին լոյս տեսած էր բաւական կանուխ, 1936ին։ Պիէռ Բերտոյի (Pierre Bertaux) գիրքն է այս մէկը, *Hölderlin, Essai de biographie intérieure* (Հէօլդերլին, Փորձ՝ ներքին կենսագրութեան)։ Բլանշոյ կը ճանչնար այդ գիրքը, բայց չ՚ակնարկեր անոր «Հէօլդերլինի ուղին» յօդուածին մէջ։

Մինչ այդ սակայն Գերմանիոյ մէջ, պատերազմի տարիներուն, ուրիշ գրականագէտ մը, Ռուդոլֆ Բայսներ (Beissner), սկսած էր պատրաստել Հէօլդերլինի ամբողջական գործերու նոր հրատարակութիւնը, որուն առաջին հատորը լոյս տեսաւ 1943ին։ Բայսներ իր աւարտաճառը գրած էր 1936ին Հէօլդերլինի կատարած Սոփոկլէսեան թարգմանութիւններուն շուրջ աշխատելով։ Իր առաջարկած հրատարակութիւնը աւելի կազմակերպուած էր, աւելի ամբողջական, ու երկար տարիներ՝ այդ մէկը եղաւ Հէօլդերլինի ընթերցողներուն կարեւոր աղբիւրը։ Պէտք է գիտնալ, որ խաւարումը նախորդող քանի մը տարիներուն (առնուազն 1801էն սկսեալ եւ մինչեւ 1805), Հէօլդերլին ապրած է տագնապալից շրջան մը որպէս բանաստեղծ։ Այդ շրջանին է որ գրած է իր մեծագոյն քերթուածները, իր «հայրենական» օրհներգերը, ու մղած է ահարկու եւ ահազդու պայքար մը ինքն իր դէմ, արմատապէս սրբագրելով ինքզինք։ Հարցը կը վերաբերի արուեստի եւ ուրեմն բանաստեղծութեան օրինավիճակին, աստուածներու բացակայութեան դէմ յանդիման։ Աւելի ուշ ներկայ ուսումնասիրութեան մէջ, պիտի բացատրեմ կէտ առ կէտ թէ՛ հարցադրութեան երեսակները, թէ՛ Հէօլդերլինի խորունկ եւ անմխիթար վարանումը։ Բայց այդ վարանումին ու այդ տագնապին որպէս հետեւանք (կամ ուրիշ որեւէ պատճառով) Հէօլդերլին անաւարտ ձգած է շատ մը քերթուածներ, օրհներգեր եւ եղերերգեր։ Խորքին մէջ՝ վերջին տարիներու բոլոր քերթուածները անաւարտ են։ Ինչ որ ունինք ուրեմն՝ սրբագրութիւններով ծանրաբեռն ձեռագիրներ են։ Բայսներին արժանիքը եղած է գրութենական տարբեր խաւերով ծածկուած այդ ձեռագիրներէն (նոյն էջին վրայ խճբծուած կան երբեմն տարբեր միաւորներու պատկանող սկիզբէ մը կամ վերջաւորութենէ մը) հանել ընթեռնելի ու վերջացած ըլլալու տպաւորութիւնը ձգող տարբերակներ։ Յաճախ կրցած է բացատրել կտորի մը յօրինումին հանգրուանները։ Երեւան բերուած տարբերակները Բայսների մօտ այնպիսի ձեւով ներկայացուած են, որ յօրինումի հանգրուանները զանազանելի են ու կը յաջորդեն իրարու[5]։ Լաւագոյն օրինակներէն մէկը կարծեմ՝ *Մնեմոսինէ* վերնագրուած ուշ շրջանի քերթուածն է, որմէ ունինք երեք տարբերակ, Բայսների համաձայն, եւ ուրեմն ենթադրաբար երեք հանգրուան։ Վերջին կիսադարուն ընթացքին՝ բոլոր փորձուած ու հրամցուած թարգմանութիւնները տարբեր լեզուներով (եւ իմ գիտցածներուս մէջ՝ ամէն պարագայի անգլերէն, ֆրանսերէն, եւ հիմա նաեւ՝ հայերէն), հետեւած են Բայսների լուծումներուն եւ յղումներուն։

Հակազդեցութիւնը եկաւ Դ.Է. Զատլերէն՝ Ամբողջական գործերու երրորդ մեծ ծրագիրի նախաձեռնողէն։ Այս ծրագիրը, Frankfurter Ausgabe կոչուած (Ֆրանկֆուրտի հրատարակութիւն), 20 հատորով եւ 3 յաւելուածով, 1975ին սկսած եւ 2008ին իր աւարտին հասած, նպատակ ունէր հրամցնելու Հէօլդերլինի բոլոր ձեռագիրները ինչպէս որ կան անոնք (առաւել անշուշտ լոյս տեսած

գործերուն վերատպումը)։ Տպագրական բազմաթիւ հնարքներ գործածելով (եւ այդ ճիւղին մէջ ռահվիրայի դեր ալ ստանձնելով), Զատլեր Հէօլդերլինի ձեռագրական բոլոր էջերուն պատկերը կու տայ մէկ առ մէկ, ու բնական է՝ յաճախ կը կազմալուծէ Բայսների կազմած տարբերակները։ Այս նոր ձեռնարկը երկար ատեն ընդդիմութեան արժանացաւ, որովհետեւ ընթերցողը դէմ յանդիման կը դնէր չվերջացած գործի մը, կամ ընթացքի մէջ եղող գրառումներու։ Գրութեան ընթացքն է որ կը պատկերացնէր, եւ ոչ թէ վերջացած եւ որպէս «երկասիրութիւն» հրամցուած գրութիւնը։ Այս հաշուով՝ գրականագէտներն էին, որ պէտք ունէին «երկ»ի վերածելու Հէօլդերլինի գրառումները, իրենք իրենց վրայ ամրափակ միաւորներ զատորոշելու։ Զատլերին կողմէ արմատական կեցուածք մը կայ այդտեղ, որուն բոլոր հետեւանքները չեն հանուած տակաւին ուսումնասիրողներուն կողմէ, եւ Հէօլդերլինի մասնագէտներուն մասնաւորաբար։ Ինծի ծանօթ ամենավերջին ուսումնասիրութիւնները Հէօլդերլինի մասին (օրինակ՝ անգլերէն լեզուով *The Solid Letter* վերնագրուած հաւաքածոն[6], ու անկէ շատ աւելի նորերը Գերմանիոյ մէջ) հազիւ թէ նկատի կ՚առնեն Ամբողջական գործերու այս նոր ծրագիրը։ Բայց Բայսների վերակազմական քաղաքականութեան նկատմամբ ընդհանուր վերապահութիւն մը ստեղծեց ան, քննադատներն ու ընթերցողները հրաւիրելով վերակազմութեան մասնակից ըլլալու, կամ գրականութիւն ըսուածը ամրափակ միաւորներու նշանին տակ դնելու «որոշում»ը առնուազն ներյայտ կառուցազերծումի մը ենթարկելով։

2

Յուսամ՝ նախորդ էջերու բացատրութիւնները աւելորդ չէին։ Անունի մը, Հէօլդերլինի անունին, ասուպային ճանապարհին նկարագրութիւնն է որ կը հրամցնէին Եւրոպայի երկնքին մէջ։ Այդ ճանապարհը այսօր հասած է ուրեմն մինչեւ լեզուն Հայոց, հատորի մը կերպարանքով։ Հատորին պարունակութեան պիտի անդրադառնամ հիմա պահ մը։ Ֆրիդրիխ Հէօլդերլինի անունը կրող եւ*Բանաստեղծութիւններ* վերնագրուած այս հատորին մէջ, Յակոբ Մովսէս ամբողջովին մէկ քով ձգած է հեղինակին բոլոր այն գործերն ու փորձերը որոնք բացայայտ կերպով ինքնագիր բանաստեղծութեան կալուածին մաս չեն կազմեր, եւ նոյնիսկ մաս կազմողներուն մէջ՝ ստիպուած էր անշուշտ որոշ ընտրութիւն մը կատարելու։ Մէկ քով ձգուած են ուրեմն վիպագիր եւ թատերագիր Հէօլդերլինը, այսինքն *Հիւպերիոն* վէպը եւ *Էմպեդոկլէս*ի ձեռագրային տարբեր հանգրուանները (բոլորն ալ, կը յիշեցնեմ, անաւարտ մնացած)։ Մէկ քով ձգուած են նոյնպէս բոլոր տեսաբանական եւ փիլիսոփայական բնոյթ ունեցող գրութիւնները, մինչեւ իսկ անոնք՝ որոնք անմիջականօրէն կը վերաբերին բանաստեղծական արուեստին («Բանաստեղծելու տարբեր եղանակները», «Բանաստեղծական ոգին գործադրելու ձեւին շուրջ», «Բանաստեղծական տեսակներուն միջեւ տարբերութեան շուրջ»)։ Մէկ քով ձգուած են թարգմանութիւնները, բնական է, Պինդարէն եւ Սոփոկլէսէն գերմանալեզու փոխադրութիւնները, եւ անոնց հետ՝ թարգմանութեան արարքին ու իմաստին շուրջ Հէօլդերլինեան մտորումները, մասնաւորաբար՝ Սոփոկլէսէն թարգմանուած*Եդիպոս Արքայ*ի եւ *Անտիգոնէ*ի համար գրուած յառաջաբանները։ Հրամցուած են նամակներ, թիւով ութ, որպէս նմոյշ, Շիլլերին ուղղուածներէն երկու հատ, Սիւզետէ Գոնտարդին ուղղուածներէն նոյնպէս երկու հատ, եւ Հէօլդերլինի ամենէն տպաւորիչ նամակներէն՝ Պէօհլենդորֆին ուղղուածները, Ֆրանսայի ճամբորդութենէն ճիշդ առաջ եւ ճիշդ վերջը, որոնք էական են Հէօլդերլինի կենսագրական եւ բանաստեղծական ճանապարհը հասկնալու համար։ Յակոբ Մովսէս ուզած է սահմանափակուիլ բանաստեղծութիւններուն, եւ անոնց-

մէ տուած է լայն ընտրութիւն մը, 1800էն ետքը գրուածներուն՝ գրեթէ բոլո-րը, ու մասնաւորաբար «հայրենական շրջադարձ»էն ետքը արտադրուած մեծ օրհներգերը: Առաւել՝ ամենավերջին շրջանին գրուած կտորներէն վերստին նմոյշներ: Բայց հոս չի վերջանար հատորին պարունակութիւնը: Կայ ծանօ-թագրութիւններու կարեւոր բաժին մը, որ պիտի զբաղցնէ զիս քիչ ետքը: Ու կայ մանաւանդ հարիւր էջնոց յաւելուած մը, որ կը պարունակէ չորս ու-սումնասիրութիւններ Հէօլդերլինի մասին: Անշուշտ հատորին սկիզբը Յակոբ Մովսէս երկար յառաջաբանով մը՝ իր խօսքը կ'ըսէ բանաստեղծին մասին, կը ներկայացնէ զինք, կենսագրական գիծեր կը հրամցնէ, մշակութային կարե-ւորութիւնը կը բացատրէ, ու կրօնա-փիլիսոփայական նշանակութեան մասին կու տայ ընդհանուր պատկեր մը, ի հարկէ՝ իր կազմած պատկերը, հիմնուած իր մեկնաբանութիւններուն վրայ: Յառաջաբանին տարօրինակութիւնը այն է, որ հոն կ'անցնին անշուշտ Յաւելուածով ներկայացուած հեղինակներուն անունները (Հայդեգեր, Գադամեր, Բլանշօ), բայց թարգմանիչ-մեկնաբա-նին վերլուծումները չեն հիմնուիր անոնց կատարած վերլուծումներուն կամ անոնց պաշտպանած դրոյթներուն վրայ:

Բլանշոյէն հրամցուած է վերը յիշուած «Հէօլդերլինի ուղին», Շուշանիկ Թամ-րազեանի թարգմանութեամբ: Փիլիսոփայական աշխատասիրութիւն մը չէ Բլանշոյինը, ու թարգմանիչը մեծ դժուարութիւններու չէ հանդիպած: Մէկ բան միայն զարմանալի է այդ թարգմանութեան մէջ: Ֆրանսերէն բնագիրին մէջ, էջատակի ծանօթութեամբ մը, Բլանշօ ընթերցողներուն կը տեղեկացնէ, որ իր ներկայացումը հիմնուած է Բեդա Ալլեմանի մտորումներուն վրայ: Այդ էջա-տակի ծանօթութիւնը ջնջուած է թարգմանութեան մէջ: Ինչո՞ւ ջնջել այդպիսի համագրային տեղեկութիւն մը: Պէտք է յիշել որ երբ Բլանշօ այդ տողերը կը գրէր, Հէօլդերլինի տեսաբանական գրութիւններէն ֆրանսերէն թարգմանու-թիւն չկար հրապարակին վրայ, եւ ի մասնաւորի *Եդիպոս*ի եւ *Անտիգոնէ*ի յա-ռաջաբանները լոյս չէին տեսած: Լոյս չէր տեսած նոյնպէս Բեդա Ալլեմանի թարգմանութիւնը: Եւ ուրեմն 1955ի *ֆրանսացի* ընթերցողը աւելի բան չէր գի-տեր Բեդա Ալլեմանի մասին քան թէ 2002ի կամ 2012ի *հայ* ընթերցողը[7]: Բլան-շոն է նաեւ որ առաջին անգամ ըլլալով ֆրանսերէն լեզուին մէջ մտցուցած է retournement natal արտայայտութիւնը, թարգմանելու համար գերմաներէն vaterländische Umkehr, զոր թարգմանիչը ճիշդ ու գեղեցիկ կերպով կը թարգ-մանէ «հայրենի շրջադարձ»[8]: Թարգմանութեան մէջ մէկ տեղ միայն թարգմա-նիչը հանդիպեր է դժուարութեան մը. երբ պէտք էր թարգմանել Բլանշոյի (եւ Բլանշոյին ընդմէջէն՝ անշուշտ Հէօլդերլինի) retournement catégorique արտա-յայտութիւնը: Ահաւասիկ Շուշանիկ Թամրազեանի հայերէնով այդ հատուածը (էջ 387).

> Եթէ արեւմտեան… մեր դարաշրջանում անհատը կոչուած է իրագործել վճռորոշ այս շրջադարձը, դրանով նա հետեւում է հին յունական աստուածների օրինակին, որոնք առաջինն են իրագործել այն քայլը, որ Հէօլդերլինը սահմանում է որպէս «բացարձակ եւ անվերադարձ շրջադարձ:

Ի՞նչ է catégorique կոչուած այս շրջադարձը: Այն քայլն է, այն պահն է, երբ աստուածները կտրուկ կերպով եւ վերջնականապէս կը հեռանան մարդոց-մէ, կը քաշուին իրենց երկնքի պայծառութեան խորքը, կը լքեն մարդը առան-ձին, երես կը դարձնեն իրմէ, կ'որոշեն բացակայիլ, իրապէս «անվերադարձ»:

Ինչ որ հին յունական աշխարհը եւ արդի աշխարհը կը զատորոշէ իրարմէ՝ աստուածներու այդ լքումն է, ապրուած որպէս փորձառութիւն եւ փորձընկալում, բայց նաեւ պատմականօրէն ճշդորոշելի: Այս ամբողջը ծանօթ է, բայց աւելի ճշգրիտ բացայայտումի կը կարօտի, գրուածքին ուշադրութիւն դարձնելով: Այդ բացայայտումը պիտի հրամցուի հոս հետզհետէ, աւելի ուշ: Բայց մինչեւ իսկ ներկայ հակիրճ բացատրութիւնը չ'ըսեր թէ ինչո՛ւ աստուածներու այդ շրջադարձը, այդ երես դարձնելը, Հէօլդերլինի կողմէ պէտք է kategorisch կոչուէր, եւ ֆրանսերէն catégorique քանի որ այդտեղ ֆրանսերէնը բնականաբար միջոցը ունի գերմաներէնին հետեւելու առանց վարանումի եւ առանց իմաստային կորուստի: Հարցը այն է, որ սովորական ֆրանսերէնով եւ ԺԹ. դարու սկիզբի գերմաներէնով արդէն իսկ, catégorique, kategorisch, կը նշանակեն եւ կը նշանակէին «հակաճառութիւն չվերցնող», որմէ կարելի է թերեւս հետեւցնել «բացարձակ»ի եւ «անվերադարձ»ի իմաստները երբ խօսքը ըլլայ որոշումի մը մասին: Բայց ինչո՛ւ մարդոցմէ երես դարձնելու աստուածային որոշումը (եւ իրապէս որոշո՛ւմ մըն էր արդեօք, աստուածները այդ ձեւո՛վ է որ կը գործեն, կը մտածե՛ն, կը դատե՛ն, ու կ'որոշե՛ն, եւ այն ատեն անվերադարձ որոշումո՛վ) պէտք է ըլլար «հակաճառութիւն չվերցնող», եւ այդ առումով միայն՝ նաեւ բացարձակ: Ճշմարտութիւնը այն է, որ Հէօլդերլին հոս չի գործածեր kategorisch բառը «հակաճառութիւն չվերցնող»ի իմաստով: Երբ կ'ըսէ՝ kategorische Umkehr, ի մտի ունի Կանտի kategorischer Imperativը: Եւ բնական է, ամէն մարդ գիտէ, որ Կանտի մօտ բարոյականութիւնը հիմնող այդ սկզբնակառոյց հրամայականը կտրուկ, վերջնական ու անվերադարձ է, այո, բայց միմիայն իր բնոյթին որպէս հետեւանք: Իսկ ի՛նչ է իր բնոյթը:

Սկզբնակառոյց հրամայականին բնոյթը հասկնալու համար, պահ մը պէտք է անցնիլ իր հակառակէն, այն հրամայականէն զոր Կանտ կը կոչէ hypothetisch, վարկածային կամ պայմանական հրամայականէն. «Եթէ կ'ուզես նպատակի մը հասնիլ, գործադրէ՛ միջոցները որոնք այդ նպատակին կը պատկանին»: Ասոր հակառակը՝ «ստորոգութենական» հրամայականը կախեալ չէ որեւէ պայմանականութենէ, այսինքն՝ ոչ միայն որեւէ պայմանէ, այլեւ որեւէ նպատակէ, որեւէ ծրագրաւորումէ, որեւէ «արտաքին» որոշադրումէ: Որեւէ պայմանականութենէ զերծ կամքը միայն կրնայ ազատ ըլլալ, գործել զուտ բանական սկզբունքներու համաձայն: Եւ կէտ մը եւս. այդպիսի պայմանազերծ հրամայականի մը համաձայն միայն հնարաւոր է հասկնալ թէ ի՛նչ է «օրէնք» ըսուածը: Այս պարտադրաբար շատ կարճառօտ բացատրութենէն ետք (բայց մեր հարցը չէր հոս Կանտ բացատրել), եթէ հարց տանք թէ ինչո՛վ ուրեմն աստուածներու երեսդարձը ստորոգութենական է, անմիջական հետեւութիւնը այն պիտի ըլլայ որ կը կատարուի ան առանց կախեալ ըլլալու որեւէ նպատակէ մը: Ո՛չ կանխամտածուած է ան, ո՛չ ալ ծրագիրի մը համաձայն կը կատարուի, օրինակ մարդկութիւնը ազատ կացուցանելու, կամ զայն փրկելու, կամ ուրիշ որեւէ ծրագիրի մը համաձայն: Աստուածներու երեսդարձը մարդկութեան ուղղուած փրկագործական ծրագիրի մը մէջ կարելի չէ զետեղել: Ահա հետեւաբար մէկ բառի մէջ պարփակուած կատարելապէս *ապաքրիստոնէական* մտածողութիւն մը: Հէօլդերլին, մէկ անգամ ընդմիշտ, չի մտածեր քրիստոնէութեան ստորոգութիւններով: Ի մասնաւորի, եթէ անհրաժեշտ էր շեշտելը, չի մտածեր քրիստոնէութեան պատմական երեւոյթը քրիստոնէութեան ընձեռած սխեմաներով: Եւ այն ատեն արդեօք նաեւ թիրիմացութիւն մըն չէ՞ զինք գերմանալեզու մեծ խորհրդազգածներու կարգին շարելը, կամ իր «աստուածատենչ» փորձառութիւնը անոնց փորձառութեան հետ բաղդա-

տելը (ինչպէս կը կարդանք յառաջաբանին մէջ, Ռոմանոյ Գուարդինիի հետ-քերուն վրայ)։ Այս նկատողութիւնները կանխահաս են, գիտեմ։ Երեւան եկան միմիայն որովհետեւ թարգմանութեան հարց մը յարուցուեցաւ։ Պիտի կրկնեմ ու զարգացնեմ զանոնք հոս աւելի ուշ, կամ ուրիշ առիթով։ Բայց հիմակուը-նէ կ՚ուզեմ նաեւ նշմարել տալ որ «ստորոգութենական շրջադարձ» արտայայ-տութիւնը Հէօլդերլինի գրչին տակ կու գայ ընդամէնը միայն մէկ անգամ, *Եդի-պոս*ին նուիրուած էջերու վերջաւորութեան, եւ ուրեմն յունարէնէ հրամցուած թարգմանութեան մը առիթով։ Ահաւասիկ այդ տողերը, որոնց նշանակութեան պէտք է անդրադառնալ իրենց լման համածիրը նկատի առնելով (բան մը որ հոս առ այժմ նոյնպէս անկարելի է).

> Այստեղ մարդ էակը կը մոռնայ ինքզինք որովհետեւ ամբող-ջովին պահին մէջն է. եւ աստուածը (der Gott) կը մոռնայ ինք-զինք որովհետեւ ուրիշ բան չէ եթէ ոչ ժամանակ. եւ երկուքն ալ անհաւատարիմ են։ Ժամանակը անհաւատարիմ է, որովհե-տեւ այդպիսի պահու մը կը դառնայ ստորոգութենապէս (sich kategorisch wendet), եւ սկիզբն ու վերջաւորութիւնը իր մէջ չեն համընկնիր բացարձակապէս. իսկ մարդը անհաւատարիմ է, որովհետեւ այդ պահուն ստիպուած է հետեւելու ստորոգութե-նական շրջադարձին, եւ այլեւս չի կրնար սկզբնաւորութեան հետ հաւասարիլ բացարձակապէս[9]։

Խորհրդաւոր տողեր են։ Հազարաւոր էջեր գրուած են այս տողերուն շուրջ, տարբեր լեզուներով։ Հարցը Երկնայիններու յիշողութիւնը պահելն է, եւ զայն պահելու համար ամենէն յարմար ձեւը գտնելն է։ Հէօլդերլին կ՚ըսէ. պէտք է հաղորդուիլ «անհաւատարմութեան եղանակով», որովհետեւ «աստուածային անհաւատարմութիւնն է, որ կարելի է պահել ամենայն դիւրութեամբ»։ Ինչո՞ւ կատարեալ մոռացութեան այդ պահուն աստուածը վերածուած է ժամանակի՞։ Ինչո՞ւ ժամանակը կը դառնայ կտրուկ ու բացարձակ շարժումով մը, ստորոգու-թենապէս (weil sie in solchem Momente sich kategorisch wendet), ի՞նչ կապ ունի այս ամբողջը Եդիպոսի ողբերգութեան հետ, եւ ի՞նչ է այն ատեն, աւելի ընդ-հանուր առումով, այս ամբողջին կապակցութիւնը թարգմանելու պարտաղ-րանքին հետ, քանի որ կա՛յ թարգմանելու պարտաղրանք մը, որուն հետեւ-ւած է Հէօլդերլին գիտակից կեանքին վերջին տարիներուն, յամառութեամբ, ջանասիրութեամբ, հաւատարմօրէն։ Միակ հաւատարմութիւնը որ կը մնար այս կատարեալ եւ փոխադարձ անհաւատարմութեան ժամանակաշրջանին՝ թարգմանողին հաւատարմութիւնն էր։ Ինչո՞ւ։ Բոլոր այս հարցումներուն չի մօտենար Մորիս Բլանշոյ։ Բայց իր պարզաբանումի փորձը «Եդիպոսի մասին Նշմարներ»ը փակող այս տողերուն է որ կ՚անդրադառնայ։ Հետեւաբար ինչ-պէ՞ս կարելի է հասկնալ Բլանշոյին եւ ասոր ընդմէջէն՝ Հէօլդերլինի ըսածը, եթէ Նշմարները չհրամցուին ընթերցողին։

Եւ հիմա քանի մը բառ կ՚ուզեմ ըսել Յակոբ Մովսէսի ձեռքով կատարուած Հայդեգերի թարգմանութիւններուն մասին։ Ըսելիքս պիտի մնայ մակերե-սային, որովհետեւ նիւթս հոս Հայդեգերը չէ, այլ Հէօլդերլինը։ Առաջին ան-գամն է, որ մէկը Հայդեգեր կը թարգմանէ հայերէնով։ Համարձակութիւն եւ քաջութիւն պէտք էր այդպիսի ձեռնարկի մը մէջ նետուելու համար։ Հետեւա-բար ամէն գնահատանքէ վեր է հայերէնով Հայդեգեր հրամցնելու փափաքը եւ այդ փափաքին իրագործումը։ Փիլիսոփայի մը լեզուն թարգմանելը միշտ

դժուար է, ու Հայդեգերի պարագային՝ աւելի՛ քան դժուար, որովհետեւ ինքը բոլորէն աւելի բառերը կը լծարկէ եւ կը լծորդէ իր ընդհանուր նպատակին: Շարահիւսութիւնը չի բաւեր: Ամէն մէկ բառի վրայ մտածողութեան ճնշումը կայ Հայդեգերի գործին մէջ: Այնպէս որ յաճախ իր մօտ բառերը կը հեռանան իրենց սովորական գործածութենէն: Հայդեգերի բոլոր թարգմանիչները զգացած են այդ հեռացումին յարուցած անյաղթահարելի խոչընդոտները եւ փորձած են իրենց լեզուին մէջ հնարքներ գտնել լսելի դարձնելու համար հոն կատարուածը: Եւ յաճախ պատահած է որ այդ իսկ պատճառով՝ անընթեռնելի դառնան Հայդեգերի բնագիրներուն թարգմանութիւնները, ֆրանսերէն ինչպէս անգլերէն: Երկրորդ հարցը այն է, որ փիլիսոփայի մը գործը աշխարհի երեսին կը փոխանցուի դասարանային պարզաբանումներով: Կրկնուող պարզաբանումներն են, որոնք տուեալ լեզուի մը մէջ անհրաժեշտ ճկունութիւնը կը ստեղծեն, փիլիսոփայի մը գործին ընկալումը պատրաստող ու պարտադրող: Հայդեգերի պարագային, աւելի քան ուրիշ որեւէ փիլիսոփայի համար, թարգմանութիւն եւ պարզաբանում անքակտելի են: Փոխադարձաբար կ՚ենթադրեն զիրար: Իսկ դասարանային պարզաբանումի աշխատանքը, պարզ ու մեկին, կ՚ենթադրէ համալսարանական աւանդութիւն, որ չկայ հայախօս եւ հայալեզու աշխարհէն ներս: Յակոբ Մովսէսի ձեռնարկութիւնը հետեւաբար կրկնակի յանդգնութիւն մը կը պարունակէ իր մէջ: Դէմ առ դէմ, ճակատ ճակատի կու գայ Հայդեգերի բառապաշարին հետ, եւ կը փորձէ շրջանցել համալսարանական աւանդումի ու դասաւանդումի բացակայութիւնը: Ինչպէ՞ս պիտի թարգմանէ օրինակ Հայդեգերի եւ փիլիսոփայութեան ամենէն թեթեւ եւ ամենէն ծանրակշիռ բառը, գոյականացած էական բայը, գերմաներէն das Sein: Ինչպէս ամէն թարգմանիչ, ստիպուած է որոշումներ կայացնելու եւ քանի որ փիլիսոփայական գրուածքներու հետ գործ ունի՝ ստիպուած է նաեւ հետեւողական ըլլալու: Այս պարագային կ՚ընտրէ «գոյութիւն», եւ ունինք ուրեմն das Sein des Seiendes՝ «գոյաւորին գոյութիւնը»: Բայց եթէ երկարամեայ պատմութիւն մը ունեցող հայերէն բառի մը իմաստը այդքան արմատական ձեւով պիտի փոխուէր, ինչո՞ւ ոչ «էութիւն»: Այո, որովհետեւ «էութիւն» կը թարգմանէ գերմաներէն Wesenը, ֆրանսերէն essence (քանի որ ֆրանսերէնն ու անգլերէնը լատիներէն կը մտածեն, երբ խօսքը փիլիսոփայութեան հիմնական բառերուն կը վերաբերի): Բայց եթէ «գոյութիւն»ը Sein է, այն ատեն ֆրանսերէն-անգլերէն existenceը ինչպէ՞ս պիտի թարգմանենք: Սովորական գերմաներէնով existence կ՚ըսուի Dasein, փիլիսոփայական գերմաներէնով՝ Existenz: Բայց Հայդեգերեան գերմաներէնով Dasein անշուշտ ուրիշ բան կը նշանակէ, այնքան «ուրիշ» որ եւրոպական լեզուները հրաժարած են այսօր զայն թարգմանելէ եւ ընդհանրապէս կը պահեն Dasein թարգմանութեան մէջ, ֆրանսերէնը կ՚ըսէ երբեմն l'être– là: Յակոբ Մովսէս որոշած է Հայդեգերեան Daseinը թարգմանել «աստլինելութիւն»: Երբ կոյս հողի մը վրայ կը գտնուիս, բոլոր ընտրութիւնները ընդունելի են, պայմանաւ որ արդարանան ու արդարացուին: Բայց թարգմանիչը հոս՝ չէ ուզած թարգմանիչի դերէն դուրս ելլել ու բացատրական գրուածք մը հրամցնել մեզի, կամ փիլիսոփայական բառարան մը, որ անտեղեակ ընթերցողին բացատրէր թէ ինչու «գոյութիւն» նշանակող ամենէն սովորական գերմաներէն բառը յանկարծ կը դառնայ «աստլինելութիւն»: Իսկ եթէ Seinը «գոյութիւն» է, ինչո՞ւ Daseinը «աստգոյութիւն» չըլլար: Կամ ինչո՞ւ ոչ՝ «էութիւն» եւ «աստէութիւն» (Wesenին համար ուրիշ բառ մը գտնելու գինով վճարուելիք լուծում), կամ նոյնիսկ ինչո՞ւ ոչ «աստութիւն»: Եւ դեռ չեմ խօսիր արեւմտահայերէնի յատուկ «լինելութիւն» բառին մասին, որ հարիւր յիսուն տարիէ ի վեր (այսինքն

իր կենդանութեանը ողջ ժամանակին) գործածուած է ու կը գործածուի ֆրանսերէն devenirի, ուրեմն գերմաներէն Werdenի իմաստով (իսկ Werdenը Յակոբ Մովսէսին կողմէ կը թարգմանուի «գոյաւորում», տե՛ս օրինակ էջ 327)։ Եւ ամէն պարագայի՝ դոյզն բացատրութիւն մը օգտակար պիտի չըլլա՞ր որպէսզի հասկնայինք թէ ի՞նչ է Daseinի այդ «da»ն։ Իսկ ո՞ւր մնաց միւս գերմաներէն բառը որ «գոյութիւն» կը նշանակէ, ֆրանսերէն existence։ Քանի որ հայերէն բառ չմնաց, թարգմանիչը կը գործածէ այդտեղ «էկսիստենց»։ Ուրիշ լեզուներ եթէ հնարաւորութիւնն ու իրաւունքն ունին լատինական արմատներէ օգտուելու, հայերէնը ինչո՞ւ պէտք է ետ մնար։ Այնպէս չէ՞։ Առնք ի հարկէ թարգմանական սխալներ չեն։ Ուզեցի միայն կացութեան բարդութիւնը մատնանշել, բարդութիւն մը որ ըստ իս, հայերէնի (եւ հայերէնով փիլիսոփայութեան դասաւանդումի) այսօրուան վիճակը նկատի առնելով, լուծում չունի։ Ինչո՞ւ թարգմանիչը կ՚ըսէ «ինքնակամութիւն» Willkühr թարգմանելու համար, երբ արեւմտահայերէնը (եւ վստահ եմ՝ արեւելահայերէնն ալ) ունի «կամայականութիւն»։ Ինչո՞ւ կ՚ըսէ «իմացութիւն» Begriff թարգմանելու համար, երբ իր լեզուն ունի կարծեմ «հասկացութիւն» եւ արեւմտահայերէնը՝ «յղացք»։ Ինչո՞ւ (հոս կ՚անցնինք աւելի բացայայտ սխալներու շարքին) das Seiende im Ganzen պէտք է թարգմանուի «ամբողջի մէջ գոյաւոր»ը, երբ գիտենք որ այդ արտայայտութեամբ (որ հազարաւոր անգամներ գործածուած է իր գործին մէկ ծայրէն միւսը) Հայդեգեր կը նշէ *որպէս ամբողջութիւն* նկատի առնուած գոյաւորը, ուրեմն «ամբողջական գոյաւոր»ը կամ «իր ամբողջութեան մէջ առնուած գոյաւոր»ը։ Եւ ունինք հետեւեալ նախադասութիւնը, որ ենթադրաբար կը թարգմանէ գերմաներէն «Das Zeugesein der Zugehörigkeit in das Seiende im Ganzen geschieht als Geschichte» (*Erläuterungen…*, էջ 34), ահաւասիկ. «Ամբողջին մէջ գոյաւորին պատկանելուն վկայուած գոյութիւնը տեղի է ունենում իբրեւ պատմութիւն» (*Բանաստեղծութիւններ*, էջ 304)։ Հայերէն նախադասութիւնը անհասկնալի է, կատարելապէս։ Մինչդեռ հոս Հայդեգեր շատ պարզ բան մը կ՚ըսէ (միշտ չէ՛ որ պարզ բաներ կ՚ըսէ)։ Մարդ էակը ինքն ալ գոյաւոր մըն է գոյաւորներու կարգին։ Կը պատկանի գոյաւորի ամբողջականութեան։ Ինչպէ՞ս կ՚արձանագրուի, ինչպէ՞ս կը փաստուի, ինչպէ՞ս կը վկայուի իր կողմէ այդ պատկանելութիւնը։ Անշուշտ պատմութեամբ։ Պատմութիւն ըսուածը մարդուն վկայութիւնն ու վկայագրութիւնն է որպէս գոյաւոր։ Ինչի՞ վկայութիւնն է։ Պատկանելու իրողութեան։ Որովհետեւ պատկանիլը չի բաւեր։ Վկայել պէտք է նաեւ։ Մարդը, Daseinի իր էութեամբ, ինքն իր վկան է, ինքն իր պատկանելիութեան վկան, ու մինչեւ իսկ միակ գոյաւորն է որ կը վկայէ իր «գոյաւորութեան» մասին։ Այդ պատճառով իսկ՝ միակն է որ ունի «պատմութիւն»։ Եւ թարգմանիչը հոս կը փախցնէ մինչեւ իսկ Հայդեգերի բառախաղը, ամենէն պարզ բառախաղերէն մէկը, եթէ բառախաղ է, «geschieht als Geschichte»ի խաղը։ Վկայութիւնը *կը պատահի*։ Կը պատահի *որպէս պատմութիւն*։ Պատմութիւն ըսուածը պատահումունք է, վկայութեան մը պատահիլն է, պատահելու եղանակն է։

Յաջորդ էջին վրայ հիմա ուրիշ սխալ մը պիտի մատնանշեմ ու պիտի փակեմ այս բաժինը։ Հայդեգեր մէջբերում մը կ՚ընէ Հէօլդերլինէն, բացատրելու համար որ «էական խօսք»ը պէտք է հասարակացնել, մինչեւ իսկ թերեւս գռեհկացնել, զայն հասկնալի դարձնելու համար, բոլորին հասարակաց ինչքը եւ սեփականութիւնը ընելու նպատակով։ Մէջբերումը կու տամ նախ գերմաներէնով.

Du sprachest zur Gottheit, aber diess habt ihr all vergessen, daß immer die Erstlinge Sterblichen nicht, daß sie den Göttern gehören. Gemeiner, alltäglicher muß die Frucht erst werden, dann wid sie den Sterblichen eigen[10].

Որուն թարգմանութիւնը կու տամ ահաւասիկ, իմ բառերովս ու արեւմտահայերէն. «Աստուածութեան կ՚ուղղուէիր դուն, բայց բոլորդ մէկ բան մոռցած էք. մոռցած էք որ նախախայրիքը մահկանացուներուն չի պատկանիր, կը պատկանի ան միշտ աստուածներուն: Պտուղը պէտք է նախ հասարակացուի, պէտք է ամէնօրեայ դառնայ, յետոյ միայն կը դառնայ մահկանացուներուն սեփականութիւնը»: Յակոբ Մովսէսի գրչին տակ, այս տողերը կ՚երեւին երեք անգամ, մէյ մը՝ Յառաջաբանին, մէյ մը՝ «Սակայն խօսքը…» պայմանական վերնագիրը կրող կտորակին մէջ, մէյ մըն ալ՝ Հայդեգերի «Հէօլդերլին եւ Բանաստեղծութեան էութիւնը» յօդուածին մէջ որպէս մէջբերում, թեթեւ տարբերութեամբ մը, բայց էապէս նոյնանման, ու իր թարգմանութիւնը հետեւեալն է. «Բայց դուք մոռացել էք ամենքեան, որ առաջնեկները միշտ մահկանացուները չեն, որ նրանք պատկանում են աստուածներին» (էջ 8, 260, 305): Նրանք ի՞նչ, նրանք ո՞վ: Նախախայրիքը խուսափեր է թարգմանիչի ուշադրութենէն, ո՛չ թէ մէկ, այլ երեք անգամ: Հէօլդերլինին արտայայտածը միջնորդութեան գաղափարն է: Հայդեգերի բացատրութիւնը կը վերաբերի լեզուին, որ վտանգաւոր բարիք մըն է, նոյնիսկ ամենէն վտանգաւորը բոլոր բարիքներէն: Թարգմանիչին անուշադրութիւնը բան մը չի փոխեր մէկէն կամ միւսէն: Բայց աւելի մտահոգիչ է թարգմանական սխալը, երբ Յառաջաբանին մէջ կ՚առաջարկուի այս տողերէն մեկնող լման մեկնաբանութիւն մը, ուր կը տեսնուի որ Յակոբ Մովսէս «առաջնեկները» թարգմանելով՝ ի մտի ունէր բանաստեղծները: Բայց քանի որ բանաստեղծներն ալ ի վերջոյ «մահկանացուներ» են (իրապէս ե՞ն), եւ նախադասութեան տրամաբանութիւնը քիչ մը կը կաղայ եթէ ըսենք որ «առաջնեկները միշտ մահկանացուներ*ը* չեն», Հայդեգերեան մէջբերումին մէջ թեթեւ մը սրբագրեր է թարգմանութիւնը, ու գրեր է. «մահկանացուներ չեն», առանց որոշիչ յօդի: Բոլոր պարագաներուն՝ այդ չէ՛ Հէօլդերլինին ըսածը: Կապ չունի: Ու սխալ թարգմանութեան մը վրայ հիմնուած ահաւասիկ Յառաջաբանին բացատրութիւններն ու մեկնաբանութիւնը. «Առաջնեկները… որպէս նախակարապետներ, առջեւից գալիս են. նրանք գրեթէ միշտ անապատ են քաշւում, տեղ բացելով նրանց՝ ում առջեւից գալիս են՝ իրենց ժամանակի մէջ իրենք մնալով որպէս “ձայն բարբառոյ յանապատի” կամ հետեւելով առաջնեկութեան Նիցչէական մի այլ ոսկի կանոնի՝ “Օ, իմ եղբայրներ, ով առաջնեկ է, նա միշտ զոհաբերւում է”»: Պէտք կա՞ր այսքան շունչ հատցնելու զոհագործուող բանաստեղծի վիպապաշտ առասպելը կլլեցնելու համար ընթերցողին:

Հոս պիտի փակէի ներկայ բաժինը թարգմանութիւններու մասին: Բայց նկատողութիւն մը եւս պիտի աւելցնեմ: Հայդեգերէն թարգմանուած երկրորդ ուսումնասիրութիւնը (Wie wenn am Feiertage…), թարգմանիչին կողմէ վերնագրուած է (Հէօլդերլինի 1800ին մէկ բանաստեղծութեան վերնագիրն է) «Ինչպէս տօնօրեքին…»: Այս ուսումնասիրութեան երկրորդ պարբերութիւնը գերմաներէն լեզուով կը հնչէ սապէս (*Erläuterungen*…, էջ 50).

Der hier zugrunde gelegte Text beruht, nach den urschrifitlichen Entwürfen erneut geprüft, auf dem folgenden Versuch einer Auslegung.

Բեդա Ալլեման, իր գիրքին առաջին էջերուն, կ’անդրադառնայ այս երկու տողերուն, ու զանոնք կը նկատէ փիլիսոփային կողմէ նետուած մարտահրաւէր մը: Նետուած որո՛ւն: Անշուշտ բանասէրներուն: Նախադասութիւնը ի հարկէ կ’ըսէ հետեւեալը. «Հոս հիմք ծառայող բնագիրը, հեղինակին ձեռքէն ելած սեւագրութիւններու քննութեամբ կրկին ստուգուած, կը յենի մեկնաբանութեան հետագայ փորձին»: Մարտահրաւէ՞ր մըն է իրապէս, թէ արդեօք կատա՛կ մը Հայդեգերին կողմէ: Որովհետեւ մէկ կողմէ կ’ըսէ թէ բնագիրը ստուգած է: Պէտք է ենթադրել որ գացած է Շտուտգարտ, հոն ուր կը պահուէին Հէօլդերլինի ձեռագիրները (եւ կը պահուին մինչեւ այսօր), բացած է արխիւը, ու տող առ տող ստուգած է Հելլինգրաթի կողմէ երեւան բերուած ձեռագիրը: Այո, այդ պէտք է ենթադրել: Բայց ճիշդ այդ չէ որ կ’ըսէ: Կ’ըսէ որ բնագրային ընթերցումը կը յենի ի՛ր մեկնաբանութեան վրայ: Մեկնաբանութիւնն է ուրեմն որ վերջին հաշուով կ’որոշէ բնագիրի մը ընթերցումին ճշդութիւնը, ստուգութիւնը: Այսինքն եթէ մեկնաբանութիւնը որոշէր որ այսի՛նչ բառը պէտք է կարդալ x եւ ո՛չ թէ y, եւ եթէ սեւագրութիւնները ստուգապէս y ընթերցումը պարունակէին, պիտի եզրակացնէր որ սեւագրութիւնները սխալ ընթերցում կ’առաջարկեն եւ օրինակ՝ որ Հէօլդերլինին ձեռքը այդտեղ սայթաքեր է: Հայդեգեր հետեւաբար կը հաւաստէ, կը հռչակէ մեկնաբանութեան առաջնահերթութիւնը որեւէ բանասիրական ճշգրտութեան նկատմամբ ու բաղդատմամբ: Եւ հիմա Յակոբ Մովսէսի թարգմանութիւնը. «Այստեղ հիմք ընդունուած՝ ըստ սկզբնաղբիւրային սեւագրութիւնների նորից ստուգուած տեքստին է յենւում մեկնաբանութեան սոյն փորձը» (*Բանաստեղծութիւններ*, էջ 320): Այսինքն եթէ լաւ կը հասկնամ՝ մեկնաբանութիւնը կը յենի որպէս հիմք ընդունուած եւ կրկին ստուգուած տեքստին վրայ: Հայդեգերի ըսածին *ճիշդ հակառակը*: Եւ քանի որ թարգմանիչը գերմաներէն գիտէ, ենթադրութիւնս այն է, որ կա՛մ իր ուշադրութենէն վրիպեր է ըսուածը, իր տարօրինակութեան պատճառով, կա՛մ ալ թարգմանիչը չէ ընդուներ ըսուածը ու որոշեր է սրբագրել, նախադասութեան վերադարձնելով իր աչքին ընդունելի իմաստ մը: Երկու պարագաներուն, գիտակցաբար կամ ոչ, ուզեր է սրբագրել Հայդեգերի բնագիրը: Հայդեգերին սկզբունքը կիրարկեր է Հայդեգերի տեքստին: Մեկնաբանութիւնը առաջնահերթութիւն կը վայելէ բնագրային ճշգրտութեան նկատմամբ: Անշուշտ ծանրակշիռ ու աշխարհացունց սխալ մը չէ: Զուարճալի ալ է: Կը փաստէ միայն մէկ բան. որ Յակոբ Մովսէս չէ կարդացեր Բեդա Ալլեմանի գիրքը:

3

Բայց չվերջացուցի գիրքին նկարագրութիւնը: Յակոբ Մովսէսի հրամցուցած գիրքին մէջ կայ ի հարկէ բաժին մը եւս, «Ծանօթագրութիւններ» վերտառութեամբ (էջ 404– 489), որուն մէջ մէկ առ մէկ բոլոր բանաստեղծութիւններուն (եւ աւելի սեղմ կերպով՝ նաեւ յօդուածներուն եւ ուսումնասիրութիւններուն) մասին տեղեկութիւններ կը տրուին. յօրինումի հաւանական թուական, հրատարակութեան մանրամասնութիւնները եթէ լոյս տեսած են Հէօլդերլինի կենդանութեան, յատուկ անուններուն շուրջ տեղեկութիւններ, եւ ասոնցմէ աւելի կարեւորը՝ երբեմն Հէօլդերլինի բարդ շարահիւսութեան հասկացողութիւնը դիւրացնելու համար ըսուածին վերաշարադրութիւնը: Եւ հոս յանկարծ կը հանդիպինք իսկական Յակոբ Մովսէսին, որ հասկնալի լեզուով իր կարծիքը կը յայտնէ եւ իր մեկնաբանութիւնները կ’առաջարկէ թարգմանած քերթուածներուն մասին, նաեւ յաւելեալ տեղեկութիւններ կու տայ: Կան Բայսների եւ Յոխըն Շմիդտի հրատարակութենէն առնուած բացատրութիւններ, բառացիօրէն

մէջբերուած, ընդօրինակուած, երբեմն առանց չակերտի, երբեմն չակերտեալ (չակերտեալներէն օրինակ մը, «Կեանքի կէս»ին մասին, էջ 445)։ Տարօրինակ տպաւորութիւն մը կը ձգէ անշուշտ կարդալ առանց չակերտի եւ առանց անու-նի յիշատակութեան Բայսներ-Շմիդտի հրատարակութենէն ընդօրինակուած պարզաբանումները, եւ ա՛լ աւելի տարօրինակ երբ ընդօրինակութիւնը կաղա-ցող թարգմանութեամբ տրուած է։ Ահաւասիկ օրինակ մը, «Հաց եւ գինի» էլե-գիային վերաբերեալ պարզաբանական էջերէն առնուած։ Սկիզբը Բայսների անունին յիշատակումով կը տրուի էլեգիային «պայմանական բաժանումն ու շարադրանքը»։ Ուրիշ անուններ ալ կը յիշատակուին, ինչպէս հոս անցողակի՝ Հանս Յիրգըն Բալմէսի անունը (Բալմէս Հէօլդերլինի Ամբողջական գործե-րու տարբեր եւ ի դէպ՝ արժէքաւոր հրատարակութեան մը նախաձեռնարկն է)։ Բայց պարզաբանումները ծայրէ ծայր հիմնուած են Բայսներ-Շմիդտի բա-ցատրութիւններուն վրայ։ Առնենք «Բայց յետոյ իրենք իսկ գալիս են Ճշմարի-տով պարուրուած» տողին բացատրութիւնները (էջ 429)։ Ահա՛ Յակոբ Մովսէ-սին գրածը. «Սա բնաւ չի նշանակում, որ Երկնայինները ցայժմ այստեղ չեն եղել եւ լոկ հիմա են գալիս...», իսկ Բայսներ-Շմիդտ՝ «...bedeutet nicht daß die Himmlischen noch nicht dagewesen sind und erst jetzt kommen» (էջ 55)։ Այսպէս՝ ընդերկար, առանց չակերտի։ Առնենք ուրիշ օրինակ մը, այս անգամ «Բայց ո՞ւր են նրանք»ի բացատրութիւնը, նոյն էջին վրայ. «Այստեղ մտքի ընթացքը դարձեալ, առաւել բարձր մի հարթութեան վրայ, դրւում է այնտեղ, ուր 4րդ տան մէջ ընդհատուել էր։ Մինչդեռ լինելութիւնը կայացմամբ է ներկայացւում՝ աստուածների էութիւնը առ մարդ իրենց էջքի աստիճանական երեւակումով է հանդէս գալիս»։ Իսկ Բայսներ-Շմիդտ՝ «Hier ist der Gedankengang wieder, auf einer höheren Ebene, dort angelangt, wo er... unterbrochen worden ist. Inzwischen ist das Sein durch das Werden dargestellt, das Wesen der Götter durch die allmähli-che Auswirkung ihrer Einkehr bei den Menschen»։ Բառ առ բառ թարգմանութիւն է։ Արգիլուած չէ, կ՚ենթադրեմ, ուրիշի մը պարզաբանումները բառացի փո-խադրելը։ Բայց գիրքին մէջ ո՞ւր ըսուած է որ այդպիսի փոխադրութիւն մըն է կատարուածը եւ ո՞ւր տրուած է ատոր արդարացումը։ Արդեօք ըսուա՞ծ է եւ իմ աչքէս վրիպեցա՞ւ։ Ամենէն տարօրինակը սակայն մէջբերուած գերմանե-րէն վերջին նախադասութեան հայերէն թարգմանութիւնն է։ Seinը կը դառ-նայ «լինելութիւն», Werdenը՝ «կայացում»։ Auswirkungը (որ պարզապէս «ազ-դեցութիւն» կը նշանակէ) կը դառնայ «երեւակում»։ Երբեմն ալ Յակոբ Մովսէս կ՚ընդօրինակէ ու ընդօրինակածը կը փոխէ։ Ահաւասիկ ընդօրինակութեան-փոփոխութեան գեղեցիկ օրինակ մը նախորդ էջին վրայ։ Խօսքը կը վերաբե-րի Դիոնիսոսին՝ եկող աստուծոյ, այսինքն այն աստուծոյ որուն էութիւնն է «գալ»ը, թափառիլը, մէկ աշխարհամասէն միւսը անցնիլը։ Պիտի մէջբերեմ նախ Բայսներ-Շմիդտի գերմաներէնը. «Der Weingott Dionysos, in dessen ho-her Naturgabe, wie der weitere Verlauf des Gedichts noch zeigt, das Göttliche sich verbirgt» (էջ 54)։ Դիոնիսոս, որպէս գինիի աստուած, *կը թաքցնէ* իր մէջ տա-կաւին իր աստուածային բնոյթը, սկիզբը կը յայտնուի որպէս բնութեան պար-գեւ միայն։ Ահա ընդօրինակութիւնը. «Գինու աստուած Դիոնիսոսը, ում բարձր բնական շնորհին մէջ, ինչպէս բանաստեղծութեան հետագայ ընթացքն է ցոյց տալիս, ընդհանրապէս աստուածայինն է»։ Թեթեւ փոփոխութիւն մըն է հոս եղածը, որ սակայն կը կորսնցնէ բացատրութեան իմաստը, որ աստուածայի-նի թաքցուելուն մէջ կը կայանար։ Անմիջապէս ետքը կու գայ «der kommende Gott»ին «եկող» բառին բացատրութիւնը, ընդօրինակուած։ Յետոյ՝ «Der Sinn des Verses liegt also darin, dass der Gott kommt, weil dies seinem Wesen, das eben

das eines kommenden Gottes ist, entspricht: eine Anspiegelung auf den mythischen Dionysos, der grosse Züge macht, wandert, in ferne Weltgegenden kommt und damit für Hölderlin zum Symbol für die erhoffte Wanderung göttlicher Erfüllung von Osten nach Westen, von Griechenland ins heimatliche Hesperien wird»: Իր գալը իր էութեան կը համապատասխանէ: Առասպելի Դիոնիսոսը կը թափառի մէկ երկրէն միւսը, եւ Հէօլդերլինի համար կը խորհրդանշէ աստուածային գաղթի (եւ վերադարձի) յոյսը, Արեւելքէն Արեւմուտք, Յունաստանէն Հեսպերիա: Այս է Բայսներ-Շմիդտին ըսածը: Եւ ահաւասիկ հիմա Յակոբ Մովսէսին փոփոխուած ընդօրինակութիւնը. «Տողի իմաստին մէջ ուրեմն թաքուն ընդգծւում է Քրիստոսի՝ Դիոնիսոսի ոչ թէ յաւելուած, այլ յաւելուող աւետարանական գալստեան խոստումը» (էջ 428): Աղուոր օրինակ մըն էր այս մէկը ցոյց տալու համար թէ ինչպէս Յակոբ Մովսէս կ'ընդօրինակէ եւ տեղ տեղ՝ իր ընդօրինակածը կը փոխէ երբ զայն չի հաւնիր, երբ չի համապատասխաներ ի՛ր հասկցածին կամ ի՛ր ըսել ուզածին: Իր ուզածը «Սուրբ Հոգու խոստում»ն է (քիչ անդին Մ. Բիբիխինի մէջբերումով մը հաստատուած, «հաց»ի սրբութեան մասին[11]):

Ընդօրինակութեան օրինակ մը եւս ցոյց տանք, նոյն էջերու սահմաններէն ներս, այս անգամ այն տողերուն շուրջ ուր Հէօլդերլին կ'ըսէ թէ հոգիով հրճուողներուն համար, մեծագոյնը չափազանց էր մեծ, մարդոց ընկալումի կարողութիւններէն շատ անդին: Այս մէկ օրինակը կը բերեմ միմիայն տեսնելու համար թէ Յակոբ Մովսէս ինչպէ՛ս կը հասկնայ իր կարդացածը, հոն ուր մասնաւոր պատճառ մը չունի զայն փոխելու եւ խեղաթիւրելու. «Die Freude ist ein Zentralthema in der Dichtung Hölderlins, sie ist nicht nur ein in der Gefühläußerung sichtbarwerdender Affekt, sondern ein die ganze Existenz in ihrem Bezug zum Göttlichen bezeichnender Zustand» (էջ 57), ուր կ'ըսուի պարզապէս թէ Հէօլդերլինի կեդրոնական բնանիւթ հանդիսացող հրճուանքը ամբողջական ապրելակերպը բնորոշող վիճակ մըն է, աստուածայինին հետ իր կապակցութեամբ: Ու ահաւասիկ ընդօրինակութիւնը. «Հէօլդերլինի բանաստեղծութեան մէջ… հրճուանքը հիմնաթեմա է, այն ոչ միայն զգացմունքի դրսեւորմամբ տեսանելի դարձող գրգիռ է, այլեւ աստուածայինի առնչութեան մէջ ողջ գոյութիւնը բնորոշող վիճակ» (էջ 431): Եւ հոս հրաշք՝ Existenzը կը թարգմանուի «գոյութիւն»: Եւ լման հատուածը ինչպէս միշտ՝ առանց չակերտի:

Յաջորդ բանաստեղծութեան («Տունդարձ») պարզաբանումներուն մէջ չկա՛յ գրեթէ Բայսներ-Շմիդտի հետքը, ու փոխարէնը հրամցուած է երկար մէջբերում մը Հայդեգերի «Նամակ հումանիզմի մասին» գիրքէն, ուր փիլիսոփան կ'անդրադառնայ ո՛չ թէ այս էլեգիային մասնաւորաբար, այլ ընդհանուր առմամբ՝ «հայրենի»ի եւ «հայրենիք»ի գաղափարին Հէօլդերլինի մօտ, գերմաներէն սակայն՝ Heimat: «Հայրենի»ի կամ «ծննդավայր»ի էութիւնը, կ'ըսէ Հայդեգեր, պէտք չէ մտածուի հայրենասիրական կամ ազգայնական նախադրեալով, այլ seinsgeschichtlich: Արդի մարդուն տարագրութիւնը, այսինքն ակունքէն ձերբազատուած ըլլալը կարելի է հասկնալ միմիայն «գոյապատմութեան» կամ «էապատմութեան» ծիրին մէջ: Գերմաներէն արտայայտութիւնն է՝ Geschichte des Seins: Յակոբ Մովսէս կը թարգմանէ՝ «գոյութեան պատմութեան լոյսի ներքոյ» (էջ 432): Միշտ նոյն դժուարութիւնն է, այն մէկը որուն ակնարկեցինք աւելի առաջ, Հայդեգեր թարգմանելու անիմաստութիւնը, երբ մենք մեր լեզուին մէջ չենք ստեղծեր իր մտածողութեան հետ չափուելու (եւ ի միջի այլոց «սրբազնութեան» մասին իր ըսածին հաւասարելու) միջոցները: Հայդեգեր նոյն «Նամակ հումանիզմի մասին» գրութեան մէջ շատ բացայայտ է այս ուղղութեամբ. «Das Heilige… kommt dann allein ins Scheinen, wenn zuvor und in langer

Vorbereitung das Sein selbst sich gelichtet hat und in seiner Wahrheit erfahren ist»[12]: Սրբազնութիւնը այն ատեն միայն պիտի փայլի մեր աչքին երբ (կամ՝ պայմանաւ որ) ատկէ առաջ եւ երկար պատրաստութեան մը որպէս արդիւնք ու հետեւանք, էական բայը (կամ այ՛ն ինչ որուն համար կը գործածուի hոս էական բայը) ինքը ինքզինք բերէ լոյսին եւ փորձընկալուի իր ճշմարտութեան մէջ: Չեմ յաւակնիր թարգմանած ըլլալ այդ նախադասութիւնը: Գաղափար մըն էր տուածս: Գիտեմ միայն որ եթէ Seinը թարգմանենք «գոյութիւն», եթէ մտածողական աշխատանք մը չտանինք Հայդեգերի հետքերուն վրայ (եթէ այդ է մեր նպատակը), որպէսզի էական բայի Հայդեգերեան գործադրումը սկսի փայլիլ մեր աչքին, ու էական բայը վերջապէս փորձընկալուի իր ճշմարտութեամբ, այն ատեն ո՛չ էական բայը, ո՛չ սրբազնութեան էութիւնը պիտի շարունակենք հասկնալ ու մեկնաբանել կրօնական առումով, չըսելու համար՝ քրիստոնէական եզրաբանութեամբ: Չեմ ըսեր, որ մէկը կամ միւսը աւելի ճիշդ է: Բայց չեմ հասկնար Հայդեգեր թարգմանելու եւ մէջբերելու անհրաժեշտութիւնը, եթէ շրջուած պիտի հասկնանք զինքը: Կը կրկնեմ ուրեմն. կրօնականը, աստուածայինը, սրբազնութիւնը պիտի հասնին մեզի միմիայն էական բայի բացած բացատին մէջ, էական բայի ճշմարտութեան (եւ ուրեմն նաեւ անոր կատարեալ մոռացութեան) փորձընկալումով, ո՛չ թէ հակառակը: Գոնէ ա՛յդ է Հայդեգերին ըսածը:

Եւ հիմա վերջին կէտի մը պիտի անդրադառնամ, որպէսզի ըսածս աւելի բացայայտ կերպով երեւի ընթերցողի աչքին: «Բանաստեղծի կոչում» քերթուածի վերջաւորութեան, Հէօլդերլին սրբագրութիւն մը մտցուցած է (որուն պիտի անդրադառնամ մանրամասնօրէն աւելի ուշ), որուն համաձայն կը կարդանք վերջնական տարբերակին մէջ՝ «so lange, bis Gottes Fehl hilft», այնքան ատեն որ (կամ՝ մինչեւ որ) Աստուծոյ «բացակայութիւնը օգնէ», կամ՝ «պակասը օգնէ»: Դժուարութիւնը գերմաներէն Fehl բառի վրայ է, ի՞նչ է Fehlը, պակա՞ս մը, հեռացո՞ւմ մը, երեւոյթ՞ մը, խախտո՞ւմ մը, վիժո՞ւմ մը: Այսօրուան փողոցի գերմաներէնով Fehl բառը մինակը շատ չի գործածուիր: Կը մտնէ բառակապակցութիւններու մէջ, ինչպէս Fehlgeburt, «վիժում»: Սխալ մը, խանգարուածութիւն մը, փլուզում մը: «Խանգարուած վերելակ» պիտի ըսէր Վահէ Օշական: Հոս է որ Յակոբ Մովսէս, յիշելէ ետք որ հարիւրաւոր էջեր գրուած են գերմանացի եւ ֆրանսացի հեղինակներուն կողմէ այդ մէկ տողին շուրջ (եւ Մորիս Բլանշոյի «Հէօլդերլինի ուղին» կ՚անդրադառնայ անշուշտ անոր), կը գրէ ծանրակշիռ տողեր: Կը մէջբերէ Հայդեգեր, հետեւեալ ձեւով. «Միայն Աստուած կարող է մեզ փրկել», ու այդ խօսքը կը կոչէ «մեր դարաշրջանի դռան վերեւում գրուելիք կարգախօս-միտքը»: Ընթերցողը գիտէ հաւանաբար որ այդ միտքը (կամ ատոր համանմանը) Շպիգել թերթի յետ մահու տպուած հարցազրոյցի մը ընթացքին արտասանուած է: Յակոբ Մովսէս կը թարգմանէ խօսքը պարունակող տողերը (էջ 438–439), որոնց ահաւասիկ նախ գերմաներէն բնագիրը.

> Die Philosophie wird keine unmittelbare Veränderung des jetzigen Weltzustandes bewirken können. Dies gilt nicht nur von der Philosophie, sondern von allem bloß menschlichen Sinnen und Trachten. Nur noch ein Gott kann uns retten. Uns bleibt die einzige Möglichkeit, im Denken und im Dichten eine Bereitschaft vorzubereiten für die Erscheinung des Gottes oder für die Abwesenheit des Gottes im Untergang; daß wir im Angesicht des abwesenden Gottes untergehen[13].

Ու իմ լեզուովս թարգմանութիւն մը.

> Փիլիսոփայութիւնը աշխարհի այսօրուան վիճակին մէջ անմիջական փոփոխութիւն մը չի կրնար յառաջացնել: Եւ այս մէկը ճիշդ չէ միայն փիլիսոփայութեան պարագային, կ'արժէ միւս բոլոր մարդկային ջանքերուն համար, մտային թէ գործնական: Միայն աստուած մը կրնայ մեզ փրկել: Մեզի կ'իյնայ միայն մտածողութեամբ ու քերթողութեամբ նախապատրաստական ակնկալութիւն մը ստեղծել այդ աստուծոյ յայտնութեան համար կամ անոր բացակայութեան համար, կործանման ճամբուն վրայ, որպէսզի կործանման ճամբան բռնենք բացակայ աստուծոյ դէմ յանդիման:

Անշուշտ տեղը չէ հոս բացատրելու այսպիսի յայտարարութեան մը լման համածիրը, անոր ետին գտնուող նիհիլականութեան գաղափարը, եւ «տեխնիկայ»ի համաշխարհայնացումի յաճախանքը Հայդեգերի մտքին մէջ, որ երեսունական թուականներէն մնացած բրածոյ մըն էր, Էռնստ Իւնգերէն ժառանգուած երանգներով, եւ եւրոպական բնազանցութեան պատմութեամբ բացատրելի (եւ Untergang բառն ալ, բնական է, արձագանգ մըն է Շպենգլերի հռչակաւոր *Der Untergang des Abendlandes*ին, որ յայտարարութիւնը կը դարձնէ յիսուն տարի ուշացումով Շպենգլերին ուղղուած յետ մահու պատասխան մը): Այս տողերը մէջբերեցի առ այժմ միայն մէկ պատճառով. նշմարել տալու համար որ Յակոբ Մովսէս Հայդեգերի Nur ein Gott kann uns retten յայտարարութիւնը կը թարգմանէ «Միայն Աստուած կարող է մեզ փրկել» (էջ 439): Իսկ «eine Bereitschaft vorzubereiten für die Erscheinung des Gottes oder für die Abwesenheit des Gottes im Untergang» կը թարգմանէ «նախապատրաստուի պատրաստութիւնը Աստծոյ յայտնութեանը կամ Աստծոյ բացակայութեանը կործանման մէջ»: Գերմաներէնը կ'ըսէ «des Gottes», ոչ թէ «Gottes»: Առաջին պարագային՝ հասարակ անուն մըն է (այդ մէկ աստուծոյ որ պիտի յայտնուի եւ որուն անունը չենք գիտեր, քանի որ ամէն պարագայի «անունները կը պակսին»): Երկրորդ պարագային՝ յատուկ անուն մը պիտի ըլլար: Գլխագրուած յատուկ անուն մը դնել հոն ուր գերմաներէն բնագիրին մէջ հասարակ անուն մըն է գործածուածը թարգմանական սխալ մը չէ անշուշտ: Ո՛չ: Պարզ խեղաթիւրում մըն է: Հայերէնով միակ ձեւը զատորոշելու հասարակն ու յատուկը, գլխագիր չգործածելն է[14]: Մէկ անգամ ընդմիշտ՝ խօսքը քրիստոնէական Աստուծոյ մասին չէ: Գալիք աստուածը քրիստոնէական գլխագիր Աստուածը պիտի չըլլայ: Եւ «միայն աստուած մը»ի (nur ein Gott) եւ «Միայն Աստուած»ի միջեւ անջրպետային տարբերութիւն մը կայ: Ուրեմն՝ կատարեալ խեղաթիւրում: Հայդեգերի ըսածին խեղաթիւրումն է: Եւ այսպէս թէ այնպէս՝ Հէօլդերլինի «մինչեւ որ Աստուծոյ թերացումը օգնէ» տողին ըսածը կը մնայ աննկատ: Ո՞ր մէկն է արդեօք որ մեզ պիտի «օգնէ»: Գալո՞ւստը: Թէ՞ վերջնական թերացումը, թերացումին հաւասարելու մեր փո՛րձը:

Հպատակի՛լ թերացումին: Հէօլդերլինեան հրամայականն է: Յանձնուիլ կորուստին: Հրամայականը կը կարօտի բացատրութեան: Ինչպէ՞ս հպատակիլ: Ինչպէ՞ս յանձնուիլ: Բանաստեղծօրէ՛ն: Այդ չէ՞ր Հէօլդերլինին խօսքը: «Բանաստեղծօրէն կը բնակինք»: Բանաստեղծօրէն կը հպատակինք աստուածներու թերացումին: Հէօլդերլինի գրչին տակ՝ հրամայական մըն է, ո՛չ թէ հաստատում մը: Այո, բայց ի՞նչ է բանաստեղծօրէն թերացումին հպատակիլը:

Ինչպէ՞ս հպատակիլ: Հէօլդերլինին պատասխանն է. թարգմանելով, քանի որ ուրիշ բան չմնաց ընելիք: Թարգմանելով կորուսեալ լեզուին մէջ: Թարգմանելով կորուստը: Այն յոյսով՝ որ այդպէս երեւան պիտի գայ կորուսեալ լեզուն որպէս կորստեան լեզու, ինքն իր աչքին, իր դիակի լման շքեղանքով: Կրկնակի հրամայական մը ուրեմն, որուն նշանակութիւնը երեւան պիտի ելլէ հետզհետէ:

4

Մինչ այդ Յակոբ Մովսէսի թարգմանութիւններուն մասին ներկայ քննութիւնը պիտի փակեմ յաւելեալ նկատողութեամբ մը: Ընթերցողը հասկցած կ՚ըլլայ որ ամենէն *անպանելին* իմ աչքիս Հէօլդերլինի զինուորագրումն է Եւրոպայի մշակութային արժէքներուն պաշտպանութեան ի խնդիր (որ կը կատարուի ընդհանրապէս հակա-անկումային, հակա-նիհիլիստական պայքարի մը անունով), որ աստիճան մը աւելի անտանելի կը դառնայ երբ հարցը քրիստոնէական Եւրոպայի մը պաշտպանութիւնն է: Եւ ուրեմն… Հէօլդերլինի «Der Gang aufs Land» էլեգիա-եղերերգին առիթով (Յակոբ Մովսէսի կողմէ «Զբօսախնջոյքը» թարգմանուած, եւ ֆրանսերէն թարգմանիչին՝ Ֆիլիպ Ժաքոտէի կողմէ «Promenade à la campagne»[15]), թարգմանիչը իր ծանօթագրութիւններուն մէջ կը հիանայ, տեսնելով թէ «ինչպէս է կենցաղային առիթով գրուած բանաստեղծութիւնը… վերածւում Աստուծոյ տիեզերական համակառոյցի… եւ համատիեզերական տօնախմբութեան փառաբանման»: «Համակառոյց» բառը յանկարծ կը ներշնչէ թարգմանիչ-ծանօթագրողը, որ փակագծի մէջ կ՚աւելցնէ. «Իտալացի Հէօլդերլինագէտ Ռ. Գուարդինին բանաստեղծին նուիրուած իր անգերազանցելի գրքում գրում է՝ “Տիեզերքի՝ Աստուծոյ կառուցած հոյակերտ հիւրանոցի”» (էջ 422): Ինչո՞ւ չէ: Ո՞ւր կը տեսնէ Աստուծոյ կառուցած տիեզերքը: Անկեղծօրէն՝ չեմ գիտեր: Բանաստեղծութեան առիթը Շտուտգարտի մէջ հիւրանոցի մը բացումն էր: Եւ ճիշդ է որ ինքն իրեն համար խծբծուած լուսանցքային տող մը ունի Հէօլդերլին, ուր ինքն իրմէ կը գանգատի: Ինչո՞ւ պէտք էր որ այսքան թեթեւ առիթի մը համար գրուած իր տողերը, կ՚ըսէ, այսքան ծանր կշռէին. «Կ՚ուզէի այս անգամ թեթեւ երգ մը գրել, բայց երբեք բախտս չի ժպտիր»: Իսկ ի՞նչ կ՚ըսէ բանաստեղծութիւնը: Ցնծալից պահի մը մասնակիցը եւ արձագանգիչը կ՚ըլլայ: Ներքին ցնծումէ մը կը քաղէ իր ուժը: Ներքին ցնծումը կը սկսի երբ «մեր լեզուն կ՚արձակուի», երբ «բառը կը գտնենք», երբ «մեր փթթումով նաեւ երկնքի փթթումը կը սկսի»: Կը յիշեցնէ հին աւանդութիւնը, որուն համաձայն ատաղձագործը տան քիւին կայնած՝ ճառ մը կը խօսէր: Եւ հիմա, այսօր, հին աւանդութեան նման, ինքն է որ բացումի այդ խօսքը կ՚արտասանէ, բանաստեղծօրէն, այսօրուան թերացումին եւ բնակելու ստիպողութեան համաձայն: Մենք մեր պարտականութիւնը կատարեցինք, կ՚ըսէ Հէօլդերլին: Աւաասիկ: Ես ալ իմ պարտականութիւնս կատարեցի: Բայց եթէ ուրիշներ այդ հիւրանոցին մէջ կ՚ուզեն նաեւ փոխաբերութիւն մը տեսնել, ինչո՞ւ չէ: Միշտ նոյն մտասեւեռումն է. Հէօլդերլինի գրածներուն տալ քրիստոնէական երանգ ու նշանակութիւն:

Իսկ ո՞վ է Ռոմանոյ Գուարդինին, եւ ո՞րն է Հէօլդերլինի մասին այդ անգերազանցելի գիրքը: Գուարդինի (1885-1968) իտալական ծագումով բայց Գերմանիա մեծցած ու դաստիարակուած, եւ իր բոլոր գործերը գերմաներէն գրած փիլիսոփայ ու աստուածաբան մըն էր, 1910ին Կաթողիկէ վարդապետ օծուած, եւ Ի. դարու Կաթողիկէ եկեղեցիին պատկանող աչքառու մտածողներէն մէկը: Բրեսլաւյի համալսարանը դասաւանդած է մինչեւ 1939, ընդհանուր նիւթ ու-

ննալով քրիստոնէական աշխարհայեացք եւ կրօնական փիլիսոփայութիւն, եւ 1945էն ետք Տիւբինգենի եւ Միւնիխի համալսարանները։ Երկու գիրք ունի Հէօլդերլինի մասին, բայց կ՚ենթադրեմ որ Յակոբ Մովսէս 1939ի *Hölderlin: Weltbild und Frömmigkeit* (Հէօլդերլին՝ Աշխարհայեացք եւ կրօնասիրութիւն) հատորին կ՚ակնարկէ[16]։ Գուարդինին յառաջադէմ աստուածաբան մըն էր։ Գրած է Նիցշէի, Ռիլկէի, Դոստոյեւսքիի, Կիրկեգորի մասին։ Այդ աշխատասիրութիւններուն մէջ, իր առարկան կրօնական փորձընկալումն էր, այդ շրջանին տիրապետող գոյութենապաշտ շարժումէն ազդուած մասամբ։ Եւ անշուշտ հասկնալի է որ Կաթողիկէ տեսաբանի մը համար՝ աստուծոյ բացակայութիւնն ալ Աստուծոյ փորձընկալում մըն է, եւ վերջին հաշուով՝ հաստատումը քրիստոնէական աշխարհայեացքին եւ պատմական ճշմարտութեան։ Գուարդինիին բերած մեծ նորութիւնը այն էր, որ Հէօլդերլինի մօտ յունական աստուածներու կարօտաբաղձ ներկայութիւնը կը կարդացուէր իր կողմէ որպէս իրական փորձառութիւն, կրօնական արժէք ունեցող ապրում, եւ ոչ թէ ըսենք որպէս «գեղագիտական» պաճուճանք կամ «բանասիրական» տուեալներէ քաղուած աւելորդաբանութիւն։ Այդ արժէքի ճանաչումին ընդմէջէն կ՚ուսումնասիրուէր Հէօլդերլինեան փորձընկալումին երեսակները (եւ տարբեր հանգրուանները), երեսակներ որոնք ի հարկէ կը մնային կոտորակուած, ներաշխարհի պրիսմակէն անցած աստուածային ներկայութեան մը յայտնակերպումները։ Եւ խորքին մէջ ուրեմն հեղինակի գործին վրայ հիմնուած կրօնական երեւութաբանութիւն մըն էր փորձուածը։ Այսինքն՝ Հէօլդերլինի հին աստուածները բանասիրական աստուածներ չեն։ Բանաստեղծը իրապէս դէմ առ դէմ եկած է անոնց հետ։ Գուարդինիի գործածած բառն է angetroffen (էջ 340), որ կը նշէ փորձընկալուած սրբազնութեան արտաքնութիւնը։ Իր մէջ «կրօնական զգացողութիւն»ն է որ դէմ առ դէմ եկած է աստուածներուն հետ։ Ո՛չ միայն բանաստեղծին կրօնական փորձառութիւնը որպէս այդ «իրական» էր, այլեւ իր «աստուածներ»ը իրական էին (էջ 193)։ Անշուշտ յոյն աստուածներու «իրականութիւն»ը բացատրութեան կը կարօտի։ Բացատրելու ձեւ մըն է գիրքին մէկ ծայրէն միւսը որպէս տնօրինող ստորոգութիւն գործածուած «Numen» եւ «Numinosität» բառերը, որոնք փոխ առնուած են ժամանակակից մարդաբանական կրօնագիտութեան կալուածէն, մասնաւորաբար անշուշտ Ռուդոլֆ Օտտոյէն[17]։ Սրբազնութեան այդ ենթադրաբար համընդհանուր փորձընկալումն է, զոր Գուարդինի կը կարդայ Հէօլդերլինի տողերուն մէջ։ Եւ սակայն պէտք է ուրիշ ձեւ մըն ալ ըլլայ աստուածներու «իրականութիւն»ը բացատրելու։ Յոյներու աստուածները պէտք ունին վերամեկնաբանուելու արդիական փորձընկալումի լոյսին տակ։ Ասոր կողքին Գուարդինի միշտ աչքին առջեւ ունի Հէօլդերլինի բանաստեղծական արտադրութեան մէջ արտայայտուած «աստուածաբանական» դրոյթները քրիստոնէութեան սկզբունքներուն հետ չափելու անհրաժեշտութիւնը, կրկին երկու ձեւով. իրենց «առարկայական» արժէքին համաձայն, եւ բանաստեղծին ներքին ընթածիրին քննութեամբ։ Որովհետեւ ի հեճուկս ամենայնի կայ ըստ իրեն Հէօլդերլինի մօտ «գաղտնի քրիստոնէութիւն» մը, որ կը ծաւալի նախ ներքնապէս եւ վերջին տարիներուն երեւան կու գայ փառաւոր կերպով «քրիստոսաբանական» կոչուած բանաստեղծութիւններուն մէջ։ Ահաւասիկ ինչ կ՚ըսէ, էջ 197. «Շրջան մը Հէօլդերլին հեռու պահած է իրմէ քրիստոնէական պատկերներն ու գաղափարները, բայց ետքը Քրիստոսի կերպարը սկսած է իր մէջ եռալ ու խլրտիլ։ Ստացած է հետզհետէ աւելի ուժգնութիւն, եւ հին աշխարհի աստուածութիւնները այս կերպարին հետ մտած են վիճարկումի, որուն խորութեան չէր հասներ իդէապաշտ համադրութեան

ընձեռած յղացքը։ Ամբողջ հոգիով մղուած այդ պայքարը սակայն իր աւարտին չէ հասած, ընդմիջուած է հոգեկան խաւարումին պատճառով»։ Այս ամբողջը սակայն նախապատրաստական նկատողութիւններ են միայն Գուարդինիի մօտ։ Բուն հարցը կը շօշափուի գիրքին մէջտեղը, «Աստուածներու էութիւնը եւ միութիւնը» խորագրուած գլուխով (մասնաւորաբար էջ 340-354)։ Այդ գլուխն է որ պիտի փորձեմ ամփոփել հիմա։

Հարցադրումը պարզ է. ի՞նչ կարգավիճակ պէտք է ընծայել հին աստուածներուն։ Հարցումը երկու երես ունի։ Ի՞նչ կարգավիճակ է իրենցը եթէ Հէօլդերլինի փորձընկալումին հետեւինք։ Եւ ի՞նչ կարգավիճակ պիտի ունենան այդ աստուածները ըստ ինքեան։ Հարցումին դրուած ձեւէն կրնանք վստահ ըլլալ յառաջագունէ, որ յարակարծական արդիւնքներու պիտի հասնինք։ Ամէն ինչ կը քննուի հոս «հաւատքի ճշմարտութենէն» մեկնելով եւ կ'եզրակացուի որ «այդ կերպարները… Արարչութեան իրողութեան մասնակի ձեւեր են» (էջ 343)։ Իսկ աստուածներ կը դառնան անոնք, «երբ մարդ էակը աշխարհը կը նկատէ ինքնավար եւ ինքզինք կը հռչակէ անոր տէրն ու տիրականը» (անդ)։ Գուարդինի այս նախադասութիւնը գրելու պահուն իսկ սակայն կ'անդրադառնայ որ հակասական է ան, քանի որ արդիականութեան բնատիպն է որ կ'արտայայտուի ու կը թարգմանուի այդտեղ։ Իսկ Յոյնե՞րը։ Արդիականութեան բնատիպո՞վ ծնունդ կու տային արդեօք իրենց աստուածներուն կամ կը հանդիպէին անոնց։ Ճիշդ է, որ այդ ձեւով ունինք կրօնական փորձընկալումը, իր ամենէն սկզբնական ձեւին մէջ հասկցուած, որպէս հանդիպում եւ անուանակոչում (Antreffren und Benennen)։ Աստուածները գլխագիր Աստուծմէ ձերբազատ մարդկութեան մը հիմնական կամեցողութիւնը կ'արտայայտեն։ Բայց այդ ըսելով իսկ՝ գլխաւոր հարցադրութեան չենք մօտեցած տակաւին։ Երբ հին աստուածներու հետ կապակցութիւնը բանաստեղծական չէ, կը մնայ միայն երկու լուծում։ Այդ երկու լուծումները չեն հակասեր անպայման իրարու, այլ կրնան գոյակցիլ նոյն փաստարկումին մէջ։ Առաջին լուծումը այն է որ այդ աստուածները (ինչպէս որ անոնք կը փորձընկալուին արդի բանաստեղծին կողմէ) իրական կենդանի Աստուծոյ (եւ հոս նորէն կը գլխագրեմ) յայտնակերպումներն են։ Կրօնական զգացողութիւնը մէկ է, բայց իրական Աստուծոյ չհասած անձին համար անոր յայտնակերպումները այլազան են։ Եւ քանի որ քրիստոնէութեան բանականութիւնը ունի իր վտանգները (Գուարդինին է խօսողը, քրիստոնէական *գոյութենապաշտութեան* դիրքաւորումին եւ դրոյթներուն տուրք տալով, կամ զանոնք սիրայօժար շարժումով մը դիմաւորելով, հիւրընկալելով[18]), քանի որ կը հեռացնէ ան կրօնական զգացողութենէն, անհրաժեշտ են այդ զգացողութեան բռնկումին (թէկուզ խաւարոտ եւ արտասովոր կերպով) յանձնուած պատմական փորձընկալումները, ինչպէս եղած է Հէօլդերլինի պարագան։ Այս շատ կարեւոր կէտը բացատրուած է էջ 352։ «Միաստուածութիւն»ը կրօնական բանականութեան կամ բարոյական զգացմունքին ձեւակերպումն է միայն։ Կենդանի Աստուծոյ հետ կապակցութիւնը ուրիշ է, կ'ենթադրէ սրբազնութեան փորձընկալումը։ Եւ կը հասկցուի հետեւաբար թէ ինչո՛ւ Գուարդինիի նման աստուածաբան մը ամբողջ հատոր մը կը նուիրէ Հէօլդերլինին, իր բանաստեղծութեան մէջ գտնելով այդ անմիջական եւ կենդանի կապը սրբազնութեան հետ։ Այս էր ամէն պարագայի առաջին լուծումը, կամ կրկնակի լուծումին առաջին երեսակը, Ի. դարու քսանական թուականներէն ծագում առած եւ մինչեւ մեր օրերը յամեցող ու քաշքշուող գոյութենապաշտ լուծումը։ Բայց կայ միւս երեսակը։ Քրիստոնէութիւնը պատմական ու «պատմապաշտ» կրօնք մըն է, չի կրնար գոհանալ գոյութենապաշտ

լուծումներով: Եւ յունական աստուածները, մեռած աստուածները, ի վերջոյ միայն Հէօլդերլինի խելապատակէն չեն ելած: Յոյներուն պատմական աստուածներն էին: Ի՞նչ տեղ տալ պէտք է այդ աստուածներուն քրիստոնէական (Ի. դարուն յատուկ գոյութենապաշտ քրիստոնէութեան) աշխարհայեացքէն ներս, որպէս *պատմական* երեւոյթներ եւ եղելութիւններ: Խորքին մէջ՝ միսին ետեւը ծուարած այս մէկ հարցումն է էական հարցումը Գուարդինիի նման մէկու մը աչքին: Եւ այս հարցումին կարենալ պատասխանելու համար է, որ կ՚օգտագործէ (ու անշուշտ կը շահագործէ) Հէօլդերլինին բանաստեղծական եւ կրօնա-փիլիսոփայական փորձառութիւնը (եւ ո՛չ թէ միայն գոյութենապաշտ մօտեցումին հետեւող եւ սրբազնութեան անմիջականութիւնը հետապնդող կեցուածքին պատճառով): Հոս է, որ հանճարեղ կը դառնայ քրիստոնէութեան կրկնակի լուծումը, «պատմապաշտութիւն»ը (կ՚ուզեմ ըսել՝ քրիստոնէութեան ներյատուկ historicismeը) եւ գոյութենապաշտութիւնը, ձեռք ձեռքի տուած: Ի՞նչ ձեւով: Զուգահեռ մը ստեղծելով արեւմտեան մարդկութեան պատմական փորձառութեան եւ Հէօլդերլինի մտածողական ընթածիրին միջեւ: Ուրեմն եթէ խաւարումը չպատահէր, Հէօլդերլին պիտի յանգէր քրիստոնէական Աստուծոյ լման ճանաչումին, ինչպէս յունական աշխարհին աստուածները տեղի տուած են եւ յանգած են քրիստոնէութեան: Յունական աստուածները կը մեկնաբանուին այս ձեւով եւ պատմականօրէն, որպէս *նախակերպաւորումներ*, եւ փիլիսոփայականօրէն, բանաստեղծի մը կենսապատմական փորձառութիւնը եւ փորձառութեան հանգրուանները փոխադրելով անցեալին մէջ, հին աստուածները դարձնելով *կենսափորձի* մը քննութեան միջոցաւ ձեռք ձգուած պահերու, ուժերու եւ խորհրդանիշերու *պատմականացած մարմնաւորումները*: Ահաւասիկ Գուարդինիի բառերով, խօսքը յոյն աստուածներու մասին է. «Sie treten in den Advent. Sie geben ihren Autonomieanspruch auf und werden zu Ahnungen des Lebendigen Gottes» (էջ 348), այսինքն՝ «Կը մտնեն Նախածանուցումի շրջանը: Կը հրաժարին ինքնավարութեան պնդումէն եւ կը դառնան Կենդանի Աստուծոյ նախակարապետները»: Գերմաներէն Adventը մեր Յիսնեակն է, այն եօթը շաբաթները որոնք կը նախորդեն Ծննդեան տօնը: Հոս անշուշտ Գուարդինի կը պատմականացնէ (եւ կը յունականացնէ) «Յիսնեակ»ը, կը դարձնէ զայն պատմական խոստումին եւ սպասումին անունը:

Այս վերջին կէտն է, պատմականացած մարմնաւորումին վերաբերող կէտը, որ Գուարդինիի 1939ի գիրքը կը դարձնէ բացառապէս (թէեւ միայն անցողակի կերպով) շահեկան: Բայց այս կէտին հասնելու համար, Գուարդինի եւ իր հետեւորդները պէտք ունին Հէօլդերլինի բանաստեղծութեան մէջ (օրինակ «Միակը», «Հաց եւ գինի», «Պաթմոս» քերթուածներուն) Յիսուսի կերպարին ներկայութիւնը հասկնալու իրենց ուզած ձեւովը, այսինքն պարզ ու մեկին՝ խեղաթիւրելու իրենց կարդացածը, որպէսզի հին աստուածները մնան պատմականօրէն մարդացած աստուածութեան մը «նախակերպարներ»ը (Յակոբ Մովսէս մինչեւ իսկ բառեր պիտի ստեղծէ այս հրաշագործութեան սիրոյն, պիտի ըսէ «նախաորդիացեալ», «նախամարմնացեալ», Adventի գաղափարը փոխադրելով իր լեզուին մէջ): Եւ աստր կողքին՝ պէտք ունին անշուշտ կատարելապէս անգիտանալու աստուածային երեսդարձին «ստորոգութենական» հանգամանքը, եւ մարդկային-բանաստեղծական «հայրենական շրջադարձ»ին նշանակութիւնը որպէս հրամայական: Ու երբ Հէօլդերլին Յիսուսին համար կ՚ըսէ թէ «վերջին»ն է, Հերակլէսին եւ Բաքոսին հետ կազմած եռեակ «եղբայրութեան» որպէս երրորդ կերպար, ահաւասիկ Գուարդինիի բացատրութիւնը.

«Վերջինը» ըլլալը զինք կը զատորոշէ իր երկու եղբայրներէն: Հերակլէս կը պատկանի սկզբնական ժամանակին. կը կռուի, կը յաղթէ թշնամի ուժերը, կարգի կը բերէ քաոսը, կը հիմնէ, կը տառապի ու կը տիրէ, բոլորը միաժամանակ: Դիոնիսոս կը զանցէ գոյութեան բաժանումները, շնորհիւ արբշռանքին եւ կերպարանփոխութեան համաժողով կարողութեան: Քրիստոս, ընդհակառակը, կու գայ երբ աշխարհի ցերեկը կը շրջի, վերջաւորութեան հասած, եւ «կ'ըլլայ իրիկուն»: Կը նշէ վերահաս գիշերը, եւ կը հաստատէ «խոստում» մը անոր մէջ. «երախտապարտութեան» տօնախմբումը, Օրհներգութիւնը (die Eucharistie), ուժ տալու համար հաւատացեալներուն, որպէսզի կարենան սպասել ու դիմադրել, մինչեւ որ գայ լուծումը… Աստուածաշունչի Աստուծոյ թագաւորութեան աշխարհայնացումը (Einweltlichung)[19]:

Einweltlichung բառով Գուարդինի իբր թէ մեկնաբանած կ'ըլլայ քրիստոնէական խոստումին Հէօլդերլինեան եղանակը: Գալիքը, խոստացուածը «խորհրդազգած Յունաստան»ն է այս հաշուով: Ո՞րն է բառը: Իսկ ահաւասիկ վերջապէս հետեւորդ թարգմանիչին վերլուծումը, «Հաց եւ գինի» էլեգիայի ծանօթագրութիւններուն մէջ պարփակուած (էջ 426): Բայց կար արդէն իսկ ան նոյն երանգներով ընդհանուր Յառաջաբանին մէջ: Պիտի մէջբերեմ քիչ մը երկար, եւ առանց յաւելեալ նկատողութեան: Ինչ որ պէտք է ըսուէր՝ ըսուեցաւ արդէն իսկ: Հիմա կը բաւէ կարդալ: Հոս Յակոբ Մովսէս իր սրտի խօսքն է, որ կ'արտաբերէ, ետին ձգելով ի միջի այլոց Բայսների «արտաքին, զուտ բանասիրական» նկարագրութիւնը:

Էլեգիան անտիկականութեան եւ Քրիստոսի առնչութեան Հէօլդերլինեան կատարեալ եւ խիզախ… վերապրում է, երբ… յունական դիցաբանութիւնը դիտարկուած է իբրեւ քրիստոնէութեան արգանդ. ուրեմն Դիոնիսոսի… եւ Միակի՝ Քրիստոսի կողք կողքի համաներկայութիւնը պէտք է հասկանալ այնպէս, ինչպէս ասենք Պօղոս առաքեալի թղթերում Աբրահամի, Մովսէսի կամ Եղիայի եւ Քրիստոսի համադրութիւնը…. ինչպէս որ Պետրոս առաքեալը Քրիստոս էր քարոզում «սողոմոնեան բակում»… այդպէս էլ բանաստեղծ Հէօլդերլինը Միակին իր սէրն է բերում «յունական բակից»: Այս ընկալմամբ Դիոնիսոսը եւ Քրիստոսին համադրուող յունական դիցեզերքի միւս աստուածները Աստուծոյ նախաորդիացեալ եւ նախամարմնացեալ ներկայութիւնն են հին աշխարհում. նրանք յունական դիցաուիեզերքում մոլորակներ են, որոնք Արեւի՝ Քրիստոսի Յայտնութիւնից ոչ թէ նսեմանում են, այլ լուսաւորւում եւ կազմում նրա բոյլը: Քանզի Տիրոջ կենարար լոյսը համասփիւռ է, ուրեմն այն տարածւում է բոլորեքեան եւ բոլորուղղեայ, այդպիսով իր բոլորապարունակ ծիրի մէջ առնելով ոչ միայն իրենից յետոյ եկողներին, այլ նաեւ իրենից առաջ եղածներին…:

Բանասիրութենէն անդին անցնող մեկնաբանութեան հասկացողութիւնը հոս՝ ա՛յս է ուրեմն, Գուարդինիի Adventն է, հայերէնի թարգմանուած: Չեմ

առարկեր: Հաւատքի հարց է (կ'ենթադրեմ): Նշմարել կու տամ միայն, որ Գուարդինին իր հետեւորդէն աւելի զգոյշ է այս կէտին վրայ, քանի որ հարցը կը դնէ (Հէօլդերլինի աստուածները ինքն իր վրայ կնքուած ինքնավար աշխարհի մը ստեղծումնե՞րն էին, թէ՞ նոր եղանակ մըն էին նախակերպարանութեան, Adventի ժամանակին մէջ զետեղուելու, էջ 350), ու չի պատասխաներ: Թէ սակայն ի՞նչ կապ ունի այս ամբողջը բանաստեղծութեան հետ, եւ Հէօլդերլինի բանաստեղծութեան հետ մասնաւորապէս, հարցական է առնուազն: Քրիստոնէութիւնը եւ քրիստոսասիրութիւնը մեղք չունին: Մեղքը *սուգի* երեւոյթին նկատմամբ զգացողութեան կատարեալ պակասն է այս հեղինակներուն մօտ, Գուարդինիի ինչպէս իր հետեւորդներուն: Քրիստոսը վերջինն էր, կ'ըսէ Հէօլդերլին: Վերջինը մեզի այցելած կիսաստուածներուն: Անկէ ետքը կը սկսի սուգը: «Երբ Հայրը իր երեսը դարձուց մարդոցմէ, եւ սուգը իրաւունքով սկսաւ աշխարհի երեսին...» (*Հաց եւ գինի*): Մէկ բան կը մնայ ուրեմն ընելիք, խորքին մէջ՝ ամենէն կարեւորը: Կարդալ Հէօլդերլին: Իսկականը: Կարդալ իր վարանումները, իր տեւական սրբագրութիւնները, աստուածներու թերացումին յանձնուած իր դարձը, բանաստեղծօրէն եւ կրօնականօրէն (եւ ուրեմն ո՛չ անսուգ եւ ամէն պարագայի ո՛չ քրիստոնէութեան ձեւով հասկցուած կրօնականութեամբ) բնակելու եւ մտածելու անհրաժեշտութիւնը: Կարդալ Եդիպոսի մասին իր ըսածները: Կարդալ թարգմանելու պահանջը իր մօտ: Կարդալ արուեստը: Արուեստը որպէս սուգ: Եւ հասկնալ թէ ինչո՛ւ Գերմաններուն մօտ «ողբերգութիւն» բառը, այսինքն Յոյներու թատերական ողբերգութիւնը եւ արդիականը նոյնպէս, կ'ըսուի Trauerspiel, սուգի խաղը:

Յետ Գրութիւն

1) Ընթերցողը նշմարած կ'ըլլայ որ Յակոբ Մովսէսի բուն թարգմանութիւններուն, կ'ուզեմ ըսել՝ Հէօլդերլինի բանաստեղծական գործերու թարգմանութիւններուն չանդրադարձայ հոս: Մէկ անգամ միայն թարգմանական սխալ մը մատնանշեցի, միմիայն որովհետեւ հեղինակը ընկալելու եւ մեկնաբանելու եղանակին հետ կը միջամտէր խնդրոյ առարկայ հատուածը: Հարցը այն է, որ Հայաստանեան հայերէնը եւ արեւմտահայերէնը այսօր այլեւս երկու տարբեր լեզուներ են, մէկը՝ կենդանի, միւսը՝ մեռեալ: Նոյն արմատներն ունին, նոյն բառապաշարը կը գործածեն, բայց այնքան հեռացած են իրարմէ որ արեւմտահայերէնի կալուածէն մեկնելով, կարելի չէ քոյր լեզուին մաս կազմելու յաւակնութիւնն ունենալ: Իսկ բանաստեղծական թարգմանութիւնը իւրայատուկ մարզ մըն է, լեզուին ծայրագոյն նրբութիւնները օգտագործելու դատապարտուած: Սեփական լեզուին ընձեռած հնարաւորութիւնները կ'աշխատցնէ ու ձեւով մըն ալ կը սպառէ: Դուրսէն ակնարկ մը հետեւաբար անիմաստ պիտի ըլլար: Ու նպատակս Հէօլդերլինի մեկնաբանական ընկալումին անդրադառնալ էր ամէն պարագայի, այդ ընկալումին հանգրուանները եւ եղանակները ցոյց տալով, ու փորձելով հասկնալ թէ ո՛ւր կը զետեղուի թարգմանիչին աշխատանքը Հէօլդերլինի եւրոպական ընկալումի պատմութեան մէջ: Ո՛չ աւելին: Ի դէպ՝ ի՞նչ է մեռեալ լեզու մը: Լեզու մըն է որ չի թարգմաներ: Որ դադրած է թարգմանելէ: Արեւմտահայերէնը դադրած է թարգմանելէ մօտ հարիւր տարի առաջ: Այդ իսկ պատճառով յափշտակիչ բան մը կայ այս եզերքէն (Հադէսի աշխարհէն) դիտուած՝ միւս եզերքին վրայ թարգմանական աշխոյժ գործունէութեան մէջ: Որ կը դառնայ սակայն ա՛լ աւելի յափշտակիչ երբ յանկարծ տեսնենք որ Հէօլդերլին ինքը մեռեալ լեզուի բանաստեղծն էր (եւ թարգմանիչը):

Ինքը չէ՞ր գրողը. «Լեզուն կորսնցուցինք գրեթէ օտարութեան մէջ»,…und haben (wir) fast die Sprache in der Fremde verloren: Եւ քանի որ կորսնցուցինք (գրեթէ), կը գրենք ու կը թարգմանենք մեռեալ լեզուով մը, կը գրենք սուգը այդ կորուստին: Սոյն նախադասութեան միւս բոլոր թարգմանութիւններն ու մեկնաբանութիւնները հնարովի են: Բայց անշուշտ կը մնայ հասկնալ թէ ի՛նչ կը նշանակէ այդ «գրեթէ»ն: Պէտք է հասկնալ արդեօք որ ամբողջովին չկորսնցուցի՞նք, որ մաս մը կենդանի՞ է անկէ տակաւին: Կամ արդեօք պէտք է հասկնալ թէ լեզուն կը վերապրի՞ ինքն իր ամբողջական կորուստին, դատապարտուած ըլլալով այն ատեն անդադար գրելու ինքն իր կորուստը եւ հասկնալու թէ ի՛նչ է «վերապրիլ» բառին իմաստը, վերապրիլ *որպէս մեռեալ*: Մահուան վերապրում եւ ո՛չ թէ մահէն վերապրում:

2) Ներկայ աշխատասիրութեան երբ ձեռնարկեցի, չէի նախատեսած որ Ռոմանոյ Գուարդինիի մասին պիտի խօսէի այսքան երկար: Փորձեցի վերակազմել պառակտուած եւ իր պառակտումին մէջ ամբողջովին պարկեշտ աստուածաբանի մը տրամաբանութիւնը: Մէկ ծայրէն միւսը վերստին կարդացի Գուարդինիի *Weltbild und Frömmigkeit* գիրքը, զոր քառասուն տարիէ վեր հաւանաբար ձեռք չէի առած: Ինչո՞ւ «պառակտուած» աստուածաբան: Արդեօք որովհետեւ յանկարծ կը սկսի կասկածնե՞ր սնուցանել քրիստոնէական Յայտնախօսութեան մասին: Ո՛չ անշուշտ, ո՛չ մէկ կասկած: Բայց չի գիտեր այն ատեն ինչպէ՛ս մօտենալ յոյն աստուածներուն, եւ այդ առումով յուզիչ բան մը ունի իր պարկեշտութիւնը: Քանի որ Հէօլդերլինին ըսածները եւ Հէօլդերլինի աստուածակարօտ փորձառութիւնը կատարելապէս լուրջի կ՛առնէ, ստիպուած է ինքն իրեն հարց տալու. բայց ուրեմն ի՛նչ կարգավիճակ պէտք է ընծայել ու շնորհել Յոյներու աստուածներուն: Հին հարցում, որ դարէ դար կրկնուած է, տարբեր եղանակներով, քրիստոնէական աշխարհէն ներս, Յոյներու առասպելաբանութեան վերաբերեալ[20]: Ինչպէ՞ս վերաբերիլ յունական առասպելաբանութեան եւ անոր աստուածներուն հետ: Առասպելաբանութիւնը անշուշտ բանասիրութեան գիտոն ու հնարքն է: Բայց բանասիրական գիտէն ճիշդ առաջ ահաւասիկ մէկը կու գայ, Հէօլդերլին անունով, ամբողջովին յոյն աստուածներուն մտասեւեռումով կ՛ապրի ու կը գրէ, կ՛ապրեցնէ զանոնք որպէս մեռեալ, այսինքն կ՛ապրի անոնց անցեալ «իրականութեան» յաճախանքով, եւ ուրեմն անոնց մահուան ողբով ու սուգով տոգորուած փորձառութեամբ: Այնպէս որ քրիստոնեայ աստուածաբանը ստիպուած է ինքն իրեն հարց տալու. ի՞նչ են այդ աստուածները, նախ Հէօլդերլինի փորձառութենէն ու փորձընկալումէն մեկնելով, յետոյ՝ իրենք իրենց հաշուոյն, առարկայականօրէն: Արդեօք մարդէակին (հնադարեան թէ արդիական) յատուկ սրբազնական փորձընկալումին ներաշխարհային կամ ներաշխարհայնացած յայտնակերպումնե՞րն են: Կամ ընդհակառակը Որդիին պատմական նախակերպարանումնե՞րն են, իրենք ալ այդ հաշուով Որդիներ, «նախաորդիացեալ», քանի որ Որդիին հետ եղբայր են, կ՛ըսէ Հէօլդերլին: Մէկը միւսը չ՛արգիլեր, պիտի ըսուի: Այո, չ՛արգիլեր: Բայց առաջին մօտեցումը աստուածները կը մեկնաբանէ (եւ կ՛առարկայացնէ) գոյութենական ձեւով: Իսկ երկրորդը զանոնք կը մեկնաբանէ (եւ նոյնպէս կ՛առարկայացնէ) քրիստոնէութեան յատուկ պատմականութեան ձեւով: Ատկէ կը բխի հարցումը. ուրեմն Հէօլդերլինի աչքին մէ՞կն էր, թէ մի՞ւսն էր: Գուարդինի չի պատասխաներ այդ հարցումին, ըսի արդէն իսկ: Բայց հարցումը դրուած է շատ սուր կերպով: Խուսափում չկայ: Պէտք է ըլլայ մէկը կամ միւսը: Կա՛մ ներաշխարհայնացած յայտնակերպումներ, որոնք անկախ են Որդիի գալուստէն ու յայտնութենէն: Կա՛մ Որդիին նախակարապետները: Բայց մէյ մը որ հար-

ցումը կը դրուի Հէօլդերլինին վերաբերեալ, անխուսափելի շարժումով մը նոյն հարցումը կը փոխադրուի դէպի հնադարեան իրականութիւնը, ամբողջովին կ՚առարկայանայ, եւ ուրեմն կը դրուի յոյն աստուածներու առարկայական կարգավիճակին հարցը: Եւ ունինք այսպէս՝ երթուդարձ մը, քրիստոնէական երթուդարձի անխուսափելի շարժումը, գոյութենականին եւ պատմականին միջեւ, սրբազնութեան փորձընկալումին եւ պատմական Յայտնագործութեան միջեւ, աստուածներու մտասեւեռումով ապրող արդիական բանաստեղծին եւ հնադարեան Յոյներուն միջեւ: Հո՛ս է պառակտումը: Գուարդինի չէր ուզեր պատասխանել իր իսկ հարցումին Հէօլդերլինին վերաբերեալ, պատճառաբանելով բանաստեղծի մտքին կանխահաս խաւարումը, որ իր թափը կոտրած է թռիչքի պահուն ու պատճառած է իր անկումը: Բայց այնատեն ինչպէ՞ս պիտի կարենայ պատասխանել միւս հարցումին, առարկայական հարցումին, հնադարեան աստուածներուն վերաբերեալ: Գոյութենական անորոշութիւնը կը փոխադրուի պատմականին վրայ, կամ փոխադարձաբար: Յակոբ Մովսէս Հէօլդերլին կը մեկնաբանէ Գուարդինիի հետեւողութեամբ, բայց իր մեկնաբանութեան փորձերուն մէջ չի վերարտադրեր անշուշտ Գուարդինիի պառակտումը, ո՛չ գոյութենական մակարդակի, ո՛չ ալ պատմական:

Կայ ուրիշ տարօրինակութիւն մը, Գուարդինիին հետ առնչուած: Ո՛չ մէկ տեղ, ո՛չ մէկ անգամ, Գուարդինիի գիրքին գրեթէ վեց հարիւր էջերու երկայնքին, յիշատակուած է Հէօլդերլինի թարգմանական գործունէութիւնը, որ սակայն զբաղեցուցած է բանաստեղծին լման ժամանակը եւ ուժերը պայծառ մտքով ապրած կեանքին վերջին տարիներուն: Ո՛չ մէկ տեղ կը յիշուին Սոփոկլէսէն կատարած թարգմանութիւնները, այդ թարգմանութիւններուն համար գրած Յառաջաբանները, եւ այդ Յառաջաբաններուն մէջ երեւցող աստուածներու ստորոգութենական երեսդարձը որպէս իրողութիւն ու մարդոց հայրենական շրջադարձը որպէս հրամայական: Նոյնն է անշուշտ պարագան Յակոբ Մովսէսի մօտ, որ հոս ալ՝ կը հետեւի Գուարդինիին: Որպէս թարգմանիչ իր իրաւունքն է բնականաբար բանաստեղծ Հէօլդերլինին սահմանափակուելու որոշումը ու մեկնաբանութիւնը զարգացնելու միայն բանաստեղծական գործի հիման վրայ: Եւ սակայն համոզուած եմ որ Գուարդինիի ազդեցութիւնն է, կամ անոր հետեւելու բնական մղումն է այդտեղ գլխաւոր ազդակը: Ա՛լ աւելի ողջունելի է այս հաշուով թարգմանիչին որոշումը իր պատրաստած գիրքին վերջաւորութեան՝ Մորիս Բլանշոյի ուսումնասիրութիւնը զետեղելու, երբ գիտենք որ Բլանշոյ Բեդա Ալլեմանին կը հետեւէր եւ ուրեմն ներյայտ կերպով կը հակադրուէր Գուարդինիական տեսակի մեկնաբանութիւններուն:

3) Եւ ահաւասիկ օրինակ մը, վերջին օրինակը ուրեմն, որմէ ետք խօսք պիտի առնէ ինքը՝ Հէօլդերլին: «Քրիստոսաբանական» բանաստեղծութիւններուն մէջ առանձին տեղ կը գրաւէ «Միակը»: Հոն Քրիստոս հեռացող, լքող կիսաստուածն է, որուն հետեւիլը պիտի նշանակէր մահ ու աղէտ մարդկութեան համար: Այդ պատճառով Հէօլդերլին կը գրէ «Եւ սակայն ամօթ մը կ՚արգիլէ / որ քեզ համեմատեմ / երկրայիններուն»: Ընթերցողը լման բանաստեղծութիւնը պիտի գտնէ հոս որպէս յաւելուած, արեւմտահայերէնի փոխադրուած, Բայսներին կողմէ վերակազմուած առաջին եւ երրորդ տարբերակներով: Աւելի ուշ, ուրիշ առիթով, կ՚ուզեմ զայն տող առ տող բացատրել: Առ այժմ, կը բաւարարուիմ Բեդա Ալլեմանի հետքերուն վրայ քալելով: Կարճ ըսուած՝ սրբապիղծ բաղդատութիւն մը ընելու զգացումը չէ որ կ՚արտայայտուի հոս: Արտայայտուած ամօթին ետեւը կանգնած մտահոգութիւնը Քրիստոսին չէ՛ ուղղուած, ընդհակառակը, երկրայիններուն ուղղուած է, մարդոց եւ կիսաստուածներուն:

Քրիստոսի ճամբան անյապաղ կը վերադարձնէ զինք դէպի Հայրը: Մահացու եւ մահաբեր ճամբայ մըն է, որուն պէտք չէ հետեւինք: Այս աշխարհին հաւատարիմ կիսաստուածները պէտք չէ հետեւին այդ օրինակին: Այդ է պատճառը արգիլող «ամօթ»ին[21]: Մինչդեռ ահաւասիկ Յակոբ Մովսէսի բացատրութիւնը. «Թէեւ նախորդ տունը հաւաստել է աշխարհիկ այրերի եղբայրական հարազատութիւնը Քրիստոսին, որքանով որ նրանք Միակի նման գործում են յանուն կեանքի գեղեցիկ իրագործման, այժմ բանաստեղծին մի ամօթ է խոչընդոտում՝ *այրերին աշխարհիկ* Քրիստոսի հետ համեմատել, ում էութիւնը ծայրագոյն հոգեւոր ու յաւերժական է» (էջ 462): Պարզ թիւրիմացութիւն մըն է ըսուածը, որ սակայն կը համապատասխանէ թարգմանիչին որդեգրած Գուարդինիական տրամաբանութեան:

Միակը

Առաջին փարբերակ

Ինչն է որ
այդ հին բերկրալի ափերուն
զիս կը կապէ, այնքան որ զանոնք
աւելի կը սիրեմ քան հայրենիքս:
Որովհետեւ այո, կարծես երկնային
գերութեամբ յափշտակուած
հոն եմ ես ուր Ապողոնը կը ճեմէր
թագաւորական հանգամանքով
եւ ուր Զեւսը անմեղ երիտասարդներ
դէպի կ՛իջնէր եւ սրբօրէն
տղաք ու աղջիկներ կը սերնդագործէր
Բարձրեալը մարդոց մէջ:

Բարձր մտածումներ, այո,
շատ ծագեցան
հօր ուղեղէն
եւ մեծ հոգիներ շատ
եկան այցելելու մարդոց աշխարհ:
Լսեցի Եղիսի եւ Ողիմպի մասին,
կայնեցայ վերը, Պառնասին վրայ,
եւ բարձրացայ Պարանոցի լեռներուն,
նաեւ հանդիպակաց ափերուն,
Իզմիրի կողմերը շրջեցայ
եւ Եփեսոսի:

Շատ տեսայ գեղեցկութիւններ,
եւ երգեցի աստծոյ պատկերը
որ կ՛ապրի ընդմէջ
մարդոց, եւ սակայն
օ դուք, հին աստուածներ, եւ դուք,
աստուածներու յանդուգն զաւակներ,
դեռ կը փնտռեմ մէկը, սիրածս ձեր մէջ,

հոն ուր իմ՝ օտար այցելուիս առջեւ
վերջինը ձեր ցեղին,
տան գոհարը, կը ծածկէք:

Վարպետս ու տէրս,
ախ դու, ուսուցիչս:
Ինչո՞ւ այդպէս հեռու
մնացիր: Ու հոն
հիները կը հարցուփորձէի,
հերոսներն ու
աստուածները, թէ ինչո՞ւ
կը բացակայիս: Եւ
հիմա հոգիս լի է սուգով,
կարծես դուք եղաք պատճառը,
երկրայիններ, որ ես հոգալով մէկուն՝
միւսը փախցուցի:

Բայց գիտեմ որ իմ յանցանքս
է: Որովհետեւ չափազանց
օ Քրիստոս, քեզի կապուած եմ,
թէեւ Հերակլէսին եղբայրն ես,
եւ լաւ գիտեմ՝ նաեւ եղբայրն ես
Եվոյիսին, որ իր
կառքին կը լծէր
վագրերը եւ վար
մինչեւ Ինդուսը
որթատունկերը կարզեց,
ուրախ ծառայութիւն մատուցելով, եւ
ազգերու զայրոյթը զսպեց:

Եւ սակայն ամօթ մը կ՚արգիլէ
որ քեզ բաղդատեմ
Երկրայիններուն հետ: Ու գիտեմ
անվարան որ քեզ սերնդագործողը,
հայրդ, նոյն ինքը,

քանի որ երբեք մինակը չ՚իշխեր ան:

Բայց սէրը միայն մէկու մը
կը կապէ: Եւ այս անգամ,
ճիշդ է, սեփական սիրտէս
շատ բխեցաւ երգը:
Կ՚ուզեմ այդ պակասը սրբագրել
միւսներն ալ երգելով:
Երբեք պիտի չգտնեմ, ուզածիս պէս,
չափը: Աստուած մը սակայն գիտէ,
եթէ գայ, ուզածս, լաւագոյնը:
Որովհետեւ ինչպէս վարպետը

կը դեգերէր երկրի երեսին
արգելափակուած արծիւի նման,

Եւ շատերը որ կը տեսնէին զինք
կ՚ականծէին իրմէ,
մինչդեռ ծայր աստիճան իր ուժերը
կը լարէր հայրը եւ լաւագոյնը իրապէս
կ՚արարէր մարդոց աշխարհէն ներս,
եւ որդին շատ ընկճուած էր
մինչեւ երկինք բարձրանալը օդերուն մէջ,
նոյնպէս արգելափակուած է հերոսներու հոգին:
Բանաստեղծներն ալ պարտին
ոգեկաններն ըլլալ աշխարհային:

Միակը

Երրորդ փարբերակ
…

Բայց գիտեմ որ ի՛մ յանցանքս
է: Որովհետեւ չափազանց
օ Քրիստոս, քեզի կապուած եմ,
թէեւ Հերակլէսին եղբայրն ես,
եւ լաւ գիտեմ՝ նաեւ եղբայրն ես
Եվոյիսին, որ հինէն պայծառատեսութեամբ
նողկալի սխալը կը սրբագրէ,
երկրին աստուածը, եւ շնորհած է
հոգին կենդանիներուն, որոնց կեանքն էր
անձնական անօթութենէն մղուած երկիրը շրջիլ,
բայց ուղիղ ճամբաներ բացած է մէկ անգամէն եւ վայրեր յարմարցուցած
ու ամէն մէկուն իրավիճակը կարգաւորած:

Եւ սակայն ամօթ մը կ՚արգիլէ
որ քեզ բաղդատեմ
Երկրի մարդոց հետ: Ու գիտեմ
անվարան որ քեզ սերնդագործողը,
հայրդ, նոյնն է: Այո, Քրիստոսն ալ մինակը
կանգնած է տեսանելի երկնքին ու աստղերուն տակ, յայտնօրէն
յօրինուածին վրայ ազատ տիրողին տակ, աստծոյ արտօնութեամբ,
եւ աշխարհի մեղքերուն, կ՚ուզեմ ըսել ճանաչումի
անհասկնալիութեան, երբ մարդոց մօտ առուտուրը կը գերազանցէ
մնացեալը,
եւ աստղերու քաջալերանքը իր վրայ էր: Որովհետեւ աշխարհը միշտ կը
ցնծայ
երկիրը լքելու գաղափարին, զայն վերածելով
անապատի, երբ մարդկայինը զայն չի պահեր: Ճիշդ է, կը մնայ հետքը
բառի մը, զոր մէկը ձեռք կ՚առնէ: Վայրը սակայն դարձաւ

անապատ: Եւ ուրեմն ասոնք նման են իրարու: Հրճուանքով լի, բեղուն:
Հիանալի
կ’աճի առուոյտը: Անյարմար պիտի ըլլար, ոգիի սիրոյն, եթէ չկարենայի
ըսել
ասոնց մասին, կարօտալից աղօթքի մը գիտութենէն դրդուած, որ
հրամանատարներու պէս են ինծի, հերոսներու: Մահկանացուները կրնան
ըսել այդ, որովհետեւ աստուած անհասկնալի է առանց կայքի: Բայց
ինչպէս կառքի մը վրայ
համեստաբար ցերեկուան երեւոյթով
կամ ձայներով աստուած կը յայտնուի
որպէս բնութիւն դուրսէն: Միջարկուած
Սուրբ Գրութիւններուն մէջ: Երկնայինները եւ
մարդիկ երկրի երեսին կողք կողքի են տեւաբար: Մեծ մարդ մը եւ մեծ հոգի մը
նոյնիսկ երկնքին մէջ

կը ցանկայ նմանին հանդիպելու երկրի երեսին: Եւ միշտ
կը մնայ այն իրողութիւնը, որ մշտնջենապէս ագուցուած ամբողջ մը
կը կազմէ աշխարհ: Եւ սակայն յաճախ այնպէս կը թուի
թէ մեծութիւնը լեզու չի գտներ
ուրիշ մեծութեան հետ: Բայց ամէն օր ու ամէն վայրկեան կանգնած են մէկը
միւսին քով, կարծես անդունդի մը եզրին: Այդ երեքը սակայն այնպիսին են
որ
արեւուն տակ
որսի գացող որսորդն են, կամ
երկրագործը, որ գործէն դադար առնելով
գլխանոցը կը հանէ, կամ մուրացիկ մը: Գեղեցիկ է եւ հաճելի
բաղդատելը: Երկրին բարիքն է:
Կը զովացնէ: Բայց միշտ…

[1] Ֆրիդրիխ Հէօլդերլին (Յակոբ Մովսէս կը գրէ «Հյոլդեռլին», Հայաստանեան սովորութեան համաձայն), *Բանաստեղծութիւններ*, գերմաներէնից թարգմանեց՝ Յակոբ Մովսէս, Նայիրի հրատարակչութիւն, Երեւան, 2002, 510 էջ:

[2] Walter Benjamin, “Zwei Gedichte von Friedrich Hölderlin”, *Gesammelte Schriften*, Bd II.1, Suhrkamp Verlag, 1980, էջ 105– 126:

[3] Ինծի ծանօթ երեք դասընթացքներն են 1934–35 ձմրան կիսամեային՝ *Hölderlins Hymnen «Germanien» und «Der Rhein»* (Հէօլդերլինի «Գերմանիա» եւ Հռենոս մաղթերգերը), 1941–42 ձմրան կիսամեային՝ *Hölderlins Hymne «Andenken»*, եւ 1942ի ամրան կիսամեային՝ *Hölderlins Hymne «Der Ister»*: Վիլիամ Ռիչըրդսընի տուած ցանկը հետեւաբար սխալ է (William Richardson, *Heidegger, Through Phenomenology to Thought* [Երեւութաբանութենէն դէպի մտածողութիւն], Nijhoof, the Hague, առաջին հրատ.՝ 1963, երրորդ հրատ.՝ 1974, էջ 670): Դասերու եւ դասընթացքներու շարքին մէջ չկայ հոս Իսդերի մասին դասը եւ Andenkenի մասին դասը սխալ տեղաւորուած է, հակառակ անոր որ հեղինակը այդ ցանկը Հայդեգերին ցոյց տուած է: Երեք դասընթացքներն ալ հատորով լոյս տեսած են Ամբողջական գործերու (Gesamtausgabe) շարքին մէջ, հատոր 39–52–53:

[4] Martin Heidegger, *Erläuterungen zu Hölderlins Dichtung*, Klostermann, Ֆրանկֆուրտ: Պիտի մէջբերեմ սոյն 1951ի հատորին 3րդ

հրատարակութեան հիման վրայ (1963)։
[5] Ներկայ ուսումնասիրութեան ընթացքին, բոլոր ընթացիկ մէջբերումները պիտի կատարուին Insel Verlagի մօտ երեք հատորով հրամցուած առձեռն հրատարակութեան հետեւելով եւ յղուելով (Hölderlin, *Werke und Briefe*, խմբագիրներ՝ Ֆրիդրիխ Բայսներ եւ Յոխըն Շմիդտ)։
[6] *The Solid Letter. Readings of Friedrich Hölderlin*, ed. Aris Fioretos, Stanford Univ. Press, 1999. Այս հատորին իրենց մասնակցութիւնը բերած են ի միջի այլոց իմ փիլիսոփայութեան ուսուցիչներս՝ Ժ.Լ. Նանսի եւ Ֆ. Լակու-Լաբարթ։
[7] Իսկ Յակոբ Մովսէսի գրքին վերջաւորութեան զետեղուած ծանօթագրութիւններու բաժնին մէջ «Հէօլդերլինի ուղին» յօդուածի հեղինակին անունը գրուած է սխալմամբ «Միշել Բլանշո», եւ հրատարակութեան թուականը նոյնպէս սխալմամբ՝ 1965։
[8] Թարգմանիչը հոս աղօտ կերպով կամ ամբողջովին գիտակցաբար ի մտի ունէր անշուշտ Չարենցի Requiem Aeternamին առաջին տողերը, ուր բանաստեղծը սապէս կ՚ուղղուի Կոմիտասին. «Հայրենի երգն ես դու մեր վերադարձած Հայրենիք»։ Չեմ կրնար հոս առ այժմ բացատրել թէ ի՛նչ է կապը այդ «շրջադարձ»ին եւ այդ «վերադարձ»ին միջեւ։
[9] *Briefe und Werke*, II, էջ 716։
[10] Հելլինգրաթի հրատարակութեան համաձայն (Հայդեգեր միշտ այդ հրատարակութեան կը դիմէ), Դ. հատոր, էջ 238։ Տե՛ս Hölderlin, *Werke und Briefe*, I, էջ 243։
[11] Մէջբերումին տուեալները չկան։ Արդեօք Վլադիմիր Բիբիխինի՞ մասին է խօսքը։
[12] Տե՛ս օրինակ Martin Heidegger, *Wegmarken*, Klostermann, 1967, էջ 169։
[13] *Der Spiegel*, Մայիս 31, 1976, էջ 209։ Հարցազրոյցը կատարուած էր Սեպտ. 1966ին, ուրեմն տասը տարի առաջ, Հայդեգերի փափաքով՝ յետ մահու հրատարակուելու համար։
[14] Անգլերէն իր թարգմանութեան մէջ Վիլիամ Ռիչըրդսըն (որ Հայդեգերի առաջին մեծ մասնագէտը եղած է անգլիախօս աշխարհէն ներս, տե՛ս վերեւը, ծանօթ. թիւ 3) ոչ միայն չի գլխագրեր, այլ պէտք կը զգայ այդտեղ «a god» ըսելու եւ ոչ թէ «the god»։ Ահաւասիկ իր թարգմանութիւնը. «Only a god can save us. The only possibility available to us is that by thinking and poetizing we prepare a readiness for the appearance of a god, or for the absence of a god in [our] decline, insofar as in view of the absent god we are in a state of decline»։ Եւ քանի որ նորէն ալ վտանգը կար թիւր հասկցուելու, էջատակի ծանօթագրութիւն մըն ալ աւելցուցած է, որ կ՚ըսէ հետեւեալը. «In all probability, Heidegger is not using the word “god” here in any personal sense but in the sense that he gives to the word (often in the expression, “god or the gods”) in his interpretations of Hölderlin, i.e., as the concrete manifestation of Being as “the Holy.”» («Ամենայն հաւանականութեամբ, Հայդեգեր հոս չի գործածեր “աստուած” բառը որեւէ անձնական իմաստով, այլ այն իմաստով որ ինքը կու տայ այդ բառին (յաճախ «աստուածը կամ աստուածները» արտայայտութեամբ) Հէօլդերլինի իր մեկնաբանութիւններուն մէջ, որպէս էոյթի շօշափելի յայտնակերպումը իբրեւ “սրբազնութիւն”»)։ Լման անգլերէն թարգմանութիւնը կը գտնուի *Heidegger: The Man and the Thinker* հատորին մէջ, T. Sheehanի ղեկավարութեամբ, Chicago, Precedent Press, 1981, էջ 45-67։

[15] Այս անցողակի մանրամասնութիւնը կը նշեմ հոս, որովհետեւ Յակոբ Մովսէս կ՚ըսէ թէ ֆրանսերէն թարգմանիչը թարգմաներ է «Ճանապարհ դէպի հայրենի եզերք» (էջ 421)։ Հաւանաբար այդտեղ շփոթութիւն մը կայ։

[16] Կայ իտալերէն թարգմանութիւն մը. *Hölderlin, immagine del mondo e religiosità* (թարգմանութիւն՝ Լ. Դիք եւ Ջ. Կոլոմբի, երկու հատորով, Morcelliana, Brescia, 1995)։ Գերմաներէն բնագիրը ունեցած է երկու հրատարակութիւն՝ 1939 եւ 1955 (վերջինս՝ վերատպուած կարծեմ 1980ին)։ Յանցառ մէջբերումները որ պիտի կատարեմ կը յղուին 1955ի հրատարակութեան, Kösel Verlag, Միւնխըն (1939ինը չեմ տեսած)։ Գուարդինիի մասին ընդհանուր գաղափար մը կազմել ուզող ընթերցողը կը յղեմ Ա. Մարչելլոյի գիրքին. Acquaviva Marcello, *Il concreto vivente. L'antropologia filosofica e religiosa di Romano Guardini*, Città Nuova, 2007։ Վերը կ՚ըսէի որ Յակոբ Մովսէս Գուարդինիի հետքերուն վրայ Հէօլդերլինը մօտիկը կը դնէ միջնադարեան գերման խորհրդազգած հեղինակներուն, ի միջի այլոց Յակոբ Բէօմէին։ Այս մասին տե՛ս օրինակ *Weltbild*..., էջ 495–496, ուր Հէօլդերլինի մօտ քրիստոնէական միջուկին աղբիւրները կը յիշուին, ասոնց կարգին «Յակոբ Բէօմէէն ազդուած խորհրդազգած պատկերացումները»։

[17] Տե՛ս Rudolf Otto, *Das Heilige. Über das Irrationale in der Idee des Göttlichen und sein Verhältnis zum Rationalen* (Սրբազնութիւնը։ Աստուածայինի գաղափարին մէջ անբանականի, եւ բանականութեան հետ անոր յարաբերութեան մասին), 1917. Վերատպում՝ C.H.Beck Verlag, Միւնխըն, 2004։

[18] Կարծեմ կ՚արժէ յիշեցնել, Հայաստանցի հաւանական ընթերցողին մասին խորհելով (եւ նկատի առնելով նաեւ «գոյութիւն» բառին շուրջ կատարեալ շփոթութիւնը որ կը տիրէ Յակոբ Մովսէսի գիրքին մէջ), որ արեւմտահայերէն «գոյութենապաշտ» կը նշանակէ existentialiste։ Եւ ի դէպ, պէտք չկայ Հայդեգեր թարգմանելու, եւ Հայդեգերի Daseinը «աստլինելութեան» վերածելու, երբ այդ ընելով՝ փառաւոր կերպով կ՚անգիտանանք որ Հայդեգեր իր Daseinի յատուկ մեկնաբանութեամբ՝ ի միջի այլոց երեսունական թուականներու *քրիստոնէական* Existenzphilosophieին, այսինքն գոյութենապաշտ հասկացողութեան ամենէն ընդհանրացած (եւ ամենէն ծանծրացուցիչ) եղանակին *դէմ* կ՚աշխատէր։

[19] *Weltbild und Frömmigkeit*, էջ 566։ Eucharistieի իմաստը որպէս Օրհներգութիւն կամ Գոհաբանութիւն կը համապատասխանէ յունարէնին։ Այս տողերը նաեւ մէջբերուած են Ֆրանչեսկա Բրենչոյին կողմէ իր «*"Ciò che resta lo fondano i poeti"*. Fondamento e poesia tra Heidegger e Hölderlin» ("Ինչ որ կը մնայ՝ բանաստեղծները կը հիմնեն". հիմունք եւ բանաստեղծութիւն Հայդեգերի եւ Հէօլդերլինի միջեւ) վերնագրուած ուսումնասիրութեան մէջ (*Estetica*, 2, 2008), առանց որեւէ քննական կամ քննադատական ակնարկի։ Հակառակ ուղղութեամբ՝ Գուարդինիի գիրքը ֆրանսերէն լեզուով առաջին գրախօսողներէն մէկը՝ Ալֆոնս դը Վէհլենս (որուն կը պարտինք նաեւ առաջին փորձը *Sein und Zeit*ը ֆրանսերէն թարգմանելու) խստօրէն կը քննադատէ Գուարդինիի դրոյթները եւ անոր ջանքը Հէօլդերլինը քրիստոնէական գոյութենապաշտութեան դատին զինուորագրելու, բայց տալով կատարելապէս ծանծղ պատճառներ, որոնք կը փաստեն թէ ինքն ալ, Գուարդինիի նման (որմէ հա-

ւանաբար կը քաղէր իր լման գիտութիւնը Հէօլդերլինի մասին), գաղափար չունէր զոյգ «շրջադարձեր»ուն մասին, աստուածնե- րու եւ մարդոց, մէկը որպէս իրողութիւն, միւսը որպէս հրամա- յական: Տե՛ս *Revue néo– scolastique de philosophie*, 1940, vol. 43, N 67–68, pp. 314– 321: Այս հարցերուն շուրջ ընթերցողը կը յղեմ նաեւ ուրիշ յօդուածի մը, նոյնպէս իտալերէն եւ նոյնպէս Կաթո- ղիկէ շրջանակներէն բխած. Giorgio Penzo, «Dei e Dio e il problema del sacro; Guardini interprete di Hölderlin» (Աստուածներ ու Աստուած եւ սրբազնութեան խնդիրը: Գուարդինի որպէս Հէօլ- դերլինի մեկնաբան), *Humanitas*, հատոր 42, թիւ 2, 1987, էջ 203- 217: Աշակերտական մօտեցում մըն է հոս ալ առաջարկուածը, հակառակ անոր որ Ջորջօ Պենծոն գիրքերու ալ հեղինակ է, օրինակ` *Pensare heideggeriano e problematica teologica* (Հայդեգե- րեան մտածողութիւնը եւ աստուածաբանական խնդրականու- թիւնը), Queriniana, Brescia, 1973:

[20] Այս մասին ընթերցողը կը յղեմ երկու գիրքերու. Marcel Détienne, *L'Invention de la mythologie* (Առասպելաբանութեան գիւ- տը), Gallimard, Փարիզ, 1981, եւ Jean–Luc Nancy, *La Communauté désoeuvrée* (Անգործ համայնութիւնը), Christian Bourgeois, Փա- րիզ, 1990, որմէ ի դէպ կեդրոնական գլուխին հայերէն թարգ- մանութիւնս լոյս տեսաւ ԿԱՄի 6րդ հատորին մէջ (2005, Ապ- րիլ, Լոս Անճելըս): Այս նիւթերուն շուրջ ընդերկար խօսած եմ ֆրանսերէն հատորիս մէջ, *Le Deuil de la philologie*, MétisPresse, Ժընեւ, 2007, Դանիէլ Վարուժանի եւ ԺԹ. դարու բանասիրու- թեան առիթով:

[21] Բեդա Ալլեմանի *Hölderlin et Heidegger,* թարգմանութիւն` Ֆ. Ֆեդիէ, PUF, 1959, էջ 72:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակեանի

Էլլա Կանեգարիան

Ծնվել եմ 1989-ին: Պապիս կողմից արմատներս տանում են դեպի Մուշ ու Անի, տատիս կողմից՝ եսիմուր ու Հունաստան: Մասնագիտությամբ արվեստի տեսաբան եմ, բայց հազվադեպ եմ մասնագիտությանս հետ առնչվող գործունեությամբ զբաղվում, որովհետև մի բանով զբաղվելուց մահու չափ ձանձրանում եմ: Երևի դրա համար էլ սկսեցի գրել «Ինքնագրում»:

Կնոջ ճեղքում. Լուի Արագոնի վեպի մասին

Հետաքրքիր ընտանիք, որտեղ երկու սերունդ շարունակ արուները մատնվել են չեզոքացման իրենց կանանց կողմից:
(Լուի Արագոն, «Իռենի ճեղքը»)

Վերջերս մեծ էկրաններ բարձրացավ Գիլիերմո դել Տորոյի Crimson Peak ֆիլմը՝ դասական գոթական նովելի մասնիկներով արված տեսարժան սարսափ, սակայն այնտեղ բացակայում էր դասական գոթական նովելի համար սովորական «ուժեղ, փրկարար տղամարդու կերպարը»:

Սովորաբար ֆիլմի կենտրոնում է գտնվում թույլ ծաղիկ-կին, բայց ես ուզում էի, որ իմ հերոսուհին ուրիշ լիներ: Աղջիկն ինքն է փրկում փղային
(Գիլիերմո դել Տորո, InterviewRussia, 2 հոկտ.)

Առաջին հայացքից նման թեմայի ֆիլմերի համար սովորական սյուժետային գիծն իր մեջ պարունակում է մի քանի հետաքրքիր կետ: Առաջինը թե՛ գլխավոր հերոսուհու և թե՛ նրա ամուսնու մայրերի կերպարների հրեշացումն է: Մյուսը՝ գլխավոր տղամարդ հերոսների՝ դրական և բացասական, թուլությունն է ու նման կերպարներին բնորոշ ուժի բացակայությունը: Գլխավոր հերոսուհին ինքն իր հույսին է, ինքն է և՛ իրեն փրկում, և՛ իրեն սիրող տղամարդուն՝ հեռվում թողնելով իրեն վտանգի տակ դրած ամուսնու ուրվականը (բառի բուն իմաստով ուրվականը):

Ինձ համար այդ ժանրը մարմնավորում է Հենրի Ջեյմսը, ով ասել է, որ ուրվականները մեր անցյալն են:
(Գիլիերմո դել Տորո, InterviewRussia, 2 հոկտ.)

Անցյալ

20-ականներին հասարակությունը հեղեղվեց կնոջ մի նոր, նախորդ ժամանակներից տարբերվող կերպարով՝ le garcon (տղա): Նորաձև էր այն ամենը, ինչ ընդգծում էր մարմնի «անսեռությունը»: Կանայք այնպես էին հագնվում, որ կոծկվեր նրանց ընդգծված կանացիությունը, մեծ տեղ էր հատկացվում պատանեկան մարմնի կառուցվածքով կանանց: Կոնքերն ու կանացի «կլորիկությունները» կոծկվում էին լայն ու իջած գոտկատեղով հագուստների միջոցով: Կանանց մազերը կարճացել էին. Առաջին համաշխարհային պատերազմը ստիպել էր շատ կանանց, հատկապես նրանց, ովքեր աշխատել են վտանգավոր պայմաններում, ռազմական ֆաբրիկաներում, փոխել սանրվածքներն ավելի պրակտիկի՝ կիպ կապած կամ կարճ կտրած մազերի:

Այս համընդհանուր տղայացման միտումն իր անվանումը գտավ Վիկտոր Մարգերիտտի Le Garcon վեպի շնորհիվ:

Կնոջ կերպարային փոփոխման վերաբերյալ ևս մեկ հետաքրքիր բան է կատարվել 20-ականներին, երբ 1928-ին լույս տեսավ Լուի Արագոնի «Le Con D'Irene» վեպը, որը այս տարի «Իռենի ճեղքը» անվամբ «Ինքնագիր» գրական ակումբը հրատարակեց հայերեն Նազենի Ղարիբյանի թարգմանությամբ (Գիրքը հասանելի է նաև upub էլ-գրախանութում՝ http://upub.am/books/ireni-jexqy/):

Վեպն ու Արագոնի ընդվզող հերոսուհին

Պատումն առաջին դեմքով է արված: Գլխավոր հերոսը վերադառնում է ծնողների տուն

Իմ գործերի վատ դրության պատճառով, հայտնվելով գրեթե լրիվ անանկացած վիճակում

Ահա այսպես է սկսվում մեր «ճանապարհորդությունը» դեպի այն պահ, երբ գլխավոր հերոսին մի կողմ դնելով, հասնում ենք մի պարալիզացված ծերունու (5-րդ գլխում), ով միշտ գրգռված է և մեծ հաճույքով հետևում է քաղաքում գրեթե բոլորի սեռական ակտերին՝ իր դստերն ու թոռնուհունը՝ ներառյալ:

***

Իսկական կին-փիրուհի: Ախ, ինչու նրա մայրն այդպիսին չէր:

Վեպի հերոսի դստեր՝ Վիկտուարի ու իր հոր հարաբերությունները գրքում առանցքային են, քանի որ այդտեղ հանված է դասական «աղջիկ-հայր» կապը, փոխարենը թողնված է ինցեստային երանգներով այդ կապի ստվերը: Աղջիկն իր հորը հիշում է միայն պարալիզացված վիճակում, տարօրինակ ու իր կողմից անհասկանալի հայացքներ նետելիս այս ու այն կողմ: Նրան պարտադրում են շփվել հոր հետ՝ մայրը: Նման կոնտեքստում ձևավորվում է զզվանք թե՛ հոր, թե՛ նրա կողմից աղջկա համար մարմնավորվող տղամարդկանց հանդեպ, ինչը հերոսուհին հետո կբացահայտի:

Պարտադրված շփումն ու հոր, նրա փաստացի անպետք կաղապարը՝ մարմինը հարգելու, հետը մարդավարի շփվելու պահանջը կորչում է այն պահից սկսած, երբ մահանում է պարալիտիկ հերոսի կինը՝ Վիկտուարի մայրը:

Միշտ սևազգեստ, առաքինի, Աստծուն աղոթող ու ամուսնու կաղապարը որպես տան մեծ գնահատող կերպարը կորչում է գրքից: Մնում են միայն Վիկտուարն ու իր հայրը, ով երբեմն երազում է նրա մասին, որ սպասավորներից գոնե ինչ-որ մեկը նկատի իր դստեր սեքսուալությունը…

Պատահում էր, որ ծածուկ հետևում էի տղամարդկանց, ուզում էի, որ նրանք կոփանքով լցվեն սպասուհիների նկատմամբ, աղջկաս նկատմամբ: Ես նրանց

հանվացնում էի, որ տեսնեի, թե նրանց վրա ինչպես կազդեին բացված սփին-քը, մերկացած ուսը:

Հերոսի կնոջ մահվան հետ վեպը լքում է նաև` հայրիշխանական (պատրի-արխալ) հասարակության կողմից ստեղծված ու դարերով շահարկված «են-թարկվող» կնոջ կերպարը: Նրա մահվամբ կատարվում է Վիկտուարի ազա-տագրման ճանապարհի առաջին քայլը:

Վիկտուարը չէր փորձում ընդօրինակել մոր շինծու պահվածքը:

Նա արդեն ստիպված չի անել այն, ինչ չի ուզում: Հաջորդ քայլը, որն անում է Վիկտուարը, ազատագրումն է ՀԱՅՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ` Տղամարդուց ու նրա բիբլիական հղումներից` ԱԴԱՄԻՑ: Ազատվել Ադամից ու նրա իշխանությունից` նշանակում է փչացվել, պոկվել, աղճատվել նրանից իբրև կող:

Վիկտուարը հաճախ իր բազմաթիվ ու բազմաբովանդակ` տղամարդկանց ու կանանց հետ սեռական տեսարաններն այնպես է դասավորում, որ դրանց մասնակից դարձնի նաև հորը, կարծելով, թե դա տեսնելիս նա կզայրանա կամ իրեն վատ կզգա (այստեղ էլ շեշտադրվում է հերոսուհու ու հոր միջև կա-պի բացակայությունը, երբ մեկը մյուսի միմիկան չի ընկալում).

Նրան թվում էր, թե ինձ մեծ հարված է հասցնում:

Այս վուայերիստական սեանսների իրական նպատակը պոկվելն էր, սեփա-կան մարմինն օգտագործել իբրև ընդվզման զենք: Այս փուլում Վիկտուա-րը գտնվում է պայքարի մեջ իր մարմնի հետ ու օգտագործում սեռականու-թյունն ու ոչ ավանդական կողմնորոշվածության սեռական կապերը իբրև ԱԿՏ, որը մարմինը մաքսիմալ պղծելով (հայրիշխանական բարոյականության կոն-տեքստում) կկտրի նրան որևէ պատկանելությունից:

Սեփական մարմնի պատկանելության «հարցերը լուծելուց» հետո Վիկտո-ւարն անցնում է նյութական «ազատագրմանը», դառնալով հորից ժառանգ-ված կալվածքների լիիրավ տերն ու անգամ կրկնապատկելով իրենց ունեց-վածքը: Նրանից բոլորը վախենում են.

Տղամարդիկ նրան սկսել են որպես հավասար ընկալել, և ինչ ահարկու հա-վասար:

Տարիներ շարունակ տեսնելով հոր պարալիզացված կերպարը` Վիկտուարը եկել է մի եզրակացության` տղամարդիկ ավելի լավ կատարող են, քան իշ-խող:

Նրան նայելով է հասկացել, որ տղամարդկանցից հիանալի ծառաներ են ստացվում, բայց ողորմելի տերեր:

Իշխանության կողմից մատուցվող գայթակղությունները նրանց սպառում են ու դարձնում գարշելի, սիֆիլիտիկ պարալիզացված անասուններ, ովքեր ոչնչի ունակ չեն: Այդ իսկ պատճառով Վիկտուարն ինքն էր տիրություն անում հորից ժառանգված կալվածքները, իսկ տղամարդկանց գործածում ավելի մանր-մունր գործերի համար:

Հաջորդ կերպարը Վիկտուարի դուստր Իռենն է (հա, գրքի շապիկի Իռենը):

Իռենը տղամարդկանց հետ վարվում է այնպես, ինչպես վերջիններս կանանց հետ. դառնում է ահավոր անհամբեր, երբ նրանք ապագայի հեռանկարներ են կառուցում, իրենց կյանքն են պատմում, քնքշանում են:

Եվս մի հերոս, ով բացարձակապես ծնողի հետ կապ չունի ու չի հասկանում նրան: Նա սեռական ակտերն օգտագործում է բացառապես սեփական մարմ-նական հաճույքի համար: Նման մոտեցումը հստակ տարբերություն է դնում երկու կանանց միջև` ցույց տալով, որ երկրորդը սեփական մարմնի հետ գա-ղափարական խնդիր չունի: Նա արդեն ծնվել է առանց որևէ պատկանելու-թյան գիտակցման ու ապրել մի վայրում, որտեղ գլխավորը մայրն է, ապրել

մի կյանքով, որը զուրկ է հայրիշխանության կուռքերի ձևական պաշտամուն-քից: Իռենի համար մարմինը մարմին է, այլ ոչ թե հարթակ:

***

Վիկպուարի հայրը դեռևս այսպեղ է՝ հիվանդի բազկաթոռին գամված և քառասուն փարի է՝ ականապես է կանանց հաղթարշավին և նրանց հպարպ առողջությանը:

Արագոնն ու կանանց երեք ազատագրումը

90-ականներին պոստ-պոռն մոդեռնիստ, երրորդ ալիքի ֆեմինիստ Էննի Սփրինքլն իր արգանդի վզիկը բաց էր անում հանդիսատեսի առջև ու լայնիչի օգնությամբ լայնացնում այն՝ թույլ տալով հանդիսատեսին մոտենալ, նայել, անգամ լապտերով լուսավորել կանացի սեռականության մութ կողմերը:

Երկուսն էլ՝ Սփրինքլն ու Արագոնը, գործածել են կանացի մարմինը և դրա կոնկրետ մեկ՝ ամենատաբուացված հատվածը:

Սփրինքլի դեպքում հարթակ, որը թույլ կտա վիզուալ ծանոթության միջոցով կոտրել կանացի սեռականության հանդեպ ունեցած տաբուները: Իսկ Արագոնի դեպքում այլ հարթակ՝ մարմինը գործածվում է հասարակարգում տեղի ունեցող նուրբ փոփոխությունների մասին ընթերցողին տեղեկացնելու համար, այդ իսկ պատճառով գիրքը հագեցած է էրոտիկ տեսարաններով: Նույն պատճառով տեքստը կառուցված է սեքսիզմին հարող էրոտիկ սիմվոլներով ու նկարագրություններով, սակայն դրանց նպատակն ավելի հեռու է, քան ուղղակի ընթերցողին գրգռելը, նպատակն է ֆիքսել ու հասարակության ուշադրությունը հրավիրել մի փոփոխության վրա, որը դեռ ընթացքի մեջ է: Շահարկելով մի բան, որը քեզ չի պատկանում (տվյալ դեպքում խոսքը կանացի սեռական օրգանի մասին է), կարող է հարվածի տակ դնել ողջ արածդ, եթե, իհարկե, ընթերցողը պատրաստ չէ հասկանալու այն, ինչ պետք է:

Արագոնը գտել է սիմվոլիկ առումով կատարյալ տարբերակ՝ սիֆիլիտիկ բիձա, որը կմարմնավորի փտող կարծրատիպերով հագեցած հայրիշխանական հասարակարգի անկումն ու երեք կին.

հերոսի կինը՝ ենթարկվող կնոջ կերտվածք, Ադամի կող, միասնություն,

հերոսի դուստրը՝ ընդվզող կին, պոկվող կող, կիսատություն,

հերոսի թոռնուհին՝ ազատագրված կին, մարմին, ամբողջականություն:

Առաջին կնոջ համար միակ ընդունելի ազատագրումը հորական տնից ամուսնու տուն գնալն է, իսկ ազատագրումը ամուսնուց… վերջինի մահը:

Փոքր ժամանակ կինը կախված է հորից, երիպասարդ փարիքում՝ ամուսնուց: Ամուսնու մահվանից հեպո՝ որդիներից կամ որդուց, իսկ եթե որդի չունի, ուրեմն մոպակա բարեկամներից: Նա երբեք չպեպք է ինքն իր հույսին մնա:

Իվան Կուրգանով, «Կանայք և կոմունիզմը»

Երկրորդ կնոջ ազատագրումը հնարավոր է «փչացման», հայրիշխանական բարքերին դեմ կանգնելու միջոցով: «Փչացնել», «պղծել»՝ նահապետի աչքերում «տունը», որ այնտեղ չուզենան «ապրել»: Այլ կերպ ասած՝ տունը-մարմինը վարկաբեկել, որպեսզի դրան ոչ ոք չուզի ՏԻՐԱՆԱԼ, հետևաբար, մարմինը մնա սեփական ու բաժին չհասնի «ուրիշին»:

Երրորդ կանանց ազատագրումը՝ «էմանսիպացիա է էմանսիպացիայից»: Այս փուլում գտնվողների համար արդեն հասկանալի չի առաջնային էմանսիպացիայի կարիքը (և երկրորդ փուլի այդքան բնորոշ ագրեսիան): Տեղի է ունենում բոլոր ուժեղ հեղափոխական խորհրդանիշների իմաստազրկում ու

դեկոնստրուկցիա: Հեշտոցը հեշտոց է, մարմինը՝ սեփական: Ազատագրումից ազատագրումը տեղի է ունենում «ինստիտուցիոնալացված» խորհրդանիշների ուղղակի գործածման միջոցով՝ «ապասիմվոլականացման»:

Հեշտոցն այդ կոնտեքստում ոչ միայն դադարում է լինել «զավակ ծնելու» գործիք (ինչպես «ենթարկվող կնոջ» համար էր), այլ նաև գաղափարական հարթակ կամ խոսափող, ինչպիսին նրան դարձրել էր այն երկրորդ փուլը՝ «ընդվզող կինը»:

Երրորդ փուլում այն ապակոդավորվելով դառնում է կրկին հեշտոց՝ հաճույքի կամ դրա բացակայության գործիք:

Այսպիսով երրորդ փուլի ներկայացուցիչները, Իռենները, հաճույքի միջոցով կարողանում են ուժեղ ու տաբուացված, ինստիտուցիոնալացված խորհրդանիշները «վնասազերծել» կամ ապակոդավորել:

Ինչպես, օրինակ՝ «Էկզորցիստ» ֆիլմում դիվահար աղջիկը նույն կերպ փորձում է ապակոդավորել քրիստոնեական խաչը՝ օգտագործելով այն իբրև ֆալլոս…

Կամ Լուսինե Թալալյանն իր կարճամետրաժ «Post DIY» ֆիլմում՝ ապակոդավորում է տաբուացված լեսբիական սերը. ներկայացնելով կանացի սեքսի նատուրալիստական տեսարանը խոր ժողովրդական Արաքսյա Գյուլզադյանի «Նազ աղջիկ» երգի հետ նա հաջողացնում է հանել միասեռական թեմաներին բնորոշ դրամատիզմն ու ներկայացման վախվորածությունը:

Իռենները բերում են, հասցնում մեզ այն կետին, որտեղ տղամարդու ներկայությունը զուտ ճաշակի հարց է, այլ ոչ թե հասարակության մեջ դիրք, ֆինանսական կայունություն, առաջխաղացում և այլն:

***

«Իռենի ճեղքը» վեպի հայերեն թարգմանության շապիկի հեղինակն է արվեստագետ Սամվել Սաղաթելյանը, ով հաջողացնում է նույն մակարդակի վրա շահարկել թե՛ սեփական, թե՛ հակադիր սեռի սեռականությունը պատկերային և տեքստային ձևերով: Նրա նատուրալիզմին հարող ռադիկալ մոտեցումը «ֆիլտրում» է, գրքից վանում բոլոր նրանց, ովքեր ունեն վախեր, կարծրատիպեր, և գրքին միայն «հպվում են» նրանք, ովքեր Սփրինքլի հանդիսատեսի պես չեն վախենում նայել «ճեղքից ներս»:

Լուսանկարը՝ Նազիկ Արմենակյանի

Արամ Պաչյան

Ձախողման ավանդույթը Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գիրքը» վեպը

«Սիրելի բարեկամներ, դեռ դպրոցական, ուսանողական, հետո էլ ասպիրանտական տարիներից միշտ երկյուղել եմ ազգային վեպի մասին բարձրաձայն խոսելուց» (էջ 11):

Այնուամենայնիվ, էջառէջ հաղթահարելով իր «երկյուղը» և շարունակելով խոսքը, Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գրքի» գլխավոր գործող անձը՝ վեպում դասախոսը, էպոսը մեկնողը, Խեչոյանի ալտեր էգոն, ով համանուն վերնագրով վեպ է գրում, առաջին պարբերություններից սկսած հանդիսանում է հեղինակի վիպային ողջ մտայնության միջնորդը, ուստի վեպի պատմությունը փոխանցելու ձևը դասախոսությունն է: Իր կյանքի զգալի տարիները նվիրելով ազգային վեպի հարյուր հիսուն պատումների ընթերցմանը և ուսումնասիրմանը (ուշադրությունը բևեռելով Փոքր Միհերի ճյուղին, նրա՝ Ագռավաքարում փակվելու նշանավորությանը)՝ դասախոսը շրջագծում է նոր մեկնություններ՝ ներկայացնելով անդրադառնալու հիմքերը.

«Դասախոսություններով հանդես գալու մյուս պատճառներից մեկն էլ ազգային վեպի հիմքի վրա գեղարվեստական գիրք գրել չկարողանալն էր, սեփական շնորհքիս նկատմամբ հուսահատությունը և քանի գնացող, սոցիալ-կենցաղային հոգսերի սաստկանալը, որն այլ հնարավորություն չէր թողել, քան այդ եղանակով ապրելու միջոց գտնելը» (էջ 12): «Դեռ դպրոցական տարիներին, հատկապես բարձր դասարաններում, ինձ համար արդեն անկասկած էր Միհերի կենդանի լինելը» (էջ 13):

Այսուհետ հեթանոսական խորհրդազգացողությունը Խեչոյանի համար Փոքր Միհերի (ազգի ճակատագիրը) բացատրելու հիմնական ուղեցույցն է, հակադրությունը քրիստոնեականի.

«Բացահայտ է՝ պատմության մեջ մոլորության դուռ բացող շեղումը և ազգային վեպի էական հանգույցների ձևափոխումներն ու վերաիմաստավորումներն ավելի ուշ դարերում քրիստոնեական միջավայրի հետևողական միջնորդությամբ էին իրականացվել» (էջ 213): «Մեր եկեղեցին էլ ազգային վեպի հիմնադիր գաղափարները յուրացնելով՝ փորձել է քրիստոնեական արարողակարգերի մեջ մտցնել, այդ նպատակով հետագա դարերի ընթացքում պարբերաբար խոշոր մտավոր և նյութական կարողություններ է ներդրել: Հիմնականում փորձել է Միհերի երկրորդ գալստյանը վերաբերող Համբարձ-

ման տոնի իրական նշանակությունը Քրիստոսի իջնելու պայծառատեսությանը վերագրել» (էջ 214):

Լևոն Խեչոյանի «Մհերի դռան գիրքը» վեպը հրատարակել է «Անտարես» հրատարակչությունը 2014-ին:

Ազգային վեպին վերաբերող ելույթները, որոնք զուտ ընթերցողին ուղղված մենախոսություններ են հիշեցնում (միայն վեպի միջնամասում է լսվում ուսանողի ներկայության ձայնը), դասախոսը չմերժելու և չսահմանելու եղանակով է պատրաստել: Երկուստեք մերժման ու սահմանման թերակերտություն է: Պատմաբանները, ազգագրագետները, եկեղեցին, նաև ազգային վեպի որոշ պատումներ Փոքր Մհերին, նրա արարմունքը, Ագռավաքարում փակվելու որոշումն այլ կերպ են ներկայացնում, մի տեսակ ըստ շահավորության, իսկ ինքը՝ իր երազներով, մտահանգումներով, զգացողություններով փաստորեն այլ կերպ: Եթե դասախոսի համար վտանգավոր է հստակությունը, դրանից բխող արձագանքը, ուրեմն պիտի խոսի մասամբ, որպես ի կողմանէ, որ կտրուկ դիմադրության չարժանանա, և իհարկե չարժանանա գիտակցված լռապահության: Խեչոյանը այս մտադրության կանխատեսելիությունով պարզապես վեպի շարունակությունն է ապահովում՝ հերոսին պարսպելով հեղինակային-անձնական պաշտպանությամբ: Դասախոսը, որ երկարուձիգ տարիներ մանրամասնորեն ուսումնասիրել է ազգային վեպի պատումները, նաև ծանոթ է այլ գիտնականների, ազգագրագետների աշխատանքներին, համակված է անբավարարվածության զգացողությամբ և ունի սեփական հետևությունների տրցակը, որի բաղադրությունը կազմում են.

երազը – (դասախոսը ուսանողներին միերյան իր մոգականությամբ լեցուն երազներն է մեկնում).

նույնանմանությունը կամ ճակատագիրը – (դասախոսի, բանահավաքի, գրողի, միերյան տիպի վարքագրությունը).

առաքելությունը – «Պարտավոր ես հնազանդ լինել,– ասում էր,– ինչպես մշակն է հողին ու ցորենին հասկանում, դու էլ պարտավոր ես ազգային վեպը հասկանալ: Ամենաբարի նախախնամությունը վեպի նկատմամբ այնքան զարմանալի ձևով է քո միջոցով իրագործելու, նվիրված շուն, ստրուկ, արհամարհված, զարկված պիտի լինես, բայց ՆՐԱ ոգու կողմից վաստակած այնքան ճշմարիտ հարգանքն ես վայելելու» (էջ 29):

Վեպում դասախոսի, գրողի, վեպում համանուն վեպի առաքելության տոնայնությունը հույժ կարևորության ու գերազանցության հատկություն է ձեռք բերում՝ լռեցնելով ուրիշ հետաքրքրական ձայների երևան գալը: Ազգին դեպի ինքնությունը, ակունքները, ազգին հասկանալու իր համար բացառիկ էպոսին հղվելը, առասպելով, մասնավորապես, Փոքր Մհերի ճակատագրով ազգի անցյալի, ներկայի և իհարկե ապագայի բանալիների տեղը մատնանշելը պատումին և ողջ «Մհերի դռան գիրքը» վեպին հատուկ կարգավիճակի մեջ են դնում՝ սահմանափակելով նրա հնարավորությունների շրջանակը, քանի որ վեպը ծառայեցվում է: Եվ հատուկ կարգավիճակը իր կարևորությամբ որքան էլ համակարգված կամ քաոտիկ լինի, արդեն իսկ որոշակի ծանրություն է նախորոշում: Եթե այս առաքելության ծանրությունը ինչ-որ կերպ մեղմելու կամ թեկուզ այն համակ կործանելու համար Խեչոյանը երգիծանքին, խաղին, կամ դետեկտիվությանը դիմեր, գուցե վեպն իր ուսերից թոթափեր այդ կոչված լինելու հատուկ կարգավիճակի Ան-գեղարվեստական, պաստառային բեռը, որն արդեն ստանում է իր վավերականությունը գրքին վերաբերող մի քանի բանասիրական տեքստերում.

«Միհերի դռան գիրքը» ավարտվում է Գուրգեն Գասպարյանի «Լևոն Խեչոյան (դիմանկարի ուրվագիծ)» վերջաբանով, որտեղ այսպիսի նախադասություն կա.

«Սա նաև ազգի ապագայի մասին ծրագրային ուղերձ է…» (էջ 395):

«Գրական թերթում» Ժենյա Քալանթարյանի «Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում» հոդվածից.

«Լ. Խեչոյանը Միհերի արարքներին չի նայում իբրև եղած, վերջացած պատմության, այլ դիտում է իբրև մի հավերժական խորհուրդ պարունակող երևույթ, իբրև «Հայասա երկրի, հետո էլ Ուրարտու պետության հավատամքի սուրբ գիրք, որպես սերունդների միջև ընդհատվող ժամանակի ամբողջություն, որպես իշխանական Մեծ տան հարահոս կյանքի կրոնամիստիկ մի ամբողջ կարգակառույց, որ ոչ սկիզբ ուներ, ոչ էլ վերջ» (էջ 301)[1]:

Վալերի Փիլոյանի «Կանչվածի փնտրտուքը (Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գիրքը» հոդվածից.

«Վեպի զգացմունքային բարձրակետերից է այս հատվածը, որ պիտի հաղթահարվի՝ հաստատելով Միհերի լինելու, ապրելու գաղափարը: Միհերը պիտի վերագտնվի. նա մեր ինքնության առհավատչյան է, և հեղինակը վկայում, ապացուցում, հաստատում է նրա գոյությունը»[2]:

«Վէմում» Սերգեյ Սարինյանի «Միհերի առասպելը ըստ Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գիրքը» վեպի» հոդվածից.

«Հայկական լեռնաշխարհը կենդանակերպի հայրենիքն է: Հերմեսյան օրենքով այն, ինչ վերևում է, նույնը ներքևում է, այլ կերպ ասած, երկինքը քարտեզագրված է ըստ Հայկական լեռնաշխարհի: Փոքր Միհերը վերջին աստվածությունն է, տիեզերական լոգոսը, այսինքն՝ «տիեզերական հոգին տիեզերական նյութի մեջ»: Դրա համար է նա Ագռավաքարում: Սա մեր էպոսի թաքնագիտական հղումներից մեկն է: Թաքնագիտություն է նաև ազգի հեռանկարի հարցը էպոսում: Այս իմաստով, Փոքր Միհերը ոչ միայն տիեզերափուլը փակող աստվածություն է, այլև նոր փուլ, նոր հարություն բերող աստվածություն: Վերջապես մի դիտարկում ևս. Բիբլիան բառացիորեն չի նշանակում Աստվածաշունչ, այլ Գիրք, և հավանաբար «Բիբլիա» հասկացությունը ծագում է մեր հին հեթանոսական իմացաբանությունից: Ինքնին ուշագրավ է, որ Խեչոյանն իր վեպն անվանել է «Միհերի դռան գիրքը»:

«Անցումներն Ագռավաքարի ամբողջ տարածքով, տառապանքի, չարչարանքի, մղձավանջային տեսիլների ամբողջ պատկերը Խեչոյանը ներկայացնում է մտովի վերապրումով, ցնորական տեսիլների և ուրվականների ուղեկցությամբ, քանզի այլ ավարտ չէր կարող տալ վեպի սյուժեին, քան բնազանցորեն գիտակցված դրույթ: Այստեղ է նրա գրողական կեցվածքը. «Ինձ արևն է կարգել, որ Ագռավաքար մտնեմ, ընթացքը տեսնեմ, ազգային վեպի մարդկանց հետ հանդիպեմ»[3]:

Գրքի հատուկ կարգավիճակը վերասահմանող այս տարատեսակ պիտակների ճնշման ներքո մոռացության են մատնվում «գլխավոր ուղերձներից» դուրս մնացած առավել ուշագրավ դրվագներն ու կերպարները, թեպետ ակներև է, որ Խեչոյանի համար էլ այդ դրվագներն ու հպանցիկ կերպարները մեծ հաշվով առաքելությանն ու կոչվածությանն են ծառայում և նրանց կյանքի այլ կողմերն այդպես էլ աննշան ու չհետազոտված են մնում: Վեպը շարունակում է զարգանալ էպոսի արձակ շարադրանքով (և ընդհանրապես վեպի զգալի մասը հատկացված է դրան) իրականի ու հորինվածքի (հեքիաթայնության, առասպելական ռեալիզմի) զուգադրումով: Կարծես Սանասարի ու

Բաղդասարի, Մեծ Մհերի, Մըսրա Մելիքի, Դավթի ու Խանդութի, Փոքր Մհերի պատմությունները, որոնք կրկին ազգի էության ու ճակատագրին են միտված՝ դասախոսի համանուն, անավարտ վեպի հատվածներից են, որի մասին պարզում ենք «Դասախոսի ներկար օրագիրը» ենթագլխի տակ ծավալվող դեպքերից: Այստեղ որոշակիորեն պատկերահանվում է (ավելի շատ գրողի, ոչ դասախոսի կամ բանահավաքի) կեցությունը, «Մհերի դռան գիրքը» վեպը գրելուն, ավարտելուն ուղղված գործողությունները, նրա սիրային արկածները, կնոջ, սիրուհու, աղջկա, էպոսով տարված ծանոթ նկարչի հետ փոխհարաբերությունների շրջանակը: Եվ բոլորն ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ մտցված են ազգային վեպի, Փոքր Մհերի չարխի մեջ:

Էպոսի արձակացման գործընթացը ժամանակավորապես ընդհատվում է՝ Ազգային ժողովի դահլիճի պատին համբարձման գիշերվա միստերիաներով եռամաս պաննո հեղինակած նկարչի կերպարով: Մի մարդ, որ նույնպես տարված է Մհերի՝ Ագռավաքարում փակվելու որոշման մեկնությամբ:

«Ագռավաքար մտնելը ողնաշարի ծուծքը մտնելուն էր նման, Մհերը ժողովրդի մեջ գնալու և նրա քրոմոսոմի միջոցով կրկին վերադառնալու ճամփան էր գտել» (էջ 126-127): «Չգիտեմ, հնարավոր է՝ այս ամենն ասում եմ, որ ինքս իմ հավատն ամրապնդեմ, թե գալու է Հայոց աշխարհի կապանքները փշրելու, վերելքի ժամանակը: Տեսնելու եմ մեր երկրի խորհրդանիշը՝ ընկույզի չափ դարձած կարմիր գարեհատիկը, որի խորքից դուրս է գալու նոր դարաշրջանի երջանիկ Հայաստանը՝ իր նորացած մարդկանցով. նրանց արթնացած մարմինները պիտի հագնեն հոգիները, և այն ժամանակ ներկային հակառակ՝ հոգին դուրս պիտի լինի, մարմինը՝ ներսը, և հոգու աչքերը սկսելու են տեսնել…»: «Նկարիչն ուզում էր բոլոր հնարավոր և անհնար միջոցներով արդարացնել Մհերին. սա էր նրա ցանկությունը» (էջ 129-130):

Նկարչի ու դասախոսի բացահայտ նմանությունը (նկարիչն ասես դասախոսի կերպափոխուկը լինի), ազգային վեպի վերաբերյալ նույնախոհությունը նրան զրկում են առանձնակի լինելու կամ գոնե այդպես թվալու հատկանիշներից: Նկարչի՝ բոլոր հնարավոր ու անհնար միջոցներով Մհերին արդարացնելու ձգտումը դասախոսի՝ նկարչին վերագրած գերցանկությունն է: Վեպում նկարիչը ևս ծառայելով հատուկ կարգավիճակ ունենալու առաքելությանը (փոխանցելով ոչ թե այն, ինչ մտածում է, այլ այն, ինչ հեղինակային խիստ տեսանելի կամայականությունն է ուզում)՝ հապճեպ դուրս է մղվում ասպարեզից՝ անհետանալով Հունաստանի կղզիներից մեկում, որտեղ իր պաննոյի համար գնացել էր կապտալույս որոնելու:

Այդօրինակ անհետացումների ի հայտ գալը վերածվում է Փոքր Մհերի Ագռավաքարում փակվելուն-կորչելուն հղվելու փոխաբերության: Անհետանում-գտնվում է դասախոսի աղջիկը, անհետանում-հեռանում է սիրուհին: Անհետացումների շարքին կարելի է ավելացնել դասախոս-արձակագրի կյանքի փոփոխությունը (գնալով ծանրացող սոցիալական վիճակը, անձնական կյանքի չստացվածությունը, գիրքը չավարտելը, դասախոսությունների չհասկացվածությունը), բայց սրանք միսիան ի կատար ածելու անհրաժեշտ պետքություններ են, որոնք չեն ծնվում ոչ գոյապաշտական, ոչ էլ հոգեբանական պահանջմունքներից: Պարզապես անդրդվելի քայլերով գլխավոր հերոսի մեջ Փոքր Մհերին են հիշեցնում՝ հասցնելով նրան ազգը բացարձակացնող ընտրյալ «քրոմոսոմի» մեջ: XX դարում ազգը ընտրյալ-քրոմոսոմով, գենի անաղարտությունով բացատրելը, դրանով առաջնորդվելը նացիստների կողմից գործադրած զտումների «Ռասայական հիգիենա» ծրագրի ատաղձն էր,

որի արդյունքները հայտնի են, ուստի վեպում Խեչոյանի կողմից «քրոմոսոմ» օգտագործվող եզրը խիստ վտանգավոր դիրք է գրավում՝ մերձենալով մահվան պատմությանը, նույնիսկ այն դեպքում, երբ այդ եզրը հանդես է գալիս որպես ազգի ուրույն հատկանիշները համահավաք բնութագրող այլասացություն:

«Դասախոսի ներկար օրագրի» գլուխները, որոնցում դասախոսն ավելի շատ որպես գրող է հանդես գալիս, ցուցադրում են թերևս հեղինակի համար միայն բուն գաղափարի շուրջ կցված օգտագործելի անձանց (կնոջ՝ Եվայի, սիրուհու՝ Մարոյի, աղջկա՝ Նվարդի, ուսանողներ Նադյայի, Վիկտորի և նույնիսկ միհրասեր նկարչի կերպարները), սակայն նրանց վերապահված դերակատարումների սահմանից դուրս նոր կարելիություններ դրսևորելն արգելված է: Օրինակ՝ գրողի սիրուհու՝ Մարոյի կերպարն ասես կերտվում է միայն նրա համար, որ վեպում էլի մեկը կլանված լինի էպոսով.

«Մի անգամ, երբ հասել էի Իսմիլ Խաթունի՝ խաբեությամբ Մելիքին ծննդաբերելու դրվագին, արթնացավ թմբիրից ու կիսաքուն վիճակից, ոչ մի անգամ նման բան չէր եղել, հմայվածի պես մոլագար կատաղությամբ տրվեց նորից ու նորից: Ինձ թվում է՝ հենց այդ օրը, այդ պահին էլ հղիացավ Մարոն» (էջ 146), որ հետո գրողի պնդմամբ փորձի աբորտ անել երեխային, այնուհետև ծանր ապրումների ներքո նրա կյանքից անհետանա, որ գրողը՝ իր կամքին հակառակ լույս աշխարհ եկող երեխային նույնացնի Դավթի ու Փոքր Մհերի (հոր՝ իր դեմ ելած որդուն նզովելու) բախտագրությանը: Եվ վեպում կյանքի այլ իրավունք Մարոն չունի:

«Դասախոսի ներկար օրագրում» և ընդհանրապես ողջ վեպում նրա միակ ընդդիմախոս ուսանողը՝ Վիկտորը (Խեչոյանի կողմից ընտրված այս անունը հեգնական բնույթ ունի), հայտնվում է մի քանի անգամ՝ հնչեցնելով իր անհամաձայնությունը. «Դուք ձեր դասախոսություններով արցախյան երկրորդ պատերազմի համար մարդ եք հավաքագրում» (էջ 192): «Կուրսեցիների առաջ խոստովանում եմ՝ ինչին դուք ազգային վեպ եք անվանում, ստուգարք չեմ հանձնելու: Դուք սովորեցնող եք աշխատում, ապրել սովորեցնելու վարժապետ: Ամենազզվելին սովորեցնելն է, մանավանդ, մեռնել: Ձեր ազգային վեպը երկրորդ պատերազմի համար կամավորականներ հավաքագրելու խայծ է: Լսարանում՝ քար լռություն: Վիկտորը սևեռված՝ աչքերիս մեջ է նայում: Ոչ մի բանի չի հավատում՝ ոչ գրին, ոչ էլ ազգային վեպին, որը եղել է և կարող է հայ ժողովրդի Աստվածաշունչը լինել: Ծաղրուծանակի է ենթարկվում Աշոտի քիչ առաջվա ելույթը, ծաղրում է Դավթին, ավելի ճիշտ, փնովում է նրա հերոսությունը, որ նա ժողովրդին ինքնապաշտպանության բնազդից է զրկել, որ մարդկանց վախկոտություն է քարոզել. թող նրանք տանը նստեն, ինքը կկռվի նրանց փոխարեն, այդպիսի հերոս կլինի՞:

Վիկտորը.

«Ասում են՝ դուք առաջին պատերազմին մասնակցել եք: Ասողներն ասում են, ես էլ չեմ հավատում, պարզապես դուք հավաքագրող եք, երիտասարդներին սրբազան իդեալներով թակարդն եք գցում, մղում եք մեռնելու»:

Ես.

Արձակել եմ վերնաշապիկիս կոճակները, պորտի տակից մինչև աջ պտուկը կայծակի պես անցնում է շուլալած կապտավուն փայլուն սպին:

Ինքը.

«Մարդու ազատությունը ավելի կարևոր, բարձր արժեք է, քան պետության անվտանգությունը» (էջ 194–195):

Այս երկխոսությունից հետո դասախոս-արձակագիրը «Ես»-ով կարճ պարբերություններով իր կենսագրության հատկանշական դրվագներն է ներկայացնում, որի վերջին նախադասությունն է՝ «Երևի իմ ներսի առյուծն արդեն մեռել է» (էջ 196):

Մինչ Վիկտորի ելույթը, վերևում հիշատակված ուսանողներից մեկը՝ Աշոտը, որ իր մի քանի ընկերների հետ բանակ է կամավորագրվում, հրաժեշտից առաջ լսարանին հայրենասիրական խոսք է առաքում. «Հավատում էին՝ կդիմանային և դիմացան: Այս էլ քանի դար կյանքը նորից սկսվեց ամայությունից, չոչնչացանք: Եղաններով գնացին Սարդարապատ՝ Հայաստանը փրկելու… Ջարդել են և Շապուհին, և Հուստինիանոսին, և Բեյազիդ սուլթանին: Անդրանիկը, Նժդեհը, Մյասնիկյանը հոգու զորությամբ պահեցին Հայաստանը: Եթե մի թաշկինակի չափ հող մնա մեզ, այդտեղից էլ կսկսվի հայոց երկիրը…» (էջ 194):

Աշոտի ճառասացությունը գործի է դրվում, որ Վիկտորը ծաղրի այն, և դասախոսը ընդգծի ծաղրը: Վիկտորի հետ բախումը շարունակվում է.

«Առանց թույլտվության երրորդ շարքի վերջում կանգնել, ձախ ձեռքը շալվարի գրպանում, խոսում է, որ ամբողջ դասախոսությունը, սովետի և Մարքսի ոգով ասված՝ կարևորը պայքարն է, տխրահռչակ քարոզչությունն է հիշեցնում: Այնինչ, իրականում իշխանությունների պատվերով իմ կողմից ընդամենն արցախյան երկրորդ պատերազմի նախապատրաստման՝ կամավորականների մարդաորսն է սկսվել»: «Կրկնում եմ նախորդ ժամին բոլորովին ուրիշ առիթով ասած իմ այն միտքը, որ մերի նման փոքրիկ պետության անվտանգությունը ավելի կարևոր է, քան անձի ազատությունը: Գուցե Վիկտորը, որպես անհատ, կարող էր զենքը, բանակը վատ, շատ վատ բան համարել, եվրոպական պացիֆիստական արժեքների կողմնակից լինել, բայց Եվրոպան, նրա բոլոր պետությունները խոսքի ազատությունը, մարդասիրությունը, համամարդկային արժեքները ստեղծել են, երբ վաղուց հաստատել էին իրենց սահմանները, նույնիսկ երկինքն ու օվկիանոսի ջրերն էին իրար մեջ բաժանել, դրանից հետո, երբ արդեն անվիճելի հարցերը կարող էին կլոր սեղանների շուրջն ընդամենը մի ժպիտով ծաղկանոցների վերածել»: «Ես. Գիտեք՝ ազգային վեպի իմ մասին խորհրդածությունները կարող է պատահել սխալ են, բայց դե, հո դիտմամբ չեմ գնում սխալ ուղիով: Ազգային վեպը վերածվում է Մհերի դռան քարի, մի միասնության, որ, այո, սահմանափակ է, այո, նման պատմականությունն ու արվեստը տարածելի չէ շատ ժողովուրդների վրա, առավել ևս անընդունելի է Եվրոպայի գլոբալիզացվող մշակույթի, գրականության համար, բայց մեր ընտրած ուղին միակ արդար ճանապարհն է» (էջ 249-251):

Առաջին հայացքից ավելի անկախ թվացող Վիկտորի՝ նույնպես վաղանցիկ կերպարը, որի մեղադրական եզրահանգումների առջև դասախոսը թևաթափ է լինում ահա հայտնվում է իբր ցուցանելու հայրերի դեմ ելած երիտասարդ որդիների մի հատվածի՝ ազգի, նրա գոյության, ներկայի ու ապագայի հանդեպ նմանօրինակ «անողնաշար» մոտեցումը: Սակայն առկախ հարցեր են մնում: Ինչո՞ւ է Վիկտորն այդպես մտածում: Հասարակական-քաղաքական ի՞նչ հանգամանքներում են ձևավորվել այդ ամփոփումները: Իր հերթին դասախոսը որտեղի՞ց է իրականում քաղում, ապա սահմանում այդ խարխուլ իսկությունները, թե ազգային վեպի ստեղծած նման միասնության պատմականությունն ու արվեստը տարածելի չեն շատ ժողովուրդների վրա, առավել ևս անընդունելի են Եվրոպայի գլոբալիզացվող մշակույթի, գրականության համար, երբ (ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության

կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր գրասենյակը գտնվում է Փարիզում): Կամ արդյոք գիտե՞նք մեր՝ Եվրոպայից վիրավորվելու ու անարդարության պահանջ ունենալու իրական պատճառը: Հիմա Եվրոպայի գլոբալիզացվող մշակույթի հետ առնչվելո՞ւ ենք, թե հիմնովին մերժելու ենք և այլն: Ահա այս առանցքային հարցերն առաջադրված չեն, չեն քննվում, որոնց ուսումնասիրությունների բացակայությունն էլ վեպից վերջնականապես խլում է ազգային-փիլիսոփայական հարցերը ստանձնած պատվիրակի դերը: Գոնե որոշակի պատասխաններ չկան, իսկ երեսանց ձևակերպումները կարող են մեր վերլուծությանը ենթարկվել միայն անհեռանկար կանխագուշակումների տեսքով:

Էպոսը, որ ըստ Խեչոյանի՝ ազգի արգանդն է, գաղտնագրությունը, բանաձևը, իսկ Դավթի անեծքի խարանով անժառանգ, Փոքր Մհերը, որ ազգի թվացյալ նեղացած ու քարայրում փակված հայրն է, այնինչ իր մեջ ներառել է նրա ողջ արժեհամակարգը, որ այս հին, ապականված աշխարհի փլուզումից հետո դուրս է գալու մութ անձավից ու արժեքների փայփայած պաշարով նոր կյանք է նրան նվիրելու վերափոխվում է ազգային պետության անվտանգության էթիկական (արդար ճանապարհի) գաղափարապաշտության: Փաստորեն հին աշխարհի փլուզման ու նոր աշխարհի կառուցման գործընթացներին մեր ազգը որևէ մասնակցություն չի ունենալու քանի որ եզրագծվել է նրա էպոս-էության քրոմոսոմային հավերժականությունը, նրա՝ ի բնուստ ընտրյալությունը: Աշխարհի բանուգործին մասնակցելու համար կարծես չափից դուրս վերժամանակյա ենք:

Աշոտ Ոսկանյանի բնորոշմամբ՝ «Նեղանալ *էպոսում* մյութոս է, նշանակում է լքել առօրյան հանուն հավերժության: Սակայն հավերժությունը մյութոսի համահարթ շրջանակներում պոզիտիվ սկզբունք չէ. այն ոչ «այնկողմնային» է, ոչ «այսկողմնային»: Դա ուղղակի *բացակայություն* է ժամանակայինի ոլորտից»[4]:

Ուրեմն, եթե նացիստների դեպքում բացառիկության հռչակումը «հին, թույլ աշխարհին» ոչնչացնելն է, ապա մեր դեպքում Ագռավաքարում անշառ նստած, ժամանակային ոլորտից բացակայելով սպասելը, որ գուցե թույլ տա մեզ հին ու նոր աշխարհների արանքը ճղելով մի նոր կյանք կերտել:

Վեպում մի քանի տեղ արցախյան երկրորդ հավանական պատերազմի ակնարկներ կան: Եվ էպոսը բերվում է որպես առմիշտ պատերազմող ժողովրդի դիմադրության ու փրկության (միակ արդար ճանապարհը) հայացք առասպելական ավանդույթին, Ագռավաքարի միստիկ ոգուն, որ եվրոպական և այլական հոսանքներից ձերբազատված՝ մի տեսակ նոր, ավելի շատ էզոթերիկ ազգայնականություն է այլևս կասկածի տակ առնող սահմանադրություն ունեցող պետության հասկացության կարելիությունները:

Աշոտ Ոսկանյանը «Հայ անհատը և նրա «վիրտուալ հասարակությունը» հոդվածում ավանդույթի հանդեպ վարմունքի դրության մասին գրում է.

«Համակարգային առումով, ավանդույթի անձեռնմխելիության պահանջը հիմնավորվում է հարևանների կողմից սպառնացող վտանգին դիմակայելու անհրաժեշտությամբ: Երբեմն նույն հիմնավորմամբ պահանջ է ներկայացվում հայագիտությունը դիտարկել որպես պետականորեն ուղղորդվող զենք*: Երևի նման դեպքերում ենթադրվում է, որ եթե մրցակից պետությունը քարոզչական նպատակներով իրականությունից հեռու մի վարկած է ներկայաց-

նում այս կամ պատմական անցքի վերաբերյալ, պատասխանը պետք է լինի է՛լ ավելի չափազանցված: Բայց դրանով ավանդույթի ռացիոնալ իմաստավորման, նրա վերաբերյալ քննադատական ռեֆլեքսիայի իրագործման գործառույթը ընկալվում է որպես ոչ միայն ավելորդ, այլև վնասակար՝ սեփական հասարակության կայունության տեսակետից»[5]:

Իսկ թե ժամանակակից իրականության մեջ, ասենք համազորային (արդեն ոչ կամավորական-ֆիդայական) մարտերի վերսկսման դեպքում ինչպե՞ս է գործի դրվելու մեր «իրական Աստվածաշունչը», թերևս հայտնի չէ: Գուցե ազգի ինքնամեծության գիտակցությունը բարձրացնող առաքելությամբ: Բայց այս էզոթերիկ բնույթի ազգայնականությունը դասախոսի կողմից բնավ չի պարտադրվում, քանի որ առաջին դասախոսությունից սկսած նրա խոսելու, գաղափարները պարզելու ավելի անվտանգ թվացող կազմությունն է այդպիսին՝ շարժում չմերժելու և չսահմանելու եղանակով: Այս փոփոխամտությունը վեպի գաղափարական ուղերձին, որի հավակնոտությունը ակնհայտ է, ի վերջո անեփ է թողնում՝ շարունակելով ձախողման ավանդույթը, երբ գրականության միջոցները ծառայում են գաղափարական ուղերձի թրծմանը՝ զրկվելով ներքին միջոցներից: Օրինակ՝ առաքելության, կոչվածության ծանրության տակ ճնշված է ոչ միայն վեպի կառույցը, այլև լեզուն, որ զուրկ է ինքնաստեղծումից: Վեպն ավարտվում է դասախոսի՝ Արևմտյան Հայաստան ուղևորությամբ: Վանա լճի ափին՝ Տոսպան լեռներում, նրան հաջողվում է գտնել Ագռավաքարի հնարավոր դուռը, թափանցել դրա մեջ և վերջապես տեսնել Փոքր Միհերին՝ «...Ագռավաքարի դռան մեջ հանկարծ մի ակնթարթ կարմրածուփ սուրհանդակը բոցկլտացող նշանով, կողքին՝ կապտալույսի մեջ, ձեռքերը կրծքին կանգնած Միհերին ցույց տվեց. Միհերն էր. միանշանակ նրան էի տեսել» (էջ 385): Եթե այս պատմությունը գլխավոր հերոսի համար Փոքր Միհերին տեսնելու ոդիսականը լիներ, կստացվեր ճամփորդություն դեպի գրականությունը, ուր հնարավոր է գլխավոր ու երկրորդական ուղերձները կատակներ են:

[1] Տե՛ս Ժենյա Քալանթարյան. «Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում», Գրական թերթ, 2014 http://www.grakantert.am

[2] Տե՛ս Վալերի Փիլոյան. «Կանչվածի փնտրտուքը», Գրական թերթ, 2014, http://www.grakantert.am

[3] Տե՛ս Սերգեյ Սարինյան. «Միհերի առասպելը ըստ Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գիրքը» վեպի», Վէմ, 2014, հոդվածը կարող եք կարդալ նաև այստեղ՝ http://granish.org/the- myth- of- mher- according- levon- khechoyans- novel/

[4] Տե՛ս Աշոտ Ոսկանյան. Homo Trickster կամ էսթետիզմի ծուղակները, *Ռուբիկոն* պարբերական (2005, թիվ 7), կարող եք կարդալ նաև այստեղ՝ http://www.arteria.am/hy/1349514646

[5] Տե՛ս Աշոտ Ոսկանյան. Հայ անհատը և նրա «վիրտուալ հասարակությունը», այստեղ՝ http://www.arteria.am/hy/1327488242 26.01.2012

*Այդ մասին տե՛ս՝ Ա. Ոսկանյան, Հայագիտություն. զե՞նք, թե՞ գիտություն. – Հայաստանը Եվրոպայի ճանապարհին (ընդ. խմբ. Ա. Ոսկանյանի), Եր., Անտարես, 2005, էջ 114-125:

Վահրամ Դանիելյան

Դասավանդում եմ Երևանի պետական ու Հայաստանի ամերիկյան համալսարաններում: Հենց նոր հաշվեցի, որ վերջին շրջանում շաբաթական 24 ժամ տարբեր լսարաններում խոսում եմ գրականությունից, իհարկե ավելի ազդեցիկ կլիներ, եթե գրեի, որ օրը 24 ժամ եմ գրականությունից խոսում, բայց, բարեբախտաբար, դեռ այդտեղ չեմ հասել:

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը (վերընթերցման փորձ[1])

Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը շատ կարևոր դեր ունի ոչ միայն հայ նոր գրականության ձևավորման պատմության համար, այլև XIX դարի կեսերից ցայսօր հայոց մշակութային և քաղաքական կողմնորոշումները պայմանավորող կարևոր աղբյուր է: Ուրեմն՝ Աբովյանի երկը անհրաժեշտ է վերստին ընթերցել թե՛ հայ վեպի առաջացումը և ժանրի հետագա դրսևորումները պատճառաբանելու համատեքստում, թե՛ ընդհանրապես ազգայնական-մշակութային-քաղաքական մեր ինքնընկալման, ինքնաձևակերպման հարցերը ավելի լավ հասկանալու համար: Առաջին հայացքից մի քիչ տարբեր կարող են թվալ վեպին մոտենալու իմ հարցադրումները՝ մի կողմից ժանրի պատմություն, մյուս կողմից՝ ազգայնականության և քաղաքական կողմնորոշումների շեշտադրում, սակայն վեպի ժանրը, արդի աշխարհի ձևավորման ընթացքին զուգահեռ, իր պատմական գործառույթով հենց սկզբից էլ առնչվել է այս հասկացություններին՝ գեղարավեստական մտքի պատմության մաս լինելով հանդերձ՝ երբեք չհրաժարվելով իր քաղաքական գործիքակազմից: Այս մասին իհարկե շատ է գրվել, և ես ընթացքում կանդրադառնամ որոշ դրույթների՝ կապված Աբովյանի վեպում հանդիպող այս կամ այն հարցադրման հետ:

Ռոման բառը, որ վեպի ծագման հենց սկզբից անվանում է նորաստեղծ ժանրը, պատմական և լեզվական բացատրություն ունի: Այն ծագում է XII դարի կեսերից «ասպետական վեպերն» անվանելու համար, իսկ հիմնական պատճառն այն է, որ այդ վեպերը, ի տարբերություն ժամանակի լատիներենով ստեղծվող պատմագրությանը, գրվում էին ոչ կանոնիկ՝ ռոմանական լեզվով: Հենց դասական, կանոնիկ լեզվի յուրօրինակ «հաղթահարման» արդյունք է դառնում նաև արևելահայ իրականության մեջ ստեղծված առաջին վեպը՝ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն: Այսինքն՝ վիպական նոր կամ նորը լինելու հավակնություններ ունեցող ֆորմայի ձևավորման կարևոր նախադրյալ է լեզվական շրջադարձը, գոնե՝ ժանրի կիրառման սկզբնական փուլի համար: Ընդ որում՝ լեզվական շրջադարձը ուղղված է կանոնիկից դեպի «անկանոնը»:

Աբովյանն իր վեպի առաջաբանում մի սիմվոլիկ պատմություն է անում Կրեսոս թագավորի համր որդու լեզուն բացվելու մասին, երբ տղայի անսպասելի խոսելը սահմանային իրավիճակում հոր փրկության պատճառն է դառնում: Աբովյանի ձևակերպմամբ օրինակելի գրաբարից «անպատիվ» աշխարհաբա-

րին անցումը ևս սահմանային իրավիճակից փրկություն է: Հարց է առաջանում՝ ո՞ւմ փրկության մասին է խոսքը, ո՞վ է կործանվող «հայրը» և փրկիչ «որդին»: Աբովյանը ոչ միայն պատմությանը հղում կատարելով և այդ պատմությունը առակի վերածելով է խոսում, այլև խորհրդանշական լեզվային-նշանային կոդերը՝ հայր-որդի, տեղափոխում է սեփական տեքստ ու լեզվամտածողություն. *«Ո՛չ քսան, երեսուն փարուց աւելի ա,* ***իմ ազիզ հէ՛ր՝ իմ սիրելի ա՛զգ,*** *որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուգ իմ աչքիցս, ա՛մն ու ո՛ւխը իմ բերնիցս չի՛ պակսում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մէկ միփքս ու մուրազս ձեզ պատմէի ու հետոյ հողը մտնէի» (62)*[1] (ընդգծումը իմն է՝ Վ.Դ.): *Հայր-ազգ, որդի-գրող* զուգորդումները շատ խոսուն են. Աբովյանն ուզում է, որ որդու իր արարքը հայրափրկություն (կարդա՝ազգափրկություն) ընթերցվի:

Ընդհանրապես վեպի բարձրացումը XVIII դարի սկզբից պատմականորեն զուգահեռվում է արդի ազգային պետությունների ձևավորման պատմություն հետ: Վեպը հնարավորություն է տալիս լեզվական միասնականության և ընդհանուր մշակութային-պատմական (ցանկալի է՝ հերոսական) անցյալի խարիսխ ստեղծել, ինչն այդքան կարևոր է ազգային պետության շինարարության համար: Հետաքրքիր է, որ ի տարբերություն ժամանակակից հայերենի կանոնի՝ Աբովյանը վեպի բնագրում բոլոր ազգությունների անունները մեծատառ է գրում՝ Հայ, Ռուս, Թուրք և այլն, ինչը նաև ուղղագրության անունից (Աբովյանի դեպքում գերմաներենի համաբանությամբ) ազգերի դերի ընդգծում և կարևորում է նշանակում: Հասկանալի լեզվով գրելը միակ նախապայմանն է լեզվական միասնության հասնելու համար, և այս առումով գրաբարից աշխարհաբարի անցումը իսկապես էլ փրկօղակի դեր ունի Աբովյանի ծրագրում, միևնույն ժամանակ Աբովյանը գիտի, որ լեզվական այս շրջադարձը օրինականացնելու ամենահարմար ժանրը վեպն է: Պատահական չէ, որ աշխարհաբարով «Աղասու խաղը» («Վերքի» չափածո նախատեքստը) գրելուց հետո Աբովյանը հղանում է նույն սյուժեի վիպականացումը: Մյուս կողմից՝ Հայկ, Տիգրան, Տրդատ,Վարդան, Նարեկ, Անի, Մասիս և այլ հղումներ մշակութային-պատմական և, որ ամենակարևորն է, միասնական փառահեղ անցյալը հիշեցնելու առաքելությունն են կատարում («Էդ ո՞ւմ վրայ էք թուր հանել, Հայոց մեծ ազգին չէ՞ք ճանաչում»):

Մինչև այստեղ ամեն ինչ շատ պարզ ու տրամաբանական է թվում՝ թե՛ վեպի հղացումը, թե՛ ազգայնականության շեշտադրումը և թե՛ դրա արդյունքում լեզվական շրջադարձի (ապագայում միասնականացման) կարևորությունը: Բայց ամեն ինչ այդքան պարզ չէ: Աբովյանի վեպ-ծրագրի հասցեին հնչած և հնչող հիմնական քննադատություններից մեկը, եթե ոչ գլխավորը, հեղինակի այսպես կոչված քաղաքական կողմնորոշման հարցն է: Աբովյանի վեպի գործողությունները տեղի են ունենում 1820-ական թվականներին՝ ռուս-պարսկական պատերազմի համատեքստում, երբ Երևանի խանությունը պարսիկներից անցնում է ռուսական տիրապետության տակ: Բուն վեպը սկսել է գրվել 1841-ից, թեև լույս է տեսել 1858-ին՝ հեղինակի անհետանալուց տասը տարի անց:

Հայտնի է, որ ռուսների տիրապետությունը ոգևորությամբ ընդունած հայ ազգաբնակչությունը հետագայում բազմաթիվ դժգոհություններ ուներ ռուսական կառավարման մեթոդներից, սրա լավագույն արտահայտությունը կարելի է տեսնել Աբովյանին հաջորդող մեր մյուս հեղինակի՝ Պռոշյանի վեպերում, երբ ուղիղ քննադատություն չկա ցարական իշխանությանը, բայց շատ հստակ են տեղական մանր ու միջին չինովնիկների վարքից ու աշխատելաոճից եղած

դժգոհությունները: Ուրեմն՝ Աբովյանը իր վեպի իրադարձություններից մոտ քսան տարի անց է գրում իր երկը, անվանում է այն «պատմական վեպ» և, ականատեսը լինելով նոր գաղութարարների անկատարությանը, այնուամենայնիվ, «պատմական» համատեքստում ողջունում է ռուսական տիրապետության հաստատումը: Ընդ որում, դա կատարվում է մի քանի շերտով՝ սկսած վեպում գործող տարբեր կերպար-անուններից մինչև հեղինակային վավերացում, օրինակ՝ վեպի հենց առաջին գլխում խնջույքի ժամանակ գյուղի տերտերն ասում է. *«Ապրուած աշխարքիս խաղաղությիւն, թագաւորաց հաշտությիւն, քրիստոնէից ազատությիւն տայ: Ընչանք մեռնինք ո՛չ, որ մէկ օր էլ էսպես էլով, գինով, Ռուսի ձեռի տակին նստինք, քէֆ անենք: – Ամէ՛ն, ամէ՛ն, – ձէն տվին ամէնն էլ»* (100): Ավելի հայտնի է Աբովյան-պատմողի կատարած հայտարարությունը. *«Օրհնվի՛ էն սհաթը, որ ռսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքըներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց»* (132): Ռուսական գաղութացման քաղաքականությունը Աբովյանը արդարացնում է ոչ միայն պարսիկների հետ զուգահեռում (*ղզլբաշի անիծած, չար շունչը մեր երկրիցը հալածեց*), որոնց կառավարման մեթոդները սուր քննադատության են արժանանում վեպում, այլև ավելի հեռուն է գնում՝ ռուսներին գերադասելով նաև եվրոպացիներից. *«Քսան տարու միջում լուսաւորեալ, քրիստոնեայ, խաղաղապաշտ Եւրոպացոց ոտը՝ ողորմելի Ամերիկայ էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հաւասարեց, որ հինգ վեց միլիօն ազգերիցը՝ էսօր հազար հոգի էլ չեն մնացել, էն էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պէս են իրանց սև օրը լալիս, ու կոտորվում…» (129), «…Եւրոպացիք Ամերիկայ աւերեցին, հողի հաւասարեցին, Ռուսք Հայաստան կանգնացրին, Ասիացւոց բիրտ, գազան ազգերին մարդասիրութիւն ու նոր հոգի տվին» (284):* Ռուսական կողմնորոշումը հակասություններ է ստեղծում Աբովյանի խոսքում՝ նույնիսկ լեզվական ընտրության հետ կապված. վեպի երկրորդ գլխում մի տեղ հեղինակը դիմում է հայ երիտասարդներին հետևյալ խոսքերով. *«Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, Հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբան. տասը լեզու սովորեցէ՛ք, ձեր լեզուն, ձեր հաւատը դայիմ բռնեցէ՛ք» (141),* որից անմիջապես մի քանի տող հետո նույն Աբովյանը կարծես վեպի իրադարձություններից պոստ-ֆակտում՝ խառնելով վիպական և հեղինակային ժամանակները (ինչը հաճախ է պատահում, և այս հանգամանքը ևս վեպի ժանրային ազատության արդյունքն է), հայտարարում է. *«Ռուսաց լեզուն մեր փէրութեանն ա, պէտք է ամէնից առաւել համարինք, յետոյ մեր լեզուն ձեռք բերենք» (141):* Ճիշտ է, արդարության համար պետք է ասել, որ երրորդ գլխում Աբովյանը որոշ հեռանկարներ է մատնանշում, որից կարելի է ենթադրել, որ ռուսական տիրապետությունը հայերի համար իր վեպդրագրի վերջնակետը չէ. *«… Ռուսաց հզօր քաջ ձեռի տակին մի փոքր դինջանաս, ու քո աշխարհքին մուղայիթ կէնաս, արիւնդ թափես, քո ազգը պահես, քեզ անուն ճարես» (259):* Հետաքրքիր է՝ այս դեպքում ու՞մ դեմ պայքարելու և արյուն թափելու մասին է ակնարկում Աբովյանը, որը պիտի հանգեցնի ապագայում ազգ պահելուն և անուն ստեղծելուն, նույն ռուսների՞: Աբովյանի այս միտքը տարընթերցումների տեղիք անշուշտ տալիս է, սակայն հեղինակը այն հասկանալի պատճառներով չի զարգացնում:

Այս հատվածն ամփոփելով՝ վերստին փաստենք, որ վեպի ժանրում արտահայտություն գտած հայ ազգայնականությունը հենց սկզբից զուգահեռվում, հաճախ նույնանում է ռուսական կողմնորոշման հետ, ընդ որում, չսահմանափակվելով պարսկական կամ թուրքական օրինակը որպես հակոտնյա ունենալով՝ հասնում է մինչև եվրոպական հնարավոր կողմնորոշման բացառմանը: Անշուշտ, պրոռուսականությունը Աբովյանի գյուտը չէր, նրանից առաջ եղել էին Իսրայել Օրին, Դավիթ-Բեկը և ուրիշներ, սակայն Աբովյանի վեպը մի տեսակ ազգայնականության տեսանկյունից և վիպական տեքստում է օրինականացնում ռուսամետությունը, ինչից հայ քաղաքական միտքը ցայսօր գլուխ չի հանել:

Կա ևս մի կարևոր «հակասություն», որ կարելի է ընթերցել Աբովյանի վեպի մեջ ու միջոցով, ինչը հենց ժանրի բնությամբ է պայմանավորված: Ուրեմն՝ Բենեդիկտ Անդերսոնը իր դիտարկումները, ուր զուգահեռվում կամ փոխպայմանավորվում են ազգային պետությունների ձևավորումը, տպագրության տարածումը և արդի վեպի բարձրացումը, ամփոփել է մի աշխատության մեջ, որը վերնագրված է «Երևակայված հանրույթ» (Imagined Comunity)[2]: Ազգային պետությունները խորհրդանշող այս բանաձև-վերացարկման մեսիջն այն է, որ ձևավորվող նոր հանրույթի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա ներկայացուցիչների կապվածությունը ամենևին չի ենթադրում այդ ներկայացուցիչների անձնական ծանոթություն միմյանց հետ, և հանրույթը ձևավորվում է ազգային հորջորջվելիք ինչ-ինչ ընդհանրությունների հիման վրա՝ լեզվական ընդհանրություն, ընդհանուր կենսական տարածք, մշակութային և պատմական համատեղ անցյալ և այլն: Աբովյանի վեպում ազգային երակի կարևորումը և այդ երակի վրա երկրամասի տարբեր համայնքներով վիպական իրադարձությունների ծավալումը մի կողմից նպաստում են լեզվական, տարածական և պատմամշակութային ընդհանրությունների պատկերմանը, մյուս կողմից՝ արձանագրում են մի շատ կարևոր «շեղում» անդերսոնյան հղացքից: Աբովյանի գլխավոր կերպարը՝ Աղասին, ուր էլ հայտնվի, գրեթե ամեն տեղ բոլորը ճանաչում են նրան, գիտեն նրա պատմության և հերոսությունների մասին: Վեպի ներսում հասունացող ազգային այս հանրույթը կարծես ամենևին էլ երևակայված չէ և բացի թվարկված ընդհանրություններից, խարսխվում է նաև փոխադարձ անհատական ծանոթություններով: Արդյո՞ք այս շեղումը պայմանավորված է Աբովյանի ընտրած տարածության փոքրությամբ, թե՞ այլ՝ զուտ վեպի ժանրին հատուկ բացատրություն ունի: Վիկտոր Շկլովսկին Սերվանտեսի «Դոն Կիխոտի» առիթով գրում է, որ Կիխոտը վեպի երկրորդ հատորում ճամփորդում է աշխարհներով, որի բնակիչները արդեն գիտեն Կիխոտին վեպի առաջին հատորից[3]: Այսինքն՝ վեպի ներսում գործող կերպարների աշխարհաճանաչողության մի կարևոր մասն է նաև վեպի ներսում ստեղծված աշխարհը, որը հենց տեքստի մեջ «ընթերցվում է» տեքստի ստեղծմանը մասնակցող հանրույթի կողմից: Նույնը կարելի է ասել նաև Աբովյանի դեպքում. վեպի ներսում Աղասուն ճանաչողները Աղասու մասին գիտեն նույնքան, որքան գիտի ընթեցողը, այսինքն՝ նրանց գիտելիքի աղբյուրը հենց Աբովյանի վեպն է և ոչինչ ավելին: Ուրեմն՝ ազգային պետության համար հիմք հանդիսացող երևակայված հանրույթը, որ ձևավորվում է նաև վեպի մեջ ու միջոցով, կարող է ամենևին երևակայված չլինել հենց վեպի ներսում: Բորխեսի մի հայտնի մտքախաղը իր «Դոն Կիխոտի թաքուն դյութանքները» էսսեում ինձ համար տալիս է այս հարցի պատասխանը. «Կարծես հայտնաբերել եմ պատճառը, այդ փոփոխությունները նշում են, որ

եթե մտացածին կերպարները կարող են ընթերցողներ կամ հանդիսատեսներ լինել, ուրեմն մենք՝ նրանց ընթերցողներն ու հանդիսատեսները, կարող ենք մտացածին լինել»[4]:

Աբովյանի երկի շուրջ հիմնական բանավեճը «Վերքի» լույս տեսնելուց հետո վերաբերում էր վեպի տիպաբանությանը. Ստեփանոս Ոսկանյանը և Միքայել Նալբանդյանը չէին համաձայնվում այն հարցի շուրջ՝ արդյոք «եվրոպակա՞ն կանոնով», թե՞ ոչ «եվրոպական կանոնով» է գրված Աբովյանի ստեղծագործությունը: Նալբանդյանը առաջինի կողմնակիցն էր, Ոսկանյանը՝ երկրորդի:

Խնդիրն այն է, որ մեր քննարկելիք ֆորմայի շրջանակներում վեպի ոչ «եվրոպական կանոն» գոյություն չունի: Ոչ «եվրոպական կանոնով»-ի տակ թերևս կարելի է հասկանալ պատումի արևելյան տեսակը՝ արաբական, պարսկական և թուրքական սյուժետային «հրաշապատումները», որոնց նախապատումներից մեկը Խորենացին անվանում էր «առասպելաց առասպել»: Բայց քանի որ Աբովյանը իր «Ռոբինզոնի պատմությունը» (վեպը) անելու համար որպես պատմողի ծանոթ նախատիպ-այլաբանություն ընտրել էր «աշուղի» կերպարը և ծանոթ էր լսարանի առանձնահատուկ պահանջներին, գնում է հենց այս երկու տարբեր սկիզբների համաձուլման ճանապարհով՝ արևմտյան ֆորմա և արևելյան պատմողի ձայն՝ գումարած տեղական՝ հայկական նյութ: Աբովյանին տված Ստեփանոս Ոսկանյանի բնութագրությունը շատ մոտ է այս սխեմային. *«Ժողովուրդին սիրտը՝ ահա գրագիտության աղբյուրը, իր անցյալը և ավանդությունները, ահա գրելու նյութերը. ազգ և մարդկություն. ահա նպատակը ուր ճշմարիտ բանաստեղծը կաշխատի ուղղել և իր հետ տանիլ բազմությունը որու անդամն է»[5]:* Գլխավոր տարբերությունն այն է, որ Ոսկանյանը այդպես էլ չի օգտագործում վեպ ժանրանվանումը և *ժողովրդի սիրտն* է համարում գրագիտության աղբյուրը, ինչը, անշուշտ, հուզական գնահատական է: Չնայած մյուս կողմից իր հոդվածի նույն էջում «Վերքը» համեմատում է Բալզակի և Էժեն Սյուի «վիպաբանությունների»: հետ: Միքայել Նալբանդյանը Աբովյանի վեպում եվրոպական կանոնի առկայությունը կարևորելով՝ բերում է այդ կանոնով չսահմանափակվելու աբովյանական արարքի իր բացատրությունը. *«Լեզվի և ոճի ճապաղությունը հետևանք չէ բանաստեղծի գերմանագիտությանը, այլ բուն ազդեցություն տեղական ժողովրդի կյանքին և միտք հայտնելու ձևերին: Նույնանշան բառերի անհամ կրկնությունք տեսանում ենք այո, բայց չմոռանանք որ Աբովյանցի խորհուրդը էր գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե գիրք է կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում է յուր հետ: Ինչ անե Աբովյանցը եթե ասիացին չափազանց է ամենայն բանի մեջ»[6]:*

Այս առումով հետաքրքիր է «Վերքը» ընթերցել նաև վեպի ժանրի՝ Արևմուտքից Արևելք տարածման դիֆուզիայի համատեքստում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ֆորմային, պատմողի ձայնի և տեղական նյութի փոխհարաբերությանը, ինչը կօգնի հստակեցնելու նաև Ոսկանյանի և Նալբանդյանի կռահումները:

Հայտնի է, որ արդի վեպի հայրենիքը Արևմտյան Եվրոպան է, որի ձևավորման պատմությունը քրոնոտոպի միջոցով շատ հանգամանալից տալիս է Միխայիլ Բախտինը[7]: Հետագայում ժանրը սկսում է ճամփորդել կենտրոնից դեպի ծայրամասեր: Այս մասին հանգամանալից խոսում է Ֆրանկո Մորետտին իր «Վարկածներ համաշխարհային գրականության մասին» հոդվածում[8]: Այդ ճամփորդությունը ամենևին հարթ ու բացված ճանապարհով ընթացք չէ և արդյունք է որոշակի սոցիալական տեղաշարժերի: Մի կողմից արևմտյան օրիենտալիզմը տնտեսական շուկաներ գրավելուն զուգահեռ արտահանում

է նաև գրական-մշակութային մտածողության իր նոր ֆորման՝ վեպը, դեպի մշակութային այլ (ըստ իրենց) ավելի ցածր զարգացում ունեցող հասարակություններ՝ սկզբից եվրոպական հայտնի վեպերի թարգմանությունների միջոցով, այնուհետև հենց պերիֆերիաներում ստեղծվող ինքնուրույն վիպական տեքստերի ի հայտ գալով: Մյուս կողմից՝ բուն ծայրամասերում է յուրօրինակ միգրացիա սկսվում, նախ՝ հենց ծայրամասերի գավառներից դեպի մայրաքաղաքներ, այնուհետև՝ դեպի արևմտյան մշակութային կենտրոններ: Այս տեղաշարժերի մասին կարելի է կարդալ Արտեմիս Լեոնտիսի «Վեպի սփյուռք» հոդվածում[9]: Հետաքրքիր է, որ մայրաքաղաք տեղափոխված ծայրագավառի ինտելեկտուալը վիպականացնում էր հաճախ ոչ թե մայրաքաղաքը, այլ հենց իր գավառը, իսկ Արևմուտքում հայտնվածներն իրենց հերթին վեպ էին գրում ոչ թե իրենց նոր մշակութային տարածության մասին, ուր կրթվում և եվրոպականանում էին, այլ իրենց թողած հայրենիքն էին վիպում:

Այս առումով Աբովյանը դասական օրինակ է. ծնված լինելով Քանաքեռում՝ նախ տեղափոխվում է Էջմիածին (տեղական կենտրոն), այնուհետև մեկնում է Դորպատ կրթություն ստանալու, ուր տիրապետում (կատարելագործում) է օտար լեզուների և կարելի է ասել՝ վիպական կրթություն ստանում: Աբովյանի վեպի տարածական կենտրոնը հիմնականում իր հայրենի Քանաքեռն է՝ ո՛չ Էջմիածինը և ո՛չ էլ Դորպատը, թեև նյութը վիպականացնելու հմտությունները անշուշտ քանաքեռյան չէին: Ինքը վեպում այսպես է ներկայացնում գրելու իր մոտիվացիան. «*Ծնող, գուն, երեխայութիւն, ասած, լսած բաներ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտքս չէ՛ր գալիս*» (66): Բայց մյուս կողմից՝ հղումները դեպի եվրոպացիների ունեցած կարծիքը մեր ժողովրդի մասին և իր անելիքի կարևորումը այդ կարծիքը փոխելու համար հուշում են, որ *հասարակ ժողովրդի լեզվով հասարակ ժողովրդի համար գրելու* տրաֆարետային դարձած մեջբերումը այդքան էլ միանշանակ չէ: Լեզվական անցումը արևմտյան փորձառության կրկնություն է, վիպական տեքստը՝ արևմտյան ֆորմայի տեղայնացման փորձ, իսկ հասարակ ժողովրդին անվերջ հղումներն ու վարքուբարքային նկարագրությունները հենց արևմտյան լսարանին տեղական նյութը մատուցելու վիպական հնարանք է: Որքանով է Աբովյանի պատմողը հաջողում այս պատվաստումներից գլուխ հանել և ինչ վթարներ կարելի է ընդգծել այդ աշխատանքի ընթացքում՝ այս տեքստի պարզելիք մյուս կարևոր խնդիրն է:

Ուրեմն՝ Ֆրանկո Մորետին, արդեն հիշատակված հոդվածում առանձնացնելով երեք կարևոր բաղադրիչները, որոնց համադրության արդյունքում ձևավորվում է ծայրամասերի վիպագրությունը, նկատում է, որ տարբեր տեղեր արևմտյան ֆորման, տեղական նյութը և տեղական պատմողի ձայնը տարբեր ներդաշնակության համադրություններ են ունենում: Կենտրոնին ավելի մոտ գտնվող և մշակութային առումով ավելի արևմտականացմանը հակված միջավայրերը շատ ավելի հեշտ են վիպականացնում տեղական նարատիվները՝ ի տարբերություն ավելի ծայրամասային մշակույթների: Այս առումով հղում անելով Վալերստայնին՝ կիրառում է կենտրոն, կիսապերիֆերիա (կիսածայրամաս) և պերիֆերիա (ծայրամաս) եզրերը[10]:

Աբովյանի երկը շատ հստակ վիպական կառուցվածք ունի՝ իր առաջաբանով, երեք առանձնացված գլուխներով և վերջաբան-հավելվածով: Այս առումով արևմտյան ֆորմայի վերարտադրության մղումը շատ հստակ է: Առաջին գլուխը ամբողջությամբ տեղական նյութի վիպականացում է (բարքեր, սովորություններ, ներքին համայնքային փոխհարաբերություններ (գյուղ-քաղաք և

այլն), որի կարևոր խնդիրը՝ դրված դեռ վեպի առաջաբանում, կերպար (կերպարներ) ստեղծելն է: Այստեղ արդեն հեղինակային ձայնն է հիմնական գործոն դառնում: Աբովյանը փորձում է խոսեցնել իր կերպարներին, որոնց մեծ մասը, բացի գլխավոր կերպար Աղասուց, հիմնականում պատրաստի անուններ են, զարգացում ու անհատական հոգեբանություն չունեն և իրենց սոցիալական միջավայրն են վերարտադրում: Բայց Աբովյանի պատմողը ընթացքում սկսում է չվստահել այդ կերպարներին և ավելի ու ավելի հաճախ ընդհատում է նրանց խոսքը, տեղի-անտեղի միջամտում՝ կանխելով ինքնացման նրանց բոլոր փորձերը, ինչը հանգեցնում է տեքստային վթարների, լեզվական խճողումների և սյուժետային խզումների. օրինակ՝ վեպի առաջին մասում գլխավոր կերպարը սկսում է բողոքել ավագների ծայրահեղ ավանդապաշտությունից, եկեղեցու ու տերտերների արհեստական արարողակարգերից, ինչը կարծես նաև Աբովյանի բողոքն է, որովհետև տոնակատարության իր նկարագրության մեջ հաճախ ծաղրում է գյուղացիների կույր ավանդապաշտությունը: Սակայն երբ նույնը անում է նաև Աղասին, այստեղ հեղինակը հանկարծ ընթացքում պարզում է, որ կերպարի այս խոսքը կարող է նրան ոչ ծնողասեր և հակաեկեղեցական դիրքորոշում ունեցող մեկը դարձնել ընթերցողի աչքում, այնինչ ինքը հերոսի ընտրության հարցում որոշել էր իդեալականացնել վերջինիս բոլոր առումներով ու բոլորի համար: Ուրեմն՝ պետք է կեսից ընդհատի Աղասու խոսքը, որպեսզի ռեաբիլիտացնի նրան. մի էջ առաջ ասում է, որ Աղասին հազարից մեկ անգամ ժամի երես չէր տեսել (72), հաջորդ էջում գրում է, որ տարին չորս անգամ սրբություն էր առնում, խոստովանում, պաս ու ծոմ պահում: Աղասու «ամբարտավանությունը» նա վերագրում է վերջինիս անգրագիտությանը, որովհետև վարժարան չէր գնացել, կարդալ չէր սովորել, փոխարենը՝ բնութագրում է Աբովյանը՝ նրա պես բարի սիրտ ու հոգի քչերն ունեն, և ծնողի համար հոգի է տալիս նա: Բայց այս շփոթը ոչ թե հարթում, այլ ավելի է խճճում կերպարակերտման պրոցեսը, որովհետև հաջորդ գլխում, երբ Աղասին հայրենի գյուղից դուրս է գտնվում, հանկարծ համագյուղացիներից մեկի միջոցով նամակ է ստանում իր մորից և նշանածից (հարսնացուից թե կնոջից՝ սա էլ պարզ չէ), և թե՛ Աբովյանը, թե՛ նրա կերպարը հանկարծ մոռանում են, որ Աղասին տառաճանաչ չէ ու չի կարող նամակը ընթերցել: Աղասին նստում և հուզված ընթերցում է հարազատներից ստացած նամակը՝ գրված իր «չիմացած տառերով»:

Մեկ այլ օրինակ. Աբովյանը գիտի, որ եվրոպական վեպի կարևոր մոտիվներից մեկը սիրային պատմությունն է: Իր վեպը թեև այդ մոտիվի կենտրոնացում չունի, սակայն ընթացքում հեղինակը հանկարծ որոշում է Աղասու ընկերներից մեկին սիրահար դարձնել: Աբովյանը էջեր է նվիրում տղայի սիրային տվայտանքներին, սակայն այդպես էլ պարզ չի դառնում, թե ում էր սիրահարվել, երբ, և ինչ առաքելություն ունեն այդ միաձայն պլատոնական զեղումները վիպական համատեքստում: Աբովյանը «սրտի բաներ» գրելու իր ծրագիրը ևս շատ արհեստական է կատարում և իր իսկ հնչեցրած քննադատությունը վեպի առաջաբանում առ այն, որ մեր գրականությունը չեն ընթերցում, որովհետև սրտի բաներ չկան, փառահեղորեն ձախողում է (այս մոտիվն ընդգրկելու փորձերը և այդ փորձերի ձախողումը հետագայում էլ դառնալու էր հայ վիպագիրների աքիլլեսյան գարշապարը (Պռոշյան, Րաֆֆի)):

Ուրեմն՝ ի՞նչ ունենք. կառուցվածքային ֆորմալացում, տեղական նյութի հագեցվածություն և պատմողի ձայն, ով տատանվում է ֆորմալ հնարավորությունների և նյութի հախուռնության միջև: Գրեթե նույն խնդիրը արձա-

նագրում էր Մորետին՝ տարբեր ծայրամասերում ստեղծված վեպերը քննող գրականագետների նկատողություններին հղում անելով:

Աբովյանը եվրոպացիների համար եվրոպացիների «լեզվով» նկարագրում է իր նյութը, մյուս կողմից ուզում է իր կերպարներն ու վիպական հանգամանքները ինտեգրվեն եվրոպական համատեքստ: Բարքային նկարագրությունները եվրոպական օրիենտալիզմի վերարտադրություն են, ինքն էլ, չնայած ներսից ներկայանալուն ու ժողովրդական բարբառով գրելու շղարշին, զուտ արևմուտքցու հայացքով է նայում իր արևելքին[11]: Օրիենտալիստական է նաև կերպարների ինքնադրսևորվելու արարքի Աբովյանի հետևողական «խոչընդոտումը», երբ հեղինակը չի վստահում կերպարներին՝ պատմել իրենք իրենց մասին, որովհետև «անգրագետ» են և «սիրուն» բաներ չեն ասի: Ոսկանյանի ու Նալբանդյանի կռահումները վերաձևակերպելով՝ կարելի է ասել, որ Աբովյանը գերմանագետ բանասերի և տեղական վիպագրի երկակի խաղում այդպես էլ ընտրություն չի կարողանում կատարել:

Աշուղի կերպարը ասացողից պատմողի ու վիպողի աստիճանի բարձրացնելու հավակնությունն անժխտելի է, և նկարագրված վրիպումներն էլ թերևս հենց այդ ճանապարհը մեզանում առաջինը հաղթահարողի անխուսափելի բարդություններով են պայմանավորված: Պարզապես պետք է արձանագրել որոշ օրինաչափություններ և դրանց համատեքստում ընթերցել հայ նոր գրականության այս անկյունաքարային ստեղծագործությունը, ինչը կօգնի ավելի լավ հասկանալ թե՛ աբովյանական արարքի կարևորությունը և թե՛ այն վրիպումները, ինչին գուցե նաև գիտակցաբար գնում էր հեղինակը՝ հասկանալով «որդիական» պարտականությունը իրեն կյանք տված «հոր» հանդեպ:

[1] Խաչատուր Աբովյան, Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի, Երևան, 2004: Վեպից հետագա բոլոր մեջբերումները հենց այս՝ Գուրգեն Գասպարյանի աշխատասիրությամբ պատրաստված հրատարակությունից, ուր պահպանված են աբովյանական բնագրի լեզվական բոլոր օրինաչափությունները:

[2] Տե՛ս՝ Benedict Anderson, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism, Revised Edition, Verso, 2006.

[3] Տե՛ս՝ Виктор Шкловский, Повести о прозе. Размышления и разборы, 1981, http://www.e– reading– lib.org/12.01.2015//book.php?book=113686

[4] Խորխե Լուիս Բորխես, «Դոն Կիխոտի գաղտնի դյութանքները» էսսեն «Երկու արքաները ու երկու լաբիրինթոսները» գրքում, թարգմանիչ՝ Հովհաննես Բոդուկյան, Եր., 1992, էջ 227:

[5] Հայ գրականության քննադատության քրեստոմատիա, հատոր 1, կազմեց՝ Ժենյա Քալանթարյանը, Եր., 1981, էջ 356:
[6] Միքայել Նալբանդյան, «Մեռելահարցուկ», հատոր 1, Եր., 1979, էջ 313:
[7] Տե՛ս՝ Бахтин М. М. Формы времени и хронотопа в романе. Очерки по исторической поэтике,Вопросы литературы и эстетики, 1975. — С. 234– 407.
[8] Տե՛ս՝ Franco Moretti, "Conjectures on World Literature" հոդվածը "Debating World Literature" գրքում, New York, 2004, pp. 148-163: Հայերեն թարգմանությունը՝ այստեղ. http://www.prm.am/?p=2566/12.01.2015/
[9] Տե՛ս՝ Artemis Leontis, "Diaspora of the Novel" հոդվածը, Diaspora: A Lournal of Transnational Studies, Valume 2, Number 1, Spring 1992, pp. 131-146:
[10] Տե՛ս՝ Emmanuel Walerstein's volumes on "The Modern World System" developed since 1974.
[11] Այստեղ «օրիենտալիզմ» եզրն օգտագործում եմ՝ հիմք ունենալով Էդուարդ Սաիդի հայտնի աշխատությունը: Տե՛ս՝ Eduard Said, Orientalizm, Vintage, 1979: Գրքի հայերեն թարգմանված ներածությունը կարելի է կարդալ այստեղ՝ http://arteria.am/hy/1409762208 15.01.2015:

ISSN 1829-1139
16001 >
9 771829 113004